


# ՏԵՄՆՈՂ ԵՒ ՏԵՍԱՆՈՂ ՅԱԿՈՒԲ ՕՇԱԿԱՆԸ

ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵԿՍԷՉԵԱՆ

2024







ՏԵՍՆՈՂ ԵՒ ՏԵՍԱՆՈՂ  
ՅԱԿՈՒՔ ՕՇԱԿԱՆԸ

ԽՄԲԱԳԻՐ՝  
ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵՄԷԶԵԱՆ

ԼԱԻԱԼ – ՔԱՆԱՏԱ  
2024

Գիրքը լոյս կը տեսնէ մեկենասութեամբ  
Բիւզանդ, Միեր եւ Անի Գըլընճեանի,  
ի յիշատակ իրենց ՀԱՅՐԻԿ-ին՝ Վահրամ-Գառնիկի  
եւ ի յարգանս իրենց մօր՝ Սօսի Վանեան-Գըլընճեանի

## ԻՆՉՈ՞Ւ ԱՅՍ ԳԻՐՔԸ

Յակոբ Օշական Երուսաղեմի հայոց պատրիարքութեան ժառանգաւորաց վարժարանին մէջ ուսուցիչ եղած տարիներուն (1934–1948) աշխատակցած է *ՄԻՈՆ*-ին:

*ՄԻՈՆ*-էն քաղուած Օշականի հեղինակած գրութիւններէն փունջ մը<sup>1</sup> այս գիրքին մէջ մտած է տարիներու վրայ երկարող նախասիրութիւններու ճամբով՝ **տեսնող եւ տեսանող** Օշականը մեզի բերելու առաջադրանքով: Նաեւ ներառած եմ մի քանի յարակից գրութիւններ, որոնց եւս անդրադարձած եմ այս Սեմէն:

Այսօր եւս, մարգարեական նո՛յն շունչով, մշտակայ Օշական վերին Երուսաղեմէն իր աչքերը կը սեւեռէ այն կենսական ու կենդանի բնագաւառներուն, որոնք խորատես աչքով դիտած էր երկրաւոր Երուսաղեմի մէջ բնակութեան տարիներուն: Կը սիրեմ հաւատալ, թէ Երուսաղեմի եբրայերէն անունը («Yireh» [Աստուած կը տեսնէ] եւ «Shalem» [խաղաղութիւն]) **մանրադիտակ** ծառայած է Օշականի յայտնատեսութիւններուն, որոնք այս գիրքին էջերէն մեր կեանքին կը խուժեն:

Օշականի առաջին գրութեան՝ ՍԱՂԻՄԱԿԱՆ ենթավերնագիրը՝ **ՀԱՆՂԷՍ ԶԳԱՅՈՒԹԻԻՆՆԵՐՈՒ** արդէն իսկ կարդարացնէ այն բուն գրգիռը, որ զիս մղեց գրութիւններու այս խուրճը ի մի խմբելու որպէս զգայութիւններու, զգացումներու, մտածումներու, խռովքներու, ապրումներու եւ կիրքերու զեղում՝ հետախոյզ, խուզարկու եւ խորաթափանց Օշականի տեսնելու, զգալու եւ դատելու եղանակին վայելքը ապրելու համար: Արդարեւ, Օշական ինքզինք որպէս «զգայութեանց որսորդ» կը

---

<sup>1</sup> Օշական ուրուագծած է գրութիւններուն մեծ մասը (**գրական, հանդէս զգայութիւններու, օրինասացութիւն, ազգային-գրական, մեր օրերու տրամախօսութիւն, խորհուրդ, ժառանգաւորներուն, սարկաւազներուն, քնարախաղ, քանաստեղծական**):

բնորոշէ (ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ, էջ 288), որովհետեւ ան մեզ կոչողէ «անուշ ու զով ապրումներովը սիրոյ գոլին, կրակին» (ՄԻՏՔ ԵՒ ՄԻՐՏ – ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՀԱՐՑԵՐՈՒՆ ԱՌՁԵԻ, էջ 411), երբ միտքին հորիզոնները եւ սիրտին թեւաբախումները կը բանայ մա՛րդը եւ հա՛յ մարդը տալու իր տեսադաշտի երկայնքին:

\*

\* \*

Ընթերցողին նախաճաշակ մը տալու համար, սեղմ տողերով հոս ընդգրկուած գրութիւններուն կանդրադառնամ եւ անոնցմէ զգացած ալեկոծումներս թուղթին կը յանձնեմ.

{1} **ԳՐԱԿԱՆ** – ՍԱՂԻՄԱԿԱՆ (ՀԱՆԴԷՍ ԶԳԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ)<sup>2</sup>: «Եկայք ի սուրբ Երուսաղէմ»-ի մանկական վերյուշէն յաճախուած՝ Օշական մեզ Ս. Յակոբի կառոյցներէն ներս կը հրաւիրէ եւ Ս. Յարութիւն, Ս. Աստուածածին, Ս. Յակոբ ու Ս. Ծնունդ տաճարներու «անժուժելի խուժումին» (էջ 30) «երկնայնութեամբ» (էջ 178) ծրարուած իր տպաւորութիւնները կը բաշխէ՝ «հոգեմօտ, հոգեխօս» (էջ 186) վրձինումով հայ «վեղարին ցոլարձակ ծփանքը» (էջ 36), թափառական հրեային լացի պատը ու սաղիմեան արաբին խորհուրդը տեղական այլ դիպուկ շերտերով եւս համեմելով, եւ կը հաստատէ՝ «Իմ փափաքը՝ սեւեռումն է քանի մը զգայութիւններու» (էջ 40):

{2} **ԳՐԱԿԱՆ** – ՍԱՂԻՄԱԿԱՆ (ՀԱՆԴԷՍ ԶԳԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ): Առաջին գրութեան երկրորդ եւ վերջին մասն է, ուր լատին, յոյն ու հայ հոգեւորականներ եւ ուխտաւորներ կը տողանցեն, երբ Ս. Յարութիւն տաճարին մէջ չորս ազգերու (լատին, յոյն, դպտի, հայ) խժալուր աղօթասացութիւնը տեղի կունենայ՝ «մոներէն փրթած կարմիր պար»-ին մէջ (էջ 47) «հազարաւոր ուխտաւորներու համատրոփ հոգին» գրկելով (էջ 52):

---

<sup>2</sup> Ով որ չէ գտնուած Սուրբ երկիրին մէջ, դժուար թէ կարենայ Օշականը լիովին ըմբռնել:

{3} **ԳՐԱԿԱՆ** – ԵՐԲ ՊԶՏԻԿ ԵՆ – ՆԱՐԵԿԸ: Տղաբերքի մը ապրումներն են քաղաքին մէջ, գիւղի եւ քաղաքի զգայութիւններու թելերով հիւսուած, ուր կը միջամտէ Աստուածաշունչէն յետոյ հայ ընտանիքին երկրորդ սուրբ գիրքը եղող *ս. Գրիգոր Նարեկացիի Աղօթամատեան*-ին ընթերցումին («Նարեկ-ը՝ Մամիկոն Վարդանէն ալ քաջ», էջ 68) հրաշքը:

{4} **ԳՐԱԿԱՆ** – ԵՐԲ ՊԶՏԻԿ ԵՆ – ՆԱՐԵԿԸ: Նոյն շրջագիծին մէջ ապրումներու նոր տարափներ կը տեղան մեր վրայ, Օշականին հետ մեզ եւս տանելով մօրմէն պատմուած մանկութեան օրօրոցին՝ «Ու յանկարծ կը բուսնի իմ աչքիս հացին տաշտը ուր պառկեր եմ ես, առաջին քունը առնելու, սա աշխարհէն: Օրան իսկ չունէր իմին իւեղճ մամաս, զիս զետեղելու» (էջ 76):

{5} **ԱՍՏՈՒԾՈՅ ՇՈՒՆՉՈՎ (ՕՐՀՆԱՍԱՑՈՒԹԻՒՆ)**: Օշական Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան ԺԵ. դարադարձը կոզեկոչէ Սուրբ գիրքին հայ մատեան դառնալը գովերգելով («Մատեանն համակ դաշնակութիւն, ու քաղցրութիւն, ու սրբութիւն», էջ 79): Կը յղուինք կեդրոնական դէմքին՝ Աստուծոյ իմաստութիւնը հեղող «Աստուածարեալ վարդապետին, գրին գտիչ, կաղապարիչ մեծ Մաշթոցին» (էջ 80): Հայ եկեղեցւոյ «Անդաստան»-ով կօրհնուին ու կը պահպանուին աշխարհի չորս կողմերը՝ «ովսաննա»-ներու եւ «ալէլուիա»-ներու փառատրութեամբ:

{6} **ԱԶԳԱՅԻՆ-ԳՐԱԿԱՆ** – ՀՐԱՇՔԸ (ՄԵՐ ՕՐԵՐՈՒՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ): «Հատուած մըն է այն տրամախօսութենէն զոր Պ. Օշական պատրաստած է Ս. Աթոռոյս տպարանէն յետոյ հրատարակելի Յոբելիական հատորին համար» (էջ 89) կը ծանօթագրէ *ՄԻՈՆ*-ի խմբագրութիւնը: Թեր ու դէմ երկխօսութիւն մըն է հայ քրիստոնէութիւնը կեդրոնական նիւթունեցող: Կը շօշափէ *ս. Գրիգոր Լուսաւորիչի տեսիլքին* «հոգեփոխութիւնը» (էջ 91), *Դ. դարը՝ «մեր հոգիին ոսկեդար»*-ը (էջ 93), «Փաւստոսը, Ագաթանգեղոսը, բայց մանաւանդ Աստուածաշունչը» կարդալու կենսականութիւնը (էջ 93): Մշակոյթի գովերգութիւն եւ հայ մշակոյթի սեւեռում իրարու կը հանդիպին՝

հայապահպանումի «կարօտագին հրաշքը մեր պապերուն» (էջ 103) որպէս հոգեւոր նորոգում ու բարոյական դիմագիծ սահմանելով եւ Ե.-ԺԹ դարու «մեր նոր երկու գրականութիւնները» (էջ 104) վկայակոչելով: Օշական կը մարտահրաւիրէ. «Ամէն մէկ հայ հրաշք մը, ինքն իր ու շուրջին համար, պահպանել կրնալու համար դէմքը իր պապերուն հոգիին» (էջ 104):

{7} **ԳՐԱԿԱՆ** – ԱՅՆ ՕՐԵՐՈՒՆ (Խորհուրդ): Օրինասացութիւն է՝ Աստուածաշունչի գրաբար թարգմանութեան սխրագործութեան եւ սրբոց Վարդանանց պատգամին հանգոյցով: Աստուածաշունչը «ապաւէն» (էջ 114) եւ «տապանակ» (էջ 114), ս. Գրիգոր Լուսաւորիչը, ս. Մեսրոպ Մաշտոցն ու ս. Թարգմանիչ վարդապետները, հայ գիրերու գիտն ու նախարարական տունները, Վասակ Սիւնին ու ս. Վարդան Մամիկոնեանը՝ Աստուածաշունչը համբուրելու երդումով ընդելոյց եւ էջմիածնի խորհուրդը («Աստուած իջեր Իր այթոռէն», էջ 122) կը տողանցեն: Օշական կը հրաւիրէ մեզ քաւելու մեր «մեղքը՝ Աստուած քիչ սիրելուն» (էջ 112) եւ «իմաստութիւն, զգաստութիւն ու սրբութիւն» (էջ 121) հագնելու՝ «մատեանն այս մեծ մեզ պահպանակ» (էջ 124) դարձնելով. որովհետեւ «կ'ապրի ընդմիշտ Հայը բարի քանի հնչէ այս գիրքն անմահ ականջներուն մեր թոռներուն» (էջ 124):

{8} **ԳՐԱԿԱՆ** – ԵՐԲԵՄՆ...: Այս վերնագիրով չորս գրութիւններ կան այս գիրքին մէջ: Օշական հոս մանաւանդ Պետրոս Դուրեանէ եւ մի քանի այլ բանաստեղծներէ մէջբերումներ եւ համապատասխան համեմատական վերլուծումներ կը կատարէ՝ մեզ «կաւին ցեխուտքէն մինչեւ Լոյսին մեծ արգանդը» վերհանելով (էջ 130): Երբեմնի լոյս անցեալին եւ ներկայի տիրական խաւարին ի տես, Օշական կը գրէ. «Հին աշխարհին ամբողջ լայնքովը մեր ժողովուրդը վեր էր, կը հաւատար ատոր, իր գերիչներէն: Անոր ժամերուն մէջ այդ վստահութիւնը գերազանց հաղորդութիւնն էր որով գօտեպինդ, մեր պապերը նուաճեցին աննիւթ տապանակը մեր յոյսին» (էջ 132):

{9} **ԳՐԱԿԱՆ** – ՄՈՌՅՈՒԱԾ ԲԱՆԵՐ: Ներածականն է մոռցուած հայ հողին, կաթողիկէներուն, մատուռներուն եւ վկա-

յարաններուն: Օշական «ցեղային խորհուրդին» «գազանին ժանիքներուն» (էջ 138) իյնալովը կը մտատանջուի, երբ «Աստուծոյ դժոխքներուն ամենէն անըմբերելին» (էջ 137) ապրած «մեր ժողովուրդին դժբախտագոյն հաստուած»-ին (էջ 137) ազգային գունաթափումը կը տեսնէ «դեռ երրորդ, հինգերորդ դարերուն մեր պատմիչներէն միամտաբար դիտուած ու սելեռուած սա քանի մը գիծերը, – օտարին դիմելու, մերիններէն գանելու, զիրար հերքելու» (էջ 139) երեւոյթներուն մէջ, եւ կ'աւաղէ «անխուսափելի քայքայումը, տարրանջատումը մեր հոգիին» (էջ 146) մանաւանդ օտար մշակոյթներու «անժուժելի ճնշում»-ին տակ (էջ 145) եղող ուսեալ նոր սերունդին մօտ: Օշական կը սաստէ. «Կոնակ դարձնել մեր անցեալին, յանուն նոր կարգախօսերու ամենէն առաջ իմացական անպարկեշտութիւն է» (էջ 147), եւ «**ապրելուն, դիմանալուն քաղաքակրթութիւն»**-ը «մեծագոյն քաղաքակրթութիւնը» (էջ 143) կը դաւանի:

{10} **ԳՐԱԿԱՆ** – ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ: Ֆրանսայի հարաւային հայահոծ ուստանի մը հայ եկեղեցիին մէջ կատարուող մկրտութիւն մը «չեմ գիտեր ո՛ր հրաշքին գինովը ինձի կը դարձնէ իմ տղայութեանս քանի մը շատ ուժգին զգայութիւնները, նման շէնքէ մը, հեռաւոր ու ա լ երագ քաղաքի մը» (էջ 149), կը յայտնէ Օշական: Իրենց գիւղին մէջ կնունքներու իր կնքահայրութիւնները կը վերապրի եւ թաղումի շարականներու վերյառնումով հօրը մահը կը յիշէ՝ «ես, օտար այդ ժամուն մէջ, մանուկն եմ հիմա որուն հայրը պիտի տանին, թաղելու լեռան մը սիրտը, մարդու հասակով ձիւնը աւելելով, մինչ մայրս կախ է դագաղին եզրին, մէկ ձեռքով, զայն կեցնելու իր անկարող տառապանքին մէջ, բռնելով իմ սառած թաթիկներս, ամուր, շատ ամուր, չեմ հասկնար ինչէ վախնալով» (էջ 151): Կը վերադառնայ մկրտուող մանուկի ճակատագիրին, երբ քահանան «ո՛ւր է մայրը» (էջ 155) հարցումը կը մրճահարէ: Օշական կ'եզրափակէ. «[հայր] Կանչուած է պաշտպանելու իր տունին աւանդը, իր ցեղին խորհուրդը – մենք կըսէինք պատիւը, մեր օրերուն, հիմա տժգոյն տարագ Սփիւռքի հոգիին վերեւ» (էջ 157):

{11} **ԳՐԱԿԱՆ** – ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ – ՄԱՅՐ ՍՈՒՐԲ...:

«Մեր հրաշալի ժամը» (էջ 160) հաստատումով Օշական իրենց գիւղի եկեղեցին կը նկարագրէ Ս. ծնունդի եւ աւետիսի երանգներով: Հայ եկեղեցւոյ «Մայր սուրբ» սարկաւազի քարոզին կշռոյթով («ըսես, հալած կրակ է այդ ձայնը որ կը քալէ իմ միսերուն վրայէն, ու կը զարմանամ որ չայրիք: Ըսես, արդար եղն է հարուստի սեղաններուն ուրկէ կը փոխուի, կը փոխադրուի անոնց հացերուն», էջ 162) «Աստուած պապային մայր»-ը (էջ 163), Օշականի մօր քաղցր ձայնին հետ ներդաշնակ («Մայր սուրբ բարեխօսեա...», էջ 164) հանգոյց մը կը դառնայ, երբ բերանը կուղպ աղքատ մանուկը կը հեկեկայ ամանորի իր նուէրներուն չգոյութիւնը («ամբողջ այդ երգի ընթացքին, կրակը չի դադրիր իմ մէջ: Կոտրած է իմ հոգին: Այս տարի ալ կոնակս պիտի չմտնէ նոր լաթ, ոտքերուս կօշիկ, քանի որ բերան չկրցայ բանալ, ամենուն նման» (էջ 164): Տարիներ ետք, նոյն եկեղեցւոյ մէջ, Աստուածածինի իրիկուան ժամերգութեան ներկայ Օշական («տաղաւար: Բայց սե ւ: Խաղող չենք օրհնած, **«գեղէն դուրս չելլալ»** արգելքին համար», էջ 165) կ'ափսոսայ. «Գիտեմ որ մեզի շատ մօտիկ Ստամպոլին մէջ իմ եղբայրներուն ու հայրերուն արիւնը կը վազէ ջուրի պէս, **«վասն ծովացեալ մեղաց մերոց»**, ինչպէս սորվեր է պատկերել մեր տէրտէրը, հաւանաբար մեր հին պատմիչներուն պէս, ուր ես ալ կարդացեր եմ այդ բառերը» (էջ 165), եւ կը հարցադրէ. «Բայց չեմ ալ հասկցած աղէկ մը: Ո՞րն աւելի մեղք էր: Մորթէ լը թէ մորթուիլը: Տղո՞ւ հարցում, որուն պատասխանը չեն տար տակաւին հիմա, իմ ճերմակ մազերը» (էջ 165): Այս անգամ մեծ բացական Օշականի մայրն է. «Պակաս է մամաս, քաղաքը, գործին: Իր եռացող ջուրի գուռին վրայ, ցորեկը, անիկա տեսա՞ւ իր ձագուկը, հեռու գեղին մէջ, որ կը պատրաստուի **«Մա՛յր սուրբ»** երգելու» (էջ 166): Այս բոլոր թոհուրոհին մէջ, Օշական կ'այցուի իր ազգի զաւակներուն փողոտումի յաճախանքէն. «Իմ առջեւ էր իմ ժողովուրդը: Որ օտարին յարդի շիւղին իսկ աչքը չունէր, մորթուելու արժան դառնալու համար» (էջ 168):

{12} **ԳՐԱԿԱՆ** – ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ – ՄԱՅՐ ՍՈՒՐԲ...:

Ս. Աստուածածինի աւետումի տօնին, Օշական Երուսաղէմ է. «Մեր գեղին ոսկի ժամուն տեղ, տաղաւար է վրաս գոհար տուփի պէս գողտրիկ, անուշիկ տաճարը Սրբոց Յակոբեանց դարաւոր Գահուն» (էջ 171): «Մայր սուրբ»-ը կը հնչէ եւ Օշական հարց կու տայ. «Ի՞նչ կըսէ իր պարգուած ձեւին մէջ, մեր եկեղեցիին այդ անուշիկ, սրտառուչ, տեսակին մէջ գրեթէ առանձին գանձը» (էջ 180): Նոր թելադրականութիւններ («ու տարօրինակը ան է որ իմ ճերմակ մազերուս տակ ինչ որ փռուած է հիմա, ուրիշ պատկեր է, ուրիշ աշխարհ մը, իրաւ, ծանր, արիւնոտ: Նոյն աստէն ես մարդն եմ այդ երկու աշխարհներուն, հաւասար հաւատարմութեամբ: Կէս դա ր, երկու եզրերուն մէջտեղը», էջ 175), գիւղի յիշատակներով ծանրաբեռն, կը յաճախեն Օշականը՝ երբ սառն քրտինքով եւ սիրտի տագնապին ահով եկեղեցւոյ աւանդատունն է ապաստանած, եկեղեցւոյ մէջ ինքզինք «երկինքին ու երկրին մէջտեղ» (էջ 178) զգալով՝ հայ շարականին հոգին բռնելու տենդով համակուած («երգը երբեմն կամք, ուժ մըն է, դեղին, հող հոտող վարդապետին, աղուամազի իսկ չհասած տիրացու տղուն որքան ուրիշ ամպի մը մէջ մռայլամած պատրիարքին: Բոլորը կը գորովին, կը խառնուին ձայնին պատգամին», էջ 177): Իր ժողովուրդին սպանդով դառնացած են Օշականի յուշերը («նոյնիսկ կը մտածեմ անոնց որոնց գլուխները գատուեցան իրենց վիզերէն, չգործուած մեղքերու իբրեւ հատուցում: Գանկին նայուածքը օտար չէ ինծի: Օրեր ունիմ ետիս ուր ինծի տրուեցաւ կենալ իրենց իրանները փնտռող գլուխներու դիմաց», էջ 174) եւ աւելի բախտաւոր օրերու ակնկալութեան ձգտումով կըսէ. «Ու պարտաւոր եմ մեկնիլ այս աշխարհէն, կարօտը սրտիս շատ մը բաներու, ամենէն աւելի խաղաղ այդ օրուան ուր իմ ժողովուրդը իր հողին վրայ ինքզինքը օտար չկարծէր, իր հացին համար վախը չունենար, իր զակրներուն արեւին խնդար, առանց սարսափի...» (էջ 176):

{13} **ՏԵՍԻԼՆԵՐ ՈՒ ՊԱՇԵՐ** – ...**Ժառանգաւորներուն:**

Սրբոց Յակոբեանց Տաճարին մէջ հանդէսն է պատրիարքական գահակալութեան, եւ Օշական «Արեւմուտքի **Գաթէտրալ-**

**ներ»**-էն (էջ 189), «Իսլամին մեծ յիշատակարաններ»-էն (էջ 189) ու «Քրիստոնէութեան մեծագոյն սրբավայրը, **Ս. Յարութիւնը**»-էն (էջ 190) եւ «**Ս. Աստուածածնայ տաճար**»-էն ստացած տպաւորութիւնները (էջ 190) կը խառնէ Ս. Յակոբէն բխող ապրումներուն եւ Առաքելական աթոռին ժառանգական տեղը («**Ս. Յակոբի** սա վշտոտ հոգեկանութեան մէջ թերեւս պզտիկ չէ դերը, բաժինը **Առաքեալին Աթոռին**», էջ 191) եւ անոր պատրիարքին հայադրոշմ դերակատարութիւնը կը ճշդէ:

{14} **ԳՐԱԿԱՆ** – ԿԵԱՆՔԻՆ ՀԵՏ – ՍԱՐԿԱԻԱԳՆԵՐՈՒՆ: Օշական վարժապետն է, որ իր աշակերտները Ս. Յակոբի բեմին վրայ «ուրարով ողկուզուած» (էջ 201) կը տեսնէ եւ ժառանգաւորներուն տարուէ-տարի ու դասարանէ-դասարան հասունացումը կը պատկերանայ իր աչքին՝ անոնց մատղաշ գլուխներուն եւ լուսասփիռ նայուածքին տպաւորութեամբ: Որբեր են անոնք, դրկուած Երուսաղէմ մա՛րդ ըլլալու համար, ինչպէս օրին Օշականի մայրը ցանկացած էր իր որբ զաւակը մարդ տեսնել: «Գիտցէք որ ամէն ուսանող, բերուած սփիւռքին ծագերէն, այս տեսակ պատկերներու խորհրդատր փունջ մըն է իմ նայուածքիս, որ երբ կը տարտղնէ զանոնք իմ հոգիի դաշտին, ինծի կը բերէ միշտ մէկ մասը իմ թշուառութեան, երբեմն համայնականարը իմ ժողովուրդին» (էջ 198) կը խորհրդածէ Օշական, եւ հոս առաւել եւս՝ ի հաղորդութիւն «Ս. Յակոբայ դարաւոր պատմութեան, աւանդութեան, խորհուրդին» (էջ 199): Օշականի համար ուրարի սրբազան լուծը չի՛ սահմանափակուիր միայն եկեղեցւոյ ծառայութեամբ, այլ պայմանաւոր է նաեւ մեր մշակոյթին պաշտամունքով՝ «լեզուին, գիրին, ազգութեան» (էջ 202–203) պահպանութեան սպասով: Սարկաւազական ձեռնադրութեան առթիւ Օշական նաեւ կը բարեմադրէ. «Դո՛ւք, աւելի բախտաւոր, քան իմ սերունդը: ...Ուզեցի, այդ պահուն որ ըլլայիք ատիկա: Որով, եւ, աւելի ընդունակ իրագործելու հզօր այն ցանկութիւնները որոնց փշրանքները դեռ կը պտտին, կը թրթռան իմ շուրջը» (էջ 203): Օշական գոհ է լսելով անոնց այսօրուան երիտասարդի եւ վաղուան պարտասածի ձայնը. «Քու ժողովուրդիդ խորհուրդը

կը հասկնանք, քեզմէ աւելի պայծառ քան այն օրերուն երբ կը տառապէիր մեր մէջ սեւեռել անոր հանգոյցը» ... «եկեր ենք, մեր կարգին, մեր պարտութիւնը դնելու քուկինիդ մօտիկ» ... «Ճերմակ մագերուդ կը բերենք միացնել մեր ալ ճերմակ մագերը» (էջ 205):

{15} **ԳՐԱԿԱՆ** – ՄՈՌՅՈՒԱԾ ԲԱՆԵՐ: Մոռցուած հողին, կաթողիկէներուն, մատուռներուն եւ վկայարաններուն ոգեղէն այցին հեղեղն է այս գրութիւնը, մանաւանդ «գաղթաստան»-ի (էջ 209) առուին մէջ հոսող: Մեզ կանխող հայորդիները այս մոռցուած բաներուն հոգիով փարած էին («Այսինքն ու մանաւանդ **հայրենեաց հող, սուրբ գերեզման մեր հարանց, օրօրան ծնածներուն ու մրցարան, կրկէս** մեծցողներուն: Այսինքն **մշակոյթը**, որ շատ աւելի ընդարձակ տարագ մըն է քան ան որ կը թելադրուի, երբ քանի մը գիրք, շէնք կամ նկար նկատի կ'առնէ, քով քովի բերելու համար ժողովուրդի մը հոգեկան շինուածքը...», էջ 191): Այս մոռցուած բաներուն պատգամը դիմանալն է: Հայ հոգիին թափանցող Օշական կը սահմանէ. «Ու լա՛ւ իմացէք. գիրքեր չեն բաւական սպառելու ամբողջ շարանը այն զգայութիւններուն որոնք յանձնուած են մէկ հատիկ սրբավայրի իսկ շրջանակին, բիրաւոր սիրտերէ, դարերու ճամբով, ու քարի, գոյնի, մագաղաթի ձեւերով» (էջ 216):

{16} ՍՍՍՈՒՆՅԻ ԴԱԻԻԹ – **ՔՆԱՐԱԽԱՂ**: Օշական Սասունցի Դաւիթի ծնունդին սուղ գինը կը պարզէ Մարութայ Ս. Աստուածածինի տօնին օրը, երբ սասունցիներ իրենց ուխտերը կատարելու հաւաքուած են: Հոն են նաեւ Մհեր իշխանը եւ «հրեղէն ձին՝ Սասմայ մեծ տան Քուռկիկն աղուոր, իմ ճելալին» (էջ 221): Մհեր Սասունն ամբողջ Աստուածամօր կը նուիրէ փոխան մանչ գաւակի մը՝ «Ժառանգ Սասմայ գահին» (էջ 222): Իր հերթին իշխանուհի Թալին կը պաղատի. «Քակէ մարմնէս հանգոյցը պիղծ իմ ամլութեան» (էջ 223): Հրեշտակը կաւետէ. «Հասաւ ձայնը ձեր Աստուծոյ գահին, միջնորդութեամբը Սուրբ Կոյս Մարիամին: Աւետիս ձեզի, ժառանգ կունենայ Երկիրը Սասնայ» (էջ 224), սակայն դառն է այս այգեկոյթը, որովհետեւ հրեշտակը կը շարունակէ. «Սասնայ իշխանն, իշխանուհին ծնունդ տալէ

վերջ ժառանգին, նոյն օրուան մէջ ու նոյն ժամուն, պիտի յանձնեն իրենց հոգին մէջն իմ ձեռքին» (էջ 224–225):

{17} **ԳՐԱԿԱՆ – ԿԵԱՆՔԻՆ ՀԵՏ** – ԱՂԱՉԵՄ ԶԱՆՓՈՓՈՒՆԵԼԻ... Ա.: Ժառանգաւորաց վարժարանին դպրոցական տարուան առաւօտեան «տրտում, հանդիսաւոր, խորունկ» (էջ 228) վերամուտն է: «Երգուած է **«Որք զարդարեցին»** շարականը ուր միտքը, իմաստը, լոյսը կը զգեստաւորուին, կը զարդարուին **«յարգանդ մարուր Մեծին Մեսրոպայ»**» (էջ 229): Ժառանգաւորները հայ Երուսաղէմ դրկուած են Հայաստանի զանազան շրջաններէն՝ «մեր հայրենիքին մէկ իսկութիւնը, մէկ սրբութիւնը» (էջ 229) բերելով իրենց հետ: Պատրիարքը կը հանդիսապետէ՝ «սլացիկ ձեւերէ կազմուած սա աղեղին կեդրոնը՝ Նահապետը Աթոռին» (էջ 230): Դպիւրներու եւ սարկաւազներու «սա թարմ խա՛նդը, յորդ հասակնէ ըր (պիտի գրէի **հասկերը** եթէ չվախնայի բռնագրօտութենէ)» (էջ 232) Օշականին կը յիշեցընեն Արմաշի վանքի իր միամեայ կեցութիւնը. «Օր մը իմ ալ ուսերէս իջեր է այդ սեւ պատանքը ու պահ մը պատաներ իմ պատանութիւնը» (էջ 232): Հոն են նաեւ եպիսկոպոսներն ու վարդապետները՝ «վեղարին աղօտանուշ ստուերին մէջ (էջ 232): Այս օղակին մէջ Օշական հոն է եւ հոն չէ. «Հեռու, շատ հեռու բաներ կը դողան ինձմէ ներս» (էջ 233) ... «ի՛նչ անթափանց խաւար, ինչ լեռնացած տրտմութիւն է իմ կէս դարը, ուր որքան սեւ բաներ պատ են կապեր» (էջ 235): Օշական իր գիւղի դպրոցն է՝ «տախտակամածը գեղի խոշորկէկ սենեակի մը, ծուռիկ մուռիկ, խոռոջալիւր ու սապատաւոր» (էջ 238), *Նարեկ*-ը, *Քերական*-ը եւ *Հեզարան*-ը ձեռքին, երբ հրեայ ժողովուրդին ազատարար Մովսէս մարգարէն կոյրուագծուի իր աչքին. «Տիրացուին անորոշ մրմունջին մէջէն կը շինուի, զարնանամուտ առտուն, ամայի ձորի մը կուշտին, իր գլուխը քարի մը վրայ տեղաւորել ջանացող մարդը, մորենիի մը թելերուն ներքեւ իր պսակին սպասող, ցաւին նիզակը սրտին խորամուխ, մինակ ու անօգնական, լքուած բոլոր իր ուժերէն» (էջ 235): Կը մանկանայ եւ ապա կը հասուննայ Օշական. «Ո՛վ իմ անուշիկ, անօթի բայց այդ ամէնուն հակառակ օգոստափառ մանկութիւնս: ...Որմէ

վերջ, քաղաքը ու իր այլապես անդարման թշուառութիւնները: Ու յետոյ աշխարհը ուր կը մտնէի երիտասարդ ու... յիմար» (էջ 240):

{18} **ԳՐԱԿԱՆ – ԿԵԱՆՔԻՆ ՀԵՏ** – ԱՂԱՉԵՄ ԶԱՆՓՈՒՓՈՒՆԵԼԻ... Բ.: «**Աղաչեմ զանփոփոխելի**»ն Բ. հատուածն է **Նարեկի** ԼԴ. Բանին» (էջ 242): Օշական տիրապետուած է Նարեկացիին յորդումով եւ Աթենքն ու Հռոմը եւս վկայակոչելով կը բանայ ուսուցումին ու «խօսքին դեր»-ին (էջ 244) ծրարը, բանականը, մարմինը, սիրտն ու հոգին հետեւեալ մէջբերումով ագուցելով. «**Եւ հերկեա՛ զբանական անդաստան մարմնեղէն կարծրացեալ սրտիս յընդունակութիւն արգասեաց հոգեւոր սերմանդ**» (էջ 246) եւ յաջողապէս կը մաղէ զայն, միաժամանակ իր սահմանափակութիւնը յայտարարելով. «Անկարելի է քակել ամէն մէկ բառի տակ բանաստեղծէն մթերուած զգացումին, մտածումին, կրակին նախատարբերը: Փորձը կընեմ սակայն մէկ քանիին վրայ» (էջ 247) ... «կը գոհանամ միայն խանդաղատագին զգացումով մը հետեւելով բանաստեղծին մտքի թռիչքին որ զմայլելի բնականութեամբ մը երկրէն երկինք, նիւթէն հոգին կընէ իր սաւառնումը, կատարելով դժուար համադրումը երկու աշխարհներուն, որմէ մանրանկար իրագործում մըն է մարդը» (էջ 250) ... «ինչպէս կը տեսնէք, որքան քիչ կուզան տողերը, կտոր մը բան քակելու այն ընդարձակ ապրումներէն որոնք հոգեյատակը կը կազմեն բանաստեղծին» (էջ 251):

{19} **ԳՐԱԿԱՆ – ԿԵԱՆՔԻՆ ՀԵՏ** – ԱՂԱՉԵՄ ԶԱՆՓՈՒՓՈՒՆԵԼԻ... Գ.: Օշական կը շարունակէ Նարեկացիին «*Աղաչեմ զանփոփոխելի*»-ին վերլուծումը, հաստատելով. «Բայց գիտեմ թէ ամէն քերթուած (ինչպէս արուեստի ամէն գործ) ամէն բանէ առաջ **իբ ժամանակինն է**, կերպով մը այդ ժամանակի ամենէն իրաւ զգացումներուն բիրեղացումը: Այդ իսկ տրամադրութեամբ կը մօտենամ մարդկեղէնին որ վերի տողերուն աւանդ է յանձնուած, մօտ հազար ամ մը առաջ, Աստուծոյ հետ խօսող տրուպ վանականի մը գրիչէն» (էջ 253): Ան կը դիմէ Վերածնունդի վարպետներուն, որոնք «մարդկեղէնին ծարաւը կը պատմեն հոգեղէնէն» (էջ 254) եւ զանոնք կը հակադրէ իր օրերու

ապարժան դոկտորներուն ու պրոֆեսորներուն: Ասողիկը (ԺԱ. դար) վկայակոչելով ան բեմ կը հանէ դասական վարդապետները, որոնք ուսուցանելու «բարիքը կը բաշխէին պարտքի մը պէս, լուսաւորելը, սորվեցնելը ընդունելով իբրեւ ամենէն ազնւական սպասը Աստուծոյ, իրենց **հոգին շահելու** եղանակներուն ամենէն սուրբը» (էջ 256): Բանին ներգործութեան վերադառնալով, կը պատմէ խօսող համրին հրաշքը՝ «Ինծի տրուած է ականատես ըլլալ հրաշքին, հեռու վանքի մը [Չարխափան] տօնական գիշերը» (էջ 258) եւ «Կտուց անապատին կողմէն» (էջ 262) Արմաշ եկած Մարգար սարկաւազին պարագան: Օշական հեղինակաւոր հաստատումներ կը կատարէ Նարեկացիի գրելառճին ու զգայութիւններուն մասին. «Ճիշտ է որ Գրիգոր վանականը բառերու հանդէպ տկար է քիչ մը, զանոնք առատ սպառող մը: Բայց իր գիրքին մէջ որքան շատ են տողերը որոնց ամէն մէկ գիրին տակը ծանրածանր ապրումներ կը մնան ծրարուած» (էջ 257) ... «**Աղօթամատեանը** չի խորհրդածեր, այլ կը զգայ» (էջ 258), եւ *Նարեկ*-էն յորդող մեղքին առկայութեան ակնարկելով կը վճռէ. «Բայց հազար տարի առաջ մեր օրերէն, մեղքը տարօրինակ վիճակ մըն էր: **Անզգամը** այսօր մեզ չի վիրաւորեր» (էջ 261):

{20} ՍԵՆՄՆԱՅԱՆ: Արդի ժամանակներու նիւթեղէն նուաճումներուն մէջ (հիւլէական ռումբ, քանդիչ նոր գիւտեր) հոգեկանին նահանջը ահազանգող գրութիւն մըն է, խտացած սա եզրայանգումին մէջ. «Հարիւր տարիէ ասդին մարդկութիւնը չունեցաւ **հոգեղէնին** մարզէն **ուրանիումը, քասիումը**» (էջ 267): Շօբէնհատուերի, Նիցչէի եւ Շբէնգլերի իմացականութեան դեմ-յանդիման կը ցցուին բռնատիրութիւնը մարմնաւորող «**քորսիքացի բախտախնդիրը**» (էջ 269) եւ «**աւստրիացի ներկարարը**» (էջ 270). սակայն «ողբերգականը այս ամէնուն մէջ գոյութիւնը չէր այդ բախտախնդիրներուն, այլ զանոնք կարելի ընող մարդոց մակադամտութիւնը» (էջ 270): Եւ ամենասարսափելին ու անկանգնելին՝ «**Պարտութիւնը, ուրեմն, հոգիին**» (էջ 269), «**բարոյական յացքներուն**» (էջ 271) եւ «**մանաւանդ իմացականութեան**» (էջ 274), որմէ Օշական նմուշներ կու տայ

յատկապէս թուրքէն, որ լաւապէ՛ս ճանչցած էր. «Ի վերջոյ, թուրք զգայնութիւնը մարդու միսին հոտն ու հեշտանքը չէր ուրացած իր արեան բաւիղներուն մէջ, քանի որ այնքան մօտիկն էր դարերուն ուր ձիերու թումբին տակ եփուած միսը իրենց ազգային կերակուրը կը կազմէր» (էջ 270) ... «զերմանները Թուրքերուն մարագները վերածեր էին մահուան ընդարձակ պալատներու եւ անոնց գործածած խոհիւն ու քարիւղին տեղ հնարած էին նորագոյն կազերը...: Խորհեցէք այս ամէնուն ու գոցեցէք ձեր հոգիին աչքերը» (էջ 271) ... «դիտեցէք Սանճագին նուէրը Թուրքերուն ու գոցեցէք դարձեալ ձեր հոգիին աչքերը, սա ամօթանքներուն վրայ» (էջ 273), եւ կը ցաւի. «Մարդ մորթելու արարքը, անասնական, նախնական ու բուրջ այնքան, այդ իմացականութեան միջամտութեամբը, պաշտպանութեամբը, կը դառնայ քաղաքակրթական բարձրորակ արժէք» (էջ 274) ու՝ «բոլորին յատակը **Կայէնի** ու **Աբելի** հեքեաթին նախնական խորհուրդէն դուրս՝ ոչինչ» (էջ 274):

{21} ՎԿԱՅՈՒԹԻԻՆՆԵՐ: «**Սուրբ Յակոբը** որ ճարտարապետութիւն ըլլալէ առաջ, հանդիսարան մըն է քաղցր հրաշքներու, հազարի մօտ տարիներ, հազարէ աւելի հսկայ փորձանքներու դիմացող» (էջ 286), պատրիարքական գահակալութեան տօնախմբութեան մէջ է: Օտար ազգերու աշխարհական եւ հոգեւորական ներկայացուցիչներ, շարական ու թափօր, անցեալի փառքէն փշուր մը՝ ասպետներու, նախարարներու, սեպուհներու, տէրտէրներու, եպիսկոպոսներու, կաթողիկոսներու եւ ուխտաւորներու տողանցքով: Այս բոլորէն «իմ ձեզի տալ ուզած տաճարը ըլլար սանկ շէնք մը, հողէ մը վեր բարձրացած: Չորս ամուր սիւներու վրայ բռնուած դարձեալ կախարդական բայց ոչ պալատ մը, այլ – ամպհովանի մը որուն տակ միշտ թափօրապետ եպիսկոպոսներ, պատրիարքներ տեսեր ենք թէւ, բայց որուն դերն ըլլար այս անգամ ուրիշ ապրումներ գտնելը» (էջ 283), կը մաղթէ Օշական: Ամպհովանին բարձր պահողներն ու պատսպարան դարձնողները այն հայ մարդերն են «որոնք հաւաքեցին այդ ոսկեփոշին» (էջ 288), «**երանի որ ունիցի յիշատակ ի Սիոն**»-ին (էջ 288) ընդառաջած: Ի տես կանթեղներ-

րուն, ձեռագործներուն, Յակոբոս Տեառնեղբայր առաքելի «սատափակուո՞ղ գահոյք»-ին (էջ 292), Գլխաղիբին, ոսկիի եւ արծաթի փայլքին՝ «կը կրկնուի իմ մէջ նոյն զարմանքը – ե՞րբ, ուրկէ՛, ինչպէ՛ս իմ ժողովուրդը գտեր է ժամանակ, միջոց իր նիւթական ալ հարստութիւնը ազատագրելու գազանին ու մրրիկին ատամունքէն, զանոնք բերել դիզելու համար սա տաճարին պահեստէն ներս» (էջ 291): Այս բոլորէն յափշտակւած, Օշական իր նայուածքը կը գամէ «դասը լեցնող դպիրներէն ամենէն պզտիկին» (էջ 300) ... «ան որ օրուան իբրեւ գահակալը կողջունուի, դպիր մըն էր Զօհրապիկին նման» (էջ 300):

{22} **ԲԱՆԱՍՏԵՂՍԱԿԱՆ** – ՊԱՏԳԱՄԸ: *ՄԻՈՆ*-ի խմբագրութիւնը ծանօթութեամբ մը կը լուսաբանէ. «Հատուած՝ Օշականի նոր գործէն, ՕԴՆ ՕԲԵՐՈՒՆ, (Ապրիլ 24ի ոգեկոչումին առիթով ամայքի մը մէջ. կոթողի մը շուրջ հաւաքուած են ողջերն ու մեռելները: Հոգեհանգիստը կատարելու համար ինքը, Ս. Գրիգոր Լուսաւորիչը եկած է տեսարան: Հոգեհանգիստէն յետոյ, վարագոյրը կը վերածուի խորհրդային Հայաստանի մայրաքաղաքին, Երեւանի ուրուապատկերին: – Լուսաւորիչ կատարածն է ՊԱՏԳԱՄԸ» (էջ 302): Իսկ, իր հերթին, Օշական պատգամը կը բանայ հետեւեալ մուտքով. «*Լուսաւորիչը ... կը տեսնանագրէ, առանց բառի, հորիզոնին չորս ծագերը: Պատգամը օրհնասացութեան մը գնացքով, որ տակաւ պիտ ջերմանայ, ազդելով ձայնին, շարժումներուն*» (էջ 302): Ներգաղթի հայրենադարձ օրերն են եւ Օշական «մեր ժողովուրդը զգետնող, ցաւը իրար չըսիրելու» (էջ 304) կսկիծով կը պատգամէ կեանքին սէրը՝ «զայն պայմանող աշխատանքին» (էջ 304), «սէրն Ոգիին, որ կը հագնի կերպարանքներ գիրի, քարի, մագաղաթի հեղուկ ձայնի» (էջ 304–305), «**Անմիութիւն ծնող չարեաց**» (էջ 306) եւ «**Միութիւն՝ մայր է բարիքի**» (էջ 306) շեշտերով: Թէեւ մէկ կողմէն Օշական կը գովաբանէ Խորհրդային Միութիւն–Հայաստան միասնութիւնը («ու դուն հըզօր՝ ձեռքդ երկարած քու Հիւսիսի մեծ պաշտպանին, մոխիրներէդ իբրեւ փիւնի՛կ, մա՛յր բախտաւոր, առնէս ծոցիդ քու զաւկըներդ քու իսկ մատով հրաշակէրտ նոր դրախտիդ, Խորհրդային հայրենիքին», էջ 312),

միւս կողմէն «Եկայք, շինեսցուք սուրբ ըզԽորանըն Լուսոյ» (էջ 310) Ս. Էջմիածինի ձօնուած շարականով եւ մեր հաւատքի հօր «անուամբ Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ» (էջ 312) խաչակնքումով կ'աւարտէ իր բանաստեղծութիւնը: Մեծ հարցումը կը յամենայ ներսիդիս. Հայ եկեղեցւոյ անփոխարինելի դերակատարութեան կենսականութիւնը կընդգծէ Օշական:

{23} ՈՍԿԻ ՌԻՌՆԱԿԸ – (ԽՈՐՀՈՒՐԴ): Հողէ կորնչական ամաններ խառնող երեք հայ կիներու, սուրբի մը (ս. Գրիգոր Լուսաւորիչ), Յիսուսի, Թագաւորի (ս. Տրդատ) եւ սանդարամետի (հեթանոսութիւն) տեսակէտներու ու կեցուածքներու փոխանակումն է, երբ «ոսկի փոշին անցեալներուն» (էջ 314), «բոնի բերուած Եբրայեցի Աստուածը նոր» (էջ 316), «շարան, շարան, սուրբերն հօգր երեց, զինուոր կամ զօրավար» (էջ 319) Յիսուսի գալուստով («հեղինա՞ կը այս սուրբ հունձքին – այն որ կուգայ: Աստուածն իրաւ, որ մեզ համար մահն յանձն առաւ», էջ 319) եւ սուրբին աղօթքով վերացած («ըլլայ ըլլայ բարեբանեալ անունն ահեղ մեր Աստուծոյն յաւիտեանէ մինչ յաւիտեան», էջ 319–320) կը լուսափայլին: Յիսուս կը գոչէ. «Կուգամ դնել հիմն անսասան եկեղեցւոյ, հոն ուր դարեր մեղքին տունն էր որ կը տիրէր» (էջ 324) եւ ձեռքի ուռնակով կը փշրէ քարը՝ «ահա փշուր ժայռն է մեղքին» (էջ 324) յարելով: Թագաւորը կը հրահանգէ. «Բերէք քարը սուրբ անկիւնին» (էջ 326): Օշական կը հաստատէ, թէ Հայ եկեղեցին է անկիւնաքարը հայութեան բանաւոր ու հոգեւոր շէնքին: Սուրբը («ոսկի ուռնակը ձեռքին, զարնելով քարին», էջ 327) կը վկայէ. «**Էջ Միածինն ի Հօրէ եւ լոյս փառաց ընդ նմա. ձայնք հնչեցին սանդարամետք անդընդոց**» (էջ 327) ... եւ «կը դրուի առաջին քարը» (էջ 327): Սուրբը կը հրաւիրէ ամէն ժամանակներու հաւատացեալները. «Եկայք, շինեսցուք սուրբ ըզխորանն լուսոյ» (էջ 327):

{24} ԳՐԱԿԱՆ – ԵՐԲԵՄՆ...: Գողթան երգերէն վերապարած «Ո՛ տայր ինձ զծուխ ծխանի եւ զառաւօտն Նաւասարդի» (էջ 328) պատարիկը «Պայծառակերպութեան Սարահարթ»-ին (էջ 328) վրայ գտնուող Օշականը կ'առնէ կը տանի իր գիւղի, իր

հողի յոյզերուն: Առաւօտեան պայծառ լոյսով առաւել կը տժգունի «խստագիծ այն վանողականութիւնը, մենացող, քինախնդիր այն լքումը որով զգեստաւոր է Պաղեստինի մէջ գրեթէ բլուրի ամէն բեկոր» (էջ 330): Օշական կը պարտաւորուի հարց տալ. «Ուրիշ տեղ մը չէ՞ գտեր Աստուածորդին իր **փառքը վառելու**, ու բացեր է զայն սա կունտ, գրեթէ ճաղատ գագաթին ինչ որ երկինքն ու երկիրը «անբաւական» էին կրելու, ինչպէս կը պատկերէ մէկը մեր պարզ բայց խորունկ շարականներէն» (էջ 330): Փորձութեան ու Հերմոն լեռները եւս կը միանան Յիսուսի Թաբոր լեռան այլակերպութեան դէպքի ոգեկոչումին՝ հայրենի երկիրի կարօտով բռնկուն, երբ Օշական իր ապրումներուն ցանցին մէջ հայ մարդը կը բռնէ՝ «Մեր ժողովրդական բանաստեղծութեան խոր մարդկայնութիւնը մեր երկրէն կը բխի: Այն բերանը որ կը պոռայ ...**«Մարերու հովին մեռնիմ»** կըսէ բան մը որ անհասկնալի պիտի մնայ անապատէն յօրինուած բոլոր հոգիներուն» (էջ 333):

Երբ լատին վանականը ֆրանչիսկեան փառաւոր տաճարը կ'առաջնորդէ Օշականն ու անոր ընկերակիցները, Օշական կը յաճախուի անցեալի հայ փառքով. «Եօթանասուն ու աւելի էր թիւը մեր վանքերուն, դարեր կանուխ, Պաղեստինի մէջ» (էջ 335) եւ մեր բոլոր վանքերուն կորուստներէն խռովահար, ան կը խորհրդածէ. «Ժայռի այդ թելին կը կարծեմ տեսնել հայ վարդապետ մը, դարեր առաջ, առտուան մաղթանքը ընելու վրայ, ուր հիմա ուրիշ մը, դարձեալ վեղարաւոր, խաժ իր աչուրներուն սուզը կը ջանայ ծածկել ու շրթները կը շարժէ թերեւս կապ մը ճարելու օր մը հոդ հնչած ու ալ մարած *Հայր մերին*» (էջ 336–337):

{25} **ԳՐԱԿԱՆ** – ԵՐԲԵՄՆ...: Օշական կը շարունակէ Պայծառակերպութեան լեռան զգայութիւններուն թափին մէջ ներառել Նայինի մեռեալ պատանին, Մեծ Հերմոն լեռն ու Տիբերիոյ ծովը՝ իրենց գիւղէն Երուսաղէմ ուխտի գացած մահտեսիներու յուշին եւ անկէ բխած տեղական աւանդութեան վերապրումով. «**Մահտեսի** մըն էր այդ պատկերին հեղինակը, հարիւրներու մէջէն որոնք ժամբակի աղբիւրին առջեւ իրենց

թելերը սօթթած, լուացուելու կարգը պահելու ձեւին տակ, հեշտութեամբ ու փառքով ցոյցի կը հանէին գոց կանանչ **հաճիները**, բազուկներու մորթին վրայ, աննահանջ ու խորհրդաւոր: Ինչ անձագին ակնարկով մը կը հետեւէինք, մենք տղաքս, այդ պատկերներուն – խաչեր, պարտեզ, բլուր, լիճ: Ան որուն բազուկին վրայ – ա՛ջը – Գալիլիոյ ծովը կը կլորնար հակթաձեւ, զայն մեզի նկարագրած աստենը, թեթեւ արհամարհանք մը կը թափեր միւս լուսադբարներուն որոնք չէին կրցած Սուրբ Ծովը մտնել: Փառաւոր ծերունին քիչիկ մըն ալ բանաստեղծ ըլլալու էր քանի որ իր պատկերացումը կը նիւթացներ, առատ գիծեր առնելով միւս, մեր **ծովէն** որ գեղէն կէս ժամ վար, ոսկի արտերու մսուրքի մը մէջ, կը պառկեր հանդարտ, Սուրբ Ըռստակէս հայրապետին արօրովը իր հունին, անկողնին մտած, ալ չկոխկոտելու խոստում ալ տալով ավինեայ պարտեզները: Այն օրէն ասդին ջուրը չէր անցներ իր սահմանը» (էջ 341):

[26] **ԳՐԱԿԱՆ** – ԵՐԲԵՄՆ...: Օշական Թաբոր լեռան զգայութիւններուն կուտակումներով երիզուած է տակաւին: Երբ ժառանգաւորներ հայ եկեղեցիի մը մնացորդացին շուրջ կը խմբուին, ան ի՛ր ժողովուրդին բոլոր ատերակներուն յիշատակին կծիկը կը քակէ. «Իրենց տարիքին, առանց ատերակի մը մէջ ծունկի գալու ես կրեր եմ այդ դժոխքը իմ հոգիիս մէջ» (էջ 344) ... «դարեր առաջ, սա քաղցրաձայն տղուն նստած քարին տեղը, ուրիշներ, անոնք ալ տղայ, Թաբորին **«երկնահաճոյ»** կատարէն իրենց շարականները կը մրմնջէին դէպի գահոյքը Ամենակալին ու երկինքի պարտեզներուն մէջ, մարմնաւորէն ալ ազատագրուած իրենց նախնեացը կարաւանը կողողէին քաղցրութեամբ ու սխրանքով» (էջ 345): Օշական միաժամանակ անցեալին ու ներկային մէջն է. «Ինձի հետ են իմ պապերը: Ինձի հետ՝ Գալիլիացի ձկնորսները» (էջ 347) եւ ս. Գրիգոր Լուսաւորիչը, որուն ճգնարան Սեպուհ լեռը գրութեան մէջ յիշուած աստուածաշընչական միւս լեռներուն հետ կեղբայրանայ՝ հայ քրիստոնէութեան զօղով. **«Լերինք ամենայն, այսօր ցնձացեն ընդ մեծապայծառ փառսըն Սեպուհոյ գերագանց լերինն...»** արտաբերող տղուն շրթները կը կասկածի՞ն թէ ամբողջ պատմութիւն

մը կը թափեն վրաս: Ամբողջ աշխարհ մը կը ճարտարապետեն: Երբեմն բառերը ունին այդ ուժը» (էջ 348): Օշական այլակերպութեան հրաշքին թելերով հայոց աշխարհ փոխադրուած է Նաւասարդի առտուն, «ոսկիամայր Աստուածուհիին» (էջ 351) հմայքով առլցուն: «Տեսիլքը թռած է: Կելլեմ ոտքի: Ամբողջ Թաբորը թշուառ տրտմութիւն է աչքիս: Պիտի իջնենք: Թաբոր ու Հերմոն: – Արագած ու Արարատ: Ու շրթներս կը գոցուին **«Ո՛տայր ինձ զծուխ ծխանի եւ զառաւօտն Նաւասարդի»**» (էջ 352):

{27} ՀԱՆԳԻՍՏՅԱԿՈՒՐ ՕՇԱԿԱՆԻ 1883 – 1948: Օշականի մահագոյն է:

{28} ՅԱԿՈՒՐ ՕՇԱԿԱՆ: Եղիշէ վրդ. Տերտերեանի Օշականի մահուան ցնցումին տակ գրած առաջին գրութիւնն է: Կը բաւարարուիմ մէկ մէջբերումով. «Կը հաւատամ թէ վերջին այն պահուն՝ ուր նայուածքդ կը փակէիր այս կեանքի ստուերներուն, բանալու համար զայն մեծ Լոյսին, զգացիր թէ հովէն քշուած իւլեակ մը չես եղած, ու կրնաս զուարթ հոգիով կենալ Յաւիտենականին առջեւ, զի քու կեանքդ անոր քեզ շնորհած քանքարներուն շահաւորումը միայն եղաւ երկրի վրայ» (էջ 359):

{29} **ԱՌՕՐԵԱՅ ՀԱՐՑԵՐ** – ՄԻՏՔ ԵՒ ՄԻՐՏ – ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՀԱՐՑԵՐՈՒՆ ԱՌՋԵԻ (1): Հանգուցեալ Օշականէն վեց գրութիւններ են, որոնք բանականութեան ու զգայնութեան խոփով ժամանակակից հարցերը կ'ակօսեն եւ հայ ժողովուրդը անոնց քաղհանին կ'առաջնորդեն: «Գիտենք թէ երեսնամեայ սպանդը (1878-1915) մեր ժողովուրդը անճիտել ձգտող համազգային, ամբողջապաշտ հոգեբանութիւնն էր ամենէն ազնուական ժողովուրդին: Ահա հարցեր, մեր օրերու խղճմտանքները կործանելու կանչուած», կ'ահագանգէ Օշական (էջ 361):

**ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՀԱՐՑԵՐՈՒՆ ԱՌՋԵԻ**-ները շատ բարդ են. ընթերցողը պարտաւոր է պեղել միջազգային անկիւնադարձային անձերը, տեղերը, թուականներն ու դէպքերը, որպէսզի կարենայ լիովին ըմբռնել Օշականին վճիռները:

Հոս տեղին է մէջբերել Եղիվարդի սա հաստատումը՝ «Տեղեակ էր գիտական, հոգեբանական եւ նոյնիսկ բժշկական ուսումներու որոշ եւ ընդարձակ գօտիներուն եւ գիտեր ընդ-

գրրկել այս բոլորը մասնագիտական ըսուելու չափ մանրամասն ճշդութեամբ» (էջ 437) եւ միաժամանակ անդրադառնալ, թէ **ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՀԱՐՑԵՐՈՒՆ ԱՌՋԵՒ**-ներուն սիրտը եղող ընկերա-քաղաքական բարդ ու խճճուած երեւոյթները Օշական իրեն յատուկ հեռոգայութեամբ յաջողած է քննադատ պատմաբանի մը իրատեսութեամբ թուղթին տարածել բոլոր ժամանակներու սերունդներուն համար: Այս մէկը եւս կապացուցէ Եղիվարդի հետեւեալ վկայութիւնը. «Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեակին, Օշականը Երուսաղէմի Ժառանգաւորաց սրահին մէջ խօսեցաւ սկսող աղէտէն եւ անոր ճակատագրէն: *«Մածիւնն»,* ըսաւ, *«որ Եւրոպայի պաշտպանութեան բերդը կը նկատեն դաշնակիցները, ոչինչի պիտի ծառայէ: Գերմանները յիմար չեն մէկուկէս միլիոն զինուոր զոհելու անոր գրաւումին համար: Անոնք Պելճիքայի հարաւէն պիտի բանան գիծը Ֆրանսա մտնելու: Անգլիան երկարատեւ պիտի դիմանայ, անորոջ ճակատագրով: Իսկ եթէ Հիթլեր գերագոյն յիմարութիւնը գործէ Ռուսիոյ վրայ յարձակելու, յաղթանակը անկասկած դաշնակիցներուն է»:* Արտակարգ լուսամտութեամբ կշռեց թափուող արեան քանակը՝ պարտըւողին ու յաղթողին համահաւասար: (էջ 436–437):

Ահա հեղեղը անուններու, վայրերու, թիւերու եւ իրողութիւններու. «1870ին գերմանները քանի մը հարիւր ֆրանսացի մորթեցին. 1914-1918ին, այդ հարիւրը բիրտրով փոխանակեցին, 1940-1945ին բիրտ միլիոններու վերածեցին, աշխարհին տալով ամենէն ահաւոր անսրտութեան ու անմտութեան փաստերէն մէկը որուն քով չի տժգունի միայն ոճրածին ցեղին հնգդարեան ոճրապատումը» (էջ 361) ... «ծորակ մը քարի տը որպէսզի ազգ մը վաճառուի: Չոր խոստում մը, թուղթի վրայ, որպէսզի երկիր մը բաշխուի...» (էջ 362) ... «սխալը շէն աշխարհի մը (Կիլիկիա) բաշխելու աւագակներու» (էջ 363) ... «1925ին հանդիպեցայ մարդոց, ամերիկացի, որոնք ուրախ էին... հայկական հարցին լուծումովը (Լոզանը շատ թարմ էր), քանի որ Աստուծոյ անիմանալի ճամբաներէն մէկուն էլքը յստակ էր այդ մարդոց համար: Հայերը մորթուած էին Թուրքերը քաղաքակրթութեան

բերելու ամենէն բարձր բարիքին համար ու կրնային հպարտ ըլլալ» (էջ 363–364) ... «կոմս Պիզմարքը, Մարքսն ու տիգրայէլին» (էջ 364) ... «իմ թելադրածը, արեւմտեան մշակոյթին ետին ծուարած անյագ ախորժակներուն ներկայութիւնն է: Իմ թելադրածը՝ սա ախորժակներուն հագցուած ոսկեհոտ պատմութեանը որուն վրայէն սիրէր բուրաւետել նոր ժամանակներու ամենէն ազնուական անուշահոտութիւնը, **նաւթը**» (էջ 365), եւ էջերու վրայ վազող անոնց յաջորդող հաստատումներու շարանը. Դիւանագիտութիւն ... Ճարտարարուեստ ... բռնակալութիւններ ... գրական տազնապներ ... եւ անգլիական, գերմանական, ռուսական, ֆրանսական ու ամերիկեան կայսրութիւններ: Եւ այս բոլորէն մնացածը. «Օ՛, մինակ քսաներորդ դարուն իմ կարդացածները բաւ են մարդկութեան յետախաղաղ կորուստը արդարացնելու» (էջ 362) ... «իմ կէս դարը: Ու հոն փորագիր, անջինջ երկաթագիր տազնապները» (էջ 364) ... «այս ընթացքին առջեւ արտօնուած ենք խորհելու օրերուն ուր հաւանաբար երկրագունտին երեսը լեցնող ժողովուրդներու ինը տասներորդը պիտի բնաջնջուի յետախաղաղ, իր տեղը զիջելու համար բախտաւորին» (էջ 368–369):

Ամենէն յատկանշականը Samuel P. Huntington-ի clash of civilization-ը 44 տարիով կանխած սա մարգարէական խօսքն է. «Իրականին մէջ պայքարը պայքար է կեանքին, տնտեսական կերպարանքներով, քղամիդով, բայց խորքն ի վեր՝ քաղաքակրթութեանց բախում» (էջ 369), որուն մարտահրաւերը իւրաքանչիւր հայորդիի կոտորուի՝ «Ինչ ընելու դրկուեցայ ես աշխարհ: Ու ինչ միայն ըրի: Իմ ժողովուրդի ամէն մէկ զակին համար իրաւ է սա հարցումին ողբերգականը» (էջ 363):

**{30} ԱՌՕՐԵԱՅ ՀԱՐՅԵՐ – ՄԻՏՔ ԵՒ ՄԻՐՏ – ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՀԱՐՅԵՐՈՒՆ ԱՌՋԵՒ (2):** «Մէկը մեր օրերու հարցերէն, – **Հակադրութիւնը բարձր եւ ստոր ժողովուրդներու**» (էջ 371): Այս նախադասութեամբ Օշական կը սահմանէ իր գրութեան շրջածիրը, երբ, օրինակ, կը հարցադրէ. «Ո՞ր կը տարբերին իրարմէ Չըրչիլն ու...Կանտին» (էջ 375): Հիանալի ու զարմանալի է առօրեայ դէպքերու, դէմքերու, գրագետներու, մտա-

տրկաններու եւ գիրքերու խորագնութիւնը. «Աշխարհի բոլոր ցամաքներէն որքան առատ են ու տրամադրելի մեր տեսութեանց ի պաշտպանութիւն՝ վկայութիւններ ստորածին ժողովուրդներու իրականութենէն, թիւէն ու անողոք ճակատագրէն» (էջ 374): Օշական կը ճշդորոշէ. «Իմ նպատակը չէ քաղաքական, ընկերային, հոգեբանական վերլուծման մը կշիռը գործադրել 1945էն ասդին ու անկէ առաջ մեր ամէնուն աչքին փռուող անորակելի, անմարդկային նուաստացումներուն, նուաստութիւններուն, բարձրօրէն կնճռոտեալ հաշիւներուն, խաղերուն՝ դիւանագէտներէ, եւ կամ յաղթական ու պարտեալ ժողովուրդներու կողմէ այնքան նենգութեամբ, անգթութեամբ ու ահաւոր սինիզմով գործադրուած ոճիրներուն. այնքան թիւ երկու պատերազմին յաջորդ սա զոյգ տարիները այդ ամէնուն մէջ մեզ անմատչելի կատարելութիւն, բարձունքի հասած են արդէն» (էջ 377–378) ... «Իմ ընելիքս, ուրեմն – մեր օրերու հարցերէն ամենէն աւելի իմ ժողովուրդը շուարանքի մատնողներուն մօտենալ սովորականէն տարբեր չափերով, դիտողութիւններ, նկատողութիւններ արձանագրել որոնք գիրք, քարոզ, քէն կամ քարիւղ չհօտին» (էջ 378), գիտնալով հանդերձ՝ «թէ մեր ողբը, բողոքը այնքան նորոյթէ ինկած ձանձրոյթներ են օտարներուն չափ մերիներուն ալ ականջներուն» (էջ 379):

{31} ԱՌՕՐԵԱՅ ՀԱՐՑԵՐ – ՄԻՏՔ ԵՒ ՄԻՐՏ – ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՀԱՐՑԵՐՈՒՆ ԱՌՋԵԻ (3): Դեպքերը կը թաւալին հայութեան կեանքին հպելով, սակայն մեզի զլանալով իրաւականօրէն մեր ականկալած արդարութիւնը: Այս ընդհանուր իրարանցումին մէջ, Օշական իրատես նոր հաստատումներ կը կատարէ՝ մի՛ շտ իր ժողովուրդը դնելով անոնց կիզակէտին. «Երրորդ աշխարհամարտի նախամուտին, – ուրիշ բառ չունիմ այսօր որակելու մղձաւանջը, կախուած քաղաքակիրթ աշխարհին գլխուն, խանձարուրին մէջը հիւլէական ռումբին սպառնալիքին, Թուրքերու բերանով քանի անգամ պահանջուած երէկուան բարեկամները սպառսպուռս ջնջելու – գոհուելիք ժողովուրդները կը թուին յստակ նշանակուած ըլլալ դահիճներու խղճմտանքի տախտակին» (էջ 381), որ կը յայտնէ «մեր մշակոյթին ամենէն

ազնուական հպարտութիւնը, **աւելի քիչ անասուն ըլլալու մեր պատեհութեանց բազմանալը**» (էջ 385) ... «ըսի թէ յաղթական ժողովուրդներու ոչ խորհրդարաններէն, ոչ օրկաններէն, ոչ ալ յանձնաժողովներուն որեւէ մէկէն ո՛չ մէկ ակնարկութիւն, անդրադարձ իմ ժողովուրդի տռամային որուն առաջին վարագոյրը վերցած է երեք քառորդ դար առաջ» (էջ 388) ... «1915ին Թուրքերը իրենց հերոսական ձեռքերով մորթուած հայ կիներուն մարմինները **ֆերաճէներու** մէջ փաթթելէ վերջ, կը բերէին ցուցադրելու մզկիթներու հրապարակներուն իբր մորթուած թրքուհիներ» (էջ 390) ... «քսան տարի վերջ, կրկին պատերազմ որ, եղէք վստահ, մինակ ներկարարէն չէ ճարտարապետուած այլ ծերակուտական ամերիկացիներէն: Ու ձեզի կը ձգեմ մտապատկերել աւերածը Մանշէն մինչեւ Վոլկա եւ մինչեւ Հերոշիմա, աշխարհի հինգ մեծ ցամաքներուն ու նոյնքան մեծ ջուրերուն երեսին, թափուած արիւնին հեղեղը, մանաւանդ պարզուած հոգեկան անկումին անըմբռնելի դժոխքը, գերութեան, կեղրոնացման քեմբերէն, անօթութեան եւ հիւանդութեան մագիլներէն...» (էջ 386): Եւ ինչո՞ւ այսպէս ա՛յս բոլորը: Ահա պատասխանը. «Ու երբ իմ մտքին կը բռնանայ աշխարհաղէտը, աւելի քան ստոյգ, կը բռնանայ Բանէն պարպուած կեանքին անիմաստութենէն պարտադիր: Սա աղէտին դիմաց Միտքին, մաշած բառով մը՝ Բարոյականին, աւելի փճացած ուրիշ բառով մը Մշակոյթին նահանջը, պարտութիւնը, անձնատուութիւնը ուրիշ ողբերգութիւն» (էջ 388), որովհետեւ «գազանը գազան է միշտ: Ու սա է արդի մշակոյթը, հարիւր միլիոն գոհերու ոսկերոտիին վրայ ամբարձած» (էջ 389):

{32} **ԱՌՕՐԵԱՅ ՀԱՐՑԵՐ** – ՄԻՏՔ ԵՒ ՄԻՐՏ – ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՀԱՐՑԵՐՈՒՆ ԱՌՁԵԻ (4): Դիւանագիտութիւնը որպէս «նոր ժամանակներու ամենէն անարգ գիտութիւնը» (էջ 392) սահմանելէ եւ անգլիական, ռուսական եւ ամերիկեան դիւանագիտութիւնները փորձաքարի զարնելէ յետոյ, Օշական կապաստանի «Միտքին ու Բարոյականին սպասարկու ամենահին կրթանք»-ին՝ գրականութեան (էջ 393) եւ կը փշրէ անոր բոլոր իզմ-երը (իպսէնիզմ, նաթիւրալիզմ, սիւրբէալիզմ, լէթրիզմ,

էկզսթանսիէլիզմ, բերսօնայիզմ, տատայիզմ, քիւսլիզմ, ֆի-  
թիւրիզմ, իմաժինիզմ - էջ 395), որովհետեւ «հարիւր տարի  
առաջ գրական դպրոցները հսկայական եղելութիւններ էին.  
այսօր՝ **անախրօնիզմ**» (էջ 396): Օշական անդրդուելի է. «Կանց-  
նիմ կենալու սակայն **մտքին նահանջին**. ան՝ զոր այս դարու  
սկիզբները սիրեցին **կղերիկոսներու մատնութիւն** յորջորջել,  
այսինքն մտաւորականին տակաւ շեշտուող տկարացումը,  
ընկրկումը **մէնէճըրներու** գրոհին դիմաց» (էջ 392):

Օշական ՄԻՏՔ ԵՒ ՄԻՐՏ-ի բախումը, «միտքին եւ բիրտ  
նիւթին յաւիտենական մենամարտը» (էջ 399) կը պատկերէ «որ-  
քան անհեթեթ է սակայն քաղաքականութեան ետին իւելք  
փնտռել, որպէսզի ներելի ըլլար մտածել սիրտին ալ տեղին» (էջ  
398) ափսոսումով:

Օշական իր միտքն ու սիրտը կը հեղու իր ժողովուրդին  
մանաւա՛նդ մշակոյթի աւագանին մէջ՝ հայ սփիւռքին իւրա-  
յատկութեան շեշտադրումով եւ մեր գրականութեան արժէքնե-  
րուն իրաւ գնահատականով. «Ամենէն արդար դատերէն մէկը –  
Հայկականը – աշխարհատեաններէն ոչ միայն կը մերժուի, այլ  
եւ նկատման իսկ չարժանանար, նոյն ատեն պալատին մէջ  
ուրկէ ուրիշ դատ մը, Իսրայէլինը կը թուի յաղթական դուրս գալ,  
ընդդէմ եօթանասուն միլիոննոց զանգուածի մը հզօր **վերքոյին**:  
Խորհրդածելը ձեզի: Ես կանցնիմ աւելի անդին» (էջ 397)... «եղաւ  
ատեն մը երբ մեր ժողովուրդը կը հաւատար գրողներու արժե-  
քին, մեր ճակատագիրը սրբագրելու արարքին մէջ անոնց դերը  
աճեցնելով իրենց իմաստէն արսօնուածէն շատ անդին» (էջ  
396) ... «գիտնալու էք որ այս տողերը կը գրուին ոչ թէ միջագ-  
գային պագարի մը համար, այլ **սփիւռք** կոչումի մը ներքեւ  
ծուարուն, շուարուն, իր ճակատագրէն անվստահ, իր անելիքին  
մասին հակամարտ ազդեցութեանց երերուն զանգուածի մը քիչ  
շատ խմբելի **ընտրանի** մը հրաւիրելու ոչ անշուշտ յաղթագին  
հպարտութեանց այլ մարդկային տարրական վստահութիւն-  
ներու, որոնցմէ տարօրէն աղքատացած է սա վերջին քառորդ  
դարուն» (էջ 399) ... «Խորհրդային Հայրենիքին փառքն ու գեղեց-  
կութիւնը, նոյնիսկ առանց տարակոյսի շամանդաղին, ոչինչ կը

փոխեն սփիւռքէն որ պարտաւոր է **ինքզինքը մարսել**, այսինքն իր միտքին, սիրտին հասած բոլոր նուաստութիւնները այլակերպել» (էջ 400) ... «Հայրենիքի հանդէպ հայու սէրը մեր թշնամիին պաշտպաններուն տոմարին մէջ կը փոխակերպուի քրեական մեղքի» (էջ 400) (ակնարկութիւն ներգաղթի առթիւ ծայր առած կուսակցական պայքարին) ... «Բայց այս զեղծումը, զեղծանումը չեմ ընդունիր պատրուակ մեր հարազատ, իսկապէս [գրականութեան] մեծ գեղեցկութեանց գովքն ալ լռելու» (էջ 401) ... «պարզ ու վստահ, ըսեր եմ, գրեր եմ – **Մենք մեր եղով**» (էջ 401):

{33} **ԱՌՕՐԵԱՅ ՀԱՐՑԵՐ** – ՄԻՏՔ ԵՒ ՄԻՐՏ – **ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՀԱՐՑԵՐՈՒՆ ԱՌՋԵՒ** (5): Հոս Օշական միտքն ու սիրտը որպէս իմացականութիւն եւ հոգի կը մասնաւորէ. «Անշուշտ, գէշ կերպով արտայայտուիլ է ըսել որ այսօր **հոգին**, այսինքն ասոր մարմնաւորման եղանակները դադրած են մարդոց մտահոգութիւնները յօրինել: Հինգ դար կայ որ կրօնք չի ծնիր: Ծնածներն ալ երկինքէն գալու տեղ երկրէն կը բռնանան: Այսօր, իմացականութիւնը – այս բառին ետին դրէք ամբողջ նիւթապաշտ մտածողութիւնը – միս մինակը գրաւուած կը պահէ մարդկային մտահոգութեանց դաշտը, անկէ տարագիր քշելէ վերջ հոգին որ գուցէ երկինք է ապաստանած» (էջ 407), ապա կու գայ մեզի՝ . «Իմ ժողովուրդին ազատ, հարազատ ստեղծումները, բուն իսկ **people** տարրին միջոցով, այսինքն առանց տաղաչափ հսպիտի մը մեղքերովը մեզի հասած մեր առօրեայ ապրումներուն իբր բիրեղացումները, բովանդակ աշխարհի երեսին իրենց նմաններէն ոչ մէկուն առջեւ կը տժգունին» (էջ 402–403), եւ կը պատգամէ իրատես, համեստ ու զուսպ ըլլալ մեր մշակութային նուաճումներուն պոռոտախօսութեան մէջ. «Միւս կողմէն մի ներէք ձեզի միւս յիմարանքն ալ, այդ արթնացումը փքացման, սովեստացման պատրուակ ընելու երբ կ'ելլէք հաւատալու այդ յաջողուածներուն **եզակի, աննման** տարողութեան, աս ու ան պակասամիտին գրիչովը, անպատասխանատու ներողութեամբը նետուած շրջաբերութեան (էջ 403) ... «ըսեր եմ այնքան անզամներ – տուէք այս ժողովուրդին կէս դար խաղաղութիւն,

շունչ առնելու գետին մը ու դուք կը տեսնեք արդիւնքը» (էջ 407) ... «մերինները երկինք նայած են բոլորովին տարբեր հոգե-  
խառնութեամբ» (էջ 410) ... «որքան շատ է թիւը, մեր անցեալը  
լուսաւորող սա շքեղ գեղեցկութեանց, միշտ – **ԱՆՀԱՏԱԿԱՆ  
ՍՏԵՂԾՈՒՄԻՆ, ԶԵՂՈՒՄՆԵՐՈՒՆ ԿԱԼՈՒԱԾԷՆ**: Չէք մոռ-  
նալու ասիկա» (էջ 411):

{34} **ԱՌՕՐԵԱՅ ՀԱՐՑԵՐ** – ՄԻՏՔ ԵՒ ՄԻՐՏ – ՄԵՐ ՕՐԵ-  
ՐՈՒ ՀԱՐՑԵՐՈՒՆ ԱՌԶԵԻ (6): ՄԻՏՔ ԵՒ ՄԻՐՏ-ի կալուածին  
մէջ, Օշական լայն կարկինով կը բանայ ռուսերուն, ամերիկա-  
ցիներուն, Ծայրագոյն Արեւելքին, Հիթլերին եւ յարակից դէմքե-  
րուն ու դէպքերուն կորագիծերը. «Այսօր ռուսերը կը մերժեն  
ամերիկացիներուն մշակոյթի մը հպարտութիւնը, անոնց թեք-  
նիկին – այսինքն մետաղին եւ մետաղացած իմացականութեան  
ընելով զիջում բայց զիրենք վտարելով իսկական մշակոյթէն որ  
ոգիով է պայմանաւոր» (էջ 418) ... «այսօրուան Ամերիկան չեմ  
մեղադրեր վաճառապաշտութեամբ, քանի որ այդ պաշտա-  
մունքը մենաշնորհի մը չէ Ամերիկային: Եւրոպան նոյնքան  
ապարուեստ աշխարհի մըն է այսօր» (էջ 419) ... «մարդկային  
մնալու կարելիութիւնը թերեւս դժուարագոյն առաքինութիւն  
մըն է մեր օրերուն, հարիւր տարիէ ի վեր իրարմէ գայրագին  
անասնութիւններ մշակած, պատուաստած ու շուկայ հանած  
ըլլալնուս» (էջ 421) ... «ո՞վ է մեզ երաշխաւորողը որ հիւլէական  
ուժէն գերագանց, անկէ աւելի սահաւոր ուրիշ բաղակցութեան  
մը քայքայման գաղտնիքը վաղը, միւս օր, գալ տարի, քառորդ  
դար վերջը պիտի չգողցուի գաղտնիքներու ամբաւ շտեմա-  
րանէն, այս անգամ իբրեւ ասիացի արհամարհուած միտքի մը  
կողմէ, «**յարեւելեան կողմն աշխարհիս**», ու պիտի չզրկէ ար-  
ժէքներու սակացոյցը, հիմա ոսկիին եւ նիւթական գորութեանց  
բեւեռներուն միջեւ առանցաւոր, ամրախարիսխ: Մպառնալի ք  
մը, աշխարհը կործանելու, Թուրքերու մարմաջովը՝ ամենէն  
առաջ անոր մէկ վեցերորդը, բայց եանքիներու զգուշաւորութե-  
ամբը շշուկով փսփսացուած, վաղը ո՞վ պիտի արգիլէ որ չքա-  
րոզուի տանիքներէ եւ թերեւս քանի մը տարիէն՝ երկինքներէն  
ալ դրուի գործադրումի» (էջ 425), եւ այս բոլորէն մնայուն կը

հաստատել միջազգային անդրազգային գրականությունը. «ո՞ր է որ բանաստեղծական զգայարանքը **կը սենայ, կը դեղնի, կը կարմրի, կը ճերմկի** (այս բառերուն տուեք ցեղային մոյնքէ տարողութիւն մըն ալ)» (էջ 420):

Խօսքը մասնաւորելով ամերիկացիներուն, Օշական կը յիշեցնէ մեզի. «Ու ինչպէս կը մարսէ, Արդար Վաշինկթոնի ուր-ւականը ամերիկեան մշակոյթը այսօրուան, երբ իր անունով, բանակներով, ռուբերով հայ ժողովուրդին հազարամեայ (քանի մը պատիկ) հայրենիքը կը զլանայ այդ ժողովուրդին բեկորներուն ու այդ հողերը կը բաշխէ մարդասպաններուն» (էջ 419) ու կը պեղէ հայ գրականությունը («որո՞նք են **Սասմայ Ծոերը** մտիկ ընողները: Ո՞ր: Ո՞ր մշակոյթին կշռոյթին մէջէն», էջ 414), հայ արուեստը («հոն, ուր մարդ մը – արուեստագետը – մեր մէջ, քիչ շատ համակրալից խումբի մը առնուազն վերացեալ պաշտպանութեանն է արժանացած. հոն, մեր ստեղծագործութիւնը կը կենայ մօտիկը, եթէ ոչ հաւասար, օտար մշակոյթներու բարձրագոյն անուններէն նմանատիպ ստեղծագործութեանց», էջ 416) եւ հայ ճարտարապետութիւնը («սփէստութիւն՝ զուգակըշռել **Ս. Իմաստութիւնը (Այա Սոֆիա)** եւ **Զուարթնոցը**», էջ 416–417), եւ մեզ դարձեալ զգաստութեան կը հրաւիրէ. «Միւս կողմէ, թախանձագին կը խնդրեմ որ կըրցածնուդ չափ արագ, ու արմատական պարկեշտութեամբ մը, հրաժէշտ տաք մեր արժէքները, առակի գորտին միամտութեամբը, ուտեցնելէ իրենց իրական տարողութենէն անդին: Ոչ թռիլ, ուրիշին թելերով ոչ ալ վախով սողոսկիլ: Ապրիլ: Ու ապրելու հիմնական արարքներու մէջ, գործարանը, սիրտը հազիւ թէ կը տարբերի Արաքսի կամ Սէնի ափերուն» (էջ 416):

{35, 36, 37} **ՅՈՒՐԵԼԵԱՆՆԵՐ** – ՕՇԱԿԱՆ ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ – **ՄԱՐԴԸ, ԳՐԱԳԷՏԸ, ՕՇԱԿԱՆԸ ԻԲԲ ՔՆՆԱԴԱՏ**: Օշականի մահուան քսանհինգամեակին առիթով Եղիվարդ երեք գրութեամբ կը խօսի «գրագէտ բարեկամի մը մասին ուրիշ բարեկամներու» (էջ 427, 479): Կը գոհանամ մի քանի գլխաւոր հպումներ մէջբերելով. «Մեծանուն գրագէտը սակայն նման էր այն նկարներուն որոնք առաջին ակնարկով չեն գրաւեր քեզ,

որոնց մէջ սակայն չկասկածուած գեղեցկութիւն մը կայ որ նոր հիացումով կ'առնինքնէ քեզ» (էջ 429). «Օշական այն մարդերէն էր որ երբ գրիչը ձեռքը առնէր՝ կը մոռնար թէ ասկէ աւելի սրբազան պարտք կրնար կենալ իր ուսերուն: Այդ խղճմտանքին մէջ ան ազատագրել գիտցաւ իր զգայնութիւնները, երազներն ու վիշտերը, բայց մանաւանդ փառասիրութիւնները՝ պատահական, արտաքին վիճակներէ, անոնց հազցնելով իր հարուստ միտքին պատմուճանը» (էջ 429). «իւր հակումները կ'ուղղուին դէպի մեր ժողովուրդի բարձրագոյն արժէքներու հետախուզութիւնը» (էջ 435):

**[38] ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ** – ՕՇԱԿԱՆ ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ: Ե. ստորագրուած է, որ է Եղիվարդ, Եղիշէ պատրիարք Տէրտէրեան. «Ո՛ր չ լուսանկար. ո՛ր չ դիմաստուեր. Օշականէն իմ միտքիս մէջ կը մնայ չսքողուող դէմք մը, տրտմանուշ՝ բայց խօսուն յուշ մը, միշտ բացխփիկ, իր անցեալը ներկայի վերածող: Կուզեմ սիրտէս փրթած քանի մը տողերով իր հետ ըլլալ, ոգեկոչել իր անձը անգամ մը եւս, ապրիլ իր յիշատակը՝ ինչպէս որ էր ան քառասուն տարիներ առաջ, լսել իր ձայնը, որ յանկարծ իմ մէջս կը հնչէ վերստին, իր ծննդեան հարիւրամեակին եւ գրական գործունէութեան յիսնամեակին առիթով» (էջ 470): Մութ է այն պարագան, որ **ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ** – ՕՇԱԿԱՆ ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ-ը (1983) մեծ մասամբ ինքզինք կը կրկնէ **ՅՈՒՅԼԵԱՆՆԵՐ** – ՕՇԱԿԱՆ ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ – **ՄԱՐԴԸ, ԳՐԱԳԷՏԸ, ՕՇԱԿԱՆԸ ԻԲՐ ՔՆՆԱԴԱՏ**-ին հետ համեմատած (1974): Այս ալ թող բարդուի Եղիվարդի զարտուղութիւններուն վրայ...:

[39] ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ Յ. ՕՇԱԿԱՆԻ:

[40] ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՅԱԿՈՒՑ ՕՇԱԿԱՆԻ: Քաղուած է Համազգային հայ կրթական եւ մշակութային միութիւն-ի կայքէջէն:

[41] ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՅԱԿՈՒՑ ՕՇԱԿԱՆԻ: Քաղուած է Ուիքիփետիա ազատ հանրագիտարան-ի կայքէջէն:

\*  
\* \*

Տեսնող եւ տեսանող Օշականէն մի քանի յատկանիշեր մատնանշելով, կէզրափակեմ.

Առաջին՝ կը հիանամ Օշականի Աստուածաշունչի, հայ մատենագրութեան եւ միջազգային գրականութեան խոր ըմբռնումին վրայ:

Երկրորդ՝ աշխարհասասան դէմքերուն եւ դէպքերուն Օշականի ներթափանցումը շշմեցուցիչ է:

Երրորդ՝ հայ ժողովուրդը, հողը, մշակոյթը, պատմութիւնը օդապարիկ վերլուծումներ չեն Օշականի մօտ. այլ՝ կեանքի ուսանելի դասեր:

Չորրորդ՝ համաձայն եւմ Եղիվարդին (?). «Գիտէր նոյնպէս մեր Եկեղեցին, իբրեւ սրբազան մասը մեր պատմութեան ոչ իբրեւ գաւազանագիրք մը, այլ իբրեւ կրկէս մը իրարմէ հզօր առաքինութեանց, որոնցմով գօտեպինդ՝ մեր հայրապետները անցեր են արիւնի եւ կրակի մէջէն» (էջ 437, 487)<sup>3</sup>:

Ահաւասիկ եզակի Օշական կայցելէ մեզ նոր գիրքով մը: Իր հիանալի բազմազիտութիւնը իմացական եւ զգացական բա՛ց սեղան է մեր միտքին եւ սիրտին վայելքին համար...:

7 յուլիս, *տօն պայծառակերպութեան*  
*Տեսնոն մերոյ Յիսուսի Քրիստոսի*

Նարեկ արք. Ալեեմէզեան

---

<sup>3</sup> Տե՛ս էջ 205, ուր Օշական ի՛նք գրած է. «Գիտենք մեր Եկեղեցին, ոչ իբր գաւազանագիրք մը, այլ իբրեւ կրկէսը իրարմէ հզօր առաքինութեանց որոնցմով գօտեպինդ մեր հայրապետները անցեր են արեան եւ կրակին մէջէն...»:

## ԳՐԱԿԱՆ

### ՄԱՂԻՄԱԿԱՆ (ՀԱՆՂԷՄ ԶԳԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ)

Տեղեր կան որոնց մեզի պարտադրած անհաճոյ կամ անակնկալ տպաւորութիւնը քիչ քիչ կը մեղմանայ, գործին ու գիծին միջամտութեամբ, վերածուելու համար ի վերջոյ գրեթէ սիրաւետ զգացումի մը: Ուրիշներ, որոնցմէ մեզի հեղուած զգայութիւնները չեն կրնար անձնաւորուիլ, գրաւելու համար որոշ բարձեր մեր հոգեկան անդաստանէն. վասնզի իրենց տարտամութիւնը կը գունատէ, կը սպառէ զիրենք շատ արագ, բիւրեղացման բախտը զլանալով անոնց: Պիտի չխօսիմ այն միւսներէն ալ, որոնք չես գիտեր ինչ անմեկնելի օրէնքներու ճնշումով, մեր ներսը կը մնան կապուած տրտում, երկիւղառիթ յոյզերու եւ նման անխացած գերեզմաններու կը պատկին մեր հոգեդաշտին վրայ, յամառ ու աննահանջ, իրենց գիծերը հետզհետէ կարծրացնելով: Յիշատակ կը մեր լացերուն, այդպէս մռայլ, այդպէս շիրիմ, երբ կուզենք փախչիլ մեր ներկայէն բայց կը վախնանք մեր գերեզմաններէն:

․․․․

Ո՞րն է ասոնցմէ սա տարօրինակ քաղաքը որ կայ գրեթէ ծովեզերքին, կը սկսի բայց չըլլար: Վասնզի երբ ոտքերդ կը դնես ցամաք, վախին տակն ես անժուժելի խուժումին: Կը զգաս որ քայլերուդ շրշիւնը, առանց ուզելուդ, կ'արթնցնէ դարերը որոնք ուս տալով իրարու կը բարձրանան տրտմութեամբ: Ու իրենց թւերուն տակ ամփոփուած խռովքը կ'արձակուի, նման մահա-հոտ զգացումի մը, ըլլալու համար սա վայրապատկերը, երբեմն կորաքամակ պարիսպ, որուն գողցուած ըլլայ քաղաքը. երբեմն՝ խմբակ մը բորոտ տուներու որոնց կրացած պատին խոնարհ կենդանի մը կը նայի քեզի ու կը սպասէ տան մանուկին դէպի Նոր Եգիպտոս մը. երբեմն՝ սգազգեաց մենաստաններ որոնք վիրաւոր կանանչի մը վարշամակէն սլաքի մը պէս անցք

կուտան խաչի մը թելերուն ու կը գորշանան, նման իրենց կամարներուն տակ պուտ պուտ դեղնող հոգիներուն:

Ըսի՝ ծովեզերքէն է սկիզբը այս քաղաքին: Աւելի ճիշդ պիտի չըլլա՞ր զայն երկարել մինչեւ չորս ծագերը սա մեր աշխարհին, քանի որ ինծի պէս ամէն այցորդ զայն իր հետ կը բերէ քիչ մը. զայն արդէն ունի իր մէջ: Այդ մեծ աշխարհի մասին, անդրանիկ իմ մտապատկերս, մեր գեղէն դուրս:

**«Սուրբ Վերիսաղում»**ն էր եղած, գոր կերգէին մեծ շուքով դարձող հաճիները երբ զանգակին ու հրացանին համատրոփ նուագին մէջէն ծնրադիր կը յառաջանային դէպի ժամուն խորանը: Անոնց ճակտին վրայ քանի քանի հեղ իմ մանուկի երեսկայութիւնս աստղ է տեսած, կարմրաւուն ու թելաւոր աստղը մեր ուխտին ու տառապանքին, այն օրերուն ալ այնքան իրաւ մեր մեծերուն ճակատին:

Այսօրուան պէս կը հնչէ հոգիիս մէջ միօրինակ ու մելամաղձոտ եղանակը

«...Եկայք ի սուրբ Երուսաղէմ...» այն թօնով որով արքայութիւնը կը թելադրուէր մեր մանկութեան, մատաղ մեռած տղու մը գլխուն, երբ տիրացու մը կ'արձակէր

**«Ի վերին Երուսաղէմ...»**ը:

Դժնդակ ու անխուսափելի կրկնութիւնը: Գրեթէ նոյնն է ճամբան – որ, հիմա, ճերմակ մագերու ոլորք մը գլխուս – կը թեթեւնայ, կը քաղցրանայ դէպի իմ մանկութիւնը. խարտեաշ՝ հակառակ որբ ըլլալուն: Այն օրերուն մեր ժողովուրդը արտեր ու ցորեն ունէր ու բաց սիրտ մը:

....

Ո՞րն է այս քաղաքը:

Կը սահին կողերը, վիրաւոր՝ դեղին պալարներով:

Ու կը նայիմ թշուառ բլուրներուն որոնց վրայ ահաւոր անէծքի մը քղամիդը կը յամառի կարծես ծանրանալ, ընելու համար զանոնք այսքան տապահար, դժբախտ, զուրկ ծիլէ ու ծաղկէ: Հողի տեղ գորշ ստեւ մը, տեսակ մը պատանք: Որոնց իրարու ազոյցը կերկարաձգուի, յուսահատող միօրինակութեամբ մը, կազմելու համար սառնադիր երեսը հսկայական

այեկոծման մը, խոնարհող ու ամբարձող, մինչ՝ նիհար, գրեթէ սուտ կանանչ մը երբեմն ասեղնագարդ երիզ մը դժուարաւ կը յաջողի կարկտնել անոնց փոշոտ քղանցքներուն:

### **Reportage ?**

– Միտքէս չանցնիր ատիկա, մանաւանդ հիմա երբ հոգիէ ու խորքէ անմասն ճարտարապետութիւն մը իր խաղտ ու խուժ թանձրութիւնները սոնքալով կ'ամբարտակէ սա տեղերուն հնաւանդ ու իրաւ սուզին վերել: Ու դառն է ինձի յամենալ նորէն, ալ ջնջուելու դատապարտուած սա բազմադարեան քաղցրութեանց, համեստութեան ու խորութեան, որոնք ոսկի բխումները եղան մարդոց հոգիներուն երբ արժէքը ոսկիով չէին չափեր, ու կեանքը դատելի ապրանք մը չէր ատամի, ճիրանի, ապականութեան կենդանակերպերէն, վասնզի մեզ այսքան թշուառ ընծայող մեր ողբերգութիւնը չի կրնար ծագիլ ուրիշ արեւի ներքէ: Այս տրտմութիւնները ոգեկոչելն իսկ հիմա մեղք է դարձեր եթէ ոչ ամօթ: Թող ելլեր հեղ մը իր գերեզմանէն ու փորձեր քայլ փոխել սա փողոցներուն մէջ ազնուական բանաստեղծը որ երգեց **Լիճն ու Խաչելութիւնը** ու **Դէպի Արեւելք** իր ճամբորդութիւնը խունկի ու յուզումի հիւսիսայգի մը նման սրտառուչ ու թրթռուն գիտցաւ արանդել: Ու կը դրկեմ ընթերցողը ան միւսներուն որոնք տակաւին քառորդ դար մը առաջ մինչէ, գահընկէց սա վայրերուն տրտում գեղեցկութիւնը, դրդող հոծութիւնն ու թելադրականութիւնը սեւեռեցին շքեղ ու խոր էջերու վրայ. անոնց՝ որոնք իրենց ներքին երազը Արեւմուտքէն փախցնելու ճիգին մէջ կրկնապէս սրտառուչ, Գալիլիայի գառիթափերուն, Միոնի մշտամշուշ սարահարթներուն վրայ երկհազար ամով բիրեղացած հէքիաթ մը լուծել, տեսնել, շօշափել ջանացին ու գրեցին մարդոց սրտին խօսող անմահ քերթուածներէն: Ակրոպոլիսին վրայ աղօթող վիուկին սրտաշարժ օծութիւնը, Տիբերիայի լիճին ափերուն...: Ու ովկեանէ ովկեան իր խռովքը ընդ քարշ ածող միւս կախարդին զգայութիւնները երբ կը մտնէ հայոց պատրիարքարանը եւ կը նուաճուի **քամէի** դիմակով մեր վարդապետներուն անբարբառ թախիժէն...: Աւաղ, միտքի այդ հսկաներուն տեղ հիմա

**commis-voyageur**ն է, կամ մեծ թերթերուն թղթակիցը որ անութին թուղթ, ինքնաշարժով կը սուրայ, մեծ վաճառատուններու ապակիներուն մէջ հետապնդելով այլապէս հետեւակ, թիւ, տրամ, յուզումներ: Ջի հիմա մարդոց հոգիները հիւանդ են նիւթէն, ու անցեր՝ ժամանակը երբ ոսկիին ու վայելքին դժնիկը չէր խղդեր մեր սիրտը...: Պարզամիտ, հաւատայեղ քրոնիկագիրներէն մինչեւ սա հրեայ լրագրողներուն արդիական յարդարանքով բարձրաթոյն թափօ ըր: Ու, Ասիոյ բարձրաւանդակներէն բեռ մը մօրուքի ու ծով մը հաւատքի մէջ անճանաչելի ուխտաւոր ծերունին, որուն շառաւիղէն նրբենի ձեւեր, վեղարով լրջացած բայց նոյն քան արտայայտիչ: ... Որոնք փոխնիփոխ զգացին այս վայրերուն աննուաճ կարօտը, – աշուղ կամ իմաստասէր, երբ կը մտնէին Աստուածորդիով յագեցուն սա խորհուրդէն ներս ու կը փնտռէին անոր անթառամ շունչին հուրն ու շաքարը, մռայլ տաճարներու կամարներուն ներքեւ...:

\*

\* \*

....

Ա՛ն է որ կը յորդի աչքերէս, լայննալու տեղ դէպի վեր կոհակուող սա քաղաքը, հեզնութեան մը պէս կառչած իր անունին երբ ամէն ինչ զայն կը հերքէ չորս դիս: Արեւն լքը: Չայն գտնելու համար պէտք պիտի ըլլար փախչիլ սա պողոտաներէն ու սուզուիլ գոհիներէն ներս ուր ապաստան է գտեր պարտուած անցեալը, պարիսպին ետին ինքզինքը դիզած, տունի նմանող ուռեցքներու խորը:

Նոր քաղաք քը:

Ուր տիրական է արեւմտեան ոճին յեռուածքը, անոր թոյլ ու կէս մը պոռոտ մէկ փոփոխակը: Ան՝ որ արագ արագ կերպարանափոխ կընէ սուրիական ափերը ու նեղոսեան ոստանները, ասոնց վաղջնական, գորշ ու փառաւոր ժուժկա-

լութեանց քովիկը բուսցնելով ներկի ու կիրի մուրացիկ արքայութիւն մը:

Երուսաղէմի մէջ, այդ ոճը ոտքի է նետած անհարազատ քաղաք մը, որուն մեծ աշտարակները չեն գիտեր ինչու կարօտը կը բանան սլացիկ կաթողիկէներու կամ մինարէներու, դժնդակօրէն պակասող: Փոխարէն՝ մեծադիր կառոյցներ, իրարմէ անկախ, իրարու թշնամի նոյն իսկ, զանազան երկիրներու ճաշակները այդպէս ցուցադրող: Կուպրէ թուղթեր – նոր օրերու փողոցը – զանոնք կը գատեն կղզիակներու: Ոչ մէկ հետեւողականութիւն: Վաճառատուններ, **պանգաներ**, **սինեմաներ**, հիւանդանոցներ, տափակ բայց տարածուն, Արեւմուտքէն նոր բերուած ու բռնի տեղաւորուած՝ պողոտաներու ազուցուածքին:

Ու լայն մայթերուն վրայ աշխուժ, նրբաւարտ մարմիններ, որոնք համաշխարհիկ վայելքին արդուզարդին բոլոր գիտութիւնները ոճի են հանած ու մեծ ոստաններուն հեշտախտը կը պտըտցընեն իրենց ետեւէն: Արքեանի այդ ձեւերուն վիրաւորող գեղեցկութիւնը երբ կը ճեղքեն մութ ու գոց ամբոխը ու ծաւի իրենց աչքերուն կաթը կաղբերացնեն, ճուռպէն շղթայուած թշուառական նայուածքներուն հետ կազմելով յուզիչ հակապատկեր մը: Երբեմն, աղջնակ մը, որուն հասակին մէջ անապատի ծառերուն մերկ սլացքը կը զարնուի հոգիիդ, եւ որուն մարմինը կը մատնէ ջուրին պակասը, իր ազագուն միսերուն վրայ բարակ տոգունութիւն մը վարշամակած, կը կենայ թախծոտ, գլխիկը բարձր, աչքերը պիշ՝ ուրիշ փարթամ մարմին մը – ի՞նչ արիւնէն, ինչպէս կը շնջան իրենց ջրհորին գլխուն: Դեղնորակ մազերու պսակին մէջ փորագրուած որմանը կարի մը նման, կաթէ հիւսուած այդ դէ մքը, գոր չի հասկնար գեղջկուհին: Հեռաւոր քոյր: Ով գիտէ: Ու կը քալէ, ներդաշնակ ու նուրբ ու տրտմահար, ջրհորին միամիտ աղջիկը, այնքան անորդի բայց այնքան իրաւ, հաւատարիմ իր խորհուրդին որ մարդ կը փորձուի անոր ծոցին վրայ Յիսուս մանուկը փնտռելու:

․․․․

Շինուող քաղաք:

Որ ամերիկեան **սունկ** քաղաքներուն հեքեաթը կը կրկնէ արագ արագ ծածկելով գորշ ամայութիւնները շրջավայրին:

Մտազբաղ կը կենամ լաստակերտներու առջեւ որոնցմէ ներս Ս. Յակոբայ կառոյցները կոճաւորուին տենդագին փոյթի մը մէջ: Քաղաքին սիրտին վրայ սա յաղթանակը արդար հպարտութիւն մը կը բանայ ամէն հայու սրտէն ներս: Իրարմէ մեծ ու աղուոր սա շէնքերը, իրենց ճակտին ամրասեւեռ՝ խորհրդանիշ տարազը Ս. Յակոբայ:

... Անզգալաբար հեռացած եմ Արեւմուտքէն ու անոր մշակոյթին մեծ մեղքերէն: Անհաս են մտքին ինչպէս Աստուծոյ ճամբաները: Քարէն ու գիրէն դէպի աւազանը մեր ցեղին յոյգերուն: Անկումէն ու ողբական տրտմութիւններէն դէպի փառքը կարելի յարութիւններուն:

Ու վեղարով նրբացած, սա օտարութեան մէջ հոգիիդ տարօրէն ընտանի ձեւ մը որ կը բուսնի քարակոյտերէն, տախտակներէն: Մեւ բայց ցոլացիկ այդ պատկերը կը տպաւորէ: Մատաղ գրեթէ պատանի անոր դիմագիծը թաթխուած է ցեղային լրջութեան մը կիսաստուերին մէջ, որ հայրենի լեռան գագաթն ու մեր կաթողիկէները կը խորհրդանշէ:

Չեմ համարձակիր հետը խօսելու: Խորհուրդը դիրաբեկ է այնքան: Զգայութեան, մտածման ու պատկերներու որսորդ, փորձառութիւնն ու վախը ունիմ **«կոտորուած հրապոյրներուն»**, ինչպէս կըսեն գաղիացիք:

Տրտո՞ւմ:

– Չէ կարելի այդ բառով տարազել ինչ որ կ'արտածորի անոր անձէն: Մեւ իր պարեգօտին մէջ վայելչագեղ, երիտասարդ այդ վարդապետը գիտէ՞ արդեօք ահաւոր բեռը իր մատ մը մօրուքին գոր տօճոյն ցաւ մը կը թուի դեղնաւորել աշխատիլ ու չի կրնար: Արեւը պուտ պուտ բաներ կը վառէ անոր ճակատին բայց չի հասնիր աչքերուն որոնք վեղարին կիսաստուերին մէջ կը տարտամին, հազիւ պահելով քաղցրութիւնը հայեցի հայեացքին:

Կը քալեմ ետեւէն, մանկացած բայց յուզուելով:

Ահա ուրիշ մը:

Աղեբէկ՝ մօրուքէն, բայց առոյգ՝ հասակին նետուածքովը: Վերարկուն վայելուչ է դարձեալ ու վեղարին ցոլարձակ ծփանքը ազնուական տրտմութեան մը հետ կը դաշնաւորի, հովէն ծեծուելով բայց չբացուելով: Կը խօսին իրարու հետ, աշխուժ ու լուրջ նոյն ատեն: Գաւառիկ շէշտով այդ բարբառը սրտառուչ է սա օտարութեան մէջ ու սրտապնդիչ ալ, մինչ անոնց լայն թեզաններուն մէջ իրենց գլուխը կը ջանան երկարել դեղնած ու աղտոտ երկու տղաք, արեւեքին անխուսափելի մուրացիկները, ռնգային ու կէս ձայնով մը...: Անոնց փոքրութիւնը հազիւ կը պատսպարէ անտիական սա տառապանքը, վասն զի ճարտար խաղարկութիւն մը զանոնք կընէ զգուելի:

Մեծփոք կրօնաւոր մը, ամբողջովին կզակ ու ծոծրակ, կը հետեւի տղոց շարժումներուն, բերանը բաց, շունչէն նեղուելով: Ան կը շոյէ անգիտակցաբար խարտեաշ ու նօսը իր մազերը, ատենը հեղ մը, իւղէն պաշարուած գրեթէ խզզուած իր նայուածքը – ըսել կ'ուզեմ ակնոցը – շտկոտելով մանրախարիսխ իր քթին վրայ, մինչ ազատ ափին մէջ կը քրտնի սեւափակ ճանապարհացոյց մը, մերթ բացւող ու գոցւող: Հին քաղաքը կը փնտռէ սա շքեղ պողոտային վրայ: Հաստ քրտինք մը, ինչպէս ասոր հոտը, փորին ուռեցքովը քովընտի հրուած պարեգօտին յօրանջող ծալքերը, տրեխին յուլունազարդ փոկերը եւ խաչով սկսող իր համրիչին քովն ի վար մէջքէն ճօճքը հաճելի ինչպէս շահագրգռող առանձնապատկեր մը կը յօրինեն մայթը գրաւող բազմութեան մէջ որուն կէսէն աւելին կը կազմեն իսրայելի որդիները, Արեւմուտքի մէջ դասական կաղապարէն բաւական տարբեր: Հոս է որ այդ պատկերը մասնաւոր կնիք մը կը հագնի, ցեղին ամենէն աննահանջ քանի մը գիծերը կարկառի հանելով: Երկու հազար ամեր երկարաձգուած տարագրութիւնը օտարացուցած է այդ մորթերը իրարու, գերմանական, հիւսիսային ցեղերու մարմնակազմութեան օրէնքները պարտադրելով սեւական ծագումին: Շքեղ, ժանեկազարդ սայլակներու մէջ մանուկներ, կաթէ շինուած, լեցուն, այնքան որ աչուկները դուրսէն դրուած կապուտիկ ուլունքներու կը նմանին ու

անգլիական մշուշին կամ ռուս դաշտերուն ձիւնին մէջ դարերով դանդաղ աճումին բնախօսական հետեւանքները կը ցուցադրեն, ցեղին պատկերին վրայ տիրական յաւելումներով: Մայլակներուն ետին նոյն գիծերով սպասուհիներ, սուրիական տարրով: Ու չես կրնար զանազանել Անգլիական, Գերմանական եւ Իսրայէլեան արիւնները: Հարիւրներով հոս, խոշոր, կլորատիպ այն գլուխներէն որոնց քունքերն ի վար մազի մանրիկ հիւսակներ կը կախուին, դեղնաւուն մորթին վրայ սոսնձուած մանրանկար սիւնակներու նման, խիտ կամ ցանցառ մօրուքներու մէջ կը թաղուի անոնց խարիսխը: Ու գունաթափ գլխարկներու ներքեւ անհանգիստ ա՛յն հանդարտութիւնը որ այդ ցեղին մտքի կեանքը կազմեց, ներքնապէս ամրախարիսխ իրենց յոյսին թելերուն մէջը, բայց դուրսէն շարունակ յոգնախոռով: *Թափառական հրեան* վէպի մը վերնագիրը չէ միայն այլ քալելու տեղ շորորուող, նայելու տեղ ինքզինքը իր ներսը կեդրոնող, ու իր երազին պահպանումէն կլլուած սա ձե՛ւր, տրտում, կիսաժպիտ, գոր դարաւոր տառապանքը մեղմացուցեր է, արելով խորութիւնը հոգեկան գիծերուն ու մանրացուցեր անոնց քիթը ինչպէս ամբաւ հպարտութիւնը: Արեւմուտքին խորհուրդը: Չոր հերքել վտարել կը ջանան հարիւր տարիէ ասդին. իրենց հոգեկան նուաճումը, նուաղումը հակակշռելու իրենց յամառ խաղին մէջը ու կը դառնան աւանդական զգայութեանց փրկարար պատուաստին: Աշխարհի ամենէն շքեղ ոստանները անկարող են խորտակելու հոգիի նորոգման այն անօրինակ ձուլարանը որ կը կոչուի **լացի պատ**: Չայն տեսնող մը ալ չի զարմանար այդ ցեղին ուժգին դիմադրողականութեան: Սողոմոնի տաճարին ոտքը, քսան երեսուն շատ շատ յիսուն քայլ նրբանցք մըն է այդ ձուլարանը, որուն նեղկուկ, խողովակաձէւ քուրային մէջ ամէն շաբթու կը դարբնուի, բոլորովին վերանորոգուած ցեղին ոգին, առաջինէն աւելի ամուր ու միատարր: Արտաւազդին հեքեա թը: Հաւատքի, յամառութեան, չարքաշութեան, հպարտութեան ու մեծութեան այնքան տպաւորիչ պատկեր մը ես չեմ հանդիպած Արեւելքի ուրիշ մրցարաններուն մէջ: Թուրքերը իրենց աղօթա-

տեղիները կը մտնեն իրենց հպարտութիւնը մեղմելու միամիտ պատրանքով: Արարը՝ քաղցրանալու, հանգչելու, զովանալու պէտքէ մը մղուած: Քրիստոնէան՝ երկնայնանալու, այսինքն կեանքէն փախչելու կարօտով մը տրոքուած: Իսրայէլին որդիները լացի պատին ոտքին կը գտնեն իրենց երազին շօշափելի իրականութիւնը, հոգ չէ թէ նուաստ ու գերի, բայց որուն հոծութիւնը շիւղ մը բան չէ զիջած օտար մշակոյթներուն: Ու աւելի՛ն: Արեւմուտքին պերճ ու փարթամ ու նրբենի աշկերտները, մարմինով ինչպէս հոգիով իրենց ցեղէն այնքան հեռացած, դարերու լայնքով մը անջրպետուած, ո՞ր հրաշքին գինովը, քանի մը բոպէի մէջ կը վերադառնան իրենց պապերուն: Ու Գերմանիայէն շունչը հոս առած արդիական գիտունը որ իր գիրքերուն պատգամներէն զատ ուրիշ սրբութիւն չէր ընդունած: Ներքին հզօր շարժէ մը դորդուելով, կը գտնէ ինքզինքը ետ վար, երկու հազար տարի իջած ու... կուլայ: Գործաւորը այս խորհուրդին: – Անկասկած անհուն այն տգեղութիւնը, զոր մարդկային լեզուն չի հասնիր պատկերելու: Շարիշար, ծունկի՝ սալին վրայ, հիւսուած իրարու, կազմելու համար աշխարհին ամենէն անխորտակելի շղթան, մարդկային կո՛ճը կը շարժի առանց տեղ փոխելու: Անկարելի է այդ կոյտին նայիլ, առանց խռովքի: Այդ գլուխներուն անբարբառ պատգաւ մը սակայն: Այդ փակ – որովհետեւ կէտով կոյր – աչքերուն թարախին ընդմէջէն ինքզինքը ազատել ձգտող նայուածքին անհուն ուժգնութիւնը: Այդ կմախք դէմքերուն ախտաժէտ ու փշուտ լարուածքը դէպ երազ: Ու մանաւանդ հաւաքական աւերակոյտին վրայ բերաններուն ահաւոր խռոչնէ՛րը, որոնք զիս կը տպաւորեն գերեզմանի փոսի մը նման, եւ որոնց խորէն, մրմունջի մը անզետեղելի ծովսը, օտար, հեռու, մեղմ ու տարօրէն ցնցող, մինչ ոտքի մնացածներուն ափերէն գիրքի մը իւղ դարձած գիրերը կը փայլին խիստ լոյսին մէջ: Ու լացին ու հոտին, տգեղութեան ու ներքին գեղեցկութեան սա համանուագ յուզումը կը սաստկանայ կիներու երկարուն ու ողբական եղանակովը: Կուլան ու կը ծեծեն իրենց քօղածածուկ ճակատները քարէ քար: Շքեղ տիկին մը, հոտաւետ իր թաշկինակին կը

յանձնէ իր արցունքը զոր հաւանաբար բերած է Էլպայի ջուրերէն: ...

Այս պատկերներուն մօտ ուժգնութեամբ մը օտարականը կը տպաւորուի դարձեալ արաբէն, ոչ՝ Սուրիոյ եւ Եգիպտոսի անկնիք տիպարէն որուն յատկանշող գիծերը աւելորդ է հոս մանրամասնել: Սադիմեան արաբը, նկարէն իր գլխանոցովը, օձերու հասակով մը գլխուն զետեղուած ճերմակ վտաւակ: Որմէ պարեգօտ կը շողայ խայտաճամուկ արձակութեամբ մը: Արաբը՝ նայուածքին հասարակածային սաթովը ու մորթին պղինձ արեւադարձայնութեամբը: Որ կը քալէ, մոայլ ու զայրացած, գահակորոյս կամ պաշարուած իշխանագունի մը նման: Անոր աչքերէն, ձայնէն՝ աննահանջ այն ատելութիւնը որ անապատային վայրերուն ծորումն է մարդոց հոգիէն ներս: Ան չի քալեր, այլ կը ծեծէ փողոցը, ու անոր նայուածքը սլաք մըն է, պատեանէն արձակուած շեղբ մը դաշոյն...: ... Փողոցի մը կեանքը: Ո՞վ պիտի յաւակներ սպառել քու պարզած զգայութիւններուդ մշտանորոգ պատգամը, մանաւանդ այնպիսի տեղեր ուր կեանքին կոհակները կը փրթին այնքան տարբեր գօտիներէ ու կը ծեծուին հակադիր խարակներէ: Մի մոռնաք որ Երուսաղէմ քաղաքն է հինին ու նորին, տնկարանը մարդոց երեք մեծ կրօնքներուն: Ու Պաղեստինը՝ կրկէ՛ս, հզօր ցեղերու եւ կիրքերու:

Բայց այս կեանքը իր վճռական կերպընկալութիւնը կը գտնէ այն ուրիշ կեդրոններուն մէջ որոնք ծանօթ են իբր սրբատեղի: Ժողովրդական զգայնութիւնը այդ վայրերուն վրայ դիզած է ամբաւ հարստութիւնն ու խորութիւնը միլիոններու հոգիին: Կարծես ամպարագիծ հեռագգածութիւն մը աշխարհին կարեւոր անկիւններէն հոս փոխադրած է ուժը, զգացումները, յոյզերը բոլոր անոնց որոնք ապրեցան այս մարզերէն դուրս բայց ամէն օր անգամ մը երազը շինեցին այս տաճարներուն ու անոնց տակ թագնուած խորհուրդին ու այսպէտով նպաստած եղան անոր յաւիտենական կենդանութեան: Ո՞վ է չափեր գաղտնիքը որով կը թրթոյայ մեր արտաքին տիեզերքը: Ո՞վ, նոյն մտածումով, կը յաւակնի չափած ըլլալ ճամբան անտես ճառա-

գայթներուն որոնցմով կը քալէ մեր ներքին տիեզերքը: Հոգեբանութիւնը, բնագիտութիւնը դեռ չեն իսկ սկսած: Այնքան ընդարձակ է մեզ կրկնակի պարուրող խորհուրդը:

Մեռելի մը վրայ արցունք մը կէս դարու կեանք կը պատմէ տեսնել կրցողին:

\*

\* \*

Այդ սրբատեղիները հզօր իրենց թելադրականութիւնը կը պահեն ամէն մտքի վրայ, նոյն իսկ ամենէն աւելի այն մտքերուն որոնք կը խորհին գտած ըլլալ իմացական հաւասարակըշտութիւն մը, ժխտական խարհսխներով: Նպատակէս դուրս է ծանրանալ զգացական այն խորունկ իրականութեան ալ որ հոս այցելող արուեստագէտներուն ներշնչած է մեծ ու գեղեցիկ գործեր: Զուր տեղը չէ որ անուն մը, պատկեր մը դարերու զգացումներուն առանցքը կը դառնան, ստեղծելու չափ մարդկութեան ամենէն հզօր մէկ քանի խոռվքները: Հերքումը, ուրացումը, չեն կրնար հպարտանալ, ու անտեսել անհուն ուժգնութիւնը այդ զգացումներուն որոնք անդրագոյն շրջաններէ սկիզբ առնելուն հակառակ, տակաւին այսօր անհամար սիրտեր խոռվքի, լարումի, երկնային սուգումի տաղաւարներ կը հանդերձեն: Ու դեռ չէ պարտուած մահը որպէսզի անոր հսկայ սաղաւարտները – պատկերը նկատի ունի աղօթավայրերու գմբէթները – պարպուին իրենց խորհուրդէն: Ներքին իրականութիւնը դեռ հացն է տառապող մարդկութեան: Ամէն դար, իր տարողութեան չափով պիտի նետէ միջոցին վրայ քարէ իր երազները որոնք այդ ներքին իրականութիւնը, աւելի հասկնալի տարագով մը հաւատքը այդպէս կարճանացնեն: Չեմ վիճիր այդ զգացումին մեր կողմէ տրուած բիրաւոր տարբերակներուն տեղի կամ անտեղի արժեքներէն: Ատիկա գործը ըլլալու է ուրիշներու:

Իմ փափա քը՝ սեւեռումն է քանի մը զգայութիւններու, իրենց մերկութեան ու անկեղծութեան մէջ, որոնք արթնցան

ներսս, երբ մտայ այդ կամարներուն ներքեւ, կամ մնացի երազկոտ բացավայրերուն առջեւ, – ամէնքն ալ պատմութեան, ասանդութեան պատմուճանով զգեստաւոր: Սոռնալու չէ որ այս երկրին մէջ բլուրներուն կոնակները մորենի չունին, ոչ ալ շէնք շնորհք ծառեր, բայց դէպի երկինք յարդարուած տեսակ մը աստիճաններ կը թուին որոնց վրայէն երեւակայութիւնը չես գիտեր ինչպէս ճամբայ կը հանէ հոգիները: Ու դարձեալ մոռնալու չէ որ Երուսաղէմի պատմական մասը քաղաք մը չէ այլ հսկայ գերեզման մը: Հոն տուները կընկղմին գետնին ներքեւ ու կեանքը սպասում մըն է: Ու ծովեզերքէն մինչեւ Անդր-Յորդանանի շէկ ամայութիւնները հողը դեռ կը տրոփէ հետքերովը աստուածային քայլերուն:

Պիտի չնկարագրեմ տաճարները առանձին առանձին, ատիկա ըրած են խղճամիտ ու մեծ գիտուններ: Ոչ ալ քնարական զեղումներով պիտի պատմեմ այն ոսկի ամպը որ բացուեցաւ իմ մէջ, քարէն ու խունկէն անդին, տառապանքէն ու մարդկային յիմարութիւններէն անկախ, դէպի հեշտագին սուգումները, իրականութենէն փախչելու ու նիւթէն զերծուելու այնքան սփոփիչ զգացումներով: Բարձրաթոյճ քերթողներ տուած են առարկայացումը այդ սարսուռներուն:

Այդ սրբավայրերուն իւրայատուկ զեղեցկութիւնը պայմանաւոր է գիծէն, գոյնէն, կարկառէն վեր, օտար բանով մը: Արուեստին այս հիմնատարերը, այդ կառոյցներուն մէջ, դժնդակօրէն կը հասնին հակադիր արդիւնքներու: Քաղաքական մրցութիւններ անդարմանելի կերպով վիրաւորած են անոնց **օրկանիկ** ներդաշնակութիւնը, խորշերու, մէջ ի մէջ վրաններու վերածելով գմբէթներուն ներքեւ խոնարհող խաղաղութիւնը միջոցին, որ միատարր աղօթատեղիներուն վեհութիւնը կապահովէ ու աչքն ու հոգին կը լեցնէ հաւասարապէս: **Կարգի, դաշնակութեան, համաչափ ընդլայնումի** զգայութիւններ – դասական արուեստին մէկ քանի մեծ ստորոգելիները – մի փնտռէք անոնցմէ ոչ մէկուն մէջ: Այս մարզին վրայ անոնց սկարութիւնը, – ուրիշներ պիտի ճշդէին՝ մեծութիւնը – իբր պատճառ ունի թաքուն զօրութիւններ, աւելի մեծ քան անոնք

որոնք այսօր, օրինակի մը համար, հարիւրյարկեայ կառոյցներ կ'ամբարտակեն նոր աշխարհի մէկ երկու քաղաքներու մէջ: Ճարտարապետութիւնը որ այնքան **ազգային**ն է բոլոր արուեստներուն, ըսել կ'ուզեմ՝ այնքան հարազատօրէն կը յայտնաբերէ տրուած ցեղի մը հոգին, հոս գուրկ է այդ գերագոյն առաքինութենէն: Աւելի տխուրը, – հակառակ իրենց թիւին բազմութեան, թերեւս ալ տեւողութեան մէջ իրենց իրարու մերձաւորութեան, անոնք չեն կրնար մտքի մէջ կերպադրել վիճակ մը որ – նկատի չունիմ կրօնականը – դիմագիծ ունենայ: Այցելեցէք Գահիրէի մզկիթները ու դուք պիտի տպաւորուիք հզօր այն միութենէն որով այդ կառոյցները **մէկ զգացումի**, մանաւանդ **մէկ ցեղի** հոգեխոյանքը կը պատմեն ու իրար կը լրացնեն: Պոլսոյ մէջ Ս. Սոֆիայի տաճարը, անհունապէս **անհատական**, տաճկընալէն վերջն ալ չէ կորսնցուցած արքենի իր խստութիւնը, ճոխութեան մէջ ժուժկալ իր հպարտութիւնը, հոգիներուն վրայ դաժան, գրեթէ բարբարոս այն տիրակալութիւնը որ Արեւմուտքին ու Արեւելքին հոգեկան զսպանակը եղաւ այդ ժողովուրդին մէջ: Ի՞նչն է որ առանց ոճի կ'ընէ Երուսաղէմի քրիստոնէայ սրբավայրերը: ...Անշուշտ այն տաճարները որոնք **Ս. Յարութիւն**, **Ս. Աստուածածին**, **Ս. Յակոբ**, **Ս. Ծնունդ** կը կոչուին, կնիքին տակն են մնացած երկրին քաղաքական ճակատագրին: Հալածանքի ու գերութեան մէջ ապրելու կանչուած այդ կառոյցները պարտադիր համեստութեամբ մը կը սքօղեն իրենք զիրենք իսլամին նախանձէն ու բռնութենէն: Անշուշտ, անոնք գործն են ցեղի մը, շրջանի մը: Բայց որո՞ւնը: Դժուար հասկնալի ճնշումի մը տակ որ միլիոններով հոգիներու բեռն է թերեւս քարին կամ ոճին վրայ, անոնք կորսնցուցած են արդեօք իրենց անհատականութիւնը, հագնելու համար նկարագիրը կրօնքին որ անդին Ասիոյ եւ Եւրոպայի մէջ կը զարգանայ առաւելապէս նման մղումի մը անձնատուր, արտաքին ինքնացումէն աւելի, նպատակը հետապնդելով ազգերու համաձուլումին, միակ ու մեծ զգայնութեան մը ծոցը: ...Միւս կողմէն ծանօթ իրողութիւն է որ սրբատեղիները, մանաւանդ անոնք որ մեծութեան պարու-

նակէն կը ձեռուին, ու հոգեկան մեծ ուժերու համադրումը կընեն, արքաներու, իշխանագուններու ձեռակերտներ ըլլալնուն չափ ու թերեւս աւելի ալ ծնունդը, բիրեղացումը, մարմնացումն են ժողովրդային հուժկու զգայնութեան, այն անդիմադրելի սլացքին որով ցեղի մը սիրտը այդպէս ինքզինքը կ'առարկայէ միջոցն ի վեր: Ո՞ր շալակները կրած են քարերը այս շէնքերուն...: Երուսաղէմը ծայրագաւառային քաղաք մըն էր Բիւզանդական կայսրութեան սկզբնական շրջանին ու ատով՝ ենթակայ յարձակման մղձաւանջին: Կանցնիմ արագ պատմութեամբ թելադրելի ընդհանրացումներէն բայց կը կենամ այդ քաղաքին գրեթէ անընդմէջ գերութեան որ արուեստը տկարացնող էթէ ոչ սպաննող տիրական ազդակը կը նկատուի, պարտուած ժողովուրդներու գլխուն:

Ո՞ւր, ազգային զանգուածը, այսինքն անմահ խմորը բոլոր մեծագործութեանց, ստեղծումներուն: Ասիկա պակասած է այս քաղաքին: Մի մոռնաք թէ նոյն ատեն անիկա ուստանն է այդ արուեստին ռիւերիմ թշնամի ուրիշ մտայնութեան մը: Աշխարհի ծագերէն գաղթական հոգեհոսանք մը դժնդակ պաշտօնը ունի հակակշռելու այդ ատելութիւնը, պահպանելու համար իրը: Քաղաքական վերիվարումներու թոհուբոհին մէջ, կրօնական միաբանութիւններ, մանաւանդ լատինն ու յոյնը այդ սրբավայրերուն տիրակալումը կը հետապնդեն կարելի ամէն փոքրութիւններով: Աշխարհիկ նպատակներու այս գերիշխանութիւնը արհամարհելի իրողութիւն մը չէ հոս, ինչպէս ցեղային տարրին տարտամութիւնը: Անհատականութեան, դէմքի, մարմինի սա պակասը այս տաճարներուն վրայ հաւանաբար կը կապուի ուրիշ հանգամանքի մըն ալ: Անոնք ողողուեցան հրեային ու արաբին ցաւովն ու քրտինքովը երբ կը կառուցուէին:

Ու միւս կողմէն, ծագումի սա պայմանը չի՞ ներգործեր նաեւ չէզոքացնող, օտարացնող սա ընդհանրականութեան մէջ որ այդ սրբատեղիները կընէ բաժան բաժան, առանց ազգային կնիքի, էթէ նկատի չառնենք միւս նոյնքան իրական արդիւնքը որ վկայութիւնն է դարաւոր կիրքերու: Այդ տաճարներուն մէջ

կռիւն ու ասելութիւնը իրենց ասպարէզը ըրին ուրիշ ոչ մէկ տեղ տեսնուած յամառութեամբ, ուժգնութեամբ: Կանթեղ մը փոխելը անոնց սրբաշունչ կամարներուն ներքեւ դուռ կը բանայ կազ ու բախումի, մինչեւ իսկ արիւնի: Երեք դաւանութիւններն ալ իրարու վրայ լարուած աչքեր կը պահեն տաճարներուն պատերուն ներսը ու մշտապատրաստ զիրար բզքտելու անմիջապէս որ մէկուն լուսարարը սրբապղծութիւնը գործէ մոմ մը փոխելու պատկերի մը առջեւէն...:

(Մնացեալը յաջորդ թիւին)

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, Ը. ՏԱՐԻ, ԹԻԻ 8, ՕԳՈՍՏՈՍ, 1934, ԷՋ 240–245)

ՄԱՂԻՄԱԿԱՆ  
(ՀԱՆՂԷՄ ԶԳԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ)

Աւելին: Նիւթապէս շէնքէն զատ, ասոր նկարագիր տուող ներքին յարդարանքն անգամ ազդուած է այս ոգիէն: Տաճարներու բաժին բաժին կտրուած մարմինը, ոսկիին ու արծաթին ճնշումին տակ, կը տառապի **մերկութեան մեղքով** մը: Լատինները, այնքան յստակ, արարողապաշտ, գրեթէ հեթանոս իրենց բնագաւառեան **գաթէտրալներուն** ներքին յարդարանքին համար, Սուրբ Տեղերու մէջ իրենց բաժինները չեն կրցած արժեւորել: (Չուտ իրենց սեպհականութիւնը եղող նորակառոյց տաճարներ մուտք չունին այս վերագրումին մէջ): Այս դիտողութիւնը կը տարածուի յոյներուն ալ վրայ որոնց մեծաստուեր ոճը, թանձր երեսակայութիւնը ոսկիին ու արծաթին ընդմէջէն կը դալկանայ ու կը մարի, անկնիք հաւաքում մը ըլլալու աստիճան: Ու ինչ որ մեր, հայերու աղօթարաններուն ներքին գեղեցկութիւնը յօրինած է, պարզ, վիրաւոր, անուշ ոճը մեր խաչկալներուն, նկարներուն, աղանիին ու ոսկեկողք մատեաններուն, բուրվառին ու ծաղկամանին, կանթեղին ու քշոցին, հոս կը դժուարանայ կարծես ինքզինքը ըլլալու: Չեմ ըսեր զայն օտարացած, աղաւաղ, ինչպէս եղած է նկարագիրը ցեղային միւս սրբութեան, մեր գեղեցիկ բարբառին՝ զոր առանց կսկիծի անկարելի է ունկնդրել տեղացի ազգայիններուն բերանէն. այնքան հնչումները այլափոխուած են անոր լեզուին վրայ: Նոյն անկնիք արտայայտութիւնը նաեւ՝ նկարներուն երեսէն որոնք չեն համարձակիր մեզ դիտել, ապահովաբար հայ չըլլալուն: Հարիւրաւոր այդ կտաւներուն վրայ բանակը կայ սուրբերուն: Բոլորին դէմքէն մեր գիծերը կը պակսին: Ո՛ր՝ մեր ձեռագիրներու մանրանկարներուն միամիտ, կոշտ, անճաշակ բայց տարօրէն հայ դիմագիծները: Հիները այդ նկարներուն կը տառապին գունաթափ չէզոքութեամբ մը ազգային զգացումէ. նորերը՝ կը վիրաւորեն յստակ

օտարութեամբը իրենց արուեստին, ոգին ինչպէս գոյնով իրացած դէմքերուն որեւէ միսի կտոր ըլլալէն: Մնաց որ ազգային ոգիի այս օտարութիւնը հասարակաց է միւսներուն համար, եթէ նկատի չառնենք յունական բաժիններուն **արքայիկ** խստութիւնը:

Գուցէ ծանրացայ սա զգայութեանց վերլուծումին աւելի քան ներուած չափը տպաւորապաշտ սա էջերու փնջիկին: Ըրի ատիկա, անգիտակցաբար հալածուած ուրիշ զգայութենէ մը որ հակադրական յատակ մը կը կազմէր իմ մէջ: Այս յատակը խոշոր, անհերքելի, անդիմադրելի միութիւնն էր ուրիշ վիճակի մը որ դարձեալ մարդկային մարմինէն կը բխի, բայց այս անգամ ոչ ներկով, այլ ուխտաւորի տարագով, թափուած այդ կամարներուն ներքէ աշխարհի բոլոր ծագերէն:

Չեմ զբաղիր զբօսաշրջիկներով որոնք այդ սրբատեղիներուն մէջ անճահ, գրեթէ ցաւագին օտարութիւն մը կը ցուցադրեն, երբ անխուսափելի իրենց **գոտաք**ները ուսընդանութ, լոյսի պակասէն տառապող իրենց աչքերը պատռելու չափ լայն ընելու իրենց ճիգին մէջ, կարեն պտիկ մը շնորհն ալ իրենց շնորհագուրկ ձեւերուն, **սբօն**ի յարդարանքով, ցուրտ ու անհրապոյր նոյնիսկ մատաղութեան պարունակէ մը: Մեծ մասը, նոր աշխարհէն, առաւելապէս տարիքով լեցուն, պառաւութեան ու ճերութեան պատգամները բռնի աշխուժութեամբ մը հակակշռել ձգտող, անոնք ահաւոր լրջութեամբ մը, պատկառանքով մը կը պտտցնեն իրենց գլուխները շեշտ, տպաւորիչ, աւելի յաճախ վանող տգեղութեան մը լուսապսակով, զոր տարիքը, ածելիին ամենօրեայ քերթուքը, մանաւանդ մագերուն դեղնախառն պատը կը յօրինեն այդ միսերուն շուրջը: Երկաթէ անցած միսի սա զգայութիւնը հաւասարապէս երեւան կուգայ կիներուն երեսին ալ, փայլատ, գարշ, ոսկորի վրայ չորնալու դրուած կաշիի մը խորտուբորտ զգուանքը արտածորող: Ու մարդ սկամայ կը հարցնէ.

– Ո՞ւր է փախեր կիներ սա ձեւերուն մէջէն:

Բայց գործին կրակովը խարշած, մշտափոյթ այդ դէմքերուն ընդհանուր տգեղութիւնը կը ջնջուի իրական,

սրտառուչ այն միւս թշուառութեան առջեւ որ այս անգամ ուխտաւորինն է, – աս ալ աշխարհին չորս ծագերէն:

Ասոնք ալ ծերեր են, տարազէ, գոյնէ, ազգէ, ընդարձակ այլազանութեամբ: Սրբավայրին տիրական ստուերայնութիւնը բարութեամբ կը միջամտէ, վարագորելով ծնրադիր այդ ձեւերուն անկանգնելի տգեղութիւնը, ու խնայելով այլապէս մերկացնող, քայքայիչ սարսափը լոյսին առատ սահանքին որ հականելիիչ իսկութեան մը նման կը քրքրէ խորշումներուն, փտումներուն սարուածքը մեր երեսին վրայ, որոշ տարիքէ մը վերջ: Մոմերուն անկայուն շառայլը – մոմերու կայսրութիւնը դեռ չէ նուաճուած էլէքտրական յարձակումէն ու տպաւորիչ անտառ մը կը պարտադրէ ինքզինքը, ամէն խորանի առջեւ, քանի մը մարդաչափ սիւներու հասակով, նկարէն զգեստի մը մէջ կոճկուած, ու գլխարկով – գոր խունկի հով մը կը զգուէ անդադար, այդ ճաղատ գանկերը ցուացիկ կընէ հիւանդ կշռոյթի մը վրայ, անոնց մարմինէն բխող, եւ գոր կերկրորդէ անհասկնալի մրմունջ մը, անձանօթ իր աղբիւրէն, ինչպէս իմաստէն, այնքան գլուխներուն ճօճումը, մրմունջին հեւքը, եւ մոմերէն փրթած կարմիր պարը կը դաշնաւորուին միսթիք սուգումի մը խորը, լոյսի ընթացիկ օրէնքներէն վեր խաղի մը վրայ:

Ասոնց հետ, քով, կուշտին կամ ետին, ուրիշներ, մատաղ ու յստակ, դիմագոյնի ամէն փոփոխակներով ու արտայայտութեան անսահման խորութեամբ. ծնրադիր քալուածքին ամբողջ գրաւչութեամբ, մինչ վառուած մոմիկները իրենց անուշիկ լեզուները կերկարեն անոնց մագերուն համբոյրին ու մանրիկ իրենց բերաններէն աշխարհ մը ուժ, հաւատք կը թուին աղբերանալ:

Ու ահա ան ուրիշները, լուրջ ու տառապագին, տարիքին լիութենէն տակաւին հեռու, բայց հաւանաբար աշխարհը կշռած, ծանրոցները սրտին ու մեղքին: Ո՞վ, ի՞նչն է զանոնք հանողը դուրս իրենց հայրենիքին խաղաղ ընտելութենէն ու դրկողը հոս, որոնք իրենց վայելուչ մարմինները խուլ, բայց գոհունակ զգացումով մը կը կործանեն սրբավայրին սալերուն,

դողահար ու գեղեցիկ, տրտում բայց տարօրէն գրաւիչ, ներքին հուրքէ մը զգեստաւոր, ով գիտէ ինչ պատկերներէ հալածական, ո՛ր անասելի վիշտը բանալով սա սրբարաններու մարմարներուն ու կը քալեն խորանէ խորան, նկարէ նկար, իւրաքանչիւրին առջեւ կտոր մը բան փրցնելով այդ վիշտին ժայռէն ու նետելով ուխտի կրակին: Կը թեթեւնան, այդ անուշիկ աչքերէն, այդպէս պարպելով արցունքը, մարդելու հոգին օղակող դառնութիւնները: Կը թեթեւնան, հալեցնելու չափ երկաթ կապանքները հոգիին թելերուն, որպէսզի մեր մարմինէն նուաճուած, գերուած, շղթայապիրկ այդ պարիկը սլացք առնէ դէպի մեծ աւազանը Ոգիին, երկինքն ու երկիրը լեցնող Խորհուրդին: Վասնզի ամէն հոգի ճառագայթ մըն է, ինչպէս կըսեն հնդիկներ, ու պիտի դառնայ իր աղբիւրին: Մատաղ մարմինները վայրկեան մը կը վարագուրեն խորունկ այս իմաստութիւնը ու կը նմանին ամպի թելին որ կը տեղաւորուի ընդմէջ արեւին ու երկրին: Ու գեղեցկութիւնը, աւաղ, մեղք մըն է երբեմն, գերեզմաններու մօտ: Ու ամէն սրբավայր կրկնայարկ գերեզման մըն է:

Ըրէք այդ ձեւերը տասը, քսան, յիսուն: Մուրբ տեղերու դռները չեն գոցուիր ու օրուան ամէն պահուն մթնոլորտը, այդ գմբէթներուն ներքեւ, խռովուած է մեղքին պղպջակներովը: Դրէք զանոնք քով քովի, նոյն սալերուն վրայ դիմակործան: Մութին ու փռշիին մէջ սա թաթաւումին վերեւ բացէք անձրեւը տարօրինակ այն երաժշտութեան որ թաթառի նման կը խուժէ տաճարին զանազան անդունդներէն, կը բռնանայ ու պահ մը ինքզինքը հարկադրելէ յետոյ կը քաշուի ուրիշ անդունդ մը: **Մ. Յարութեան** տաճարը բարձրադիր քարայրի մը կը նմանի, որուն խորշերը կը խորանան ու կը մթնեն, փոխնիփոխ լուռ ու որոտացող: Չորս ազգերու աղօթասացութի՛ւն, կամարի մը ներքեւ:

Ինքնատիպ, ինքնագլուխ, այլամերժ ու վիրաւորիչ այդ ժամերգութի՛ւնը, երէք չորս եկեղեցիներու բերնով պոռացուած, գերադրուած, զիրար հերքելու, խղդելու վայրագ ցանկութեամբ

մը, որ այդ երգերը կ'այլալի իրենց խորքէն բայց կընէ այլապէս  
ալ տպաւորիչ:

Խոշոր, ցուցամու, ամբողջութեամբ կոկորդ, տիրակա-  
լելու կամքէն տասնապատկուած ուժգնութեամբ մը, բիրտ ու  
հզօր, առանց շեղումի ու առանց քաղցրութեան. բացառաբար  
Արեւմուտք. – ահա թէ ինչպէս զգացի ես խորտակող այն  
երաժշտութիւնը զոր Լատինները կը գործադրեն, քովընտի  
խորանի մը խորէն, հռոմէական ծաւալումը յիշեցնող սաստ-  
կութեամբ մը: Ժամեր տետող այդ ճիշը, մետաղով ալ  
պաշտպանուած, քահանաներուն ահարկու կոկորդը կարծես  
աւելի կ'ամրացնէ: Կարգ մը եկեղեցիներու մէջ ձայնի այս  
սաստկութիւնը մեզ կը տպաւորէ թաքուն տրտմութեամբ մը:  
Մեր մելամաղձոտ ու նուաղ երաժշտութիւնը, որուն հիմ-  
նական **մոթիֆը** քաղցրութիւնն է եղած, բայց ոչ ուժը:

Ու երկարուն, նրբանալ ձգտող, բայց խստացող երգա-  
սացութիւնը Յոյներուն, որոնք լատին հնչականութեան կը  
դիմադրեն ինչպէս դիմադրած են անոր եկեղեցական գերա-  
զահութեան: Անհաշտ այս կեցուածքը կը փորձուիմ տեսնել այդ  
երաժշտութեան ալ մէջը երբ տասնով, քսանով բերաններ  
հեղեղի պէս կը բացուին մութին մարմինին վրայ ու կըլլան  
աննահանջ ծորակները այդ տիրակալող զգացումին: Կայ-  
սերական երաժշտութիւն: Ինչո՞ւ չէ:

Ու անորակելի, ջիղերը բզիկ բզիկ բերող նուցը  
Ղպտիններուն, տաճարին մէջ լարուած տեսակ մը վրանի  
ներքեւէն: Անապատին արձակութեանը վրայ ձեւուած: Ընդար-  
ձակ, միակտուր, գրեթէ: Ձոր կը փորձուիս բռնել մատներով,  
այնքան հաստ է ու դպող: Կարկառի, ելեւէջի այս պակասը, որ  
միւսներուն եղանակին մէջը զգալի է որոշ չափով, ասոնց մօտ  
տիրական կը դառնայ: Ու կը հարցնեմ, ո՞ր է սկիզբը սա  
վազքին, վասնզի չի քալեր երգը: Բայց այս միօրինակութիւնը  
հետզհետէ տառապագին խստութեան մը կը վերածուի, որ կը  
տապալէ ամէն ընդդիմութիւն. ու, հակառակ զինքը կորզանող,  
փողոկող բերաններուն այլապէս անժուժելի դառնութեան, կը  
բարձրանայ վրանին մուտքէն, կը պատռտէ արդէն ալեծուփ

պաստառը տաճարի համանուագին ու կամարն ի վեր կը թռի բրգանալ: Եզիպտո՞ս: Ուշագրաւ է որ տաճարը յուզող, ալեկոծող երգասացութիւններէն ամենէն ազգայինը ըլլայ ան: Ով որ եղեր է Մեմփիսի երկիրը, հարկադրաբար սա երաժշտութեան թելերովը կը փոխադրուի Նեղոսի ափերը, պամպուներով հովանաւոր այն ողբանուագին գոր կոյր կամ մատղաշ բերաններ կը ծորէին ջուրերուն գլգլութին վերել, այդպէս երկարուն, ռնգային, անսպառ ու տարօրէն սիրտ յուզող:

Սրտատրոփ կը սպասեմ մերիններուն:

Տպաւորիչ, տխուր թափո ըր: Վեղարներու կոները՝ որոնք առանձին կշռոյթ մը կ'ըլլան. այդ գլուխներուն տալով խորհրդաւոր, սգապատար հով մը, տարօրէն ցեղային, նման անոր որուն զգայութիւնը կուգայ մեզի երբ թղթատենք հին մատեանները ու կենանք, երազկոտ, նախնական արուեստով մը փորագրուած պատկերներուն առջեւ, կամ մանրանկարներու նուրբ գիծերը մեծցնենք մտովի: Հասկնալի զգայախաբութեամբ մը, ըռպէ մը աչքս իրարու կը վերածէ անցեալն ու ներկան...: Տաճարին վերին խորշերուն մէջ է որ կը մատուցուի ս. պատարագը: Հաստ ստուերը որ կամարէն հեռու ինկած սաներքնամասը կը յարդարէ լռամած միսթիքով մը, եւ գոր վախկոտ լոյսեր կը ջանան երանգաւորել, հետզհետէ կը հաշտուի, կը դաշնաւորի տեղին ինչպէս հոգիներուն հետ: Վեղարը ոչ մէկ տեղ այնքան իր խորհուրդին մէջն է որքան սա ստուերայնութեան խորը, երբ գլուխները կը վերածէ իրենց մէկ երրորդին, ծածկելով ճակատ ու գանկ ամբողջութեամբ ու կը ձգէ խիստ իր շուքին տակ աչքերը վարդապետներուն: Լուրջ, ցեղին դարաւոր վիշտէն նուաճուած սա բերաններէն կը յորդի երաժշտութիւնը, առատ, իր մեծ գիծերուն մէջ ընտանի ինծի, բայց քիչ մը տարբեր: Շեշտեր, երկարումներ ունի որոնք հաւանաբար իմ անգիտակցութեանս մէջ մթերուած զգայութեանց ադամանդ ծովուն վրայ շեղումներ, բեկումներ առաջ կը բերեն ու կը խոռվեն անոնց երեսը: Ո՞ւրկէ՛ այս այլերանգ համը հայ երգեցողութեան, սրբավայրի մը մէջ որ հազար տարիէ

աւելի տււողութիւն մը ունի, այսինքն ազգային շեշտը անվթար պահպանելու կարողութիւնը: Ակամայ կը խորհիմ երուսաղէմին, տեղացիներուն լեզուին որ հայ բառերուն պարտադրած է այնքան տարբեր առոգանութիւն, օտար ըսուելու չափ խորթ մեր հնչաբանութեան օրէնքներուն: Խունկ: Ու խորունկ, հեռաւոր դարերէ փրթած շարժումներ որոնք մեր ժամերուն ներսը բացուեր են մեր ժողովուրդին վերել...: Ու կը պոռան վարդապետները, նման Լատիններուն ու Յոյներուն, հաւանաբար հարկադրեալ, թերեւս անձնատուր հսկայ պահանջի մը որ այդ պահուն կը խուսափի իմ հասկացողութենէս: Մոռցուած՝ ցեղին տիրական շեշտը, ըսել կուգեմ այն անուշութիւնը որով պարուրուած է անոր ստեղծագործութիւնը, նոյնիսկ կոխտտած հողը: Մոռցուած՝ ծաւալուն, սրտառուչ, անհաւասարելի երկնայնութիւնը, իրականն ու անիրականը իրարու վերածող հսկայ շնորհը որով մեր երաժշտութիւնը, միսի ու հոգիի բխում մը կըլլայ նոյն աստէն, մարդկային, պուտ պուտ քաղուած իսկութիւն մեր հազարամեայ վիշտին փապուղիներուն կամարներէն, ու խտացած երկինք՝ երբ իր ալիքին վրայ մեզ կանոնէ կը տանի վերնականին անճառութեան: Մեր սրբազան երաժշտութիւնը, այնքան ազգային (սկզբնապէս օտար տարրը ջնջուելու չափ եղափոխուած է անոր մէջ), այնքան ժողովուրդ, մաքուր, վառ: Որ հայրենի տաճարներուն մէջ մեզ բոլորս իրարու կը կապէ, մեր հակամարտ կիրքերը պահ մը եղկելով իր ցօղին ներքէս: Որ դասն ու գաւիթը, խորանն ու կամարները իսկապէս «տուն Աստուծոյ» կը հանդերձէ երբ կը տարածուի բերնէ բերան, ու ինքն իր մէջ ծփուն ու օրօրուն ոսկի շղարշի մը պէս կը փաթթէ կարծր դերբուկները, վերքերը մեր հոգիներուն: Դիտած եմ որ օտարներու պատկանող մեծ եկեղեցիները աւելի տպաւորիչ վեհութիւն մը կը թելադրեն այցորդին երբ լեցուն են ամբոխով բայց առանց երգի: Մերինները կը կրկնաւորեն իրենց վիրաւոր գեղեցկութիւնը երբ ատեանը գրաւող բերաններէն կը յորդի մեր երաժշտութիւնը իբր թելաւոր հոգին ռամիկին ինչպէս իմաստունին, սրբազան հաղորդութեան մը մէջ հաւասարած իրարու: Ուրիշ չէ կերպը

հոս ալ: Արարողութեան բարկ շեշտը, զոր տաճարին ընդհանուր հոգեբանութիւնն էր յօրինէր քիչ առաջ, հիմա կը մեղմանայ ժողովուրդ տարրին միջամտութեամբը, անշուշտ անուղղակի, – մրմունջ, սգաւոր ու նուրբ, որուն չես կրնար անհաղորդ մնալ, թեթեւ աղօթք, շատ մի կզակներէ նոյն աստէն, զոր վերացման խորունկ կեցուած մը կընէ այնքան հայ ու արտայայտիչ, առանց շրթունքի լուռ մեղեդի, զոր յօրինողն է դէմքը, ճակտին ու յօնքին ու կոպերուն ստուերախաղովը կերպադրուած: Ու ալեհեր գլուխներ, մեր սպասումին, յամառութեան ու մեղքերուն այդ գահոյքները, զարնուած բայց պահող տեսակ մը կնճռոտ փայլ անուշութիւն որ կը հակակշռէ մեր թերութեանց ամբողջ հանդէսը ու մեզ իրարու կը հակէ, գէթ Աստուծոյ տունին մէջ: Ու խարտեաշ նայուածքը տժգոյն տղոց, բոլորն ալ աղէտէն յետոյ արեւին ինկած ու կրելով կնիքը իրենց նկուղակերպ բնակարաններուն: Ու պառաւներ, ափ մը բան մնացած բայց իրենց բազուկները լուսեղէն սանդուխներու նման լարած դէպի երկինք: Այս բոլորէն կը գոյաւորուի տեսակ մը մթնոլորտ որուն մէջէն իբր գտիչ հեղուկէ մը երգը կը քակուի, ազատուելով հետզհետէ փոխառիկ, բռնի իր երանգէն զոր մրցութեան բնագորդ դրեր էր վրան ու կըլլայ պաղպաջուն վտակը մեր հոգիին, այնքան անխառն, երկրի վրայ իսկ երկնային: Ու ասիկա առանց հոգեբանական ուրիշ ազդակներու միջամտումին:

․․․

Կըսեն թէ տօնական օրերուն, մանաւանդ Չատկին ու Աստուածայայտնութեան շաբթուն, սրբավայրերը կը տասնապատկուին իբր պատկեր, զգայնութիւն, թելադրանք ու յուզում: Թէ՛ հազարաւոր ուխտաւորներու համատրոփ հոգին գրեթէ տեսանելի գոլի մը նման կամար կը կապէ գմբէթին ներքեւ ու կը ծփայ կապուտիկ շղարշ մը իբրեւ ընդմէջ երկու երկինքներու խունկին շունչէն բիրեղանալով: Թէ՛ անձանօթ սարսուռներ կը վէտվէտեն այդ խորհրդաւոր պաստառը որուն վրայ խորաններէն տեսոնագրուող մեծ եղելութիւնը կը ցոլածփի, պահէ պահ գոյն ու թրթռում, աղօթք ու տառապանք, ինչպէս վարը,

հոգիներուն փակ ծովը մարդոց գանկերուն ներքեւ: Կըսեն թէ հինաւորաց ու ծանրաբեռն պատերը, կը մասնակցին այդ զեղումին, օրուան խորհուրդին բերելով այլապէս բարդ իրենց ալ հոգին վասնզի նոր չէ որ իրերը հոգի մը ունին, թէ կամարներուն վահանները կը բացուին անցք տալու համար «**Ի մեռելոց Յարուցելոյն**», կամ կը խոնարհին դէպի ժողովուրդը, ընդգոգելու համար ցաւն ու ըղձանքը հազարներուն: Թէ՛ կանթեղները կը ջերմանան, պայծառագին զուարթութեամբ մը, ողկոյզ ողկոյզ, իրարու հիւսուած հրեշտակներու թափանցիկ միսերուն նման, ու անոնց նշաձեւ, բոցէ աչքերը լեզու կէլլեն ու կը պատմեն, մասնաւորներէն միայն իմանալի բարբառով մը, իրենց դարաւոր իմաստութիւնը զոր սորված ըլլալու են դարաւոր իրենց կախաղաններէն, ու այն նկարներէն որոնց քերթուածը կանչուեցան լուսաւորելու: Կըսեն նոյն իսկ թէ (եւ մեր կողմերն ալ լսած եմ ասիկա) այդ նկարներէն ոմանք այդ օրերուն կը ձգեն իրենց կտաւները, գալ առնելու համար իրենց մարմինները այն դղրդումին, սասանումին որոնցմով գալարագին կը հրդեհուին հոգիները ադամորդիներուն...: Թէ՛ կոյրերուն ամենատես աչքը պատմած է աւելի փայլակնաւետ բաներ, հոգեխօսական խոր իրականութեամբ, պահին ու օրուան գրգիռովը ժայթքած այն վիճակներէն որոնք ազգերու գրականութեանց մէջ ծանօթ են միսթիքական տեսիլներու պարունակով...: Թէ...:

Կարելի է:

Բայց, ինձի կուգայ թէ առանց այդ օրերու մասնայատուկ խորհուրդին ալ, սա վայրերուն մէջ կը սաւառնի անբացատրելի բան մը, որուն շաղապատումէն չի կրնար խուսափիլ հոգին: Անշուշտ, խորունկ ուժեր, ընդվզումի բնագոյ, իմացական հպարտութիւն ու ինքնավստահութիւն կրկէս կէլնեն, եղերական պայքարը պայքարելու, վաղաձանօթ ճակատումը միտքին ու սրտին, աւելի մէկ տարագով մը՝ գիտութեան ու կրօնքին: Անշուշտ կան մարդեր որոնք կանխափակ իրենց միտքը ճակատ իսկ չեն հաներ ու կը կարծեն ընդմիջտ հարթած ըլլալ անլուծելի առեղծուածը, զայն նկատելով մտացածին մշուշ մը ու

կանցնին անդին. բայց աժան այդ հերոսութիւնը աւելի ուշ պիտի դատեն, իր ճշմարիտ արժէքին տանելով այն հիւլէական ստուգութիւնը որ բաժինն է մարդոց միտքին – խորհուրդներու ովկիանէն աւազի հասիկ մը իսկ չներկայացնող մեր գիտութիւնը: Ամէն պարկեշտ միտք առնուազն այս անհուն կշիռին առջեւ ընելիք ուրիշ բան չունի եթէ ոչ իր բան մը չգիտնալը յայտարարել:

Այս վիճակէն անկախաբար, նանրամիտը, աշխարհիկ յաջողութեանց հերոսները, իշխող տուրքերով կամ դրամով ու տաղանդով հարուստ պաշտօնատարները կը խորհիմ թէ կը լրջանան սա սիւներուն ուղիղ, հպարտ, խոնարհեցնող պատկառանքին առջեւ ու կը տարուին խորունկ ու հաստատ գեղեցկութեանց ըմբռումին, անցաւոր ու աղցաւոր մեր փառքերուն, վայելքներուն ճահիճէն պահ մը գերծելով իրենց թւերը, զանոնք բանալու համար բարձր, իրապէս սփոփիչ հաճոյքներուն սփիւռները մինչեւ: Թերահաւատը կը ջախջախուի երբ սա պատերուն, կամարներուն վրայ ու քարայրներուն խորը ինքզինքը մղուած գտնէ տեսնելու, զգալու միւտոնը միլիոններու սրտին որոնք իրմէ առաջ հոդ թափեցին անխմանալի արցունքը իրենց կորստական հոգիին. անոնք ալ իրեն պէս այցուած խօլ, պիրկ, ամբարիշտ յուզումներէ, հպարտութենէն, տարակոյսէն, բայց այսօր անցած անվերադարձ, թերեւս հասած ալ եզրը խորհուրդի ծովին որուն տեսիլքը, զգայախաբակական թելադրանքը տրուեցաւ իրեն սա սրբավայրերէն: Ու կը խռովի, վստահ եմ ատոր, անհաւատը եւս, իր անկնճիռ ու պանդոյր խաղաղութեան մէջ, տարակոյսին սլաքէն կճուած ու տրամադիր՝ ընդունելու վճիռը որ մարդկենդանիին իմացականութիւնը կը կանչէ համեստութեան, զայն անբաւական, անապահով, առնուազն քիչ յայտարարելով իր պարագրկումին առարկայէն: Վասնզի, ինչ որ ալ ըսենք, որքան ալ յաւակնութիւնները սիրենք միտքին, այսինքն թիւին ու մեքենային, աւելի քան երբեք ստոյգ է ու խորհուրդին ամբաւ կամարը ցցուած կը մնայ ընդմէջ երկու աշխարհներուն որոնք հաւասարապէս կ'ընդոտնեն մեր ուղեղին պարզապաշտ վճիռ-

ները: Մեր Գիտութի՛ւնը (գլխագրեցէք բառը) որ դեռ չէ լուծած ճակատագիրը, գաղտնիքը արեան մէկ հատիկ գնդիկին ու չէ արձակած կապանքը հիւլէին: Մեր գիտութի՛ւնը որ կը նմանի իր գլուխը մացառին մէջ թաղող ու որսորդը ուրացող նապաստակին, երբ աչքերը կը քաշէ երկինքներէն ասդին ու իր գործիքներուն, հայելիներուն, դեղի սրուակներուն, թիւի ու տարազի տախտակներուն կարելի բայց ճիղճ ապահովութիւնը կընդառաջէ մեր անհուն խռովքին, պապակին, դէպի մեծ գիտութիւնը հոգիներուն. տիեզերքը լեցնող այն ահաւոր, անորակելի իրողութեան որուն մէկ կայլակը կը զարնէ մեր սրտին մէջ: Մեր գիտութի՛ւնը: Զոր պատրաստ ենք սիրել սակայն, հակառակ իր վրիպանքին, իբր ճամբայ մը դէպի այդ խորհուրդը: Ու պատրաստ ենք դարձեալ սիրել մեր տգիտութիւնը, աւելի ճիշդ բառով մը մեր **անգիտութիւնը** որ վերածելի է պարզութեան տարազի մը: Աղօթքի, երազի, նիւթէն վեր ըլլալ կրնալու տրամադրութեանց ապրշո՛ւմ թել մը, մատչելի պարզին ու իմաստունին, – թել որ կ'առաջնորդէ դէպի լուցումի, հանդերձումի, կենսաւորումի ամբաւ խորհուրդին: Չեմ գիտեր որոնք աւելի քիչ արգահատելի կը մնան. անո՞նք, որ այդ կախարդ թելին վստահած, կ'ապրին իրենց օրերը ու այս կեանքը կ'իջեցնեն իր նուագագոյն արժէքին, լայնագոյնը փոխադրելով աւելի հեռու տեղ մը ուրկէ բխած ըլլալու է լիութիւնն իսկ կեանքին. թէ անո՞նք՝ որոնք մանրադէտին վրայ իրենց դժբախտ գլուխները կը զարնեն ու կը զարնեն, սպասելու պատասխանը ահաւոր հարցումին:

.....  
Այս ամէնը մտածումներ ըլլալէ աւելի զգայութիւններ են իմ մէջ:

Քաղցր ու խոր յուզում մը, որուն նկարագիրը կը վախնամ ճշդելէ, կը ծաւալի երակներէս, ինծի կուգայ թէ կը թափանցուիմ ոչ թէ նոր այլ հին ու ինծի շատ ընտանի բաներէ որոնք մանկական թարմութեամբ մը կ'օծեն մեղքին ճամբաները: Ու ամպերը կը գունաւորուին անոր հորիզոնին վերէս: Ու յստակ շրշին մը, այս զգայութիւններուն բացուելու: Երկի՞ր: Երկի՞նք:

Չէ՛ որ կան այս երկուքն ալ պուտ մը հողին մէջ որ իմ մարմինս  
է հիմա, ծնրադիր, հարիւրներու տառապանքին ու երազին  
առջէն:

(Վերջ)

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, Ը. ՏԱՐԻ, ԹԻԻ 9, ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1934, ԷՁ 271–274)

ԵՐԲ ՊԶՏԻԿ ԵՆ

-----  
ՆԱՐԵԿԸ

Տո՞ւն:

– Մի վախնաք, ըսեք՝ պալատ: Նմա՛ն՝ միւսներուն.  
այնքան շատ ու զատ, միւս կատոյցներէն: Դեպի փէշերը  
Ողիմպոսի, գմբէթ գմբէթ, ու պարիսպ պարիսպ, իրաւ է  
տաճկի, պէյ ու փաշայի, ու աստով՝ տարբեր:

Աս մէկն ալ՝ հայու:

Տե՞ղը:

– Քաղաքին արուարձաններէն: Հի՛ւսք մը՝ կապար  
գմբէթներու ու կանանչ գմբէթներու, այս վերջինները սօսի-  
ներէն, եղեւիններէն: Որոնց քովերէն սեւ կերոնները նոճի-  
ներուն:

Պալատնե՛ր, ջերմուկի ջուրերուն մշուշին մէջէն որ  
հեքեաթի մը դեւին լեզուին նման, մերթ կտոր կտոր, մերթ ալ մէկ  
բերնով կը լզէ անոնց ճերմակ պատերը ու պտոյտ կուգայ անոնց  
բազմաբուխ տանիքներուն: Անօթի՛, հեքեաթին դեւն ալ: Ու  
շատոնց է որ ես ճերմակ այդ շէնքերը նմանցուցեր եմ կարագի  
դէզերու: Ու մի հարցնեք՝ ինչո՞ւ՝ ո՛չ ուրիշ բանի: Որբերը  
տարբեր նայեցան ճերմակ բաներուն: Իմ գո՞րծը, սա կաղանդ  
օրով, իմ գեղէն հեռու, թուրք սա քաղաքին մէջ ու խորը սա  
պալատին:

– Ատ ալ կը գիտնանք:

\*  
\* \*

Ձի՞ւն:

Հարկաւ:

– Բայց ոչ՝ գեղինը: Կասողած ու անգուրթ, որ պատերը ճեղքեր ու ներսը մաղուեր, սանկ կուշտ, յորդ ալիւրի թիզ մը փռելով մեր հին սենեակին հողէ յատակին: Եւ ոչ՝ աներես ու գազան այն ասղնտուքը որ գէշ պատսպարուած միսերդ կը գտնէ, այնքան հաճոյքով, թողած աշխարհը, անոր արձակութիւնը ու սուր սուր լեզուով կը ծակէ զքեզ. լաց ու արիւն բերելով ճեղք ճեղք մասներէդ:

Ձիւն:

– Ոչ հաստ, ոչ բարակ:

Ան՝ որ համ ունի, սանկ մարտի կիսուն, ճերմակի տեղ քիչ մը կապտորակ, հալած ապակի: Ջոր կը ծաղրէինք, ուժգին պոռալով *Արագիլներուն Երգը* յիմար երեսին ու կը ծեծէինք բոկ մեր կրունկին տակ կոխկրտելով հեղուկ իր բիւրեղը:

Մի մոռնաք որ ձմեռ նոր կը մտնենք:

Ու անոր փշրանքները կ'իյնան խոշոր խոշոր, քաղքի սա մասին, հազիւ խաւ կապող: Ոչ մէկ հով: Բայց մօտէն, հեռուէն՝ տաքուկ ջուրերուն հոգին: Որ կը գաղջանայ ու քաղցր կըլլայ փողոցին վրայ ու դաշտերն ի վար:

\*

\* \*

Ու պարտէ՛ զը սա պալատին:

Հարկաւ: Տարուան մէջ օր մը: Պալատի տղայ: Մենք զայն կը տեսնենք, արձակ համարձակ:

Կը վազեմ բոպիկ – դուք չէք գիտեր թէ ինչ խնամքով պահեր եմ մառանը, ժամէն տրուած որբի կօշիկները – կակուղ այդ ալիւրին մէջէն գոր հեքիաթ մը անհամար տոպրակներու կամբարէ, ամառը բաշխելու համար զայն բոլոր մեզիպէսներուն. աշխարհի դրկուած, միայն ու միայն հացի ետեւէն, որսալու հանուած շուններուն նման: Հացին ետեւէն լարուած գործիքներ, թերես մեր մօրն արգանդէն: Մինչեւ ե՞րբ: Բայց մինչեւ յատակը հողին ուր քակուելու է դժբախտ անէծքը մեզ այդպէս կապող: Այսպէս կը մտածէ գիրքէ գրիչէ անմասն իմ

մամաս, տասը տարեկան ասպարեզ իջած, ցամաք հացի հանքերուն խորը: Իմ մամաս, որ կաշխատի ամառ թէ ձմեռ: Մետաքսի մանարաններուն մէջ երբ բաց են անոնք: Օտարի շեմին: Հացի՝ լուացքի՝ տախտակ սրբելու՝ հիւանդ հսկելու: Որպէսզի բերէ չոր հացը մեզի: Ես՝ քովիկը միշտ: Մեղքը՝ անոր այրիութեան:

.....

Պատուհանէն մատները Մաննային:

Որ կը սարսափի, հաւանաբար մերկ ոտներու հաշտոյն, իրենները տուած երեք խաւ բուրդի գգուանքին:

Պալատին պարիկը: Հարկաւ: Ան ալ մայր ունի, վերը, տղաբերքի ցաւերով:

Կը նայիմ:

Ինծի այնպէս կուգայ որ ապակիին կարմիրէն է անցեր անոր դէմքը: Բարակ, բաց արիւնի մօտ ափ մը բան՝ անոր երկու երեսներուն, որոնց ճերմակը աչք կ'առնէ դէմէն: Ինծի տարեկից: Բայց զինքը լացնող սա մեծ ցաւին մէջ ինծի շատ մօտիկ:

Ես վեր եմ տասնէն:

Կը կանչէ ու կուլայ: Բանտարկած են զինքը:

Ձի՛ւնը: Քաղցր ու անձայն: Պարտէզը աճած իր երեսներէն ու հարսնետորած իր թփիկներէն: Ձի՛ւնը. ածուներէն ներս անարատ սաւան: Յետոյ:

Գլուխս քաշած կը սուգուիմ խորը քողքով ծառերուն, ճնճուղէ ճնճուղ որոնք թելերը հաստ ու թաց կը զարնեն իրենց մանր կոպերուն: Կան որ կը կաղան, այսինքն ոտքով կը փորձեն թոչիլ: Քաղքի ճնճուղնէ՛ր, հարկաւ: Վախկոտ՝ անոնց տողոց պէս: Մէկը կը կծկտի մատներուս ներքեւ հաւկիթէն նոր փախած ճուտիկին նման: Շունչովս տաքցնելով անոր սառած թելերը, ու աչուկներուն քովէն սառի գիծերը, կը դառնամ պալատ, հպարտ ու խելօք, մինչ մերկ սրունքներուս թեթեւ շոգի մը խաղայ բարի:

\*

\* \*

Գիտեմ թե օրը ծանր է շատ, սա պալատեն ներս:

Ու ասիկա հակառակ կաղանդին որ գիշերուրն է կած է արդէն: Ու շատ շատ, հօրքուրս ըսէր պիտի՝ **ամենական** բան բերած տունին աղջկան: Մոռցեր է սակայն, այդպէս կը պնդեն զինքը սա սենեակին փակող մեծերը, աղուոր պէպէքը որ Մաննային քուրիկը կամ աղբարիկը ըլլայ պիտի:

Ու տխուրը ան է որ այդ պէպէքը արդէն հանուած է Աստուծոյ պարտեզէն, շալակը տրուած Կաղանդ պապուկին: Ու հիմա չի կայ: Ի՛նչ յիմար են ծերունիները: Չէ՛ մոռցեր ուլունքն ու մատնին, կօշիկն ու գլխարկը, խաչն ու կրծկալը, բայց մոռցեր զի՛նքը: Իրաւ որ յիմար:

Ո՛ր. սա ցուրտին, պտլիկ պէպէքը, որուն վրայ, երկու օր է, ժամեր շարունակ խօսեր ենք Մաննային հետ, շինելով քիթը, բերանը, մանրիկ ու աղուոր: Ու թաթիկները՝ փիղի ոսկորէն, ու աչուկները կակուղ խմորէն իր ապակի գնդիկներուն: Ու մարմինը, ձիւներէն բերուած: Ե՛ս. այդքան կանուխէն ճարտարապետը մարդկային շէնքին: Ան մտիկ կընէ ու կը նայի դուրս, փնտռելով հանքը իմ բերածներուն...: Ու շարեր ենք, անուշիկ իր ճաշակովը, – կին է վերջապէս – խաղալիքները **«ճամբու»** այդ պզտիկին, խաչն ու գլխարկը, սանտրն ու կրծկալը ու տոտիկները, ձիւնի գունտերով: Եւ ուլունքները: Եւ զինուորները: Եւ շաքարները: Բոլորն ալ բերուած Կաղանդ պապուկին խոշոր սակառովը:

Բայց... չի կայ պէպէքը:

Ծանր, շատ ծանր՝ օ՛րը, պալատին գլխուն:

Նետած են մեզ վար, սա գետնայարկը: Որուն սենեակէն պատուհանները փառք որ պարտեզը ունին իրբէ տեսարան: Ես կ'անցնիմ արագ ու քեզ չեմ խօսիր հարուստի տունէն, հակառակ անոր որ ամէն առարկայ պրիսմակէ մը կ'անցնի մէջս իյնալու: Աշխարհք է ասի: Ու ես չեմ հեղինակը սա գրկանքներուն: Թող Ինքը մտածէ իր սա ըրածին: Այսպէս ենք դատեր մենք, մամաս, հօրքուրս, աղբարներս մեր այն գիշերները երբ պատկեր ենք առանց ուտելու, առանց կրակի ու առանց լոյսի,

խորը սա քաղքին երբ երկու տուն վար պատուհաններէն փողոց կը թափեն միս ու ոսկորներ: Թող Ինքը մտածէ իր սա ըրածին:

Մեզ նետած են վար, սենեակին մէջը որուն դուռը ամուր կը պահեմ, հնազանդելու համար մօրս պատուերին.

– Մաննան չելլէ դուրս:

Բա՞նտ: Յանցա՞նք: Պատի՞ժ:

– Ո՛չ: Ո՛չ:

Երկուքս ալ սակայն ականջ ենք դարձեր, պողոտան ծեծող ու խուլ մեզ հասնող սա ծանր հեծքերուն որոնք կառքերը կընեն մէկը միւսի ետեւէն: Անոնք կը բերեն սա պալատէն ներս քաղքին բոլոր մեծ մեծ բժիշկները:

Հիւա՞նդը:

– Մաննային մաման:

Ծանր, շատ ծանր հիւա՞նդ:

Ու սենեակին մէկ երեսը բռնող վառարանին առջին. ճնճուկը, ինքզինքը գտած, կը թօթուէ իր աչուկները ոտքին եղունգներովը, մինչ գլխիկը աջ ու ձախ կը քննէ ոսկեգօծ ու կասկածելի շաքարները, մեր հեւքէն ու ձայնէն «**հօփ հօփ**» ցատկելով, լոյսին վազելով:

\*

\* \*

Մեղքցուելի՛ք, ճնճուղէն աւելի սա խեղճ աղջիկը:

Անիկա կը վախնայ հօրմէն որուն քայլերը դուրսէն կը ճանչնայ բայց որուն գիրկը վազելու համար չի բանար դուռը: Չի բանար. կանխաւ վիրաւոր տեսնելիք պատկերէն: Երկու օր կայ. քունը չէ ինկած այդ հօր աչքերուն, գիտենք ատիկա: Ես ըսեմ հարիւր, դուք ըրէք հազար, անիկա իջած էլած է պալատին սանդուխները, դէպի սենեակը ուր «պատկած» է Մաննային մաման:

Ինձի ծանօ՛թ, այդ ցաւը, շատ կանուխէն: Մեր գեղը ատոր անունը կուտան առանց խպնելու, մեծէն պզտիկէն: Բայց հոս քաղաք է: Ու մութ է չորս դիւ: Աղջի՞կը: – Չեմ հարցներ:

Միայն, յստակ է որ մուօ ու խորունկ բան մը կը կատարուի վերը, հոն ուր բժիշկները կ'ելլեն ու կ'իջնեն: Որուն մինչեւ գետնայարկ սա երկարումը սիրտ կտրտող բան մը կը դառնայ քիչ քիչ քանի որ մեծ մեծ, շատ մեծ ճիչ մը, ցաւի տակ փրթած ճիչ մը ընդհատ ընդհատ կը հասնի մեզի, լեցնելով ահագին պալատին բոլոր յարկերը ու յորդած մեզ ալ կը գտնէ: Ամէն անգամ, այդ ձայնին սուրին տակ Մաննային դէմքը դեփ դեղին կըլլայ: Աչքերը կ'ուռին: Ու մատները կ'երթան երեսները պահելու, մինչ անոնց ճեղքերէն մանր աղբիւրի մը պէս կը հոսի բառը:

– Անուշիկ մամաս:

Ու չի վերջանար:

Մա՛հ:

Քաղքցին այդ բանը շատ չի հասկնար, անոր հանդիպելով մեր չորս պատերէն ներս:

Ե՛ս:

«Տղաբերք»ի աղետները կանուխէն ճանչցող, կը խոռվիմ այն յուզումներուն, ալեկոծութեանց հաշտոյն որ այդ գիծէն մահիճ մը կը բանայ երբեմն գեղին երեսին, մէկ օրէն միւսը շէն, անուշիկ տուն մը հիմէն քանդելով, շարան շարան որբեր պարպելով դոնառաջներուն ու տարիներ տւող սուգ մը գամելով անիծուած յարկին: Վայ այն փոքրերուն որոնց մայրն է մեռնողը: ...

Կը դողամ ներսէս, նայուածքով պաղած անոր աչքերուն...: Մինչ, գլխուս տակ կանցնին թափօրները **կէնճըճուկ** մեռած մատաղ հարսներուն:

\*

\* \*

Մամաս:

Կուգայ ժամը հեղ մը: Խելքը չէ վրան: Մոռցած է զիս ու կը բռնէ թելերը տունին աղջկան:

Այս անգամ, դեղնած է ան ալ:

– Մամա:

Ու կը յառիմ խորը անոր ծանր նայուածքին:

Աղքատութիւնը մեզի դաս տուած է այդ նայուածքներէն:

– Ըսի՞ր:

– Ըսի:

– Քանի՞ հեղ:

– Եօթը:

Ըսածս՝ **Հայր մերը:**

– **Որդի Աստծո՞ն:**

– Երեք:

Կը խնդան անոր աչքերը: Մաննան՝ անծանօթ այս ամէնուն: Բայց չի հարցներ: Օրեր կան ուր ամէն հետաքրքրութիւն վախ է մեր հոգուն:

– Խաղացէ՛ք:

Ու խեղճ կիներ չի գիտեր թէ բոլոր խաղալիքները կ'իյնան մեր ձեռքէն, երբ պալատին ընդերքէն, գոց որոտումի նման ճիչը հասնի մեր յարկին:

– Խալկի՞նր:

Իր մղձաւանջը: Երկու օր է, կ'եռայ ու կ'եռայ: Խաբեր եմ զինքը, մատաղի ջուր մը դնելով հոն ուր ես գիտեմ թէ ինչն է որ կը տաքնայ: Իր մղձաւանջը: Գիտէ որ պահք է օրը. դեռ շաբաթ մը կայ մատաղի առտուան: Ու ոչխար չի կայ:

– Խալկի՞նր, մամա:

– Լեցո՞ւր: Առանց տեսնելու գիտէ անիկա ջուրին հատնիլը:

Ու անոր վստահութիւնը որ կ'անցնի ինծի: Գեղացի կնիկ, մահուան ընտանի, այնքան անկողիներէ: Անոր անուրջը չի խաբեր երբեք:

Բայց չի պատասխաներ աղջկան որ սիրտ առած անոր աչքերը լեցնող հաւատքէն կ'ուզէ իմանալ, ի՞նչու է կ'եռան սա կաթսաները որոնք մատաղի ատեն կը նստին եռոտանիին: Ան ուրկէ՛ գիտնայ թէ տղաբերքը ինչ մեծ աղմուկ է, նոյնիսկ գիշերը: Ան ինչ օճախներ: Ան ինչ խալկիներ: Ան քանի քանի սափորով հարսներ: ... Ոչխար: Միամիտ աղջիկ: Հոս է որ անոր սպա-

սելու չափ անգէտ են պգտիկներն: Բայց գիտէ որ աղա իր հայրիկին մէկ բառը բաւ է կէս ժամէն հոս բերելու տասը ոչխար: Յետոյ, յանկարծ, շրթները խաճնելէն.

– Պէպէ՞քը:

Արցունք ու փսփսուք: Ինչո՞ւ այսքան տարբեր են տղոց ձայները: Գիտէ՞: Չի գիտէ՞ր: Կամչնա՞յ: Բռնած է մօրս ձեռքէն: Ու աղաչանքը յստակ թելի մը պէս կախ է տակաւին անոր բերանէն:

– Հիմա աղջիկս, հիմա:

Կը լեցուին իմ աչքերս: Բայց կը զօրանամ, վասնզի գոց գիտեմ մամայիս հոգին որ վախ չունի: Հակառակ բժիշկներու սա թափօրին: Մայրերը Աստուծոյ աջին տակն են լման տարի մը:

– Առաջ Աստուած, հիմա, աղջիկս, հիմա:

Բայց սենեակին մէջ ծանր է սա պահը: Օրը չսկսած կը դառնայ իր վերջին:

Ճնճո՞ւղը:

Որ կը պոռայ կաթիլ կաթիլ:

– Աս ի՞նչ է:

– Պարտեզէն բերաւ:

– Բաց պատուհանը:

Ծանօթ հեքեաթին որ թռչունը, նոյնիսկ պատուհանէն դուրս, իւրով կը մեկնէ ամէն տղաբերքի, կը բանամ ապակին:

Վառարանին լոյսին մէջ կէս մը ոսկեգօծ ու թաւշեայ իր գլուխը կը տնկէ թռչունը դէպի պաղ հոսանքը: Ծառերուն իսկապէս հիւսուած ճիւղերը ճօճքի կը մտնեն: Ճնճուղը կը կենայ զինուորի մը թելին ու կը շարունակէ կաթիլ կաթիլ իր ծիւծիւր:

Կը գոցեմ պատուհանը: Խոշոր է շունչը որ կելլէ բերնէս:

Ու ճնճուղը առջեւնիս. մօրս մեկնումէն յետոյ իր «գործին», մենք կ'այցուիմք մահէն ու կեանքէն. փոխն ի փոխ: Ես՝ այն շատ ու շատ հարսներէն որոնք տարեր եմ իբր տիրացու ժամէն դէպի գերեզման, լալով մամիս հետ, անոնց վարդ մարմինները, ողողուած ծաղիկով ու արցունքով, հարիւրներու

կսկիծին մեջէն: Ինք՝ հաւանաբար երագելով իմ բառերէս մտքին  
մեջ շինուած անուշ պէպէքին:

– Ամէն կնիկ եօթը հոգի ունի:

Կը կրկնեմ անոր գեղին սա իմաստուն պատգամը բայց  
կամչնամ անոր պարզելէ պատգամին կապուած պատկերները:

– Անունը:

– Որո՞ւ:

– Պէպէքին:

Չեմ պատասխաներ:

\*

\* \*

Կախուեր եմ փէշէն:

Բացեր է դուռը եւ լուր կը մուրայ:

Սպասուհիներ եկող ու գացող: Մօրքուրը, աչքերը ուռած:  
Ազգականներ: Բոլորին դէմքին ահաւոր շղարշը անգայտ սար-  
սափին որով մահը կը զգեստաւորուի ժամ մը հեռուէն: Մեզ չեն  
տեսներ ալ: Բժիշկ, բժիշկ, բժիշկ: Կելլեն ու կիջնեն:

Ան կուլայ: Վա՛խը՝ դուրս քայլ փորձելու: Հարուստի  
տղաքը ինչէ չեն վախնար. նոյն իսկ մեր գեղը:

Ամուր եմ բռներ մետաքս պլուզէն. կակուղ ու սահող, որ  
տաք չէ սակայն: Բայց մատերուս մեջէն բարակ ու անուշ բա՛ն  
մը, նման նոր տղոց միսին երբ լիճէն կը հանենք անոնց  
կարմրորակ գունտերը, լոզանքէն յետոյ: Հոտոտ սա զգեստ-  
ներուն տա՞կ ալ սիրտ մը, իմինիս նման, որ ցաւին մուրճով գայ  
ողիկ ողիկ: ...Ու ձեռքս կերթայ, յետոյ, մազերուն, ասոնք ալ  
սահող, եղոտ ու հոտոտ, այնքան տարբեր իմ ճանչցածներէն...:

(Շարունակելի)

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, Թ. ՏԱՐԻ, ԹԻԻ 1, ՅՈՒՆՈՒԱՐ, 1935, էջ 18–20)

Ծանոթ. իմբագիրի

«Ամփոփուած է *Կայսերական յաղթերգութիւն* վերնագիրը կրող հատորին մէջ, 100-ամեակի հրատարակութիւն» (Մարկ Նշանեան, *Յակոբ Օշականի մատենագիտութիւն*, Լոս Անճելըս, 1999, էջ 64):

ԵՐԲ ՊԶՏԻԿ ԵՆ

-----  
ՆԱՐԵԿԸ

....

Երբ կը դառնայ ետ, չի կրնար նայիլ: Արցունքը իր բիրեղին մէջ հիւսեր է անոր բիբերը, այնքան նոր, այնքան աղուոր, որ մատ կերկարեմ, առանց գիտնալու, «խմելու համար այդ աչուկները» ինչպէս կըսեն մեր գիտին հին երգերը, – Անուշ աչուկներ, ձիւնի մէջ ինկած գոյն գոյն կայլակներ...:

Հրամայական

– Պիտի չի լաս:

Ու չի կայ մէկը որ հարցնէ ինձի

– Դուն ինչո՞ւ կուլաս:

Վասնզի թաց է թարթիչը իմ ալ բիբերուս վրան:

Մամա ս: Ուժով: Ահաբէկ: Վճռական: Աչքերը չորս բացած: Թեւերն երկարուն: Տպաւորիչ՝ սա մուտքը, այնքան, որ կը սառինք:

Մաննան կը փաթթուի անոր ձեռքերուն:

Մայրս չի տեսներ:

Ու հակառակ անոր որ քովիկն եմ, անունս կուտայ, հեռուէն կանչողի, խաղէն կանչողի երկարուն շեշտով

– Ակորփի՛ կ...:

– Համմէ, մամա:

Վախով ու բարի:

– Հանէ՛ Նարեկը:

– Ո՞ւրկէ:

– Ծրարէն:

Մեր խաղերուն մէջ մոռցեր եմ ծրարը, «Վերիսաղիմու» գրիչէ մը կոտրած կոթ մը, որ ունի սակայն նշանաւոր ճնճուղի աչքը. ոսկորին թաղուած: Ներսը՝ Յիսուս մանուկ մը, մուտքին

դրուած, ձեռքերը լեցուն ու միշտ խնդացող: Մոռցեր եմ Նարեկը, իր պատկերովը: Մամաս գիտէ սակայն աշխարհքին **հալը**:

Տղաքերքը միշտ գերեզմանին հետ կը շփոթուի բոլոր մայրերուն մտքին:

Կը յիշեմ, սա պալատ գալէն առաջ, ինքնիրեն մոլտուքը.  
– Չմոռնանք Նարեկը. ինչ կըլլայ, ինչ չըլլար...

.....

Բռպէի գործ է քակել կապոցը, որ մեր խրճիթը սա տգեղութեամբ կը տնկէ առջիս, զիս կ'ամչցնէ: Կը գտնեմ Նարեկը, իր մետաքս ծածկոցին մէջ, նոր հարսի մը նուէրը այդ քաջ մատեանին, ինչպէս կնքած է գայն մեր թաղին ծերը, **Ակոլա** տէտէն: Մամիկոն Վարդանէն ալ քաջ: Որով զինուած, ես ափ ի բերան եմ թողեր իմ ընկերները, իջնելով քարայրներու խորը. **Ճին**երուն հարսնիքին աստէն, ինչպէս կը կարծենք, մեր քարերուն աղմուկէն որոնք անոնց անտես թմբուկները կը ծեծեն: Գիշերը կիսուն գերեզման երթալ: Տաճկի գերեզմանները ճեղքել ու անցնիլ...: Ասոնք ու տակաւին ինչեր, գո՛րծը՝ «դիւահալած» մատեանին: Մեր թաղին ու գեղին ալ կիսուն ամենահաս բժիշկը, ձրի, զօրաւոր: Հոգեառն իսկ կը քաշուի անկէ, երբ թափառի մատողուկ հոգիներուն շուրջը ու պարապ ձեռքով դուրս կ'ելլէ տունէն: Որ... ամենէն քիչը, տղաձգանները ետ կ'առնէ բռնի դելերուն ցանցէն: Որուն կաշի կողքին վրայ մահէն դարձողներ արցունք ու համբոյր, օրհնութեան ուխտեր ըրեր են այնքան անգամներ: Ան տունին մէջ ամպար մը ցորեն: Կատող մը ձիթապտուղ: Հազարնոց գուբ մը եղ...: Ու չեմ հարցուցեր թէ ամէնուն հասնող այդ բարի գիրքը ինչո՞ւ քուն է միշտ, երբ մենք, մամաս էն առաջ, տունով կ'արտասուինք:

Աչքերը խոշոր, դէմքէն դեփ դեղին, մատներէն դողդոջ, Մաննան կը գննէ խորտուբորտ ակօսը որ անոր կողքերուն եզրէն ներս կը փորուի: Ձեռք չի երկարեր:

Սպասուիի մը, ան ալ մեր գեղէն: Սուրբ, չկարգուկ աղջիկ, մագերը ճերմակ: Որ կը մտնէ ներս, ձեռքերը ծունկին ծեծելով ու լալով.

– Չորնամ արեւուն... կտրտին պըտը...

– Ի՞նչը...

Մաննան է, լեղապատառ:

– Պեպե՛քը:

– Պեպե՛քը:

Կը ցատկե թիզ մը վեր, գրեթե խենդ: Ինչո՞ւ խելք չըներ հարցնելու՝ ե՞րբ են բերեր որ...:

Կը նայիմ հպարտ իր անգիտութեան:

Դուրսը կառքեր, կառքեր: Սանդուխներուն քայլեր, կարճն ալ, հասակովն ալ: Անհատնում, ու սե՛ւ: Ձայնն ալ գոյն ունի երբեմն: Խորհեցեք քիչ մը: Ձեր միտքին բերեք տագնապի ժամեր երբ սպասումը կը գունաւորէ ձեր շնչած օդն իսկ: Այն ատեն հաւատաք պիտի սա սեւ ձայներուն որոնք ոտք ոտք կը կոխկոշտեն մեր խեղճ սրտերը:

Դեղի հաստ հոտ մը, մտքիս մէջ կապուած քուլերային, երբ խառն ի խուռն մէկ տունէն քանի մը մեռել ճաղին մէջ դիզելէ ետքը շիշ շիշ բան կը թափէին վրանին...: Դեղի այդ հոտը, որ կը բուսնի, անդիմադրելի մահուան կարապետ...: Որուն յարմար-ցուցեր եմ ոտանաւորի մը տողը

### **«Տուն փլոդներուն ամենէն վարպետ».**

չարափոխելով ծիծառնակին երգը ուր անիկա «կարապետն է գարնան» ու «ամենէն վարպետը բոյն շինողներուն»...:

.....

– Շուտ, տղա՛ս:

Մայրս է: Ինչ սրտհատնում կայ իր ձայնին ներսը:

Ու դուռներ, որոնք կը բացուին, կը գոցուին, վարը, վերը, ամէն տեղ:

Հակառակ սրտիս զարկին, ես բանամ պիտի, ամէն անգամուան նման, մատեանին կողքը, նայելու հեղ մը, առջեւի «պարկենք»ին – մեծ ծառ մը. որուն գագաթ-պարտյորը կը կորսրւի ամպերուն ծոցը, ասոնք զգուած խաս բամպակ, ու գալար գալար, Աստուծոյ գահին: Որուն արմատներէն մէկը իջեր է, խորունկ դէպի մեծ լուբիա մը. սի՛րտը՝ Ադամին, պատկերին վրայ այդչափ միայն գոյ: Չորս չորս վարդապետ, բուրձ վեղարներով. աջէն ու ձախէն, «Հաւատամք» կեցած: ...Ու Աստուած

պապան: Քովիկը Որդին: Ասոնց գլուխներուն ճիշտ մեջտեղէն Աղանին: Ճերմակ կտուցէն ոսկի խուրձեր որայ որայ վառելով դէպի դէմքերը աղօթողներուն:

Ինչ հպարտութեամբ բռներ եմ պատկերը անոր նայ-  
լածքին: Ատեն ըլլար, ես խօսէի անոր սա մարդոց մասին որոնք  
ազգականէ աւելի, գեղին տէրտէրներէն աւելի ծանօթ են ինծի:  
Որոնց անուն, պատմութիւն, ուժ, հրաշք, կոփու եմ ճարեր Վարք  
Սրբոցէն...:

– Տղաս, ատենը չէ, շուտ:

Մայրս է, հարիւր անգամ մտիկ ըրած հրաշքները այդ  
վարդապետներուն:

Կը քաշէ թելէս:

Դուրս:

Ետելէս՝ Մաննան:

Ոչ ոք, որ կեցնէ զինքը:

Մանդուխներուն, մեծ մեծ մարդեր, էֆէնտի, պէյ, դուք  
աւելցուցէք փաշան: Սուտ չեն ըսեր, քանի որ քաղքին երկրորդ  
հարուստն է, հայերուն մեջէն: Ուրիշներ, կապ մատներով,  
իրարու հիւսուած: Ուրիշներ՝ քիթ շոյելով: Հազարով: Ծուռ  
նայելով: Բոլորի դէմքին մահուան շղարշը: Տղաբերքի սեն-  
եակէն՝ ահաւոր ճիչը, սիրտը կտրտող. մէկ կտոր ու հաստ: Ըսես  
չունենար սկիզբ ու չունենար վերջ:

Կտրիճ, մեր խումբը: Մայրս առջեւէն:

Ինչո՞ւ կը բացուին երբ կը մօտենանք:

Ահա սենեակի սեմին:

Մա քաղքէն տասը դայեակէ աւելի տղաբերք տեսած  
քաջարի մամաս կը պոռայ ուժգին

– Կեցէք, Աստուածնիդ սիրէք:

Մէկէն կը դողամ, յիշելով սպասուհիին «կտրտին»ը:

Հրամա՞ն:

Ինչո՞ւ չէ: Կան պահեր երբ մեր ուխտը մեզ հարիւրով կը  
բազմապատկէ:

Մարդիկ, ազգականներ կընկրկին:

Ու լռութի՛ւն:

– «Նարեկին շուքը», կը մտածեմ բարձրաձայն:

– «Ագին կծկեց», կը շարունակեմ, ակնարկել ուզելով սաղայելին որ հօգր մատեանին հոտը կը ճանչնայ:

Միւս կողմէն, բազմութիւն: Ձեզ կը խնայեմ հարուստի առագաստը: Բայց խօսելու եմ պայուսակներէ: Ի՛նչ ընտիր կաշի: Ոսկի կղպանքով: Ըլլային ինձի: Մէկը միս մինակ՝ Նարեկին: Ուրիշներ՝ տետրակներու: Մաղմուսին: Նոր առնուած Մայրենի լեզուին: Ուրիշ մըն ալ գեղի առէքը պատկած «Դպրութիւն»ին որմէ զգացած սարսափս նորոգուիլ կը սկսի. քանի որ Ծնունդէն վերջը գեղ երթանք պիտի: Ամառը քաղքին: Ձմեռը գեղին... Այսպէս են անցեր իմ մանկութիւնը, առաջինն ու երկրորդը: ...Դեղի սրուակներ: Ու մկրատի նմանող փայլուն շիշեր –երկաթ–: Ու նոյն գիծով՝ Մանուշենց հարսը, հեռուի մեր գեղէն, որուն փորէն մանչուկը առին կտոր ու կտոր: Ու կը դողամ, տեսիլքէն խուժուած: Օրը՝ նոյն: Երկուշաբթի. առտու: Որուն ետինքին մայրն ալ թաղեցինք:

– Կարդայ պըտը...:

Մամա՛ս: Ահաբեկ: Ուժով: Վճռական:

Ծիծա՛ղ: Բարկութիւն: Մաստ:

– Աս ինչէնի է:

– Գիւղացի:

– Յիմար:

– Ապուշ:

– Հանեցէք դուրս:

Իբր թէ իրեն չըլլային սա բոլորը. մամաս, միշտ վճռական, տիրական:

– Կարդայ պըտը:

Յետոյ, զսպելու անկարող վախն ու զայրոյթը

– Կոտորտին ձեր ատ ձեռքերը: Աստոյ խշումին գաք:

Աւելի բարձր

– Դուք Աստուած չունի՞ք:

Ու, նոյն բոպէին. մահիճէն, ձեռքը որ կը բարձրանայ ու կը դողայ դէպի աջ: Հրամա՛ն: Հիւանդին հայեացքը քաղցր է իմ վրայ ու իմ մօր վրայ:

– Կարդա՛ .

Մաննան է, մօրմէն առնելով անոր աչքերը:

Բայց աղաչանք քան թէ հրաման:

Մայրը, ու լուսէ անոր ծեռքը որ կը գծէ իր պատգամը: Ինչպէս կը դողամ հիւանդին չափով սա ողջին հաշտոյն որ շունչը խառնած գրեթէ շունչիս, աչքերը խոշոր, սիրտը շրթներուն, հոգին երկարած հզօր մատեանին «առողջութիւն» կը մուրայ: Ինծի պէս մեծ բժիշկներն ալ կ'ազդուին պատկերէն:

– Կարդա՛ : Հիւանդն է. երկու օր կընէ. առաջին անգամ առանց նիզակի իր շունչն առնելով:

– Հէյ զօրքիդ մեռնիմ, հէյ սուրբ վարդապետ:

Կը գուշակէք ով էր ըսողը: Ու Նարեկով ազատուած տղածգաններուն ամբողջ օրհնութեամբը, երախտագէտ յուզումովը դողալէն:

– Յոյց տուր ուժդ հեղ մը սա անհաւատներուն, հէյ մեծ վարդապետ:

Կըսէ ու աչքերը չորս բացած, թելերն երկարուն նշանը կուտայ ինծի ծանօթ տեղին որ հիւանդին գլխուն կողմն է միշտ:

Անցած սնարին, մոմ մը հսկելով: Մինչ կուշտիս, մոմ մը իր ձեռքին, աղջիկը:

Բացած եմ էջը: Խոց խոց: Մոմի պտղուցք: Այրուցք: Արիւնի չոր ոսպ: Համբոյրներու պղտոր հեւքը վրան պահած: Ու դեղին դեղի՛ն, այնքան որ աղջկան գլխէն ցաթած կը կարծեմ: Անոր մագերուն սա ոսկի ջուրը, որուն մէջ կը լողան տողերը եւ կը թռին գիրերը:

Կը կարդամ: Քաջ ընթերցող մը, քանի որ լման ձմեռը գեղի դպրոցին մէջ ուրիշ բան չունինք բացի կարդալէն:

Կարդա՛ լ: Ինչ քիչ է բառը, հոս: Աւելի շիտակը՝ սիրտս է որ կը պարպուի սա երկաթ գիրերուն մէջէն որոնք երբեմն միայն կը փոխուին դուրսէն զգացումի մը: Ինչ փոյթ թէ տողերուն իմաստը ամբողջ չի հասնիր ինծի: Հերիք է որ բնագողով գիտեմ անոնց ըսածը: Հերիք է որ ինծի ծանօթ բառեր կը զատուին էջէն ու կ'առնեն իմ յուզումիս, հաւատքիս, հայցուածքիս ամբողջ կրակը իրենց վրայ: Ամէն **Սրբուհիի**,

**Տիրամայրի, Տէր ողորմեա**ի բառին հետ տաք երկաթ կանցնի կուրծքիս ճամբաներէն, դէպ աղիքներս ու գալար գալար կը պրկէ զանոնք, քէմանչէն լարող անտես մատին պէս: Ու ցաւ ու քրտինք: Ու ամէն «հաս»ի բերանս տասը հեղ աւելի ուժգին կը կանչէ օգնութիւնը Վերնականին: Յետոյ, պահին ամբողջ խորքը, մահուան ու կեանքին սա հանելուկը, գութին ու վիշտին, ուրախութեան ու լացին սա փայլակումը: Որոնք կը լայննան, կը հասուննան, կը լուսաւորեն մահիճը, սենեակը որ կը բացուի, կը բացուի: Կարծես մէկը վեր կ'առնէ անոր պատերէն սաղայելին վարմերը: Արձակուող ճամբու խորունկ զգացում մը: Ու հանգիստ: Մինչ մահիճին վրայ գողտուկ նայուածքս կը գտնէ լուսի պէս աղուոր այդ մարմինը, որ կուլայ, կը քրտնի:

Ու հիւանդին շունչը որ գոյն կը ստանայ:

Ու անոր դէմքը որ կը դառնայ մարմնեղէն շէնքին:

Ու շատ, շատ մեծ ճիչ մը:

– Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա...

– Ղա, ղա...

Խղղուկ, սա արձագանգը: Ուրկէ՞:

Մայրս է, թեւէս պինդ բռնած, քաշելով միւսով միամիտ աղջիկը դէպի դուրս: Դո՛ւ տը՛ որ կը գոցուի մեր կոնակին: Մինչ մեզ շրջապատողները կը պոռան, իրարու աչք լուսելով:

– Պէպէ՛քը:

– Պէպէ՛քը:

Ըսող ըսողի:

Հոն ըլլայիք, նայելու համար, իմ ալ նայուածքիս:

Անութիս զարկած քաջ իմ Նարեկը կը շտկեմ դարվար, սանդուխները մեր գեղի սալարկներուն փոխուած կարծելով: Ետեւէս, Մաննան:

Մեր անցքին

– Տէր ողորմեա, Տէր ողորմեա...

Կը ձայնեն վախով սպասաւորներ, ու ազգականներ:

– Տէր ողորմեա

Արդարն ու մեղաւորը:

Կաղա՞նդ:

– Հարսնիք:

Մենք անհամբեր ենք, դուք կը զգաք, ինչէ:

Մանան, ոտքերը գետնին զարնելով, կարկուտի պէս արցունք թափելով: Սիրտ պատռելու չափ ուժով ուզելով

– Պէպէքը

Որուն ձայնը կայ բայց ինքը չի կայ:

....

Իրիկուան մօտիկ մամաս կը յաջողի դռները բանալ:

Ան ինչ սենեակ է. Տէ՛ր:

Բայց պէտք է կարճ կապել:

– Հարուստին ոսկին, աղքատին կզակը ըսեր են, մոռնալով՝ աչքը:

Չորս ձեռքերու մէջ չորս պայուսակներ հազիւ կը կրեն ինչ որ կը տանինք պէպէքին:

...Ան ամուր է բռնած **տոտոխները**, բոմբուլիկ բուրդէ կօշիկներ որոնք անցընէ պիտի անոր տոտիկներուն: Չէ՞ որ դուրսը ձիւն է պառկեր:

Գրեթէ կը նուաղի յուզումէն երբ մամաս, հակառակ դայեակին խիստ հրահանգին, կը վերցնէ շղարշ մը ծրարի մը վրայէն:

...Ան է, մեր պէպէքը, այնպէս, ինչպէս շինեցինք առտուն, վարը: Քո՞ւն: Ո՞ւր աչուկները որոնց փոսիկները հազիւ կ'երեւին երեսին վրայ, թաղուած անոր միսերուն տաքուկ ձիւնին մէջ:

Կը համբուրէ զայն, շատ կամացէն, շրթներուն ծայրով: Ու ես կը ցաւիմ, իմ միսիս շատ խորունկներէն, առանց պատճառի: Նոյն ատեն պաղած է նայուածքս անոր երեսին ուր տեսակ մը կարմիր հով կուգայ ու կ'անցնի: Ի՞նչ կը նմանին իրարու երկու դէմքերը: Նո՞յնն է ատոնց ու մեր, Աղքատներու Աստուածը:

Չեմ կրնար մամայիս մօտենալ ոչ ալ այդքան անուշիկ պէպէքին: Չի փախիր աչքէս անոր նայուածքը որ պզտիկէն ինձի կը դառնայ: Հրաւէ՛ր: Ով գիտէ: Ոչ մէկ բառ:

Յետոյ կուզէ կամացուկ, երգ մը մեր գեղին տրտում  
օրրերգներէն, որոնց առաջին կտաւը չի կրնար մոռնալ, մօրմէս  
երգուած, որ անոր ալ ծնունդը կը յիշէ. տան հին աշխատաւորը:

– Հիւանդը քուն է...

Ու: կամացուկ միշտ, մեզ կը հանէ դուրս, աթոռներուն  
վրայ պարպելով բեռը մեր պայուսակներուն ու պատուիրելով

– Սպասեցէք:

Յետոյ, քիչ մը մտածկոտ.

– Չըլլայ քնանաք:

\*

\* \*

Գիշեր.

Մաննային սենեակը: Ահագին ծառ մը որ առաստաղը կը  
հրէ կարծես: Վրան, օձին լեղին է պակաս:

Սեղան: Մեր թաղին բանակ մը տղաքը կշտացնելու  
բաւոյ:

Կարճ՝ ամէն ինչ, որ կանցնի ձեր մտքէն, բացի սա մէկը.

– Ոսկի օրան:

Իրական օրան:

Ուրկէ ան կը հանէ հերուան պուպրիկը, ան ալ  
տարուրնակ աղջիկ. այնպէս անուշիկ որ պատրանք կուտայ:

Կը նայիմ անոր բարակ, թութի ճեղ մատներուն որոնք  
խոտկուտը կը քրքրեն: Կը դպի օրնի կամարին, զայն հանգուցող  
բոժոժներուն ու ոսկի խաչին որ ճակատը կը գամուի օրանի  
ոտքին: Գրեթէ խանձարուր: Ու այդ ամէնը այնքան բնական,  
այնքան վայելուչ: Տէ՛ր, այսքան կանո՞ւիս:

...Դուռն է, կը բացուի.

Մամաս: Ծոցին, դուք գտաք հարկաւ: Բերածը սակայն  
գիրկ մը ժանեակ է զոր ոսկիները կ'աստղագարդեն: Որ հով է  
քալող առանց թափելու:

Ինչ վա զք դէպի ան:

Ինչ քնքշութեամբ, ու ինչ յուզումով, ճիշդ նոր հարսի պէս: Մաննան կ'առնէ զայն ու դողահար, արտասուագին կը դնէ օրանին:

...Բացած՝ մէկ թելը շղարշին:

Առաստաղէն, ծառէն կրակ կը թափի որմէ բոց առած **ախէխ** կը թուի քնացող այդ տղան: Թարթիչներուն սեւ սլաքները ոսկի ջուրի մէջ:

Ու մայրս կ'երգէ, երկու տուն, շատ տխուր գովք մը: Ո՛վ գիտէ ինչեր է կ'անցնին անոր հոգիէն: Ու յանկարծ կը բուսնի իմ աչքիս հացին տաշտը ուր պառկեր եմ ես, առաջին քունը առնելու, սա աշխարհէն: Օրան իսկ չունէր իմին խեղճ մամաս, զիս զետեղելու: Այսպէս կը պատմէր ան: ...Երկուքով կուլանք: Ու ես վստահ եմ որ անոր գանկին տակ անմոռանալի այդ պատկերն էր որ կ'ելնէր ոտքի...:

– Անո՞ւնը:

– Մեղայ. Նարեկ:

– Կա՞յ այդպէս անուն:

– Շա՞տ:

Կը յիշենք գիրքը որ ծառի բունին կը գրաւէ ամենէն շքեղ յարգանքը: Չորս չորս մոմերը կը պատեն անոր կողերը, քիչիկ մը հեռուէն: Ու առջին կաթսայ մը աղանդեր:

Մայրս կ'առնէ զայն իր գահէն ու կը տեղաւորէ պէպէքին բարձին:

.....

Յետո՞յ:

Բայց ինչ գիտնամ ես:

Իմ օրերուս ամէն մէկին մէջ այսպէս խոցեր ու ասեղներ են հիւսուած, տաշտի առաջին քունէն սկսած:

Շաբաթ մը չանցած մենք գեղ կը դառնանք: Քաղքի աշխատանքը վերջ է գտած մինչեւ նոր բերքը խոզակին:

Ու թաղին լակոտները գլուխս հաւաքած, աւերակ փուռի մը կամարին ներքեւ, ես կը պատմեմ անվարտի ու ափ ի բերան իմ ընկերներուն քաղաքը, անոր հարուստները, անոր աղջիկները ու դժուար եկող պէպէքները:

Ձի՛ւն: Յիմարը, թող կատողի իր ուզածին չափ:  
Ես կը խօսի՛մ....:

Ու իմ ընկերները գլուխ կը կոտորեն, հոն տեղ մը տալու, ոսկի օրօրան ու ծառ ծառ **չէրէզ** շալկովը կրող սա ինչ Կաղանդին որ ափ մը չամիչը կամ ծալ մը պաստեղն իսկ շատ կը տեսնէ իրենց անկշտում փորին: Ու կը զարմանան թէ ինչու պէպէքները այդ քաղաքներէն՝ Կաղանդին կռնակը ելած վար աշխարհ կուզան, տակն ու վրայ ընելով պալատները. մինչ իրենց պզտիկ աղբարիկներն ու քուրուրտանքը շատ շատ **խալկին** մը տաք ջուր կը նստին սա գեղի տուներուն:

\*  
\* \*

Քառսուն տարի անցեր է սա իմ պատմածէս: Միալ չեմ ըներ երբ տարիները փոխեմ ես դարի: Այնքան խորունկ գրուեցան օրերը իմ կրունկներուն ամէն մէկ նեարդին:

Հիմա՞:

– Կը փնտռեմ...

Ով գիտէ որ քարի տակ իր հոգին տուաւ ոսկիէ, ձիւնէ շինուած այդ աղջիկը որ տասնէն քիչ մը վեր, պէպէք համբուրեց, ու իր պէպէքը ուրիշին ծախեց, տարագրութեան ճամբաներուն, ինծի այդպէս կուզայ, չհամբուրելու համար մահն անոր ճակտէն:

Ով գիտէ որ քարի տակ կտոր կտոր ըրին Նարեկն ալ, ինչպէս ինծի հասած է սպանդին լուրը, ջերմուկներու քաղաքին ետին, երբ երկու հարիւր երիտասարդ թեւ թեւի կապած կտրել տուին փայտահատներուն:

Իմ Նարե՞կը:

Թշնամին ան ալ կրակի տուաւ:

(Վերջ)

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, Թ. ՏԱՐԻ, ԹԻԻ 2, ՓԵՏՐՈՒԱՐ, 1935, ԷՁ 54-57)

Ծանոթ. իմբացիրի

«Ամփոփուած է *Կայսերական յաղթերգութիւն* վերնագիրը կրող հատորին մէջ, 100-ամեակի հրատարակութիւն» (Մարկ Նշանեան, *Յակոբ Օշականի մատենագիտութիւն*, Լոս Անճելըս, 1999, էջ 64):

# ԱՍՏՈՒԾՈՅ ՇՈՒՆՉՈՎ

-----

## ՕՐՀՆԱՄԱՑՈՒԹԻՒՆ

**Մենասող.-**

Ալէլուիա, Ալէլուիա  
Անոր որ տէրն է Ամէնուն.

**Խումբ.-**

Ալէլուիա, Ալէլուիա.  
Անո՛ր որ տէրն է ջուրերուն  
Հաստիչը մե՛ծ՝ անձեռագործ տաճարներուն  
Մարդոց սրտին.  
Ու գահակա՛լն՝ անհունափառ,  
Ադամանդուած երկինքներուն  
Ալէլուիա...

**Մենասող.-**

Աչքը որուն՝ արեւ քա՛րի՝ Հայաստանեայց մեր  
աշխարհին:

**Խումբ.-**

Զի այց ըրաւ ան մեզ կրկին.  
Գահէն ոսկի՛՝  
Աղբերելով շողն իր մտքին  
Ընդերքն ի վար խոր խաւարին  
Մեր սրտերուն եւ ուղեղին:  
Բարձէն լքուած, բարձէն տխուր  
Հայաստանեայց հին աշխարհին  
Ան ծաղկեցուց  
Անգին ծաղիկն իմաստութեան,  
Մատեանն՝ ալ հա՛յ, նախաբարբառ սուրբ իր  
շունչին:  
Մատեանն՝ ալ հա՛յ, Մատեանն համակ  
Դաշնակութիւն,  
Ու քաղցրութիւն,  
Ու սրբութիւն:

**Կապարճակիր.-** *(Ներս մտնելով եւ մատույլի ցոյց տալով մութին մէջ տարտամ ձեւեր)*

Երամն ահա,  
Ազնուական քերթողներուն,  
Գալար գալար մագաղաթներն իրենց ձեռքին:

**Մեներգող.-** Դուք դպիրներ, դուք քերթողներ, հին մեր  
ցեղին  
նոր բարունակ.  
Առա՛ջ, առա՛ջ:

*(Դպիրները զոյգ զոյգ կը քալեն դէպի բեմ,  
բաշխուելով աջ ու ձախ եւ կը կազմեն կոր  
գիծը)*

**Մեներգող.-** Բոլո՛ր, բոլոր, *(Դպիրները կը կազմեն աղեղ մը)*  
Բացուին ազատ, բացուին հպարտ  
Դրօշները մագաղաթին,  
*(Դպիրները կը ձգեն մագաղաթները, որոնք  
ճրագալոյցին կարդացուող գիրքերուն նման  
զարդարուն են, բոլորն ալ գրուած մեծատառ,  
Մեսրոպեան երկաթագիրով)*

**Խումբ.-** Բացուին հպա՛րտ երեսները մագաղաթին  
Ու խայտ իյնայ դէմքին, սրտին ծերունափառ  
Հայրապետին, Հայոց մեծաց աստուածարեալ  
առաջնորդին:

**Մեներգող.-** Ու իջնայ լոյս  
Ու իջնայ խինդ  
Խորն հոգիին  
Աստուածարեալ վարդապետին,  
Գրին գտիչ, կաղապարիչ մեծ Մաշթոցին:

**Խումբ.-** Բացուի՜ն ազատ ու ներդաշնակ  
Կապերը բիրտ լեզուներուն,  
Խուժ բարբառէն ասորիին  
Ու հելլէնին:  
Բացուի՜ն անուշ ձեր լեզուներ  
Ըսել մեզի, պատմել մեզի, աղբերապէս հոսել  
մեզի  
Առուակները անմահ բանին:

**Դպիրներ.-** Ալէլուիա, Ալէլուիա...  
«ՃԱՆԱՉԵԼ ԶԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ  
ԶԽՐԱՏ,  
ԻՄԱՆԱԼ ԶԲԱՆՍ ՀԱՆՃԱՐՈՅ» ...

**Խումբ.-** Իմաստութիւնը Աստուծոյ, մարդոց սրտէն  
մտքէն անդի՛ն:  
Այնպէս ինչպէս ինք կը տեսնէ իր անմատոյց,  
ջի՛նջ խորքերէն  
Անդունդները անոնց սրտին.  
Ու կը լարէ  
Քայլերն անոնց:  
Իմաստութիւնն անմահ Բանին,  
Որ կը բերէ փունջերը խաժ բարիքներուն  
Վրան երկրին Հայաստանեայց:  
Պողոտայէն արեան կարմիր  
Գերդաստանէն արքայասպան  
Սահմանելու մեզ Հայրապետ  
Լուսաւորիչ տեղն իր պապուն...  
Թող փառքն անոր պատմեն ոսկի  
Լեզուները սա գիրերուն, յաւիտեանէ մինչ  
յաւիտեան

**Մեներգող.-** Զի միտքն է գոյ, վրան արագ հեղեղներուն  
Ու մարդկեղէն խօլ փառքերուն:

**Խումբ.-** Զի միտքը կայ, անմահ ու պերճ,  
Հարստութիւն ու մեծ համբաւ,  
Պալատ ոսկի ու գաւառներ,  
Արքայութիւնն իսկ երկրաւոր  
Երբ կը փակչին, տապաստ, հողին:  
Միտքը կանգուն՝ վրան թշուառ մեր  
փառքերուն,  
Կրակէ սին, որուն լոյսին  
Պիտի նային  
Հազար ամէ մինչ հազար ամ  
Աչքերը քաղցր մեր զարմերուն  
Զվախնալու փոթորիկէն ու գուպարէն  
Աշխարհային խուժ յոյզերուն.  
Մնալ յառած կայծ պատգամին որ կ'արձակուի  
Մագաղաթին երեսներէն:

**Կապարճակիր.-** *(Մատուլը ցոյց տալով)* Մատեանն ահեղ:

**Մատենակիր.-** *(Ոսկեհիւս պաստառի մը մէջ մեծ Աւետարանը  
կը բերէ դանդաղ)*  
Աստուածաշունչ Հայաստանեայցս...

**Մեներգող.-** Ծունկի, ծունկի, ինկէք ծունկի  
Առջին ոսկի  
Առջին հոգի  
Մեծ Մատեանին:

**Խումբ.-** Ծունկի առջեն անոր որուն  
Առջեւ գան դեռ պիտի ծունկի  
Ազգերը մօտ, ազգերն հեռու  
Արեւմուտքին ու Հիւսիսին:  
*(Բոլորը կ'իյնան ծունկի, խաչակնքում, բուրվառ  
ու լռութիւն)*

**Մեներգող.-**

Թող օրհնուին մատները ձեր,  
Հողէն հանող անմահ հոգին:

**Խումբ.-**

Թող օրհնուին մատներն անոնց  
Որոնք գոյնէն ու գրիչէն, մշտամշո՛ւ ւշ,  
Ու անձանձիր ու աննուաղ՝ հոծ երկունքէն  
Տարին դրին տարիներուն,  
Ու մարդկօրէն ըրին ամէնն  
Որպէսզի մեծ մութին խորէն, չգիտութեան  
սանդարմետէն  
Բերեն լոյսին սա փառքն անշէջ,  
Գիրքերուն Գիրքն, Աստուածախօս Մատեանն  
ահեղ:  
Թող օրհնուին, բիւր օրհնուին  
Աչքերն հօր, աչքերը սուրբ  
Անոնց որոնք  
Եղան լարուած, քունն հալածող, հանգիստէն  
վեր  
Ու կեանքէն դուրս ու չը ճանչցան դուրս սրտին  
Մինչեւ բերին  
Սա սրբագայն կաթողիկէն  
Իր աւարտին.  
Թող օրհնուին խոնարհ դպիրն ու շինական  
Պարզ քերթողներ որոնք գառնուկն ու իր  
մորթին  
Ըրին խորան աստուածեղէն անմահ բանին:  
Թող օրհնուին հեռուներէն խուրձ խուրձ եղէզ  
Մեզ բերողներ.  
Ու օրհնուին հօրամիտ, խորաթափանց  
վերձանողներն,  
Վարդապետներ ու երէցներ,  
Ու թարգմաններ,  
Բոլորն ալ բիւր, բիւր բարիքով  
Յիշուին առաջն ամենակալ ու անվախձան

Թագաւորին:  
Փառք ու պարծանք ձեզ առաջին  
Մշակներուն  
Հայաստանեայց սուրբ բարբառին:

**Օրհնող.-** *(Մատենաբ առնելով)*  
Յանուն հանուրց ինքնակալին  
Հօրն Սրբոյ,  
Յանուն անհուն սիրոյ խորան  
Սրբոյ Որդւոյն,  
Յանուն անճառ իմաստութեան  
անհունաստեղծ  
Աշտանակին  
Սրբոյ Հոգւոյն,  
Թող օրհնուի աշխարհն Հայոց  
Ու թագաւորն իր իմաստուն.

**Խումբ.-** Ու թագաւորն իր իմաստուն  
Որ իր սուրին ու բանակին,  
Ու թափն հուժկու, կրակն ազնիւ  
Ազնուական իր հաւատքին  
Դրաւ սպասս  
Այս մեծ գործին,  
Այս սուրբ գործին  
Ահեղ գործին պսակումին...  
Ողջո յն, արքայ Վռամշապուհ  
Անունդ ոսկի,  
Ոսկի գիրքին հետ թող յիշուի  
Յաւիտենէ մինչ յաւիտեան  
Հոն ուր երկու հայ պատանի  
Պիտի խօսին լեզուովը մեր  
Լեզուովն անուշ աստուածարեալ  
Հայաստանեայց սուրբ աշխարհին  
Յը կատարածըն աշխարհի:

**Օրհնող.-** Թող օրհնուի ու պահպանուի  
Տեղին իջման երկնից լոյսին,  
Մնայ անմեռ Աթոռն Հայոց  
Օծուած արեամբ Լուսաւորչին:

**Խումբ.-** Մնայ անմահ, մնայ կանգուն ու փառաշուք  
Աթոռը Մայր  
Արարատին.  
Ու դարե՛ դար աշտարակէ  
Թող անսասան  
Մատեանը սուրբ  
Նման հսկայ Արարատին,  
Երկնի վրայ ձեռուած անհուն  
Անձեռագործ կաթողիկէ՛:  
Ու սփռէ լոյս, սփռէ բարիք, ու սփռփանք:  
Ու թող դառնան աչքերը մեր, որդիներու ու  
թոռներու  
Դէպի խորանն այս լուսեղէն  
Ու հաղորդուին, ու զօրանան, պայծառանան  
ու քաղցրանան  
Որդւոց որդի, քանի հնչէ բարբառն անուշ,  
Բարբառն ոսկի Հայաստանեայց մեր  
աշխարհին.  
Քանի բեմէն տաճարներուն  
Հոսի աղբիւրն այս հաւատքին:  
Ի՛նչ փոյթ արիւնն ու աւերած,  
Ինչ փոյթ փառքերն ալ աշխարհիկ,  
Քանի լսուի Հայոց երկրին  
Միլիոնաւոր զաւկըներուն բերաններէն  
Խօսքն Աստուծոյ, գրուած այսպէս,  
Այսպէս անուշ ու սրտառուշ,  
Մենք չենք մնար զուրկ իր Աջէն:

**Օրհնող.-** Թող օրհնուի ու պահպանուի

Արեւելեան կողմն աշխարհի  
Ազգերն հեռու, հարիւր, հազար  
Լեցուին լոյսովն այս սուրբ գիրքին.  
Ու հաշտուին  
Միրոյ ծովու մէջ այս գիրքին:

**Խումբ.-** Թող սաւառնի խօսքն Աստուծոյ  
Մինչեւ ծագերն Արեւելքին  
Ու կատարուի պատգամն ահեղ  
«Գայլք եւ գառինք  
Ի միասին  
Ճարակեցցին»...  
Թագաւորէ սէրն անոնց մէջ,  
Ու պաշտուի բանն Աստուծոյ  
Իր սրբասուրբ մեծ մատենէն:

**Օրհնող.-** Թող օրհնուին ու պահպանուին  
Արեւմուտքը, մինչեւ մեծ ծով,  
Հիւսիսը ցուրտ մինչեւ ծովը սատոյցներուն  
Հարան յուրթի մինչ տափաստանն  
կնդրուկներուն եւ արմաւին:

**Խումբ.-** Թող ծաւալի, աղբերանայ ու ծով դառնայ  
Խորհուրդն անճառ Մեծ մատեանին  
Գիրքերու գիրք, Աստուծոյ շունչ  
Չարեաց վահան մեծ մատեանին.  
Արեւելքէն մինչ Արեւմուտք,  
Ու Հիւսիսէն դէպի Հարաւ,  
Ու խորշերէն ու ծագերէն  
Ազգ եւ ազինք եւ ժողովուրդք  
Լուցուին հուրովն կենսագործող մեր  
հաւատքին:  
Ու ցաւերու, ստուերներու, ու գարշույթեանց  
Անգթութեան ու արինի, կոտորածի ու

աւերման  
Սա հովիտէն,  
Աշխարհ որուն կուտան անուն,  
Ազգ եւ ազինք եւ ժողովուրդք  
Սկիզբ ընեն անճառելի ու անվախճան,  
Լոյսով սարուած, հոգով հիւսուած  
Ու քաղցրութեամբ մթնոլորտուած,  
Ամբողջ վայելք, դաշնակութիւն,  
Ամբողջ աղօթք, երանութիւն  
Մեզ կոհակող, մեզ ողողող  
Մեր միւս կեանքին  
Անճառելի ու անվախճան  
Երկնից կեանքին  
Նշանովը Սուրբ Մատեանին:  
Ալէլուիա, ալէլուիա  
Բարձունքներուն եւ խորքերու  
Տաղաւարող մեր Աստուծուն  
Անոր շունչին  
Ալէլուիա, ալէլուիա:

**Մեներգող.-**

Ովսաննա՛ .  
Հայոց մեծաց հայրապետին.  
Կաղապարիչ մեծ Մաշտոցին,  
Ասպետներուն, երէցներուն,  
Վերժանողին, վարդապետին,  
Գառան մորթին քերթողներուն,  
Եղէգ, թանաք շինողներուն,  
Գրիչներուն,  
Ու կազմողին:

**Խումբ.-**

Ովսաննա, ովսաննա  
Հայաստանեայց ժողովուրդին  
Որ զինաւոր անմեռ զէնքով  
Պիտի քալէ ճակատագրին

Խորախորհուրդ ճամբաներէն,  
Մինչեւ հասնի օրը վերջին,  
Դիմաւորել թափորն ասեղ  
Ահեղ օրուան Դատաստանին,  
Հայ բարբառով ըսել երկնից  
«Հասած ենք Տէր, Օթեւանիդ...»  
Ալէլուիա ալէլուիա:

### Յ. ՕՇԱԿԱՆ

(*ՄԻՈՆ*, Թ. ՏԱՐԻ, ԹԻԻ 3, ՄԱՐՏ, 1935, էջ 85–89)

#### Ծանօթ. խմբագիրի

«Աստուածաշունչի հայերէն թարգմանութեան ԺԵ. դարադարձին առիթով, Կիրակի, 3 Մարտին (հին տոմար), Ժառանգաւորաց վարժարանին մէջ տեղի ունեցած գրական եւ գեղարուեստական հանդէսին արտասանուեր է (տես, նոյն, էջ 98) (Մարկ Նշանեան, *Յակոբ Օշականի մատենագիտութիւն*, Լոս Անճելըս, 1999, էջ 64):

ՀՐԱՇՔԸ  
(ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ)  
ՀԱՏՈՒԱԾ(\*)

.....  
Բ.- Թարգմանութեան հարցէն անկախաբար, ներեցէք որ չհասկնամ ձեզ:

Ա.- Վասնզի չէք ուզեր բաժնուիլ ձեր սիրական եղանակէն, որուն անունն է իրապաշտ աշխարհահայեացք, այսինքն փաստի, **տոզիւմէնտի**, թիւի, խեցիի գիտութիւն: Ձեզի համար քաղաքակրթութիւնները ուրիշ բան ըլլալէ առաջ հնագիտական թանգարաններ են: Ու դժուար կը միտիք ազգ մը բառերու յարդարանքի մը մէջ յատկանշել ուզող մեթոտին:

Բ.- Կուշտ ենք գրական քննադատութեան աժան ու քմահաճ տարազներէն, մանաւանդ մեր մէջ ուր առտուն կանուխ ելլողը տեսութիւն մը ունի քշելիք:

Ա.- Մենք ալ՝ ձեր ֆրագաբանութիւնէն: Բայց մեր խօսակցութիւնը ունի այլապէս «պիտանի բովանդակութիւն» ինչպէս սովորութիւն է ըսել: Միայն կարելոր է զայն չտարածել: Անոր կորիզը մեր գրականութեան սկզբնական շրջանն է... մայր գործը՝ թարգմանութիւնը Աստուածաշունչին գոր ընդհանրապէս կախորժին սկիզբ մը ընդունելէ: Ինծի համար աւելի հաճելի պիտի ըլլար զայն լրում մը դասել:

Բ.- Նոր չէ որ մոլին էք փարատոքսին:

---

(\*) Հետեւեալը հատուած մըն է այն տրամախօսութենէն գոր Պ. Օշական պատրաստած է Ս. Աթոռոյս տպարանէն յետոյ հրատարակելի Յոբելինական հատորին համար: Հոս դրուած այս հատուածը արտասանուած է ժառանգաւոր սաներու կողմէ, յուլիս 21ին կատարուած Յոբելինական երկրորդ հանդէսին մէջ:

Ա.- Մի յախուռն վճիռներով վիրաւորէք լրջութիւնը սա խօսակցութեան: Ձեր ուշադրութեան կը յանձնեմ այն մեծ բայց պէտք եղած լոյսով չլուսաւորուած մեր Դ.րդ դարը որու ամբողջ տեսողութեան մեր երկիրը երկունքը ապրեցաւ այդ մեծութեան, գմայլելի, հէքեաթունակ, հսկայ գործաւորներու երկաթ կորովին, անձնուրացութեան, ոգեղինող հրակիզման հեղեղին ընդմեջէն:

Բ.- Այսի՞նքն:

Ա.- Ամբողջ տոհմ մը հայրապետներու, հսկայէ մը սկիզբ առնող: Որոնց ստեղծագործ մատներուն տակ մեր երկիրը դէմք, հոգի փոխեց:

Բ.- Իրաւ որ տարօրինակ էք: Չէ՞ք ներեր մեզի ալ ուսումնասիրած ըլլալ մեր պատմութիւնը ու հաստատ յայտարարել թէ նման բան մը չեն ըսած մեր քրոնիկները ձեր ակնարկած դարէն:

Ա.- Կարելի ու բնական այս յայտարարութիւնը անոնց բերնին որոնք գիրերը կը կարդան իբր երկատարած մարմին, զանց ընելով խորքի տարածութիւնը: Ասիկա թերեւս պատճառ՝ հասկնալու այն տարբերութիւնը որով կը զատուինք իրարմէ: Այդ դարուն ու անմիջապէս յաջորդի սկիզբին: Աստուածաշունչը մագաղաթ ու հայ գիր ըլլալէ առաջ, հայ խօսք է մեր բեմերէն, թերեւս հայ սիրտ ալ մեր կուրծքերուն ներքեւ: Մեր բեմերը՝ քարայարդար կառոյցներ ըլլալէ առաջ խորհուրդի աշտանակներ, ուր այրեր ու ճենճերեր է մեր հոգին իր դարաւոր ձգտումն ի վեր, մաքրուելու, բիրեղանալու: Չէ՞ որ մեր տաճարները մեր մեհեաններուն աւերներէն ամբարձան:

Բ.- Քրիստոնէութի՞ւնը:

Ա.- Սպասեցէք: Մեր տաճարները մարմարեայ շէնք ըլլալէ առաջ, մեր նահատակներուն մարմինները ամփոփող զոյումի քարէ կայլակներ են, բխած մեր երկրին աչքերէն: Անոնք մեր նորոգուած, այլացած, ջերմացած զգայնութիւնը սեւեռող խորհրդանշաններ են: Գիտէք հարկաւ որ դար մը ամբողջ բրիչ ի ձեռին, մենք փնտռեցինք մեր երկրին գեղեցկագոյն կայքերը, սրտառուչ կատարները ու ամենէն խոր

թելադրիչ ակունքները որպեսզի անոնց վրայ թառի բերենք մեր նորոգուած հոգիին աղանիները, մեր տաճարները, լուրջ բայց ժպտուն, փոքրանիստ բայց թելերը վեր, գարգմանակաւոր ու թեթել, թռչելու մշտապատրաստ իրենց կաթողիկէներուն սուր սլաքովը խուզարկերով մեծ հորիզոնը մեր լեռներուն, լսելու համար ձայնը Անոր որուն բացեր էինք մեր երակները, երբ արդէն հոյակապ սկիզբով մըն ալ բոնաբարած էինք այդ երկինքին դռները:

Բ.- Իրաւ որ անհասկանալի էք:

Ա.- Մենք խորտակեցինք այդ երկինքին պարիսպները ու մեր մայր եկեղեցիին համար բռնի, յատկապէս մեզի համար անկէ վար բերինք, իջեցուցինք միաձին Որդին: Որքան խորութիւն կայ երբեմն փորուող՝ էջի մը անդունդն ի վար մեր աննման քրոնիկներուն մէջ: Միայն զայն տեսնելու կարող զգայարանքը ալ բթացած է մեր մէջ, միշտ ձեր գեղձանումովը, չընեղուիք, իմաստուն պարոն: Ասկէ յիսուն տարի առաջ չկար հայ պատանի մը որ յստակ չտեսներ միտքին մէջ երկինքին այդ բացուիլը ու իջնելը անկէ Աստուծոյ Որդիին: Այսօր, դժուար է ձեզի կարդացնել Ագաթանգեղոսը. դժուար մանաւանդ անոր խորհուրդը մարդկայնացնելու հարկը: Եւ սակայն որքան պարզ է անիկա անոնց համար որոնք չեն կորսնցուցած թելերը իրենց հոգիներուն զանոնք զգուշ պահելով գիտութեան կրակէն: Լուսաւորչի տեսիլքը ուրիշ բան չէ եթէ ոչ մեր ժողովուրդին երկրորդ հոգեփոխութիւնը: Ու Էջմիածինը արտակարգ անուն մը չէ, հեքեաթի հովովը վար բերուած՝ երկինքէն, այլ՝ կաղապար մը, քանդակ մը, առակայական դեմքը մեր հոգիին յատուկ մէկ կողմին, անոր՝ զոր պիտի պահենք դարերով: Հրեաներուն տաճարական պաշտամունքին մէկ փոփոխակը: Նոյն ատեն՝ գեղեցիկ, սրտառուչ, բրտօրէն ազգայնական մեր խղճմտա՛նքը. մեր կա՛մքը՝ մեզի համար Աստուած իջեցնելու: Մեր եկեղեցիին նախանձախնդիր, այլամերժ, անկախամուկ կեցուա՛ծքը: Բառ մը երբեմն ընդարձակ է երկրի մը չափ: Ու ասոնցմէ մէկն է անիկա: Այո՛ :

Բ.- Շարունակեցէք:

Ա.- Ուշագրաւ չե՞ որ նոյն ատեն իջնելու համար Միածինը ընտրէ մեր երկրին սիրտը, անոր ամենէն կեդրոն դաշտավայրը, անոր համապատկերներէն ամենէն մեծավայելուչը:

Բ.- Գրականութիւն ալ կ'ընէք:

Ա.- Չնմանելով ձեզի որ այլեւս մոռցած էք ձեր երկրին զգայնութիւնը, օտարաստանի ձեր զգայնութիւններուն մարդը դառնալով քիչ քիչ ու չէք խորհիր թէ այն աչքերը որ կը կրէք դարեր շարունակ լոյս են առեր սրբազան ճարտարապետութենէն որ լեռներունն է Հայաստանի:

Բ.- Կուշտ ենք այդ շրջուած բովանդիզմէն:

Ա.- Երանելի սովեալներ, որոնց սնունդը թիւն է, մուխը, երկաթը, փողասը, ածուխը: Որոնց հոգին այլեւս սեւցած քար է դարձեր մարմինին երակներուն մէջ: Դուք այդ բովանդիզմը չէք իսկ հասկցած զայն ուրանալու համար: Վասնզի ձեր հայրենիքին զգայնութիւնը առեր էք գիրքերէ, երրորդ չորրորդ աղբիւրներէ: Մեծ դէպքեր կը միջամտեն ձեր մանկութեան եւ արդի ճաղատ, անզգած անհայտութեան մէջտեղը ու չէք անդրադառնար ձեր անդարման խեղճութեան, բոկութեան, տափակութեան երբ մեզ խոռվող մտապատկերները կը ծաղրէք այսքան թեթեւութեամբ: Մեքենայի, ածուխի, բատիոյի դա ր: Անշուշտ: Արուե՞տը: – Օ՛ տղոց խաղալիքը, նախամարդուն մեղքերէն մէկը: Գրականութի՛ւնը: – Անխելքներուն, անժառանգ ծնածներուն, անօթութեան քնարերգուներու զբաղումը: Անախըրոնի գմ: Ոչ, ազնուական պարոնս, ո՛չ: Տակաւին այսօր ինչ որ ապրելուն մէջ համ մը, չեմ ըսեր իմաստ մը կը կաթէ, դարձեալ անկէ կուգայ: Առանց խանդի եւ առանց արցունքի, առանց թելի ու առանց ժպիտի, առանց սիրոյ եւ առանց հաւատքի – բառը տարածեցէք շատ աւելի անդին որքան սովոր են ընել ձեր ականջները – առանց բանաստեղծութեան, այս կեանքը ակռայի, կզակի, աղիքի ու սրբանի սիսթեմ մըն է միայն: Ինչ որ այս աշխարհին մէջ մեզ կ'ընէ բոպէ մը գիտակից թրթիռի, կայլակ մը՝ անբաւութեան խորհուրդէն փրցուած ու դրուած մեծ իմաստին ճառագայթումին ընդդէմ, ինչ որ մեր կաւին մէջէն կը ձգտի երկարիլ ու տիեզերքին բաւիղները վախնիվախ

խուզարկել, կարճ՝ անդոհը որ մեր ճակատագրինն է, անհունութեան մէջ նետուած փշրանքներուն անըմբռնելի ճամբաներու եզերքին, այս բոլորը կեանքին քաղցրագոյն սուգերը, կը կազմեն նոյն ատեն ապրելուն ազնուական քանի մը նախապայմանները: Այդ ճամբով մեզի հասնող ամէն շամանդաղ մեզ կը յուզէ: Բոլոր կրօնքները բանաստեղծութիւններ են, այդ անհասելի ճամբուն անբաւ ակօսներուն ուղղուող: Նախօրրանը՝ արուեստի բոլոր ձեւերուն, որոնք նոյն ճամբուն վրայ ելքի շաւիղներ: Ունի՞ ք այսօր իսկ, ձեր գիտութեան բոլոր զեղումներուն, երեւակայութեան բոլոր մետաղ թելերուն ձեզի արտօնած մեծահաւատ ստուգութեանց հակառակ, բա՛ն մը, որ մօտիկը դրուէր, օրինակի մը համար կաթողիկէի մը խորհուրդին: Վայ է մեզի քանի որ անկարող էք այլեւս երկինքները բանալ ու ճանչնալ մեծութիւնը զգացումներուն որոնք Աստուածներ կիջեցնեն, ու լայնածաւալ երկրի մը ամենէն շքեղ կայքերու շուրթին մատուոններ, վկայարաններ, եկեղեցիներ, ադամանդ գոհարտուփերու նման շարիշար վառման կը հանեն: Դ. դարը մեր հոգիին ոսկեդարն է, քանի որ ան կազմեց գմբէթներու այդ մանեակը զոր մնացեալ դարերը պահպանել միայն ձգտեցան: Ու կը դառնամ կարեւորին. – Ունի՞ ք, ձեր բոլոր զարգացումին եւ աղբիւրներուն նպաստովն իսկ միջոց մը որպէսզի կէս դարու տեւողութեան մը վրայ, կոշտ, տգեղ, ասիական թանձր աղտերով զարնուած զանգուածէն կարենայիք երեւան հանել փարթամ, կուշտ, նուրբ, խորապէս արուեստագէտ այն զգայնութիւնը որ մեր նորոգուած ժողովուրդինը պիտի ըլլար...

Բ.- Միշտ բաշխի չը ձրի շնորհներու:

Ա.- Ի հարկէ: Մարդ չի հաւատար իր չտեսածին կամ չկրցածին: Ձեզի կը մնայ կարդալ Փաւստոսը, Ագաթանգեղոսը, Բայց մանաւանդ Աստուածաշունչը:

Բ.- Այսինքն գիրքեր որոնք մերն ալ չեն:

Ա.- Կուգամ այդ հարցին ալ մօտենալու: Բայց ատկէ առաջ կը փութամ յայտարարել զանոնք բոլորովին մերը: Այդ երեքին մէջ ալ կը ներկայանայ իր ամենէն պարզ, անվերածելի

ձեռն մեջ մեր անդրանիկ քաղաքակրթութիւնը, մեր հոգին այնպէս՝ ինչպէս ելած է անիկա Լուսաւորչի քուրայէն, այդպէս մաքուր, պարզ, միակտուր, իր երկնայնութեան ամբողջ շաղը, շամանդաղը, աղուամազը վրան, այսպէս ըսելու համար: Ոչ մէկ գիրքի մէջ այս հոգեվիճակը այսքան հարազատ է որքան առաջին երկուքին մէջ: Ու Աստուածաշունչի թարգմանութիւնն ալ, անկախաբար հարազատութեան հարցէն որ անոր փոքրագոյն արժանիքը եւ հետեւաբար պակասած պարագային ալ փոքրագոյն թերութիւնը պիտի կազմէր, իրողութիւն մըն է շատ աւելի խոր ու ընդարձակ քան ինչ որ պիտի ուզէր տեսնել նիւթի վրայ բանող ձեր տրամաբանութիւնը: Անիկա հայութիւնն է ամբողջ, իր փառքի ծայրակէտին:

Բ.- Երբ իր թագաւորները խամաճիկի պէս կը դրուին ու կը հանուին...

Ա.- Հոգին միշտ հպատակ չէ նիւթին:

Բ.- Առանց ուժի, անկախ հայրենիքի մենք ներեցէք որ չըմբռնենք քաղաքակրթութիւն:

Ա.- Եւ սակայն ձեր չըմբռնելովը անիկա չի դադրիր ըլլալէ: Նուաճուած ժողովուրդներուն թիւը չէ որ փաստը կը բերէ նուաճողին մշակոյթին: Ըստ վարկածին Ճէնկիզները, Թիմուրները, Թուրքերը աշխարհի մեծագոյն մշակոյթները պիտի ներկայացնէին, քանի որ ձեր նախապայմանը ամենէն շատ ասոնց մօտ տիրական կերպով ի յայտ եկաւ: Այո՞: Մշակոյթը հոգիին քաղցրացումն է, ազնուացումն է, երկնայնացումն է որոշ չափով: Մշակոյթը նախ ներէսն կը խմորուի ու իր պատեանները կը բիրեղակերպէ այդ ներքին հուրքով: Տաճար մը գեղեցիկ է ոչ իր մեծութեամբ, կարկառներուն խստութեամբ, քանդակներուն պատգամներովը կամ փաստովը, այլ նիւթէն վեր թէեւ անկէ բերող այն հոգեկանութեամբ որ զինքը ոտքի հանող ուժին թարգմանութիւնն է հող: Գիրք մը գեղեցիկ է ոչ իր պարունակութեան հում աստղծովը, այլ **կերպովը** որ այդ աստղձը ազատած է նիւթին գերութենէն ու դրած ոգեղէն իրացումներու վառարանին: Ահա այս ստուգութիւնն է որ կը փրկէ Աստուածաշունչը:

Բ.- Թարգմանություն մը միշտ, միշտ փոխ առնուած բան մը:

Ա.- Օդը, ջուրը փոխ չեն առներ մարդիկ: Այդ մատեանին պարունակութիւնը կը պատկանի ոչ թէ այս ու այն ժողովուրդին այլ Աստուծոյ որ մարդակերպական յղացքէն աւելի ընդարձակ է իր այդ առումին մէջ. անիկա հոգեկանութիւնն է, քանդակը մեր ծարաւին դէպի մեծ անյայտը, խորհրդանշանը մեր մէջ խլրտող հսկայ անդոհին, մեր գիտնալու, բարձրանալու, մաքրուելու անհուն ըղձաւորութեան: Չի բաւեր փակել իր աչքին պատուհանները «չի կայ» պոռալու համար ձեր ոտքերն ի վար ու վեր փռուող տիեզերքին: Կայ այդ անհասը, աւելի քան իրական ու սպառնալից: Աստուածաշունչը մատեանն է այդ անդոհին որ սեփականութիւնը չէ այս կամ այն ժողովուրդին: Ապացոյց: – Այդ անդոհին անճանաչելի ըսուելու չափ հայեցութիւնը երբ բնագրէն յեղուեցաւ մեր բարբառին: Հակառակ այդ բնագրին այնքան այլամերժօրէն ցեղային, ազգայնամոլ գոյնին, եւ տեղի, անձի, մտայնութեան այնքան մեզի հեռաւոր, օտար խստութիւններու, գիտցէք որ անոր թարգմանածոյ ընթերցուածը մեր հարազատ խորապէս հայաշունչ ստեղծումներէն չի տարբերի երբեք: Երբ կարտասանեմ, ամենէն աւելի հրէութիւն հոտող սա երկեակը

**«Աջ քո, Տէ՛ր, փառաւորեալ է զօրութեամբ,**

**«Աջ քո, Տէ՛ր, խորտակեաց զթշնամիս...»,**

իմ մտքէս չանցնի երբեք սեմականը որ թոցուց իր բերնէն այդ կոչը, այլ ի՛նքը, հայ ժողովուրդը որ իր տագնապներուն, բազմահարիւր թշնամիներուն դէմ, իր ուժերէն ձեռնօրհան, իր ապաստանը կը փնտռէ վերնական աջին մէջ:

Բ.- Ամենաբո՛ւս անշուշտ եւ այս եղանակը: Որ առնրւագն գիտական ըլլալու ընդհանրութիւնն ալ ունի: Տրամաբանութեան այս կերպը գիտէ՞ք որ կը ծառայէ մասնաւորաբար մեր տեսակետներուն: Այդ հանրացումը առաջին ճամբան է ուր պիտի հարթուին ցեղերու զանազանութիւնները եւ որ պիտի կազմէ իսկապէս Աստուծոյ ժողովուրդը, այսինքն գիտութեան ժողովուրդը: Դարմանել, մեզի հետ, մեծագոյն

սխալը զոր ծուռ մեկնուած սկզբունքներ այսօր վերածեր են տիրական ճշմարտութեան: Յեղային ազայնականութեանց հետզհետէ աղօտումը ու վերացումը համամարդկային ներդաշնակ, երջանիկ ընկերութեան:

Ա.- Մենք նման եզրակացութիւններ չենք գտներ սակայն: Փորձեցէք մեր թարգմանածոյ Աստուածաշունչէն որեւէ էջ կարդալ բարձրաձայն: Ձեր բառերը պիտի թուին գալ, փրթած ձեր իսկ հոգիին ալքերէն, անվերածելի զգացումներու իբր ընդոծին տարագումներ, ձեզի միայն յատուկ ինչպէս է արդէն ազգի մը լեզուն:

Բ.- Յաւիտենական պատրանքը:

Ա.- Զգուշ: Կառնեմ Սաղմոսներէն որոնք ուրիշ ժողովուրդի մը ամենէն սերտ զգացումները կը պատմեն, կիրք, սարսափ, յաղթանակի ու պարտութեան խիտ շեշտերով, սա երկեակը, ապահովաբար փրթած օր մը Սաղմոսերգուին բերնէն, ամենէն արբեցուցիչ յաղթանակը պսակող.

**«Գովեա, Երուսաղէ մ, զՏէր,**

**Եւ օրհնեա զԱստուած քո, Սիոն»:**

Այս ճիշը թոած տաքարին, խրոխտ, ազգայնամոլ քերթող-արքային նուագարանէն, խտութիւնն է ամբողջ այդ ժողովուրդին փառքին: Բայց հոս է հրաշքը: Զայն արտասանող հայ բերանը չանդրադառնար զգայնութեան այդ երանգին: Ընդհակառակը: Բառերու հետ նիւթացած մտապատկերը երբեք հրեայ քաղաք մը չէ, թէւ կարճ միջոցի մը անոր ոգեկոչումը բռնանայ մեր հոգիին: Այլ կարծես թէ մեր ժամերուն կամարները ծակող ու դէպի ամբաւութիւնը սին կապող սլացք մըն է անիկա հայ ժողովուրդէն որ երկրաւորը զեղչած է անկէ ու երկինքին մէջ կազմած անոր պարիսպները:

Բ.- Զուր տեղը չէ որ գիտունները կըսեն թէ.- Մինակ անապատին մէջ չէ որ կը բուսնին կրկներեւոյթները, այլ մարդոց մտքին մէջ ամենէն շքեղները կը շինուին անոնց:

Ա.- Ինչպէ՞ս որակել սակայն մտքի սա բռնադատեալ կուրութիւնը զոր յանուն նորոգ գաղափարներու, գիտական կեցուածքի կը հագնիք այսքան միակտուր երջանկութեամբ մը

ու կը պարզէք մարդոց հոգին ինչպէս գրահաշուական տարագ կամ փորձաշիշի մէջ կազացած անօսութիւնը: Բայց դիւրին է հակափորձը: Ձեզ կը հրաւիրեմ կարդալ ժամանակակից մեծագոյն քերթողներէն որեւէ կտորի մը թարգմանութիւնը ու վերլուծել անոր արթնցուցած արձագանգները ձեզմէ ներս: Այն ատեն պիտի զգաք թէ ինչ է խորհուրդը որուն անունն է հինգերորդ դարու հայ Աստուածաշունչ: Անիկա առանձին, մեզմով, ան ալ մեր այդ շրջանի հոգիով կարելի ստեղծում մըն է ու ատով խորապէս ցեղային: Ապացոյց: Փորձեցէք կարդալ այն միւսները զորս հրատարակեցին մեր ժամանակներուն, ամերիկեան ընկերութիւններ: Այս Աստուածաշունչները իբրեւ թարգմանութիւն աւելի հարագատ, աւելի կատարեալ ու հաւատարիմ ալ են եւ գիտական-բաղդատական մեթոտին բոլոր պայմանները կը լրացնեն, բայց հայ չեն ամբողջովին:

Բ.- Մեր դարու գրական օրէնքներէն մէկը, բիրեղացումի (Մթանտալին) օրով մենք մեր ուզածը կրնանք դնել ու տեսնել հոն ուր նման բան մը չունի գոյութիւն:

Ա.- Մի աճապարէք: Պիտի տամ ձեզ անունը բազմա-հըմուտ մարդու մը որ Աւետարանը թարգմանելու ամենէն գիտական մեթոտը կիրարկեց, տառ ու իմաստ փոխադրելով մեր բարբառին, բայց հասաւ ամենաձախող արդիւնքի: Մատաթիա Գարագաշին թարգմանութիւնն է ատիկա, այսինքն հինգերորդ դարու գրաբարի ախոյեանին, մեծ լեզուաբանին, բազմաթիւ գիրքերու հեղինակին, իրողութիւն է որ խուժ այդ թարգմանութիւնը չճնած մեռաւ, ինչպէս կընեն: Խորհած ունի՞ք պատճառին սա վրիպանքներուն: Վասնզի ԺԹ.րդ դարու հայ հոգին կը պակսէր այդ աշխատանքներուն խորը, անտեսանելի այն մագնիսականութիւնը որով մեր սիրտերը կը կապուին մեր բոլորին մէջէն հոսող թելաւոր ու անմահ թելին, հաւաքական զգայութեան դէպի ծովը մեզ հանող կամ անկէ մեկնող, նոյնն է պարագան:

Բ.- Հարցուցա՞ծ էք այդ գիրքերը գործածող մարդոց թէ ինչով կը տարբերին ձեզմէ:

Ա.- Պետք չկայ ասոր. գիտեն ասիկա ու անոնց մտաւորականութեան տառապանքը այդ ապահայութիւնը՝ կրօնական մարզէ: Այս է ճակատագիրը ամէն ստեղծումի ուր չմիջամբտեր ժողովրդական զգայութիւնը: Մովորութիւն է ընդունիլ որ քանի մը մարդեր ու ասոնցմէ վարուած խմբակ մըն են հեղինակները այդ թարգմանութեան. պատրանք: Ասոնք նիւթը դեկավարեցին, ձեւը կոկեցին ու այդքան:

Բ.- Քիչ առաջ ուրիշ բան կ'ըսէիք սակայն, այդ վարիչները երբ կ'անուանէիք հանճարայնօրէն տեսանող հսկաներ:

Բ.- Մի շփոթէք երազը եւ իրացած առարկան: Վարիչներուն մեծութիւնը աշխարհի մը ճակատագիրը ըմբռնելու ու զայն փոխելու իրենց ձգտումին մէջն է: Քրիստոնէութիւնը թարգմանիչները չբերին մեզի անշուշտ: Բայց անոնց վիճակեցաւ դերը այդ փոխադրումը ազգայնացնելու: Մկրտուող հայ ժողովուրդը հոգին տուաւ երկու երեք սերունդ որ մտիկ ըրաւ այդ գիրքին ձայնը, իր հին աստուածներուն պորտին ընդմէջէն, ինչպէս պատահած է պարագան քրիստոնէայ բոլոր հասարակութեանց դարձին առաջին շրջաններուն: Նոր խորհողութիւն, նոր հոգեբանութիւն մեզի պէս պահպանողական խմորէ մը ներս կարօտ են հզօր ձեռքերու: Այդ ձեռքերը կան այդ խումբին մէջ: Բայց ահա կարելորը: Արուեստի գործ մը խորունկ բարդութիւն մըն է, երբ մանաւանդ կաւազանէ բոլոր հոգեւոր հովիտները ինչպէս հայ Աստուածաշունչը:

Բ.- Արուեստի գո՞րծ:

Ա.- Ըսի ձեզի արուեստը կրօնք է: Ու հայ Աստուածաշունչը մեր արուեստին առաջին ու հսկայ կոթողը: Այդ ազնուական, պերճ, շնորհայեղ ոճին տուն տուողը ինքը, մեր երկիրն է, գոր չենք ճանչնար իր գեղեցկութեան մէջ, օտարէն ազատ ու ինքն իր մէջ բխած, լեռներու կոնակին դիզուելով երկնայարդար գմբէթ մը ինչպէս: Մեր ճարտարապետութիւնը այդ թեթեւութիւնը իր խորքին կը պարտի: Ու առանց թագուհի ըլլալու, այդ թարգմանութիւնը ամենէն անուշ արտայայտութիւնն է այդ հայրենիքին, անոր իմացական, հոգեկան, ստեղծագործ ուժերու համադրական մէկ անմահ յիշատակարանը:

Բ.- Ընթացիկ ու ինքնանուէր հպարտութիւնը ձեր նոր ազգայնականութեան: Տեսակ մը տարտամ արձագանգ հայ արուեստի մը առասպելին որով կ'աղմկէք կէս դարէ ասդին: Կարծեմ սխալի մը մէջ չեմ: Կը նմանիք մոլեռանդ աբբայի մը որ իր կարծեցեալ ճշմարտութիւնը պաշտպանելու ատեն տարբեր շէշտ ու բառ պիտի չունենար:

Ա.- Կրկնապէս ցաւալի էք, նախ մեր արուեստին հանդէպ ձեր այդ փոքրոզի չկամութեամբը: Յետոյ ձեր միակողմանիութեամբը: Երբ ձեր գիտութիւնները այնքան կը սահմանագերծէք, ի նչ իրատունքով օղակի զարնուած կը պահէք հոգիներուն գիտութիւնը որուն արտայայտման միջոցներէն մէկը՝ արուեստն է: Ես ձեր առջեւ դրի շօշափելի օրինակներ: Հայ Աստուածաշունչը թարգմանութիւն մը չէ ինչպէս չէ անգլիականը, ինչպէս չէ գերմանականը, որոնք այդ ժողովուրդներու գրական զարգացումին վրայ խոշոր կնիք ունեցան անտարակոյս: Թերեւս անծանօթ չըլլայ ձեզի նաեւ այն պարագան թէ Լուտերի թարգմանութիւնը հայրը կը նկատուի արդի գերմաներէնին: Բայց ահա տարբերութիւն մը: Լուտերէն վերջ այդ լեզուն շատ անելի շքեղ գլուխ գործոցներ տուաւ գերման գրականութեան: Հիմա, ըսէք խնդրեմ, մեր մէջ դուք կրնա՞ք անուանել գործ մը որ իբր տարագ ու ձեւ, իբր իմացական գեղեցկութիւն, դաշնակութիւն, իբր ոճի ու հոգիի քաղցրախառն հանգոյց մօտիկը դրուէր Աւետարաններու հայ թարգմանութեան որ այնքան կանուխէն ու մէկ անգամով կ'իրագործէ արուեստներու պատմութեան մէջ հագուագիտ հրաշալիքներէն մէկը ու կը թելադրէ, կը հարկադրէ մեր հիացումին սելեռաբիբ նայուածքին՝ որը երբ ժողովուրդ մը, մե՛րը, անսպառելի ցունցի մը ընդմէջէն, գրեթէ տարերային բխումով կը կերպադրէ դէմքը իր հոգիին լայն, արձակ, ընդարձակ, խորունկ ու շլացուցիչ գործի մը վրայով որ, միակտուր, համադրութիւնը կըլլայ նոյն այդ ժողովուրդին:

Բ.- Քիչ առաջ դուք էիք դէմ պարզապաշտութեան, երբ արուեստի գործերուն համար այլապէս բարդ յօրինուածութիւն կը տեսնէիք...

Ա.- Անշուշտ, այդ ժողովուրդին անգիտակցութեան խորը կային տարբերը այդ անշամանդաղ կոթողումին: Բայց կային անկազմ սաղմնային ուժերու ձեւին տակ: Բայց, մեր ինչպէս ուրիշներու մէջ, զանոնք միաձուլողը, վերակազմողը ու իբր **Մահապարաթա, Իլիական, Իդիպոս Արքայ, Ենեական, Երկնային Կատակերգութիւն** ժայթքումի հանձնողը, կենալու համար քանի մը մեծ իրացումներու առջեւ: Կը տեսնէք որ ձեր կարծածին չափ նեղ չէ սահմանը իմ գիտութեան: Ի՛նչ որ Քրիստոսէ հինգ դար առաջ ստեղծած է հեյլէն ողբերգութիւնը, ու ոտքի սեւեռած, մարմար իրենց պատմութեանին անկորուստ պերճանքին մէջ բանակները հեյլէն արձաններուն, ու ինչ որ բլուրի մը ժայտերէն իբր ադամանդի հնոցի մը՝ հանած ու դարերու դիմաց բիրեղօրէն քանդակուած քարէ երգը սառեցուցեր է Աթէնքի վերեւ, ներեցէք որ նոյն Քրիստոսէն չորս հարիւր տարի վերջը մեր երկրին կենդանի արձաններէն, տաճարներէն, այսինքն մեր մարդոց հոգիներէն ոտքի հանեց այդ անկորուստ ոճը, զոր հետագայ տասնըհինգ դարու կտտանքն ու տառապանքն անկարող եղան եղծելու, պարգութեան ու պատկերուն քաղցրութեան, բնականութեան ու անշահախնդիր անդրայնութեան, անաշխարհեան աշխուժի ու սրտամորմոք թախիժի համադրուած մատեանը, հայ Աստուածաշունչը որ ատով իսկ, կը կրկնեմ արտայայտութիւնը կըլլայ մեր հոգիին:

Բ.- Ո՞ւր կը դնէք Նարեկացին որուն անունով երդում կընեն ձեր արուեստի տեսաբաններէն ոմանք:

Ա.- Բայց հոն, միշտ նոյն շունչին մէջ որ պիտի երկարի դարէ դար ու ինչպէս ձիւներէն փրթող ջուրը, հետզհետէ պիտի պղտորի բեռնաւորուելով տիղմէ ու աղտէ, որ հակառակ մեծ ճիգերու, այդ հոգին կերպադրող տարազին այդ մեծավայելուչ պարգութիւնը, նախնականութիւնը ալ պիտի չգտնէ: Ու զարմանալի ոչինչ կայ հոս: Մարդիկ երկու անգամ չեն դառնար վիճակիին զոր եղած են անգամ մը, այնքան կատարելութեամբ: Ինչո՞ւ այժմեան այնքան զարգացած, յաւակնոտ արուեստը ինքզինքը անկարող է յայտարարած **Իլիական** մը արտադրելու,

հակառակ մեծամեծ գրագետներու ցանկութեանց ու փորձին: Նարեկացին նոյն այդ շունչին այլաշրջան մէկ կերպարանքն է ուրեմն.

**«Ամփոփեալ պարուրեա զպատուիսն տեսութեանց  
Ջգայարանացս իմաստից, անգարհուրելի  
զետեղմամբ  
Ի ծփական խռովութեանց,  
Կենցաղական զբաղմանց,  
Անրջական երազոց  
Խօլականաց ցնորից  
Յիշատակաւ քո յուսոյդ, անվնասելի  
պաշտպանեալ»: ...**

Չայնէրու սա անձրելը, այդպէս գունաւորուած երբ կ'անցնի հոգիին մէջէն, կ'արթնցնէ մէկ ու նոյն զգայութիւն, մեր ժողովուրդին շունչը աւելի թուխպ, աւելի տազնապած, աւելի ոլորուն ինչպէս ինքն է, մեր ժողովուրդը այդ դարուն երկնքին ու երկրին սարսափներուն ընդմէջէն: Ու այս եղանակով նաեւ միւսները, աւելի կամ թէթեւ հուրքով:

Բ.- Չեմ գիտեր թէ ուր կ'ուզէք երթալ:

Ա.- Մեր ցեղային իմաստութեան աւագանին, մեր Աստուածաշունչին:

Բ.- Ու դուք իմաստութիւն կ'անուանէք անհեռատես ու բռնադրուած այդ արեւելումը մեր հոգիին որուն տկարացումը սկիզբ կ'առնէ այդ գիրքով: Երբ բոյսերու եւ կենդանիներու համար գօտիներ ու կլիմաներ պայմաններ կը կազմեն ինչո՞ւ կուրանաք նման կարելիութիւն մը հոգիներուն համար: Արուեստի ձեւեր, մտքի երկունքներ կան որոնք Արեւմուտքին միայն կը պատշաճին: Ամբողջ Արեւելքը, բացի մեզի պէս փոքր զանցառելի թիւով խմբակներէ, կապուած է իմաստութեան ուրիշ պատգամներու: Մեր ղեկավարները չտեսան այն անկարելի կացութիւնը զոր կը ստեղծէին մեր գլխուն ու ոտքերուն երբ մեզ զատեցին մեր առհաւական բարեխառնութենէն եւ մեզի հազցուցին այդ բռնաշապիկը: Դուք ասիկա կ'անուանէք ցեղային իմաստութիւն: Բայց, ե՞րբ, ո՞ւր է տեսնուեր

այդ աստիճան անըմբռնելի մոլեգնութիւն մը ինքզինքը ճանչնալ չուզելու: Ասիկա ըրինք դարերով եւ մեր երկիրը ուրիշներուն վայելքին համար շահագործող ողորմելի ամբոխի մը, գերիներու խուժանի մը վերածեցինք զեզ: Ասիկա ըրինք ու մեր տկար սահմանները մշտապէս բաց պահեցինք ուրիշներու ախորժակներուն: Ի՛նչպէս ստեղծագործութիւն է ասիկա, որ չի կրնար քանի մը հարիւր իշխան կապել իր խռովքին ու հուրքին: Անոր ամենէն մեծ ցայտքը, հինգերորդ դարը կ'իսող կրօնական պատերազմը ազգային անգամ չէ, քանի որ երկրին կէտը թշնամի կը դառնայ իր կրօնքին: Ու այսօր իսկ: Վրայ տուինք մեր ժողովուրդը գրեթէ նոյն ոգիին: Ու դեռ երես ունինք խօսելու ոգիէ, ուխտէ, երբ փաստը մէջտեղն է մեր անդարման տախտապարումին: Ըսէ՞ք խնդրեմ, ոճիր չէ՞, երբ ժողովուրդ մը, գիրքի մը մղումին տակ իր գոյութեան նուիրական հարցը կը փոխադրէ աշխարհի պարունակներէն դուրս ու փոխանակ իր նիւթեղէն մարմինը, իր տունն ու հողը, իր այլապէս դժբախտ հոգին պաշտպանելու, առնուազն օտարին լրբութենէն, նախատինքէն, սուրէն ու թուրէն, ինքզինքը ամբողջութեամբ կը դնէ բախտախաղի, արկածախնդրօրէն, մոռնալով կէանքը, ու գրաւի ելլելով չապացուցուած բանի մը ետեւէն: – Երկինքը շահելու, շահագործելու աններելի արկածախնդրութիւնը:

Ա.- Կեցցես, իմաստութիւն ըսուածը այսքան կըլլայ: Ուրեմն գձուձ, շահադէտ արկածախնդրութի՛ւն, ինչ որ մեզ պահած է ցայսօր:

Բ.- Ուրիշ ի՞նչ, ուրիշ ի՞նչ: Ասկէ՞ առաջ ու այսօր: Ու աւաղ՝ նա՛ եւ վաղը: Ուրիշ ինչ՝ մանաւանդ այն օրերուն երբ մեր երկիրը իր քսան բերդերուն դիմաց երկու հազարէ աւելի վանքեր կը համրէր իր ամենէն քաղցր ու կենսական խորշերուն վրայ: Ըսէ՞ք խնդրեմ, ի՞նչ է անունը այս անիմաստ յամառութեան:

Ա.- Ըսեմ խնդրեմ, ի՛նչ է անունը ոճիրին որ մեզի ժամանակակից ժողովուրդներ սրբեց աշխարհին թատերաբեմէն, ժողովուրդներ այլապէս հօգօր, երկրակալ, որոնց անունները կ'առչէր մնացէր են գիրքերու էջի մը, կամ ժայռերու

կոնակին եւ այսօր անոնցմէ բնակուած, փառաբանուած երկիրը կանգիտանայ զանոնք: Ո՞վ պահեց մեր ժողովուրդը յետախաղաղ կորուստէն, գոնէ մեր սահմաններուն մերձավայր մարզերու, որ մեր պատմութիւնը յիսունէ աւելի յատուկ անուններ արձանագրած է ցեղերու: Ո՞վ: Դիպուածը: Ձեր աստուածացուցած գիտութիւնը: Կամ իր երկրաւոր արկածախընդրութիւնը: Ո՞վ, ըսէք խնդրեմ եթէ ոչ իր իսկ հրաշքը, որ շատ մը գետիններու վրայ նոյն ատեն ինքզինքը կերպադրեց: Բաւական խօսեցայ անով նուաճուած գրականութեան մասին: Չունիմ ժամանակ լայննալու մանաւանդ հոգեւոր նորոգումին վրայ որ նոյնքան հզօր երեւոյթ է որքան վերինը: Երբեմն յաղթանակ մը, երբեմն պարտութիւն մըն է զսպանակը այդ կարգի մեծ յեղաշրջումներու: Մերը ինքնադիր, ինքնայարդար արեւելում մը, առանց քաղաքական իմաստի մը անխուսափելի խարակին, սա յղացքէն ներս: Ինքն իր մէջ, պարզ իբր բիրեղացում մը, զոր իրագործած է այդ ոգիին ներքեւ մեր ժողովուրդը ելլելով մէկէն ի մէկ բարոյական դիմագիծի: Քիչ առաջ, ձեզի սովոր նեղմտութեամբ հինգերորդ դարը կիսող շարժումը կորակելիք ապագային: Ձեր գիտութիւնը ձեզի տուած ըլլալու էր տարրերը մեր շինարարական կազմակերպութեան որ տոհմային էր բացառաբար ու զուրկ համայնական զգայարանքէ: Բայց այդ դարուն է որ առաջին անգամ մեր բանակը իբր հոգեկան արտայայտութիւն ռազմադաշտ կ'ելլէ, այս անգամ հայրենիքին անունով որ խտացած է Աստուածաշունչով մատոռակուած ոգիին ներսը: Ատ է հրաշքը: Ու դուք մտաւոր առաջնորդներ աչք ունենալու էք այդ հրաշքը ընդգրկելու եթէ ոչ կրօնագգած գէթ արժանաւոր խորութեամբ, խոռվքով: Մեր ժողովուրդը ոտքի կը կանգնի ներսէն եւ ոչ թէ դուրսէն, իր ալքերուն մէջը դարբնած հրաշքէն եւ ոչ թէ գարեջուրի, միսի, պալատներու հրամայականէն որոնք մերը չեն եղած դարերով: Մեզի պէտք է այսօր կարօտագին հրաշքը մեր պապերուն, որ մեզ լքած չէ երբեք: Սանկ եօթանասուն, ութսուն տարի մը բարի կըլլաք ետ երթալու, սա ամբարիշտ ԺԹ.րդ դարու կէսն ի վար: Բացէք աչքերնիդ այդ

օրերուն վրայ: Հոն է հրաշքը դարձեալ, այս անգամ ուրիշ խումբերու ձեւին տակ որոնք այդ կարօտագին ձայնը, այդ հրաշաբաղձութիւնը մեր դարաւոր խորհուրդին նիւթացուցին, եւ մէջտեղ դրին մեր նոր երկու գրականութիւնները: Եւրոպայի այսօրուան մեծ ազգերը իրենց մշակոյթին գրական կատարելութիւնը գլուխ հանելու համար առնուազն երեք չորս դարու պետքը ունեցան: Մեր գրականութիւնը քսան երեսուն տարուան մէջ անմահ գեղեցկութեամբ գործեր երեսան բերաւ հինին ինչպէս նորին մէջ: Ու հրաշք է ասիկա: Ատոր կարօ տը: Մանաւանդ այսօր: Ստեղծարարն այդ հրաշքին: – Մեր հոգին՝ հայ ժողովուրդին: Մի մտնէք այդ խառնարանէն ներս փորձի խողովակներով, փողատով կամ կարկինով միայն: Մի փորէք այդ հրաբուխին ոտքերը քիչ մը պղինձ, երկաթ կամ ճերմակ ածուխ միայն շահելու արկածախնդրութեամբ: Յարգեցէք այդ մեծութիւնը, ապառաժները, այդ կործանած պարիսպները մեր անցեալին նիւթ էւ հոգիէ: Ով որ հին գիրք մը կը հեզնէ, կը հեզնէ իր պապերուն թանգարանը: Մեր ժողովուրդը իր փրկութիւնը կը գտնէ իր պապերուն հոգին սիրելով, հագնելով, այդ ոգին մեծցնելով, սրբացնելով, ըլլալով, հազար հինգ հարիւր տարի վերջն ալ, նոյն խստութեամբ, լրջութեամբ, առքով, մոլեգնութեամբ որոնցմով կրակուած, զրահուած, զինուորուած մէջտեղ եկան թարգմանիչները: Անոնց մարմնացուցած հրաշքը դեռ տաք էր յիսուն տարի առաջ մինչեւ՝ մեր բոլորին համար: Ու այսօր պատգամ մըն է կրկին մեզմէ ոչ քիչերուն: Ձեր ու մեր պարտքը՝ նորոգ ու վառ պահել զայն: Թող մեր ականջները իրենց վրանները հեշտագին յարդարեն ձայնին որով տագնապեցան, տառապեցան եւ ստեղծեցին հինգերորդ դարու մեծ հայրենասէրները: Ու վստահ եղէք թէ այդ ձայնը իր անդրադարձը կունենայ նոյն իսկ ամենէն ոսկրացած հոգիներէն ալ ներս: Ձի դարը հրաշքինն է, ըլլալու ետքը նիւթինը: Եւրոպական մեծագոյն ազգերը զայն կը բարբառին իրենց մատաղ սերունդներուն: Դարը հրաշքինն է ոչ թէ հաշիւին: Ամէն մէկ հայ հրաշք մը, ինքն իր ու շուրջին համար, պահպանել կրնալու համար դէմքը իր պապերուն հոգիին: Ու կամքով ու

խստութեամբ ու ծանրութեամբ ինքզինքնիդ ի սպաս դրէք աս հրաշքին յայտնակերպումին: Ով որ կը հաւատայ, ու բառը ընդարձակ է, առնելու չափ աշխարհին բոլոր զօրութիւնները իր մէջ, ան կրնայ: Ու մանաւանդ մի քանդէք մնացած պուտ մը բանը, զի դժնդակ օրեր ճամբայ են ելած դէպի մեր հաւաքական գոյութեան մերձաւոր ապառնին: Մեր անցեալին աննահանջ, միակտուր, այլամերժ ու վայրագ պաշտամունքը՝ դրօշակն է մեր բախտաւոր համախմբումին: Այսպէս խօսեցէք եւ այսպէս գրեցէք հոն ուր կը հասնի ուժը ձեր գրիչին ու լեզուին: Ու այսպէս ծիրենաւոր թող հնչեն կրկին մեր օրերուն՝ ձայները որոնք, հինգերորդ դարուն Աստուածաշունչը, Ժ.ին՝ Նարեկը, ԺԹ.ին՝ մեր գոյգ գրականութիւնները վազցուցին բոցէն, ինչպէս կը փոխաբերէ գեղեցիկ պատկերը մեր դիւցազներգութեան հին մէկ փշրանքին: Հաւատք ունեցէք այս ժողովուրդին մանաւանդ ստեղծագործ երկունքին՝ եւ ոչ թէ կահաւորուած տուներուն: Հաւատք ունեցէք անոնց որոնք կը ծառայեն այդ հրաշքին: Ու ըսէք, առանց վախնալու ու ամօթի ինձի հետ

«Ապրին հայ գիրն ու հայ ձայնը, որոնց մարմնառութեան տապան են եղած դարերով մեր ժամերը, փառքի ինչպէս գերութեան դարերուն դիմանալով անյողողող»:

Յ. ՕՇԱԿԱՆ

(*ՄԻՈՆ*, Թ. ՏԱՐԻ, ԹԻԻ 8, ՕԳՈՍՏՈՍ, 1935, էջ 250–255)

Ծանօթ. խմբագիրի

«Ամբողջը տպուած է *Յուսարեր* օրաթերթին մէջ, 1938ի Դեկտ. 3էն մինչեւ 1939ի Յունուար 16» (Մարկ Նշանեան, *Յակոբ Օշականի մատենագիտութիւն*, Լոս Անճելըս, 1999, էջ 64–65):

ԱՅՆ ՕՐԵՐՈՒՆ

-----

(Խորհուրդ)

*(Գալիթ մը, մայր եկեղեցիի):*

*(Ժողովուրդ, խումբ խումբ: Կան նաեւ առանձին մարդեր:  
Ոմանք՝ աղօթող: Ուրիշներ, պատկեր դիտելով):*

**Երկաթագործը.-** *(Երեցի մը)* Ըսիր, տէր հայր, արդէն կուգա՞ն:

**Երեցը.-** Հիմա, հիմա, վարպետ Աւագ.  
Լուր է հասեր Բարձր Բերդէն:

**Ջուլիակը.-** Ու կը բերեն...

**Երեցը.-** Աստուածաշունչն Հայաստանեայց...

**Հիւսնը.-** Մեր գիրերո՞վ.

**Երեցը.-** Մեր գիրերով, մեր լեզուով, երկնապարգեւ  
մեր հնչումով,  
Գիրք Ծննդոց, Հնգամատեան.  
Թագաւորաց, Սաղմոսարան,  
Քառահատոր Աւետարան  
Գործերը սուրբ Առաքելոց  
Ու մեծ թուղթերն ալ Պաւղոսի...  
Բոլորն այնքան աղուր դարձած,  
Այնքան անուշ կաղապարուած  
Լեզուովն հայոց աստուածախօս...

**Երկաթագործը.-** Դուն տեսե՞ր ես,

- Երեցը.- Ա՛ն քեզի խօսք:  
Ո՛ր չտեսնեմ՝ ի՞նչպէս ըսեմ  
Քեզ անուններն այդ գիրքերուն.  
Տեսեր, պագեր, լացով թրջեր  
Կողքն ալ ոսկի Մուրբ մատեանին  
Մեռնիմ ահեղ իր անունին *(Կը խաչակնքէ):*
- Ջուլիակը.- Մեռնինք ահեղ իր անունին *(Կը խաչակնքէ):*
- Հիւսնը.- Վարդապէ՛տը:
- Երեցը.- Ան ալ, ան ալ...
- Ջուլիակը.- Մո՛ւրբ է, կըսեն,
- Երեցը.- Մուրբերու սո՛ւրբ: Հրեշտակներ չորս կողմը  
Ժուռ  
Կուգան անոր
- Երկաթագործը.- Դուն տեսե՛ր ես...
- Երեցը.- Ա՛ն քեզի խօսք:  
Որ չտեսնեմ, ի՞նչպէս կըսեմ...  
Հետն եմ եղեր տարիներով...
- Ջուլիակը.- Կըսեն՝ ինքը Տէրն է տուեր  
Գիրին տախտակն ինչպէս երբեմն  
Սինա լեռան մեծ Մովսէսին...
- Երեցը.- Ջուլիակ, ջուլիակ, մեր վարդապետ  
Բերան բերնի, ես եմ լսեր,  
Կը խօսի ցած Աստուծոյ հետ:
- Ջուլիակը.- Մեռնինք անոր սուրբ բերանին...:

Երեցը.- Կուգայ հիմա, դուն կը տեսնես  
Աչքին մեկուն, աջ աչքին մեջ,  
Ինչպէս ոսպի հատիկ մը մեծ,  
Լոյսը կայրի...  
Այդ լոյսը մեղմ, այդ լոյսը անմեռ  
Աչքէն փրթեր է Աստուծոյ  
Ու ինկեր հոն,  
Մեծ վարդապետն երբ արցունքով  
Անկէ կուզէր գիրերը մեր:  
Հէ՛յ, դուք իւեղճեր, դուք չէք լսեր  
Ինչ ըսել է Աստուած տեսնել...:  
Մեռնիմ ահին ու անունին  
Երկնահանգոյն վարդապետին:

Երկաթագործը.- Ի՞նքն է մինակ որ մեզ կուգայ:

Երեցը.- Հետն են անոր վերծանողներ...

Երկաթագործը.- Ո՞վ ըսիր, ո՞վ...

Երեցը.- Հաստ է գլուխդ ափերուդ պէս, վարպետ  
Աւագ,  
Զնեղանաս: Վերծանողներ, – նո՞ր  
կ'իմանաս:  
Հետն են անոր թարգմանիչներ,  
Հայրապետին թոռը Վարդան...

Մեպուհ մը.- *(Որ լուռ կը հետեւէր)* Ի՞նչ է գործը  
Մամիկոնին  
Մէջն աշխարհին սա մեր Սիւնեաց:

Երեցը.- Կնքահայրն է ան Ս. Գիրքին,  
Կամքովը հօրն ու մեծ պապուն  
Հայաստանեայց հայրապետին:

**Ջուլիակը.-** Ի՞նչ կնքահայր...

**Երեցը.-** Ինչ կնքահա՞յր: Սո՛ւրբ կնքահայր,  
Ջուլիակ Արտաշ: Ի՞մն է մեղքը որ չգիտնաս  
Թէ կարգ, պաշտօն կը կատարուի  
Վրան գիրքին,  
Եկեղեցու մեր առաջին  
Աստուածաշունչ մեծ մատեանին:  
Գրուած գիրով Լուսաւորչին...  
Դէ՛, իմացիր:  
Միւնեաց իշխանն է հոգացեր  
Ծախքերն անոր:  
Քսան գրիչ  
Ճիշդ վեց ամիս  
Գիշեր ցորեկ  
Լոյսն են թափեր իրենց աչքին,  
Հնարքն անճառ իրենց մատին,  
Վրան անուշ, երկնայարդար  
Մեծ մատեանին:  
Ու Կնքահա՛յր,  
– Մամիկոնեան այդ պատանին:

**Ժամկոչը.-** *(Դուրսէն) Կուգա՛ն... կուգան...  
(Նոյն ատեն չերեցող զանգակ մը կը հնչէ հատ  
հատ, միջոց տալով որ լայնօրէն գործադրուի  
թնդիւնին թրթռումը: Առաջաբեմին  
կոյրուանայ արեղայի մը հասակը, բարձր)*

**Ջուլիակը.-** Ղեւոնդն է մեր...

**Երկաթագործը.-** Ան է, Արտաշ, ի՛նչ ալ մեծցեր:  
Աստուած պահէ աչք ու չարէն:

**Ջուլիակը.-** Մեռնի մայրիկն իր արեւուն

Ինչ ալ վայլեր սեւն հասակին:

Հիւսնը.- Ի՛նչ չի խօսիր:

Երեցը.- Կարգաւորը շատ չի խօսիր: Կեցի՛ր, շունչ մը առնէ գոնէ:

Սարկաւագը.- *(Ներս խուժելով, ուժգին, շարժուկոտոր)*  
Վարդապե՛տը,  
Վարդապե՛տը, վարդապե՛տը *(Շունչ կ'առնէ):*  
Հետն է, կուգան վերձանողներն,  
Կորիւնը մեծ Սքանչելին,  
Յովսէփը հեզ,  
Ու տարօնցին,  
Ան որ Մուշէ ունի անուն.  
Ազնրւաչուի թոռն ալ կրակ  
Հայաստանեայց հայրապետին...  
*(Կը մտնեն Սիւնեաց նախարարը,  
սեպուհներ, երկու պատանի:  
Շքախումբին կեղրոնը՝ վարդապետը)*

Ժողովուրդը.- Ապրի հազար,  
Եռամեծար  
Մեր վարդապետ.  
Կեցցէ՛, կեցցէ՛, ապրի հազար  
Բազմահանճար մեր վարդապետ:

Ուրիշ խումբ մը.- Ապրի բարով, հազար ամով  
Տունը Սիւնեաց:

Վարդապետը.- *(Հանդարտ ու խոր)*  
Ողջոյն Սիւնեաց  
Քաջաբազուկ,

Կորովատեգ,

Հաւատախոր ժողովուրդին:

*(Կը լռէ. գլխով շարժում արեղաներուն որոնք կը բաշխուին աջ ու ձախ, տող կազմելով. թափոր, կեդրոնին վարդապետը, քովիկն ունենալով Մամիկոնեան եւ Սիւնի պատանիները: Թափորը կանգ կ'առնէ գաւթի այն պատին որ եկեղեցիին նաւը կը զատէ գաւիթէն)*

Վարդապետը.-

Ծո՛ւնկի:

*(Կը ծնրադրէ: Բոլորը կը հետեւին, յետոյ բազկատարած)*

Վարդապետը.-

Որդիք որ ծնանին, յարիցեն եւ պատմեցին զայն որդւոց իւրեանց, զի դիցեն առ Աստուած զոյսս իւրեանց եւ մի մոռասցեն զգործս Աստուծոյ...  
Զպատուիրանս նորա խնդրելով խնդրեացեն եւ մի եղիցին որպէս եւ հարքն իւրեանց:  
*(Կելլէ ոտքի: Կը հետեւին միւսները)*

Վարդապետը.-

Չըլլան իրենց հայրերուն պէս:  
Այսպէս պատգամ կուտայ մեզի  
Աստուածը մեր  
Բերանովը սաղմոսերգուին:  
Միւնեաց իշխան, եւ աւագներ,  
Դուք ժողովուրդ հայոց բոլոր,  
Լաւ իմացեք.  
Չըլլան իրենց հայրերուն պէս  
Զաւակները ձեր ամենուն...

Միւն. իշխան.-

Բայց ի՞նչ է մեղքը հայրերուն:

Վարդապետը.-

Մեղքը՝ Աստուած քիչ սիրելուն:  
Զի կը սիրենք ինչ որ գիտենք:  
Ասկէ առաջ. պարզ ասիկա:  
Բայց ասկէ վե՞րջ:  
Այսպէս ըսի ես ամէնուն  
Ուր որ տարի Մատեանը սուրբ:  
Ու կը բերեմ ձեր բոլորին  
Յոյսն ու խոստում, խանդն ու կրակ  
Մեր մեծամեծ իշխաններուն.  
Զեզ կը բերեմ, Միւնեաց իշխան եւ  
ժողովուրդ,  
Նախարարներ եւ սեպուհներ,  
Եպիսկոպոս ու երէցներ,  
Սարկաւագներ ու դպիրներ,  
Ողջոյնն անուշ,  
Մեծ տոհմերուն մեր աշխարհին  
Մամիկոնեանց, Խորխոռունեաց,  
Տունին բարի Կամսարական  
Արծրբունեաց, Բագրատունեաց  
Ու Ռշտունեաց,  
– Մեծ ու պզտիկ, առաքինի  
Քաջահաւատ իշխաններուն:  
Ու կը բերեմ  
Ողջոյնն հզօր ու ոստանիկ  
Արշակունի մեծ արքային...:  
Ու կը բերեմ  
Ամենահաս մաղթանքը սուրբ  
Եւ օրհնութիւնն  
Հայոց հանուրց աստուածարեալ  
Հայրապետին:

Մին. իշխան.-

Իջնէ մաղթանքն անոր ինչպէս  
Յօղը բարի՛  
Վրան դալար, վրան ծարաւ

Նորահաւատ  
Մեր սիրտերուն:

**Կորին.-** Իջնէ մաղթանքն անոր ինչպէս  
Սուրբ մանանան  
Վրան հերկին ու ծաղիկին,  
Վրան ժայռին ու պարտեզին  
Մեղքին աղով հրատոչոր  
Հայ սիրտերուն անդաստանին:

**Ժողովուրդը.-** Թող գայ անուշ, թող գայ բարով  
Ու հեղեղով  
Իր օրհնութիւն.  
Մեզ շղարշէ, պատմուճանէ.  
Ու սիւնն ինչպէս հին բոցեղէն,  
Ինչպէս անձրեւն երկնի լոյսին  
Կանգնէ խորանն անքանդելի  
Սուրբ հաւատքին՝  
Խորը տղմուտ, խորը խաւար  
Թշուառական մեր սրտերուն:

**Սուշէ.-** Հասնի մեզի, հասնի ձեզի,  
Աջն իր ահեղ, ամենակալ.  
Աջն իր անսուտ, նման սուրին  
Զուարթունին,  
Վրան համայն Հայոց երկրին  
Սահմաններուն:  
Կանգնի այդպէս, երկինքէն կախ  
Չորս ծագերէն հորիզոնին  
Հայոց երկրին.  
Աջն իր այդպէս թուր կայծակի,  
Արեւելքէն դէպ Արեւմուտք  
Ու Հարաւէն դէպի Հիւսիս:

- Ժողովուրդը.-** Աջն իր ահեղ, մնայ վահան  
Վրան համայն Հայոց երկրին  
Բարի խօսքովն ու մաղթանքով  
Բազմաչարչար մեծ Վկային  
Հաւատոյ հօր Լուսաւորչին:
- Մարկաւագը.-** *(Ուժգին ու երգեցիկ)* Ճամբա՛յ, ճամբայ...  
Բացէք ճամբայ  
Տապանակին Հայոց Ուխտին:  
*(Գէրեւին երկու սարկաւագներ, սկուտեղի մէջ կրելով  
ոսկեգօծ մեծ Աստուածաշունչ մը)*
- Վարդապետը.-** Մատեանն ահա՛ ...
- Հիւսնը.-** Մատեան՛նը *(Միաձայն բայց զանազանելի)*
- Ջուլիակը.-** Մատեանը *(Միաձայն բայց զանազանելի)*
- Միւսները.-** ...եանը *(Միաձայն բայց զանազանելի)*
- Վարդապետը.-** Մատեանը սուրբ  
Հագած լեզուն մեր ամէնուն:  
*(Ժողովուրդը հիացիկ, հետաքրքիր, կը ջանայ  
բոլորել սարկաւագները)*
- Ջուլիակը.-** *(Ծռելով վրան)* Այս որքան մեծ...
- Երկաթագործը.-** Ամբողջ ոսկի...
- Հիւսնը.-** Մէջ ու դուրսով:
- Վարդապետը.-** Սա ապաւէն, սա տապանակ...
- Ժողովուրդը.-** Ջէն ու ասպար,  
Ընդդէմ բոլոր երեւելի, աներեւոյթ  
Մեր թշնամեաց.

Ընդդեմ Պարսկին,  
Ասորիին, ու բարբարոս Հիւսիսներուն  
Ու դրուժան արեւմտեան  
Դրացիին...

**Վարդապետը.-** Պիտի իջնէ պատգամն անոր  
Մեր բեմերէն,  
Արձագանգէ կամարներէն  
Մեր բիրաւոր,  
Դէպի փապարն ու անդունդներ  
Մարդու որդւոց  
Մուօ սրտերուն...:

**Ղեւնդ.-** Օտարին խուժ, օտարին պիղծ  
Ու ծեքծեքուն  
Խեցքեկագոյն  
Գիրերուն տեղ:

**Մուշէ.-** Պիտի կարդան զայն ասպետներ  
Երբ գրոհի ժամը հնչէ  
Մեր աշխարհին չորս ծագերէն:  
Պիտի լսեն տղաքն հուժկու  
Ժողովուրդին  
Չայնին անոր,  
Եւ զգենուն խօսքերն անոր  
Ինչպէս զրահ  
Անքակտելի,  
Ինչպէս գօտի,  
Վրան արեան հեղեղներու...:

**Վարդապետը.-** *(Առնելով եւ բարձրացնելով)*  
Սա մեզ ասպար աստուածառաք,  
Սա մեզ դրօշ յաղթանակի  
Ընդդեմ երկրի ու երկրնքի

Բազմահազար ոսոխներուն:

Ով կը դնէ սիրտն իր վրան,

Դրած կըլլայ

Առջեւն ոսկի

Անճառելի

Աթոռին Սուրբ

Երրորդութեան:

*(Վար առնելով)*

Առա՛ջ, երկու դուք պատանիք,

Ծունըր դրէք առջեւն ահեղ

Ամենազօր Հայ Մատեանին:

*(Երկու պատանիները ծունկի)*

**Վարդապետը.-**

*(Գիրքը մօտեցնելով Վասակ Սինիին)*

Հօրդ անունով դու ստացո՞ղ

Սուրբ Մատեանին, Վասակ Սինի՛.

Պարտքն ալ կ'առնես մատաղ վրզիդ

Պատկառ կենալ քու մեծ ուխտիդ.

Հաւատարիմ հօրդ հաւատքին...:

**Ժողովուրդը.-**

Հաւատարիմ հօրն հաւատքին

Չարին բոլոր ուժերուն դէմ:

**Վարդապետը.-**

Տէրը մնալ այս Մատեանին,

Գլխուդ գինով,

Ու աւելի:

**Ժողովուրդը.-**

Տէ՛րն անսասան հօրն հաւատքին

Ու Մատեանին,

Գինովն անգին

Արիւններուն մեր բոլորին՝

Չարին անարգ,

Չարին դաժան

Գունդերուն դէմ

Աշխարհախումբ:

**Վարդապետը.-**

Լսէ, լսէ, խորո՛ւնկ լսէ  
Ձայնն ամէնուն, ով պատանի,  
Դիր անսասան պատգամն անոնց  
խորը սրտիդ.  
Գիտցիր վստահ թէ չի մեռնիր  
Բառ աշխարհէն.  
Ոչ ալ մէկ յովտն կրնայ փոխուիլ  
Մուրք Մատեանին:  
Մե՛նք կը շինենք սիրտերը մեր  
Լըսէ, գաւակ, լըսէ ուշո՛վ  
Զի Վարդապետն ահա կ'օրհնէ  
Մատաղ տունկը քու հասակիդ,  
Աղբիւր դառնայ Խօսքն Աստուծոյ  
Մէջ քու սրտին, Վասակ Սիւնի...:

**Ժողովուրդը.-**

Աղբիւր դառնայ ու ծով դառնայ  
Խօսքն Աստուծոյ  
Սիրտերուն մէջ մեր բոլորին:

**Վարդապետը.-**

Պողովատիկ թուր կա՛յծակի  
Դառնայ մէջքիդ Յոյսն Աստուծոյ  
Ու Իր Գիրքին,  
Վասա՛կ Սիւնի:

**Ժողովուրդը.-**

Թուր կայծակի, Գաբրիէլի  
Դառնայ մէջքին մեր բոլորին,  
Յոյսն Աստուծոյ  
Ու իր Գիրքին,  
Ո՛վ կը դընէ սիրտը վրան  
Սրբագնասուրբ այս Մատեանին  
Ան կ'ունենայ կողքին, ա՛նտես  
Բանակները երկնից զօրքին:

Զի աջն անոր փառաւորեալ է զօրութեամբ  
Զի աջն անոր միշտ խորտակեց,  
Կը խորտակէ նոյնպէս այսօր  
Մեր թշնամին...  
Աջ քո Տէ՛ր, փառաւորեալ է զօրութեամբ.  
Աջ քո Տէ՛ր, խորտակեաց զթշնամիս:

**Վարդապետը.-**

Լաւ իմացիր Վասակ Սիւնի՛,  
Ով ուրանայ խօսքն Աստուծոյ  
Գահի, վախու, փառքի համար,  
Տկարանայ կապէն ուխտին,  
Որդերն ուտեն մարմինն անոր  
Նախ քան իջնելն  
Ի ծոց երկրին...

**Ժողովուրդը.-**

Ով ուրանայ խօսքն Աստուծոյ,  
Տկարանայ կապէն ուխտին  
Ուտեն որդերն մարմինն անոր  
Սդոց սդոց.  
Յամքի ինչպէս կայծակնահար  
Հսկայ կաղնին՝  
Հասակն անոր իր արմատէն.  
Փշուր փշուր այլիւր դառնայ  
Շէնքը անոր ոսկորներուն.  
Պատառ պատառ՝  
Կտրտըւած ինչպէս ծրար ճճիներու  
Թափին գետին  
Հանգոյցները իր աղիքին,  
Ով ուրանայ խօսքը գրքին,  
Հաւատքն անմահ Լուսաւորչին:

**Վարդապետը.-**

*(Միւնիին) Ելիր ոտքի.  
(Միւնիին կէլլէ, դողահար ու տժգոյն)*

Վարդապետը.- *(Երկուքին)* Համբուրեցէք զոյգ բերանով...  
Ու սուրբ կողքին վրայ Գրքին  
Թող միանան ձեր շրթներով  
Սրտերն հօօր ձեր հայրերուն:  
Ով կը դաւէ այս համբոյրին,  
Գեհէնապարտ գրուի հոգին  
Յըկատարածըն աշխարհի:  
*(Կը համբուրէ Մամիկոնեան պատանին)*

Մամիկոնեան.- Գրուի հոգին  
Մեւ գեհէնին  
Ով կը դաւէ սա համբոյրին  
Տրուած մարմնին  
Մեր Աստուծոյն...

Վարդապետը.- Միւնեաց իշխան եւ սեպուհներ  
Ու սիրելի իմ ժողովուրդ  
*(Կը կենայ, աչքերը մանրացած են քիչ մը)*  
Եկած է պահն որ իմանաք  
Պատգամն անճառ,  
Երկնայարդար  
Մեծ խորհուրդին  
Զոր տէրն հանուրց իրագործեց  
Կաւէն տկար մեր մատներուն  
Ստեղծելով Երկն այս անհուն...  
*(Կը կենայ)*  
Ես տարիներ, երկրէ երկիր  
Քարշ եմ տուեր մարմինն այս խեղճ  
Ու հարցուցեր.  
Ես տարիներ զարկեր գետնին  
Ճակատն այս փուճ ու փնտրոներ  
Գիրը հայուն...  
Ես տարիներ չեմ մտեր քուն...

Ժողովուրդը.-

Պատմե՛, պատմե՛ մեծ վարդապետ.

Վարդապետը.-

Չէ, չեն կրնար հող շրթունքներ  
Պատմել կրակն Անոր ձայնին.  
Ու բառի մէջ վարձամակել  
Անբաւութիւնն Անոր լոյսին:  
Պուտ մը միայն, հայ ժողովուրդ,  
Ես քաղեր եմ այդ ամբաւէն.  
Եղէք վստահ, պուտն այդ պիտի  
Լիացընէ սիրտերն հանուր  
Հայոց ազգին.  
Զի պուտովն այդ կը բաշխուի  
Սիրտն իր ամբաւ  
Դէպի կաւը մեր սիրտերուն:

Ժողովուրդը.-

Դէպի կա՛ւը մեր սիրտերուն:

Վարդապետը.-

*(Կիսով վերացած, մարմինը հանդերձելով,  
հետզհետէ մտնելու համար ծանր կշռոյթի մէջ  
որ աղօթքին ու յափշտակութեան  
թելադրանքը պիտի հեղու քիչ քիչ, հասնելու  
համար անդիմադրելի ներշնչումին)*  
Ինծի՛ ... ինծի՛ ...  
Բացէք ինծի,  
Դուռներն ամբողջ,  
Ալքն ու խորշեր,  
Նուրբ ու մթին շաւիղները  
Հոգիներուն  
Ձեր ամէնուն  
Ինծի... ինծի...

Ժողովուրդը.-

Հողին պէս հեզ, հողին պէս դաշն  
Մեր հերկերուն.  
Ծոցին պէս պարզ, ծոցին պէս կոյս

Մեր լիճերուն,  
 Ինչպէս բաժակն երկնակնիք  
 Ծաղկրներուն.  
 Ու ոսկեգարդ ինչպէս օրբանն  
 Մանկիկներուն,  
 Մեծ վարդապետ, բա՛ց են շունչիդ,  
 Ծարա՛ւ խօսքիդ  
 Ակօսները մեր սիրտերուն:  
 Թափէ Լոյսին, վեհ իմաստին  
 Մերմերն ոսկի,  
 Գրուան գրուան ու ոչ բուռ բուռ  
 Ընդերքն ի խոր  
 Մեր բանաւոր անդաստանին:  
 Ու ցնցուղով ու ողկոյզով  
 Տեղա բարիք, տեղա ոսկի  
 Ու մարգարիտ,  
 Իմաստութիւն, զգաստութիւն,  
 Ու սրբութիւն.  
 Երկինքը բեր փշուր փշուր  
 Տընկէ տունին մեր ամէնուն  
 Հոգիներուն:  
 Ըրէ գանկերն այս գառներուն  
 Կանթեղ վառեալ, ջինջ աշտանակ՝  
 Անժուժելի,  
 Անճառելի  
 Ծո՛վ Իր լոյսին...  
 Ու ցնցուղով ու ողկոյզով  
 Բաշխէ ձայնիդ համբոյրը լոյս  
 Ալքերն ի վար մեր սրտերուն:  
 Ծըծեն այդ շաղն ու զարդարուին  
 Ծերն ու տղան.  
 Հագնին այդ շաղն զերդ պատմուճան  
 Հարսներ քաղցր, մայրերն անուշ  
 Հայոց երկրին:

Հագնին այդ լոյսն ու հայանան,  
Արտն ու անտառ,  
Լեռն ու բլուր, գեղն ու աղբիւր,  
Հողը խորունկ:  
Գիւղն ու քաղաք, հիւղն ու պալատ  
Հագնին հոգին քու մեծ գրքին,  
Եռամեծար ով վարդապետ:  
Բաց են խօսքիդ, բաց են շունչիդ.  
Բաց՝ պատգամիդ  
Ակօսները մեր սիրտերուն:

**Վարդապետը.-**

*(Յուզումով)*

Կուգամ, քայլ քայլ չափելէ վերջ  
Գաւառները Հայոց երկրին.  
Ամենուրեք գտեր եմ ես  
Սրտերն ամէն այսպէս պատրաստ,  
Ծարաւահի՛ւ՛՛ լոյսի սերմին:  
Ամենուրեք ջահը հսկայ մեր հաւատքին  
Կայրի պայծառ. կայրի քաղցրիկ  
Կախ կամարէն տաճարներուն:  
Հովտէ հովիտ ու լեռնէ լեռ  
Զանգն ու կոչնակ օրը հինգ հեղ,  
Օրը եօթն հեղ,  
Կերգեն քնքուշ, կերգեն անուշ  
Փառքն անսահման  
Մեր Աստուծուն:  
Հայ է դարձեր երկիրն Հայոց  
Երկինքն Հայոց.  
Աստուած իջեր Իր աթոռէն  
Զարկեր մուրճովն իրէն ոսկի  
Ու այդ զարկէն՝  
Կամար կամար  
Փրթեր տաճարն Էջմիածնի:

**Ժողովուրդը.-**

Մեռնի անոր ոսկի ուռին  
Ողջ ժողովուրդն  
Հայոց երկրին:

**Վարդապետը.-**

Ամեն քաղաք հինգով տասնով  
Գմբէթ գմբէթ է ամբարձեր  
Իր տաճարներ.  
Ամեն աւան, ուխտատեղի  
Ունի մատուռն իր անուշիկ  
Բուսած ծոցէն մեր ծառերուն  
Նման տուփի մը գոհարի:  
Ով կը տեսնէ աղեղն աղուոր  
Շողակաթին,  
Վկայարանն Հռիփսիմէին,  
Գայիանէին,  
Լեռան ոտքին, Մօրի ափին  
Այդպէս քնքուշ, այդպէս նագուկ,  
Ու պարմանի,  
Ան չի մոռնար սերմը կարմիր  
Նետուած դաշտերն Հայաստանին,  
Բուռովը մեծ Լուսաւորչին:

**Ժողովուրդը.-**

Մեռնի անոր ոսկի Աջին  
Սուրբ գեղարդին  
Ողջ ժողովուրդն  
Հայոց երկրին:

**Վարդապետը.-**

Ամենուրեք երամ երամ  
Ժիր դպիրներ,  
Աբեղաներ մատաղատի  
Կորովամիտ վերծանողներ, քահանաներ  
Կընեն՝ սպասն հաւատեռանդ  
Սուրբ Մատենանին:

Նախ քան վախճանն այս տարիին  
Հայոց երկրին  
Հազար ու բիր խորաններէն  
Հայ բարբառով, հայ զգեստով  
Պիտի հոսի բանն Աստուծոյ  
Արգասաբեր ու օրհնաբեր  
Տարափն ինչպէս  
Հուր անձրեւի,  
Որ այրուին, ու մաքրօրէն  
Կենագործուին, ոսկիանան, բիրեղանան  
Մուրբ քուրայէն իր հաւատքին  
Սրտերը կաւ  
Հայաստանեայց ժողովուրդին:

Ու այս այսպէս. ու վաղն այսպէս:  
Ու գալ տարի.  
Ու գալ դարուն  
Ու դարերուն՝ որ պիտի գան  
Մինչեւ դրունքն յաւիտենից:

Լեռան գլխուն՝ տաճարն արթուն  
Լեռան ոտքին՝ կաթողիկէն.  
Ու գաւառներն ալ եզրերուն՝  
Մատեանն այս մեծ  
Մեզ պահպանակ:  
Կապրի ընդմիջտ Հայր բարի  
Քանի հնչէ այս գիրքն անմահ  
Ականջներուն մեր թոռներուն:  
Լա՛ւ իմացէք:  
Թող գան ցաւեր ու բռնութիւն,  
Մահ տարաժամ ու կոտորած,  
Թող գան խուժեր ու հզօրներ  
Շղթայ զարնել մեր ձեռքերուն,  
Քանի ազատ ունինք մենք հոս (Կուրծքը

*ցուցնելով)*

Կաթողիկէն մեր սիրտերուն,  
Քանի կանգուն ունինք մենք հոն  
Տաճարները մեր հայրերուն...  
Լա՛ւ իմացէք, քանի կան բաց  
Երկու բերան,  
Կան երկու աչք  
Որոնք իյնան  
սա էջերուն  
Չէ, չի մեռնիիր ազգը հայուն...

**Ժողովուրդը.-**

Ապրի անմեռ ազգը հայուն:

**Վարդապետը.-**

Միւնեաց իշխան, Մատեանն ահա  
Յանձնէ ձեռքովդ տանդ երէցին  
Գրաւական յաւիտեանին...  
*(Մատեանը կուտայ Միւնեաց իշխանին որ  
գայն համբուրելէ յետոյ կը դնէ մեղմ Ղեւոնդին  
ձեռքը)*

**Ղեւոնդ.-**

Օրհնեալ եկեալ անուամբ Տեառն.  
Օրհնութիւն ի բարձունս:

**Ջուլիակը.-**

Օրհնեալ է Աստուած:

**Երկաթագործը.-**

Գովեալ է Աստուած:

**Հիւսնը.-**

Փառաւորեալ է Աստուած:

**Ժողովուրդը.-**

Մեռնի Փառքին  
Ու անունին  
Ողջ ժողովուրդն  
Հայոց երկրին:

Վարդապետը.- Թող օրհնուի ու պահպանուի  
Հողը հայոց, սիրտը հայոց  
Այս մեծ օրէն  
Մինչ կատարածըն  
Աշխարհի:

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, Թ. ՏԱՐԻ, ԹԻԻ 11, ՆՈՅԵՄԲԵՐ, 1935, էջ 348–360)

Ծանօթ. իմբագիրի

«Օրհնասացութիւն է: Արտասանուած Աստուածաշունչի Յոբելինական Գ. հանդէսին, Կիրակի, 27 Հոկտ.ին (նոյն, էջ 361–362)» (Մարկ Նշանեան, *Յակոբ Օշականի մատենագիտութիւն*, Լոս Անճելըս, 1999, էջ 65):

ԵՐԲԵՄՆ...

Երբեմն հոգիս աստղի մը բոց,  
Ու թիթեռնի ունէր թելեր.

(Պ. Դուրեան)

Կէս դար ու անկի առաջ սա մեր օրերէն:

Հոգիներ: Ոչ միայն մեզմէ անդին, այլ մեզի հետ: Ու ազնուականներէն, քանի որ անազնութիւնը մշակոյթի պատգամ է հիմա ժողովուրդէ ժողովուրդ. ուրիշ լեզու խօսողները անարգելը՝ ցեղային մեծութեան փաստ ու քիչ մը անկի մեծ ոճով, մորթել գիտնալը, տարփագին, **սաստիզմով** ու տաղանդով մորթել կրնալը՝ արուեստներուն ամենէն հոյակապը որ մեզի կը բանայ դարպասը աշխարհին մեծերուն:

Անշուշտ, հեռու, հազարամի մը չափ մեզի հինաւորց թուող սա շրջանին երբ վերի երկեակը կաղապարի մտաւ միգամաձային աշխարհէն արտակարգ կորիզի մը, – այս կիսադարը, գոնէ մեզի համար եղծած է արդար, դասական ըմբռնողութիւնը, մեր օրերը տարի՝ ու տարիներն ալ դարերու չափ աճեցնելով – կային մարդեր որոնք կը հասկնային ինչ որ աստեղալոյց ուղեղը հրաշալի պատանիին, իր ջիղերուն այնքան բացառիկ ընկալչութեամբը, գտեր էր իր զգայնութեանց Յարդգողին չափ խոր համաստեղութենէն, ու յաջողեր սելեռել բառերու խեցիին: Աստղային հեղում մը, կաւէն ու գորշ ցեխէն – ուրիշ բան չէ մարդոց ստուարագոյն մասին համար մեծ գեղձը որ պատսպարուած է մեր գանկին քարայրին, եւ որուն վրայ այնքան յոխորտանք ունինք, առանց անդրադառնալու թէ այդ ափ մը տիղմին մէջ երբեմն միլիոններով ճճիներ սուր կը դարբնեն – այդ տղուն մէջ, կը ստեղծէր անկորուստ, ուրիշներ թերեւս ճշդէին՝ ադամանդ քանդակներ: Զուր տեղը չէ որ գոյութիւն կանոնէն բանաստեղծները: Առանց անոնց դժուար՝ ցեխին սա մեծ կայսրութիւնը քիչիկ մը աստղաւորել: Կուգան

անոնք, կը մտնեն կաւէն ներս, ու սրբազան, անհաս **chimie**ի մը մութ օրէնքներովը կ'այրեն զայն, յաճախ իրենք ալ գոհը ըլլալով կիզումի սա մոայլ առաքելութեան: Բայց անոնց ողջակէզը, իրենց բառով՝ **անհուն մահը**, իր կարգին, կ'երկարաձգուի իբր հեռանշոյլ բայց մշտակառոյց երազ որ, մեր մանկութեան ծիրանի գօտիին նման, պիտի բացուի ու կամար կապէ մեր մեղքերուն լեռներուն վրայ, մանաւանդ մեր փոքրութեանց ու տառապանքին տմոյն ճահիճը պիտի չդադրի աղօտափայլ երանգելէ: Առանց անոնց, բանաստեղծներուն, գիշերը միահեծան սաղաւարտ մըն է ոչ միայն մեր աշխարհին, այլ մանաւանդ մեր հոգիներուն որոնք ի հեճուկս ամէն հերքումի չեն կրնար մոռնալ մեծ Ոստայնը ուրկէ փրթեր ինկեր են սա ցելերու արքայութեան:

Կէս դար առաջ երկինքը **աստղակառոյց** էր տակաւին, ինչպէս աւելի մեզամօտ շրջանի մը պիտի պատկերէր Տիրան Չրաքեան, – ուրիշ միզամածային փոսփորափայլութիւն՝ ճահիճին վերէ – երբ լուսակարան այդ վարշամակը կը նետէր մեծ խորհուրդին ուսերուն: Կաւը՝ կաւ էր անշուշտ այդ երկինքին տակ: Բայց հոգիներ ալ կային: Ու կար մանաւանդ երկինքը, ոչ միայն դէպի վար, այսինքն գոց կերպաս անյայտ աշխարհ մը բաժնող մեզմէ, այլ աւելի շատ դէպի վեր: Երկինք մը որ չէր, մեր գլխուն վերէ, գիւղական թատերաբեմի մը կտաւ – սաւանը զոր արհեստական մետաքսէ թերակար աստղեր կ'ետկիտէին, կոճակ կոճակ, մեզ պատրելով պարզունակ, ինքնաբաւ ապահովութեամբ մը: Ու չէր անիկա այժմու անգօսնուած, **«ընդ մեջ հերձեալ»** վարագոյրը որով հետաքրքրուիլն անգամ ոմանց համար հիւանդագին, լուսնագար այլասերում, ուրիշներու՝ ինչպէս աշխարհի վեցերորդ մասին իմաստուններուն համար քրէական դատապարտութեան փաստ մը կը դառնայ:

Մարդիկ, կար ատեն մը, վեր կը նայէին, անձանօթէն, եթերէն, հիւլէն, ձգողութեան օրէնքներու պողոտաներուն մոայլ երկրաչափութենէն անկախաբար: Կը նայէին, մօտ ու պարզ մարդակեղրոնականութեամբ մը, իրենց պապերուն կող-

մէ հոն ճարտարապետուած կեանքի մը, աւելի ընդարձակ, աւելի գեղեցիկ, կաւէն գերծ ապրումին երագովը.

**Անշուշտ ինձ կեանք մը պահած ես ետքի,  
Կեանք մանհուն շողի, բոյրի, աղօթքի...**

*(Պ. Դուրեան)*

մըմնջող տղան, մահուան շեմին, մեզմէ աւելի յստակ կը տեսնէր ինչ որ կուգէր:

Ու այդ մարդերը, առանց մոգեր ըլլալու, արքաներ փնտռելու համար առանց աստղեր հալածելու, հովիւներուն նման որոնց աչքերը մութին մէջ կրակ առնէին հեռուներէն բխող մեղեդիներուն թելովը – ձայնը կրակ է երբեմն մեզմէ ներս –, գիտէին խանդավառուիլ պուտպուտուն շողերովն իսկ այդ երկինքին որուն ճակատը խարանելու կը պատրաստուի բանաստեղծը նոյն այդ քերթուածին մէջ, իյնալու համար «**աստղերու անալի**» սանդուխներէն անդին, դալկահար կայլակի մը նման, ծոցը Ոստայնին որուն առհաւական յուշքը դէռ չէ մեռած մեր ամէնուն ներսը: Երկինք կորսնցնողներն անգամ գերծ չեն այդ աղօտագին, քաղցր, երբեմն ամոքիչ ու անհրաժեշտ կրկներեւոյթէն:

Ու կային տղաք, որոնց շրթները անարժան չէին այդ բոցի ծովերէն փրթող կայծակներէն կիզուելու, մաքրուելու որպէսզի մեզի, խաւարին շուքերուն մէջ խանձարուրուած, վարսուածներուս – ինչ ճշգրիտ է մոխիրը գոր կը գործածէ Նարեկացին իր մարմինը պատկերելու իր տենդին մէջ, անգիտակցաբար գեղջելով բնախօսական երեւոյթը –, պատմէին բաներ, քաղցր ու խոր, «**հուր ու երագ**» *(Պ. Դուրեան)* որոնք այրէին մեր դալուկ ճակատները, քիչ մը շատ հակած մեր մօրուտքին:

Այդ օրերուն երկինքը թօթափած ըլլալու չէր իր «**շափիւղաներուն**» բիբերէն անդին խորացող անպարագրելի բանը որ Տարածութիւնը կը լեցնէր դէպի վար ու դէպի վեր: Ու, մահուան շուքովը – որ անհրաժեշտ **dimension** մը կը դառնայ կարծես այդ անեզրութեան մուտքերուն, մեզ առնող ու տանող բոցէ նաւու մը նման – զգեստաւոր, «պատենաւոր» երիտասարդներ, քսանամենի կամ աւելի մատաղ, թերեւս խռովք,

աւելի մեղմ բառով՝ անուշիկ յուզում մըն ալ կը զգային իրենց ջիղերն ի վար, երբ ջուրի մը ափին, կամ թաւուտքի մը կուշտին, ով գիտէ ինչ առհաւութիւններու «**հիւլէքաշխուած**» (բառը Չրաքեանինն է), կը ջանային իրենց տրտմութիւնները, ամբերելի ծանրութիւնները արձակել իրենցմէ, «**ոսկեզօծել**» իրենց պատրանքները, հանդերձել իրենց շապիկները ընդունելու համար լոյսերուն մեղմ անձրելը, ու չէին կրնար: Կաւին ցեխուտքէն մինչեւ Լոյսին մեծ արգանդը որքա՛ն ճամբայ: Եւ տարօրէն սրտառուչ են անոնք երբ **մարդկայինը**, դուք իմացեք՝ **ցեխը թօթափելու, հող հագնելու** այլապէս բարդ պատկերին մէջ իսկ սրբագրելով մեծ հակասութիւնը **հող ապրելուն**, կաւը հրեղինելու, հոգեղինելու իրենց տազնապին մէջ պարտասուն, աստղեր մուրալէ յուսահատ, կը փռուէին

..... դողդոջ էակին

**Շողին, փթթիթին, ալւոյն ու վանկին**

Աստուծուն ոտքերուն: Ասիկա ողբերգութիւն մըն է գոր պարտաւոր ենք հանդուրժել իւրաքանչիւրս մեր օրին:

Քերթուածին միւս բա՛ռը: Որուն թելերուն վրայ հիմա կը խնդանք թերեւս: Մեր տեղը դնենք զանոնք, դժբախտ որսորդները իմացքին ու ձեւին, պատկերին ու սարսուռին, որոնց համար ամէն հետք մինչեւ անհունը ճամբայ ունի, այլապէս հանդերձուն իրենց ջիղերուն սարիքովը, ամէն երանգ՝ ծով մըն է առնչութեանց, բառին տալով Պոտլէռեան ճառագայթում: Ստուերակուռ, գերի այդ մարդոց նայուածքը թող սուզուի գոյնզգոյն, թաւշեայ, նշուլող այն բաբախումին գոր յիմար այդ միջատները կը վառեն վարդի մը բաժակին վերել, կամ կապոյտը կը թիավարեն մանրանկար թելձակներով, իրենց նոյնքան յիմար հոգին այսպէս նետել փորձելով աշխարհներու, աստղերու կշռոյթին: Անշուշտ այդպէս դիտուած, թելաւոր այդ քերթուածիկը սրտառուչ է նոյնքան որքան հեռուէ հեռու իրարու արելելուած պարման սիրտերու հզօր զարկը, իրարու վազելու իրենց կշռոյթին մէջ արգիլուած աշխարհին լեռներէն, առնուազն մահուան թելէն: Ածուներու արահետներուն, ծաղիկներու ծովին մէջ անոնց, թիթեռնիկներուն լողալը,

բոցանալը, մարիլը ու կրկին փոշիանալը նոյն մեծ բաբախումին երանգներն են մեզմէ շատերուն համար: Այս է պատճառը թերեւս այն վարկին որ այդ խայտաբղէտ յիմարները կը վայելէն քերթողներուն մօտ: Չէ՞ որ, անոնց փխրուն, միգամածային շնորհը, անոնց բեհեզասքօղ ողբերգութիւնը այնքան գողտրիկ հարազատութեամբ տուած է մեր մէկ ուրիշ բանաստեղծը երբ տարօրինակ քերթուածի մը մէջ (**Ինչ Արբեցութեամբ**), կաւր խենդեցնող, լուսեղինող արբեցութիւնը կ'երգէ բոլոր գաղփաղփուն բաներուն, տիրական ակօսի մը բերելով ջուրին ու ծաղկին, հովին ու թռչունին, գոյնին ու յուզումին անտես միութիւնը, աշխարհի խորհուրդին այլազանութիւնը լուսաւորող **հանրայնութեամբ** մը (Չրաքեանինն է այս բառն ալ) իր հոգին ընելով հայելի եւ վառարան, ձգուած ներքին ու արտաքին իրականութեանց մէջտեղ...

**Ինչ արբեցութեամբ թիթեռն է բացեր  
Լելակի մանրիկ լիճին վրայ փրփրուն  
Առագաստաշէն իր կաթ թեւիկներ...**

*(Միսաք Մեծարենց)*

Թեթևսօլիկ, բիրիցս ծիծաղելի միջատէն այսպէս է որ կը ստեղծուի դրութիւն մը, հոգեվիճակ մը, յուզուելու, սիրելու, տառապելու բոցեղէն կերպը որ, էր երբեմն, իր արձագանգը ունէր երկրի մեծ ձայներուն մօտ, ասոնք հակակշռելու աստիճան: Կային մարդիկ (Շելլի, Պայրըն, Քից, Լամարթին եւ ուրիշ այնքաններ) որոնք թիթեռնիկներ միայն հալածեցին, եթէ այդ բառին ներքեւ բարեհաճիք տեսնել թեւն ու գոյնը, կապոյտն ու մահը, շնորհն ու տարփանքը: Դրութիւն, գոր սհա կը վարանիմ իր ճիշդ բառովը սեւեռելու սա էջերուն վրայ:

**«Պարպուած երկինքէն»** ետքը, պարպուած աշխարհը:

\*

\* \*

Ու, այսօր, շնորհուէր թող, բոցն ու թելը այդքան լրջութեամբ նուաճող ու պատմող տղուն հանել իր գլուխը հողէն ու աչք մը ածել, չեմ ըսեր իր այնքան սիրած բաներուն որոնցմով անթառամ է դեռ իր տաղարանը, այլ այն ժողովուրդին որ, իրեն պէս պարզ, բարի, հաւատաւոր ու իրեն չափ տառապակոծ, ճակատագրին հեծանովը տարտղնուած է աշխարհի չորս ծագերուն ու իր «Տրտունջք»ը եղերեգողն իսկ չունի:

Հիմա՞ : Սա օրերո՛ւն երբ ուրիշ երկիրներու հորիզոնները կը պատռին, աչք տալու համար մեծ աստղերու ու ճամբաները փոշի կ'ամբառնան արքայավար երիվարներու սմբակներուն վերել, հիմա՛ ,...

Այո՛ :

\*

\* \*

Մեր հոգին ալ ունի իր բաները...:

Ինչո՞ւ գրուած է մեզի, «մնացողացս», աստղերու փոխան՝ ըլլալ ստիպուած արիւնով վառել մեր հոգիները: Ու թելերու տեղ հացին շղթան քաշքշել մեր գերութեան անառաւօտ աղջն ի վար: Ինչո՞ւ, իմ հոգին ըլլայ մշտակայ գիշեր, առանց «թաւուտքի», ու առանց «խորանի», ու պարպուած այն ամենէն որոնք դեռ մինչեւ իմ տղայութիւնը, նոյնիսկ աղօտ, նոյնիսկ վիրաւոր, բաւ էին մեղմելու մեր գրկանքը: Աւելի՛ն: Մեզ կընէին հարուստ ալ, հպարտ ալ: Հին աշխարհին ամբողջ լայնքովը մեր ժողովուրդը վեր էր, կը հաւատար ասոր, իր գերիչներէն: Անոր ժամերուն մէջ այդ վստահութիւնը գերազանց հաղորդութիւնն էր որով գօտեպինդ, մեր պապերը նուաճեցին աննիւթ տապանակը մեր յոյսին: Մամիկն ու իմաստունը հաւասարապէս սպասը ըրին անոր խորհուրդին: Այս լոյսէն դիտուած մեր հին գրականութիւնը կայլակերպի, կը պայծառակերպի: Ու նորը, այսինքն շրջանը ուր մեր տաղերուն մէջ «բոց, շող, մարգարիտ եւ ոսկի» (ինչ տարօրինակ է քերթուած մը երբ անիկա

ընդունակ է նորոգուելու, սերունդներու փոփոխութեանց վերելկանգուն պատգամի մը նման) կը վազեն, դարձեալ նոյն խորհուրդին ուրիշ արտայայտութեանը: Ու սխալի քաղցրութեանց, նրբութեանց ու գոյներու եւ յոյզելու հանդէսը որ փոքր բայց այնքան թանկ դիւանին միջոցովը Դուրեանին, փրկուած է ժամանակէն, առանձին, քերթողավայել փաստ մը չի կազմեր այդ տղուն շնորհները լուսաւորող, այլ ուստայնացումը հաւաքական մեր զգայնութեան: Մահուան սնարին անգամ, հանճարեղ ու «տիպար» (մինակ իր մահուան վրայ «ցուրտ ճառագայթներ արձակող» մոմերուն չեն սեպհական այդ վերադիրները) տղան ողորուած չէ՝ գորշ այն պայծառութեամբ, մթնշաղով որ մեր պատմութեան մթնոլորտը կազմեց, այդպէս մրրկուած, կայծակնահերձ, մշտապէս տրորուած Չարին ուժերէն: Բայց չդադրեցանք պահել անկիւնը մեր յոյսին, ամպերուն պարիսպներուն իսկ խստութիւնը հերքելով, դէպի կապոյտը՝ մեր լուսամուտէն: Կարդացէք «Տրտունջք»ը: Հակառակ տողերուն վրայ կախուած, ծանրակոհակ թաւալող աղջին, ու հակառակ մահուան սպասը թելադրել ձգտող թաղմանակն զգայնութեանց հեղեղին, գարուն ու վարդ, երազ ու խունկ, ծաղիկ ու սիւք, աղօթք ու երկինք է ան նոյնքան եթէ ոչ աւելի անշուշտ դաժան մղձաւանջ, հոգեառին մատին տակ **զրուցազրուած**. բայց որուն ծոցը – մշուշներն ալ սիրտ մը ունին, յոյսին «դալկահար» շուշանը «դողդոջ» իր բաժակէն նիհար ծիլը կերկարէ մեզի: ...

Ու երբեմն էր ատիկա:

Ո՞վ, այսօր, իմ սերունդէն, պիտի կրնար աչքերը գոցել, խաղաղ, կատարեալ վստահութեամբը Դուրեանին հաւատքին երբ հեռանշոյլ՝ սկիզբ առնէր մեծ գիշերին շառայլը: Որո՞ւն աչքը կարօտով, կատաղութեամբ պիտի չդառնար ետ, ու սիրտը՝ իր ձգածներէն աւելի իր իղձերուն անաւարտ ցաւով «ճեղքուած», ինչպէս կը թելադրէ ուրիշ բառ մը, ուրիշ քերթուածէ մը: Ո՞վ, միշտ իմ սերունդէն, քաղցրութեամբ ու գոհ պիտի դնէր իր վերջին ստորագրութիւնը ճակատագրէն իրեն մատուցուած վերջին էջին, ու «լցեալ աւուրբք», ինքզինքը իրագործած, իր

դերը աւարտած մարդու պայծառութեամբ պիտի «իյնար առջին» մեծակառոյց թափորին, ինչպէս կարգադրուած է ըլլալ, ուրիշ ժողովուրդներու մէջ, «հանգիստը» **«երկնաւոր հուր»**ին սափորականներուն որոնք իրենց առնելիքը առած, մանաւանդ տալիքը տուած կը մեկնին այս շուշաններու եւ ցաւերու հովիտէն: Ո՞րն է ան, իմ սերունդէն, որ ինքզինքը չի գիտեր կապուած, սուրերով գամուած իր խաչին, ու վայրագօրէն չի սպառնար մահուան, ո՞չ՝ աժան, գիրքերու վայլող հերոսութեամբ, այլ անկարող ըլլալուն հասկնալ թէ ի՞նչու այնքան սրբազան դատ մը այնքան անարգ, անաստուած լուծումի դառնար արժանի, ի՞նչու աշխարհ այդքան լրբութեամբ հերքէր ինքզինքը: Արդարութեան անյագ՛ւրդ ծարաւ: Ի՞նչպէս **հող հագնիլ**: Ինչպէս քաշել մեր վրայ այդ հողը երբ անիկա դեռ թաց է մեր արիւնով:

... Ահա թէ ինչու, սա օրերուն, երբ երկինքին վրայ, արդարութեան, բարութեան պատգամներուն կենդանակերպը աշխարհ կը դրկէ նոր նոր աստղեր, ու կրկին անայց խորերէն ճամբու կը դրուին մոզեր, արքաներ, ստաշխ ու քաղցրութիւն, ու մտորքներ կը խուզարկուին, աշխարհի երջանիկներուն, իմաստուններուն, հզօրներուն ապարանքներուն պատուհաններէն, իմ հոգին գիշեր է խորունկ, կուպրով շաղախուած, արիւնով խոնսաւ: Առանց աստղերու: Առանց երկինքի զոր հեղեղներ ես ըսեմ ցաւի, դուք սրբագրեցէք արցունքի քշեր, տարեր նետեր են լեռներէն անդին: Գիշեր՝ ծակծկուն, մռայլ կերպասէ: Սեւ արտեւաններ ցիցերը կուտան անոր խորանին, – աննիւթ կտաւը ուր աս քանի տարի է, կորոնեմ ի գուր ինչ որ գտան հոն գրուած ու ըսին մեզի այնքան պերճ կերպով մեզ կանչողները:

Խոր ժամանակներու հսկող է իմ հոգին որուն փոյթ չէ թէ քակուած ըլլան կապերը բոլոր. փրթուած՝ աստղերն ու թելերը: Որ չկրնալով **«Աստղագաբադ գիշերը»** քնարերգող (Ֆ. Նիչէ) դաշնակութիւնները հանել այդ ամայքներէն եւ **ձայներու հրդեհը քաղել**՝ անոնց մէջ դողդոջ լռութիւններէն, խորտակուած ու ասոր ամօթովը նիզակուած կը յամառի հարցնել ու

մատուցվր կը գարնէ մութին մեծ սիրտին, պատասխանը մուրալով անգթութեան սա պատգամներուն...

.....:

– Ո՞ւր են վարդերը... հերուան, ձիւները հերուան:

Պատասխա՛ն մը սա տողն ալ բայց ուրիշ բերաններէ, որքան կը յիշեմ, ուրիշ ազգերու սափորակիքներէն, որոնք երբ տարիքին փոշիովը ծանրաբեռն իրենց բիբերը, ինծի պէս անշուշտ, վերցուցին դէպի վեր, հարցուցին հոն խօսող թերթումներուն, դարձան ետ ու... վարդեր տեսան: Երանի՛ իրենց: Ձիւնն ու վարդը, կուշտ սեղանը ու քեզի, այսինքն քու ջիղերուդ միայն պատկանող, հանդարտ, «անարհաւիր» օրը, ամէն բոլոր գոնէ յիշատակին սուրովը չշամփրուած սիրտը, խաղաղ սիրտը, ու երկաթով չշղթայուած միտքին թելերը հասարակ, սուտ բառեր չեն այդ մարդոց շուրթներէն: Մեռնիլն իսկ գեղեցկութիւն էր այդ աշխարհներուն վրայ: Մե՞զի:

.....:

– Ո՞ւր է իմ ժողովուրդը:

Չեմ գիտեր, պիտի ներուի՞ ինծի սա հարցումը: Թէեւ մաշած բայց չի դադրիր ան բերնի ծամոցը, պայմանադրեալ մենաշնորհը կազմելէ առտու կանուխ ելլողին, շատ գիտցող, շատ հասկցող, ու աւելի շիտակը՝ ամենէն բարձրէն նայիլ ձեւացնողին: Որ **մոթիֆ** է ներկուած, խարդախ մանաւանդ ամբարիշտ **reportage**ի կեղծ արցունքի, ու աւա դ, նաեւ յաճախ՝ ամուր գանձանակ, փոխդիր՝ պարտէզի, այգիի, տունի:

Եւ սակայն առանց դառնութեա՛ն՝

– Ո՞ւր է այն տարօրինակ, հետզհետէ անհասկանալի, եղերափառ փաղանգը մարդոց որոնք դարեր շարունակ կաւէն ու հողէն վարդեր հանեցին, լեռները խնդացուցին մատուռներուն ճերմկոտիկ շուշաններովը, դաշտերը ողողեցին խարտեաշ մեղրովը ցորենին բայց որոնց զաւակները անապատներուն խորը անօթի կամ ողջակէզ մեռան...

Գիշէ ր է իմ հոգին. – Կաղանդի ու ծնունդի, կնունքի ու մեռելոցի: Պարի ու հէքեաթի:

Ամէն մէկ եզր, սա թուումէն ընդարձակ է իմ մէջ, լեցնել, յորդումի հանելու չափ գիշերը իր շրջուած, անհունասփիւռ սաղաւարտով, ճիշդ այնպէս ինչպէս կը լեցնէր ու գեղումի կը հանէր այդ գիշերները մեր ժողովուրդը խաղ ու խնդումով, երկինքները կը բանար ու Աստուծոյ Որդին կ'իջեցնէր Մսուրքի մը գաղջ ընտանութեան:

....

Բառերը տապանաքարեր են որոնց տակ մէկի տեղ ցեղ մը կը պառկի երբեմն:

Երբեմն...

(Շարունակելի)

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, Ժ. ՏԱՐԻ, ԹԻԻ 1, ՅՈՒՆՈՒԱՐ, 1936, Էջ 14–17)

ՄՈՌՅՈՒԱԾ ԲԱՆԵՐ

Մօտաւորապէս կէս դարէ ասդին մեր ժողովուրդը սորվեցաւ բաներ որոնք այսօր կը կազմեն միտքի կեանքը անոր մէկ կարեւոր հատուածին: **Հայաստանեան իմաստութիւն** տարազը մեզմէ ոմանց համար այրած սրտի մխիթարանք, մեզմէ շատերու համար սրբազան պատգամ է, զօրաւոր՝ մեզ իրարու դէմ ճակատի հանելու աստիճան: Այս նշմարներուն մէջ, ես պիտի չմտենամ նոր ուսուցումին վերլուծումին, քանի որ ատիկա կընեն այնքան տիրական կերպով մեր հայրենիքին ու գաղութներու տեսաբանները:

Մեր ժողովուրդին դժբախտագոյն հատուածը, ան՝ որ ապրելէ յետոյ Աստուծոյ դժոխքներուն ամենէն անըմբերելին, սա երկրաւոր կեանքին մէջ, տարտղնուած է այսօր աշխարհի չորս ծագերուն, կրկնելով անելի քան դաժան որովհետեւ յուսակորոյս բաբելոնեան գերութիւն մը, **սորվեցաւ** դարձեալ ուրիշ բաներ, որոնք, **սուրին ու հուրին** ընդմէջէն, ինչպէս կը պատկերեն մարդիկ նման վճռական վերիվարումները, փորձի էին ենթարկած մեր յոգնած, հազարամեայ աղէտներով խոցահար ցեղային խղճմտանքը, մեզի մօտիկ բախտորոշ շրջանի մը, բայց չէին կրցած խորտակել սիւները մեր հոգիին: Ներուած էր մեզի այսպէս զգալ ու տարագել ցեղային մեր խորհուրդը, խորքը, նոյնիսկ անցնող դարավերջի եղեռնէն յետոյ:

Այսօր:

\*

\* \*

Ինչ որ հասած է հիմա մեր դռներուն – ամուր փակեցէք հոգիին դռները, վասնզի ազգերու պատմութիւնը սխալ չէ պայմանել անոնց ամրակուղպ պահպանումէն, ինչպէս կընեն Արեւմուտքի քանի մը մեծ ազգերը – չի բաղդատուիր այն միւս

աղէտներուն որոնք հերձուածի, հաւաքական բռնադիր դաւա-  
նափոխութեանց, բռնագաղթի, նոյնիսկ զանգուածային սպան-  
դի այլապէս եղերական համապատկերները տուին մեր  
պատմութեան, սրտառուչ, զարհուրալից, սպառսպուռ ուժգ-  
նութեամբ սգապատումները մեր դարերուն բայց որոնց  
թափորը, կիկլոնը փշրուած ինկաւ մեր հիւղերու սեւերուն:  
Ասոնց ամէնուն դէմ մեր ժողովուրդը երեւան բերաւ «իր անայց  
խորութիւններէն», դիմադրական իր ճիգը, երբեմն նուաղ,  
երբեմն հերարձակ. բայց հանեց իր դիմադրութիւնը, ամուր  
փաթթուելով իր պահպանողական միջոցներուն, որոնք իրեն  
թելադրուած էին մօին իր խորհուրդէն: Առանց փիլիսոփա-  
յութեան, առանց թատերական շարժումներու, միայն ու միայն  
քանի մը մեծ անուններու, քանի մը անփոխարինելի բառերու  
յուրութիւնն ապաւինեցաւ անիկա մերժելով ուրիշ նպաստներ:  
Այդ յուռութքը, ըսել կ'ուզեմ ցեղային խորհուրդին այդ մութ  
յղացքը դիմակալեց դարերու գրոհին: Թող ներուի սա խոշոր  
բառը քանի որ տարբեր չեն շինուած դարերը հայ ժողովուրդին:

Այսօր ցեղային այդ խորհուրդն է որ ինկած է **գազանին**  
ժանիքներուն:

Ու գազանը հռետորական պատկեր մը չէ սա տողերուն  
վրայ, մեր պատմութեան շատ ընտանի. որով մեր ժողովուրդը  
զինքը բզկտող ճակատագիրը կարծած է կերպադրել, դասական  
կատոյցովը երկրաւոր ու քիչ մըն ալ երկնաւոր փորձանքին:  
Հիմա, խորքին մէջ, բազմութիւն մըն է **կերպերու** որոնք մեր  
ուժերը կ'ուտեն տարբերակ ախորժակներով: Օտարին աղջիկն  
է ան, անուշիկ հրապոյրներու ցանցի մը մէջ պարուրած  
գաղթահայ պատանիները, տանելով զանոնք հեռու իրենց  
ազգային ըմբռնումներուն ընտանեկան խորհուրդէն: Երբեմն  
անոր արուեստն է, այլապէս փարթամ, խոր, որ կը փակէ մեր  
տղոց զգայարանքները հանդէպ սեպհական յոյգերու որոնք  
դարերով մեր հոգին հանդերձեցին անդրաւոր վայելքներու,  
երգի, նկարի, աղօթքի ձեւերով եւ այսօր ինկած են արհա-  
մարհանքին տակ նոր խոովքներու տարփաւոր մեր տղոց:  
Երբեմն մակաբոյժ ձգտումներէն մէկն է մեր հոգիին, որոնք

իրենց պարբերական խուժումովը մեր արդեն քիչ շաղախուած գործարանաւորութեան մէջ, խոշոր ճեղքեր կը բանային հաւաքական մեր գործունէութեան կողերուն: Մեր նախարարներու ընդերային վէճերը, դաւերը, մրցակցութիւնները ուրիշ անունով նուազ բացատրելի կը մնան այսօր մեզի: Դեռ երրորդ, հինգերորդ դարերուն մեր պատմիչներէն միամտաբար դիտուած ու սեւեռուած սա քանի մը գիծերը, – օտարին դիմելու, մերիններէն գանելու, զիրար հերքելու, մանաւանդ սեպհական հողերուն վրայ այնքան դժուար, բայց օտարին բանակներուն մէջ, հեռու աշխարհներու նուաճումին համար մեր կատաղի պարկեշտութիւնը, եռանդը, բոլորանուէր սպասը, չեմ գիտեր ինչու կ'արթննան մտքիս երբ նոյն երեւոյթներու այլափոխակ տողանցը կը քալէ առջեւէս: Մեր ժողովուրդին բաղդատաբար նուազ ջախջախուած ու լաւագոյն մասը, անհերքելի ուժգնութեամբ պաշտամունքը կընէ օտար կուռքերու, յղացքներու, մեր հայրենիքին մէջ, իր նիւթական եւ ոգեղէն ամբողջ պահեստը նետած այդ կուռքերու յաղթանակին. մինչ մեր յաւիտենական թշնամին, մեզմէ անհունապէս գերազանց՝ իբր ուժ, թիւ, վայրագութիւն, գիշախանձ ախորժակ, տարին քանի մը հեղ ահագանգ կը բառնայ իր թերթերէն, մեր մէկ հիւղակը բերդերու դրութեան մը բարձրացնելով իր սահմաններուն երկայնքով, ու այդ խոռվքին շահը տնտեսօրէն մատակարարելով մատաղատի տղոց ու աղբեկ մազերով ծերերուն ալ վայելքին: Զի աստելութիւնը, զայն սերմանել գիտնալը ոչ միայն քաղաքակրթական պատուանիշ մըն է այսօր, այլ անհրաժեշտութիւն մը: Մե՞նք:

Ու զագանին աշխատանքը՝ **բզկտումն է հայ յղացքին:**

Աւելի գիտական որակումով՝ **տարբանջատումը** (գաղղիացիս պիտի ըսէր **dissociation**) այն համեստ, բայց յամառ, քիչ բայց ապահով ուժերուն որոնք դիմանալ գիտցեր էին դարերու մաշումին: Մակաբոյժ ձգտումներու սա առատութիւնը, այսքան վճռական բռնակներու, վատ շահագործումը կը հայթայթէ դարերով զսպուած այդ ցանկութիւններուն: Հիմա մեր հոգիին հիւթասպառումը, գիտուն մը պիտի ճշդէր՝ գառամութիւնը

ասպարեզը բաց է ձգած անոնց որպէսզի նման կեղերուն ամենէն անողոքին, անարգել յառաջանան հիւսուածներն ի խոր մեր ներքին անձնաւորութեան: Ու այս աշխատանքը, դժխեմ սա առաքելութիւնը, եղերապէս յարատեւ ու կազմակերպուած, թէ գաղութներու ողբալի քաւարանին ուր արդէն առանց ատոր ալ մահը տուն տեղ է եղած մեր գոյութեան ամենէն կենսական հանգոյցներուն, թէ մեր հայրենիքին կարմիր արքայութեան մէջ, հաւասարապէս: Ու այս աշխատանքը, մօտիկ երանգով նոյնիսկ անոնց մօտ, որոնք կը հաւատան ծառայել ցեղային պահպանութեան տարտամ ու տժգոյն տարազին: Խանդավառ, հայրենասէր տղաք, **նոր ուսումներու** հրամայականը քնարական անկեղծութեամբ մը չեն բաւականանար տարփողելէ, այլ առաջ կ'երթան աւագները, հիներն ալ հրաւիրելու իրենց համանուագին: **Նորոգուելու** եւ **նորոգելու** սրբազան սա կոչներուն մէջ համոզումին բաժինը խնդրոյ նիւթ չէ ինձի համար: Համամարդկային գաղափարականներու այլապէս այժմէական պէտքը ես չէ որ պիտի սակարկէի դարձեալ մեծ ազգերու ընտրանի երիտասարդութեան: Բայց փոքր ազգերու, մերինին նման հագիւ կանգուն կոյտերու մօտ այդ գաղափարադրութիւնները գրեթէ հոմանիշ են ինքնասպանութեան: Պարզ երկրորդական ուսում մը ամերիկեան կամ անգլիական կամ գաղիական գուլէճներէն, բաւ է եղած մօտիկ անցեալին մէջ որպէսզի այդ պսակաւորները դադրին իրենց ազգային խորհուրդին մաս կազմելէ: Եզիպտոսի մէջ հարիւրով, չըսելու համար հազարով հաշուելի են այդ երիտասարդները քանի մը լեզու խօսող կամ գրող որոնք հայ թերթի մը պիտի խնայեն իրենց մեծ աչքերը: Ու ասիկա այսպէս գաղութներուն բոլորին համար ալ: Ե՞րբ պիտի անդրադառնանք որ մեր կարելի փրկութիւնը պայմանաւոր է մեր դուռներուն ամրակուղպ պահպանումովը այդ նորանորոգ յղացքներուն ընդդէմ: Պահպանողական, յետադիմական: Բառեր են ասոնք, ոչ աւելի ոչ պակաս: Զգիտնանք աւելի քան Արեւմուտքին մեծագոր ազգերը:

**Մեծ կղեր մը ըլլալու** հարկ չի կայ, իմանալու եւ չափելու համար ահեղ ճիգը՝ որուն անձնատուր կը թուի որոշ դասա-

կարգ մը ու դատել մօտիկ ապագան ուր լուծելու եւ անէացնելու համար երկու հազար տարուայ **հայ յղացքը**, նոր բառով՝ խորհուրդը զոր այսպէս կ'ացնահար ջախջախելու լծուած են մեր առաջապահ մտաւորականները, իրենց իմացական փորձառութիւնները, սլացքները տարածելով անտերունջ զանգուածները դէպի, ու կը թուին անտեսել աղէտը, զոհել յօժարելու իսկ աստիճան՝ անգոհելին, յանուն մեծ իտէալներու: Դարաւոր սրբագործումով մը աստուածացած բառեր – արդարութիւն, իրաւունք, քաղաքակրթութիւն – այսօր աւելի չեն արժէր քան քուրջի կտորներ: Ու իրենց կարգին, նորակերտ ուրիշներ – աշխատանք, վայելք, մարդավարի կեանք – զիրենք հրապարակ հանողներուն չեն բերած կուշտ, պարզ հացը: Գաղթահայ առաջաւոր երիտասարդութիւնը չի կրնար աչքէ հեռու պահել ողբերգութիւնը որ գինն է այս նաւաբեկումին: Ուրի՞շ՝ բախտը դարձեալ այն ժողովուրդին որ արմատները ամուր կը կարծէ մեր պապերուն հողերն ի վար: Ինձի կուգայ թէ տարբեր ճակատագիր մը չի սպասեր անոր: Ու ասիկա՝ առանց պատմապէս աննախատեսելի բայց անվրէպ ազդակներու – մեր դիրքը բախտորոշ է այդ ախորժակներուն սրումին մէջ – միջամտումին, այլ պարզ տարրանջատումովը հայ յղացքին: Քսան մը տարի եւս, ու հայաստանցի գեղջուկին հոգին անգամ պարպուած պիտի ըլլայ իր պապերուն իսկութենէն: Տասնամ մը առաջ այս վախերը վախեր էին: Այսօր աւելի են քան վախը: Ալին ու Լենինը երգելը ծիծաղելի հռետորութիւն մըն էր մեզմէ շատերուն համար, այսօր փաստ՝ թէ մեր տղոց սրտէն անվերադարձ թռած է մեր խորհուրդը: Ու վախը պայծառ աղէտ է բոլոր անոնց համար որոնք տրուածէն, ցոյցի հանուածէն անդին ալ տեսնելու պարտքը չեն վաճառեր ներկուած փաստերուն մեծ մեծ աղմուկին:

\*

\* \*

Միւս կողմէ, դարձեալ այդ շրջաններուն, մեր ժողովուրդը, այս անգամ հաւաքաբար, երբեմն բռնի, երբեմն ալ ինքնամատոյց, **մոռցաւ քաներ**, որոնք թերի, անճիշդ կամ տարաչափ գնահատուած, կամ՝ այսօր բոլորովին ուրացուած ըլլալնուն հակառակ, մեր միշտ աղետահար բայց միշտ ալ անվթար ցեղային գիտակցութիւնը բերեր էին մինչեւ դռները նոր ժամանակներու: Գիտեմ թէ նոր ուսումին առաքեալները ճամարտակօրէն պիտի վերլուծեն այս **պրոցէսը**, անոր դժնդակ, անփառունակ, ստրկական հանգամանքները հատիկ հատիկ գննելով ու արժեւորելով: Բայց ինծի կուգայ թէ կանխահաս աճապարանք մը, աւելի ճիշդ աճապարարում մըն է ատիկա, քան անկեղծ ու շիտակ ճիգ մը մեր պատմութիւնը **տեսնելու**: Դարձեալ տեղը չէ հոս լրիւ հաշուեկշիռը կազմել այդ **տրտում ելքին**: Ինծի համար պարզ ու գեղեցիկ է գումարը: – Ու այդ գումարը՝ իբր գանգուած, հաւաքական գործարանաւորութիւն, **Հայոց ժողովուրդն** էր անցնող դարու կէսերուն: Այնքան սրտառուչ, դժբախտ բայց այնքան ալ իրաւ, իմաստալից տարագ, երբ դարաւոր կոշկոճանքին հետքերը տակաւին չսպիացուցած, այդ արհամարհուած, այդ ստրկութեան մէջ այլասերած դաւանուող ոգին արշաւի կը հանդերձուէր դէպի նորոգ իր նուաճումները, ատենը գտնելով մահուան կայաններէն իր վրայ դիզուած թմբիքը նետելու մէկդի, անակնկալ, յուզիչ արթնամտութեամբ ու փարելով ամբաբազուկ այն նորոգ ազդակներուն որոնք յատկանիշները կը նկատուին արդիական մշակոյթին – լեզու, արուեստ, գրականութիւն, տնտեսական շեշտ դիմագիծ, բայց պահելով հոգեյատակը անվթար ու հարագատ, իր անցեալին: Պոլիսն ու Թիֆլիսը (այս քաղաքներուն մէջ մեր իմացական գործունէութիւնը միայն նկատի ունիմ), շինուած չեն արհաւիր, անգիտակից նպաստներով, այլ շքեղ փաստեր էին այն տուրքերուն որոնք ամէն դարու, առնուազն քանի մը անգամ ճակատագրին խոփովը հիմնայատակ հերկուած, «քար քարի վրայ չձգուած» մեր երկրին վրայ անպակաս ըրին քաղաքակրթութիւն մը, բառին տալով ընդարձակութիւն մը քան ան գոր կընդգրկէ այսօր: Ինծի

համար մեծագոյն քաղաքակրթութիւնը **ապրելուն, դիմանալուն** քաղաքակրթութիւնն է, երբ հոգեւոր զօրաւոր գիծեր այդ ապրումը շէնքի մը, դիմագիծի մը կը մօտեցնեն: Ու, աւերակ մը, անոր մեջերը պտտող տղեկ մը, վրան թելածող երգի փշուրը քաւ են ազգ մը խորհրդանշելու, հերիք է որ այդ **ազգը մնալու** հաւատքը կը կանգնի բարձր հոգիներուն խորը անոր գաւկըներուն:

Ու 1850ի կենդանի, իրական տարազը, **ժողովուրդ Հայոցը, Հայոց աշխարհիկը, Հայաստանը**, տարօրինակ բոմանթիզմով մը այսօր այլակերպուած, պատկերներ են՝ խօսուն, հօր, հրեղինող Ալիշանի ինչպէս Խրիմեանի, Կեսարացի փարթամ սեղանաւորներուն ինչպէս Խուլթիկցի պարզուկ խոհարարներուն աչքերուն առջեւ: Ազգային անցեալը մէկուն երեւակայութեան մէջ կը հագնի նոյնքան իրական գծագրութիւն, փառք, շնորհ ու գեղեցկութիւն որքան միւսին ջիղերուն վրայ անոր ներկան կը յօրինէ կսկիծի, յամառ հաւատքի, ապրումի համախառնուրդ իրականութիւնը տառապող **Խայաստանին**: Ու ազգային երգերուն, հանդեսներուն, ճառերուն իմաստը նոյնն է մեծատունին ու իր սպասաւորին հասկացողութեանը մէջ: Վերլուծումը դժուար պիտի հասներ արտաբերել հոծութիւնը այն զգացումներուն, որոնք գրաբար շողշողուն զարդերու խղղող բեռին հակառակ, կամ՝ յօրինւածքի այլապէս մեղաւոր տափակութեանց ընդմեջէն, ճամբայ գտան աղբերանալու, երբեմն անարուեստ, ճչան, ուռուցիկ, երբեմն պարզ, խոր ու անփոխարինելի կերպով հարագատ, իբր արտայայտութիւնը դարերու պատգամին: Ան որ, այդ օրերուն, ով գիտէ ինչ յիմար ճառախօսի մը շրթունքին զանուած բազմութեան մը գլխուն կախեց անտես, բայց այնքան իրաւ, արնաշաղախ կտաւը ողբին, որ կը սկսի

«Իմ սիրելի զաւակունքս, կը թափառին օտար աշխարհ»...

այսօր տժգոյն, մոխիր բայց այդ պահուն համակ արին ու կրակ բառերով, ապահովաբար իբր հոգեւոր միութիւն, փաստ աւելի կարծէ քան մեր օրերու թերեւս համալսարանական գրողը,

խմբագիրը որոնք գովքը կը փառերգեն... **բասիոկայաններուն**, Ալիին ու Վելիին: Չայնէ ր, որոնց ականջ տուին այլապէս հզօր մարդեր – բեռնակիր, արհեստաւոր, մշակ, տանուտէր, սեղանաւոր, վարժապետ, տէրտէր, վարդապետ, բայց բոլորն ալ յուռութքին վստահ պաշտպանութեամբը աւելի բարեբաստ: Չայնէ ր որոնք լռած են ալ, իրենց նահանջին մէջը շիջելափառ ու յանկուցիչ: Ո՞րն է երգը որ լացըներ մեզ այսօր: Մի յոխորտաք թէ լացին պէտք չունիք: Թէ ազատութեան, յաղթանակի, տիեզերական գրոհի պիտի բանաք ձեր հագագին դռները: Պոտեցեք, այսպէս մեծամտելէ առաջ, մի՞նչ կայանները ձեր եղբարցը հոգիներուն ու յետոյ պոռացեք: Ո՞րն է երգը որ մեզ յուզեր այսօր, գաղութներու բարիաներս, մենք հիմնովին պարպուած մեր ընդունակութիւններէն, մեր ներկան հալածելու անողոք հարկովը դատապարտուած, մեր անցեալին դառնալու մեղքը իսկ անկարող ճակատաբաց կրելու: Հարցուցեք բայց զգուշացեք պատասխանին հաւատք ունենալէ:

Ու սա նշմարները տրտում, յուսակտուր, անաւարտ որովհետեւ ուրացուած, կը ներկայացնեն ճիգը, պատմելու համար սուգը **մոռցուած բաներուն**: Կը հաւատամ թէ գոնէ մէկ մասը ասոնց, զանգուածին համար ալ իսպառ սպառած, մեզմէ ոմանց մօտ չեն կորսնցուցած իրենց սրտառուչ, վաղնջաւոր շնորհը: Ու, մեզմէ ոմանց ուսերուն նուիրադրուած սա պարտքը, այդ բաներէն խօսելու ուժացած, հեռացած, թշնամացած մեր եղբայրներուն, մեզ ընէ նեղ, գուցէ անարդար – աղքատութիւնը սիրտերը դառնացնող, ժանգահարող ժխտական ախտ մըն է, մանաւանդ հոգեւոր իր երեսով – եւ կամ՝ անհասկնալի, նոր ուսումին ու տախտակներուն բոլորանուէր սերունդին մօտ, անգէտ որքան չկամ, պապուկ բայց **քիթին չդնող**, ինչպէս տրուած է մեզ հաստատել ատիկա իրենց խօսուածքին ու կեցուածքին մէջ, երբ ամէն կեդրոնացման, եղբայրական շաղապատումի փորձ կը կործանեն տիեզերական տուեալներու ճազպանտ մը աղմկելով մեր կարօտին ու հայրենավառ բաղձանքներուն վրայ: Ի՞նչ մշակոյթ է ատիկա որ իր եղբօրը ատելութիւնը ներշնչարան է դարձուցած իր արժէք-

ներու կերտումին: Ո՞ր է իմաստը այն անուպայ ուրացումին որով կը շարտուին անխուսափելի օտարացումի, անէացումի հարիւր հազարներով հաշուուած բերաններ, նոյն լեզուն խօսող ու նոյն արմատներէն մեկնող:

Թերեւս աւելորդ չըլլայ յայտարարել թէ ես չեմ որ պիղատուեան միամտութեամբ մը, պարզապաշտութեամբ մը սա կեցուածքը դատել կամ դատապարտել պիտի ներէի ինծի, առանց բաժինը ճշդելու օտար մշակոյթներու այլապէս անժուժելի ճնշումին որով պայմանաւոր է ոչ միայն հացը գոր կուտենք, այլ եւ հոգեւոր, իմացական մեր սնունդը: Գաղութները քրտինքէն աւելի բան մը կը հանեն իրենց ուղեղէն, բան մը որ հարստութիւնն էր իրենց պապերուն, ու ատիկա մանրելով է որ տակաւին մինչեւ ատեն մը շարունակեն պիտի քարշ տալ իրենց վերջալոյսային աղօտացումը, անէացումը հակակշռող բնագոյով մը: Անշուշտ դեռ կանգուն են մեր ժամերը ուր ճերմակ մազերու սրտառուչ տիրապետութիւնը իմաստալից է բաւական: Ու կը խօսուի մեր բարբառը զառամ բերաններէ: Ու կը գրուի մեր գիրով: Բայց, նոյնիսկ ամենէն բարեբաստ պարագային անգամ, անդունդ է փորուած այժմեական, նորափետուր ու տաղանդառատ մեր մէկ գրողին որ Բարիզի կամ Պոստոնի գրգիռներուն ընդմէջէն – արուեստի գործը կարծուածէն շատ աւելի պարտական է այդ գրգիռներուն – իր զգայնութիւնը կը հանէ ոճի, բիւրեղացման, գտնելով այլապէս խռովիչ, շլացուցիչ անդրադարձ մը իրմէ դուրս. ու այն միւսին միջեւ, որ կէս դար առաջ Պոլսոյ խաներուն ու սրճարաններուն քրտնաթոր, հեղձամղձուկ երագներով ու լացով յագեցուն մթնոլորտէն կրցեր էր հանել այլապէս սրտաճմլիկ բայց հարազատ պատկերներ, առանց բարիզեան շպարին: Ու այդ անդունդը աշխարհ է մանաւանդ հոգիին համար այն տղեկին որ թակը ուսին գեղին դպրոցը կերթար տարի մը ամբողջ մեր գիրերը սորվելու, ուրիշ տարի մը՝ զանոնք հեզելու եւ երրորդ մըն ալ զանոնք սահուն կարդալու համար, քառորդ դար առաջ, ու այն միւս նոյնատի տղեկին որ այսօր ժպտուն, կոկիկ, կը վազէ գեղանի ծաղկասրահները, **մամզելներու** մատուրներէն շա-

բաթուան մը մէջ կ'աւարտէ օտար աթուրթային ուսումը ու կը զարգանայ հսկայաքայլ... դէպի օտարութիւն: Այս զուգակշիռը չի սպառիր: Ու մտքիս մէջ հակադրութիւններ, հանգիստութիւններ չեն թելադրիչները սա տողերուն: Հոն կը տիրէ համապարփակ ցաւը ամբողջովին մոռցուած հոգեբանութեան մը, ընկելուզուած աշխարհի մը որոնք մերն էին, եղեր էին՝ քառորդ, կէս, մէկ, տասը դար առաջ: Որոնք ալ մերը չեն, գաղութներուն մէջ անվերադարձ, բայց նոյնիսկ կենդանի ծոցին մէջը մեր հայրենիքին: Անխուսափելի քայքայումը, տարբանջատումը մեր հոգիին, որ կ'առնէ կաղապարը սա նորոգուած օտարութեան, աւելի ահաւոր ու սպանիչ քան տասը եւ աւելի դարերը մեր գերութեան որ անգործող (**inoperant**) էր մնացեր մեր հոգեւոր կառոյցին պարզուկ բայց կարծր գրահանքին դիմաց – մեր լեզուին, հողին, երկինքին ձեւերովը՝ մեր վրայ, ներսը, շուրջը հովանաւոր:

Բաներ կան որ վեր են մենէ: Ատոնցմէ է մեր պատմութիւնը: Ուրիշներ՝ որոնք կը թուին ըլլալ ատիկա, բայց նուաճելի են խորունկ ու յարատեւ նուիրումով, զոհաբերումով: Ատոնցմէ՝ մեր Եկեղեցին: Ու ուրիշներ, որոնք քաւութիւնը անկարելի կընեն մեր մեղքերուն: Ատոնցմէ, ապահովաբար, այժմեան մեր ընդառաջումը, հեռուէն աղէտը փողով թմբուկով հրաւիրելու մեր վատ, ազգուրաց հոգեբանութիւնը: Անկարելի է առանց դառն վրդովումի հետեւիլ սա կործանարար աճապարանքին՝ մեր անցեալը հաշուէյարդարի ենթարկելու – անոր մէջ մեր պարտութեանց, անկումներուն փաստերը խորանարդելով, աւելի ցայտուն ընծայելու համար կառոյցները քանի մը հիւրանոցի, կայանի, ու սանկ ու նանկի: Թող լաւ հասկնան զիս: Ոչ մէկ աշխատանք կ'արհամարհէ ան որուն օրերը, ամիսները, տարիները շրթայակիւր վաստակէ զատ ուրիշ բան չճանչցան սա կեանքէն: Բայց, ներելի գտնելով նոյնիսկ հեզնութիւնը առակին կապիկին, ինզիմքս չեմ խաբեր տրուածը, շահուածը դիմաւորելով, ինչ կըսեմ՝ բիրապատկելով իբր արժէք, **կորսուածին**: Ինչ անուն ալ փակցնենք այժմեան վաստակին, եղածը խարդախ ծպտում մըն է գրեթէ, որով մեղքը

ծածկելու մեր ճիգին մեջ կը դառնանք նենգաւոր եթէ ոչ ապիկար ու աճպարար: Կոնակ դարձնել մեր անցեալին, յանուն նոր կարգախօսերու ամենէն առաջ իմացական անպարկեշտութիւն է: Այդ անցեալը ոգեկոչած պահուս, իմ մտքէս կ'անցնի ոչ մէկ ուրիշ բան, բայց այն թանկագին, անփոխարինելի **գիտութիւնը** միայն որով զինաւոր դարերը ընդունեցինք երբեմն ճակատով երբեմն կոնակով: Այդ գիտութիւնը այսօր ազատած է մեզմէ աւելի հալածական, մեզմէ աւելի հայրենագուրկ ուրիշ ժողովուրդ մը: Պաղեստին այցելող մը կըսեն թէ չի հասկնար հոն կատարուած հրաշքը: Հոն մարդիկ կը ստեղծեն եւ հող, եւ լեզու, եւ մշակոյթ: Կըմբռնէ՞ք թէ որքան խոր է ճիգը հող, լեզու ստեղծելու երկու հազար տարիներէ ի վեր ատոնցմէ օտարացած մարդոց համար: Ուրիշներ բռնի կը հանեն այդ հօր ազդակները աղբերուն մէջէն: Մենք կամաւ կը լքենք զանոնք: Այժմեականը, հետաքրքրականը, լրագրականը, ընթացիկը, կամ՝ ապառնին, ասոր ոսկեղարը երբ իբր գերագոյն տախտակներ կը մատուցանենք մեր ցեղային մտահոգութեանց, վտանգած կըլլանք այդ ցեղին հոգեյատակը, ենթահողը որուն վրայ միայն արմատ կը զարնեն հոգեւոր բոյսերը:

Այն աշտարակային անհասկացողութիւնը, փոխադարձ հերքումը որ մեր առաջաւոր մտաւորական խարխիսները, մեր մտքին բարոյական մթնոլորտը դարերով ճախճախուտի վերածելէ ետք, այսօր պսակաւոր, պետական, եւրոպականացած իմաստասիրութիւն է դարձեր մեր գլխուն, մի միայն մեր ստորին բնագոյները, մեր ահաւոր, գիշատիչ ատելութիւնները ոսկեզօծելու, պատմուճանելու, հրավառելու ընդունակ, երբ աւելի քան երբեք զիրար հանդուրժելու եթէ ոչ սիրելու հարկը վերջնագրային պատգամ է, դրուած մեր տարտարոսին կամարին. զիրար արժեզրկելու, սեւցնելու, այլակերպելու, անասնացնելու այն կատաղութիւնը որուն առջեւ ամփոքեան կը մնայ ամէն անկախ դիտող ու մտածող, երբ ամի մը ընտրանի անատակ կըլլայ համայնական զգացումներու, զգայութեանց գետնի մը վրայ իր սիրտը լայն ընելու եղբօրը սիրտին ու միտքը՝ իրատե՛ս, մեզի համար դարբնուող ճակատագրին, որուն լրիւ

պատկերը ամենքս ալ նկարուած ունինք, անջինջ ամօթով, անմոռանալի կսկիծով, **քանդակուած** խորը մեր մարմինին, ու հոգիին ամենէն նուիրական ծալքերուն – պատկերը մեր վերջին ողբերգութեան ոչ իբր անգթութիւն, վայրագութիւն, այլ մեր միտքին հասցուած գերագոյն նախատինք. մանաւանդ իմացական այն անլուր խաժամուժը – բառը գործածելով իբր վիճակ – որ մեր մամուլին հազարաւոր սիւնակներէն պարսատիկուած պատգամներուն շո՛ւքն է, նուէրն է մեր դժբախտ գլուխներուն, որպէսզի մոռցած մեր գոյութեան յաւիտենական թշնամին, զիրար հալածենք, այդ թշնամիին դէմ իսկ մեզմէ չգործադրուած անգթութեամբ մը. – այս ամէնը չեմ գիտեր ինչ ահաւոր, հրաշախառն անզգածութեան մը, կուրութեան մը գինով անցնին մեզմէ աննշմար: Կը մոռնանք ինչ որ չի կրնար մոռցուիլ: Ու կը սորվինք ինչ որ թունաւոր գերսնուցում մըն է մեզի համար:

Նկարագիրնէ՞ ըր նոր ուսումին:

– Շատ ու շատ են անոնք:

Բայց վեր հանել ատոնք գործն է նորին առաքեալներուն:

Հինին մարդերը, իրենց կալուածին մէջ:

Ես կ'անցնիմ տրտում կարաւանին աղօտած, մոռցուած, շիջած բաներուն:

(Շարունակելի)

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, Ժ. ՏԱՐԻ, ԹԻԻ 4, ԱՊՐԻԼ, 1936, ԷՋ 113–117)

Ծանօթ. խմբագիրի

«Մոռցուածներն են՝ հողը, կաթողիկէները, մատուռները եւ վկայարանները» (Մարկ Նշանեան, *Յակոբ Օշականի մատենագիտութիւն*, Լոս Անճելըս, 1999, էջ 65):

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Աշնան օր:

Որ լոյսի տեղ՝ պղտոր բան մըն է երբ գոյն գոյն ապակիներէն կ'իյնայ ներս, հանգչելու վայր մը փնտռելով եւ չկրնալով, քանի որ խողոված, գլխէն վիրաւոր կամարը ու խոշոր ներկերով – որոնք իբր թէ մարդեր են, հոս սառելու դրուած – արատաւոր պատերը տառապիլ կը թուին, ինծի կուգայ, միջոցին պակասէն:

Թերեւս չէք գիտեր որ հայ եկեղեցիի մը ներսն եմ, փոքր, նոր ներկուած իր հոգիէն ալ, պատմելով ուրիշ ապրումներ, առանց թռիչի, առանց թելաբացման ինչպէս կը զգաս թէ կ'ընեն այդ պատերը երբ մտնես մեր հարազատ ժամերէն մէկուն մէջ: Սեղմ, կծծի, առանց երկինքի: Կոկիկ: Յուրտ: Օտար: Այսպէս կ'ըլլայ շէնք մը երբ այսքան հեռու ամբառնայ իր ժողովուրդին հոգեկան կեդրոններէն: Մանաւանդ երբ ոտքի կանգնի դրամով:

Հոգիի, գոյնի, սլացքի սա մատնութեան հակառակ, կամարին տակօք կիրակնաւոր խայտանք մը կը դողդղայ, ան ալ զգոյշ, քիչ մը ցուրտ, – քաղքենի՛ ու նիհար, որ չեմ գիտեր ո՛ր հրաշքին գիտովը ինծի կը դարձնէ իմ տղայութեանս քանի մը շատ ուժգին զգայութիւնները, նման շէնքէ մը, հեռաւոր ու ա՛լ երազ քաղաքի մը: Պե՛տք է ըսել թէ իմ օրերս, ինձմէ ներս, երկու աշխարհներ են, քով քովի, բայց երբեք չխառնուած իրարու: Գեղ՝ մը կայ, անուշ ու ամբողջ, այդ հոգիի մէկ կէսին: Քաղաք մը՝ իրաւ, մանր, տարօրէն թշուառ ու աղքատ՝ անոր միւս կէսին:

Հոս, իմ տեսածս ճիղճ բեմ մըն է սակայն ուր շուքդ չի կրնար ազատ դառնալ, քեզի հետեւելու կամ առջիդ իյնալու համար: Հոն, արքայութեան չափ ընդարձակ կուգար ինծի այդ բեմը, ուր տասներկու քահանաներու մոմերը կ'երկննային անոնց հասակովը, անոնց դեղին դէմքերուն վրայ փշրելով իրենց լոյսերը ու արիւններով անոնց փոս աչքերը: Եպիսկոպոս

մը, տիրացուներ, դպրապետ: Բուրվառ: Քշոց: Բայց ո՛հրը որ կուզէք:

Հոս, երկու տիրացու եւ տէրտէր մը որոնք պարտաւոր են շատնալ որպէսզի լեցուի սա կլոր ամայութիւնը, խորանին ու ժամին նաւէն: Տիրացուները նման մեր քաղքի պատկերներուն: Տէրտէրը՝ պատարագիչ:

Հի՛նգ հոգի: Որոնցմէ մէկը ես:

\*

\* \*

Բայց ահա տարօրինակը:

Կամաց կամաց մէկը կը սրբէ օտար, փայլուն, նոր նկարները խորանէն ու պատերէն: Այդ մէկը ձայն մըն է, առանց գլուխէ մը գալու: Անոր բերածը մեր ժամուն հոգին է. – բարակ, իրաւ, հոտաւէտ ու գեղջուկ. ինչպէս պաղ, փայլի մէջ գաղջացած, պտղած քաղքենի հաւատքը:

Կաթի գոյն մութ մը կը բռնէ աչքիս վրայով հոգիիս ճամբաները:

...Յետոյ պատարագին եղանակը կը վերածուի մելամաղձոտ նուագին որ մեր թաղման շարականները կընէ այնքան խոր, դաշն, ծանրաթաւալ ու տրտում, բայց կազդուրիչ: Չեմ գիտեր թէ դագաղին մէջ պառկողը ինչպէս դատեր պիտի այս երաժշտութիւնը երբ հոգին դեռ թափառական՝ յամառէր մնալ, ինչպէս կուզեն հաւատալ իրենց սիրահատորը լացողներ, մեռելին գլխուն, երբ կը սպասեն որ բացուին կոպերը երկնցողին ու ըսեն իրենց վերջին վկայութիւնը անլոյծ խորհուրդէն...:

...Պատրանքը այնքան ուժգին է իմ մէջ որ կը ցնցեմ գլուխս, աչքերուս առջեւէն վանելու համար սա կաթնորակ մշուշը, խունկի հոտով ու համով, երաժշտութեան ալիքներովը վրաս խուժող: Եկեղեցին կորսնցուցած է իր քաղքենի ամայութիւնը: Ստուերներ, վերէն ու վարէն: Ձիւն ու մրրիկ: Ու յանկարծ պատկերը՝ այնքան յստակ, որ կէս դարու մօտ

կեանքով մը ապրեր է իմ մէջ, առանց աղօտելու իր սկզբնական թշուառ թարմութենէն: Ես, օտար այդ ժամուն մէջ, մանուկն եմ հիմա որուն հայրը պիտի տանին, թաղելու լեռան մը սիրտը, մարդու հասակով ձիւնը աւելելով, մինչ մայրս կախ է դագաղին եզրին, մէկ ձեռքով, զայն կեցնելու իր անկարող տառապանքին մէջ, բռնելով իմ սառած թաթիկներս, ամուր, շատ ամուր, չեմ հասկնար ինչէ վախնալով:

Ամէն ինչ կը պահէ, սա օտար ժամուն մէջ, գոյնը, գիծը, հոգին այդ օրուան: Չեմ տեսներ քահանան, տիրացուն, քովս ճերմկող ճաղատ ձեւին ձանձրոյթը ու կը տարուիմ դագաղին ետեւէն, կոխելով ձիւները գրեթէ բոպիկ, դողալով, մեղքնալով մամայիս, աղբարներուս, կոյր հօրքուրիս որ կը նստի ժամու կուշտին, կղպուած իր ոտքերը դնելով իր թշուառ պարեգօտին:

...Քաղցր ալիք մը: Աւլուած է պատկերը: Պատարագը կը շարունակուի, աւելի քան մինակ տէրտէրին, երկու տիրացուներուն մէջ:

Կը շփեմ աչքերս ու կ'անդրադառնամ: Ամիսներէ ի վեր մահուան մարգանքն է պատճառ սա տրտում զգայախաբութեան:

\*

\* \*

Պատարագը աւարտած է:

Լուռ ու մենակ եկեղեցին կը թնդայ հանգստեան կարգի շարականներէն: Ալ չեմ փնտռեր երգողը վասնզի վարժուած եմ այդ անբերան պատգամներուն: Մարդեր կը քալեն, պարապին մէջէն, առանց մարմինի: Բայց որոնց յստակ է ոտնաձայնը, փափուկ, ձիւն կոխողներու քալուածքի ձայնը: Պակաս է մամաս, որուն յոգնած, եռացած ջուրի մէջ խաշելէն կեղեւաթափ ափը բարակ, անօգնական փայփայանք մը կը բանայ հիմա, գրիչէն կարկամած իմ թշուառ մատներուս վրայ:

Կը նետեմ ինքզինքս դուրս:

Այդ բաց արեւին մէջ է որ կը գտնեմ եկեղեցիին իսկական պատկերը: Երկաթ ցանկէն անդին, ֆրանսական ոստանէ մը մետաղացած կեանք մը կը պտուտքի ինք իր վրայ, կէփի. կը յորդի: Մարդեր են որոնք կը պղտորեն արեւի լիճերը, մարդու պէս, եւ ոչ մեզի պէս որոնց կեանքին երեք չորրորդը ապրելու տեղ՝ վախցաւ ու փախաւ Աստուծոյ արեւէն: Ծառուղիներուն երկայնքովը կը պտտին չեմ ըսեր երջանկութիւնը, ազատութիւնը, հարստութիւնը, այլ այդ ամենէն վերը, **կեանքը** որուն չի սպառնար մահը: Իմ ժողովուրդս միայն կը հասկնայ այս պարզ տարազին անհուն խորութիւնը: Ու երջանիկ սօսիներէն դեղնատերեւ աստղեր լոյսին մէջ լողալէն, ոսկի կը բերեն մարմար սանդուխին ուրկէ կը դիտեմ տեսարանը: Գլխէս ճնշումը կը բարակնայ քիչ քիչ: Մահուան առքը կը պղտորի, կը կոտորտի: Ու կը հալի անոր ոստայնը, ինչպէս խորի մը: Հիմա կեցողը, այդ մարմարին վրայ, դիտողն է աշխարհին անհուն ողբերգութեան:

\*  
\* \*

Ու կանցնին:  
Ու կուգան:

Իրենց գեղեցկութիւնը ցոյցի հանած կնիկներ, յիմար որքան թշուառ, երբ նայիս խոր իրենց մորթերէն անդին: Գաւազանին հետ հաշտուած ծերութիւններ, այնքան վաղատի, դալուկ ու սրտառուչ, որոնք պակտող ոտքին դառնութիւնը ներած են աշխարհին ու կը յամառին, իրենք ալ չեն գիտեր, ի՞նչու: Ու տղաք ու բանուորներ: Թող անցնին: Այդ շարքը անհուն է մեծ քաղաքներու պորտին վրայ:

Պառա՛ւ մը: Յետոյ ուրիշ կիներ, աւելի խոնարհ տարիքներէն: Յետոյ այրեր, սեւ աչուկներով, գիծ գիծ մորթ մը կրելով երեսի տեղ: Տրտում ու դառն, ինչպէս կը փոխուի տեսակը բոյսին երբ զայն լեռներէն կը գատես ճահիճի եզերքը տնկելու համար: Մերիններն են, յայտնի՝ ամենէն առաջ իբր արտայայտութիւն: Հաւանաբար բանող՝ բոլորն ալ: Մեքենան ու

ծուխը աղարտած են ցեղին մոյնքը: Բայց մանաւանդ տառապանքը այդ դէմքերը զարկած է խոր, անսրբագրելի կնիքովը: Ու սրտառուչ, մատաղ երամը տղոց, բոլորն ալ առոյգ, վարդ, երջանիկ ու կրակ, իրենց դալկութիւնները շղարշի մը պէս հազած: Սեւուլիկ իրենց նայուածքը ինչէ՛ր կը պատմէ ինծի:

Ուրկէ՞ կուգան այսքան ուշ, երբ իրենց տարիքին, Կիրակի առտու, մենք առաջին կոչնակը չէինք փախցնէր, մեր տուններուն տրտմութիւնը մոռնալու համար Աստուծոյ մեծ տունին մէջ:

Կը մօտենամ անոնց, ու կը սեղմուի իմ սիրտս: Փոքրերը կը փնտռեն մեծերը, անտարազելի զգացումներու ասեղին ներքեւ: Կը ջանամ ինքզինքս լաւ տեսնել: Կը կարծեմ գտած ըլլալ: Ու կը փախչիմ այդ լոյսէն: Մահուան մէջ մտնողները ունին այս բացառիկ զգայարանքներէն: Ինչ որ խտովքէն կը դիմանայ քիչ մը, իմ մանկութիւնս է, տասնէն դուրս չելած, այսպէս փարթամ քաղաքի մը եզրին, անօթութեան եւ որբութեան հետ ճիտ ճիտի, ու հաւանաբար աւելի դալուկ քան սա տղաքը:

Զանազան տարիքներէ: Բոլորն ալ վար տասնէն: Ճշմարիտ սանդուխ մը գլուխներու:

Շրջապատած են մանուկ մը, իրենց կէս հասակովը:

Թաւշի պէս զգուազին եւ եղկ մորթ մը, քիչիկ մը աղօտերանգ, որ հարուստ տուններու ոսկի խնամքէն չպատմէ սակայն: Աղքատութիւնը զրկանք մը չէ մանուկին համար, այլ արիւնին անցած անորակելի երանգ մը որ միսն ու զգեստը կը դեղնէ, եթէ կը ներուի այս բառը: Փափուկ, դիւրաբեկ, տարօրէն գրաւիչ, թերեւս այդքան վաղազիր դժբախտութեան մը գինով: Մանուկները պտտող ողբերգութիւններ են, կարգ մը ժողովուրդներու մէջ: Հոս, անիկա հեռու է պուպրիկի այն ձեռակերտ աղուորութենէն որ յատուկ է փարթամ ապարանքէ փոքրերուն. այդպէս լեցուած, այդպէս վարդ կամ դեղձ կամ անգայտ դալկութիւն բեհեզին ու գոհարին շնորհներովը կրկնաւոր:

Կը բռնեմ իր ձեռքը: Տաք, խոնաւ:

Ո՞վ ինձի կը փսփսայ թե դժբախտ սիրտերը այդքան կանուխեն կուլան, աչքերեն առաջ, իրենց ափերովը: Նոյն գաղտնի զգայարանքը ինձի պարզ կընէ տառապանքին, նոր, անորակելի որբութեան մը մարմաշը մանուկին թաւշայարդար պատկերէն անդին: Մօր մը ձեռքը մանուկին հագուածքին մէջ այնքան իրաւ է ու անփոխարինելի: Բայց մօր մը պակաս՝ սը՝ տղու մը դէմքին վրայ: Կայ աստիկա տուող ծանրաչափն ալ, հերիք է որ լաւ նայիք: Ժողովուրդներու հոգիին ծանրութիւնը տղոց նայուածքովը կը չափեն:

\*

\* \*

Կնո՛ւնք:

Ու կը հասկնամ:

Ուրախ եմ իմ սուգիս մէջ: Կնունքը մէկն է իմ մէջ այն շատ ամուր պատկերներէն որոնք դիմացան տարիներու ատամին: Չեմ չափազանցեր եթէ ըսեմ հոս թէ հարիւրը կ'անցնի թիւը այն մատաղութիւններուն որոնք իմ բարակ, առանց ծուծի բազուկներովս մատուցուեցան Ս. Աւագանին երբ տասը չէի մտած: Ան ի՛նչ ուրախութիւն էր իմը, հագնելէս ետքը ճերմակ շապիկը, ազատելու համար անուշիկ մանչը կամ աղջնակը դժոխքին գիրէն: Տղու յատուկ հոգիով մը արարողութեան ամբողջ արժէքը կը սեպհականէի: Յետոյ, սարսափախառն հեշտանք մը կողողէր զիս կարօտովը պատկերին գոր նորածինը կը դներ աչքերուս, երբ, քահանային ափին մէջ, գոյգ տոտիկները իրարու հիւսած, գլխիվայր կը մնար առկախ՝ աւագանին վերէ: Քաղաքին մէջ **տղայ բռնելը** շաբաթ մը երջանկութիւն էր մեր տունին: Կրնաք գուշակել ինչու, մանաւանդ ձմռան երբ մամաս աշխատանք չունենար:

...Ի՞նչու այսպէս կը խուժէ կեանքը իմ վրաս, երբ ես սկսած եմ անոր հետ հաշուեյարդար մը:

Աղջնակը պիտի կնքեն:

Ու չէք գիտեր թե այդ քաղաքը Ֆրանսայի հարաւային ջուրերուն մեծագոյն ուստանն է: Թէ հսկայ թիւ մը ունինք հոն հալածական մեր ժողովուրդէն:

\*

\* \*

Պատարագիչը սանդուխին վրայ կը փնտռէ **կնքուելիքը**, երախան, կնիկներու գիրկը ուր ըլլալու է արդէն անոր տեղը: Ու չգտնելով հարց կուտայ մօտի պատուին: Մատներ, կամաց, զգոյշ կնուդուին թուշադէմ աղջնակին որ այդ պահուն թշուառ պուպրիկ մը կը համբուրէ, մէկ աչքէն կոյր, փէշը բզկտուած:

– Ո՞ւր է մայրը:

Ո՛չ ոք, որ պատասխանէր: Մեր բառերը երբեմն այնքան ծանր են որ չենք կրնար զանոնք տեղաշարժել:

Պզտիկները կը նային իրարու: Կը նային վար: Պառանները իրարու կերկարեն իրենց քիթերը, խօսելու պատրուակ, իրականին մէջ՝ մտիկ ըրած չըլլալու համար տերտերին դժբախտ հարցումը: Մէջ-կնիկ մը, թաշկինակովը սրբելով քիթը որ կուլայ, բռնած է աղջնակին ձեռքէն ու կը տեղաւորէ վարդ մը, անոր գանգուրներուն:

– Ո՞ւր է մայրը, կը կրկնէ քահանան, պատարագէն յոգնած ու աճապարոտ:

Նոյն լռութիւնը:

Դաժան նայուածք մը միայն տեսայ որ փայլակեց, աչքի մը խորէն, գլխահակ մարդու մը երեսին, որ դուրս կը մնար բազմութենէն: Հա՛յրը: Թերեւս:

– Մեռա՞ծ է: Քահանան է դարձեալ, հիւր մը այդ ժամուն, անգէտ ըլլալու համար իր ծուխին մեծ փորձանքներէն:

– Ո՛ւր է մեռած ըլլար...

Պատասխանը կուգայ երիտասարդ բերանէ մը որ կը բացուի պզտիկին մազերուն վրայ: Փայլակի մը մէջէն իրարու կը վերածուին երկու դէմքերը: Աշուկներու նոյն սեւը մեծին ինչպէս

պգտիկին վրայ: Մորթին նոյն թաւիշը, մեծին վրայ աւելի գունատ: Կը փախցնէ դէմքը ծածկելու համար արցունքները:

– Ամէն բան չըսուիր, տէր հա յր...: Լրացնողը պառաւ մըն է:

Կը հասկնամ:

Տղան կը տանին ներս, ժամ:

\*

\* \*

Որքան պիտի ուզէի, թօթուել վրայէս սա կէս դարը, դառնալու համար իմ այն օրերուն ուր ինծի կը տրուէր տղաքը գրկելու տղայ վայելքը...

Չվախնայի, առնէի պիտի մազերուս գոյնով շապիկ մը, բանայի ծուծէն պարպուած բազուկներուս դժբախտ աղէտը տեղաւորելու անոր մէջ սա արդէն զարգացած, արդէն գեղեցիկ դժբախտութիւնը, իր կոկոնին մէջ իսկ ստիպուած պահելու սերմը որ, գուցէ, անոր պարմանութիւնը պիտի նմանցնէ մահուան ծաղիկներուն անդիմադրելի գրաւչութեան եւ աղէտին: Պիտի չդառնար անշուշտ ինծի, հիմա, իմ տղու ուրախութիւնը, դժոխքին բերնէն հոգի մը ազատագրելու: Բայց լեցուէի պիտի խաղաղ այն գոհունակութեամբ որ մութ, դժուար բաներու աշխատողինն է, երբ ցեղին հոգեկան փշրանքները հովին ու ժամանակին երախէն մոլեռանդօրէն կը կարծէ փրկել, այսպէս կենալով այդ ցեղէն փրթած ամէն զանակի առջէս:

Մնացի տեղս, ես ինձմէ վախցած:

Գոնէ կը ճամբեմ միտքս դէպի տունը սա աղջկան, խուց մը հաւանաբար, նման այն շատ շատերուն գոր մերինները, օտար ուստաններու սա փարթամ կողքերուն, գիտցեր են կարկտել իրենց գլուխներուն: Չեմ շիներ անոր ներսը: Թշուառ մահիճը, պահարանին մէկ անկիւնը նետուած հարսնութեան պսակ մը բաւ են տալու պատկերը բոյնին ուրկէ թռած է... մայրը:

Ու տռամը:

...Պակասած մամային տեղ սա քսանամենի աղջիկն է որ կը պառկի փոքրիկին հետ: Կի՞ն, աղջի՞կ: Մի հարցնէք:

Բայց գիտէ՞ք որ ազագուն, նրբենի իր թարմութեան մեջ այդ կինը մէկն է այն հազարներէն որոնք մանուկ իսկ չեղան, գոնէ մեզի՝ պէս, անապատին խորը կամ աւելի անասելի տեղեր իրենց աչքերը բանալով Աստուծոյ արեւին: Որ, ահա հասուն, ով գիտէ ինչ ահաւոր խստութեամբ բանտարկելով իր ներսը գերութեան տարիներուն ամօթանքը, դարձեր է կեանքին, ու շատ հաւանաբար կոյս մայր մըն է իր չունեցած զակին: Որ, աւելին, այդքան մատաղ, կանչուած է պաշտպանելու իր տունին աւանդը, իր ցեղին խորհուրդը – մենք կըսէինք պատիւը, մեր օրերուն, հիմա տժգոյն տարագ Սփիւռքի հոգիին վերեւ –, քանդիչ ուժերուն ճիրաններէն կորզել ջանալով ինչ որ կարելի է, պատառ առ պատառ, երբեմն իր իսկ գինովը:

Մարդերէն վեր բաներ կը սպասենք անոնցմէ:

Ո՞ր ատենուան համար է որ կը յապաղին բացուիլ դռները երկնքին ու մեզի դրկել Աստուածը որ յուսադրէր մայրալիք մեր մանկութիւնները:

Շշունջ մը ներսէս,

– Մի նայիր սեւ. հարցումդ անո՞նց կ'ուղղուի որոնք մահը գերադաս գիտեն մոլորանքէն:

\*

\* \*

Մանդուխի ոտքին: Անշարժ: Երագուն:

Ձայնի փշրանքներ, ժամուն ներսէն, աղօտ ու աղկաղկ: Առանց աղաղակի կնո՛ւնք:

Մէկէն, ծանր տրտմութիւն: – Կատարուածը վկայութիւն մըն է կեանքէն (գլխագրեցէք եթէ կ'ուզէք): Մայրերը, հայրերը միայն կրնան իօսիլ այն հրաշապատկերէն որ աւագանէն ելած պզտիկին ետեւէն անոնց երագները կը տեսարանէ:

Ինչո՞ւ չունինք ուրիշ բառ մը, ասոր չափ հարագատ ու թելադրիչ, այն միւս վկայութեան համար ալ զոր դագաղ մը կը պատմէ: Չէ՞ որ հող ալ պառկողը ուրիշ սկիզբ մըն է:

Կեանքը:

– Բայց դուք տուէք անուն մը սա դժբախտ բանին: Չոր կ'աճեցնենք ամենէն աւելի երբ հալած է ներսէն, մեր պատրանքներով:

\*

\* \*

Ելան ժամէն:

Տխուր:

– Բոլորն ալ բացի աղջնակէն որ դալուկ վարդի մը կը նմանէր, խաժ իր մետաքսին ալիքէն բուսնող:

Ձատուեցաւ: Տոնոց խումբը գնդակ կը խաղայ մարմար սանդուխին: Կիները կը սրբեն իրենց աչքերը: Հայրը, զանգակատան ստուերին մէջ, կը վախնայ նայելու:

Եկաւ քովս: Առանց ուզելուս: Երկարեց պէպէքը, որ թաց էր, հաւանաբար հետը աւագան մտած:

Առի ափերուս եղկ սնդուսը իր մագերուն:

Հնագանդ էր, մահուան մէջ սորվըւած իմաստութեամբ մը: Ու յուզիչ, մահուան չափ:

Քով քովի՝

Ժամուորները չհասկցան: Ի՞նչ գիտնային անոնք որ ես ալ վկայութիւն մըն էի ուրիշ բանէ մը:

Աչքերս գոցեցի, չտեսնելու համար:

Ու ըսին ինձի

– Նոր օծուած վկայութիւնը քուկդ ալ է, էր:

Հասկցայ:

Ու աւելցուցի

– Բայց ո՞րն էր աւելի արգահատելին սա զոյգ վկայութիւններէն:

Պատասխան փնտռեցի: Չկար անիկա: Ատեն մը դուն կը խօսէիր, ով գաղտնիքներու Տէ՛րը:

Լռութիւն:

Ո՞րն էր աւելի թշուառը: Սկստ՞ողը թէ աւարտողը:

\*

\* \*

Հովը դեղին աստղ մը բերաւ մանուկին մազերուն: Սօսիները խոնաւ եւ կարմիր փսփսուքի մէջ: Կաթիլներ կ'իյնան: Ցանկէն դուրս, կառքերուն հազը արելը կը պղտորէր:

Ու գացին, բոլորը: Աղջնակը, միս մինակ, դէպի իր անյայտ վկայութիւնը, առանց մօր մեծցող մեր որբերուն ճամբովը:

Մինակ էի, կրկնելու հարցումը

– Ո՞րն էր աւելի թշուառ մեր երկուքէն:

Պզտիկը կը քալէր հոն ուրկէ դարձեր էի ես: Ու չէր գիտեր անիկա թէ ինչեր կը սպասեն մեր ճամբաներուն:

Բայց ահա տարօրինակը: Ահա աւելին:

Ես ա՛ն էի որ, իր տարիքին, ճամբայ էի ինկած, հասնելու համար սա անդունդին, պատրանքներուս, տառապանքներուս ծրարները ուսիս, թափելու համար յատակը վիհին, որ չէ լեցուած, ով գիտէ սպասելով տակաւին ինչի:

Գերեզման մը կը լեցուի: Բայց անդունդ կէտ՞նք մը:

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, ԺԲ. ՏԱՐԻ, ԹԻԻ 1, ՅՈՒՆՈՒԱՐ, 1938, էջ 13–18)

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

-----

ՄԱՅՐ ՍՈՒՐԲ...

Յստակ է, այսօրուան պէս, ամէն բա՛ն, միտքիս առջեւ:

– Մեր հրաշալի ժամը, անոր ամենէն հեռու պատկերը, իմ յուշերս ի վար:

Անոր գովեստը, մամայիս բերնէն, բանուորի մեր հիւղակներուն ներսը, մեծ քաղաքի աշխատանոցներէն մէկուն մէջ, պարծանքն է մերոնց. գեղջուկ լամուկներ, հացին համար՝ ձգած մեր ծովը, դաշտը, լեռները ու ինկած այդ գերութեան: Բայց հպարտ ենք մենք: Ու քաղքենի պտիկ աղջիկները, մանչուկները պարտաւոր են հիանալ մեր ժամուն վրայ: Մեր ժամը մեծ է քան ամենէն մեծ մանարանները այդ քաղաքին: Անիկա մեծ է թագաւորին ալ պալատէն: Անոր երեք խորանները մինակնին աւելի հարուստ են քան քաղքի ժամուն բոլոր զարդերը միասին: Անոնցմէ մեծը իր նմանը չունի աշխարհի երեսին:

Սա տողերը գրած պահուս, մեր ժամուն խորանը, Ծնունդի գիշերով, անշէջ նկար մըն է, որուն հետ չեմ փոխեր մեծ արուեստագէտներուն բոլոր նման գործերը: Զայն նկարագրել, հիմա, բառերով խաղալ է ինծի համար: Անոր կիսադեղ աստիճաններուն բարձրացումը: Մոմերուն սիւները, կարգ մտած նորատունկ թթենիներու նման: Ոսկի՛ն, որ խաչ է ու կերպաս. սկիհ ու վահան. տապանակ ու անօթ ծաղիկի: Արծա՛թը, որ աշտանակ է ու պատուանդան, ինկաման ու աւետարան: Կանթեղներու շարոցները, հարիւրով, հազարով: Կամարի գիծին բազմած մարգարէներուն մօրութները որոնք կը դողան իրենց առջին պլպլուն բոցերէն:

– Տէրտէրները, ոսկի ու արծաթ իրենց շուրջառներուն մէջ: Այն ատեն՝ տարօրէն աղուոր, անմարդկային գրեթէ, նման սուրբերուն որոնք մեր հեքեաթներուն մէջ կը քալեն երկրէն

երկինք: Ոմանց կզակեն երկու թիզ խաս, գգուած, ձիւնի պէս մաքուր մօրուք, ուրիշներու սեւին, դեղինին դիմաց:

– Տիրացունէ՛րը: Որոնք երկու դասերը լեցնելէն գատ, յորդեր, ետէն են անցեր: Թո՛ւիս, կարմրուկ, անուշիկ տղաք: Որոնց շապիկները սրբեր են գեղացին ու հաներ ցոյցի անոնց աչքերը, ճակատները միայն:

– Ու ժողովուրդը: Որ գլուխներու շարք մըն է, միակտուր: Ուսէ ուս բացուածքն իսկ հեռանկարին մէջ կը հալի այդ հսկայական արտին: **«Ասեղը ձգես, չիյնար գետին»:**

Այսպէս կը գովենք մեր ժամը, անոր Տօնը, քաղքենի տղոց:

Մենք բանուորներ ենք: Ու ամէն Կաղանդի կը ձգենք քաղաքը, գործի պակասէն ու կը դառնանք գեղ, օրով մը հեռու:

\*

\* \*

Մամայիս գրկէն, մանուկի իմ աչքերը չեն գիտեր թէ ուր պէտք է կենան.

– Ոսկիի՞ն, որ խորաններուն կոնակները, սիւներու խուրձերը, կիսակամարներէն փրթած սլաքները, նկարներուն շրջագիծ հաստ շեղբերը, վարագոյրներուն ամփոփ փոքերը կը վառէ, կը փշրէ բայց չի կործաներ:

– Աւագ խորանի նկա՞րին ուր մազերը ոսկի համայելի մը մահիկին մէջ լաչակած, մեր հարսներուն չափ մատղշուկ կնիկ մը նոր ծնած պիլիկ մը **«կը խանձրէ»**, ինչպէս գիտեմ թէ կընեն երկինքէն բերուած բոլոր տղոց մայրերը, ու ինչպէս կը պոռայ արդէն, ժամէն դուրս **«Աւետիսը»**

**«Խանձրեցին, պլլեցուցին, աւետի՛ս»**,

**«Մսուրքին մէջ պառկեցուցին, աւետիս»...**

**«Աստուած սա տունը շէն պահէ, աւետի՛ս»**

**«Շէն պահողին Աստուած պահէ, աւետիս»...**

դռնէ դուռ, հաւաքելու համար աղքատներուն բաշխուելիք նուէր, հաց, ձէթ, ձաւար, պանիր...Շուն մը, ոչ մեծ, ոչ պզտիկ, դունչին անուշիկ, մանուկի ժպիտ: Իշուկ մը, ցռուկը թաղուած մսուրքի յարդին: Տգեղ մեծ փորով կովեր: Հարսնուկը, մէկ աչքը տղուն, մերկ, իրաւ պէպէք մը, հասակովը հարուստի տունէն իմ տեսած պէպէքներուն: Ձիգ, ամուր միսով: Միւս աչքը մարդու մը, գեղացի պապա, քիչիկ մը տրտում, ան ալ ծունկի մսուրքի եզրին: Ու պոչով աստղը, ձեռքի չափ խոշոր, մութին ծոցէն կախ որ լոյսին մէջը իր սլաքներուն կը շարժի կարծես:

Մամայիս գիրկէն, կը նայիմ այս ամէնուն ու չեմ կշտանար: Քաղաքը, ճամբան: Ձիւնը: Դուրսը թքնես կը սառի: Հոս արքայութիւն:

– Մա՛յր սուրբ...

Կը ցնցուիմ, պզտիկ իմ թաթիկները պրկելու իսկ վախնալով:

Ըսես, հալած կրակ է այդ ձայնը որ կը քալէ իմ միսերուն վրայէն, ու կը զարմանամ որ չայրիր:

Ըսես, արդար եղն է հարուստի սեղաններուն ուրկէ կը փոխուի, կը փոխադրուի անոնց հացերուն:

Իմ բոլոր մարմինովս կը մտնեմ այդ ձայնին մէջ, դողալէն, մսելէն, այրելէն բայց գինովի պէս երջանիկ:

– Ի՞նչ ունիս,

Մայրս է հաւանաբար զգալով իր վիզին վրայ դողը իմ բազուկներուն:

Չեմ պատասխաներ, քանի որ չեմ գիտեր թէ ինչ ունիմ:

Բայց իմ նայուածքը փակած, պաղած է մարդոց խումբին, «օսկի» շապիկներուն մէջ, մեծ խորանին առջեւ, կոնակին բաց գիրքի մը դիմաց: Կիսաբոլոր: Կը պոռան ու գլուխ կը թօթուեն: Մէկը, որուն բերանը ինծի է դարձած, կը բանայ եղանակը: Ուրիշներ կը հասնին ետեւէն:

– Ի՞նչու կը կը պոռան, մամա: Ի՞նչ կընեն այդ մարդերը:

– Կը կարդան, տղաս: Դուն ալ մեծնաս, կարդացուկ ըլլաս, մամադ գայ մտիկ ընէ:

Բառերը չեն հասնիր ինծի:

– Մա՛յր սուրբ...

Շատ ամուր բռնած եմ «մայր սուրբ»ը, որ կուգայ, կը թօթուէ զիս, կ'անցնի մեծ ալիքի մը նման ու նորէն կուգայ: Կրա՛կ ետ օրօր: Ամէն անգամուն, քիչ մը աւելի սեղմ, բազուկներս կը փաթթեմ վիզը մամայիս:

Կրակ է, արդար եղ է, մաս պատարագ, այդ եղանակը:

– Մա՛յր սուրբ...

Տիրացուները: Կուճուկ Թորոսը որուն երեսին կէտը բերան է լման: Ետիս՝ բոլոր գլուխները: Կը գոռան ամէնը:

Դողը կը սաստկանայ, գտնելով ակռաներս: Պիտի լամ բայց կը վախնամ: Կը մսիմ կրակին մէջ:

– Մամա.

– Ըսէ, ձագուկս:

– Ո՞վ է մայր սուրբը,

Կը փսփսամ քան թէ կը խօսիմ, անոր ականջին, բառերը հազիւ բերելով քով քովի:

– Աստուած պապային մայրն է, տղաս:

Չեմ հասկցած: Ու նորէն ծռելով, հեւքի պէս,

– Ո՞ւր է:

Խնդալէն, ծոցին աւելի ուժով սեղմելէն, գլուխս կը շտկէ դէպի խորանը: Նկա՛րը: Մսուրքի առջին կնիկը ցոյց տալով.

– Պիլիկը կը փաթթէ, տեսա՞ր:

– Տեսայ:

– Ան է Աստուած պապային մաման:

– Ատ պտլի՞ կը:

– Սուրբ է, տղաս:

– Սուրբը ի՞նչ է:

Մայրս կը համբուրէ բերանս:

– Ինչո՞ւ կուլայ:

– Ո՞վ:

– Աստուած պապային մաման:

– Քեզի անանկ կուգայ, տղաս:

Բայց ձայնը կոդողէ հիմա: Կանթեղներուն լեզուներն ալ բաժին կառնեն այդ ամէնուն մէջ, քանի որ կը շարժին: Ու հեռուի

պատուհանի մը վրայ ձիւնը հազար գոյներով կերպաս մը կը հիւսէ:

Ու բազմութիւնը որ կը կրկնէ.

– Մայր սուրբ բարեխօսեա...

Ի՛նչ քաղցր էր իմ մամային ձայնը այդ ամէնուն մէջ:

– Դուն ալ ըսէ, ձագուկս:

– Ի՞նչ ըսեմ:

– Մայր սուրբ, բարեխօսեա...

– Ինչո՞ւ:

– Որ քեզի պապուկ լաթ բերէ, ոտից բերէ, շաքար բերէ...

Կը կղպեմ շրթներս յանկարծական տրտմութեամբ մը վիրաւոր: Իմ չունեցածներուս, իմ զրկանքներուս ցաւը, ասեղ ասեղ, կը զգամ որ կանցնի աչքերէս անդին, գլուխիս **տողին**: Իմ հոգին կայրի գայրոյթովը մանուկին որ այդքան բրտութեամբ կը բացուի մէկէն հասկնալու թէ ինչու քաղքի աղջիկները իրենց հասակէն մեծ պէպէք կունենան, տղաքը՝ երկու ձիով կառք, բերուած իրենց կաղանդ պապայէն...: Գե՞ղն ալ: Ուրիշներուն կոնակը՝ տաքուկ չուխայ, գրպանները շաքար ու չամիչ: Ի՞նչ ըրած է իմ խեղճ մամաս, որ ասանկ պարապ գրպանով ժամ բերէ ինձի, առանց ոտիցի, առանց չուխայի:

Ու կուգայ արցունքը, շատ, ծանր, գրեթէ հեկեկանք:

Ինչ գիտնար իմ դժբախտ մայրը որ այդ ընկալին իմ աչքերէս իր սրբածը տղու արցունք մը չէր, թէ մօրը ծոցէն իսկ մարդիկ երբեմն կը սկսին հասկնալ բանը որ անուն չունի...: Ու անիկա կը համբուրէ իմ աչքերը, երկար, խանդով, քիչիկ մը տրտում: Ու կը ծածկէ իր ծոցին իմ **«մենձ գլուխը»**, ինչպէս կը կանչէն զիս դրացիները, տարեկիցներս, հին խաթունները երբ սափորը կը դնեն իմ ձեռքը, **«աղբիւր թռելու»** ջուր բերելու, հաւանաբար չհասկնալով ցից ու գոնչէն կրծուած այդ բարձունքը, նիհար ուսերուս վրան այնքան անտեղի եւ օտարոտի:

Ամբողջ այդ երգի ընթացքին, կրակը չի դադրիր իմ մէջ: Կոտրած է իմ հոգին: Այս տարի ալ կոնակս պիտի չմտնէ նոր լաթ, ոտքերուս՝ կօշիկ, քանի որ բերան չկրցայ բանալ, ամէնուն նման:

Մի հարցնէք, ձմեռ գիշերուան այդ արարողութեան մնացեալ մասէն: Հաւանաբար ըրի միւս տղոց նման որոնք կը քնանան, իրենց մօր գրկին:

Բայց, ներեցէք ինծի որ, այդ օրէն կէս դար յետոյ հարցնեմ – Ինչո՞ւ այդ «մայր սուրբը» այսքան կանուխէն ինծի արժէր իմ առաջին արցունքը, հոգիի գիծէն:

\*

\* \*

Նորէն մեր ժամը: Տարիներ ետքը:

Տաղաւար: Բայց սե՛ւ:

Խաղող չենք օրհնած, **«գեղէն դուրս չելլալ»** արգելքին համար: Մեր այգիները կը նային թուրքերու գեղերուն ուր «արին» կը պատրաստեն:

Աստուածածնի իրիկուան ժամերգութիւն: Ուրիշ տարիներ, պարզուկ բան էր ան. ծեր կնիկներով, ծանօթ կոյրերով, ժամուն հաւատարիմ քանի մը կոյս-աղջիկներով: Այդ օրը՝ ծո՛վ էր բազմութիւնը:

Մեծ տղայ մըն էմ:

Գիտեմ որ մեզի շատ մօտիկ Ստամպոլին մէջ իմ եղբայրներուն ու հայրերուն արիւնը կը վազէ ջուրի պէս, **«վասն ծովացեալ մեղաց մերոց»**, ինչպէս սորվեր է պատկերել մեր տէրտէրը, հաւանաբար մեր հին պատմիչներուն պէս, ուր ես ալ կարդացեր էմ այդ բառերը: Բայց չեմ ալ հասկցած աղէկ մը: Ո՞րն աւելի մեղք էր: Մորթե՞լը թէ մորթուիլը: Տղո՞ւ հարցում, որուն պատասխանը չեն տար տակաւին հիմա, իմ ճերմակ մազերը:

Գիտեմ թէ մեր այգիներուն վարօքը, թուրքերու գեղերուն մէջ, մարդիկ, ապահովաբար արդարնէ՛ր, դանակ, տապար, կացին կը սրցնեն մզկիթներու հրապարակին ու մատաղ ձիթենիներու վրայ, փորձը կընեն թելեր թոցնելու, գլուխ կտրելու, փորեր ճեղքելու:

Գիտեմ թէ մեր գեղը հանող ճամբաներուն վրայ, սեւազ-գետտ մարդոց խումբեր կերթան ու կուգան: Ու բլուրէ բլուր

փողերուն կարմիր, արինտոտ ձայնը, ծիրանի գօտիի մը պէս, կամար կը կապէ:

Ու գիտենք որ անոնց ետեւէն, անոնց վրայէ՛ն մեր բարի, արդար, օրը հինգ աղօթքը երբեք զանց չըրած դրացիները, մութին թելերով ճամբայ կը բանան, գեղ բարձրանալու, մարդ կըտըրտելու:

Աստուածածնի Չորեքշաբթի գիշերն է որ կը սկսի:

Մեր ժա՛մը, «**աւուրանց դատաստանի**»:

Նաւը՝ ահագին ժամուն, գոյգ պահարանները, բակերը, պարտեզները, երկու դպրոցները լեցուեր, յորդեր էին շատոնց: Բոլորն ալ կիներ, հարսներ, մանուկներ: Այրերը, մեծերը, երիտասարդները տուներուն ներսը, իրենց կացիներուն, բահերուն գլխուն:

Ու միտքս կուգայ Ծնունդի Տօնին ոսկի գիշերը, ինչպէս պատմեցի: Պակաս է մամաս, քաղաքը, գործին: Իր եռացող ջուրի գուռին վրայ, ցորեկը, անիկա տեսա՞ւ իր ձագուկը, հեռու գեղին մէջ, որ կը պատրաստուի «**Մա՛յր սուրբ**» երգելու:

Ամառնային շոգ է իրկունը: Բայց անշնչելի՛ նոր բանով մը, զարմանալի որքան ահաւոր: Չարաշուք, չարագուշակ հոտ մըն է ատիկա, գեղին մէջ, իր պատճառած մահերովը մեծ սարսափի տէր: Տարին քանի հատ պզտիկ կը թաղենք, ածխացած անկէ, անզգուշ մօր մը սխալին համար:

Ու հոտը կը պտտի, կը սաւառնի մեր վրայ: Կը զգանք, իրարու փակած միսերուն վրայ, քրտինքի մը պէս որ կսկիծ կուտայ: Բոլոր հարսները, անխտիր, տրտմութեամբ մը՝ զոր այսօր միայն կը հասկնամ, կը մտնեն պահարան: Շարքով՝ թիթեղները «**վառող ջուրին**», ինչպէս կըսեն Թուրքերը, կը սպասեն մեզի: Հանուած են ժամուն բոլոր ըմպանակները, սկիհները, կոնքերը: Շատեր մէյմէկ բաժակ, զգուշութեամբ, կը տանին իրենց հետ: Ու ժամուն գաւթին բացուած են բերանները ձեթի մեծ գուբերուն, որոնց մէջ իյնող մը կը խեղդուի:

Կիները իրենց մազերը, զգեստները, կուրծքերը կը շփեն քարիւղով, ինչպէս ձեթով: Ո՛չ որ՝ որ դժկամակի:

Տղաքս, մաքրուած, հաղորդուած, կը հսկենք պզտիկներուն: Խորաններու առջին ութը քահանայ կէսօրէն ի վեր, կը հաղորդեն բոլոր ժողովուրդը: Ամէն հասուկ աղջիկ, ամէն նոր հարս իրաւունք ունի կծիկ մը բամպակի եւ գաւաթ մը քարիւղի:

Վա՞ իս:

Հիմա չեմ կրնար ճշդել թէ ինչ կը զգայի այդ ահաւոր իրկունը երբ քարիւղին բարակ այրուցքը, քրտինքիս ու արցունքիս մէջէն կը գտնէր իմ երեսները: Ինծի այնպէս կուզար որ «կրակին շապիկը» հագած, արդէն ճամբայ ենք, այս բոլորը միասին, դէպի Աստուծոյ արքայութիւնը: Երկինքի ճամբո վ: Ի՛նչ գիտնայի, այդ օրերուն, թէ պիտի դրուէր այդ ճամբան, իմ առջեւ, աւելի իրաւ:

Տէրտէրները աւարտած են իրենց պաշտօնը:

Զուսպ, դաժան, ծանր լռութիւն:

Ծծկէր մանուկներէն գատ ոչ ոք որ բերանը բանայ:

– Հա՛ յր մեր որ յերկինս ես...

Քանի մը հագարը անցնող այդ բազմութիւնը քար կը կտրի: Ու «խոնարհեցո»: **Մեսեդին:**

Արեւը մեռած է արեւմուտքէն ալ անդին: Պատուհանները սեւ պատանքի պէս: Երկու կանթեղ մէկը գաւիթէն, միւսը աւագ խորանէն: Ու զոյգ մոմերը որոնք ժամագիրքին երկու քովերը կը հսկեն:

.....

– Մա՛ յր սուրբ, սքանչելի լուսոյն...

Հիմա ջուրի պէս գոց գիտեմ քարոզը:

Ու կը թաւայի սրբազան աղօթքը, նորէն բերանովը ամբողջ ժողովուրդին: Քարիւղին հոտը տակաւ կը թանձրանայ, կը փակչի մեր շնչած օդին ու կ'այրէ մեր քիթը, աչքերը, ձայնը: Կիները կը պարպեն իրենց մազերուն՝ պահեստի բաժակները: Բամպակին կծիկները կը պտտին պզտիկներուն մէջ, ձեռքէ ձեռք: Պահ ընդ պահ, մեզի կը թուի լսել շեփորներուն արձագանգը, փշրուող սուրի մը շեղբերուն նման:

Բայց աղօթքը, խոր, տարբեր, իրաւ, պահէն ալ վեր, մեզմէ ալ վեր, որ կը յորդի, կը փրփրի: Որ մեր մարմինէն փրթած, բայց

անկէ ազատ, անկէ մաքուր, անկէ թեթեւ պոռթկում մըն է դէպի վեր: Մեծերը ու պզտիկները առնուած են այդ «ալիքին» մէջ:

– **Ձի լռեցիին պատերազմունք,**

**Դադարեցիին յարձակմունք թշնամեաց,**

**Տնկեցի սէր եւ արդարութիւն ի յերկրի...**

**Աղաչեմք...**

Ու չկար մէկը, այդ կնիկներուն մէջ որ չհասկնար սա բառերով ուզուածը, ինքը իրեն, առանց մէկու մը միջնորդութեան ու առանց այբը ճանչնալու մեր գիրերէն:

Շեփո՛րը, իր երկաթին մէջէն, իբր արձագանգ այս պաղատանքին: Հեռուներէ՛ն:

Այն ստեն հարցուցի ես ինձի.

– Ի՞նչ է մեղքը սա կնիկներուն, սա պզտիկներուն:

Ո՛չ ոք, այդ պահուն, որ պատասխան տար:

Ժամուն գանձատունը թաղուելու գացած մեր հին պատմիչները ներկայացան միտքիս, երբ կը փռէին մեր մեղքերը, մեր առջին, բացատրելու համար անհուն շինաստանին սպառսպուռ կործանումը, արարքներուն իբր քաւութիւն մեր իշխաններուն, թագաւորներուն: Հո՞ւս: Իմ առջեւ էր իմ ժողովուրդը: Որ օտարին յարդի շիւղին իսկ աչքը չունէր, մորթուելու արժան դառնալու համար: Ես կը ճանչնամ բոլորը, հօրով ու մօրով: Այդ մարդերը իրենց արտին ու պարտեզին, օրուայ հացին ու զաւակներուն հոգէն անդին ուրիշ մտածում, ախորժակ չունեցան: Անոնք սա աշխարհէն մէկ բան միայն հասկցան, – աշխատանքն էր ատիկա: Ու չունեցան պարտք՝ իրենց հոգիէն անդին: Բանեցան: Դատեցան որպէսզի տան թագաւորին, բռնաւորին, վաշխատուին: Տուին անոր որ ուզեց: Ու տուին իրենց չունեցածէն: Անոնցմէ շատերուն տունը շաբաթներով հացը պակսեցաւ: Բայց սեղան չեկաւ անարդար, ամբարիշտ վաստակը, որ քրտինքի ճամբով չհասներ իրենց:

Ու կը հարցնեմ

– Ի՞նչ ենք ըրած, այսպէս այրուելու համար ողջ ողջ:

Ու պատասխանը կուտայ աղօթքը

– «Ընդունիլ յարքայութիւն երկնից», որ բառ մը չէ երբ կը սաւառնի իբր ձայնի շղարշ մը մեր վերեւ: Մեզի կը թուի տեսնել այդ պատռուիլը երկինքներուն, կասկապուտ ապարանքի մը պատերուն նման, երկուքի: Աստուծոյ մա՛յրը ու զաւակը գիրկին: Մէկը կըսէ: Ուրիշներ կը կրկնեն: Կան որ կը տեսնեն: Ուրիշներ՝ որ չեն տեսած: Բայց բոլորին համար ալ՝ իրական այդ երկինքը: Մեր պատմութիւնն էր որ կուտար մեզի այդ վստահութիւնը:

Քարոզը աւարտած է:

Լռութիւնը կրկին, որ քար կը դառնայ, մեր հոգիներուն պէս:

Չեմ պատմեր հիմա թէ ինչպէս լուսցուցինք այդ գիշերը:

\*

\* \*

Առտու կանուխ, արեւէն առաջ, կիները, իւրով թաթ-խրւած կոտորուիւն տուն: Ամէն մարդ գլուխն է իր ընտանիքին: Ես մէկը չունիմ:

Կը մտնեմ թելը կոյր աղջկան որ տեսեր էր Աստուծոյ մայրը, տուն առաջնորդելու: Դրացիներ ենք: «Օաղիկ»էն առաջ, լոյսի պէս աղուոր էին անոր աչքերը: Կը հարցնեմ.

– Պտլի՞ կ էր:

– Ո՞վ:

– Մայր սուրբը:

– Ձեռքը դէմ բերաւ:

Չեմ կասկածիր աստոր: Ես ալ պոռացեր էի անոր.

– «Աղաչեա վասն մեր զառ ի քէն զմարմնացեալն Աստուած...»

Բայց կը կրկնեմ

– «Կը խանձրէ՞ր...»

Չի պատասխաներ:

Կը յանձնեմ զայն անդամալոյծ իր մեծ մօրը ու գլուխս առած կը քաշուիմ այգիները:

Հարսնությունն է անոնց: Չեմ խօսիր թե ինչ զգացումներ կը պտտին իմ մարմինին ամէն մէկ մասին:

Նայուածքիս առջեւն է վայրանկարը, արքայութեան չափ աղուոր. գործը՝ իմ պապերուս: Որոնք շիներ են սա ձիթաստանները, թթաստանները, այգեստանները, ճամբաները, նետեր՝ մեծ լեռան ոտքին, տուներուն ժամ տելող կամարը ու ծաղկեցուցեր սա ամայքները:

Անշուշտ, այդ ամէնքը զօրաւոր մեղքե՛ր որպէսզի մորթուէին հեղինակները:

Աստուծոյ մայրը այդ տարին միջամտող, ինչո՞ւ մատը չշարժեց քսան տարի վերջ, երբ նոյն այդ օրերուն, իր տօնին մօտիկ, այդ ժամը նորէն լեցուեցաւ նոյն պայմաններու մէջ, նոյն բազմութիւնով: Հաւանաբար նորէն ուզեցին իր «**բարեխօսութիւնը**» ու սպասեցին:

Յուսահատ, անոնք պիտի ձգէին ամէն բան, իյնալու համար անապատներու ընդերքը մինչեւ:

(Շարունակելի)

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, ԺԳ. ՏԱՐԻ, ԹԻԻ 5, ՄԱՅԻՍ, 1939, էջ 200–204)

#### Ծանօթ. խմբագիրի

«Տպուած է *Գայսերական յաղթերգութիւն* հատորին մէջ, իբրեւ «Երբ պզտիկ են» շարքին վերջին կտորը: Այս շարքին միւս «վկայութիւններ»ը չեն մտած հատորի մէջ» (Մարկ Նշանեան, *Յակոբ Օշականի մատենագիտութիւն*, Լոս Անճելըս, 1999, էջ 65):

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

-----

ՄԱՅՐ ՍՈՒՐԲ...

Ես գրեմ՝ քառսուն

Դուք դրեք՝ յիսուն

Տարիներ վերջը, վերը պատմուած Ծնունդ Գիշերէն ու  
**Աստուածածինէն:**

Հիմա

Մեր գեղին ոսկի ժամուն տեղ, տաղաւար է վրաս գոհար  
տուփի պէս գողտրիկ, անուշիկ տաճարը Սրբոց Յակոբեանց  
դարաւոր Գահուն: Ու անոր կամարներուն տակ միամիտ ցաւը,  
ահաւոր տագնապը իմ մանկութեան, պատանութեան փոխա-  
րինուեր են ուրիշ բաներով:

«Մայր Սուրբ»ը հոս ալ բառերու հրդեհ, տակն իմ  
ուղեղին, որուն պարիսպները դեռ կը թնդան հարուածին  
ներքելը ճակատագրին:

Երգը հնոցէ մը փրթող գալար մը ամպ է իմ աչքերուն  
համար: Անհուն մէկ ալիք՝ որ կտրէր իմ աչքերը, ձգէր զիս  
առջին, դէպի հեռաւոր արքայութիւն մը:

Հազիւ ուժ, ատեն՝ սակայն, սկսող **այլայլումին** առջեւ,  
ինքզինքս պահարան նետելու: Ետեւէս հրուած աղօթքին  
սինովը, որ ոչ վախ է ոչ ալ զրկանք: Զայն կը զգամ իբր կարմիր  
պողոտայ դէպի արձակութիւններ, իրերանցիկ անհուններ  
որոնք մօտ էին այնքան, ու այնքան հեռու: Ատոնց վրայ  
մտածումն իսկ սարսուռ է հիմա իմ թոյլ մարմինին. «Մայր  
Սուրբ»ը նման է դուռին որ բացուեցաւ իմ առջեւս, ամիս կայ,  
եղերական հանդէսի մը մէջ (գոր պատմեր եմ ուրիշ տեղ մը)  
դէպի արշաւ մը, տարօրինակ Նաւորդի մը հետ, խեղճ խեցիին  
վրայ իմ մարմինին, սեւ դրօշ մը առագաստ ըրած, անհուններ  
կտրելով իրարմէ արագ...:

\*  
\* \*

Ու ահա, Հովն է, կանցնի:

Պահարանը կը մսի անոր շունչին մէջ: Իմ շունչն ալ նեղուած: Հինցած ամանէ մը թափուող գինիին նման: Ժամէն պահարան՝ անհուն է ճամբան իմ անիրաւ ոտքերուն համար: Զգայութիւններու այլայլումը տակաւ կ'ամրանայ, ըլլալու համար ստուերայնութիւն: Նորէն թեթեւ, սառ քրտինքը որ ամիս առաջ, տագնապին ատեն մահուան ընդելոյց շապիկն էր ըսես: Նոյն կախարդ մատներուն տակ, ան ինքզինքը կը հիւսէ բիրեղ առ բիրեղ ու կը փաթթէ զիս: Պտո՛յտ: Որ կը դառնայ իմ մէջ ու ինձմէ դուրս: Մութը գոյն գոյն իր ալիքները կը թաւալէ: Ու ասոնց ամէն մէկ քուլան ձեւ մը կուտայ շրջանակին, – նկար, կանթեղ, սաղաւարտ: Ու տեղը ուր նետեր եմ ինքզինքս, կը թռի կակուղ, քիչիկ մը գոգաւոր, կարծես խոյս տալու պատրաստ իմ տակէն:

Այս ամէնը այնքան եղաւ որքան **Մայր Սուրբը** որ առանձին յաղթանակ է ինծի համար:

Նոր տագնա՞պ մը:

– Ո՛վ գիտէ:

Տեղ, օր, ժամանակ չունի Ան որուն գերագոյն պարտքն է յանձնուած ջնջել Տեղն ու ժամանակը, գիրքերուն Միջոցն ու Տեւողութիւնը:

Գլխուս մէջ ծղրիթին նուագը, յաւիտեանի մը համար յարդարուած: Բզզիւնը՝ պրկուած լարին որ կը տառապի ինքզինքը խորտակել չկրնալուն:

Ու միջոցը կ'օրօրուի անհուն զանգակի մը նման:

Հո՞վը:

Կը պակսի նաւորդը:

Կը սպասեմ:

Որքան, չեմ յիշեր: Ինծի կուգայ թէ կար այդ սպասումը կէս յաւիտեան մը գոնէ:

Ոչ որ:

\*  
\* \*

Վարդապե՛տ մը:

Տարիքէն նուաճուած, զգուած, հալումաշ վարդապետ մը:  
Կը տեսնեմ, կը լսեմ ամէնուն նման եւ ինծի նման:

Դէմս է վարդապետը: Մկրտութեան աւազանի սաքուին նստեր է անիկա: Բաց, ուրիշ ճամբայ այդ աւազանն ալ, ուրկէ կը ծնին մեր տղաքը սա սուտ, փուտ աշխարհին: Ան ալ հիւանդ է, անունը անյայտ ցաւէն որ գոյութիւն չունի բժիշկի տետրին մէջ բայց հիւանդին մէջ իրաւ է ու խոր: Որ յիսունէն վերջ, խուլ որոտում է մեր ականջն ի վար, Անդիին ճամբան կարծես պեղելով: Երբեմն՝ հանդէս պղտոր կտաւի, տարտամ աստղերու, ճերմակ ճանճերու մեր աչքի դաշտին: Սանկ բեռ՝ անորոշ, մեր կողերն ի վար, մեր կողերն ի վեր: Կուրծքի պատնէշին: Ու սրտի տունին: Յիսունէն յետոյ:

– Ինչո՞ւ դեղնեցար:

Հարցնողն է մեղրամոմ վարդապետը որուն աչքին ճերմակը դեղնուցի է փոխուեր:

Չեմ պատասխաներ, ձայնէս վախնալուս:

Պահարանին մէկ հատիկ պատուհանէն տմոյն լոյսը չի կրնար **քանալ**, նեարդաւորել անոր մօրուքը, կրակէն խանձած բուրդի գալարքներով, տոտոզուած, արմատ նետած անոր երեսներուն ակօսներն ի վար: Քիչիկ մը ուռած կոպերուն ներքեւ արիւնէն պարպուած անոր աչքերը չեն ուզեր նայուածք ըլլալ, շատ շուտ յոգնելնուն: Գիտեմ ատիկա անձիս վրայով: Կուգայ օրը որ կը դողանք կաթիլին իսկ վրայ մեր ուժերուն ու չենք նայիր ուրիշի, քանի մը բոպէ աւելի կենալ կրնալու համար սիրելի գիծերու դիմաց երբ **գիտենք** ձեռքը որ լարը կ'արձակէ Մեծ Վարագոյրին:

– Մա յը սուրբ...:

Խունկի գոյն ու համ ունին բառերը վարդապետին: Ինչո՞ւ, քիչ մը նահանջով, անիկա կը կրկնէ դուրսի աղօթքը:

\*  
\* \*

Ես չըսի ձեզի թե Հարուածէն ասդին առջի ելլելս է տունէն:

.....

Հո՛վը: Մեծ, ամբողջ:

Դէմի պգտիկ կանթեղին տակ, պատին մէջ հիւսուած նկարէ մը մարդ մը կ'անջատուի: Մեւ, խոր, իրաւ աչուրներով որոնք Ս. Յակոբայ նկարներուն մէջ նայուածքի ոճ մը կըլլան:

Սկսած է:

...Ուրիշ պատի մը երեսին շապիկները տղոց կ'ուռնան. առանց գլուխի:

Անոնց վերելի մեծադիր նկարէն Քրիստոսը քակած է իր բազուկները: Չեմ զարմանար որ արին չի կաթիր գամերուն փոսէն: Ու խաչի ոտքին, գա՛նկը որ կը բարձրանայ բայց չըլլար մարմին ու կը նայի առանց աչքերու: Մէջս ոչ մէկ վախ: Հանդարտ ու համակերպուն: Նոյնիսկ կը մտածեմ անոնց որոնց գլուխները զատուեցան իրենց վիզերէն, չգործուած մեղքերու իբրեւ հատուցում: Գանկին նայուածքը օտար չէ ինծի: Օրեր ունիմ ետիս ուր ինծի տրուեցաւ կենալ իրենց իրանները փնտռող գլուխներու դիմաց:

Ոտքի, կնիկները: Գլխիկոր ու զարհուրած: Նման այն հազար հազարներուն, կը մտածեմ ես որոնց ծունկերուն դրին փրցուած գլուխները իրենց սիրականներուն, երիկ, զաւակ, եղբայր...: Ու ակամայ, կը հարցնեմ ես ինծի

– Կը տեսնե՞ս ասոնք այդ խեղճ կնիկը,

որ, պատկերին մէջ իր երեսնամենի միածին որդին գիտէ իր գլխուն վերել, բազուկները պինդ փայտ իր պատանքին:

Ու անոր կապուտիկ վտաւատը փոխուեր է ճերմակի, մետաքսի հովով: Ու թարմացեր, բացուեր է անոր դէմքը, մեր պարտէզներու շուշանին նման: Երկու ձեռքերը իրարու հիւսած ձիթենիի ճիւղի մը ցողունին: Ու ան նման է այն աղջնակին գոր, յիսուն տարի առաջ, ցոյց կուտայինք իրարու «Քրիստո-

**նէական»** անունով գիրքի մը մէջէն, ու կըսէինք, զմայլուն, խռոված, մենք ալ չգիտնալով ինչուն

– Ինչ պըտըլիկ մայր...

նայելով մեզմէ մէկուն, խոպոպներուն՝ մանտրտիկ ոսկի, մազի աջ խազին՝ արծաթ համայիլ: Բարա՛կ: Մատղշուկ: Ան տարին մեր թաղը բերուած հարսներուն նման, որոնց քողքը, հարսանեկան զարդերը բան մը ունէին գիրքէն վերցուած: Մեզմէ ամենէն մեծն իսկ չէր կրնար քակել գիրերը, հասկնալու համար լման: Այբուբենը մեր գեղը կ'անուանուէր **երկաթէ լէպլէպի**: Զայն ծամելու համար մեր ծնօտները պողպատ դառնալու էին, ժամանակի սալին վրայ: Մեզմէ մէկը, աղջիկ մը, կարկուտի պէս արցունք կը թափէր: Մենք գիտէինք ու չէինք գիտէր, թէ ինչու կուլար պտըլիկ աղջիկը:

Հարուածէն ասդին, տեւողութիւնը իմ մէջ ենթակայ է այս քայքայումներուն:

Կը սպասեմ որ բացուի երկինքը: Իջնէ ճառագայթին առագաստովը Աւետումին անուշիկ հրեշտակը, ա՛ն՝ որ սուր չունի Գաբրիէլին նման, այլ ծաղիկ մը մենձ, երկնի դաշտերէն քաղուած անպատճառ: Ու ըսէ այդ աղջնակին ինչ որ մեծերէն սորված մեր մանուկ բերանները կը պատմէին իրարու

– Զուակ մը պիտի ծնիս,

առանց հասկնալու: Ամէն տարի նոր-հարսներուն հետ Երկինքէն մեզի **պիլիկներ** կուգային, բայց չէինք տեսած մէկ հատիկ հրեշտակ:

Կը սպասեմ, մտովի կրկնելով հրեշտակին բառերը: Ու տարօրինակը ան է որ իմ ճերմակ մազերուս տակ ինչ որ փռուած է հիմա, ուրիշ պատկեր է, ուրիշ աշխարհ մը, իրաւ, ծանր, արիւնոտ: Նոյն ատեն ես մարդն եմ այդ երկու աշխարհներուն, հաւասար հաւատարմութեամբ: Կէս դա ր, երկու եզրերուն մէջտեղը: Ու անհուն բեկումով գիտեմ որ օրերու այդ անհուն շեղջէն ես չըրի հանդիպումը այն մէկ հատիկին, որ պատկերէն գամուած մնացեր էր իմ մանուկի ուղեղիս ետին: Անխորտակելի, անայլայլելի: Օրը, որ բերէր **խաղաղութիւն** սա մեր ապրած աշխարհին վրայ: Զգտայ օրը:

Ու պարտաւոր եմ մեկնիլ այս աշխարհէն, կարօտը սրտիս շատ մը բաներու, ամենէն աւելի խաղաղ այդ օրուան ուր իմ ժողովուրդը իր հողին վրայ ինքզինքը օտար չկարծէր, իր հացին համար վախը չունենար, իր զաւկըներուն արեւին խնդար, առանց սարսափի....:

Պատկերին վրայ, կապոյտ վտաւատով աղջիկը կը քալէր. բայց ուր է՝ հոն է: Ձեռքի ճիւղը փոխուեր է անտառի, մեր գեղը քողքող ձիթենիներուն: Ու արեւ, երկինքին գուբէն յորդած հին գինի: Ու ձիւն, աղքատին ամբարները լեցնող ալիւր: Մեր հեքեաթները այսպէս կը պատկերեն այդ առատ նուէրները երկինքին, ու բան մը կը ըսեն հարկաւ, բոլոր անոնց որոնք սանկ քիչէն տասնըհինգ տարի, ամէն ձմեռի ձիւն կոխկռտեցին կօշիկ չունենալուն. շաբաթը երեք գիշեր անօթի անկողին մտան...: Իմ մանկութիւնն է, ձիւնին վրայէն, կասկապուտ եղած, երբեմն արիւնած իմ տոտիկներով, գեղէն դէպի վար, դէպի **հասկաքաղ**: Գեղը կը նստի ձիթապտուղի հսկայ տակառներուն վրայ: Ու մեր բունին մէջ հատիկ մը չի կայ: Ես ստիպուած եմ ձիթենիի պարտէզներուն մէջ օրը լման թափառիլ, հալածել թռչունը, անոր բերնէն խլելու համար մոռցուած հատիկ մը: Ձեթի այդ անտառները, ձմռան մէջ տաքուկ, քանի որ ձիւնը կը մեռնի հոն իջնալուն պէս: Ձեթի այդ անտառները, ուր աւելի ետքը իմ պատանութիւնը, երիտասարդութիւնը հասկցեր էր խորունկ գեղեցկութիւններ, – ծառերուն ձայնը, հծծիւնն ու սերը, ծաղիկներուն անուշութիւնն ու դիւրաբեկ երջանկութիւնը, այդպէս ենթակայ հազար փորձանքի, բայց միշտ աննահանջ, իմ ժողովուրդին պէս: Հողին ալ ձայնը որ աղօթք էր խոր, բանուորին շրթներէն երբ բերնի պատառը վստահած այդ ամայքներուն, խաչը հանելով, բրիչը ուսին կը դառնար իր տունը: Օրհնէք ու անէծք: Ու մահ ու արիւն: Չեմ կրնար մոռնալ որ այդ ծառերու բունին իրենց պորտերէն զամուած մնացին, լման շաբաթ մը, որպէսզի մեռնին, իմ ծանօթներէն քանի մը տղայ, իրենց տունին մեղքը քաւելու համար:

.....  
Խոր, ծանր յոգնութիւն:

Կը սպասեմ որ սա պահարանին յատակը ելլէ վեր, կամարը իջնէ վար, որպէսզի ամբողջանայ պատկերը ամիս առաջուան, արաբական գիւղի մը հիւանդանոցին մէջ, երբ ողջ գիշեր մը կախուած մնացի երկու աշխարհներու սահմանին գիծին, պլլուած մահճակալի երկաթներուն չհոսելու համար պարապին ծոցը, որ բառ մը չէ հոս: Գիտցողը միայն գիտէ:

Թարթիչի երագ մը կաւրէ այս տեսիլքներուն ամբողջ կտաւը:

Երգը կը պոռա՜յ

– Մա՛յր սուրբ...

ըլլար ժամը ամբողջ.

– Մա՛յր սուրբ:

Կանդրաձայնէ դեղին վարդապետը, միշտ նահանջի գիծէն:

Կուղպ են իմ շրթները:

Բայց իմ հոգին գիտեմ Երգին մէջ: Ջերմ, իրաւ, պայծառ: Կը նրբանամ նոյնիսկ հաստատելու համար որ երբեմն երգ մը իր մասերուն մէջ աւելի ամբողջ է: Բառ մը, եղանակի դարձուածք մը, պրկագին նետուած շեշտ մը աւելի բան կըսեն: Ու լման եկեղեցին, միակտուր, կը թրթռայ իմաստին առջեւ Երգին բառերով ուզուած **բարիքին**, չարիքին գրուած ու անոր գերի իմ ժողովուրդի կեանքին մէջ այնքան հագուադէպ: Երգը երբեմն կամք, ուժ մըն է, դեղին, հող հոտող վարդապետին, աղուամագի իսկ չհասած տիրացու տղուն որքան ուրիշ ամպի մը մէջ մռայլամած պատրիարքին: Բոլորը կը գորովին, կը խառնուին ձայնին պատգամին:

Ընկրկած է իմ մէջ հիւանդը: Կախարդ ձեռք մը կ'առնէ ուսերէս իմ բոլոր բեռները, միտքէն ու սրտէն, իմ տագնապներուն ամբաւ կարաւանը ու զիս կընէ հաշտ: Երգին **ցնծութի՛ւնը**, խաղաղութեան պատրա՛նքը: Ինչ գիտնամ: Աչքերս գտած են իրենց կշիռը: Պահարանին բոլոր իրերը դարձած իրենց օրինաւոր գիծերուն: Քրիստոսը նորէն կախեր է ինքզինք, իր խաչին, հաւանաբար ատկէ լաւ տեղ մը չունենալուն իր աստուածութեան, սա մեր աշխարհին վրայ:

Կիները՝ ծունկի: Գանկը կը նայի խաչին յատակին: Ձիթենիով աղջիկը մա՛յրն է որուն զաւակն է գլխուն վերեւ, խաչի թեւերուն լարուած պատարագ:

.....

Օրն է Աւետում:

Եկեր եմ, վտանգի գինով – բժիշկները արգիլած էին ինծի դուրս ելլել – հեղ մըն ալ տեսնելու բաներ որոնք, հիւանդի մահիճիս շուրջը այնքան յուզեցին: Երկինքին ու երկրին մէջտեղ: Այդ ժամերուն, ինծի դարձուեցան մեծ մեծ կտորներ իմ մանկութենէն, պատանութենէն: Դուք չէք գիտեր թէ ես «դարձող» մըն եմ, ինչպէս կըսէին գեղին հին կնիկները, երբ հոգեւարքի մը վրայ իրենց վճիռը աչքով, պոկունքով, քիթով արձակելէ վերջ, գրեթէ անվերաքննելի, կը հերքուէին ալ երբքմն... պատկոզէն որ օր մը երկուք վերջը՝ գերեզմանին տեղ կը շտկեր այգին, բրիչը ուսին: Ու դուք չէք գիտեր որ այդ օրէն ասդին, ամիս կայ ու աւելի կայ, հաստատ աշխարհի տեղ ես կ'ապրիմ լոյծ մակարդակի վրայ. իրենց օրէնքներուն մէջ խախտած, անկարելի ձեւերու ետին. խորը հեծքերու, ծոցը ձայներու որոնք որոշ աղբիւրը չունին իրենց մեկնումին, բայց ջերմ են, իրաւ ու պայծառ, դուրսէն գմբէթուող Մայր Սուրբին նման: Ու, իլեակ, կ'ապրիմ շարժումներու հետ որոնք ալիքներ են անձանօթ ծովէն ու զիս կընեն հաշտ, ընտանի, Անդենին իմաստին: Զգայութիւն, զգացում, մտածում պարուրուած են այդ երկնայնութեամբ: Տեսակ մը մշուշ որ միտք մը ունենար: Ու ամէն ինչ ցաւ է ինծի, բարակ, անուշ, լուսնադօտ, լուսապսակ, – խօսիլը, նայիլը, մտածելը, ուզելը: Ու դոնդող բանին մէջ որ իմ մարմինն է, իմ սիրտը նման է քերթողին սարդին որ ինքզինքը կ'ուտէ, գերեզման չիջած: Երէկ, առջի օր, անցած շաբթուն: Այսպէս դէպի ետ, մինչեւ Հարուածին րոպէն:

Հիմա սրբուած է ինձմէ այդ մարդը:

Աւելի՞ մօտ երկինքին:

– Չեմ գիտեր:

Կեանքի՞ն

– Չեմ մտածած թե կայ ատանկ բան մը, քանի որ բոլորն է ամենէն իրական բանը մեր գիտցածներէն:

Պահարանին անգայտ մութին մէջ, մահուան որդեգիր վարդապետին նման որ երգին մէջէն իր **աւերածը** կոսկեզօծէ, կը թարմանայ, երգին թելերովը ես կը տեղաւորուիմ **իմ աշխարհիս մէջ**, հաստատ ու ամուր, աշխարհը թուղթերուն:

Հող նստողը, ինձմէ, այդ բոլորէն, դատողն է, ամբարիշտ, դաժան, քերթուածի մը դէմ:

\*

\* \*

Հիմա չեմ տառապիր կիզանուտ եղանակէն որով շղարշուած այդ աղօթքին բառերը, պատմեցի ձեզի, մատուցուեցան իմ մանկութեան: Շատոնց սորված եմ որ տղու գրկանքները – կօշիկի, լաթի, հացի, արդար եղի կարօտ – ընդհանուր են սա Աստուծոյ բարի արեւին տակ:

Հիմա, աղօթքին բառերէն կը նետեմ մէկդի շատ ու շատ փաթաթներ, ետքէն միտք բերուած իմաստներ, ուժեր: – Եղանակը ու իր կրակը: Լեզուական զարդարանքն ու հնչական շնորհները: Հիմա այդ աղօթքէն կ'ուզեմ ուրիշ բան: Կ'ուզեմ աւելին: Հիմա պահանջս՝ **այդ ամէնուն տակը պտտող հոգին**: Ան հոգի՛ն որ թերեւս հազար մը տարի առաջ, դէմս պուտ պուտ մեռնող սա վարդապետին նման խնկացած շրթներուն ճամբովը ինքզինքը տուած էր սա մեր աշխարհին:

Կը լրջանամ:

Սա դժոխքին մէջ, զիս այսքան խռովելու կարող այդ աղօթքը պարտի ըլլալ աւելի բան մը քան բերանի ընթացիկ վկայութիւն: Անիկա, կը հաւատամ, մէկ պահն է իմ ժողովուրդին: Ու արուեստը ուրիշ բան չէ եթէ ոչ բիրեղացած պահ մը, ժամանակէն ու միջոցէն:

Որքան պիտի ուզէի որ այդ աղօթքին հեղինակը չըլլար մեր եկեղեցիին մեծ աստիճանաւորներէն, կաթողիկոս, եպիսկոպոս, սանկ «եռամեծ» քերթող, **փիղոսոփոս**, ինչպէս կը

գարդարեն մեր հին մատենագրութեան էջերը, իրենց սա վերադարձներով պատմուճանուած մեր գրող հայրապետները: Այլ ըլլար պարզուկ վերձանող, կենաց բանին անվճար քարոզ, մարդոց հոգիին ինքնամատոյց վարդապետ, պակաս **Աթենքէն, Պոլսէն, Աղեքսանդրիայէն** ու գիրքերու ծանր ալ պարապէն: Ըլլար մարդ, ամէն բանէ առաջ, ազա՛տ, Աթոռէն ու իր մշուշէն: Ըլլար բանաստեղծ, գեղջուկ ու բարի: Նայէր երկնքին, ինչպէս պարտքն է ընել մեր ամէնուն, որոշ տարիքէ մը վերջ: Բայց նայիլ նաեւ երկրին, գոր կընենք կեանքի առջի իսկ շրջանէն սկսած: Այդ բանաստեղծը զգար, եօթը կամարներէն անդին գեղեցկութիւնը մեծ, անշէջ կեանքին, բայց չհալածէր ատոր կարօտէն այն պուտ շնորհները որոնք արտի գորգ մը, ջուրի հայլի մը, տնակի մը բուխերիկը, ծառերուն մէջ կախ օրբան մը, գառնուկներու դաս մը ունին իրենց յայտարար, մեր լեռներէն ներս: Որուն մարմինին մէջ թրթռային, արձագանգէին, **շարպաթ** դառնային ձայները մեր հողերուն, մատաղութիւնը մեր աղբիւրներուն, խարտեաշ կրակը մեր հնձաններուն, եւ ոսկի, ամուր, քաղցր, ստեղծագործ ուժերը մեր ցորեններուն: ...Չըլլար խիստ դէմքը, սաղմոսասացը, **թանն իսկ քամոցող, հատանող** անապատականը, մորթէն կոնձած, աչքերը արին, մազէ իր զգեստը պտտցնելով իբրեւ ծիրանի...: Աւելի: Ըլլար անուշիկ երիտասարդ, թարմ, մատաղատունկ: Միտքով ալ աղուոր: Ասոր գիծովը վեր իր ժողովուրդէն, բայց սիրտովը՝ մօտիկ, հաւասար անոր: Կուզէի տակաւին, ըլլար քիչիկ մը զուարթ: Եղանակ գարնող, վին, բամբիռ ածող: Ու...

Կա՛յ այս տիպարը մեր հին մատենագրութեան մէջ:

– Չեմ կասկածիր: Թէեւ թուղթերը չորցուցած են այդ ամենէն կարելի արձագանգներ, ու չըլլայ անուն մը՝ տէ՛ր **Մայր Մուրք** քարոզին:

\*  
\* \*

Ի՞նչ կըսէ իր պարզուած ձեւին մէջ, մեր եկեղեցիին այդ անուշիկ, սրտառուչ, տեսակին մէջ գրեթէ առանձին գանձը:

Անոր եղանակին լայնքը, տաքութիւնը, համակող մարդկայնութիւնը, տրտում բայց թեւաւոր, զուարթ բարեխառնութիւնը, թելը, շօշափելի ըսուելու չափ թանձր ալիքը, մտածեր եմ յաճախ, թերեւս կուգան հեռու այն օրերէն, երբ մեր աստուածները աւելի մօտ կ'ապրէին մեզի, ու մեր ժողովուրդը դէռ չէր կորսնցուցած իր հողերուն զգայութիւնները: **«Ջրօրհնէքները», «Անդաստան»**ը, կարգ մը **«Մեծացուցե՛ք»**ներ, **«Հանգստեան կարգ»**ը, մեծ մասին մէջ, զգայութեանց սա վառ գոլովը իրարու կը կապուին ու կը յիշեցնեն, թերեւս դարերը, երբ այդ ամէնը, ջուրը, արտը, կինը, մահը անոր հոգիին մէջ մէկ էին իբր զգացում:

Բայց բառե՛րը.

**«Մայր սուրբ ըսքանչելի լուսոյն,**

**Որ գԱստուածն ամենայն յաւիտեանց**

**Յորովայնի քում կրեցեր...»**

Չեմ գիտեր, պէտք կա՞յ անհրաժեշտ շեշտը դնելու երեսան բերելու համար ընդարձակութիւնը, գեղեցկութիւնը, մարդկայնութիւնն ու աստուածայնութիւնը սա իրապէս սխրալի պատկերին որով ժողովուրդի աղջիկ մը կը կանչուի աղբիւրը դառնալու անպատում Լոյսին, Արեւներու Արեւին, Տիեզերքը ստեղծող Ուժին: Բայց ասկէ առաջ, թերեւս աւելորդ չէ յիշեցնել տեսութիւնը որուն համեմատ մեր սրբազան քերթողութեան մէջ աշխարհիկ տարրը ինքզինքը կը փոխակերպէ, բացատրելու համար զգացումներէն **մահուան չափ ուժովը** այսպէս երկնահանդերձ, անգայտագին ու անշրջագիծ: Մարդկային պարունակէ ուրիշ քանի մը հօր խռովքներ – մահը, երկինքը, դժոխքը – տալու համար մեր բանաստեղծութիւնը կախորժի Որդին ու Ս. Հոգին ունենալ իրեն ներշնչարան ու ապաստան: Խելքի, կամքի խորհրդանշանն էր: Բայց այն վիճակներուն համար որոնք հանդէս են սիրոյ, գութի, քաղցրութեան, մարդկային անխուսափելի տկարութեանց եւ ասոնց ջնջումին, մեր բանաստեղծութիւնը պիտի դիմէ **Աստուծոյ մօր**, այսինքն **մայր** տարրին: Մտածման, սլացքի, ապրումի հոյակապ յանդգնութիւններ, որոնք սա աղօթքին մէջ

պարզագոյն վիճակներու պէս կը դպին մեր միտքին ու սրտին, բառին որքան եղանակին զոյգ ակօսներովը: Աւելցուցէք Լոյսին ալ պաշտամունքը, որ կարգ մը աղօթքներու մէջ (**Արեւագալ, ձեռնադրութեանց մեծ աղօթքները**) ջրվեժն է իրարմէ հօր, իրարմէ հեռահաս փոխաբերութեանց: Քերթուածին մուտքէն ահա իմ առաջին տպաւորութիւններս:

Ու կը հրաւիրեմ ձեր մասնատր մտադրութիւնը տարօրինակ խտութեանը, տարողութեանը սա մտածումին որ իբր փայլակ, բառի մը մարմինով, նման անձեռագործ կամարի, կարճակուռի ժամանակն ի վար, մեծ Միջոցն ի վեր: Երկու բառով նուաճել յանդգնիլ

**«Ամենայն յաւիտեանները»** ու ասոնց **«Աստուածը»**

ու զանոնք պատասպարել կնոջ մը արգանդին՝ հաւատքի խոյանք մը չէ միայն, այլ հօր, շատ աւելի թանկ փաստ մը քերթողական ստեղծագործ երեւակայութեան: Ժամանակակից մեծ բանաստեղծ մը, Վ. Հիւկոն՝ եթէ կ'ուզէք, իբր մասնագէտ-ճարտարապետ մը անուանի հակադրութեանց, հաւանաբար պիտի սարսռար սա յանդգնութեան դիմաց: Բոլոր յաւիտեանները, որովայնի մը կամարով: Ու խորհիլ թէ մեր օրերուն ունինք թշուառութիւններ որոնք մեծնալ կը կարծեն արհամարհելով մանաւանդ միտքը մեր ժողովուրդին, ձրի, առանց կարդացած ըլլալու ասոնց արդիւնքները:

Քառեակին միւս կէտին մէջ

**«Եւ ցնծութիւն աշխարհի**

**Ծնար զբանն Աստուած...»**

այդ Բանը պիտի ծնի ոչ թէ, ինչպէս վարժուած ենք լսել, ամենէն առաջ, մեր մեղքերուն քաւութեան համար, այլ՝ որպէսզի ցնծայ մեր աշխարհը: Այսինքն բանի մը համար որ թերեւս երազն է մեր ամբողջ էութեան, մեր իմացականութենէն մինչեւ մեր ջուրերը: Կարօտը, պապակը ուրախութիւն ըսուած վիճակին ետեւէն: Կարօտը շէն սեղաններու, պարերու, երգերու: Ինչ գիտնամ: Որքան յարմար պիտի գար այս շրջանակին համար դէմքը գեղացի տէրտէրի մը, իր ցաւին մէջ ամրախարհիսի, բայց իր յոյսին մէջ աննահանջ, որպէսզի տասնըհինգ դար շարու-

նակեր մնալ այս ժողովուրդի գլխին, անհուն ծովուն առջեւ չարիքին ու սեւին ուժերուն, ու դարձեալ ծարաւն ունենար **բերկրանքին**: Այդ բանաստեղծը գիտէ թէ արեւին կաթիլը արեւի կաթիլ է:

Երկրորդ տունէն ես կը ծանրանամ **խաղաղութեան պատգամին**: Ան որ պիտի գայ այդ մօր արգանդէն, շատ բաներ ունի ընելիք: Կը հաւատանք ատոր մանաւանդ մենք որ շիտակ խոտ մը չտեսանք մեր հողերուն վրայ, թշնամիէն չկոխկոտուած: Բայց պիտի բերէ, **պիտի ընէ**

**«Խաղաղութիւն յերկինս եւ յերկրի»:**

Գիտենք որ երկիրը կը սպասէ խաղաղութեան: Բայց երկինքն է՞րը: Ինչէ՞ր կը տեսնէր արդեօք բանաստեղծը երբ, երկրաւոր խաղաղութեան երագ-պատկերէն անիկա կը սաւառնէր դէպ անայց ալքերը Միջոցին: Այցուած էր անիկա յաւերժական անդոհէն, անսրբագրելի տագնապէն որ կենթադրուի թէ **կեանքն** է, այդ անհուն հեռաւորութեանց ծոցը: – Արդի բնախօսութեան թելադրած աներեւակայելի բախումները՝ տիեզերական դրութեանց (ամէն արեւ իր դրութեամբ՝ տիեզերք մըն է) բոլորն ալ մէկ ու նոյն հիւլէն ձեւակերպուած, ամէն բոլորն ինքզինքը կործանող ու վերակազմող տո՞ւ մը՝ յաւիտենական մահուան, յաւիտենական վերադարձին, արարչութեան: **Բաս-գալն ու Նիչէն**:

– Ով գիտէ:

\*

\* \*

Հրաշալի աղօթքը:

Ան մարդկային է մանաւանդ:

Անոր յաջորդ երկու տուները ուժ ու արդարութիւն կուզեն: Յիշեցի թէ ինչպէս աղեխարշ պայմաններու մէջ անիկա բարեխօսութիւնը կը խնդրէր Աստուծոյ մօր, պատերազմներուն դադարին, երկրի վրայ՝ սիրոյ եւ արդարութեան տունկերուն բեղմնաւորման:

Բայց ահա հինգերորդ քառեակը  
«Աղաչեա վասն մեր զառ ի քէն  
Զմարմնացեալն Աստուած,  
Աճեցուցանել յերկրի մերում  
Ըզքաղցրը բխումն աղբերաց,  
Զառատ պտղաբերութիւն բուսոց եւ տնկոց,  
Առ ի զուարճալի լինել  
ամենայն հարկաւոր պիտոյից մերոց...»

Ու բառերուն ընդմէջէն մտքիս գծուածը շուք մը չէ, այլ քիչ մը գոց, արծուեռունգն, սեւաչուի շինական արեղան, որ իր մատներով հողին է յանձնած իր սերմընուն, դեռ աշնան առաջին անձրեւներէն, սպասած՝ լման ձմեռը երբ իր անտառը, անդաստանը, դէմի գագաթները, իր մենաստանն ալ թերեւս մինչեւ կէսերը կը ծածկուէին Աստուծոյ բամպակով, ու հասած է ողջունելու հայոց Գարունը, անպատմելի այն նորաստեղծումը, ուր, գրեթէ մէկէն ի մէկ, այդ հսկայ լեռնասարահը կը վերածուի աղբիւրներու անհուն փեթկընոցի, ամէն կողմէ ու ամէն քարէ իրենց արծաթն ու ժանեակը պարզած, արեւներուն ամենէն անուշին, ուր ծաղիկներու ալիքները իրարմէ աղուոր գոյներու հանդէս մը կը վառեն այդ դաշտիկներուն վրայ: Ու ծառ ու տունկ, ցանքն ու դալարը, հարսնետոր, հարուստ, խոնարհ ու փարթամ, վանքին դարն ի վար կը բանան իրենց բարիքները: Աւետման Տօնը Գարնան անդրանիկ տօնն է: Ի՛նչ հեշտագին յուզումով, սրտաբուխ ըղձաւորութեամբ, սա պատկերը դիտող վարդապետը պիտի տարածէ անոր փառքը, գեղեցկութիւնը, յուսադրող ընտանութիւնը հայոց աշխարհին բոլոր մասերուն: Ու չմոռնալ որ գիւղացիին համար հողին չափ իրաւ է առջի կամար երկինքը ուր կը պատրաստուին իրեն այնքան անհրաժեշտ անձրեւները: Ու շինականը չէր կրնար լռել մեր մեծագոյն մատենագիրներուն ինչպէս քերթողներուն հոգիին խորը: Կը զգա՞ք քաղցրութիւնն ալ կուշտ, ուրիշներուն հասնելու համար իր ամբարները լեցուն ուզող հոգեկան սա վիճակին: Իմ տղայութեանս, մեր վանքերը, թշուառ շուքերը սա գեղեցկութեանց, տակաւին կը պահէին փշրանք մը սա

հոգեբանութենէն: Կրնայիր վանքի մը կործանած պարիսպներէն ներս չամչնալ անօթի ըլլալուդ: Ծերունի մը իր մօրուքը շոյելէն պիտի ցոյց տար հացին տաշտը:

Պէտք կա յ հետեւելու քերթուածին բոլոր քառեակներուն, անոնց իւրաքանչիւրին մէջ ալ հաստատելու համար սա խորութեամբ, ընդարձակ մարդկայնութեամբ յուզումներ, ուրիշ կալուածներէն, բայց այնքան ալ հարազատ մեր ժողովուրդին բոլոր խաւերուն, քանի որ անըմբռնելի գերութեան մը ծոցէն իսկ այդ մարդերը կերպը գտան կեանքը այլակերպելու, հոս իրենց զլացուածը միշտ պահանջելու, ու **տեւելու**: Բանաստեղծը, մեր պատմութեան ամենէն խորունկ խորհուրդը մէկ անգամէն սեւեռող մեր օրերու մարդ մըն է երբ կը պաղատի Աստուծոյ մօտ

**«Աղաչեա վասն մեր գառ ի քէն**

**Զմարմնացեալն Աստուած,**

**Զի միաբանեսցէ զեկեղեցի իւր սուրբ**

**Շինեալ ի վերայ հիման առաքելոց եւ մարգարէից,**

**Պահել անարատ, մինչեւ յօր երեւելոյ զալստեան**

**իւրոյ»:**

Անշո՛ւշտ: Մեր ո՛ր կրօնաւորը վախին մէջը չէ ապրած իր եկեղեցիին սպառնացող վտանգներուն: Տեսանք թէ ինչպէս անիկա կը պաղատէր պատերազմներուն դադարը: Բայց չըսի թէ վարդապետը **«հակառակամարտից»** դէմ դնելու համար ալ դիմէր էր այդ մօրը միջնորդութեան, **«ի պատերազմի»**, որ նիւթականն ու բարոյականը կ'ընդգրկէ հոս: Մեր Եկեղեցի՛ն: Ենթակայ հօօր, ընչաքաղց ժողովուրդներու ախորժակներուն: Միս մինակ ձգուած, իր գերի զաւկըներուն թշուառութեան մէջ, բայց յամառելով ինքզինքը պահել: Աչք ածեցէք մեր Եկեղեցիին պատմութեան ու պիտի հասկնաք թէ ինչո՛ւ Աստուծոյ մօր միջնորդութիւնը պիտի թախանձէ որպէսզի անոր Մարդասէր Որդին աջը դէմ բերէ իր իսկ Իջմամբը սկզբնաւորուող այդ Եկեղեցին պաշարող իրարմէ հօօր, իրարմէ անգութ իր ոտխներուն: Աղօթքին հեղինակը հայ հողն ու հայ հոգին ունէր իրեն մատին ծայրը երբ կը գրէր սա անմահ տողերը:

\*  
\* \*

Մահուան որդեգիր վարդապետը ու «մահուան ընկեր» դատողը եկած են իրարու աւելի մօտիկ: Պահարանը լուռ: Ժամուն ներսէն թիւ մաղթանքը չի հասնիր իրենց:

Բայց ո՞ր անձանօթ ուժը տուն կուտայ որպէսզի վարդապետը անգամ մըն ալ ետ դառնայ, ու նոր լռած աղօթքէն վերստին ըսէ, դանդաղ, անեղանակ, հատիկ հատիկ բառերը կենսատրելով իր մէջ այնքան զօրաւոր զգացումէ մը, ու գտնէ շեշտը, լրջութիւնը, հաւատաւոր խորքը որոնք անոր ժամասացութիւնը կընէին այնքան անկեղծ, հոգեմօտ, հոգեխօս երբ ամիս մը առաջ բառերը չէին փշրուէր իր ատամներէն...

**«Աղաչեա վասն մեր Սրբո՛ւ լիի,  
Զմիածին քո զՈրդի  
Եւ վասն հոգւոցն հանգուցելոց,  
Ընդունել յարքայութիւն երկնից,  
Եւ տալ մասն եւ բաժին  
Ընդ սուրբս ամենայն...»**

Ու տարօրինակը ան է որ իրմէ առաջ, երբ աղօթքին միւս մասերը կը շարունակուէին դուրս, մտքովս ես ալ կրկներ էի այդ զարմանալի քառեակը:

Վարդապետը հազիւ կը կասկածի թէ մաղթանքին բոլոր մասերէն իր միտքը գրաւողը, սա բոպէին, այնքան իմանալի, բնական սա կարօտն է երկինքի արքայութեան: Միւս խնդրանքները, տարիքին մաշումով մաշած, անիկա թերեւս ըսաւ վարժութեան մը պէս: Բայց այս մէկ հատիկը անոր մէջ կը պահէ իր սկզբնական ուժը, փայլը եւ աղօտելու փոխան հետզհետէ կը պայծառանայ: Անիկա, ամէն օր այդ **պատկերը** ուզեց իր Աստուծմէն: Կը խորհիմ թէ, իր տարիներուն սանդուխն ի վեր այդ **պատկերը** եղած է վերջնական իրականութիւնը, այն ապահով ստուգութիւնը որով կեանք մը կը գոցենք: Մկրտութեան աւագանի կուշտին, անիկա այդ սանդուխէն ընելիք աչք մը միայն ունի: Անկէ անդին, ա՛ն, որ

իրաւ է հիմա, իր միտքի դաշտին, – շատ շքեղ պալատ մը: Պատրիարքարանի դահլիճէն հազար անգամ մեծ: Ու բոլոր իր կարգակիցները, որոնք հոն են արդէն: Ինչ ունի, անիկա, իր խուցէն, ժամերէն, պարտքերէն, պատրանքներէն, պզտիկ ցաւերէն զատ, իր հոգին տրորող: Անիկա, դեռ գերեզման չիջած, **հանգուցեալ մըն էր:** Ինք կը պատմէր ինծի վարդապետներու մասին որոնք, մահուան շաբաթներուն, երկինքէն ազդուած՝ (զոյութիւն ունի մահուան նախագագոցողութիւն մը) իրենց խուցերէն ներս, **«դռամբք փակելովք»**, իրենց **մահուան կարգը**, Մաշտոց ի ձեռին, կը կատարեն անձամբ ու ամբողջ, **բան մը պակաս չձգելու** հասկնալի մտահոգութեամբ:

«Հոգուցն հանգուցելոց»

կըսէ ու կը նայի իր նայուածքը որ կայ այս անգամ:

Դատո՞ղը:

Ան ալ պատրանքներ չունի: Բայց չունի նաեւ մխիթարանքը: Ան հաշտուած է ձգելիքներուն: Բայց...:

\*

\* \*

Մութ: Հաւանաբար ամպ է անցնողը:

Պահարանը՝ խաղաղ, դամբանի մը պէս:

Երգը՝ մոխիր է վարդապետին դէմքին: Անոր զլուխը ինկեր է ուսին: Բաց աչքերուն տեղ մարմինն է որ կը քնանայ:

Բայց իմ մէջ կրակէ կամար-գօտի մըն է «Մայր-Մութք»ը, ոտքերէն մէկը օրրանէ մը մեկնող մինչ միւսը արդէն կընկղմի փոսի մը ծոցը:

Ու կը տառապիմ:

Դատողը, գրողը, արժէքներու եւ գեղեցկութեանց եռանդահար բանուորը փախած են ինձմէ, ձգելով իլեակ մը փուտ բան, ճակատագրի աղեկատին վրայ, **ճերմակ մահուան** պլլուած: Ըսի թէ հաշտուած էի: Բայց...

Ու կը տառապիմ, պահէն ալ անդին, ինչպէս կըսեն:

Ինչո՞ւ չտրուէր ինծի մխիթարանքը, երանութիւնը իմ պատանութեան, երբ Աստուածաձայ չորեքշաբթի գիշերը, «մահով օծուած» սպասէր էինք Իր Արքայութեան: Ի՞նչպէս դամբանել սա կէս դարը որ իր սկիզբին պէս շինեց ինքզինքը, տառապանքէն գատ ոչինչի հասնող: Ինչո՞ւ չունենամ ուրիշ ըսելիք, բոլոր իմ ընկերներուն որոնք թշնամիին դանակին տակ պատառ պատառ իրենց սիրտերն իրենց ավերուն, կենթադրեմ թէ տեղ մը կը սպասեն ինծի, երկրի եւ երկնքի մէջտեղուանքը: Իմ ընկերները, այնքան քաղցր յոյսերով, երազներով կեանքին դաշտն իջած, բայց կախաղանուած՝ իրենց ժողովուրդին հաց, ջուր ուզելու անքաւելի ոճիրով, քանի որ միլիոն մը գոհն ալ չազատեց զմեզ:

Ու կը մտածեմ:

**«Աղաչեա վասն մեր Սրբուհի»:**

Յստա՛կ. իրա՛ւ. հա՛յ:

Բայց ո՞վ էր: Ո՞ւրկէ:

Կը նայիմ վարդապետին որուն աչքն ալ իջեր է քունի:

Պահարանը՝ աւելի մութ:

Բայց ձա՞յնը,

Ի՞մ խորէս:

– Ով գիտէ:

(Վերջ)

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, ԺԳ. ՏԱՐԻ, ԹԻԻ 7, ՅՈՒԼԻՍ, 1939, էջ 258–263)

Ծանօթ. խմբագիրի

«Տպուած է *Կայսերական յաղթերգութիւն* հատորին մէջ, իբրեւ «Երբ պզտիկ են» շարքին վերջին կտորը: Այս շարքին միւս «վկայութիւններ»ը չեն մտած հատորի մէջ» (Մարկ Նշանեան, *Յակոբ Օշականի մատենագիտութիւն*, Լոս Անճելըս, 1999, էջ 65):

## ՏԵՍԻԼՆԵՐ ՈՒ ՊԱՀԵՐ

...Ժառանգաւորներուն

Տխուր է **Սրբոց Յակովբեանց Տաճարը**: Մի փնտռէք պարզ, որոշ ազդակներ այս վիճակը ստեղծող, սրբավայրէն ներս: Ասիկա մէկն է առանց պատճառի (գէթ երեւցող) այն տխրութիւններէն որոնք Արեւելքի մեծ ուխտատեղիները կրնեն նման իրարու, որ կրօնքին ալ պատկանին ասոնք: Պատմութիւնը թերեւս անգիտակից յարդարողը սա հոգեկանութեան, վշտագին որքան ստուերուն, Ս. Քաղաքին մէջ զարկած է այդ տեղերը տրտմութեան նոյն կնիքով: Կը մտնես ներս ու փոխանակ բարձրանալու, կը պզտիկնաս: Լոյսերը կը քաշուին հոգիէդ ու բռնի կը նետուիս հզօր ձեռքէ մը, քու թշուառութեանդ: Արեւմուտքի **Գաթէտրալները** մեղքի յղացքը չեն բերեր մտքիդ մէջ առաջին մակարդակի, ինչպէս կը տրորուիս հոս, ամենէն առաջ, այդ յղացքին խոր հարուածովը երբ կը կենաս տժգոյն կամ մռայլ լոյսերուն ներսը Երուսաղէմի սրբավայրերուն: **Գաթէտրալը** չէ անշուշտ անելի լուսաւոր: Բայց թեթեւ բան մը կը շողաւորէ անոր մռայլութիւնը: Գոյները, մարմարը, մետաղը հոն ունին արձակութիւն մը, ազատութիւն մը, սփոփիչ ընտանութիւն մը որ սեղմելու տեղ կը բանան հոգիիդ պարունակները:

Եղեր եմ Իսլամին մեծ յիշատակարաններուն մէջ, Պրուսա, Պոլիս, Էտիբնէ, Գահիրէ: Լոյսի բաշխում մը չէր որ իմ տպաւորութիւնները կրնէր մէկ: Բոլորէն ալ դուրս եմ ելեր ճնշո՛ւ ւած, տկարացա՛ծ հաւատքին շատ ծանր սպառնալիքէն որ պատերն ու կամարները պատռելու չափ թանձր էր սրբարաններէն ներս: Ուժի, յաղթութեան յայտնի թելադրանքը, առանց պատմութեան նպաստին, իմ մէջ կը վերածուէր հասկնալի հակազդեցութեան: Երուսաղէմ, քրիստոնէայ ուխտատեղիները չունին սա տկարացնող ճնշումը, մարդկային պարունակներէ, բայց խորապէս կը ճնշեն այցորդը, կը յոգնեցնեն ուրիշ զգայութիւններով, ասոնք ալ մարդկային

պարունակէ: Ասոնցմէ ամենէն ուժգինը, **վստահութիւնն** է հաւատքին, մելամաղձոտ, վախի մէջ դալկացած. հպարտ ու ազատ ըլլալու անկարող ինքնապատրումը՝ որով Արեւելքի՝ քրիստոնէութիւնը դարեր շարունակ, պաշտպանեց կորանքը՝ չեմ ըսեր կրօնքին (իր Աստուծոյն գերեզմանն իսկ գերի էր), այլ կարգ մը իտէալներու: Քրիստոնէութեան մեծագոյն սրբավայրը, **Ս. Յարութիւնը**, ոչ յաղթանակ մըն է, ոչ ալ ուժի ամբարտակ մը: Անիկա անհասկանալի, անոճ, անկնիք **խուժում** մըն է, խուճապահար, թշուառ, կործանած հոգեկանութեանց, որոնք մէջմէջի կանցնին, ազոյցներու վեհերոտ դրութիւն մը ըլլալու, բոլորն ալ տրտմութեան, ցաւին, սուգին **ոճովը**, ու փոխանակ արեւին վազելու, անդունդին, մութին, հողին կը խրին: Չեմ կարծեր որ գտնուի մէկը որ չայցուի սպաննող սա թախիծէն երբ կընկղմի խաւարին մէջը **Ս. Աստուածածնայ** տաճարին, որ, այդ անդնդասոյց փախուստի ճամբուն վրայ, սառած, քարացած, կպրացած բան մըն է, մեծ ուխտատէղի մը ըլլալէ առաջ:

Տխուր է մեր **Ս. Յակոբն** ալ, բայց աւելի ներդաշնակ, բաց, պարզ տրտմութեամբ մը: Ոչ սեւ է այդ տրտմութիւնը ոչ ալ սրտաբեկիչ: Անոր կամարը չի հեծեճեր ծանրութեան տակը մեր ժողովուրդին մեղքերուն, որոնք բախտին կարգադրութեամբը, մեր ստեղծագործութեանց մէկ ուրիշ գետինին վրայ իրենց պալատները կը բրգացնեն, **մեր գրականութեան մէջ**, մեր տաճարները մթագնելու անկարող: **Ս. Յակոբին** պատերն ալ չեն բզքտուած մեղքերուն կամ կիրքերուն ճնշումէն: Բանակը սուրբերու, հայրապետներու, այդ պատերու երեսին կտաւը չի վերածեր տրտում վկայութեանց հանդէսի մը, այլ կընէ աւելին, ճարելով ժամուն **միջոցին** տեսակ մը հոգի, ոչ օտար, թերեւս ալ հաշտ հոգիներուն հետ մեր մարդոց որոնք մեր երկրին մօտ ու հեռու խորքերէն ճամբայ ինկան, իրենց իմացականութիւնը չարչարող մեծ տագնապանքը լուծելու, զիրենք հալածող, անսահման թշուառութեան գաղտնիքը հասկնալու, գաղտնիքներու Տիրոջը գերեզմանին զարնելով իրենց մեղքը, խղճմը-տանքը: Ու կեցան: Մեր երկինքը, մեր տաճարները, մեր լեռները ու մեր սիրտերը անշուշտ տուեր են **Ս. Յակոբին** ներդաշնակ

մարդկային վիշտի սա խորհուրդը, մեզմե միայն ըմբռնելի սա համեստ, քաղցր, ոչ մոռալ **հոգին** որ այդ տաճարը կը զատե Երուսաղեմի ուրիշ սրբավայրերէն:

\*  
\* \*

**Ս. Յակոբի** սա վշտոտ հոգեկանութեան մէջ թերեւս պզտիկ չէ դերը, բաժինը **Առաքեալին Աթոռին**:

Կիսամութ ձեւ մը, սատափե գիծերով, ինքնիրմէջ անաւարտ: Որուն սիրտը ըլլար նիհար լոյսը որ մանրադիր կաթողիկէին տակ կը մարմնի բայց չի մարիր: Նստեր է այդ ձեւը հոդ, ով գիտե, քանի դարերէ ի վեր, թափուր վեհափառութեանց բոլոր տրտմութեամբը, կարծես հեռուէ հեռու թելադրող վկայութիւն, կործանած գահերու: Պատրիարքներ, տարիին մէջ մէկ օր միայն կը համարձակին դպիլ անոր խորհուրդին: Լման տարին անիկա կը սպասե, տաղաւարներու եւ որոշ տօներու, խոյրի մը եւ շուրջառի մը պատրանքը առած կոնակին:

Տրտում, անտէր փառքերուն լքումովը:

Ու չես կրնար չհարցնել:

– Ո՞ւր է տէրը սա թափուր գահուն:

\*  
\* \*

Լեցուն է ժամը, տօնական, պատմական օրերու յորդութեամբ մը:

Կատարուածը, այդ ժամուն, հանդէսն է պատրիարքական գահակալութեան, քրիստոնէայ առաջին նահատակ եպիսկոպոսի, Առաքեալին Աթոռին:

Շքեղ, աւելի տպաւորիչ՝ օտարութիւնը, տարագէ, մոյնքէ, իմաստէ այնքան զանազանակ իր լրջութեամբը: Խստուտիկ սա ինքնատպութիւնը համախմբումին, մարդոց. – հիւրեր որոնք ներդաշնակ պատկառանքի մը մէջ կը թուին

իրագործած ըլլալ հին ու դժուար երազ մը. Արեւելքին ու Արեւմուտքին չեմ ըսեր՝ **եղբայրութիւնը**, գեթ յարգանքի, հոգեկան դաշնութեան զգացումներով քով քովի նստիլ կրնալու մէկ պահը: Ամէն ազգէ ու ամէն դաւանանքէ: Մեծագոյն կայսրութեան ամենէն աւագ պաշտօնատարէն մինչեւ գերուած ժողովուրդի համեստուկ քահանան:

Մերիննէ՛րը: Շատեր թել առած, թել տուած իրենց հպարտութեան, արժանաւորութեան, փառքի զգացումներ որոճալով: Ուրիշներ, խոկուն, բեկուած, ամբոխ ըլլալու իրենց անկարողութեան մէջ տառապելով: Կան ալ անհանգիստ մարդեր, վիրաւոր արժանապատուութեանց բեռան ներքէ: Ասիկա մթնոլորտ մըն է կարծես մեր հանդիսութեանց համար: Ճճի ու հսկայ փառասիրութեանց սա բախումը հոգեվիճակ մըն է գոր կը բացատրէ դարաւոր մեր գերութիւնը: Իրարու չենք ներեր մեր փառքերը, ինչպէս փոքրութիւնները, փոքրոգութիւնները:

Արարողութիւնը, հանդիսաւոր, այսինքն բռնի տարագրուած իր իմաստէն:

Ու Պատրիարքը որ կը բարձրանայ Առաքեալին գահոյքին:

\*

\* \*

Պատռեցէք տարիները, իջնելու համար ժամանակն ի վար: Անցէք կէս դարը, քիչ մըն ալ աւելի անդին:

...Մեծկակ մանուկ մըն է, վճիտ կապուտութիւնովը իր աչքերուն ու գողտր ձուածիրովը իր մատաղ դէմքին: Ոչ իսկ թերիաշ պատանի: Ու, Պոլսէն նոր հասնող ժառանգաւոր, վախվխուն, միամիտ, տեսնուելէ զգոյշ, կեցեր է Առաքեալին գահոյքին առջեւ ու նայուածքը ամուր բացած կը հետեւի կանթեղին բարակուկ լեզուին, բոցին ծփանքին, հեւքի պէս մեղմ, մարմրող, բայց չմարող: Անիկա կը նայի սատափով դրուագուն ամպհովանիին, այդպէս մռայլ, տրտում, աթոռի մը

վերել որ պարզ է ու սովորական: Նոր հասնող այս տղեկը, հաւանաբար, թափուր այդ գահոյքին վրայ նայիլ ալ կարծեց մարդու մը ուրուականին, որուն իր թարմ երեսակայութիւնը պատկերը կուտար տաճարին պատերը գունաւորող սուրբերէն մէկուն, տարազի, դէմքի մերձաւոր նմանութիւններ ալ ճարելով, – **Յակոբայ արդար առաքելոյն**, ինչպէս լսեր էր այնքան անգամներ, առտունները Պոլսոյ ժամուն, տիրացու տղեկի իր մտաշխարհին մէջ, բարձրագոյն աթոռներէն մէկը յատկացուցած ըլլալով քրիստոնէայ առաջին եպիսկոպոսին...

\*  
\* \*

Հիմա, այդ տղեկը, բարձունքն է այդ գահին:

Վարդապետներ, իրենց վեղարներուն մանրանկար կաթողիկէները կը տանին այդ գահին խոնարհութեան: Տաճարը լեցնող մարդոց հոգին, ծանր, մեծ ալիքի մը նման, կ'երկնայ դէպի գահը: Կործանած ժողովուրդի մը սրտէն դեռ ողջ կայծեր ճամբայ կը բանան դէպի սա յուզման տեսիլքը: Ամէն հայ, իր երագներէն ծուէն մը բան արձակած է դէպի այդ տարօրինակ տապանը, վերջին խլեակ հսկայ մեր դժբախտութեան ծովուն վրայ:

Հիմա, Պատրիարք, անիկա «**լցեալ աւուրբք**», մազերուն ու մօրուքին ճերմակը պատանք ըրած իր երագներուն, բեռանը տակ՝ յիսուն ու աւելի տարիներու գրկանքին, յուսաբեկութեանց, աշխատանքի, գոհաբերման, չարքաշ, ազնուական համբերութեան ու բարձրոգի ներողամտութեան, պիտի յիշէ՞ միամիտ, վախովիսուն **ժառանգաւորը**, ոչ իսկ թերխաշ պատանին, որ մուրթ կոխած պահուն, տեսնուելէ զգոյշ, հոգիին խորէն ծունկի ինկաւ **Առաքելային գահին առջեւ**, ընելով անբարբառ ուխտը բոլորանուէր ծառայութեանը Անոր Եկեղեցիին:

Ամէն ժառանգաւոր, կը հաւատամ, պիտի հասկնայ **չըսուածը**, այս տողերէն անդին:

\*  
\* \*

(*ՄԻՈՆ*, ԺԳ. ՏԱՐԻ, ԹԻԻ 11, ՀՈԿՏԵՄԲԵՐ-ՆՈՅԵՄԲԵՐ, 1939, ԷՁ 365-366)

Ծանոթ. խմբագիրի

*Մինն* եռասուղ մը ունի այս գրութեան տակ: Մարկ Նշանեանի պատրաստած *Յակոբ Օշականի մատենագիտութիւն*-ին մէջ, Լոս Անճելըս, 1999, էջ 67, ան վերագրուի Յակոբ Օշականի:

ԿԵԱՆՔԻՆ ՀԵՏ

ՍԱՐԿԱԻԱԳՆԵՐՈՒՆ

Աշնան բարակ, լուացուած արեւ:

Որ, անգայտ, թրթռագին ոսկեջուրի մը ծփանքներովը կը դողայ գրասեղաններուն: Կը փշրուի դալուկ պատին ու նորաներկ սեւ տախտակին դէմքին: Բեւեկնենիի ուժով հո՛տ մը որ կը դպի: Դասարանին մէջ նոր հով:

Ու այդ պճլտուն, գրեթէ զուարթ դեղնութեան մէջ **գլուխներ:**

Անկիւնոտ: Անհամաչափ: Անարտայայտ՝ երբ կը կենան: Ուժգին: Բիրտ: Բայց բոլորին ալ աշուկներուն խորէն, բարակ, ըսես աշնան ժպիտն ըլլար, անոնց **նայուածքը**. տաք, լայն, պիշ, բարի, հա՛յ:

Ժառանգաւորներու կրտսերագոյն դասարա՛նը: Նորեկ-ներ:

\*

\* \*

Կը մտնեմ ներս:

Իրենց դէմքին, միամիտ սպասումը որ կը վախնայ աւելին ըլլալէ:

Ո վ գիտէ, ինչեր լսած են անոնք, տակաւին սուրբ երկիր չմտած, անոր հրաշքներէն: Երուսաղէմը տղոց առաջին ստեղծագործութիւնն է: Ու, վստահ եմ, հիմա կը տառապին անոնք, իրենց շինածին, լսածին ու տեսածին մէջտեղ բացուող անդունդէն:

Տարին կը փնտռեմ անոնց վրայ: Գրեթէ չունին. այնքան կեանքը տարբեր կը գրուի մեր մանուկներուն ճակտին: Տրտում են ու վերապահ: Կը զգամ անգիտակից իրենց ջանքը, իրենց

մարմինը անզգալի ընելու, **«ջնջելու»**: Զգեստին մատնութիւնն է ատիկա: Եղեր եմ իրենց պէս: Ոչ չեմ կրցած մոռնալ որ կը տառապէի իմ գեղջուկի լաթերուս վրայ, ուրիշներու նայլածքէն:

.....

Կը հարցնեմ, կամաց, գրեթէ վախով:

...

– Չի ճանչնար հայրը, մայրը: Այս բառերը որեւէ վէտ չեն շիներ իր դեղնատուն երեսներուն: Ու ահաւոր է ասիկա, իր տարիքին: Չունի, չի գիտեր քոյր, եղբայր, մօրքուր, հօբար: Այնքան խոր, իրաւ այս պատկերները չեն փայլած իր մանկութեան, առջի պատանութեան կերպրնկալ պաստառին վրայ: «Գետնէն բուսած» կըսէին ասոնց մեր հէքեաթները: Կը պատասխանէ պարզ, բնական, արագ, իր բառերուն իմաստը առաջուց արդէն հերքած ըլլալուն, իր մանկութեան դժոխքէն իսկ: **«Մեծցեր է ինքն իրեն»**, կը դատեմ մտովի: Ու ինքը միայն գիտէ զինը իր ոսկորներուն, ծուէն ծուէն ճարուած, խլուած ամենօրեայ անօթութեան մը ճիրաններէն: Անհանդարտ իր աչքերուն ներսը առնուազն մոխիրը տասը տարիներու, ուրիշներու համար ադամանդ մանկութեան ու պատանութեան: Միակտուր որբութիւնն է անիկա, փողոցը, զրկանքը: Հրաշք մը զինքը ազատած է սակայն: Անիկա ժամուն բակը ինկեր է օր մը ու հոն ապրող կատուի ձագին հետ կերպ մը գտեր ապրելու: Մի՛ բարակը փնտռէք: Դրկած են զինքը հոս: **Մարդ ըլլալու:**

– Կարծր, խարդած մորթով դաժան տղայ մըն է: Չես գիտեր ինչ բանի տուած է թարմութիւնը, ողորկ ու քաղցր բանը որ տղոց մորթն է իր տարիքին: Ծեր մը, առանց կնճիռի: Ամուր: Իրաւ: Հաստատ ու բիրտ: **«Սալի վրայ շինուած»**, ինչպէս կը պատկերեն մեր ծերերը նման կազմուածքները երբ կը դատեն, դասաւորեն: Անշուշտ աս ալ անօթութեան սալն է: Անոր անձին, ձայնին, շարժումներուն մէջ ամէն ինչ խիստ, կարծր, վիրաւորիչ կը թուի ինծի: Տառապանքին փուշերն են ասոնք մեր հոգիին վրայ որ կը ծակեն մորթը ու կը նային աշխարհին: Իր

նստիլն իսկ կարծրացում մըն է, մշտահալած երէի մը նման որ մոռցած ըլլար վարժութիւնը հանգիստին: Կը դիտեմ որ չի կրնար խնդալ, հակառակ ուզելուն, քանի որ շրթները կը ծոին նման փորձի մը ատեն: Արցունքը մեր դէմքը կը շինէ երբեմն իր օրէնքներով ու գայն կընէ անատակ ուրիշ պատկերի: Չի կրնար թուլնալ: **Պիրկ, բռնուած, հեստ**, ով գիտէ քանի տարի կայ: Մայրը պահեր է **զիրենք**: Այդ **զիրենքը**՝ քոյրեր, եղբայրներ որոնց մասին ժլատ բառեր միայն ունի: Ուշագրաւ՝ իր բացակայութիւնը իրմէ: Պատասխանները տեսակ մը փախուստով կըլլան երրորդ դէմք ու կը խօսին **իրենց** տունէն: Անիկա կը լռէ իր հօրմէն, խոր խորհրդաւոր սառումով մը: «Չեկող» այս հայրը կը խռովէ զիս, բայց կը զգուշանամ: Տղու մը հոգիին վերել մայր մը պայծառ է միշտ: Հա՛յր մը: Հարցուցէք ու մի խորանաք: ...Դէմն է սակայն դաժան, կարծր, բութ: Եկած է **մարդ ըլլալու**:

– Բարակ, բաց, աշնան արեւէն աւելի տժգոյն: Մանուկ մըն է գրեթէ, հակառակ տարիքին: Ամէն բան՝ թերխաշ, թերեւ, անաւարտ, պակաս է իր վրայ: Փխրուն, նուրբ այդ ծաղիկը կուգայ սակայն հերոսութեան լեռներէն որոնք վերջին պատերազմին բեմ եղան սրտատուչ հրաշքներու: Ու ասիկա հակաութիւնն է: Քաղքի պարոնիկի մը տրտում իմաստութիւնը ունի: Կը խորանամ դէպի քաղքի իր զգայութիւնները որոնք կը պակսին: Ու կը տրտմիմ իմ կարգիս...: Չայնին մէջ քաղցր, վառ բան մը, բանաստեղծ մը պիտի ըսեր **«մարմաշ»** մը: Գոհ եմ սակայն նայուածքէն որ բաց է, ազատ, **լեռնէն անդին** ու շիտակ: Ու յստակ՝ մինչեւ հոգիին տունը թափանցիկ ընելու բաւող պարզութեամբ: Յուզիչ է իր պզտիկ անձը որ ամէն բառի կը հաղորդէ հիւանդագին ջերմութիւն, տենդ: Կը պատմէ, միամիտ, ուրախ, մօրմէն որուն երկվեցեակը անցնող զակրներէն վերջինն է ինքը: Թիւր երբեմն հզօր է, ճակատագրին չափ: Չեմ կրնար բանալ իր սարսափները: Այդ մայրը այդ տղոցմէն քանի՛ հատը հողին է յանձներ: ...Ինչ որ ստոյգ է, այդ մօրը կամքն է նորէն որ կը խօսի ինծի իրեն **«մնացած մէկ հատիկէն»** հոս, դասարան ներկայութեամբը, երբ ինքը իր եօթանասուն տարիները առած հիւղակի մը խորը... կը սպասէ: Այդ սրբազան կինը

չէ վարանած սակայն այդ «վերջին շառաւիղն» ալ բաժնելու իր ծոցէն ու Ս. Յակոբ դրկելու: Անոր ալ մէկ է պատգամը միւս մայրերուն հետ – «**գաւակը մարդ ըլլայ**», ինչպէս եղած էր պատգամն ալ իմ մօրը:

– Շատոնց թաղեր են հայրը: Կրակ կը թափեն իմ վրայ: Կանցնի մէջէս բարակ ալ սարսուռ մը անզգալի այն կիսա-ժրպիտին առջեւ որ բառերուն ընդմէջէն կուրուանայ սա տղու շրթներուն բայց չըլլար, թերեւս շատ դժուար գտնելուն...: Ու թշուառ կախարդութեամբ մը, ինծի կը դառնայ, իրաւ ու ամբողջ, ձմռան այն առտուն, ուր չորս մարդերու շալակը ելաւ իմ հայրը, մօրս արցունքին ու իմ ժպիտին մէջէն ու ալ տուն չեկաւ: Կը հասկնաք արցունքը ու կը փնտռէք ժպիտին գինը որ ափ մը չամիչ էր, դրուած գրպանիս, ինծի տարեկից աղջկան ձեռքէն, որուն հայրը, մեծ **Ֆապրիքաթոռ**, դէռ չէ ջնջուած իմ հոգիէն երբ կը ջանայ աղջիկը առնել սա տեսարանէն: ...Ինչ անորակելի բան է մարդերուն կեանքը: ...Ու կը շինեմ, իմ տարիներուս կտաւովը սա տղուն այդ մահէն վերջ տասնի մօտ տարիները, մօրկանը արցունքին, տառապանքին ընդմէջէն: Ո՞ր հրաշքին, տառապանքին ընդմէջէն: Ո՞ր հրաշքը եթէ ոչ ան որ մեր բոլորինն է, միջամտած ըլլալու է որպէսզի քով քովի բերուին սա ոսկորները, ճնճուղի կտուցով ճարուած խոհիներուն նման: Որպէսզի մագաղաթի փայլ հագնի մեր երեսին սա մորթը որ վարդի պատեան մըն է ուրիշներու երեսին: Եկեր է «**մարդ ըլլալու**»:

Պէ տք կայ երկարելու սա կախարդ ժապաւենը իրարմէ ուժով զգայութիւններու: Գիտցէք որ ամէն ուսանող, բերուած սփիւռքին ծագերէն, այս տեսակ պատկերներու խորհրդաւոր փունջ մըն է իմ նայուածքիս, որ երբ կը տարտղնէ զանոնք իմ հոգիի դաշտին, ինծի կը բերէ միշտ մէկ մասը իմ թշուառութեան, երբեմն համայնականարը իմ ժողովուրդին:

Ս. Յակոբայ վարժարանին համար Սուրիան է առաւելապէս որ կը հայթայթէ սա տարօրինակ հունձքը:

\*  
\* \*

Բայց ձեզի անծանօթ է պատկերին միւս երեսը:

Մագաղաթ այս մորթերը, ազագուն սա ոսկորները, սա բիրտ լեռնականութիւնը ու փխրուն, քաղքենի սա դալկութիւնը, «ճնճուղ» սրունքները, եւ թռչունի մը վայել կուրծքերը պիտի դարմանեն իրենք զիրենք, անակնկալ արագութեամբ ու միանգամ ընդ միշտ: Համագգեստը պիտի վտարէ այլանդակ, անոճ հագուստը, շաբթուան մը մէջ հալածելով այդ տղոց կոնսակէն փողոցը, զրկանքը, չունեւորին կնիքը, այնքան յստակ մեր գլխարկէն մինչեւ կօշիկները: Շարժումներուն խօթութիւնը, խակութիւնը պիտի սրբագրեն իրենք զիրենք, ներքին կշռոյթի մը սլաքին ներքեւ որ ձայնն է ըսես Ս. Յակոբայ դարաւոր պատմութեան, աւանդութեան, խորհուրդին: Սնունդը պիտի գունաւորէ այդ մորթերուն կոնծած չորութիւնը: Մարզանքը, իսաղը պիտի միջամտեն, ոսկորներուն ճարելու համար դաշնութիւնը իրենց տարիքին: Ու վարժարանէն իրենց շռայլուած խնամքը, որ պիտի գտնէ իրենց ամենէն փոքր իսկ կարօտները ուսանողի հոգիին. պիտի միանայ այդ ամէնուն, ստեղծելու համար **արու, գեղեցիկ** պատկերը ժառանգաւորին, հպարտութեան մը պէս տպաւորիչ, արշաւներու, թափօրներու ատեն: Յետո՞յ:

– Միշտ միւս երեսը պատկերին:

Դառնագոյն փորձառութեամբ մը գիտեմ որ նորեկներուն ուղեղը աւելի թշուառ է քան իրենց մարմինը: Վկայականն է՛ր, որքան որ կուզէք, աւելորդ պերճանքով մը վկայելու համար մեր «ուսումին» անդնդային անկումէն: Երբեմն մեծ մեծ դպրոցներ՝ իրենց շրթներուն, օտար մշակոյթներու վառարաններ, այնքան տխրօրէն անմարդկային, սա որբերուն ստամոքսին բոնադրուած, իրենց աղքատութիւնը գնող, յանուն քրիստոնէութեան: Բայց գրեթէ միշտ, հակառակ այդ վկայութեանց, այդ տղաքը անկարող են իրենց ներկայացուած էջ մը թուղթին դնելու տող մը բան, իրենց սեպհական, որմէ չամչնայինք, իրենց

հաշտոյն մենք, մեծերս: Ինչ ահաւոր բան է որ տասնըհինգ անցած տղաք, նախակրթութեան ալ փաստը ծոցերնուն, ոչ **զգան**, ոչ ալ **մտածեն**, առնուազն իրենց տարիքին խոնարհագոյն ապրումներուն հաւատարիմ մնալով:

Տարիներ գլորին պիտի մինչեւ որ անոնց միակտուր ուղեղին վրայ պեղուին ակօսները, ուրանայ ցանցը մտածումին: Ու անոնց միսերուն խորը քնացող պարանները – ջիղերը – թրթռալ սորվին: Ու անոնց անտաշ, կորդ անձը յարդարուի սրբազան անդաստան, ցեղին գիտակցութեան սերմերը ընդունելու, ու բեղմնաւորելու մեծ խորհուրդը որով զօտեպինդ ժողովուրդները կը քալեն իրենց ճամբան: Տարիներ ր, յուսահատ կսկիծի, ամուլ աշխատանքի, վատնումի – գեթ այդպէս կը տպաւորեն անոնք – մինչեւ որ անակնկալ օր մը ծլի պատգամը, առաջին ծաղիկը **մարդ ըլլալու** պատուերին:

Ու այս հրաշքը գինն է խումբ մը մարդոց ամենօրեայ, ամենժամեայ անձանձիր եռանդին, սրտմաշուքին, – իրենց վարդապետներուն: Տարուէ տարի այդ տղաքը պիտի թօթափեն տրտում բեկորները իրենց բերածներուն: Գիտէք թէ մարմինը որքան արագ կը դիմաւորէ այս պարտքը: Անոնց ուղեղը պիտի հասուննայ: Անոնք պիտի ճանչնան իրենց եկեղեցին, գրականութիւնը, պատմութիւնը, արուեստը, արժեքները, ժողովուրդը ու պիտի գորովին ասոր ամբաւ թշուառութեան պատկերէն: Անոնք պիտի յուզուին յուզումները իրենց մեծերուն: Պիտի այցուին մեծ անուններուն խռովքէն: Պիտի երազեն ինչպէս ըրեր էին իրենց մեծ հայրապետները: Պիտի առնեն անգիր խօսքը իրենց պապերուն, որոնք կը խօսին Երուսաղէմի մեծ սրբավայրերուն մէջ, ամէն քարի, ամէն պատկերի մէջէն: Պիտի ըլլան խելամուտ այն իմաստութեան որ իրենց ցեղին յատկանիշն էր տակաւին դարեր առաջ: Պիտի մոռնան իրենց հիւղակներուն ցանկափակ, պզտիկ թշուառութիւնները համապարփակ աղէտին դիմաց որ իբրեւ կեանք դրուած է իրենց այլեւս այնքան սիրած ժողովուրդին առջեւ:

**Անկիւնոտ, անհամաչափ գլուխները** պզտիկ վառարաններ են, տարիներ վերջը:

Ու երբ գայ օրը ուր պիտի կատարուի մեծ դիմումը իրենց սիրտին, իրենց անձին զոհովը իրենց ժողովուրդին թշուառութիւնը կարելի չափով ամոքելու, քիչեր պիտի ըլլան որոնք վարանէին սրտագին երկարելու իրենց պարանոցը սրբազան լուծին, **ուրարին**:

\*  
\* \*

Ու տեսայ ձեզ:

Այլակերպ, «պայծառակերպ», պիտի ըսէիք դուք: Պարպուած էին ձեզմէ տրտմութիւնները զոր հիւղերը, զրկանքը, անօթութիւնն ու անգթութիւնը մարդոց հիւսեր էին ձեր մտադող հոգիներուն: Տեղը այդ բոլորին՝ խոր, ուրիշ **տրտմութիւն** որ իմաստինն է, երազինը երբ կը զիջանին ասոնք բնակիլ մարդոց միսին մէջ: Լուրջ էիք ու իրաւ: Պարպուած էիք ձեր վարանքներէն, վախերէն երբ, անցած Կիրակի, Ս. Յակոբայ բեմէն, ուրարով ողկուզուած, կը դառնայիք մեզի – ձեր մեռած կամ ողջ հայրերը, մայրերը, քոյրերն ու եղբայրները փոխանորդող – ու կընէիք ձեռամբարձ հրաժարումը սա աշխարհին այն շատ, շատ բաներէն որոնք չեն ըսուիր: Կային որ կուլային, ձեր մատաղութիւնը մեղքընալով: Կային որ երանի կուտային ձեր սետով պատանուած պատանութեան: Մարդիկ իրենց գիտցածը պիտի տեսնեն միշտ: Քիչերու համար սակայն դուք ողջ քանդակներն էիք այն քանի մը հզօր յուզումներուն, երազներուն որոնք քիչ անգամ մարմին կը դառնան, բայց որոնք լման կեանքը կարժեն:

Այդ ատեն է որ իմ ներսը տեղի ունեցաւ պզտիկ տագնապ մը, ուրիշներ պիտի կրնային ճշդել՝ տո՞ւմ մը: Անհասանելի են մտքին ճամբաները: Քակեցի ձեզ ձեր հանգոյցէն: Դրի ձեր գլուխներուն, աճապարտո՞ւմ վ գիտէ ինչու, ձեր կէս դարը: Ինծի կուգար թէ ձեզի կը բաշխէի, թերեւս շատերու կողմէ,

ա) – Կանանչ, առոյգ, սրտոտ, բոլորապինդ **երիտասարդութիւն**, այն աստուածային, անփոխարինելի տասը տարին

ուր մեր իմացականությունը կը յանդգնի – ի՛նչ բան անկարելի է անոր որուն տարիքը վար է երեսունէն – նուաճել երկինքն ու երկիրը, իմաստին եւ զգացումին անհունները, կարօտալի այլամերժ բազուկներով, **հասկնալ ու խորանալ**, ու դուրս երբ կ'ելլէ այդ խաչակրութենէն ճակտին քանի մը թել ճերմակով, գիտէ թէ ինչ էր ըրածը: Մտքի մեծերուն ընտանի այս մարզանքէն խօսեր էի ձեզի, քանի քանի անգամներ: Ու միամիտ է ամէն սորվեցնող: Վստահ էի, այդ Կիրակի առտուն, թէ դուք, այդ երիտասարդութիւնը պիտի գործածէիք շինելու, միակտուր ու պայծառ, ձեր միտքը ու ձեր հոգին:

բ) – Ձեր **չափահասութեան** սանկ քսան մը տարիները որոնց մէջ ձեր իսկ միջոցներով կերտած ձեր միտքը, խնայած ձեր մարմնեղէն ուժերը դուք պիտի տրամադրէիք ձեզմէ դուրս հազարաւոր կարիքներու յանձանձումին: Պիտի խօսէիք ձեր Աստուծոյն պատգամները հետզհետէ ամբարիշտ, հետզհետէ նիւթացած մարդոց որդիներուն որոնք մետաղն ու վայելքը ունին քաղաքակրթութեան չափանիշ: Պիտի ծաղրուէիք, ուրացուէիք: Բայց պիտի մնայիք յամառ, աննահանջ՝ ձեր սիրտը, կորովը, խելքը, ձեզ լեցնող յոյսին կրակը աղբերացնել հոգիներուն խորը բոլոր անոնց որոնք պարպուած էին այդ բոլորէն, իրարմէ անողոք հարուածներու ուրականին տակ: Պիտի մոռնայիք ձեր մէջ **մարդը**, ըսել կ'ուզեմ՝ ասոր տարրական իսկ պահանջները, վասնզի ձեզմէ իր օրինակը սպասող ձեր ժողովուրդը պետքեր ունէր, միշտ աւելի մեծ, միշտ աւելի ստիպողական: **Ինքզինքը բաշխելն էր** ատիկա, ձեզիպէսներուն համար նուիրական պաշտամունք: Ժողովուրդին մէջ ու հետ: Այսինքն անհուն ցաւերու կրկեսին վրայ: Այսինքն՝ ամէն օր խորտակուող կեանքերու սնարքին: ...Չտեսայ փառքը, դրամը, աշխարհիկ համբաւը, որոնք արդէն ուրիշ պողոտաներու յանգման կետերը կըլլան ընդհանրապէս: Դուք պիտի շարունակէիք մեր եկեղեցւոյ հայրերուն աւանդութիւնը: Ինձի թուեցաւ սակայն թէ այդ ամէնը ընելու ատեն, հետ, տարուած ալ էիք ուրիշ սպասով: Ատիկա՝ հեռու չպահելն էր ձեր պարտքերուն շրջանակէն **հոգը, պաշտամունքը** մեր մշակոյթին – լեզուին,

գիրին, ազգութեան պահպանման: Ամենօրեայ ձեր աշխատանքէն չէիք մոռցած միտքին ալ բաժինը:

զ) - **Ալեւոյթ մը**, որ չի թարգմաներ սակայն մտածումս հարազատօրէն: Ձեզի բաշխած այս վերջին դարը շրջանն էր զգաստ, ամուր, վերջնական աշխատանքին, պտղաբերձ ձեր աշունը, ու երեւցաք դուք իմ աչքերուն, ալեհեր բայց առոյգ, ձեր վաստակին գոհունակութիւնը մատենադարաններու նման դնելով ձեր ու աշխարհին չարիքներուն մէջտեղ:

դ) – **Շահած էիք պայքարը:**

Այսպէս տեսայ ձեզ:

Դուք չգիտցաք հարկաւ թէ այս կախարդական թափօրումի ընթացքին, ես անգամ մըն ալ իմ մէջէն անցք էի տուեր այն ամէն իդէերուն, յոյզերուն, խռովքներուն որոնք կազմեցին իմ ալ ճամբան: Նայեր էի, տրտում, արտասուահար՝ այն ամէն անուշութիւններուն որոնք ձեր տարիքին իսկ ոգեւորեցին զիս, բայց մատնուած, ուրացուած ինձմէ, հեռացան անվերադարձ, ինձի ձգելով սգաւոր յիշատակը անվճար մնացած շնորհներուն, անաւարտ պարտքերուն: Դո՛ւք, աւելի բախտաւոր, քան իմ սերունդը: ...Ուզեցի, այդ պահուն որ ըլլայիք ատիկա: Որով, եւ, աւելի ընդունակ իրագործելու հզօր այն ցանկութիւնները որոնց փշրանքները դեռ կը պտտին, կը թրթռան իմ շուրջը:

Անցած Կիրակի, Սուրբ Յակոբայ բեմէն, դուք ինձի տուիք այս խռովքները:

Եւ աւելին:

\*

\* \*

Վասնզի տեսայ...

Տեսայ որ կուգայիք:

Դասարանին տեղ մահուան դաշտ մըն էր ձեր ոտքերուն տակ: Գիրքերը՝ քարերը մեռելներուն: Աշնան նոյն բարակ արեւը:

Բայց ձեր անկիւնոտ գլուխները ողողուած էին ճերմակին փառքովը որ կը պսակէր ձեզ, օծուն յոգնութեան մը մէջ ձեր նայուածքը ազատագրելով: Քիչիկ մը կոր էին ձեր հասակները, ամէն օր կրուած բեռներու յայտարար: Աչքերու տեղ ապակիներ կը վառէին ձեր մռայլ ճակատներուն շուքին: Ձեր անձը **ջքեղ խտութիւն իրագործուած երազի**, ու ձեր ուսերուն ձեր կէս դարը, աննահանջ սպասի: Շուրջառի մը պէս, վկայ ձեր գրկանքներուն, վաստակին, արիութեան:

Գտաք, քիչիկ մը դժուար, քարը գոր կը թուէիք փնտռել: Խեղճ կտորը մարմարին: Ուրկէ կուրցեր էին գիծերը, թռեր գիրերը, սրբուեր խաչը, մեռեր՝ անունը:

Կեցաք, մտակորոյս: Չէիք հաւատար սա լքումին: Հոն էի սակայն:

Ճանչցայ ձեզ:

Ձեր անբարբառ շրթները կը թրթռային, մինչ ձեր ուղեղներէն կը թաւալէին մտածումներ, պատկերներ գորս ես կը կարդայի բաց գիրքէ մը ինչպէս:

Ու այսպէս կը թուէին ըսել անոնք,

...– «Եկեր ենք քեզի: Գիտենք որ հաշիւը չունիս ուզելու մեզի բաշխած տարիներուդ: Ու գիտենք որ անբաւական է քեզի, տագնապդ մեղմելու, գոհունակութիւնը որով ըրեր ենք մեր պարտքերը: Մեզի կըսէիր, կէս դար առաջ, մեր սեղաններուն վրայ, թէ **մարդ մը ըլլալու առաքինութիւնը** չարժէր աւելի քան հայր մը ըլլալը: Թէ մարդը ան էր որ ինքզինքը **կ'իրագործէր**: Կը հաւատայիր մարդուն ներսը թաղուած ուժին անհունութեան ու կը պահանջէիր որ անհուններ ըլլայինք: Մի մեղադրէր մեզ որ ըլլանք պարտուած, ինչպէս չմեղադրեցինք քեզ երբ կըսէիր քու պարտութիւնդ մեզի: Ըրինք, ինչ որ կրցանք, ինչ որ մեր ուժերը արտօնեցին մեզի: Իւրաքանչիւրս ունի արցունքներ, ինկած իր սիրտին խորը, բարի, պարզ աչքերէն որոնց թարթիչներէն քաղեցինք մենք այդ գոհարները: Գիտենք որ կը սիրէիր ուրիշներուն ցար, զայն դիմաւորելը: Խօսեցանք մթին հոգիներուն խորը երբեմն յոյսին կայծակը վառելով, երբեմն անդունդի եզրին հասնելով անոնց: ...Չենք կրնար մէկիկ մէկիկ

պատմել քեզ մեր ըրածները: Բայց կը համարձակինք քեզի յայտնել բաներ որոնց իրագործումին կարօտովը փակեցիր աչքերդ: Հիմա, մենք քեզմէ աւելի գիտենք մեր **պատմութիւնը** ոչ իբր թիւ ու անուն, այլ իբր ներքին այն իրականութիւնը որուն մտատեսութիւնը ունէիր: **Գիտենք մեր եկեղեցին**, ոչ իբր գաւազանագիրք մը, այլ իբրեւ կրկէսը իրարմէ հզօր առաքինութեանց որոնցմով գօտեպինդ մեր հայրապետները անցեր են արեան եւ կրակին մէջէն...: Շէնք է, իր փոքր բայց սեպհական գետինին վրայ, մեր մտածումին ու զգացումին պատմութիւնը, մեր **մատենագրութիւնը**, գրեթէ այն ոճով, ճարտարապետութեամբ որուն յղացքը կը ջանայիր արմատացնել մեր մատաղ մտքերուն խորը: Հիմա, աւելի մօտ ենք այն համայնապատկերին որուն ուրուածելը թելադրեցիր մեզի: Քու ժողովուրդիդ խորհուրդը կը հասկնանք, քեզմէ աւելի պայծառ քան այն օրերուն երբ կը տառապէիր մեր մէջ սեւեռել անոր հանգոյցը: Կը լսէինք քեզի, **առանց տեսնելու**: Իր ուժերէն վեր աշխատող մարդու միամիտ եռանդը երբ կ'ոսկեզօծէիր այս մութ գեղեցկութիւններով, կը տպաւորուէինք...: Եկեր ենք, մեր կարգին, մեր պարտութիւնը դնելու քուկինիդ մօտիկ: Ըրինք, մեր մշակոյթին համար ինչ որ ուզեցիր մեզմէ, ուրարին հանգոյցէն երբ կը քակէիր մեր պատանութեան որաները: Ճերմակ մազերուդ կը բերենք միացնել մեր ալ ճերմակ մազերը: Կը լսե՞ս»:

\*

\* \*

Սարկաւազները դարձած են խորան:

Յոգնութիւն իմ սրտին:

Դուրս կ'ելլեմ ժամէն: Ու իմ քայլերը զիս կը տանին խորդուբորտ, քարէ գիրքերով յօրինուած դասարանին ուղղութեամբ:

Թերթե՞ս:

– Թերեւս:

### Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, ԺԴ. ՏԱՐԻ, ԹԻԻ 9, ՍԵՊՏԵՄԲԵՐ, 1940, ԷՋ 220–224)

## ՄՈՌՅՈՒԱԾ ԲԱՆԵՐ

Մոռցած ենք **հողը**, թե իբրեւ յղացք, թե իբր զգայութիւն:

Մեր արիւնէն իսկ ջնջուած ըլլալու է այն հպարտ ու գեղեցիկ ապահովութիւնը որ հոգեվիճակն է հաւանաբար կարգ մը ժողովուրդներու, իրենց սահմաններուն ետին բերդացած ու սահագրու: Չեմ բանար սա գուգորդութիւններուն կախարդ հանգոյցը: Հիմա ոչ արքայ ունինք, ոչ ալ նախարար:

Ան որ այս տողերը պիտի կարդայ մոռալ, գորշ խանութի մը անկիւնը, կամ խարխուլ խրճիթի մը սեմին, եւ կամ ելեկտրական զանգակներով ոսկերանգ սրահի մը մէջ, եթէ իր տարիքը պիտի արտօնէ իրեն, հազիւ յիշէ պիտի այն միւսները, ասոնք ալ խանութ, խրճիթ, սրահներ, որոնք, շատ հեռու երկրամասի մը մէջ, իրաւ է՝ յաճախ երկիւղառիթ պատկերներու խառնուած, պատասպարեր էին իր անօթութիւնը, յոգնութիւնը, պղտոր ու ճիղճ ալ հաճոյքները, մայրը, զակրները: Որոնք, իրենց հնադարեան կամ քիչիկ մը արդի յօրինուածքին հակառակ, զինքը կը պաշտպանէին սա աշխարհին չարիքէն, կրցածնուն չափ, ու իր հոգիին յատակը գտեր, յարդարեր էին, կեանք ըսուած երեւոյթը ընդունելու, առանց մեծ տագնապանքի, զայն գործածելու ի հաշիւ քանի մը խուլ, անթեղուած բայց անհունապէս հզօր բնագոյներու (երբեմն ապրիլը խելքի գործ չէ), հիներէն իրեն եկած ու իրմով ուրիշներու յանձնելի տուրքերու...: Ան ու նմանները կրնա՞ն չայցուիլ յաճախանքէն այս կարգէ զգայութեանց, անոնց լայնքէն, վստահութենէն, գրեթէ երջանկութենէն որոնք այդ խեղճ կառոյցներուն ողկոյզներէն անդադար կը ծորէին խորը իր ուժերու սրբարանին: Վասն զի սեպհականութեան նեղ ու պզտիկ զգացումները, յաճախ կը հալածուէին, կը հալէին ուրիշ աւելի ազնիւ, աւելի բարձրորակ զգացումներու արձակութեան մէջ երբ այդ մարդերը, սանկ առանց որոշ նպատակի, հեղ մը դուրս տանէին իրենց մարմինները, ու անուշիկ աչք ածէին իրենց

գեղը, քաղքիկը շրջանակող պատկերներուն: Անոնք անշուշտ գիտէին թէ այդ քաղցր գիծերէն քիչ անդին սկիզբն էր դժոխքին, թէ իրենց գերութիւնը զիրենք կը վարսէր իրենց անմիջական փարախներուն: Թէ օտարին կրունկները միշտ պատրաստ էին կործանելու կախարդ այդ պարիսպները իրենց անհատականութեան: Բայց այդ մարդերը հարիւր անգամ աւելի պաշտպանուած էին քան այսօրուան **քարիաներս**:

Այսօ՞ր:

– Մոռցած ենք հողը:

Այսինքն՝

ամէն **հոգեղէն** կառոյցի հզօր ու հաստատ պաշտպան այն **իրեղէն** աշխարհը որ, արտաքին, նիւթական ձեւերու հանրահանդէս մը թէւ, բայց՝ արտի, մրգաստանի, այգիի, անտառի, լեռան, գեղի, ջուրի, ու ծուռ ու մուռ կածաններու բիրազանակ կերպարանքներուն ներքեւ, դարէ դար, ի հեճուկս աւերածին յարաճուն ուժերուն, ծներ էր, կարծես հրաշքով, մեր իսկ ուղեղէն: Զի, ստոյգ է որ երկիր մը գործն է մարդոց բազուկներուն, բայց ատոնց հետ ու ատոնցմէ առաջ՝ թերեւս գործը ուղեղին: Դաշտավայրի մը վրայ վեհափառ ոստան մը՝ ուր վազէին բոլոր գիծերը հեռաստանէն փրթող, անշուշտ գանկ մըն է: Ու աւերակները, քարի կոյտեր կամ շաղախի շերտեր ըլլալնուն չափ, կործանած միտքեր են, երկրէ մը խօսող:

Հո՞ղը:

Որ, դարեր շարունակ, մայրագործով ու աննահանջ, յատակ, աւազան, «բանաւոր անդաստան», ընդունարան ճարեց մեր ոգեղէն տուրքերուն, այսօր այլասերման բոլոր **սթիկ-մաթներով** խարանահար տուրքէ ըր մեր ժողովուրդին: Այդ տուրքերը աւշայորդ, մշտառոյգ պահողը: Իր ընդերքի ստեղծարանին մէջ միշտ զանոնք մայրաւորողը: Անոնց բոլոր ստեղները, զանակները իւրակերպողը: Նիւթին եւ ոչ-նիւթին աշխարհներէն մեր ապրումին ոճը բեղմնաւորողը, աճեցնողը, մարմնաւորողը, զանոնք մեզի վերբերելու, անհաշուելի ուրիշ ձեւերու ներքեւ...:

Հո՞ղը,

այսինքն մեր իմացականության բոլոր մեծ կորագիծերը, որոնք լեռնե՛լ լեռ կը ձգուին բայց ճամբու կերպարանքին տակ մեր պատմության մեծ ձգտումները կը թելադրեն: Մեր անձանձիր բազուկներով կարկինուած դաշտերուն ընդելոյց խճանկարները, երբ սարերու ոտքին, գարնան վերջերուն, կը փռեն իրենց գմբուխտն ու ոսկին, ու կը վառին հովերու շրթներէն...: Ու մեր ոտքերուն մուրճովը կտանատր մեր անուշիկ արահետները, բլուրէ բլուր, ընտանի, իրաւ իրենց թուփերուն մտերիմ պաշտպանութեամբ...: Ու ողկոյզները, փնջիկները մեր բնակարաններուն որոնք անշուշտ մեր ուղեղէն երկրաչափուեցան (ներեցէք սա գէշ բառին) ու ինկան մեր երկրին սա ու ան ծոցերուն, արտեսանունքին, ընդերքին:

Հիմա, հողը մեր գձձութիւնը, գայլութիւնը, գիշատիչ բնագոյները փաստող ախորժակ մըն է, գաղթաստանի մեծ տրտմութեանց մէջ, մեզ անգամ մըն ալ փոքրող: Հիմա, մեզմէ քիչեր միայն ընդունակ են մնացած ճիշդ չափելու, արժեւորելու շնորհը, խորհուրդը, գեղեցկութիւնը, հարսնային քաղցրութիւնը կորի մը այգիի գոր մեր պապերը բռնի կորգեցին ժայռաժուտ, փշայեղջ բլուրի մը կողերէն, վանեցին խոպանն ու տատասկը, գայլախազն ու դժնիկը, աւազն ու խօլաբոյսը, ու ածու յարդարեցին, անկողին շտկեցին գեղանի, աստղատերէտունկին որուն երակներէն արեւ ու երագ, արին ու ոսկի, քաղցրութիւն ու հրապոյր կը թուէին հոսիլ դէպի ճամբաները մեր սիրտերուն: Հիմա, մեզմէ քիչեր ընդունակ են հասկնալու հպարտ խռովքը, գողտր գոհունակութիւնը գորս կը թելադրէր նոյն սարի փէշերէն ճարուած պարտէզը, մրգաստանը, խիտ ծառերու կախարդ հիւսկէն մը գոր երիզեր վտակը իր փրփուրին ժանեակներովը, եւ որուն ճիւղերուն ընդմէջէն շողային աչքերը խնձորին ու տանձին...: Հազարներու մէջէն սա օրինակները բա՛ւ են ճշդելու հզօր, աննահանջ, դարաւոր վաստակը որով հայրենիք մը կը յօրինուի, ուղեղին, բազուկին, ճաշակին ու հոգիին համազանգ **տէմպովը**, ինչպէս կ'ըսեն հիմա արեւելահայերը, երկաթն ու փոթասն ալ խառնելով ճիգին:

Բայց տխուրը ան է որ ոչ միայն մոռցած ենք հողը, այլ անհատորդ ալ կը դառնանք արժէքին որ կը ներկայացնէր հողին վաստակը ցեղային ուժին մայր-տոմարին վրայ: Գաղութներու մէջ իրաւ, հասկնալի սա չտեսութիւնը աղէտ է սակայն մայր երկրին մէջ: Հուս նիւթը ճարտարարուեստները հիմա շահ է ու հաշիւ, ծախու ցորեն կամ արտածուելիք գինի, պահածոյ: Ու չէ՛ ինչ որ էր մեր պապերուն. – այսինքն՝ **ասոնցմէ անդին**: Այսինքն ու մանաւանդ՝ **հայրենեաց հող, սուրբ գերեզման մեր հարանց, օրօրան ծնածներուն ու մրցարան, կրկէս մեծցողներուն**: Այսինքն **մշակոյթը**, որ շատ աւելի ընդարձակ տարագ մըն է քան ան որ կը թելադրուի, երբ քանի մը գիրք, շէնք կամ նկար նկատի կ'առնէ, քով քովի բերելու համար ժողովուրդի մը հոգեկան շինուածքը...:

Թող ներուի ինձ, արագ, անամբողջ (որովհետեւ չենք անդրադառնար թէ պատառ մը գեղեցկութիւնն անգամ անհուն համադրութիւն է) քանի մը թուում այդ մշակոյթին տարրերէն, փշուրներէն, ալ մեզի համար պարպուած՝ իրենց ոգեղէն էութենէն վտարուած՝ բառերու, որոնք մեր հեռու անցեալին մէջ մեզ կը սփոփէին, կը յուսադրէին ու մեզ զգետնող աղէտները հանդուրժելու, տիրակալելու մոայլ հերոսութիւնը կը ներշնչէին մեծին ու պզտիկին, ասպետին ու պարեգօտաւորին (եկեղեցականին), աւագին ու անաւագին: Ընդարձակ է մեր պատմութիւնը, նայեցէք անոր դարերուն: Որ մէկին ալ կենաք սեմին, դուք լիառատ ունիք այդ փշրանքներէն, հասած մինչեւ մեր չկամ, չտես իմաստութեան օրերուն ուր ատոնք արհամարհելը մրցանիշ է դարձած մեզմէ ամենէն խելացիներուն:

Կը մօտենամ, ամենէն հիններուն ու ամենէն պարզերուն, բայց այդ անցեալն ի վար ամենէն ուժովներուն որոնք գուցէ այդ հանգամանքին իսկ համար, ամենէն դիւրաւ լքուողները եղան:

\*

\* \*

Մոռցած ենք

– Կաթողիկէները, մատուռները, վկայարանները:

Բառե՛ր, գաղթաստանին համար բոլորովին անիմաստ. հայրենիքին մէջ՝ հաւանաբար հաւերու կամ խոզերու բուծարան: Բայց որոնց ոճը, ճարտարապետական այնքան բացառիկ յաջողուանքը (մինակ մեծղին կամ վսեմը չեն որ կը տիրեն մեր հոգիներուն), մեր երկրին, ոգեղէնը՝ մարմար կամ կռանիթ կայլակներու նման վառման հանող հայայատուկ, գողտր համեստութիւնը, թաքուն, իր ներսէն իր համը ստեղծող շնորհները չէ որ կը չափազանցեմ, երբ գաղթաստանին կոնծած, անոճ, տաժանգին մերկութիւններուն կամ խոնաւահար, գորշամոյն շէնքերուն ցուրտ, վանող, ծակծրկող օտարութենէն յոգնած, վիրաւոր իմ նայուածքը կը սուգուի ծոցին մէջը մտատեսիլ իմ հայրենիքին ու իրմով իմ մէջ շէն, իմ մէջ կանգուն ձեւերուն անտառին: Այլ ունիմ նկատի մարդկօրէն իրաւ, պարզ, թերեւս անխուսափելի սլացքը, **բուխքը**, դէպի երկինք **ուռելու, դէպի կապոյտը ինքզինք արձակելու** անուշիկ, մեզայատուկ կշռոյթը որով կը գատուին այդ բառերով որակուած կառոյցները ուրիշներու նմանատիպ ճարտարապետութենէն, ճիշդ այնպէս, ինչպէս կը մասնաւորուէր, կը գատուէր մեր հողին միւս ստեղծումը, մեր կրօնքը, մեզ շրջապատողներուն այլախարիսի հանգանակներէն: Ո՞վ տրվեցուց մեզի **մենք մեզ միայն ըլլալ**: Նոյնիսկ այն օրերուն, երբ դարաւոր կայսրութիւն մը փորձեց մեզի բռնադրել իր մշակոյթը, կրակին իր պաշտամունքը, կամ Արեւմուտքի մէկ ուրիշ կայսրութիւնը երբ մտադրեց մեզի պարտադրել մտածման իր կաղապարները, ու խնամարկել, կրօնական բարուրանքի տակ մեր միտքը, մենք մերժեցինք, – ու ինչ ահաւոր, անասելի գինով – առաջինին նուաճամուլ, շամփուշ, երկրորդին նենգօրէն հեռահայեաց ախորժակները, ու ջանք ունեցանք մեր ոստայնը զարնելու **մեր անկիւնին**: Հարցը հոն չէ թէ այդ կերպ ընելով ինչ եղաւ մեր շահը: Այլ հոն՝ թէ ուրիշ կերպ մը չայցելեց մեզի: Տեղաւորեցինք մեր հասկացողութիւնը մեր կաղապարներուն մէջ ու **գատուեցանք**: Այսօր դիրքին է հեզնել մեր պապերուն անհասկացողութիւնը, ասիացիութիւնը, հերձուածողի հոգեբանութիւնը, մարզի մը վրայ որ ամայութիւն

Է բոլորովին: Բայց Ե. դարո՞ւն: Ու անելի վարերո՞ւն: Կրօնական տարակարծությունները, հերետիկոսությունը ամենէն հզօր խռովքներու ծնունդը եղան, ու կը բովանդակեն շրջանին ամբողջ ոգեղէն տազնապները: Մեր քրիստոնէությունը մանաւանդ առաջաւոր Միջնադարուն, կը պարզէ իւրայատուկ նկարագիրներ: Չեղաւ անիկա նրբամազ, **subtile** խաղարկությունը Միտքին կամ աշխարհուրաց, այլամերժ, երկինքով մրրկած ու մրկած խստություն ինչպէս է դիմագիծը հելլէնականութեան երբ կը մտնէ յուդայականութեան նոր փուլին, Մերձաւոր Արեւելքի մէջ բազմությունները հանդերձելով չափազանց մարդակեդրոն երկինքի մը նուաճումին, Մուրիա, Եգիպտոս ոտքի նետելով, ամբոխելով բանակները անապատ հալածողներուն, սատանայ խաչողներուն, քարայրներուն տրտում, տազնապահար հսկողներուն, խստեռանդն բայց աղուահոգի սուրբերուն: Գիտէք ի՞նչ անուշություն է այս խարազնազգեստ, կիսամերկ մարդոց կարաւանին դէմ ծիրանեծին կոյսին պատկերը, որ պիտի նահատակուի երկնաւոր Փեսային սիրոյն, իր հօրը ձեռքով. այնքան գողտր մարդկայնություն մը բերելով չարաշուք արեան բաղնիքներուն որոնք բազմություններուն հեշտանքը կը կազմէին այդ դարերուն: Զուր տեղը չէ որ մեր վկայաբանութեան ամենէն կանխաւոր դէմքը աղջիկ մը ըլլայ թագաւորի...: Ու միւսներն ալ չըլլան հագած դաժան կարծրությունը ուրիշ եկեղեցիներու նահատակներուն, մեծ մասով նախանձայորդ (**zélé**) ու յարձակող, այսինքն՝ բիրտ, խիստ, ինչպէս պարտքն է ըլլալ բոլոր մեծ մարտիկներուն: Բայց ահա տարօրինակը: Ան որ Անգղ աւանին եկեղեցին վրայ պիտի վարէ ժողովրդական յարձակումը, հոն նորոգ հաստատուած ատրուշանը եւ ասոր սպասարկու մոզերուն գլուխները ջարդ ու փշուր ընելով, պիտի քաւէ կարծես այդ խստությունը, զինովը այնքան սրտառուչ որքան գեղեցիկ մահուան մը: Ղեւնդեանց նահատակութեան հանդէսը, Եղիշէի մէջ, անմահ գեղեցկութեամբ բացառիկ էջ մըն է, խորապէս հարագատ, հայ, նման այն բիրտներուն որոնք իր պատմությունն ի վեր այս ժողովուրդը կընեն այնքան տարբեր, այնքան զատ...:

Ձուր տեղը չէ որ Էջմիածնի Մայր Տաճարը, թեև պիտի բխի «սանդարամետք անդնդոց»ի շրթներեն, այսինքն խաւարին ուժերուն ընդերքէն, բայց պիտի զարտուղի, ամենէն առաջ, չըլլալով՝ բռնութեան ցայտք մը, խուլօրէն ենթակայ կամ ոճին մէջը բխման ճնշումին, ըսել կուզեմ՝ արտայայտէ սարսափի, կատաղի սիրոյ, ու մանաւանդ ատելութեամբ գերայագ զգայութիւններ ինչպէս մարդ կը տպաւորուի Թուրքերու առաջատար յիշատակարաններէն<sup>4</sup>, իրենց քանի մը մայրաքաղաքներուն մէջ: Մայր Տաճարը, կըսեն, դաս մըն է գղջումի, փաստ մը՝ քա-

---

<sup>4</sup> Աչքիս առջեւն է վայրանկարը, կախարդական իր գիծերով, Բիւթանական հին ոստանի մը մէջ (Պրուսա): Չեմ նկարագրեր զայն: Կարգ մը տեղեր վեր են մեր ստեղներուն հասողութենէն: Ու չեմ նկարագրեր յիշատակարանը որ այդ վայրանկարին վրայ կը բարձրանայ, Կայծակ Պայազիտին անորակելի յիշատակը կոթողելու պաշտօնով: Չես կրնար չհիանալ, տեղին, անունին, պահին հետ այնքան ներդաշնակ այդ գլուխ-գործոց յիշատակարանին այնքան բարկ, պիրկ գեղեցկութեանը վրայ, առանց «սրտէդ բռնուելու», արհնէդ տառապելու, այցուած՝ ոչ անշուշտ պատմութեան տռամայէն, այլ սլաքներուն տակը այն ոգեղէն խստութեան, դաժան, վայրագ, անողոք ճնշումին որ ժողովուրդներուն ոճն է, մանաւանդ քարերուն լեզուովը: Հոն էր անիկա, իմ տղայութեան, հինգ դարերու սարսափ մը նիզակած, իր մինարէներուն սուիներովը: Հոն է անիկա, շրջավայրին դրախտային բիւրեղակերպ զգայութիւնները հակակշռելով ու մօտեցողը նուաճելով: Ոչ Գահիրէն, ոչ Պոլիսը, ոչ Ադրիանուպոլիսը, նման յիշատակարաններու այնքան առատ իրենց նմոյշներուն մէջ, ինծի չեն տուած անձուկը սա խուժոժ զգայութիւններուն: Մեզմէ դուրս մեր հեղումները, քարի կամ կտաւի այիքներով անժուժելի, ահագոյ, կամ ներհակէն՝ քնքուշ, փարելի ընող բա՛նը: – Ապահովաբար **ոգին**: Թուրք պետութեան առաջին դարու սուլթանները այդ մարմարեայ զարհուրանքն էին անշուշտ, երբ իրենց հօրը սուրը ամենէն առաջ կը թաթխէին իրենց եղբայրներու արհնին մէջը...: Ու անոնց ժողովուրդը՝ այդ սպիտակ սարսա՛փը՝ հեշտախոտով, ջերմածուփ ու քաղցրաւէտ վայրերուն վրայ, կործանման ու մահուան թաթառ, երբ մեկ շունչով քալեց Արեւմուտք, մինչև դռները Վիեննայի, ու ծախեց, սպառեց իրմէ հարիւր անգամ փարթամ քաղաքակրթութիւններ: Անոնք որ այցելած են Այրարատեան դաշտավայրը ու կեցած Էջմիածնի համապատկերին դիմաց, զգացած են այլապէս գողտր, սխրագին բաներ: Կարդացէք Լինչը, համոզուելու համար ցեղերու հոգիներուն տարողութեան մասին, իրենց սրբավայրերուն պատգամին ընդմէջէն:

ուրթեան ծարաւի, մարդկունակ ու տրտում շարժում մը դէպի վեր: Որ, դարէ դար, անորակելի զգացականութեամբ լեռան մը ոտքին (որքան խորունկ են լեռներուն հոգիները, իրենց **Քաջք**երուն հսկայ գեղեցկութիւններէն անկախաբար), մեծութեան իսկ ճնշումով ըսես այրեցաւ, բռնադիր, գորշ թախծութիւններ պիտի ջանայ մեղմել, մարդկայնացնել, այդ կրակէն լափուած, նորէն ծնած, նորէն մարսուած ամայաստանին վրայ իբր մեղմութեան, չափի հանդէս ձեւելով իր կաթողիկէները ու, ներքին **aisance**ի, ինքնամփոփ ու ինքնաբաւ խորացման, իւրակերպ երկնայնացման խորշեր ստեղծելով, գողնալով վայրագ վայրապատկերէն, երբ, սեղմ ու մեղմ գմբէթներու բաժակներուն կը վստահի իր աղաչանքին ընծայումը դէպի իր Աստուածը, աւ ալ տարբեր՝ մեր դրացիներով մտապատկերուած Երկնակալէն: Տասնըհինգ դարերու ապրում ենք դիզած մենք այդ պարզուկ կառոյցներուն ամէն մէկ գիծին: Մեր սրբարաննէ ըր, որոնց թիւէն աւելի խորհուրդը կը դպի մտքիս, երբ լեռնակուտակ աւերներու սիրտին կը բանան իրենց գողտրիկ, կանանչորակ որմերուն յոյսը, լուռ հեզութեան մը նման, բռնութեան ուժերուն երեսին նետուած: Մեր մատուոները, ուխտավայրերը, ինչպէս՝ մեր հիւղակներուն ներքնայարդար, մենասէր ջերմութիւնը, ու անոնց մարդամօտ, հիւրընկալ, հրաւիրակ ընտանութիւնը, անշուշտ քիչ մը մութ, միշտ տրտում, ինչպէս է արդէն կեանքը մեր գլխուն, բայց, երբեք՝ գձուձ, շահափոյթ, մակաբոյծ, ինչպէս են նոյն այդ շէնքերը Արեւելքի շատ մը ժողովուրդներու մօտ: Պզտի՛կ: Ամփո՛փ: Բայց գրաւիչ: Չէինք կրնար Դ. դարուն (որ մեր կրօնական ապրումներուն խորագոյն շրջանը կը թելադրէ) **Սուրբ Սոփիա** մը մրրկօրէն դիզել դէպի երկինք, ոչ թէ՛ տարրերը սանձող, զանոնք թեւաւորող, մեր հոգիին կերպադրելու չափ զանոնք կակուղ, խմոր ընող ուժերու պակասէն (մեր ոճը այդ հրաշքները իրագործեց մեր ճարտարապետութեան գլուխ-գործոցներուն մէջ, մեր լեռներէն «**մարմարը**» շարունակ «**կթուեցաւ**», ու մեր արքաներն ու-ուհիները, իրենց կոնակները չզգուշացուցին բիրտ նիւթէն որ այդպէս պիտի ըներ առաջին աչքը դէպի

երկինք սանդուխին), ոչ թե մեծին, մեծղիին, դաժան վսեմին ու անժուժելի խոյանքին հանդէպ ընդոծին ապազգածութեամբ մը, այլ շատ հաւանաբար խո՛ւ կ'ըշտոյթին տակը՝ դարերու մեր ապրումներուն, ուր դաշտավայրն ու սարահարթը, վայրագ համապատկերն ինչպէս քնքշենի տեսարանները լեռնապատան խորշերուն, ու մեր պատմութեան մեծ կսկիծներն ու պատրանքները կը բիրեղանան, առանց մեր գիտնալուն, ու կը թելադրեն գողտր, քաղցր, մարդկայինին մէջ խորանիստ ու իրաւ ձեւեր: **Մերը իրագործելը** ինքնատպութեան սին մարմաջ մը չէ, այլ ով գիտէ կանխող քանի դարերու դասը՝ գոր վերլուծել ու հասկնալ գուցէ ըլլայ դուրս՝ վեր մեր միջոցներէն: Ոչինչ չէ մնացած այդ վաղնջաւոր, նախաւոր կառոյցներէն որպէսզի հանգիտութիւններ, մերձեցումներ, ճշդումներ ըլլային փնտռելի եւ ներելի: Չրի չէ անշուշտ վարկածը որով ճարտարապետութիւնը արուեստներէն ամենէն ազգայինը կը դաւանուի: Մոռցուած հայրենիքին անմոռանալի տեսիլքը: Ով որ, անթառամ, գմրուխտէ մարմինով դարատափի մը կուշտին, իրարմէ աղուոր ու փափուկ աղբիւրներու բազմերանգ նշույումներուն հովութեանը մէջ, քաղցրուղէջ ծառերու գգուանքն ու համբոյրն ի վեր իր մանրիկ սաղաւարտը կանչըւորած կամ գորշախոց մեր մատուռին գիւտն ընէ, երբ կը թափառի մեր ծմակներուն ու ձորերուն պաղատանքն ի վար, ու տայ քիչիկ մը ծանրացող ականջ, ինքզինքը ամփոփ ու իրաւ ըրած, ճիւղերու փսփսութիւն, ջուրերուն ճլուրլիւնին ու չերեցող բայց հաւանաբար մանկատի բերնէ մը ոստայնըւած ու «սիրտ փաթթող» երգի մը ալեակներուն, ան պիտի հասկնայ, սրտառուչ, սխրագին, լաց բերող քաղցրութիւնը հին փշրանքին

Տեղ ոսկի տեղայր...

Տեղայր մարգարիտ...

տերեւներէն կաթող, ու արեւին մէջ բռնկած կայլակներուն փայլակնակերպ անձրելը թելադրող: Պիտի հասկնայ ոչ միայն հարսնացող թագուհիներուն հրաշքը, ու իր պապերը, – այդ շատ սխրալի, անհունապէս թշուառ բայց նոյնքան մըն ալ յուսապատար, արի, իմաստուն, դիմացկուն հերոսները արդար

վաստակին, ինքնամփոփ լրջութեան ու երկնաբաղձիկ բարութեան –, այլ թերեւս **պիտի հասկնայ** քիչիկ մըն ալ **ինքզինքը**, այսօր՝ այլատարագ բայց խորքին մէջ նոյն ու մէկ իր գերութեան վիրապին: Ու սփոփուի: Մի արհամարհէք քարերուն դասը: Ո՞րն է այսօր երիտասարդը որ չտառապի: Ու ո՞րն է տարիքն առածներէն մարդը որ չըլլայ ստիպուած իր տառապանքը պատանքի մը պէս իր հետ կրելու, ամէն բոպէ, անով սպառնալու բոլոր հոգեառներուն...: ...Ով որ, նման տագնապանքի պահերուն, իր վրայ խուժող ցաւերէն զայրագնած, կոտրէ իր ծունկը կէսէն փրթած խաչքարի մը պատուանդանին, ու ջանայ, մտովի, տեսնել, զգալ աղապատանքը, հաւատքը, դասը ձեռքերուն որոնք զայն տնկեր էին հող, գուցէ արեան բաղնիք մը կամ խաղաղութեան օր մը յաւերժելու դիտումով, իրենց «անցաւոր» մարմինէն անդին «անցնելու», իրենց վիշտն ու հաճոյքը այդպէս արձանելով, գալիքներուն ուշքին, ան, վստահ եղէք, հասկնայ պիտի պատգամը այդ ձեռքերուն, քարի կերպարանքով մատուցուած իր եղբարցը, պատգամը՝ չլքուելու ցեղին խորհուրդէն: Պատգամը՝ **դիմանալու**: Ու լաւ իմացէք. գիրքեր չեն բաւական սպառելու ամբողջ շարանը այն զգայութիւններուն որոնք յանձնուած են մէկ հատիկ սրբավայրի իսկ շրջանակին, բիրաւոր սիրտերէ, դարերու ճամբով, ու քարի, գոյնի, մագաղաթի ձեւերով:

Մոռցած ենք այս ամէնը, գաղթաստանի իմաստուններս:

Մոռցած ենք այս ամէնը հայոց աշխարհին արդի իմաստուն նախարարները:

(Վերջ)

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, ԺԴ. ՏԱՐԻ, ԹԻԻ 10–11, ՀՈԿՏԵՄԲԵՐ–ՆՈՅՆԵՄԲԵՐ, 1940, էջ 261–265)

Ծանոթ. իմբացիրի

«Մոռցուածներն են՝ հողը, կաթողիկէները, մատուռները եւ վկայարանները»  
(Մարկ Նշանեան, *Յակոբ Օշականի մատենագիտութիւն*, Լոս Անճելըս, 1999,  
էջ 65): «Առաջին մասը լոյս տեսած էր *Միտնի* մէջ Ապրիլ 1936ին» (*Նոյն*, էջ 65):

# ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱԻԻԹ

## ՔՆԱՐԱԽԱՂ

### ՆԱԽԵՐԳԱՆՔ

*Լեռնանիստ դղեակ մը, բակին՝ ժողովուրդ. քովնտի՝ մատուռ:  
Մատուռի գալթին*

#### Խմբերգը

Տօնն է այսօր  
Մարութայ Սուրբ Աստուածածնին:

#### Ժողովուրդը

*(Խաչակնքելով)*  
Թող տարածուն իր սուրբ ձեռներ,  
Զակըներուն վըրայ մատաղ  
Մեր բոլորին:

#### Խմբերգը

Բացունիս դռները մեղաւոր  
Հոգիներուն.  
Օր է ուխտի. օր ուզելու  
Ամէն բարիք  
Աստուածածնէն Մարութայ Սուրբ:

#### Վարդապետը

Օրհնեալ, գովեալ, բարեբանեալ  
Օրն է փոխման,  
Տարեդարձին մօրն Աստուծոյ  
Ըրէք առջեւ իր պատկերին  
Ուխտերը ձեր:  
Ընծաներն ալ բխած սրտէն  
Ձեր բարեպաշտ,

Մեծ ու պզտիկ,  
Բերեք դնել իր սեղանին՝  
Օրհնեալ, գովեալ, բարեբանեալ:

**Աղջնակ մը**

*(Փունջ մը ծաղիկ կը դնէ սեղանին ու ծնրադիր)*

Բաց, Տիրամայր,  
Ճամբան լոյսին

Աչըններուն իմ քուրիկին՝

Կուղպ թարթիչով եկած աշխարհ:

*(Կը խաչակնքէ, կը համբուրէ սեղանին մարմար խաչը ու կը քաշուի)*

**Կին մը (Հասուկ)**

*(Մափոր մը մեղր կը դնէ սեղանին)*

Մեղրի նրման ըրէ անուշ

Միրտն անօրէն բոնաւորին

Վըրան գերի մէկհատիկիս՝

Մարայ քաղաք, երեք տարի:

**Մարդ մը (Հասուկ)**

*(Գիրկ մը որայ կը դնէ սեղանին ոտքին)*

Տուր արտերուն

Առատութիւն.

Յորենն ըրէ անսպառ դուն

Գեղ ու քաղքի

Ամպարներուն:

**Երիտասարդ մը**

*(Մակառ մը խաղող կը դնէ նոյն սեղանին)*

Ըրէ արիւնը մեր կըրակ

Երակներուն մէջ բոլորին.

Վազցուր ուժեղ, քաղցրութենէդ

Բազուկներուն ու սրտերուն

Մեր բոլորին:

### Խմբերգը

Ընդունական ըլլայ նուէրն  
Մասնայ բարի ժողովուրդին:  
Մայրն Աստուծոյ մատուցանող  
Ամենահաս իր Միածնին:  
Օրն է բարի, օր ուզելու.  
Բաց են երբեմն երկնի դռներ:

### Չայներ

Մհերը, Մհերը, Սասնոյ առիւծ  
Թագաւորը:

### Մներ

*(Ձէն ու զարդով կը մտնէ մատուռ: Կը ծնրադրէ խորանին ու բռայէ մը  
գլուխը գետնին պահելէ վերջ, կը բարձրանայ դանդաղ)*

Ինկաւ առջիդ, Սուրբ Տիրամայր,  
Սասնայ իշխան:  
Օրն է նորէն քու մեծ տօնին:  
Քառսուն տարի, ես այս օրին,  
Չպակսեցայ ծունկ դնելէ  
Քու սեղանին սա մարմարին:  
Քառսուն տարի, միշտ այս օրին,  
Բերի խնդրանքն իմ մէկ հատիկ  
Քու խորանին:  
Ալ կը դողայ սուրը ձեռքիս.  
Պաղն է բռներ հուրքը սրտիս.  
Ձիւն է ընկեր վրան գլխուս  
Ու մօրուքիս.  
Բայց չէ մարած լոյսն իմ հոգւոյն:

### Խմբերգը

Վեր է մարդոց համրանքներէն  
Չափն Աստրծոյ:  
Պարտքը մարդոց որդիներուն  
Ուզելն է միշտ

Առանց դուլի ու լքումի  
Անոր ամբաւ բարութենէն:  
Օրն է բարի, օր ուզելու:

### Միեր

Ահա առջիդ, թուր կայծակին.  
*(Մէջքէն կը քակէ թուրը եւ կը դնէ սեղանին)*  
Ահա առջիդ, խաչը հրզօր  
Պատարագին:  
*(Կուրծքէն կը հանէ խաչը ու կը դնէ սեղանին)*  
Ահա ոսկի կամար գօտին:  
*(Կը քակէ մէջքէն կամար գօտին ու կը դնէ սեղանին)*  
Նուէր քեզի, Աստուածածին,  
Հըրեղէն ձին՝  
Մասնայ մեծ տան  
Քուռկիկն աղուոր,  
Իմ ճէլալին:

### Խմբերգը

Ընդունական ընծան ըլլայ  
Մասնայ իշխան  
Մեր Մըհերին:

### Միեր

Մեծ տասն աւան, երկու տաս շէն  
Մարութայ սուրբ եկեղեցւոյն  
Նուէր ինձմէ:  
Յիշատակին մեռելներուն  
Մասմանց տունին,  
Բարօրութեանը ողջերուն,  
Ժողովուրդին,  
Թող մատուցուի սուրբ պատարագ  
Աւուրանցըն դատաստանին:

### Խմբերգը

Յիշատակը արդարներուն  
Օրհնութիւնով ըլլայ ընդ միշտ:

### Մեր

Քուկդ է իմ տուն,  
Մասունն ամբողջ՝  
Աստուածածին.  
Տղեկ մը մերկ,  
Տայիր ինծի,  
Չորցած բունէն տարիներու:

### Խմբերգը

Ընդունական, ընդունական, ընդունական  
Ուխտն ըլլայ թող  
Մասմայ իշխան մեր Մերին:

### Մեր

Մանչ մը ժառանգ Մասմայ գահին:  
Անցնի գըլուխն այս գեղեցիկ  
Լեռնաշխարհի ժողովուրդին:  
Պաշտպանն ըլլայ սահմաններուն,  
Խաղաղութին գիւղակներուն,  
Վահան անյաղթ՝ սուրբ վանքերուն,  
Ապառաժի նրման քամակ՝  
Մեր զօրքերուն:  
Կապէ մեջքին ոսկի գօտին.  
Կողէն շողայ թուր կայծակին.  
Հեծած նժոյգը հրրեղէն  
– Քուկիկն իմ բաց –,  
Աջ թելին՝ խաչ պատարագին,  
Պըտըտընէ ահը Մասմայ  
Արեւելքին ու Հարաւին.  
Կապէ թելերն իսկ հաւքերուն

Անցնիլ սարէն, քու դռներէն.

Ոտքերն աղտոտ վոհմակներուն

Արեւելքին ու Հարաւին.

Զաւակ մը մանչ

Չորցած բունէն տարիներու:

*(Կը քաշուի մէկդի, առանց գլուխը վերցնելու, խոր երկիւղածութեամբ)*

### Թալին

*(Բազկատարած: Ճերմակ մազերը լուսապսակ կը յօրինեն գլխուն շուրջը: Պարզ է ու վսեմ)*

Տէր երկնաւոր,

Քու գութն հասաւ չոր Սառային,

Յովակիմին ու Աննային, Եղսաբեթին,

Մարմիններէն անոնց սառած

Ծնունդ տալու քու սուրբերուդ.

Մօրկանդ անուշ պաղատանքով

Դուն մարդասէր Յիսուս Քրիստոս,

Քակէ մարմնէս հանգոյցը պիղծ

Իմ ամլութեան:

Աղախինին քու սա թշուառ

Տուր ջերմանալ

Կըրակովը մայր ըլլալու.

Անուշութիւն ըզգալ կուրծքիս

Մանկան միսին.

Հաճոյքն անճառ՝ կաթ քաշիւելու

Մրտէս փրթած շրթունքներուն

Իմ ձագուկիս.

Զաւակ մը, Տէր, չորցած բունէն

Տարիներու:

### Վարդապետը

Օրհնեալ ես դուն, կիներուն մէջ,

Մայր Աստուծոյ.

Պըտուղն օրհնեալ՝ որովայնիդ,

Մայր Աստուծոյ.  
Ըրէ քու սիրտ բաց բոլորին  
Խնդիրքներուն,  
Թագաւորէն մինչեւ որբին,  
Մայր Աստուծոյ:

#### Խմբերգը

Ալէլուիա, Ալէլուիա  
Օրհնուած է ան որ կուգայ  
Անուամբ Հօր  
Եւ Որդւոյ  
Եւ Սուրբ Հոգւոյն:

*(Խոր լտուօրին: Որմէ վերջ թեթեւ շրջին մը թեւերու:  
Մեղանին վրայէն հրեշտակին նկարը կը զատուի, կիջնայ ատեան)*

#### Հրեշտակը

Ողջոյն Սասունի հօգր իշխանին:  
Ողջոյն բարեպաշտ անոր կողակից  
Թալին տիկինին:  
Ողջոյն Սասունի շէն ժողովուրդին:  
Հասաւ ձայնը ձեր  
Աստուծոյ գահին  
Միջնորդութեամբը Սուրբ Կոյս Մարիամին:  
Աւետիս ձեզի,  
Ժառանգ կունենայ  
Երկիրը Սասնայ:

#### Խմբերգը

Փառք բարձունքներու  
Բարի Աստրծուն:

#### Հրեշտակը

Չըսի ամենը: Լաւ ըրէք մտիկ:  
– Սասնայ իշխանն, իշխանուհին  
Ծնունդ տալէ վերջ ժառանգին

Նոյն օրուան մէջ ու նոյն ժամուն  
Պիտի յանձնեն իրենց հոգին  
Մէջն իմ ձեռքին:  
Մասնայ իշխանն, իշխանուհին  
Կընդունի՞ն գինն իրենց զակին. –  
Կը հարցնէ Տէրն իմ բերնով:

#### Միեր

Թող օրհնուի կամքն Աստուծոյ.  
Ո՞վ յաւիտեան մնացեր հոս:  
Թող գայ ժառանգն իմ արիւնէն.  
Գոցուին աչքերն իմ այս խաղաղ  
Լոյս աշխարհին:  
Ծոցն ես իջնեմ գերեզմանին,  
Ու ինծի հետ, մայրը զակին՝  
Թալին տիկին:  
Թող օրհնուի կամքն Աստուծոյ:  
Խօսէ, Թալին, քուկդ է կարգը:

#### Թալին

Դժուար՝ սրտէդ փրբթած որդին  
Յանձնել օտար ըստինքներու.  
Բայց քանի որ կամքն Աստուծոյ  
Կուզէ այդպէս,  
Ես աղախին, գետնի փոշի,  
Կը խոնարհիմ, այս բոպէին  
Իր պատգամին:  
Մէկ հատ փափաք  
Իմ հըրեշտակ.  
– Տամ ժում մը կաթ  
Իմ ձագուկին.  
Պագնեմ բերնիկն անոր մէկ հեղ.  
Յետոյ գոցուին թող իմ աչքեր  
Այս աշխարհին:

Մէկ բարձի ենք քառսուն տարի  
Ապրեր սիրով.  
Թող քրնանանք մենք նոյն բարձին  
Միերին հետ  
Աւուրանցըն դատաստանին.  
Օրհնեալ ըլլայ կամքն Աստուծոյ:

#### Հրեշտակը

Ինը ամիս ու ինն օրէն,  
Ինը ժամէն վերջ սա պահուն,  
Թալին տիկին,  
Դուն կը բերես այս աշխարհին  
Ժառանգը մեծ.  
Ան որ կոչուի պիտի դարեր  
Սասնայ Դաւիթ.  
Բազկով անյաղթ,  
Մարմնով ահեղ,  
Առիւծ պաշտպան  
Սա բարեպաշտ ժողովուրդին.  
Ինկէք ծունկի դուք սեղանին  
Մարութայ Սուրբ Աստուածածնին:  
(Կը ծնրադրեն բոլորը)

#### Խմբերգը

Թող օրհնուի ան որ կուգայ  
Անուամբ Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, ԺԵ. ՏԱՐԻ, ԹԻԻ 3-4, ՄԱՐՏ-ԱՊՐԻԼ, 1941, էջ 62-64)

Ծանոթ. իմբացիրի

«Տպուեցաւ հաստորի ձեւով Նոր Եորկի մէջ 1984ին, Թորգոմ Սրբ.ին ձեռամբ, Շահան Պերպերեանի ձայնագրութիւններուն հետ» (Մարկ Նշանեան, *Յակոբ Օշականի մատենագիտութիւն*, Լոս Անճելըս, 1999, էջ 65):

ԿԵԱՆՔԻՆ ՀԵՏ

ԱՂԱՉԵՄ ԶԱՆՓՈՓՈԽԵԼԻ...

Ա.

– «Աղաչեմ զանփոփոխելի տերութիւն ամենագոր ճոզ-  
ւոյդ հգորի...»:

Խոնաւ, բայց պայծառ ու մսկոտ լռութեան մը մէջէն, ուրկէ թարմ շուքեր անցնէին, այսպէս կը սկսի մտայլ ու քաղցրագիծ դէմքով պատանին իր ընթերցումը: Հինաւորաց ու փառաւոր կամարին ներքեւ, յստակ ու բարձր, որ կը թուի ծծել դողդոջ, քիչիկ մը խակ սա հոսումը բառերուն, մեղեդային ու անորոշ, ձա՛յնը՝ վարանոտ, մատաղ, փայփայանքի մը նման իր՝ նուրբ ծփանքը կը վերառաքէ դէպի բարկ, ցայտուն ծաղիկները՝ գմբէթը պսակագարդող, մաքուր ու տաք. նոյն ատեն զգաստ, լուրջ, բարի. կարծես զոջալով իրենց գեղեցկութիւնը, իմաստը, սա խստամբեր մարդոց վերեւ: Շէնքերու հոգին պարզ փոխաբերութիւն մը չէ: Անոնք, ժամանակին հետ ու մէջէն կընեն իւրացումներ իրենց ծոցին թաւալող յոյզերէն, ու կը փոխակերպեն զանոնք սեպահական թելադրանքի: Փնտռեցէք ձեր ետին: Ձեր ձգած տուներուն հոգին կը թափառի սա գերութեան գօտիներուն մէջ, ձեր շուրջը:

Առաջին առտուն է դպրոցական տարիի մը:

Տղաք: Որոնց ամրափակ կեցուածքէն, սեղաններուն առաջօք, դժուար է վերանալ արձակութեան, խանդին, անցնող հանգիստի ամիսներուն մէջ ուր լեռ ու բլուր ամէն օր ըրին առաթուր, իրենց բնագոյներուն անձնատուր: Լուրջ, իրաւ, ինքնամփոփ – իբրեւ թէ լեռներ չպառկէին իրենց մտքի հորիզոններուն, – կը հետեւին դասական ընթերցումին: Կրօնական է սա վերամուտը. տրտում, հանդիսաւոր, խորունկ: Կարդացուած է **Սերմնացանին առակը**, ըստ Մատթէոսի, հաւանաբար տղոց

ներսը ոգեկոչելով տարօրինակ վարդապետը, գլխուն հաւաքած խոնարհ գեղացիներուն հօտերը, անոնց այրած հոգիներէն ներս քաղցր իր բառերը անձրեւի պէս, ցօղի պէս «առաքելով»: Երգուած է **«Որք զարդարեցին»** շարականը ուր միտքը, իմաստը, լոյսը կը զգեստաւորուին, կը զարդարուին **«յարգանդ մաքուր Մեծին Մեսրոպայ»**, տղոց ներսը վերատեղծելով մեր պատմութեան նոյնքան տարօրինակ մէկ մարդը, զինուոր, քարտուղար, մարգարէ, խոտաճարակ ու անհուն աշխատանքի տիրական խորհրդանիշ, որ ցանած է **կրակը**, դարձեալ խոնարհ, անգիծ ուղեղներէն ներս իր աշակերտներուն, մաքրագործած տրտմութիւնները անգիր, անուսում, բուսային ապրումին, ու մղած զանոնք այդ կրակը տարտղնելու մեծ աշխարհի մը բոլոր ծագերուն:

Ինծի կուգայ թէ սա խորհրդաւոր արարողութիւնը փշրանք մըն է հին դարերէն, երբ, այժմու սա շքեղ շէնքին փոխարէն, սա տեղերուն վրայ, թշուառ ու ծուարած, կ'ապրէր նախնական կառոյց մը, քանի մը սենեակի ծաւալով, Ս. Յակոբայ Տաճարին իբրեւ տնկարան, եւ ուր, աշխարհին, Հայոց աշխարհին հեռու խորշերէն, բոպիկ բայց հաւատապինդ, տարուէ տարի կը փութային խմբուիլ թուխ կամ բաց մանչեր. կատաղի որքան խանդոտ, առոյգ ու յամառ, բայց տարօրէն բարի, ամուր, իրաւ հոգիներով, ամէն մէկը մեր հայրենիքին մէկ իսկութիւնը, մէկ սրբութիւնը իր ազագուն, կամ ցասկոտ, յորդ մարմինին մէջը, խորը թանգարանած, օր մը, պարագաներու արտօնութեամբ, զանոնք իբրեւ սրտառուչ գործունէութիւն, քաղցրագին նուիրում արժեւորելու խուլ ըղձաւորութեամբ: Անոնք էին որ պիտի կազմէին անընդհատ շարանը, աւելի վերջը, այն մարդոց, բոլորն ալ վարդապետ, առնուազն Միաբան, որոնք հայթայթեցին զինուորագրութիւնները նորօրինակ խաչակրութեան, նուիրուած **«Ս. Տեղեաց մէջ»** մեր իրաւունքները անայլայլ պահպանելու պարտքին ու փառքին: Այսպէս կը մղուի մտածել ամէն հայ որ աչքէ կ'անցընէ Տնօրինական Վայրերը, այդ մութ ու խորհրդաւոր ձգողութեամբ խորշերուն մէջ վազած երիտասարդական կորովը մտքով կը

չափե, ու կը մտերմանայ նսեմ այդ կամարներուն ներքեւ եռ եկող ահեղ կիրքերու գուպարին, պատմութեամբ կամ բանիւ բերանոյ հաղորդուած իրեն...: Անկարելի է չգմայլիլ սա ժողովուրդին ալքերուն խորը դեռ անյայտ ուժերու սա փաստերուն դիմաց:

Լրջութիւն: Տրտմութիւն: Երիտասարդութիւն: Ուսում ու պայքար: Կան այս բոլորին հետքերը տղոց ինչպէս անոնց մեծերուն վրայ: Վերէն, ալեփառ դէմքերու շարքէն մինչեւ հազիւ պարմանի տղաքը խոնարհագոյն դասարանին, պճլտուն ու միամիտ, ամէնուն ալ հոգին կ'այցուի պահէն վեր յուզումով մը: Փափուկ, տաք, համակ թրթռուն, սա պզտիկները, ոմանք դէպի մեծերը սեւեռաբիր: Ուրիշներ՝ ով գիտէ ինչ երագներու արշալոյսին մէջէն, թեթևօրէն ժպտագին, քանի որ այդ ժպիտը անոնց տարիքին ծորումն է անոնց մարմիններէն դուրս, «բռնկում» մը, ինչպէս կը պատկերէ բանաստեղծը: Շարժումը, թրթռումը ժպիտն է անոնց, ու, կեանքին ալ ծաղիկը: Մեծերուն հանգած, զուսպ տրտմութեան դիմաց մատողշուկ սա խանդը, լարուածքը, նետուածքը կը ստեղծեն պատկեր:

Սլացիկ ձեւերէ կազմուած սա աղեղին կեդրոնը՝ Նահապետը Աթոռին: Մօտ իր երեք քառորդ դարովը: Ծանր, խոհուն, նոյնիսկ տրտում: Աստուած գիտէ այցուած ինչ հեռու, խռովիչ յոյզերէ ու յուշերէ երբ իր նայուածքը փոխնիփոխ կը պտտցնէ տղոց շարքին կրկնակ թելերուն, այդպէս մատաղ, սլացիկ, կանանչ, ու, ինք պիտի ճշդեր՝ **կած ու կրակ**: Որքան դժուար է մեզի տղայ չըլլալ, սանկ չափահասութեան դռներուն: Բայց որքան ատոր գիտակցութիւնը իբրեւ հրուանդանը մեր ետին՝ մշուշէն կալանաւոր, դադրեր է իր իմաստէն: Ո վ տրտմութիւնը թեւաբեկ մարմիններուն... Կը փոքրանան անոր բիբերը, թերեւս ներքին ուրիշ տեսարաններու վրայ, թերեւս իր ալ **առաջին օրուան**, սա միտքի եւ հաւատքի պալատէն ներս, երբ շուարուն, թրթռագին, իրարմէ ուժով զգայութիւններու ցնցումներով հոգեպէս պարտասուն, իր աչքերը կը նետեր գմբէթի դրասանգներուն, ողկոյզ առ ողկոյզ, ու անոնցմէ՝ սլաքային անկումով մը, ետ, դէպի մօտիկ երէկը, կը բանար զանոնք նոր լքուած նկար-

ներու վրայ, ծովերով հեռի, կորսուած հայրենի տան սրտայոյց պատկերներուն ու ասոնցմով պայմանաւոր, մօր մը (որուն պակասը անելի խորունկ խռովք մըն է ոչ թէ որբութեան առաջին տարիներուն, այլ անելի վերջը երբ մայրն ենք մեր զաւակներուն,) հօր մը (որուն պակասը պիտի տառապեցնէ մեր չափահասութիւնը մանաւանդ, երբ զաւկի մը ձեռքէն բռնած կը քալենք դէպի մեր գերեզմանը), քոյր-եղբայրներու քաղցրութիւններուն, որոնց գումարն է մեր մարմինը ընդմէջ տասին եւ տասնըհինգին: Մինակ պտուղները չեն որ կը հասունանան: Նոյնն է բաղդը կարգ մը զգայութիւններու, մեր ներսը: Կան որ հունտին նման նետուած մեր միսերուն հերկին մէջ պիտի սպասեն, երբեմն երկու քառորդ դար, ծիլ մը արձակելու, շատ հաւանաբար գերեզմանի մը կուշտին: Ո՛վ մեր հոգին: Ո՛ր յիմարը քեզ կարծեց ճանչնալ ու կապել օրէնքներու: Բայց մեր հոգի՛ն: Որ բանտարկեալն է կախարդ վանդակին... Ինչ սրտառուջ՝ արցունքը անոնց, որոնք, ճերմակ մազերուն ցուրտին, պատանքին մէջ յանկարծ կը զգան կտուցիկը սրբազան այդ թռչունին, հեռու գարուններէն, անտաբեր, որ կը զարնէ ոսկի իր զարկը, իր բոյնը կուգէ ատ ձմեռին մէջը, թարմ, խարտեաշ, ծաւի, կապոյտ, ծիածանին բոլոր գոյներովը, ու սպասումէն յուսահատ, թերեւս ալ լալով մեր ու իր աներակին վրայ, կը թառի մեր ամէնուն համար միակ իրական թառին, – հողակոյտի մը վերեւ պարզուկ քառաթեւին... **«Ալիք իմաստութիւն մարդոյ են»:** Այո՛: Բայց զի՛նք որ ան արժած է մեզի: Բայց մանաւանդ զի՛նք, ներկայ արժէքը՝ այդ յիմարութեան, երբ մեր մատներն իսկ անգօր են բաժակ մը խելք մեր շրթունքին տանելու, մեր բազուկները կարկամ՝ որայ մը բարիք մեր ուսերուն բարձրացնելու, մեր ուղեղը՝ անբաւական՝ այդ այսքան սուղ գնուած իմաստութիւնը պահպանելու: Նահապետը Աթոռին այդ իմաստութիւնը գնած է զինով մը որ սակ չունի մեր աշխարհի շուկաներուն, շահաստաններուն վրայ: Կան բաներ որ կեանքով միայն կը գնուին: Ու դուք կը հասկնաք, պէտք է հասկնաք ասիկա:

Դպիրներու, սարկաւագներու սա թարմ խա՛նդը, յորդ հասակները (պիտի գրէի **հասկերը** եթէ չվախնայի բռնագրօութենէ), այնքան տարբեր ամէնուն գիտցածէն, սպասածէն, մանաւանդ կիսամութ, կիսադօտ մօրուքը որ այնքան վաղահաս տրտմութեամբ մը կը սգաւորէ անոնց ճակատը, կը ստուերէ անոնց կզակները, ոմանց մօտ աղուամագով թաւշըւած, ուրիշներու վրայ արդէն սեփ-սեւ հիւսք: ...Օր մը իմ ալ ուսերէս իջեր է այդ սեւ պատանքը ու պահ մը պատաներ իմ պատանութիւնը: Չայն, սառում, փշրանքը բառերուն, դէմքերուն տակ ճերմակ ձմեռը տարիքին, երիտասարդներուն մօտ կրակ գարունը սեւ աչքերուն... բոլորը, բոլորը կը խօսին ինծի, կը կենան ու կանցնին ինչպէս արձագանգ մը որ կ'ելլէ, կ'իջնէ, բլուր առ բլուր, նորէն կը դառնայ ետ ու յուսակտուր կը թաղուի ծոցը անդունդին, հոս՝ մօտիկ փոսը մեր կարճ տարիներուն...:

Աջին ու ձախին՝ ուրիշներ: Վեղարին աղօտանուշ ստուերին մէջ, ճերմակ ճերմակ ալիքներուն, տեղն է գրել իմաստովն ու փառքովը: Մէկը, որուն ողնասիւնը չէն կրցած կտրտել տարիներ, լայն իր ծերութիւնը հագեր է հպարտութեամբ, պիտի ըսէի երջանկութեամբ, եթէ չգիտնայի...: Միւսը, գորշախառն իր տրտմութեան մէջ որ մինակ տարիքին պսակը կամ յարդարանքը չէ ապահովաբար, այլ եւ քիչ մը մոխիրը սրբազան երագներու, բոլորն ալ պատրանքին պատաններովը իրենք զիրենք առեր պառկեր անոր հոգիին խորը: Ուրիշներ, իրարմէ տարբեր զգայութիւններու հանդէս մը, պա՛րզ՝ իմ աչքերուն: Բոլորին ալ ուսերուն սանկ քառորդ մը, երբեմն աւելի դար մը դաժան, տրտում սպասի, սրտեռանդն հալածուած սրբազան ուխտերու որոնք կը թուին պատանած ըլլալ ինչ որ ուրիշներ կեանք կը կոչեն...:

Անմիջապէս վար, դէպի տղաքը, տարբեր սլացք մը, առոյգ, կորովի, երիտասարդ ձեւերու, որոնց զլացուած ըլլար փառքը հասակին: Սքեմին սա զրկանքին հակառակ, պարեգօտաւոր այդ ճարտարապետութիւնը ունի ուրիշ ձգողութիւն մը, ինքզինքը պարտադրող: Բոլորին գլխէն վեղարը որ ստուերուն այդ դէմքերուն դալկութիւնը, երբեմն դեղնաւուն

մատաղութիւնը կը փորձէ կարծես հաշտեցնել ապայժամ, հեռու, մութ բաներուն տրտմութեան, խռովքին: Կան որ չեն նայիր: Կան որ հոն չեն: Կան որ ներսէն կարտասուեն: Խոնաւ ու մսկոտ ալիքին մէջը աղօթքին բառերուն, ամէն մէկը իր առագաստն է պարզեր, իր ուխտերուն, երազներուն ափունքները դէպի, խորունկ կսկիծին մէջ կենդանի ճենճերումին որ պսակն է, ըլլալու է իրենց օրերուն, երբ տարիներ վերջը այդ ափունքներուն խրած իրենց մարմինին խլեակները պիտի մէկտեղեն ու դնեն քառաթելի մը շուքին: Նայիլ իսկ վախնալով ծովերուն ուրկէ անցան, ցաւերուն որոնց ծոցը ապրեցան, յոյսերուն որոնք հորիզոնը ճեղքեցին, սուգուեցան անվերադարձ: Մեր օրերուն ո՛վ է հետաքրքրուեր ուրիշներուն ողբերգութեամբը: Ամէն մէկուն համար իրը բաւ է ու կաւելնայ անգամ: Երիտասարդ վարդապետները իրարու քով ու մէջ, իրենց ծփուն սեւ սաւաններով վարշամակուած, իրենց վեղարներուն սլացքովը երբ կը թաւալին իբրեւ մեծկակ ալիք մը սգաւոր եռանդի, տպաւորիչ են ու աւելի՛ իրենցմէ:

Տիրացուն կը շարունակէ «**ի դէմս Հոգւոյն Սրբոյ**» իր աղօթքը: Արեւը ա՛լ փառք է ու գեղեցկութիւն, զարնելով ոսկի իր վրձինը կամարին ստորագարդերուն, փշրուելով վեղարներու սլաքներէն ու բարակ հրդեհ մը վառելով ապակիներուն մէջէն ու վրան: Պահն է բռնկումի, դուրսի ու ներսի աշխարհներէն: Աղօթքին բառերը եղեր են իմաստ, հոգի, մթնոլորտ, լեցնող հսկայ կամարը, չորս թելերը վարժարանին: Ընտանի, ծանօթ, հոգեղէն **իբակասութիւն**, որուն մէջ անհատները արձակէին իրենց մտածումին արմատները, ծծելու համար հրապոյրն ու յոյզը որ մեր բառերէն կը բխին երբեմն:

Քիչ մը ետեւօք, ու քիչ մը հակ (դէպի գետին) կը հետեւիմ այս ամէնուն, աւելորդ է ըսել, բոլորէն աւելի տրտում: Հեռու, շատ հեռու բաներ կը դողան ինձմէ ներս, ընդմիջտ իբր թէ թողուած, որոնց վրայ «յարութեան շունչ մը» իյնար: Մէկէն՝ գիտակցութեան դաշտին ողողումը: Ինձի այնպէս կուգայ որ այդ ամէնը, սա աղօթքը, սա պատանութիւնը, սա երիտասարդութ-

իւնը, սա դաժան պայքարը ու սա ծանր, ապերախտ սպասը իմն էին, ապրեր էին իմ մէջը...:

...Ու կամաց, շատ կամաց որպէս թէ վախնային դիրաբեկ ոստայն մը բզքտելէ, անտեսանելի մատներ կերկարին իմ թարթիչներուն, իրարու հիւսելու, կարկտնելու անոնց մեղաւոր ցանցը, ընդդէմ աշխարհին: Դադրած է լոյսը՝ արեւէն ու դիւթքն ու մշուշը՝ ձայնէն: Կակուղ՝ պատերը իմ յուշերուն որոնք կընկրկին, հետզհետէ աւելի յստակ դառնալու համար: **Հասունութիւն**, որ վիճակ է որքան պատկեր, **յոգնութիւն**, **հանգիստի փափաք** որոնք զգացումներ, ամուր, յստակ, հողին համը մեղմել ջանացող, այնքան իրաւ իմ շուրջն ու ներսը: Ու վաստակաբեկ, ինչպէս կըսեն, աւելի ճիշդը՝ քաշուած ուժով, անխուսափելի ձգողութենէ մը, իմ գլուխը կը հակի քիչ մը աւելի խոնարհ, ընդունելու... փուշէ պսակը իմ ալ կէս դարուն: Ու պարոյր առ պարոյր կանցնին իմ ճակատէն սլաքումները ցաւին, մանր ասղնտուքովը աննահանջ սղոցումին: Ոչ հերոսութիւն ու ոչ համեստութիւն: **«Չափուած օրերը»** մարդը կընեն... իմաստուն, լայն, նոյնիսկ ժպտուն:

Չեմ գիտեր ինչու սա փուշէ սաղաւարտին տեսիլքը կը բռնանայ: Ու ահա անբացատրելի գուգորդութիւն մը մտքիս կը բերէ բանաստեղծին տողերը՝

**...«Ըզպըսակ երջանկութեան իմոյ առ ոտըս քո եղեալ  
Ձոր ի քնքուշ ձեռանէդ եւ ի գթոյդ եւ ընկալայ...»**

բանալով ամբողջ օտար, հեռու աշխարհ մը, սիրային տռաման ու ողջակէզ ճենձերումը մեր մեծ բանաստեղծներէն մէկուն: Ո՞ր պատրանքին կամ կսկիծին տակ քերթողը գրեց սա տողերը...: Անոնց ետին կը յառնէ այդ Պոլիսը, անոր աղօթիկները, անոր հոգին մանաւանդ որ այնքան թունդ իսկութեան մը նման կը ծաւալի իմ ջիղերուն ամբողջ ճամբաներէն...: Ո՞վ հեզնութիւնը կէանքին: Փուշէ պսակին խոնարհող գլուխը հիմա հանդէս մըն է այլապէս դժնդակ, անժուժելի զգացումներու, տարիներ իմ ներսը տուն տեղ եղած, իմ նեարդներուն ամէն մէկ մազէն իրենք զիրենք շաղապատող: Գրող ու յիմար նոյն ատեն: Քսան տարի այդ երիտասարդը գրեց, երգեց, խանդավառեց ու գերեզման

իջաւ որպէսզի դառնայ անկէ... իր երջանկութեան պսակը նետելու աղջկան մը ոտքին...: Լացընելու չափ տխուր է անշուշտ սա բումանթիզմը: Եւ սակայն ինչո՞ւ տարակոյսի մեղմ ժպիտ մը կուրուանայ լման հոգիիս երեսին: Ի՛նչ անթափանց խաւար, ինչ լեռնացած տրտմութիւն է իմ կէս դարը, ուր որքան սեւ բաներ պատ են կապեր, բանաստեղծին միամիտ բումանթիզմին փոխարէն: Ի՛նչ քնքուշ ձեռք: Ի՛նչ գութ: Ես չգտայ անոր հետքերուն<sup>5</sup> վրայէն ոչ իսկ գրական իր ներշնչումները: Իմ գտածը: Փափուկ ձեռքերուն տեղ, անողորք մուրճը ճակատագրին, սալին վրայ իմ երագներուն, կիրքերուն, պատրանքներուն: Իմ գտածը՝ անարգանքը, ուրացումը: Սուտը: Կեղծիքը: Անասնութիւնը: Հովիկին տեղ փոթորիկը: Հոտերուն տեղ արիւնը: Որոնք բաժինն եղան մեր սերունդին: Իմ գտածը՝ սուրը, անգթութեան, լրբութեան յեսանին վրայ անընդմեջ սրումով լման կէս դարու հասակով: Ի՛նչ շուտ կը մոռնամ սակայն կամ կը կարծեմ մոռնալ: Ժամանակի այդ չափին վերջին մասերուն ես ալ զգացեր եմ **ձեռքը**. իրաւ, բիրտ որ երկարեցաւ ոչ թէ պսակ դնելու, այլ կուրծքս պատռելու, խեղդելու համար հոն թփրտուն կայլակը կեանքին...: Տիրացուն անորոշ մրմունջին մէջէն կը շինուի, գարնանամուտ առտուն, ամայի ձորի մը կուշտին, իր գլուխը քարի մը վրայ տեղաւորել ջանացող մարդը, մորենիի մը թելերուն ներքեւ իր պսակին սպասող, ցաւին նիզակը սրտին խորամուխ, մինակ ու անօգնական, լքուած բոլոր իր ուժերէն: Կը շինուի կարօտի,

---

<sup>5</sup> Քանի քանի անգամներ եղեր եմ իր **Ալեմտաղին, առանց զեփիտի** (իմ գտածը պաղուկ հով մըն էր, հոտերով ծանրաբեռն, բայց... հասարակ, որչափ քիչ յիշեցնող կախարդ քերթուածին [**Առ զեփիտն Ալեմտաղի] զլմայլէի պարիկը**), **առանց աղջիկներու** (որոնք կը խօսէին ինծի թարմ, նուրբ իրենց մարմինին լեզուովը միայն, բոլորովին տարբեր այն խռովիչ պարէն գոր ունին անոնք նոյն քերթուածին մէջ): Մեծ ու իրաւ էր միայն **անտառը**, որուն ստուերներուն մէջ թեւանցիկ քալեցինք հիւանդ իր ուրուին հետ: Ու պարզ էին ծաղիկները դարձեալ որոնցմէ ան քաղեց նեկտարը իր ստեղծումին: Ու խորհիլ որ հազիւ քառորդ դար մեզ կ'անջրպետեր:

ընդվզումի, համակերպումի սուղ տռաման, երբ այդ սպասումին մեջ, **Ձեռքին** մեջը ճակատագրին, տողանցք ըրին իմ տարիները, ամեն մեկը արիւնոտ իր վերքերը թրթռուն վարդերու պէս վառման հանած...: Նստեցաւ սնարիս: Ո՛չ հոգեառ էր, ոչ ալ մահուան հրեշտակ: Ո՛չ աղջիկ, ոչ ալ երիտասարդ: Կը շարժէին շրթները: Կը թուէր խօսիլ բայց չէի լսեր: Դրաւ իր ափը ճակտիս: Պաղ էր ու իրաւ, կտաւէն այն տառապանքներուն որոնք պարուրեր էին իմ օրերը: Վերցուց: Նայեցանք իրարու: Կը տեսնէ՞ր ինչ որ պղպջակ առ պղպջակ կը բարձրանար իմ մտքին ծովէն: Իմ կարօտնէ՞րը սա սուտ աշխարհէն: Իմ ցա՛ւը իմ ձգելիք բաներէս...: Ու ըսաւ, կը լսէի իր բառերը.

– Յիմա՛ր: Ինչո՞ւ կը նայիս ետ, շուրջդ, առջեւդ: Եկած է պահը երբ ժամանակը, տեղը դադրին պիտի: Ո՞վ կոտրեց աչքերուդ ծիւնիները որպէսզի չկարենաս վեր նայիլ ուր խաղաղութիւնն է միսին ու արիւնին: Տղայ մը չես դուն: Կը տառապիս վերջնական ազատագրութեան սա հանգրուանին իսկ: Յիմա՛ր, որ չես գիտեր թէ կը ներուրի քեզի կասկածիլ երկինքէն բայց ոչ՝ խաղաղութենէն, ազատութենէն: Բայց դուն գիտես որ ուր կը կանչեն քեզ: Ամեն պարագայի, նոյն իսկ ամենէն վաւերական, անողոք սատանաներուն հետ աւելի դիւրին է լեզու գտնել, քանի որ միտքը չի կրնար ճշմարտութեան դէմ առարկել: Ահա խոշոր կայլակը որ մտքէդ վեր կը սլանայ, աշխարհէն ուզածներդ ամբողջ: Ցաւդ, հիմա այդ ցնդող բաներուն ետեւէն: Չտուաւ քեզի ուզածներդ սա ձեր աշխարհը: Բայց ինչո՞ւ չես տեսներ որ այդ աշխարհը ոչինչ կրնայ տալ արդէն ձեր թշուառ սրտին որուն մեղքը ծնունդին իսկ մեջն է: Երբ քսանամենի ճամբայ ինկար աշխարհդ նուաճելու, քովդ էի, շուքիդ պէս: Չմիջամտեցի յիմարութիւններուդ, չվախցնելու համար քեզ: Կրնայիր հոս ու հոն արցունք մը չորցնել, անցքիդ վրայ ժպիտ մը վառել պարզ սրտերու խորը – բաներ որոնք միայն նկատի կառնուին ցաւերու սա ովկէանի ափունքէն: Հիմա կ'ափսոսաս: Կրնամ մտիկ ընել սա վերջին յիմարութեանցդ ձայնն ալ: Բայց լաւ իմացիր: Պիտի գամ կրկին: Հաշիւ

ունիս տալու: Առայժմ չեմ կրնար քեզի քանի մը կարճ թելադրութիւններ չընել: Մի ըլլար միամիտ, մարդոց անգթութեամբը տառապելու կամ անոնց փառքերովը ջերմանալու, երբ քեզ ցոյց եմ տուեր խաղաղութեան պողոտան: Ջօրատր կապերը որոնք սիրտդ կը կապեն սա աշխարհին, շղթաներ են եւ ոչ ուրիշ բան. պիտի փրթին անոնք, պիտի ըլլան, իրենց կարգին, ուրիշներու շղթաները եւ ատիկա այդպէս մինչեւ ոչ ոք գիտէ ե՞րբ, ո՞ր: Երբ լսես ձայնը, քալէ, տղա ս, քալէ. հեռու՝ սա սուտէն եւ փուտէն, թէկուզ դժոխք, որ, վստահ եղիր, աւելի տանելի է քան ինչ որ ահա յիսուն տարիէ ի վեր կը տեսնես քու շուրջդ: Մարդիկ շինուած են յիմարութեան համար: Պիտի ներեն քեզի քու մեղքերդ, ըրածներդ ինչպէս չըրածներդ: Բայց պիտի չներեն քու իրաւութիւնդ: Կարգ մը մարդոց գիրն է ասիկա. – տառապիլ գերեզմանէն ալ անդին: Կը հասկնա ս...

...«Փարատեա ի մտաց իմոց

**Ըզմէզ մթութեան, մոռացութեան»**

կը կարդայ տիրացուն: Ձայնը (նստողին) հեռացած է արդէն: Բայց խուժողն է կրկին բանաստեղծը.

**«Եւ ոչ համայն զօրութեանք մեռելութեան եւ դամբանին  
Ամբաւութեան իմոյ սիրոյս փոխան ըզսէր քո պահան-  
ջել:»**

(Մ. Պէշիկթաշլեան)

ու հետը, սրտայոյզ իր ճակատագիրը, կեանքին **հոգեդարձը, ետ դարձը** որով աշխարհի երեսին չըսածը, չկրցածը պիտի արտօնուէր ըսել վերջապէս երբ կը ձգէր «հողապատեան» ու «ցուրտ» կայանը, դառնալու Վոսփորի դարեւանդներուն, մտերմիկ թփիկներուն, **«հովանոցակներ»**ուն որոնց զարնանագեղ վայելչութեանցը ծոցը իրենց տարփանքը կը տարփայեն մարդեր, մէկը ան՝ որ **սիրեկանն** էր իր սրտին. միւսը ան՝ որուն չի գրուիր անունը: Օ՛, սա յաճախանքը ողջերուն ու մեռելներուն:

Անձուկ ու ցաւ՝ ներսս: Հազիւ կը յաջողիմ ճամբու դնել դամբանախոյս ուրուականը եղերերգակ քերթողին երբ կը բուսնի **միւս մը**, նոյնքան իրաւ: Ա՛ն, որ գերեզմանէն դուրս

թափել է տուած սա արցունքները, պուպրիկ իր թեթևութեան բոլոր հրապոյրներովն ու խոովքներովը: Գեղանի աղջիկ: Որ տեսաւ բայց կոյր եղաւ: Զգաց բայց հեռացաւ: Երազեց բայց ինքզինքը յանձնեց... դրամին ու աշխարհին վարկին: Ու... առաւ իր ալ բաժինը, այդ աշխարհէն, որ արցունքէն աւելի սրտակեղեք ու ահաւոր բան մըն էր սակայն, երբ օր մը, տարիներ վերջը սա հովուերգութենէն, բոլոր շուքին մէջէն իր փառքին, դնել ստիպուեցաւ իր երիտասարդութիւնը, անոր անքաւելի մեղքը, այնքան զարհուրելի գինով մը. – իր մէկ հատիկ պարման աղջկան մարմնովը հող իջնեցնելով այդ երիտասարդութիւնը: Ո՛վ անբաւութիւնը մարդոց սիրոյն: Երկար կը թափառին ուրուականները Մկրտիչ Պէշիկթաշլեանի եւ Սրբուհի Վահանեանի (Տիկին Տիւսաբ): Ի՛նչ անկանգնելի թշուառութիւն է մեր միտքը որ չի կրնար ուրուականներ իսկ դիմակալել...

Մեղու մը զիս կը բերէ իրերու աշխարհին, զոր ուրուականներու պարը կրկին կը ջանայ վերածել մշուշի ու գիշերի: Վախ կայ ծունկերուս: Ձայնը տիրացուին՝ աւելի հզօր, ջերմացած.

**...«Արժանի լինել**

**Առնել**

**Եւ ուսուցանել յօրինակ բարեաց**

**Աստուածասէր լսողաց»**

(Աղօթամատեան Բան ԼԴ.)

Իգո՛ւր: Փարատուածը պատրանքն է միայն: Թարթիչներու տակ բացուածը միշտ մշջային բայց տարօրէն իրաւ, առօրեայ տարածութիւն մըն է: Սրա՛հ: Դժուար ու անճահ է բարը: Ո՛չ կամար, ոչ ալ շքեղ ամբութիւնը, ու լայն, խաղաղ, գողտր նստուածքը Ժառանգաւորաց Վարժարանի քառաթէւ պարոյրին: Այլ, տախտակամածը գեղի խոշորկեկ սենեակի մը, ծուռիկ մուռիկ, խոռոջալիք ու սապատաւոր: Մեր **տէյպատունը** (դպրատուն): Ոչ ամպիոն: Ոչ իսկ գրասեղան: Ու մերկ այդ տարածութիւնը եզրաւորող պատեր, որոնց երկայնքին տղաքը, ոտքի, իրենց ձայնին բոլոր փոթորիկովը, վար բերելու չափ խարխուլ առաս-

տաղին քակուած տախտակեղէնը, պոռալու վրայ առաւօտեան աղօթքը,

– «Աղաչեմ զանփոփոխելի...»:

Հիմա չեմ կրնար ճշդել տարիքը զոր «իբր պսակ» ունէր իմ կործանած, աղբէկ գլուխը այդ շատ հեռու օրերուն: Ոչ ալ կրնամ հաստատել թէ ինչ էր իմ հասկցածը մանկութեան բոլոր զօրութեամբը, կատաղութեամբը պոռացուած. – Ս. Պարթեւեան պիտի գրէր **գալարափողուած**, Արշակ Չօպանեան՝ **քնարեղբւոյս** – սա աղօթքէն որ **խրթին** էր ինչպէս **խժան** ընկոյզը, ինչպէս կը հաւաստէին գրաբար լուծում ընող մեծ տղաքը երբ իր ներքին պատեանէն բաժնուիլ չուզող ընկոյզին միջուկը կ'աշխատէին ազատել փայտին երակներէն...: Գիտեմ միայն որ այդ գլուխը սեփ սեւ գունտ մըն էր, իմ ուսերուս ճիշդ մէջտեղը, շուքը խոշոր, հեռուն իսկ զգալի: Թէ անիկա մէկն էր ես ըսեմ հարիւր, դուք դրէք քանի մը պատիկը, այն լաճերէն կատաղի ու բարբարոս, իրարու հետ զզւըրտութի աստէն, բայց տարօրէն քաղցր երբ կարօտին, գութին զարկը զգային իրենց ներսը, որբին ու սկարին, անոքին ու տառապողին հանդէպ: Իմ ընկերները, ինծի չափ թշուառ: Բայց կը մոռնայինք մենք զմեզ, երբ մեծերուն հասնելու ճիգին մէջ, մեր պուկերը փքոցի պէս ուռեցուցած եւ մեր վիզերուն ողորկ պարոյրը ճնշումէն լեցուած երակներուն զիծերովը սինազարդած, կը պոռայինք, միշտ աւելի վեր, հաւանաբար յաճախանքին մէջը մեր կանչերուն, փոթորկոտ վազքերուն, բլուրէ բլուր, ծմակէ ծմակ, այգիէ այգի, հովի պէս թէթեւ մեր ոտքերուն վրայ թոցնելով պողպատի պէս ձիգ մեր իրանները դէպի լիճը, որ մեր դէմը կը պառկէր, փերթ փերթ ձեւուած անապակի պատուհաններուն քառանկիւններէն ու կընէինք անոր հեղուկ մարմինին վրայ (Բագրատունին կը գրէր դար մը առաջ **մկանունքին**) մեր ձուկի, թռչունի պարը, հեծնելով փրփրաբաշ ալիքներու գաւակին... երազելով, դեռ օրուան սեմէն, պահը, իրիկուան արարողութենէն վերջ, մինչեւ մութերը երկարող մեր խաղերը, **գունտն** ու **Ֆինկիլը**, ամենը՝ աղօթքին մէջ «առաւօտեան», ասոր իւրաքանչիւր բառը խաճնելով, փշուր փշուր աղալով: Աչքիս առջեւն է վարժապետը

որուն գաւազանը կաղ սեղանին վրայ օձի իրանը կը պսակէր... Այդ գաւազանէն, անոնք՝ մեծերը, սորված էին երկաթ ծանրութիւնը սա աղօթքին. բզիկ բզիկ քրքրուած իրենց կրունկներուն խաւաքարտ էջերը երբ կը տրամադրէին անոր լեզուին: Եւ սակայն լման դպրոցէն ոչ ոք՝ որ չգիտնար թէ ուրկէ կուգար ատ փորձանքը: Դժուար, փոքրերուս համար, հաշտուիլ սա փառատը ծեծին ու սուրբ համբաւին որ **Նարեկ**ինն էր արդարօրէն: Տունը ուր անկէ հատ մը կար, այդ իսկ բարիքով, փառքով, կը դառնար ուխտատեղի: *Քերականէն* վերջ *Հեզարանը* անութիս ես կ'երթայի **տէյպատուն**, երբեմն գաղտուկ տանելով մեր ալ **Նարեկը** որուն հրաշագործ վարկը կ'անցնէր մեծ հօրմէս, անոր հօրմէն ալ անդին, ինչպէս կը հաւաստէր մամաս: Անիկա **անարծաթ** բժիշկն էր, (աւելի յետոյ, Սրուանձտեանց վարդապետին գրչին տակ պիտի կարդայի **մեղագիրը**, **դեղագիրը**), մտած տունը՝ արցունքը ժպիտի փոխող: Շուտով սորվէի պիտի քակել անոր **պատիւները** (հին գիրքերու մէջ սղագրական նշաններ) սերտել. **ջուրի պէս** գոց սորվիլ ամենէն զօրաւոր գլուխները, տղաբերքի ցաւերուն, տունն ու տեղը ւաւերող տենդերուն դէմ: Ու անոնք որոնք մարմինին ճիրաններէն կալանաւոր, «**չելլող**» հոգին կ'ազատագրէին: Ու անոնք որոնք կը բզքտէին հարսներուն փորը ամուլ ընող **պուկի**ին «խարդաւանանքները»: Ո՞ր մէկը յիշեմ սակայն: Գեղին մէջ այնքան շատ էին մեր ցաւերը ու մեր **Նարեկը** այնքան ամենագօր անոնց բանակներուն դէմ: Ո՞վ իմ անուշիկ, անօթի բայց այդ ամէնուն հակառակ օգոստափառ մանկութիւնս: ...Որմէ վերջ, քաղաքը ու իր այլապէս անդարման թշուառութիւնները: Ու յետոյ աշխարհը ուր կը մտնէի երիտասարդ ու... յիմար, ինչպէս պիտի ըսէր Ձայնը շատ աւելի վերջերը:

### **Աղաչեմ գանփոփոխելին:**

– Այո :

Յիսուն տարի ետքը, այդ օրերէն, իմ սա վերադարձը դէպ մանկութեան աղօթքը, ո՞ւշ արդեօք:

Տիրացուն կաւարտէ ընթերցումը: «Պահպանիչ»: Տղաք իրենց սեղաններուն: Ես իմ վերլուծումներուն:

Ու Ձա՛յնը՝  
– Յիմար...:

(Շարունակելի)

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, ԺԵ. ՏԱՐԻ, ԹԻԻ 10, ՀՈԿՏԵՄԲԵՐ, 1941, ԷՋ 254–258)

Ծանոթ. խմբագիրի

«Նարեկացիի մասին ուսումնասիրություն մըն է: Ամբողջ շարքը մտած է Պ. Սնապեանին կազմած *Երբ հիները կը կարդանք* հատորին մէջ: Հատորին մէջ չկայ նոյն վերնագրով [«Կեանքին հետ»] 1940ին տպուած կարճ կտորը» (Մարկ Նշանեան, *Յակոբ Օշականի մատենագիտություն*, Լոս Անճելըս, 1999, էջ 65):

ԿԵԱՆՔԻՆ ՀԵՏ

ԱՂԱՉԵՄ ԶԱՆՓՈՓՈԽԵԼԻ...

Բ.

«Աղաչեմ զանփոփոխելի»<sup>6</sup>ն Բ. հատուածն է Նարեկի ԼԳ. Բանին: Ասոր Ա. հատուածը տարօրինակ մուտք մըն է, սանկ քիչիկ մը **ուժով** ըսուած, նորերը պիտի գրէին՝ **ուռած** ըսուած, հանդիսաւոր՝ շեշտին ու յառաջացման մէջ: Գրիգոր այդ վանականը երբեմն կը մատնէ սա մտահոգութիւնները – պահէն ու տեղէն ներշնչուելու վիճակ մը այդպէս խոշորցնելու: Իր երկերուն, մանաւանդ **Աղօթամատեանին** յառաջաբանները, յիշատակարանները խմբագրուած են սա **յայտնութենական** հոգեբանութեամբ: Բայց յայտնի է թէ մասնաւոր ուշադրութեամբ մը անիկա գրած է այդ **ԼԳ. Բանը**, իր ամբողջ հատուածներուն մէջ:

Ա. եւ Բ. հատուածներուն միջեւ սա միջանկեալը

«Ի հանդիսարանս խօսից ատենի բանս մաղթանաց որով Հոգին Աստուծոյ հաշտել հասանէ յօգնականութիւն»<sup>6</sup>: Գ.

---

<sup>6</sup> **Նարեկը**, ինչպէս Նարեկացիի միւս աշխատութիւնները գուրկ են դասական պարզութենէն, բայց կամաւոր բռնագթօս խեղաթիրում մը չեն մատներ՝ լեզուական զեղծումը խորութեան տեղ քշել յաւակնող, ինչպէս են առհասարակ Յունաբան Դպրոցի թարգմանութիւնները ու Մագիստրոսի արձակները, մանաւանդ **Նամականին**: Նարեկացին, բացի ոտանաւորներու մէջ մասնակի մթութիւններէ (արդիւնք՝ բառերու միայն ձայնական գործունէութեան) հասկնալի է **ընդհանրապէս**, ու չի պատկանիր աճպարարներու խումբին: Մնաց որ իմ վերլուծումը առաւելապէս նուիրուած ըլլալով խորքին, պիտի զգուշանայ ոճի քերականական, լեզուական նկարագիրներով ալ զբաղելէ: Այսքանը միայն անհրաժեշտ է դիտել տալ որ նման ամէն մեծ գրագէտի, Նարեկացի իրեն կը ներէ շեղումներ արտայայտութեան ընթացիկ եղանակէն: Ասկէ զատ, իր բառերուն երբեմն կուտայ իրեն յատուկ ոչ թէ իմաստ, այլ իմաստի, առումի երանգներ: Իր նախադասութեան կազմը

հատուածին՝ ուրիշ վերտառութիւն. «**Երրորդութիւն անայլայլական նորոգ ստեղծաբանութեան ազդեալ յԱստուծոյ, յոր ինչ ի Նիկիայն սահմանեցաւ հաւատ**»: (Թորգոմ Սրբազանի թարգմանութեամբ՝ «**Նիկիոյ մէջ Երրորդութեան մասին աստուածային ազդեցութեամբ սահմանուած յարասութիւնը**»): Լ.Դ. Բանին մարմինէն դուրս այս յաւելումները, խմբագրուած Նարեկին ոճով, կը պատկանին հաւանաբար Նարեկացիին: Ամբողջ **Բանը** կազմուած է տասը հատուածներէ: Դաւանաբանական **մեկնողական** մը թերեւս ուր բանաստեղծը կուգայ առաջին գիծի, այդ քիչ մը շատ վերացեալ, չոր հարցերուն մէջ զգացական տարրեր նետելու անգիտակից փափաքով: Նկատի ունիմ յառաջիկայ էջերուն համար, միայն **Բ.** հատուածը: Չայն գլխաւորող վերտառութիւնը կը թելադրէ ատենախօսութենէն առաջ, այդ աղօթքով դիմել «**Հոգւոյն Սրբոյ**», որ «**հաշտուած**» ու հաճ, պիտի հասնի օգնելու ՔԱՐՈԶՈՂԻՆ: Այս իսկ թելադրանքով, անոր ընթերցումը, Ժառանգաւորաց Վարժարանի տարեմուտի հանդիսանքին (ուրկէ կենթադրեմ թէ ուխտաւորներու բերնով հասած ըլլալու էր մեր գեղը), խորհրդանշական տարրութեամբ մը մեզի կը պարզէ հոն մատակարարուած ուսուցման նկարագիրը: Աստուծոյ խօսքը **կարդալը**, իր հաշւոյն, քիչ մը եսասէր հաճոյք է անշուշտ. ճգնողական բարքերուն արտօնած ժամագրադութիւնը, ինքզինքը մտածող, **սեպհական հոգիին** տազնապովը տարուած մարդու տիրական փոյթ: Նարեկացին ուսուցիչ է Անանիայի հաստատած **Ուխտին** մէջ: Իր հաշւոյն անշուշտ անիկա ունէր անձնական նախասիրութիւններ, ուր **ճգնողա-**

---

ինքնատիպ է: Ուրիշ կերպ չէր կրնար ըլլալ արդէն: Առնուազն ներքին տենդով մը մշտապէս տապահար մարդու մը **վառ, յորդ, անսանձ** գրեթէ ԲՆԱԽՕՍԱԿԱՆ ձայնն է այդ նախադասութիւնը, բառերու յարդարանքէ մը աւելի՝ ԱՆԳԻՏԱԿԻՑ ԲՈՒԽՔ: Մենք կը գրենք – եթէ ծնած ենք գրող – մեր թոքերով ոչ թէ ուղեղովը: Անդունդ կայ Մագիստրոսի բառախաղային ֆրագին եւ Նարեկացիի **օրկանիք** նախադասութեանց մէջտեղը: Ահա թէ ուր կը գատուի ծնած գրողը **սորված** գրողէն (Պ. Դուրեան – Եղիշէ Դուրեան գոյգը):

կանն ու ուսուցողականը կրնային իրերախառնուիլ<sup>7</sup>: Իմ վերլուծած հատուածը, իմ կարծիքով, կը բխի ուսուցողական մտահոգութենէն, նախասիրութենէն: Ուրեմն, **ուսուցումը** Աստուծոյ խօսքին, աստեաններու առջեւ անոր հանդիսաւոր **մատուցումը**, մեր օրերու բառով **քարոզը**, կամ արեւելահայերու նախասիրած **դասախօսութիւնը**: Այսօր քարոզին խորունկ իմաստը հազիւ է մատչելի մեր ուղեղին (հիմա մենք այնքան առատ ունինք միջոցներ այդ խօսքին երթալու. հազար տարի առաջ<sup>8</sup>): Այդ դարերուն խօսքը, ժամուն բեմէն, կամ վանքերու ընդարձակ կամարներուն ներքեւ, տիրական հաղորդում մըն էր **երկնայինին**, ասոր թելադրած ամբաւ, անճառ հարցերուն – բոլորն ալ կէանքին խորհուրդը լուսաւորել աշխատող: **Քարոզող եղբայրներու** եւ վանական ուրիշ **ուխտերու** գոյութիւնը տկար փաստ չեն կազմեր սա տեսութեան: Աւելի հեռու դարերուն, նոյնիսկ Քրիստոսէ քանի մը հարիւր տարի առաջ, **աստեանի առջեւ խօսքը** ոչ միայն լրումն էր ուսուցման, այլ եւ պսակը մարդկօրէն ներելի փառասիրութեանց: Զուր տեղը չէ որ հնութեան մեծ գորավարները յաճախ մեծ խօսողներ եղան: Պատմութենէն տեղեակ ենք հռետորներու ուսուցումին յարակից ամբողջ հետեւանքներուն: Աթէնքը մտքին մայրաքաղաքը ընողը իր գորավարները չէին անշուշտ, ոչ ալ քաղաքական իր չունեցած իմաստութիւնը: Իր ուսուցումն էր հեղինակը այդ հրաշքին: Աւելի վերջ, **խօսքին** դերը աւելի հզօր ձեւով մը տիրական կը գտնենք **Հռովմ**, ուր անձին, մարմնին արարքներէն առաջ **Բանին**, միտքին շնորհներն են որ ապագայ

---

<sup>7</sup> *Աղօթամատեանին* խմբագրութիւնը սխալ չըլլար վերագրել **ուսուցանող** հոգեբանութեան մը: Մեր մէջ առանձին աղօթքներ գրած է **Յովհաննէս Սարկաւազ** որ իր կարգին շատ հեղինակաւոր ուսուցիչ մըն է ԺԲ. դարուն: Կը խորհիմ թէ Շնորհալին, Լամբրոնացին իրենց աղօթքները հեղինակած են իրենց աշակերտողներուն գոհացում տալու համար: *Աղօթամատեանը* ուրիշներու խնդրանքին ընդառաջում մըն է: Անոր 365 հատուածները առօրեայ պարենն են հոգիին, ինչպէս կը հաւատայ արդէն Գրիգոր վանականը:

քաղաքական մեծ մարդը կը հանեն ուշադրութեան: Մեր երկրին համար, Գրիգոր Նարեկացիի օրերուն (Տասներորդ դար) քարոզիչը համադրական անձնատրութիւն մըն էր: Ան կը միացնէր իր վրայ լրագիրը, գիրքը, հանդէսները, համալսարանը, ռատիոն: Շրջող կենդանի **մատեանն** էր անիկա: Իր կարեւորութիւնը ինքնաբերաբար կը բարդանար շրջապատի հակամարտ ալ պայմաններէն: Հասկնալի է ուրեմն որ սա դերը արժանատրապէս կատարելու համար, նորաբոյս մօրուքով արեղան անձկագին ապաւինէր Վերնականին, ասոր օգնութիւնը աղերսէր, սրտագին ու իրաւ խօսքերու տարափով մը: Ուրի՞ շ է արդեօք ոգին, մտածումը որոնք զսպանակը եղած են Հայ Երուսաղէմի (գործածելու համար ընտանեցած բանաձեւ մը) մէջ Ժառանգաւորաց Վարժարանը հիմնելու պահանջին, կարիքին, նոր օրերու մուտքին:

Հիմա, կը դիմեմ աղօթքին, իր մարմինէն շատ քիչ բան գեղջելով, դաւանաբանական կամ պարզ մաղթողական:

**«Աղաչեմ՝ զանփոփոխելի տէրութիւն**

**Ամենագօր Հոգւոյդ հգօրի.**

**Առաքեա՛ զգօղ քաղցրութեան քո,**

**Եւ բարեգործեա**

---

<sup>8</sup> Մէջբերումները կ'ընեմ Նարեկին իսկ լեզուով, որ ինչպէս դիտել տուի քիչ վերը, մեր լեզուն է, ամէն բանէ առաջ: Աշխարհաբար Նարեկ մը՝ թերեւս արդարանալի գուտ բարեպաշտական տեսակէտներէ, ստոյգ վրիպանք մըն է, քանի որ **Նարեկը** միտք ըլլալէ առաջ հոգեղէն դրութիւն մըն է: Կը մտածեմ թէ մեր այն ընթերցողը որ կը լափէ իր օրաթերթը, զայն վայելելով հեշտագին բայց որուն իմացական յարդարանքը իրեն չարտօներ **աւելի անդին**, ինչ նեղութեամբ ձեռքէն կը նետէ... **Ներաշխարհը** որուն աշխարհաբարը քիչ կը տարբերի սակայն օրինակի համար **Բիւզանդիոն** պատուական հայաթերթին գործածած լեզուէն: Տողաւորումը միայն փոխած եմ, հետեւելու համար իմաստի եւ կշռոյթի թելադրանքներուն: Այսպէս տողաւորուած, **Աղօթամատեանը** կ'ըլլայ շատ աւելի դիւրահասկանալի քան իր աշխարհաբարը: Խիտ իմաստներ ատեն եւ միջոց կը գտնեն միտքին մէջ **տեղաւորուելու**: Տողէն տող անցքի կարճ ընդհատը այս կերպով բարիք մը կ'ըլլայ թափանցման դժուար ճիգին համար: Գ. Եպիսկոպոս Խաչատուրեան կատարած է ամբողջ **Նարեկին** վրայ սա փորձը, յաջողապէս:

**Ի յանձին եւ յիշխանական ազդման ըզգայութեան(ց)  
Զամենալից շնորհրս  
Բազմապարգև քո ողորմութեան:  
Եւ հերկեա՛  
Զբանական անդաստան  
Մարմնեղէն կարծրացեալ սրտիս  
Յընդունակութիւն արգասեաց հոգեւոր սերմանդ»:**

Կենթադրեմ որ **Ի պէտս Զարգացելոցը** անհրաժեշտ չէ կլլած ըլլալ, հասկնալու համար սա նախադասութեանց շարքը: Հազիւ տող մը (**յիշխանական ազդմանց զգայութեան**) եւ բառ մը (**բարեգործեա**) կը տարբերին մեր գործածած գրաբարէն: Դժուարին տողը կը պարզենք.– ԻՇԽԱՆԱԿԱՆը Նարեկին մէջ յաճախ թարգմանած են **ինքնիշխան՝ սքոլաստիկ** վեճերուն տիրական տարազը. *libre arbitre*ի իր կաղապարին մէջ մինչեւ մեր օրերը այնքան մելան հոսեցուցած բնագանցական **տագնապը**: ԱԶԳՈՒՄ՝ մեր **թելադրանքն** է, **մղումը**: ԶԳԱՅՈՒԹԻՒՆ՝ զգացում. ԲԱՐԵԳՈՐԾԵԼը **արդիւնատրել, արգասատրել**: Այս անհրաժեշտ լուսաբանութիւններէն վերջ աղօթքը պարզ է այլեւս, շատ աւելի պարզ օրինակի մը համար քան Յ. Գ. Մրմբեանի **Իննեակ իմաստասիրականը** կամ Զրաքեանի **Ներաշխարհը**: Ի՞նչ կըսէ, այդ բառերով, Վանայ ծովուն ամենէն նկարագեղ մէկ ափին, բարձունքի մը վրայ թառած իր մենարանէն, «հրեշտականման» Գրիգոր վարդապետը, որ ամբողջ երիտասարդութիւն մը, չափահասութիւն մը (**Աղօթամատեանը** կեանքը չափած մարդու հոգեբանութենէ մը կուգայ եւ հետեւաբար առաջացեալ տարիքի գործ մը կը նկատուի) ունի իր ետին **աստուածային սա թռիչքներուն** նուիրուած: Որ ապրեր է Աստուծոյ սպասին բովանդակ այլամերժութիւնը, հոգիին շահը հետապնդող բացարձակապաշտ իր եռանդին մէջ, ու **չափեր** իր ներսը կամարակապ զգացումին անհուն մեծութիւնը, գեղեցկութիւնը, իր օրերուն իմաստը արժեւորող իր ողջակէզը իր անձէն դուրս ուրիշներու ալ արդիւնատր ընելու համար, երբ գրիչը կառնէ իր ձեռքը, ու դողդոջ մատնէրով, այդ երկինքէն – մարդուն հոգին երկինք մըն է – լոյսի գիծեր կը նետէ

մագաղաթին...: Անոր ուզածը, սա դժուարին արարքին մեջ, **ցօղն** է Ս. Հոգիին, որ խօսքի, գիրի մարդակերպ ձևերով պիտի արգասաւորէ իր մեջ իր ամենայից շնորհները: Այսպէս խտացւած, սա նախադասութիւնները մեր մտքին կը բերեն ամուր պ բարիքը **հաստատ խորքին**: Բայց բանաստեղծութիւնը, այս անգամ բառին տուէք իր տիրական իմաստը, չի նշանակեր գաղափար մը, գաղափարներու շարք մը ազուցանել ուրիշի մը, ուրիշներու շարքի մը. (աղօթքը այդ բանաստեղծութեան ամենէն սկզբնական, տեսական, խորունկ ձևերէն մէկն է, ամենէն իրաւ քանի մը զգացումներուն – մահ, սէր, անմահութեան հեշտանք, եւ կամ ներհակէն՝ չարիքը եւ սարսափները – սլաքին տակ ծնունդ առած): Փոխադրելով խօսքը բառական բանաստեղծութեան, նկատի կ'առնենք ասոր էական մէկ տարրը՝ **կշռոյթը**՝ գրեթէ անբացատրելի բառ մը որ ձայնին նիւթական հիւսքը, զգացումին զգեստը, յուզումին կերպարանքը (ուրիշ բան չեն **իրաւ բառերը**: Սուտերը՝ թիթեղ:) պիտի ոճաւորէ, անձնաւորէ, հրեղինէ համաձայն բխման աղբիւրին, – հոգիին: Կշռոյթի սա **կախարդական** – որովհետեւ անվերլուծելի – բայց զգալի ոգեղէն իսկութեան, հեղանուտին ընդմէջէն մեր գտածը հոգին է այդ Գրիգոր վանականին: Չեմ բանար **Գրիգոր Նարեկացի** խորհրդանշանին իրարմէ աղուոր, իրարմէ հարուստ ծալքերը: Իմացէք միայն որ այդ տարազը կը ծածկէ իր տակ մեր ժողովուրդին մեջ քիչ անգամ հաստատուած **բարձրութիւն մը** թռիչքէ, **խորութիւն մը** զգայնութենէ, **գիտութիւն մը** բառերու ներքին կախարդութենէն: Գիտցէք միայն որ արտասովոր մարդ մըն է անիկա: Այս վկայութիւնը բա՛ւ՝ որպէսզի մէկէն, վերի տողերը մարդանան իրենց կարգին, ինչպէս մեզ կը տրուի դիտել ասիկա, երբ կախարդ կոճակի մը հպումով կոյր լապտերները կը կարմրին, հոսանքէն մկրտուած:

Անկարելի է քակել ամէն մէկ բառի տակ բանաստեղծէն մթերուած զգացումին, մտածումին, կրակին նախատարրերը: Փորձը կընեմ սակայն մէկ քանիին վրայ: Այսպէս **անփոփոխելի** վերադիրը որ հազարէ աւելի տարիներու կեանք մը ունի մտածման պատմութեան մեջ մինչեւ Հերակլիտ իջնող, հաւա-

նաբար Նարեկացիին օրով ալ աղանդաւորներու բերնին մէջ ընթացիկ օրակարգ մըն է: Ես կ'առնեմ բնական իր թելադրանքին մէջ միայն նկատի, զայն ընդունելով հակազդեցութեան կտակ մը՝ մշտափոփոխ այն հանդիսանքէն որ կը փռուի բանաստեղծին նայուածքին: Զայն մտագրաւող շատերէն բաւ է կենալ ծովին պատկերին. երէկ՝ **թուխպ կապար**, առտուն՝ **ձիւն փրփուր**, կէսօրին՝ **կապուտակ սաւան**, իրկունը՝ **կրակէ շղարշ**, մայրամուտին վրձինին ներքեւ: Առանց բառերու վրայ խաղալու, ես կրնամ սա ձեւերու մշտական հրթիռը, բռնկումն ու շէջքը, վառքն ու սուգը, արտաքին աշխարհին սա հմայապատկերը **արձագանգուած** գտնել վարդապետին ալ զգայութիւններուն կենդանի կտաւին վրայ: Միայն եղանակներուն ձեռքէն թափուած երանգի, ձեւի, կերպարանքի սա այլայլումները բաւ են երերուն **փոփոխականութիւնը** հզօր խռովքով մը տպաւորելու (**imprimer**) ընկալուչ կերպասին վրայ, հիւսւած մարդոց ջիղերէն: Մտաբերել՝ թէ ինչ կրնար ըլլալ պատկերաշարքը անոր վանքի տեսարաններուն զարնան, ամռան ու ձմռան: Ձեզի կը ձգեմ հետեւիլ սա թելադրանքներուն, վերակազմել այդ ամէնը: Երբ մտածման սա կերպը մենք գործադրենք **մարդկեղէնին** վրայ, մեր գտնելիքը աւելի խորունկ, աւելի յուսահատ, աւելի կործանարար փախուստ մըն է մեզմէ: Երէկի տղէն, խարտեաշ, համակ բոց ու քաղցրութիւն, մինչեւ սա կորաքամակ ծերունին: Գրիգոր վանականը, իր սեղանին առջեւ, իր միսերուն սառոյցը ասեղ ասեղ երբ կը հիւսուի իր կաշիին տակ, ճամբա՞ն: Բայց աւա՛ղ, ակնթարթ մը անգամ չի տեսեր, չէ տեսած այդ ողբերգութիւնը, եթէ ուզէք զայն զետեղել ժամանակի չափին մէջ: Այն ատե՞ն: Որքան սրտագրաւ է մեր ամէնուն մէջ ընդվզումը սա զարհուրանքին դէմ: **Յաւիտենականը, անյեղիւն, անփոփոխելի՞ն**<sup>9</sup> որքան իրաւ կը

<sup>9</sup> **Նարեկլուծ մը** չեմ յաւակնիր կատարել: Գրական վերլուծումը համեստ է ինքնին, ու չի ձգտիր ճշմարտութեան, ամբողջական սպառման, հարազատութեան, ապացուցանող փաստարկումին փառքերուն: Իր նախասիրութիւնը, թերեւս կրցածը, վերակազմելն է, տանելի չափելու վրայ, հէնքը ջիղերուն որոնք իրենց կախարդական ցանցին մէջ առին աշխարհին ոգեղէն

բռնանան մեր մտքին: Չանց կընեմ բանալ ընդլայնումի սա համեմատությունով, ստորոգելիները, որոնք հեռու՝ բառարաններու մէջ անկիւնակալ բազմող անտարբեր ու քիչիկ մը սատած բաներ ըլլալէ, խորունկ, խանդոտ, կռիւէն ջերմացած ստուգութիւններ են Ս. Հոգին միտքին մէջ կերպարանել յաւակնող: Երանելի դարե՛ր, ուր բառի մը համար հարիւր հազար վանական կը ձգէին իրենց ճգնարանները, կը մտնէին պատրիարքանիստ քաղաքները, կը չափէին ասոնց փողոցները, սպառնագին, վայրագ իրենց նայուածքներով դատապարտելով կամ խելայեղ խնծիղով մը փառաբանելով... բառ մը, Ս. Հոգիին կամ Որդիին ածական: Ընդհանուր Եկեղեցւոյ պատմութեան անցուդարձերուն ծանօթ մը դժուարութիւն չի զգար հասկնալու պատրիարք մը որ իր հակառակորդը չի խղճահարիր իբրեւ գրաստ գործածելէ, մի շտ բառի մը համար:

---

**սարսուռը**, զայն պատմել փորձեցին աւելի կամ նուազ իրականութեամբ, հաւատարմութեամբ: Տեսնել ջանալն է **ժամանակաւորին** ընդմէջէն, եթէ ոչ **յաւիտենականը** (որ շատ ծանր պիտի կշռէր ու վտանգէր թերեւս փաստին իսկ արժէքը), գէթ այն քանի մը գլխաւոր յոյգերը որոնք հասարակաց են բոլոր աղանորդիներուն: Մարդիկ հայր էին, մայր էին, ամուսին ու կին էին, զաւակ ու որբ էին **Իլիականի** օրերէն եւ հարկ կա՛յ ըսելու՝ են ալ տակաւին: Ահա թէ ինչու մեր խանդաղատանքը չէ չորցած, մեր արցունքը չի յամենար երբ կը կարդանք **Հէկտորի ու Անդրոմաքի բաժանումը**, Պրիամի եւ Աքիլլէսի եղերական խօսակցութիւնը...: Յետոյ, գիտնալու էք որ աստուածաբանական, դաւանաբանական տարազները, այսօր այնքան հանդարտ իրենց մագաղաթեայ դամբաններուն ծոցը, Գրիգոր վանականի դարուն կը կազմէին գերագոյն խռովքները, կիրքերը մտածել յաւակնող դասակարգին: Աղանդաւորները միայն հաւատքի ասպետներ չեն, այլ եւ մտածման մեքենան մենաշնորհի վերածել փորձող յանդուգն բախտախնդիրներ, աշխարհակալներ: Նոյնը չէ՝ արդեօք պարագան եւ մեր օրերուն: Այսօր կը զարմանանք յանուն քրիստոնէութեան սարքուած խարոյկներուն կարելիութեան, առանց անդարդառնալու որ ուրիշ բան չենք ըներ երբ մեզի պէս չմտածողները **տեղն ու տեղը կը կախենք**: Քաղաքացիական կռիւր ոճիր մը չէ միայն այլ եւ «Հոգւոյն Սրբոյ» դէմ մեղք մը: Բայց տարբերութիւն մը, – արիւնին **տարագները** (հայր, մայր, կին, զաւակ եւայլն) հազիւ թէ կը փոխուին, Միտքին **տարագները** (իմաստասիրական դրութիւններ) կը հիննան շատ աւելի արագ: Չեմ գրադիր Նարեկացիին հանգանակովը:

Այսպես է յօրինուած մարդոց անսահման յիմարութեան հանդէպ: Գրիգոր վանականէն դար մը վերջ, Գրիգոր Պահլաունի (Մագիստրոս) իշխանը որ Պղատոն է թարգմանած ու չորս օրուան մէջ հազար տողի վրայ Կտակարանները խտացուցած... ոտանաւոր պատմումով, Հագարացի իմաստունի մը հետ մրցելով... **յարագութիւն**, իր սուրը պիտի խաղցնէ աղանդաւորներուն միսերուն վրայ, մաքրագործելու համար պարզ մարդէր, որոնց բոլոր մեղքը իրենց խելքին ինքնիշխան գործածումին պահանջն է ի վերջոյ: Որքան խիտ են երբեմն մեր տողերը...: Կը գոհանամ միայն խանդաղատագին զգացումով մը հետեւելով բանաստեղծին մտքի թռիչքին որ զմայլելի բնականութեամբ մը երկրէն երկինք, նիւթէն հոգին կընէ իր սաւառնումը, կատարելով դժուար համադրումը երկու աշխարհներուն, որմէ մանրանկար իրագործում մըն է մարդը: Գրիգոր վանականը երբ Ս. Հոգիին շնորհները կը վերածէ առտուան անուշիկ շաղին, ցօղին, անով պտղաբերելու համար **անդաստանները** մարմնեղէն **կարծրացեալ**<sup>10</sup> սրտին, գրական դարձուածք մը չընէր ապահովաբար, չոր ու ստերջ մարզանքը փոխաբերութեանց սիրահարներուն: Արտօնուած ենք մտածել որ այդ Գրիգոր վանականը միայն մագաղաթ չէր հերկեր: Թէ նման բոլոր ուխտի միաբաններուն, անոր մատները քաղցրագին զգայութիւններով կ'իյնային մաճին վրայ, ու հողին խունկը անախորժ չէր իր ռունգերուն: Թէ իր բուռէն արձակուած սերմին խարտեաշ անձրեւը, աշնան դուռներուն, հեշտացած, փափկազգեաց հողերուն արգանդը դէպի, անոր հոգին ալ կողողէր երկիւղած զգացումներով, ինչպէս բառերուն անձրեւը՝ իմացական հեշտանքին բարձրագոյն յուզումներովը մարմին էր անոր մտքին ալ դաշտին...: Քսաներորդ դարու քննադատ մը,

<sup>10</sup> **Կարծրացեալ** կրկնապատկեր բացատրութիւն մըն է, մեր օրերու **double imager**: Կը թելադրէ **նոյն ատեն** միտքին **նիւթեղէնը** ու անոր միւս երեսը, չարիքէն, մեղքէն, խորշակէն **կոնծած**, **ճաթոտած** պատերը հոգիին: Չոյզ աշխարհները միատարր քալեցնելու սա **maitrise**ը մեր օրերուն սիրական եղանակ մը չէր միայն:

այս ամենէն թերեւս սիրէ արարքը, հողը բեղմնաւորելու խորհուրդը, ասոր հօր ձգտութիւնը որ կրնայ անդրադառնալ իր ալ մտքին, իբրեւ մէկ մասնիկը տիեզերական խորհուրդին, այդպէս մարմնացած, կերպարանուած: Տասներորդ դարու վանականին համար արարքէն գեղեցկութիւն մը, խորհուրդ մը կը մնան թաղուած, բայց զգացումը, **հող ու հոգին** նոյն ատեն, իբրեւ գերագոյն իրականութիւն կը տիրապետէ անոր մտքին: Այդ Գրիգոր վանականին համար երեւոյթներու սա մեր աշխարհը ունայնութիւն մը չէ, ինչպէս կը պարզուի ասոր հօր, գերագոյն իրականութիւնը արեւելեան մեծ կրօնքներուն խորքէն (**Պուտոյականութեան Նիրվանան**), այլ նախապայելք մը (**Չրաքեանին բառը**), պատրաստութեան շրջան մը, մաքրագործման հովիտ մը, իսկութիւններու, անհունութիւններու, յաւիտեաններու միակ իրաւ, միակ արժող աշխարհին: Չարհամարհել սա մեր աշխարհը, վասնզի հոս ալ Աստուծոյ շունչը կ'ապրի, քիրաւոր կերպարանքներու տակ. հոս նետուած սերմը բարիք մըն է, յար եւ նման միւսին որ անհուն անդաստանները կ'արգասաւորէ Աստուծոյ իմաստութեան: Ասկէ անդին ալ երկինքներու արտերուն մէջ Ս. Հոգիին ցօղը կ'իջնայ ու **«կը բարեգործէ»**...: **Հոգեւոր սերմը** որ կը թուի անդրադարձն ըլլալ մարմնաւորին, սա մտածումներու լոյսին ընդմէջէն կ'ըլլայ կեանքին ամենէն բարձր խորհուրդը: Ինչպէս կը տեսնէք, որքան քիչ կուգան տողերը, կտոր մը բան քակելու այն ընդարձակ ապրումներէն որոնք հոգեյատակը կը կազմեն բանաստեղծին: Ինչ վաւերական, խռովիչ, զարհուրագին հեշտանք մը կը թաւալէր անոր ջիղերուն արտերէն, ոսկորներուն ակօսներէն երբ իր միտքը **հանդերձուած** կուզէր, ընդունելու աստուածային շնորհներուն սերմերը...:

(Վերջը յաջորդով)

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, ԺԵ. ՏԱՐԻ, ԹԻԻ 11-12, ՆՈՅՆՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1941, էջ 300-303)

Ծանոթ. իմբացիրի

«Նարեկացիի մասին ուսումնասիրությունն մըն է: Ամբողջ շարքը մտած է Պ. Մնայեանին կազմած *Երբ հիները կը կարդանք* հատորին մէջ: Հատորին մէջ չկայ նոյն վերնագրով [«Կեանքին հետ»] 1940ին տպուած կարճ կտորը» (Մարկ Նշանեան, *Յակոբ Օջականի մատենագիտութիւն*, Լոս Անճելըս, 1999, էջ 65):

ԿԵԱՆՔԻՆ ՀԵՏ

ԱՂԱՉԵՄ ԶԱՆՓՈՓՈԽԵԼԻ...

Գ.

Կը շարունակեմ արտագրել  
«Քում ամենիմաստ էութեանդ  
Խոստովանիմք  
Զամենայն պարգեւս ի մեզ ծաղկեալ եւ աճեցեալ:  
Որ ձեռնադրես առաքեալս,  
Լըցուցանես մարգարէս,  
Ուսուցանես վարդապետս,  
Բարբառեցուցանես համերս,  
Եւ բանաս զփակեալ սկանջս խլից...»:

Որմէ վերջ քանի մը տող՝ յիշատակելու համար Հօր էակից անդրանիկ Որդին որ Հոգիին գործակցութեամբը ըրաւ այդ ամենը, մեր աշխարհին վրայ, զինքը՝ Հոգին, Հօր իսկութեան հաւասարակից Աստուած մը քարոզելով: Կը հրաժարիմ սա աստուածաբանական տարազներուն այլապէս խոռվիչ բարդութիւնը բանալ փորձելէ: Ատիկա վեր է իմ ուժերէն: Բայց գիտեմ թէ ամէն քերթուած (ինչպէս արուեստի ամէն գործ) ամէն բանէ առաջ **իբ ժամանակինն է**, կերպով մը այդ ժամանակի ամենէն իրաւ զգացումներուն բիւրեղացումը: Այդ իսկ տրամադրութեամբ կը մօտենամ մարդկեղէնին որ վերի տողերուն աւանդ է յանձնուած, մօտ հազար ամ մը առաջ, Աստուծոյ հետ խօսող տրուպ վանականի մը գրիչէն: Հակառակ մեր գիտութեան բոլոր յաւակնութիւններուն, այսօր դեռ չենք լուծած **տաղանդի հարցը** անգամ: Նարեկացին անհրաժեշտ էր կը հաւատայ թէ մեր մէջ ամէն պարգեւ, ամէն բարիք (հոգեղէն թէ մարմնեղէն), մեր մէջ ծաղկող ու աճող ամէն շնորհ Ս. Հոգիէն կաթած կայլակ մըն է...: «Զի ամենայն տուրք բարիք եւ ամենայն

պարզեք կատարեալք ի վերուստ են իջեալք...»: Շատ աւելի մօտ է իմ սրտին սա **թրանսանտանդալ** լուծումը քան փորձանօթներու մէջ հետապնդուած տաժանագին ենթադրութեանց առեղծուածը որ արիւնը, սերմը, բջիջները կը ջանայ հասկնալ, հասնելու համար քաղցր պատկերի մը, **շնորհին, գեղեցկութեան, բարիքին** անհերքելի, սխրալի իրականութեան, ընդդէմ **բրտութեան, տգեղութեան, չարիքին** նոյնքան անհերքելի բայց ահաւոր տռամային...: Տասներորդ դարուն ո՞վ պիտի համարձակէր կասկածի տակ ձգել **առաքեալ, մարգարէ** յղացքներուն զարհուրելի ընդարձակութիւնը, թելադրականութիւնը, փշաքաղող իրականութիւնը, խորութիւնը, փորձանքներու ծովուն բոցերէն այդպէս ամբարձիկ, մարդամօտ ու հանրամատոյց, միշտ անմատոյց, միշտ սարսափով թաւալուն յղացքներուն, ընդդէմ **«Ամենակալ», «Անեղ», «Անքննին»** բառերով ազուցուած մէկ ու նոյն պատկերին որ աստուածութիւնն էր այդ վանականին: Նարեկացիէն կէս հազար ամ վերջն ալ Արեւմուտքին ամենէն փարթամ ուղեղները, ամենէն հարուստ զգայարանքները (կ'ակնարկեմ Վերածնունդի վարպետներուն որոնք ահաւոր խտութիւններ են կեանքի ու մտածումի, կիրքի ու երագանքի, ոճիրն ու անմեղութիւնը իրենց իմացական արգանդին մէջ տանելով հաւասար վաւերականութեամբ) նոյն այդ տարազներով պիտի ջանային կերպադրել անհունաբաղձ ապրումներու մէկ ու նոյն տագնապանքը: Այդ մարգարէները, առաքեալները, պապերու եւ իշխաններու ապարանքներուն սրահներէն, պատերէն, առաստաղներէն երբ **կ'ապրին**, մարդկեղէնին ծարաւը կը պատմեն հոգեղէնէն...: Անճելոյի **Մովսէսը**, հակառակ իր ջքեղ մօրուքին ու զարհուրելի գեղեցկութեան ու ուժին, չեմ կարծեր որ շատ կը տարբերէր այն մտասիւսար պատկերէն գոր յօրինած ըլլալու էր Գրիգոր վանականը երբ Վանայ ծովուն յարաշարժ դիմակէն անդին կը ձգտէր անցնիլ, տեսնել Նիւթին ետին ծածկուած միւս անհուն ծովը Խորհուրդին, ուր Աստուծոյ սիրտը կը բաբախէր, մէկ ու նոյն զարկին մէջէն հասնելու համար ամբաւութեան բոլոր խորշերուն, բջիջներուն որոնցմէ մէկն էր իր ալ խորտակուած կուրծքին տակ

տառապագին թափահարող միսին կտորիկը...: Մարգարէ՛: Անշուշտ, որոնք կը հասկցնեն **Կամքը** որ կը ծնի կեանքը մեզմէ դուրս, մեզմէ վեր արժեքներու ի սպաս, դէպքերը կը վարէ մեր ուղեղին անմատոյց օրէնքներու կարկինով, ու մարդերը կը դասէ **կեանքէն անդին**...: Մարդեր որոնք առնուազն գուշակէին, տարբերուն առեղծուածին ընդմեջէն, տժգոյն ցուքերը, ցուցմունքները **աստուածեղէն կարգադրութեանց** այնքան անհրաժեշտ՝ պահելու համար դժուար հաւասարակշռութիւնը աշխարհին հրաբուխին վրայ...: Չեմ գիտեր պէտք կա՞յ, սա գնացքով, բառ առ բառ քակել աշխատիլ աղօթքին այն տողերը որոնք կը խօսին առաքեալին, վարդապետին, խուլին ու համրին վրայ, – բառեր, շատ աւելի հոժ իմաստներով քան ինչ որ մեր օրերու ջիղերը կ'առնեն անոնցմէ կամ կը տանին անոնց ներսը: **Վարդապետը** – աշխարհիկ իր իմաստին մէջ՝ սորվեցնելու արարքին մէջ մասնագէտը – այսօր երբեմն իրական մեծութիւն մը, աւելի յաճախ միջակ, նոյնիսկ ճճի յաւակնութիւններով ուռած անտանելի ճպուռ մը. հապճեպով ամբարած իր նիւթը ի շահ իրեն կիրարկող, **«պսակաւոր ի դպրութիւնս, ի գիտութիւն կամ յարուեստս»**. անշո՛ւշտ: Եւ կամ **դոկտոր, պրոֆեսոր**. իրենց բազմապիտակ անունները դրոշմած իրենց անունին, գիրքին ու տառին (ինչ հեշտագին հաճոյքով, իրենց բերաններէն իրենց թուքերը վազցնելով արեւելահայ դոկտորները **դասախօսութիւն կը սարքեն**) որոնց հանդէպ իրենց պատկառանքը ապուշ է որքան փղշտացին: Տիպարին ներկայ կասկածելի պատկերին տեղ Ժ. դարուն, մանաւանդ ԺԱ.ին, մենք կը գտնենք շարանը իրական վարդապետներուն (**շնորհալի**ն ածական մըն է որ ԺԲ. դարու ուսուցանող մէկէ աւելի անունները կը պսակազարդէ, ու նոյն ատեն կը մասնաւորէ ուսուցման արարքին տարողութիւնը, վերնատուր եւ ճակատագրական, բացառիկ զիջումը Աստուծոյ), մեր երկրին ամենէն նկարագէղ կայքերուն խորը իրենց համեստ **ուխտերը, վանքերը** հաստատած, աղօթելով, գրելով, խօսելով, աշխարհին անկայուն փառքերու ընդդէմ, անդրաշխարհին անանց գեղեցկութիւններէն ճառելով, իրենց ոչ միայն համոզումները, այլեւ

սիրտը, արիւնին կրակը դնելով իրենց ուսումին մէջ: Այդ մարդերը ծաղիկն էին մեր երկրին, անոր հոգիին ազնուական մարմնառութիւնները, անշահախնդիր իմաստութեան, անվերադիր իմաստին տապանակները, իրենց **շնորհուած** գիտութիւնը իբրեւ սրբազան աւանդ մը կրելով, ու սա հոգեբանութիւնը աւանդառու մարդու, մշտապէս արժեւորելով: Թանձր տգիտութեանը մէջ աղամորդիներուն, անոնք այնքան սուղ գնուած (երբեմն քառորդ դար կը տուէր աշակերտութիւնը. խարտեաշ պատանիէն՝ կնճռալիբ, աղպղպեղ մագերով գլուխ մըն էր որ իր կարգին կանցնէր աշխարհ, **ուսուցանելու**) այդ բարիքը կը բաշխէին պարտքի մը պէս, լուսաւորելը, սորվեցնելը ընդունելով իբրեւ ամենէն ազնուական սպասը Աստուծոյ, իրենց **հոգին շահելու** եղանակներուն ամենէն սուրբը, երբ հաստ, գորշ կիրքերու թատերաբեմ մը կազմող ընկերութեան (**société**) մէջ, միտքին մեծ, ծանր խաւարին վրայ կը կատարէին աստուածային Գիտութեան ջահալուցումը, մարդոց ներսերը իրենց առջեւ փռելով...: Չուր տեղը չէ մեծագոյն աշխարհակալներէն մինչեւ խոնարհունակ բռնապետները պատկառմանցին **իմաստունին** հանդէպ, սա Արեւելքին մէջ, ու անոր միջամտութիւնը վախցան անարգել...: Այս ընդլայնումներուն բնական հետեւանքը կըլլայ աղօթքին տողը, Հոգին Սրբոյ շնորհներէն մէկուն մեր մէջ բնակիլը: Գրիգոր Նարեկացին հռչակ է ունեցած, կանչուելու չափ, դէռ մատաղատի, արքունիքները, մեկնելու համար Բանը...:

**Համրը** մեզի համար հիւանդ մըն է, ջղագար մը, շատ շատ պապենական մեղքի մը (կայ միքրոպը որ հօրմէն կանցնի թոռանը, զաւակը մոռնալով, վեներական հիւանդութեան մէջ) կսկծալի փաստը, գոր կը ջանանք դարմանել, մեր գիտութեան բոլոր զէնքերը օգտագործելով մեղքի այդ հիւլէին ընդդէմ, եւ կամ աւելի կարճ, արագ ուսումնասիրութեամբ մը կը մաքրագործենք, ինչպէս չեն վարանիր ընել այսօր ամենէն աւելի քաղաքակիրթ համարուող ազգերէն ոմանք, ախտաժեւոները, ցեղին բարիքին համար, ժամ առաջ հողին դրկելով: Նարեկացին թշուառ այդ իլեակին մէջ աստուածային անհաս

կարգադրութեանց մէկ յայտնաբերումը կը մղուի տեսնել (յիշեցէք **ի ծնէ կոյր**ին պատմումը): Խօսեցուցէք **համարը**: Ինծի տրուած է ականատես ըլլալ հրաշքին, հեռու վանքի մը սօնական գիշերը: Եկեղեցին քարացած մարդերու վրայ դադրեր էր իր կամարէն: Հագարներ, ուս ուսի: Չորս ձեռքեր ներս բերին, ամբոխին գլխին վրայէն, լաթերու կծիկ մը: Աստուածածնայ պատկերին առջեւ այդ կծիկը դրուեցաւ հողին: Ոտք ելլողը պարման աղջիկ մըն էր, նոր մտած իր երիտասարդութեան, իր «արշալոյսին» պիտի ըսէր բանաստեղծ մը: Մունջ իր դէմքը, մոմերուն դողահար լոյսին մէջ կըլլար բզիկ բզիկ: Ծանր, ոսկի արցունքներ իր թարթիչները կը փոխէին հեքեաթային մանեակի մը: Կուշտին՝ հիւծած մայրը, որ կը պոռար.

– Մեղայ Աստուծոյ, մեղայ Աստուծոյ, մեղայ Աստուծոյ...

Ու իբր թէ արձագանգը այդ սրտապատառ հառաչանքին, հագար բերանէ նոյն բառերը բոլորին հոգիին ընդերքէն կորզուած, տա՛ք, կպչո՛ւն, յուզիչ, նուաճող պաղատանքը: Թօթըրուեցան աղջկան մկանները: Դեղձան իր մազերը կը թուէին թրթռալ եւ ուռիլ:

– Եօթը տարի է, Տիրամայր...

կըսէր մայրը, եւ իր մազերը փետտելով գլխէն խուրձ խուրձ կը նետէր Չարխափանին: Անոր հետեւեցաւ աղջիկը ու մէկ կողմէն մազերուն պոկումով առթած ցաւին ամբոխին յուզեալ հոգիին, ու միւս կողմէն աղջիկը դղրդող տազնապին միախառնումովը... բացուեցան կապերը անոր լեզուին.

– **Մեղայ Աստուծոյ, մեղայ Աստուծոյ**: Հրաշքը ան էր որ եկեղեցիին պատերը եւ կամարը դիմացան այն միւս փոթորիկին որ փրթեր էր հագար բերաններէ, կատարուածէն խելայեղ, որոնք կը պոռային սրբազան բանաձեւը: Համրերը կը խօսի՛ն: Ճիշտ է որ Գրիգոր վանականը բառերու հանդէպ տկար է քիչ մը, զանոնք առատ սպառող մը: Բայց իր գիրքին մէջ որքան շատ են տողերը որոնց ամէն մէկ գիրին տակը ծանրածանր ապրումներ կը մնան ծրարուած:

Կը շարունակեմ աղօթքը

**«... Շնորհեա եւ ինձ մեղաւորիս**

Խօսիլ համարձակութեամբ  
 Ջկենդանարար խորհուրդ Աւետեաց Աւետարանիդ.  
 Հետեւել, արագաթոյչ ընթացիւք մտաց  
 Ընդ անհուն սասարեզս քոյինաշունչ կտակարանաց:  
 Եւ ի մատչել իմ  
 Ի գլուխ հանդիսի մեկնութեան բանի՝  
 Նախաժամանեցէ առ իս գթութիւն քո,  
 Խօսելով յիս զարժանն եւ զպիտանիսն  
 Եւ զհաճոյսն քո ի ժամանակի,  
 Ի փառս եւ ի գովեստ աստուածութեանդ քո  
 Եւ ի լրութիւն շինութեան կաթողիկէ  
 Եկեղեցւոյ»:

տողեր՝ ուր տիրական է խօսելու արարքը, ասոր թելադրած փառքն ու դժուարութիւնները, զայն յաջողութեամբ իրագործելու համար **մարդկային**ին անբաւարարութիւնը: Վտանգին ընդդէմ **երկնային**ին նպաստը, որպէսզի արժանաւորը, պիտանին ազդուին իր լեզուէն:

Նարեկացին ո՞վ ունի մտքին առաջ սա տողերուն ետին: Ինքզի՞նքը: Գիտենք որ իր օրերուն «**անապատ**»ները ընդհանուր էին Հայոց աշխարհին ամենէն նկարչագեղ վայրերուն մէջ, ու **անապատականները**, միայն խոտակերներ չէին, այլ եւ սորվողներ, սորվեցնողներ: Ըսի թէ ինչ հեղինակութիւն կը վայելէ Գրիգոր Անապատականը Աստուծոյ խօսքը, խորհուրդը բացատրելու արարքին մէջ: Մեզի չէ հասած ստոյգ տեղեկութիւն մը իր խօսքին ներքին շնորհներուն մասին: **Աղօթամատեանը** չի խորհրդածեր, այլ կը զգայ: Բեմին վրայէն արձակուելու համար չունի այդ խօսքը անհրաժեշտ խտութիւն ու թափանցման շնորհ: Այն ատե՞ն: Այսինքն Նարեկացին կը մտածէ՞ սրբազան բեմբասացներուն որոնց հզօր հեղինակութիւնը զանգուածներու վրայ դուրս էր եւ է կասկածէ: Ասողիկ (ԺԱ. դար) հետաքրքրական տեղեկութիւններ կուտայ Հայոց աշխարհին իմացական շարժմանը վրայ, իր օրերուն: Կը խօսի խանդով, հիացական բառերով վանական հաստատութեանց վրայ: Ունի իրարմէ շքեղ անձերու փառաւոր կենդանագիրները,

խօսքի, ուսուցման վարպետները, լեցուած աստուածային շնորհով: Իրենց **«առօրեայ»**ին (աղօթքին պարէ՛նը) հրեշտականրման վարդապետին դիմող անապատականները անոր մէջ կը հիանայի՞ն նաեւ խօսքի վարպետին վրայ: Մեկնա՞ծ է, **«ի գլուխ հանդիսի»**, այն հուրքով, սաստկութեամբ, պերճանքով ու փառքով որոնք իր գիրը կընեն այնքան խռովայոյզ հրայրք մը, փոթորիկ մը, փարթամութիւն ու զեղուն հարստութիւն: – Գաղտնիք: Կանցնիմ թելադրանքին: Ինձի համար սիրելի է տեսնել սա տողերուն ետին տիպարը, **իբաւ** ու **կենդանի**, ամէն ժամանակներու համար, բայց մանաւանդ այսօր, **սէր ու տիրակաւ** ժողովուրդներու ճակատագրին: Ինչերն՞ո՞ւղ պետք իւելքը այդ մարդոց գանկին: Էականը, անհրաժեշտ՝ **կոկորդը**, ըսել կուզեմ այն տարօրինակ գործարանը մեր մէջ որ մեր բառերը կեղանակաւորէ, կը կենագործէ, կը հրեղինէ, անակընկալ որքան անհասկնալի խենդութիւն մը, հրայրք մը ձայնասփռելով ամենէն պերճ իմացականութեանց ինչպէս ամենէն խոնարհ ուղեղներու հեռանկեալ ալքերը մինչեւ: Ճառի ամենագօր ասպետները, որը՝ թուղթ ապարանքներու աշտարակներէն, որը՝ ռատիոններու ամենահաս անդունդներէն, գրող կամ խօսող: Որոնք պիտի ներկեն իրենց ու մեր անզգամութիւնները, ուրիշներու հողէն, ինչքէն, կեանքէն իրենց ու մեր յաւիտենական ծարաւը պիտի օրինադրեն, մորթելու, կողոպտելու եղեռնական, աւագակային բարքերը, ախորժակները պիտի շուրջառեն յանուն բարձրագոյն, նորոգ բարոյականներու, յանուն արդարութեան, ժողովուրդներու իրաւունքին, իրենց ու մեր սոնքը, փղշտացիութիւնը նորակարգ կեղծիքովը մարդասպան բնագոյներու ու **նովին բանիւ**, «ի հաստատութիւն եւ ի լրութիւն նոր, կաթողիկէ եկեղեցւոյ» նուազ զօրաւոր ժողովուրդներու գլխուն պիտի արձակեն անհամար տարմերը մահուան թռչուններուն, ռուբերը ընդերկրեայ վիշապներուն բերանէն, այս ամէնը քաղցր, խաղաղ անզգածութեամբ մը անլուր վայրագութեան: Այսօր այսպէս կը խօսին կոկորդի նորակարգ ասպետները: Ի՞նչ է ուզածը Գրիգոր վանականին.

– Կարողութիւն, որպէսզի ըլլայ ընդունակ **աւետելու** սրբազան **Աւետիսը**, մարդոց անսփոփ թշուառութիւնը ամոքել ձգտող, ապրելուն տառապանքը հանդուրժելի ընծայող: Համարձակ ու հաւատաւոր, հաղորդէ **կենդանաբար խորհուրդը**, այնքան արիններու, ցաւերու գինը կազմող ազատագրումին խորհուրդը մահուան ճիրաններէն, որ անշուշտ աւելի խորունկ ողբերգութիւն մըն էր քան մեր օրերու հողին հրդեհը, **geopolitik**ը, մեր հոգիներէն ներս: Նարեկացիին սա տողերը թերեւս փոքրել պիտի ըլլար, զանոնք ուզելով նկատել արտայայտութիւնը իր **կարգին**, որ ո՛չ **նոր** է սակայն, ոչ ալ հողահալած, մարդասպան, աւազակ: Այդ տողերուն ներսը կայ ուրիշ ալ խռովք: Անոնց հեղինակը կ'ուզէ որ, խօսած ատենը քակուի իր մտքին նիւթով կալանաւոր թելերը, դրուին այդ մտքին թռիչները որպէսզի ըլլայ ի գօրու անոնցմով կտրել անցնելու, մէկ բռպէէն միւսը, Կտակարաններու անհուն սահմաններէն, ուր կը մնան ծանօթ պատմութեան մեծ մասերը: Անոնց հեղինակը մարդկօրէն տկար իր մտածումին համար կը պաղատի գթութիւնը, շունչն ու ազդումը իր Աստուծոյն, որ հեռու իմացական հանգոյց մը, հեռանիստ քմայք մը, առնուազն կամարով մեզմէ ծածկուած դրութիւն մը, գահոյք մը ըլլալէ, էր կենդանի, նիւթական շփում մը ինչպէս տպաւորող մարմնեղէն ձգողութիւն մօտէն զինքը սեղմող աջ մը, իր ննջարանը իր թելերովը պատսպարելու չափ իրեն ընտանի իրականութիւն մը: Այդ իրողութիւնը անիկա իր Աղօթամատեանին 365 հատուածներէն ամէն մէկին մէջ կարծած է դրած ըլլալ. աւելին՝ զայն տեսած ըլլալ, ինչպէս կը գրէ տեղ մը «այն գոր աչօք իմովք տեսի...»: ...Կը մտաբերեմ զինքը «**ի գլուխ հանդիսի մեկնութեան բանի**» իր մարդկային տկարութեանց **complexe**ներէն բոլորովին ազատագրուած, – որովհետեւ գիտէ ինքզինքը լեցուն աստուածայինով – երբ կը մեկնէ, կը մեկնաբանէ, կորոտայ կամ կը մըմնջէ պատգամները իր Աստուծոյն: Կտորին, էջին, պահին ու վայրին նկարագիրներուն համեմատ երբեմն քաղցր, ցնծագին, յուսաւետ, յաւիտեանէն քաղցրացած, սխրագին երանութեան մը մէջ երբ կը պատմէ անճառելի գեղեցկութիւնը եօթը երկինք-

ներէն անդին սկսող թիւէ դուրս Անհունին, որ մէկ է ու անթիւ, որուն ծոցէն բխող շառաւիղներ են մարդոց հոգիները, լ վերջնապէս մաքրուած նիւթին ձիւթէն ու կուպրէն, լոյս ու հծծիւն, երգ ու երանութիւն...: Կը մտաբերեմ զինքը կրակոտ, վայրագ, խենդենալու չափ պրկուած, իր մարմինին բոլոր մասերովը դողդղագին, երբ աշխարհին չարիքին դէմ է որ կը նետէ իր բռունցքը: Մարդոց ոչ նոր է վայրագութիւնը, ոչ ալ սպառող անոնց անգթութիւնը: Այդ նսեմ դարերու մեղքը աւազակաբարոյ իշխողներու, թագաւորներու բարքերուն մաս կը կազմէ անշուշտ ինչպէս ամէն դարու, ինչպէս այսօր: Բայց հազար տարի առաջ մեր օրերէն, մեղքը տարօրինակ վիճակ մըն էր: **Անզգամը** այսօր մեզ չի վիրաւորեր: Ժ. դարուն անիկա հրէշն էր ու նոյն ատեն արգահատանքի արժանի խլեակը: Կը սպաննէր իր կինը խաղաղութեամբ, կառնէր ուրիշինը բռնի, ու... ճամբայ կիյնար Երուսաղէմ, ուխտաւորի շապիկը կոնակը ու ճակատը կը քսէր Փրկչին արեան հետքերը կրող վայրերու, հանգչեցնելու համար նիզակուող իր խղճմտանքը: Եւ կամ, քաշուած իր լեռնանիստ մէկ դղեակին խորը, ականջը փակ ամէն ձայնի, խիղճը պատանած ամէն զգացումի դէմ, կը սպառէր մինչեւ յետին բջիջը, խորիսխները իր անասնութեան: Անիկա երբեմն կընդունէր այցելութիւնը **անապատականին**, սանկ չոր, դեղին, բիրտ, դժոխքէն բախած մէկու մը կերպարանքով, որ ինքզինքը հանդերձած իր դերին, կը կարծէր վերագտնել Հին Կտակարանի եռամեծ դէմքերուն ամբողջ ահաւոր ուժգնութիւնը, իր բառերը ծրարել Եղիաներու թոյնին ծխումներով ու նետել զանոնք այդ անզգամին քիթին ու բերնին, մեղքին վրայ այդ յարձակումին մէջ անգամ մըն ալ զայրագնելով խստութիւնը իր անեծքին, ու կը փշրէր այդ մարդուն մեղքերուն գուրը արքայական դահլիճներուն պերճանքին վրայ, հեշտագին ու վայրագ, այդ աղտոտութեան վայելքն իսկ արժեւորելու չափ կատղած: Ու այդ իսկ տենդին մէջ կը գտնէր աններող զարհուրանքը Արեւելքի ներշնչեալներուն, որոնք Հին Կտակարանին մագաղաթին մէջն իսկ դեռ ուժն ունին մեզ ներշնչելու, խեղճ ու կրակ մարդերը հանդերձելով... մարգարէ:

Խօսքին վտանգն է ասիկա, աղետը՝ եթե կուզեք: Իմ մտքն չի հեռանար դեմքը Մարգար սարկալագի մը, ճմուռ ճմուռ ու դեղին խաւաքարտ: Դժուար էր այդ ծալաւոր երեսները գետեղել իր տարիքին փաստին մէջ, այնքան հնօրեայ, ժիր ու հեռու կը թուէին տղոց պարունակէն: Ջնջուած է մտքէս սակայն մարմինը իբր մանրամասնութիւն: Ունէ՞ր, ունեցա՞ծ էր ձեռք, որոնց եղունգն իսկ կը ծածկէր մեզմէ. ոտքեր՝ որոնք Վանէն բերուած տրեխանման բայց ձեռագործ (ինքն էր աշխատաւորը) բանի մը մէջ պէտք է աներեւոյթ մնային ձարհիւս իր վերարկուին փէշերուն: Ու կուգար, մեր ամէնուն մեղքին վրայ, Նարեկէն, Արմաշ, ուսում առնելու, Կտուց անապատին կողմէն: Նարեկացիին փառքի օրերն էին: Մեր գրականութեան մէջ անիկա հրաշք մըն էր: Ու հասկնալի մեր հետաքրքրութիւնը Մարգար սարկալագը շրջապատելու: Անողոք տղան: Լոեց ու լոեց: Ո՛չ մեր տեսուչը, ոչ վանահայրը չկցրան քակել կապերը այդ լեզուին: Մեր մեղքը: – Բայց, իր կարծիքով, մեր ամէն բանը: Ունէինք քիչիկ մը փախուկ **Հաճի պէյ մը**, քաղցր թշուառութիւն մը, որ երբեմն այցելութիւններ կընդունէր իր խուցին մէջ **մեզմէ աղէկներուն**: Հաճի Պէյը յաջողած էր կակուղցնել այդ ապառաժ տղան: Անկէ իմացանք որ մենք բոլորս սատանայի որոգայթներ էինք: Հարկ չկայ ըսելու թէ մունջ այդ կենդանին կատեր իր ընկերները: Կատեր մեր ուսուցիչները: Ու անհնարին կատաղութեամբ մը կատեր մանաւանդ վանահայրը, որուն զգեստները արեւէն դեղնած ու աղտէն չնարակուած չէին: Կատեր ծաղիկները, ճմուռով անոնց փափուկ բաժակները որպէս թէ ըլլային մեղքի արմատներ: Պիտի իմանայինք, միշտ Հաճի Պէյին խողովակով որ մենք բոլորս **մարդ կը հոսէինք**, անձերն ու իրերը: **Սուրբ չէինք հոսեր**: Եւ սակայն դժուար էր զինքը **ցաւագար** մը որակել: Քանի մը ամսուան մէջ, Արմաշը անկէ շատ քիչ բան մեղմեց: Հրաժեշտէն շաբաթ մը առաջ խօսեցաւ: Հիմա կը մեղքնար մեր երիտասարդութեան: Մեզ կը հրաւիրէր Կտուց անապատը, տեսնելու սարկալագներ, վարդապետներ ինչպէս որ պէտք էին ըլլայ: Աստուածը կը պաշտուէր ոչ թէ մեր հեթանոս զգեստներովը, ձայնովը, մարմիններովը այլ...: Քառ-

սուն տարի վերջը, իր տրտում ստուերը կը թուի քաղցրանալ երբ կը փորձեմ թափանցուիլ ճշմարիտ իմաստովը Գրիգոր վանականի պաղատագին **հայցուածին**: Անիկա իր Աստուծմէ գթութի՛ն կ'աղերսէ՝ **յարմարը, պիտանին, հաճոյ** խօսքը ըսել կարենալու համար, վասնզի, կը խորհիմ, ինքզինքը անգօր, անպաշտպան կը զգար... խօսքին կիրքին դէմ: Մարդերը չվիրաւորելու, եկեղեցոյ լրութեան համար երբ մէկը կը յայտարարէ թէ անկարող է չափ մը, սանձ մը դնել իր լեզուին, տուած կըլլայ պատկերը խառնուածքի մը որուն վրայ վերլուծումը կը մնայ անազդու: Աղօթամատեանին բոլոր դառնութիւնը, ահաւոր ուժգնութիւնը ո՛րքան կը դառնան հասկնալի եթէ երբեք աղօթքին ետին դնենք աղօթողը, բառերուն ետին՝ ջիղերը:

**«Եւ կարկառեա՛ ի վերայ իմ  
Զամենամերձ աջ քո  
Եւ զօրացո զիս շնորհօք  
Գթութեանդ քո.  
Փարատեա՛ ի մտաց իմոց  
Զմէզ մթութեան, մոռացութեան.  
Ապաքինեալ ընդ նմին զխաւար մեղաց,  
Ամբառնալ, ուշիւ իմաստիցս  
Ի կենցաղոյս երկրէ ի բարձունս:  
Լուսաւորեա ի յիս վերստին  
Զձագումն անստուեր հրաշից գիտութեան  
Աստուածութեան քո, հզօր,  
Արժանի լինել,  
Առնել եւ ուսուցանել  
Յօրինակ բարեաց աստուածասէր լսողաց»:**

*(Աղօթամատեան, Բան Լ. Դ. Բ.)*

Աւարտած է հատուածը:

Խօսելու արարքը, ասոր մէջ յաջողութիւնը, ասկէ գալիք բարիքը (միամիտ մա ըդր) Գրիգոր վանականը երբ կը գետեղէ անստուեր հրաշքին ծայրը աստուածային գիտութեան, արեւելեան շատ հին մտայնութեան փաստ մը չի պարզեր

միայն (այդ օրհնեալ Արեւելքին մէջ այդ Աստուածը ներկայ է միշտ, մարդուն գլխուն վերեւ, ասոր բոլոր գործունէութիւնը ոճաւորող: Անոր անունով է որ այսօր մարդիկ սուտ կը խօսին, յիշելու համար հոգեղէն մարզէն փոքրութիւն մը, ու անոր անունով է որ կը սրեն դանակը որ պիտի պատռէ մօր արգանդը ու հոնկէ փրցուած անձին մանկիկը պիտի մորթէ հօրը ծունկերուն վրայ, միշտ այդ Աստուծոյն փառքին համար), այլ կը թելադրէ իր ու մեր ամէնուն կարօտը այդ մեզի այնքան զլացուած բարիքէն, գիտութենէն: Չեղանք ժողովուրդ մը, տէ՛ր իր տունին, պատիւին, իր քաղաքներուն մէջ իր մտքին սպասը անարգել գործադրող, իր հրապարակներուն վրայ մարդկային առաքինութիւնները փառաբանող, իր տաճարներուն բեմէն, իր երկրային ապրումներուն հաշտ ու հաճ անդրադարձը երկինք վերառաքող:

\*  
\* \*

Չեմ խօսիր, այս ընդլայնումներէն վերջ, որոնք առաւելապէս խորքի թելադրանքը եղան, արտայայտութեան ալ շնորհէն: Հզօր ու հաղորդական սա **հռետորութիւնը** Նարեկացիին մօտ մաս կը կազմէ խառնուածքի: Որուն վտանգները կանգիտանայ, այնքան այդ կերպ արտայայտութիւն մը բնական բխում մըն է, ըլլալէ առաջ ոճ մը, բառերու ագոյց մը: **Իմաստին, Բանին** հարցը **Արիւնին, Մարմինին** իրականութեանը երկրորդ երեսը ընծայող, այս վերջինը **վերառաքող (թրանսսանտանդալը** թէեւ ոչ հարազատ, բայց զանցելի վերադիր մը չէ կարծես) սա վարդապետը թերեւս իր սկարութիւններուն մէկ կարեւոր մասը կը մնայ պարտական խառնուածքի սա գեղումին: Իր էջերով չսպառող **թուումները** ածականներէ, իր **անկարողութիւնը**՝ վրան խուժող պատկերները մէկ ու նոյն մտածումէն իբր երանգ, իբր մանրամասնութիւն, մերժելու, անոնցմէ **ընտրութեամբ** գոհանալու, իր անհակակշիռ **պատ-**

**բաստակամութիւնը՝** չզոհելու ոչ իսկ ծուէն մը իր ներբողէն, որ աստուածային անհունութեան դիմաց այնքան ճիղճ կը թուի իրեն սակայն: Ամէն զեղջ, բառերէ, ֆրագէ, սիրոյ, սարսափի նուագում մը, զեղջ մը ընդունելու չափ նախապաշարուած, թերեւս Նարեկացիին յորդութիւնը կընեն տարբեր բան մը գիրքերու մարզանք մը միայն եղող անտանելի հռետորութենէն: **Աղաչեմ զանփոփոխելին** հազար տարուայ կեանք ունի մօտաւորապէս: Իր հարիւր տողերէն տասը հատ չի կայ սակայն ինծի չխօսող: Ունի՞ք աւելի վճռական փաստ գրագետի մը մեծութեան, իրաւութեան, խորութենէն: Նարեկացի **իւր աղօթքները չէ մտածած:** Թերութիւն մը անշուշտ: Բայց ահա, արուեստին հրայրքովը այդ թերութիւնն է որ պաշտպանած է անոնց **արիւնը:** Վերցուցէք այդ բառերուն երեսէն, ներսէն Գրիգոր վանականին ջիղերէն հոսածը անոնց ծոցը, դուք պիտի ունենայիք այն մեռած էջերը որոնք այդ դարերէն մեզի հասած բոլոր գործերուն մէջ մեզ այնքան կը վիրաւորեն: Կը կարդաք, օրինակի համար, իրեն ժամանակակից պատմաբան մը՝ Թովմա Արծրունին, որ դէպքերու շարայարումը կատարած, արձանագրած միջոցին, յանկարծ կը յիշէ թէ վարդապետ մըն է ինքը ու պարտքին տակը, հետեւաբար, աստուածաբանելու: Ու դուք ստիպուած էք այդ մարդուն փաստերը հանդուրժելու: Պիտի խօսի «աղանակերպ» իջնող Ս. Հոգիէն, հազար անգամ կրկնուած, սրբագործուած բառերով, նուիրականացած ու անայլայլ տարազներով, բոլորն ալ եկեղեցւոյ վարդապետութեան հաւատարիմ ու հարազատ, բայց որոնցմէ մեզի չանցնիք այն սրբազան սարսուռը, մեր միտքը իսկապէս աղանակերպ վերառաքող թռիչքը գոր կը զգանք, կը տեսնենք Գրիգոր վանականին բառերուն ընդմէջէն, անոնք ալ հարազատ, հաւատարիմ, ուղղափառ:

Դ.

Յիսուն տարիներ զիս կը բաժնեն իմ մանկութեան անդրանիկ, գիտակցուած սա խռովքէն, ինծի համար իր մասե-

րուն մեջ մութ, բայց իբրև ամբողջ շատ յստակ աղօթք է մը իմ մեջ սաղմնաւորուած (իմ գիտակցուած երկրորդ խռովքը ես կը յիշեմ առած ըլլալ Եղիշէն, երբ կատողած փորձեցի գրել Վարդանանց պատերազմը, **Եղիշէն**՝ մէկ ծունկիս, միւսին՝ թուղթը – սեղան չունէինք ո՛չ տունը, ոչ ալ դպրոցը – ուր կը զարնէի գեղացի տղու այնքան դժուար ընտելացող գրիչին խփը, պեղելու համար ճերմակ այդ արտերը իմաստին: Եղերականը այս ամէնուն մեջ տարիքն էր սակայն: Չին ու ճաքոն պատերազմի տարին, հիմա կը հաշուեմ, ուրեմն ինծի համար տասներկու): Գեղի դպրոցէն մինչեւ Ժառանգաւորաց Վարժարանը, **կէս դա՛ր**:

Գրիգոր Նարեկացիին հոգին, այն օրերուն ինչպէս այսօր, մութ, խորունկ, իրաւ բան մըն է իմ մտքի անդաստաններուն վերեւ:

(Վերջ)

Յ. ՕՇԱԿԱՆ

(*ՄԻՈՆ*, ԺՁ. ՏԱՐԻ, ԹԻԻ 1-2, ՅՈՒՆՈՒԱՐ–ՓԵՏՐՈՒԱՐ, 1942, էջ 33-37)

#### Ծանօթ. խմբագիրի

«Նարեկացիի մասին ուսումնասիրութիւն մըն է: Ամբողջ շարքը մտած է Պ. Մնայպեանին կազմած *Երբ հիները կը կարդանք* հատորին մէջ: Հատորին մէջ չկայ նոյն վերնագրով [«Կեանքին հետ»] 1940ին տպուած կարճ կտորը» (Մարկ Նշանեան, *Յակոբ Օշականի մատենագիտութիւն*, Լոս Անճելըս, 1999, էջ 65):

## ՄԵՐՄՆԱՑԱՆ

Գիտութեան հետզհետէ աճող յաւակնութեան, խոստումներուն, նոյնիսկ յաղթանակներուն զուգահեռ, կայ դար մը ու աւելի, նոյն կանոնաւորութեամբ ու բնականութեամբ, կը բուսնին աննախապաշար մտածողը, աննկատ վերլուծողը եւ պատրանաթափ դիտողը, քովն ի վեր նոր ու կրակոտ, նեղմիտ ու կատաղի մունետիկներու – նոր արժէքներէ – ընելու պարզ, անյաւակնոտ հաստատումներ, յաճախ ապայժմէ, անպաշտպանելի, մանաւանդ դժուար, քանի որ մեքենաներուն նման, քիմիական փորձարկութեանց նման փաստելի չեն իրենց արդիւնքներով: **Հարիւր տարիէ ասդին մարդկութիւնը չունեցաւ հոգեղէնին մարզէն ուրանիումը, քատիումը:** Ընդհակառակը: Միշտ հարիւր տարիէ ասդին ազգերու խղճմտանքը – որ հոգեղէնը պիտակող տարագ մըն է հոս եւ ոչ թէ քաղաքական, բարոյական յղացքներու դրութիւն մը – ըրաւ իր խելճ, թշուառ ու անփառունակ նահանջը ու մարսեց սհաւոր ընդարձակութեամբ ոճիր ու բարբարոսութիւն:

Աննախապաշար մտածողը կը դատէ իր ապրումները, իր ու ուրիշներու հաշտոյն, – տուէք այդ ուրիշներուն ձեր ուզած անունները, ամենէն փառաբանեալներէն – տառապագին, այլուրային, չխենդենալու համար ստիպուած՝ **իր արժէքները իրենց յարզէն կոտրելու**, այնքան այդ արժէքներուն անունով գործադրուածը կը հերքէ զանոնք: Ու այդ աննախապաշար մտածողը տակաւին կը տառապի հաշտոյն այն յիմարութիւններուն, խարդախումներուն որոնք զանազան պիտակներով, կընեն հաշուեյարդարը անհամար սերունդներու ճիգով սաղմնաւորուած, կերպարանք ճարած, առնուազն մարդը հպարտ ընող քանի մը կիսականգուն սրբութիւններուն: Քանի մը հարիւր տարի առաջ պատերազմը, այսինքն մարդերը զանգուածով փողոտելու վայրենութիւնը չէր պարզեր մեր օրերուն սառն, մաթեմաթիք զարհուրանքը: Աւելի՛ն: Չէր փառասիրեր արդի իմաստասիրական հեռահաս գաղափարազրոյթիւնները: Ժանտ, դժբախտ, բայց հզօր հրապոյրով գործի

մը մէջ գերման գրագէտ մը իր խղճմտանքէն անդին չանցնիր երբ իր գիրքը նախաբանող հատուածի մը մէջ իր պաշտպանած գաղափարաբանութիւնը կը յորջորջէ «**գերման իմաստասիրութիւն մը**»: Այդ *Արեւմուտքի Անկումը* (այդ է գործին անունը) կ'ուրանայ գիտութիւնը, զայն **եղածին, մեռածին** արձանագրութիւնը յայտարարելով ու կը փառաբանէ **ըլլալը (warden)**, գաղիացիներուն **լինելութիւնը (devenir)** որ մարդն է, ամբողջական. այսինքն անոր արեան բոլոր խակ ու հաստ մղումներուն հանդէսը: Այսինքն քանի մը բիւր դարերու շքեղ, անժպիտ վայրագ կենդանին որ իր ոտքերէն երկուքը ձեռքի վերածելու իր բախտը դեռ չէ արժեւորած հաւանաբար ու կը թափառի անտառէ անտառ, որս ու որսորդ: **Գերման իմաստասիրութիւն**, սա այնքան հաստ ու նախնական վերադա՛րձը դէպի անտառներու անասնական մարդկութիւնը:

**Հերոսապաշտութիւն**: Որ օրակարգ է դարձեալ, միշտ այդ դրական, արեան համակիր վարդապետութեանց հետեւորդներուն համար: Մեռցնելը՝ մէկ ստորոգելին այդ պաշտամունքին: Մեռնի՛լը. – ան ալ ուրիշ վկայական, ուրիշ վկայութիւն: Աննախապաշար մտածողին համար երեւոյթները նոր չեն անշուշտ: Անյիշատակ ժամանակներու արձանագրութիւնն են անոնք: Նո՛րը, սա ողբերգութեան մէջ, դարձեալ չէ գոյութիւնը՝ նման վարդապետութիւններու դարբիններուն: Իր լքումին, առանձնութեան փղոսկրեայ աշտարակին կատարին, գերման ուրիշ մտածող մը, մտածողներու ամբողջ փաղանգ մը անհասկնալի չեն երբ իրենց գրոհը կուտան արդէն ներսէն որդնոտած, հազիւ կենալու կարող քաղաքակրթութեան մը բոլոր դարպասներուն, – կրօնք, արուեստ, մշակոյթ, պատմութիւն, ազգային փառքեր ու շարունակելը ձեզմէ: Շօբէն-հաուէր, Նիցչէ: Աւելի վերջը Շբէնգլէր: Բայց ինչ որ կը մնայ անհասկնալի, այդ մարդոց թուղթերով սնող ու անոնց բովանդակութիւնը կեանքի վերափոխող տրամադրութիւնն է ամբոխներուն: Հերո՞ս՝ մարդը որ մթին ուժերէ վարուած ձգեց իր ներկարարի գոգնոցն ու դոյլն ու վրձինը, ու ելաւ ճամբայ, աշխարհին տալու առնուագն հազարամերու ծիրով նոր կարգ,

նոր մշակոյթ: – Ապահովաբար, գէթ իբր մտադրութիւն հերոս մըն էր գերման իմաստասիրութենէն զրահաշուք դուրս պտոթկացող այդ կիսաստուածը: Բայց, կը կրկնեմ, ինչ որ կը մնայ անհասկնալի ատիկա կարելիութիւնն է այդ հեքեաթը այդպէս մարտող միլիոններուն: Չեմ տար անունը միւսներուն, ներկարարին չափ նախնական, անմիտ բայց յիմարութեամբ սպառազէն, որոնք կայսրութիւններ ձեռեցին առասպելեան կտաւէն ու իրենց երազները քաւեցին գլխիվայր խաչուելով: Հերոսները: Չորս կը տեսնենք մենք մահուան դաշտերէն ասդին, պարզ կեանքի զանազան խորշերուն: Առանց արեան ու ռումբերու: Ու առանց իմաստասիրական ռումբերու: Մեր օրերու քաղաքակրթութիւնը որուն բաղադրիչները կուգան առաւելագանց չափով մը տարրալուծութենէն, հազիւ հազ կը տառապի անոնց, այդ հերոսներուն պակասովը, քանի որ հոգին չափող անօթները, թթուները (**acide**) մատչելի չեն զանգուածներուն: Պատերազմը յաւակնեցաւ տալ այդ գործիքներէն: Մահը արհամարհող սերունդներ, մահուան դաշտերու վրայ, եղան յուզիչ, սրտառուչ, մեծ: Բայց չեղան այդ մեծութիւնը, գեղեցկութիւնը, մահէն ասդին, կեանքին դաշտերուն ուր Ի. դարուն շքեղ տափակութիւնը, գետնաքարշ վայելապաշտութիւնը կայ ու կը մնայ տիրական:

– **Պարտութիւնը**, ուրեմն, **հոգիին**: Որուն սկիզբը կը կորսուի մեր օրերէն շատ վարերը: Այդ պարտութիւնը գուժեցին հին կարգերու մելամաղձոտ ասպետները, երբ, մէկուկէս դար առաջ, Աստուծոյ աղուոր մէկ առտուն, տեսան որ դարանիստ ամբութիւններ – բարքերէ, հաւատքներէ, մշակոյթներէ – կը տատանէին անվարտի մարդոց գրոհէն դրդուած ու կը մոխրանային արեան ու կրակի մրրիկներէն **«ճախուած»**, տուէք բառին իր հին առումը: Պատմութիւն պիտի չընեմ: Դիտել կուտամ որ ոգին որ կը մղէ մարդերը միշտ աւելի հզօր, գերազանց միջոցներու, կեանքին վրայ իր գրոհը յաղթագին պսակելու համար, իր էութեան մէջ շատ չի տարբերիր դարուկէս առաջուան ոգիէն: **«Քորսիքացի բախտախնդիրը»**, ինչպէս սիրեցին զայն անուանել անգլիացի իշխանուհիները, ու

«**աւստրիացի ներկարարը**», ինչպէս դեռ երէկ կ'անուանուէր երկրորդ մեծ պատերազմին ճարտարապետը, կը հաւատային թէ կը ծառայէին մարդկութեան, առաջինը վերստին բանալով դռները աւերակեալ տաճարներուն որպէսզի հաստատուէր ուղղափառ պաշտամունքը, երկրորդը՝ վերստին արձակելով կապանքները, դաշնագիրներուն իր ժողովուրդի **հոգիին** վրայ ամրակարան, որպէսզի մարդկութիւնը մղուէր նորանոր միջոցներու, այդ **հոգիին թւերովը**, մահը նուաճելու, անոր դանդաղութենէն դժգոհ...: Ողբերգականը այս ամէնուն մէջ գոյութիւնը չէր այդ բախտախնդիրներուն, այլ զանոնք կարելի ընող մարդոց մակադամութիւնը: Այլ իր նմանը բզկտելու արարքը օրինաւորելու, սրբագրելու, սրբագործելու փոյթը մարդկային արջառին որ անսպառ ալիքներով պիտի վազէ այդ դրօշներուն ներքեւ: Օ՛, անհուն տրտմութիւնը պարտուածներուն: Անշուշտ: Բայց կ'աւելցնեմ, անհուն փոքրութիւնը յաղթականներուն: Քառորդ դարու մէջ երկու ահաւոր ընդարձակութեամբ պատերազմներ շղթայազերծող **ոգին** ոճիր է նոյնացնել այն միւս սկլոր, բայց ազնուական ալ ձգտումին որ նախապատմական անտառներէն իր խանձարուրը կը բանայ ու կը քալէ բիւր բիւր դարերու խաւարին ու արիւններուն ընդմէջէն, հասնելու համար սեմին այնպիսի ժամանակներու ուր իրար հանդուրժելու համար չունէր գոյութեան ոչ մէկ արգելք: Հազար տարի առաջ, յաղթական զօրավար մը քիչ անգամ կը մորթէր մանուկներն ու կիները: Քսաներորդ դարու մէջ անպատիժ գործելու արտօնուած մարդերը կ'այրէին կիներն ու մանուկները, զանոնք մարագներու մէջ թխմելէ վերջ: Այս տողերը գրուելէն երեսուն տարի առաջ, այդ հերոսութիւնը մենք մենաշնորհը կը նկատէինք կարգ մը ժողովուրդներու որոնք Ասիան բերեր էին հին մշակոյթներու վառարանին ու չէին կրնար իրենց տափաստաններուն մղումները հակակշռել: Ի վերջոյ, թուրք զգայնութիւնը մարդու միսին հոտն ու հեշտանքը չէր ուրացած իր արեան բաւիղներուն մէջ, քանի որ այնքան մօտիկն էր դարերուն ուր ձիերու թումբին տակ եփուած միսը իրենց ազգային կերակուրը կը կազմէր: Գիտէինք այս ամէնը ու

կը մխիթարուէինք որ գերմաններուն էն հեռու նախնիքներն ալ տարբեր չէին ապրած, բայց իրենց զակրները երոպական – արեւմտեան – մշակոյթին ամենէն ազնուական ճարտարապետները եղած էին, քսաներորդ դարուն: Ու հարկ կ'այ յիշեցնելու հոս որ, միշտ այս տողերը գրուելէն երկու երեք տարի առաջ, մարդեր եփելու ախորժակները աւելի քան ի զօրու գտանք մենք սակայն ժողովուրդի մը երիտասարդութեան, մտաւորականութեան, սպայութեան եւ զօրավարութեան համախառնուրդ հեշտանքին մէջ: Գերմանները Թուրքերուն մարագները վերածեր էին մահուան ընդարձակ պալատներու եւ անոնց գործածած խոփին ու քարիւղին տեղ հնարած էին նորագոյն կազերը...: Խորհեցէք այս ամէնուն ու գոցեցէք ձեր հոգիին աչքերը:

Շրջանն է **պարտութեան բարոյական յղացքներուն**, այս անգամ անկախ՝ ոճիրէն կամ գիշախանձ ախորժակներէն: Տասներորդ դարուն ասպետը, իր տղան, իր աւատապետը կռիւր ընելու, ընդունելու արարքները չէին ոսկեզօծեր: Այդ կռիւր անոնց մարմնեղէն դրութեան արտաքնացումն էր, ու հազիւ կը խռովեր հոգիին դրութիւնը: Այսօ՞ր: Մեր քաղաքակրթութիւնը պատկերն է հսկայ անհեթեթութեան մը: Ոչ միայն պատռած ենք բարոյական յղացքները մեր խղճմտանքէն, այլ մանաւանդ կը հպարտանանք այդ կործանումը, քանդումը փոխակերպելով նոր քաղաքակրթութեան մը: Մարդ սպաննելու այնքան պարզ, հաստ, նախնական մեր հակումները կը սիրենք զգեստաւորել ասկէ անկէ ճարուած վկայականներով: **Զինուորական պարտաւորիչ ծառայութիւնը** մէկն է մեր ամենէն ահաւոր յիմարութիւններէն: Դուք գիտէք թէ ինչ գեղեցիկ բառեր, տարագներ այսօր պատրաստ են, ոսկեգիր ու շքեղ, այդ անասնութիւնը բարձրագոյն առաքինութեան մը փոխակերպող: Դուք թերեւս չէք գիտեր թէ անոր հեղինակը աւագակ գերման թագաւոր մըն էր որ իր կողոպուտները մարսելու մէջ անհանգիստ չըլլալու համար մտածեր էր այդ հայրենասիրական ծառայութիւնը (ԺԸ. դար): Աւելի՛ն: Այդ յղացքը (հայրենիքին ծառայելու) պատերազմի դաշտերուն վրայ ինք-

զինքը բեղմնաւորելէ առաջ հերոսակա՛ն մահուամբ, այսինքն ուրիշին կինն ու տղան սպաննելու, տունն ու տեղը մոխիր դարձնելու արարքներու լուսպսակո՛ւմը իբրեւ, խաղաղութեան անդաստաններուն վրայ (դպրոցները, զօրանոցները, մարզադաշտերը, քիմիական մութ բաղադրութեանց աշխատանոցները) դրուած էին դանդաղ, խնամեալ աճումի: Ըսի, մեր քաղաքակրթութիւնը, մերձաւոր ապագայի մը մէջ պիտի որակուի գերագոյն յիմարութիւն մը ինչպէս, քանի որ կազմակերպած է զինուորական ներկայ դրութիւնը որուն հետեւանքով մարդ կենդանիին ամենէն առոյգ, կենսաւէտ, մանաւանդ ստեղծագործ **գարունքը**, անոր երիտասարդութիւնը կը վատնուի անասնական, հիմնովին անբան(աւոր) մարզանքներու որոնք, ինչպէս դիտել տուի քիչ վերը, իրենց վերջնական լուծումին մէջ ուրիշ բան չեն եթէ ոչ միշտ ուրիշին հացը առնել ու հողը իւրացնել: Մեր գիտութիւնը մենք գործածեցինք գտնելու եղանակներ որոնք աւելի արագ, աւելի կատարեալ, աւելի ազատ ընէին այդ սպաննելու արարքները: Մեր իմաստութիւնը ուզեց որ իր հացին համար հազիւ ժում ունեցող ժողովուրդները ապրեցնէին զինուորական պիտճէներ որպէսզի զօրանոցներու ներսը բոյնի դրուած մարդեր յղփանան, խլուին բանուորներու պզտիկներէն իրենց հացը, պարարելու համար բարձրաստիճան զինուորականութեան ախորժակները, վազեր քրտինքը աշխատաւորին ճակտէն, որպէսզի այդ զինով ստեղծուին նոր միջոցներ, քանդումի գործիքները ցարդ անձանօթ կատարելութեան, ուժին առաջնորդող, ու ծնին կախարդական այն առարկաները որոնց պատռտող կողերէն խուժէր մահը, աներեւակայելի արագութեամբ, խեղճ ու պատահաւոր մարդոց վրայ, ու, քանի մը երկվայրկեանի մէջ շէն ապատ մը վերածէր փոշիի, ոսկեճարմանդ, ծիածանեալ աւազի: Ժողովուրդներու սա նորասարաս խենդութիւնը մի բաղդատէք հին կիրքին, մոլուցքին, բարբարոսութեան, որ անմեղ, անկշիռ երեւոյթ է երբ դրուի մօտիկը մահուան նոր ճարտարապետութեան: Հին հասկացողութեան մէջ, զինուորը, այսինքն մահուան գործիքը, կը մնար մօտիկ, հաւատարիմ իր թելադ-

րանքին, կերպով մը բնական ու հասկնալի: Սպարապետը, այսինքն սպանդին ղեկավար ուղեղը, քիչ անգամ կը բարձրանար իր այդ դերէն վեր լուսապսակներու փառքին: Հնութեան, նոր ժամանակներու մեծ գորավարները մարդկային են իրենց առաքինութիւններով: Հարիւր տարիէն պակաս ժամանակի մը մէջ, **շրջումը** կը գտնենք բացարձակ: Ստեղծուած է առանձին գիտութիւն մը, **մահուան գիտութիւնը**, զայն տալու եղանակներուն մէջ սառնասիրտ ու ամբողջական, բայց ահաւոր մանաւանդ անոր համար որ կ'ապրի **ինքը իրմով**: Անոր մասնագէտները, – սպայակոյտներու, զինուորական վարժարանի ուսուցչութեան հեղինակաւոր գլուխները մեր քաղաքակրթութեան մէջ կը գրաւեն այլապէս շքեղ ու անբացատրելի փառապսակներ: Բանակներ վարելու արարքը **գերագանց** արժանիքն է այդ մշակոյթին: Նոր ազնուականութեան համար այդ առաքինութիւնը **գերագանց** բարիքն է մարդէ մը սպասելի: Աւելի ն: Բոլորովին նոր, նորագոյն յղա՛ցքը, **ամբողջական պատերազմին**: Այսինքն՝ ութսուն միլիոն գերմաններու տասնամեայ միակտուր աշխատանք՝ որպէսզի գործադրուի **ամբողջական սպանդը**: Ու պատերազմը շահող ժողովուրդ մը, այդ իսկ փաստով ինքզինքը հոչակէ գերագանց, ընտրեալ ժողովուրդ որ արտօնուէր աշխարհը վարելու: Երկու մեծ պատերազմներու միջեւ ի՛նչ ծանր բառեր չգործածուեցան արեւմըտեան մշակոյթներու ամենէն յարգուածներուն ճակատները խարանդ: **Նէկրոտը** (սեւամորթ) պիտի չմոռցուի, ֆրանսական ժողովուրդը որակող, ու **ձերացածը**՝ անգլիացիները պիտակող: Գերման մտածողութիւնը, իր երիտասարդութեան մէջ մահուան ախորժակները սուր պահելու համար այսքան անհեթեթ տարազներ երբ կը գործածէր, մարդկութիւնը խորապէս անարգող, ազգերը, իրենց շուար անկարողութեան մէջ, աղետը դիմաւորելու համար սպառեցին իրենց վերջին զէնքերը, բարոյական յանձնառութիւնները: Դիտեցէք Սանճագին նուէրը Թուրքերուն ու գոցեցէք դարձեալ ձեր հոգիին աչքերը, սա ամօթանքներուն վրայ:

**Պարտութիւնը**, մանաւանդ **իմացականութեան** որ աւելի ընդհանուր հպարտութիւն մըն էր: Որուն հիացքին, առքին մէջ է որ բացուեցան դռները նոր ժամանակներու: Զոր ազատագրելու համար մարդը տուաւ ամենէն ազնուական զոհերը: Իր մարդակեղրոն կերպարանքներուն մէջ ինչէ՛ր, ինչէ՛ր յաւակնեցաւ իրագործել անիկա: Անիկա պիտի դարմանէր **հողն** ու **հոգին**, առաջինին խօթութիւնները, նուաղումները դիմաւորելով իրմէն բխած նոր գիտութիւններով, սրբագրելով տարրերուն անբնական, անբաւարար բաշխումը որպէսզի արտերը դառնային աւելի բարեբեր, հանքերը տային աւելի դիւրաւ ու աւելի առատ: Անիկա պիտի ըլլար ճկուն՝ հոգին ալ ձեռնելու, ասոր խօթութիւնները, տկարացումները վերածելու համար ախտաբանական իրողութիւններու: Անապատները, այդ իմացականութեան շնորհիւ կըլլան շքեղափառ ապատներ: Կը նուաճուին միջոցն ու ժամանակը, անընթանելի արագութիւններուն զրոհովը: Ու... այդ շարքին, մարդ մորթելու արարքը, անասնական, նախնական ու բութ այնքան, այդ իմացականութեան միջամտութեամբը, պաշտպանութեամբը, կը դառնայ քաղաքակրթական բարձրորակ արժէք: Որքան տրտում, ինչ է՞՛ սա նահանջը միտքին: Կայ հարիւրի մօտ տարի որ կը շարունակուի այդ նահանջը, իրարմէ ահաւոր պատերազմներու շղթային ընդմէջէն: Ու անլուր սովետութիւնը իմաստուններուն, որպէսզի այդ նահանջին ճարուին փառքի մագաղաթներ: Որքան դրութիւններ, ամենէն հեղինակաւոր մարդոց կողմէ պաշտպանուած, որոնց բոլորին յատակը՝ **Կայէնի** ու **Աբելի** հէքեաթին նախնական խորհուրդէն դուրս ոչինչ: Բարբելո՛ւնը՝ իրար կործանող քաղաքակրթութիւններուն: Պարտութի՛ւն: Այսքան կըլլար:

Ու **յաղթանակ** կը.

Որ կ'աւետուի

– Պարտութեամբը **հիւլէին**:

\*

\* \*

Երբ այս տողերը կը գրուին, աշխարհի հազիւ թէ կը թուի հասկցած ըլլար չարաշուք կշիռը, արժէքը այդ **յաղթանակին**, մանաւանդ այդ **պարտութեան** որոնք հիւլէինը չեն ապահովաբար, այլ ամբողջ մարդկութեան, ասոր ճակատագրին մէջ առաջին անգամ փորուած ընդարձակ **խրամատը**, ժամանակին հետ յստակուելու սահմանուած: Չարիքին ուժերը կոտորած են բոլոր արգելքները: Հիւլէն պարտուած է, մարտի դաշտին վրայ քառորդ միլիոն մարդերու փոշիացումովը ու քաղաքի մը անհետացմամբը երկրի երեսէն:

Ու կը խորհիմ

– Մարդկութիւնը, չըսելու համար կեանքը՝ կրունկին տակն է ինկած ոչ միայն այսօրուան բախտաւոր յաղթականին, այլէ, ամենայն հաւանականութեամբ, վաղուան, յառաջիկաներու բոլոր կարելի յաղթականներուն որոնք, այսօր անկարող իրենց իմացականութիւնը իրագործել հիւլէն ջախջախող միտքերուն չափերովը, վաղը, վաղերու անընդհատ շարքի մը մէջ պիտի գիտն ընեն ուրիշ ուժերու, աւելի բանաւոր քան հիւլէն զգետնողները: Իմացականութիւնը, իր կարգին թերեւս աւելի զարհուրելի դրութիւն մըն է հիւլէական խորհուրդին: Ու այդ իմացականութիւնը իջած է կրկէս բզկտելու այդ խորհուրդը, բանալով նոր դարաշրջանը: Կասկածեցան որ հիւլէն զգետնող ուժը իր շատ չնչին մէկ կոտորանքովը բաւ էր եղած իր յաղթանակը իրագործելու: Վաղը այդ իմացականութիւնը պիտի ճարէ ուրիշ ալ միջոցներ, պակաս ձգուածն ալ կրկէս բերելու, որպէսզի քանի մը երկվայրկեանի մէջ քաղաքներ, երկրամասեր սրբուին քարտէսին երեսէն: Ու այս ամէնը, տեղն է ըսելու, **«սկիզբն է երկանց»**: Հարուածը որ կը սպառնայ մարդկութեան, դեռ կը մնայ անծանօթ, իր հաւանական հետեւանքներով: Ինչո՞ւ չմտածել օրուան երբ կաղինի ծաւալով նոր տարր մը պիտի ըլլայ բաւ, **փոխակերպելու** օրինակի համար մեր մթնոլորտին բաղադրութիւնը, ասոր թթուածինի անհուն մթերքը բոցավառելով, կրակի փոխելով անոր ազօթը, քանի որ գիտենք որ այս մարմինին ալ հիւլէները, իբրեւ զսպուած կրակներու տիեզերքներ, կը լողան մեր շուրջը, մեր

մէջը, իրաւ՝ այսօր անվնաս, բայց վաղը՝ կախարդի մը գաւազանիկին ներքեւ ընդունակ խորտակելու իրենց բոլոր կապանքները, արձակելու համար իրենց անհուն ընդերքներուն խորը քունի մտած լեռները ուժերուն: Հէքիաթ էր ասիկա, մինչեւ երէկ: Ու գտանք որ այսօր գերիրականութիւնն է ան:

Ու, մինչ մէկ կողմէն, իմացականութիւնը կընէ իր կարելին, մօտենալու սա թաքուն ուժերու պարին, միւս կողմէն, գրեթէ ոչ ոք որ անդրադառնայ ուժերու ուրիշ դրութեան մը, ան՝ գոր սովորական լեզուն **հոգի** կ'անուանէ: Այս տողերը չեն յաւակնիր սահման մը առաջարկել այդ ուժին: Բայց անոնց հեղինակը հանգիստօրէն ինքզինքը կը զգայ արսօնուած մտածելու նոր հէքեաթներու, միշտ անբացատրելի այդ ուժին պարունակէն: **Ո՞վ էր տեսեր հիւլէն:** Բայց կը կասկածէին թէ անոր ներսը տիեզերական մանրանկար դրութիւններ զսպուած կ'ապրէին, յար եւ նման անոնց որոնք մեր տեսանելի տիեզերքին տռաման կը յօրինեն...: Անցան դարերը: Ու մենք տեսանք հիւլէին դրութեան արդիւնքները գոնէ: Ինչո՞ւ չյաւակնինք տեսնել **հոգին** որուն ներսը ուրիշ տիեզերքներ, ուրիշ դրութիւններ իրենց ճակատագիրները ընդգրկող, պարագրկող, պահպանող արձակելիութիւններ, ուրիշ անհունական արդիւնքներու հանդէսներ չըլլային **փորձելի**, այս անգամ ձեր հաշտոյն, առանց ամերիկեան հօր հասարակապետութեան միլիտաներուն, պարզ ձեր **ներսի** վկայութեամբը: Գիտութիւնը սահման, անուն է ճարած հիւլէին: Արդի **ֆիզիքը** կատարած է այդ գործը, որոշ պարկեշտութեամբ: Անշուշտ նոր աստուածութեան մը կարիք չի կայ, ընդգրկելու, արձակելու համար **հոգիին** ճակատագիրը: Ունիք ձեր ձեռքին տակ տրամադրելի պարզագոյն միջոցը: Մէկ բոպէ բարի եղէք **արձակելու** ձեր միտքը – որ համագոր է թերեւս հիւլէական ուժին – միջոցն ի վեր ու միջոցն ի վար: Ինչ անտարագելի արագութեամբ մը այդ **անտես հիւլէն**, այդ **անմաշ սլաքը**, ձեր միտքը ծակէ ու անցնի պիտի տիեզերքներու բոլոր թանձրութիւններն ու անգայտութիւնները, պիտի ընէ շրջանը անպարագիծ, անպարագելի երկինքներու ու պիտի դառնայ ետ, դէպի ձեր ներսը, հանգչելու

ձեր ուղեղին վրանին տակ: Ո՛չ որ՝ որ կասկածի համարձակեր ձգել սա իրողությունները: Ահա հրաշքը ուրեմն, այնքան իրաւ, այնքան մարդկային նոյն ատեն որքան փաստը հիւլէական ռումբին որ եկաւ, իր գաղտնիքին մէկ թելիկը շարժելով, ակնթարթի մէջ աներեւոյթ ընելու շէն ոստան մը, իր բոլոր բնակիչներով:

Չեմ տար ընթացք, պատմա-քաղաքական (ինչպէս հեշտագին կը գրեն դիւանագէտները) աշխարհին վրայ, այն զարմանազան գուշակութիւններուն որոնք կը բխին հիւլէով բանտուած ուժերուն ազատագրումէն: Մէկդի բարոյական մտահոգութիւններուն անձրելը, ու մղձաւանջը պարտուած ժողովուրդներուն առաջին գիծի կուգան ապագայ կերպարանքները հողերուն ու ջուրերուն որոնց փոփոխութիւնները արժեցին այնքան արիւններ: Արդէն կասկածի տակ են ռազմագիտական արժէքները դարաւոր գիրքերուն: Ծովերու բանալիները – նեղուցները – հիմակուրնէ գրեթէ անկշիռ: Հսկայական տորմիդները՝ ցուցադրութեան մօտ բան մը: Ծիծաղելի՝ մեծ բանակներուն դիւցազներգութիւնը: Նոր շրջան մը կ'ընէ սկիզբ մարդկութեան քաղաքական, ընկերային, նոյնիսկ բարոյական ճակատագիրները հրամայող ու պարտադրող ձայներուն մէջ: Ու մանաւանդ սահաւոր հեռապատկերը կործանման ուժերու կայսրութեան: Մարդը բիրաւոր դարերու վրէժն է որ կը պատրաստուի առնել խուլ, անկարեկից տիեզերքի մը մէկ կտորէն, մեր խեղճուկ երկրագունտէն որուն օրերը կը թուին ըլլալ համրուած: Բայց գալարքը (**rouleau**) բանալ այդ գալիքներուն լաւ է ձգել իմաստասէր – ընկերաբան – քիմիագէտ մարդոց:

Իմ պզտիկ փափա՛քը՝ հիւլէական ռումբին արթնցուցած քաղաքական ու իմացական հակազդեցութիւնները դեկավարել դէպի մեր **բարոյական տիեզերքը** որուն գոյութիւնը ատեն մը նորութիւն՝ կասկածի տակ ձգելը, այսօր ընդունելու հակիլը ոչ աստուածաբանութիւն ոչ ալ աժան մարդակեղրոն բարոյախօսութիւն ընել պիտի նշանակէր: Անտես մարմինի մը ծոցը ծուարած սա ուժերուն կայսրութիւնը զիս կ'արտօնէ մտածել

հանգիստութեամբ: Մէկը որ 1880ին, Մոսկուա, Պուշկինի ծննդեան հարիւրամեակը տօնաւորող հանդիսութեանց ներկայ է եղած, կը պատմէ թէ ինչ անհուն յուզումներու ծնունդ է տուած բեմին վրայ խօսելու համար իր թելը առաջ երկարող Տասթա-յովսկին. տօգոյն, նուրբ, արդէն մահուամբ կալանաւոր: Այդ մէկը նրբին դիտողութիւններու մարդը չէր: Անիկա կը խօսի անհուն, հիւլէական այն լռութենէն, որ մէկէն ծնաւ ռուս վիպասանին պատկերէն, բեմին վրայ այդպէս սառելու մօտ: Ու կը խօսի դարձեալ իր ներքին մէկ վկայութենէն որուն համեմատ անիկա վստահ էր թէ հոդ միլիոնի հասնող մարդերը, անդի-մադրելի կերպով պիտի ընդքարշուէին խօսողին մէկ շարժու-մով, իսկ դէպի գրոհը երկինքներուն ու դժոխքներուն, եթէ կախարդական վիպողը հրամայէր ատիկա: Այդ վկայութիւնը, գրական հմայք մը չի լուսաւորէր միայն, այլէ կը պատմէ ահա հոգեկան տիեզերքէն որմէ մասնիկ մըն էր անպայման այդ դիւային վիպասանը: Պատմումին ամենէն խորունկ ու մութ կողմը՝ Տասթայովսկին, այսինքն անոր հոգիին **հիւլէն** (ներե-ցէք այս գէշ բառին) արձակուած ուժին պայծառութիւնը: Գիտութիւն մը չի կայ այսօր, այդ անհունները սեւեռելի, առնուազն փոքր մասով մը խորաչափելի ընծայող: Գրողէ մը հիւլէ մը ուժ կը բաշխուի միլիոնին ու տկարանալու տեղ կը զօրանայ, երկինքները գրաւելու չափ: Բայց կայ գիտութիւնը այդ անհունները նոր տառապանքներու, մղձաւանջներու չփոխակերպող: Մեր պապերը անգիտակ էին հիւլէն, բնախօ-սական ինչպէս հոգեբանական մարզերուն վրայ: Բայց անոնց հոգիներուն խորը, դարեր շարունակ ապրեցան այդ անհուն-ները, որոնցմով դիմաւորեցին չարիքին տիեզերքները: Իմ տղու ցաւերուս մայրս կը հանէր այդ իմաստութենէն պատգամներ: Ըսի այդ պատգամներուն, բարի աչքի, փափաքը, դէմ կուգար ծով մը չարքերու: Կաթիլ մը գութ, միշտ ըստ այդ պատգամ-ներուն, բաւ էր լեռները հալեցնելու գազանութիւններուն: Ու իմ մայրը կը խօսէր Յիսուսէն որուն մէկ բառը մեռելները ետ կը բերէր, վարի աշխարհէն, արեւին աշխարհին: Հանգիստութիւնը, այսպէս հոգիին եւ նիւթին հիւլէները զուգակշռող, միտքի խաղ

մը չէ սա տողերուն: Մեր անգետութիւնը հոգեղէն տիեզերքէն հաւասար է միւսին զոր կը ջանանք դարմանել մեր միջոցներով:

Ու դառնութիւնը, ըլլալ ստիպուած վերադառնալու խեղճ ու պատառ երկոտանիին, – իր կարգին խորունկ որքան անլոյծ առեղծուած, միլիառաւոր հիւլէներու կազմակերպեալ դրութիւն մը ինչպէս – որ, ահա, կան բիրաւոր դարեր, կը ջանայ գործածել, սրցնել խելքին սլաքը զինքը շրջապատող ահաւոր գաղտնիքներուն կեղեւանքէն քանի մը փշուր բան փրցնելու...: Ու դառնութիւն դառնութեանց, գիտնալ թէ ի՞նչ յուսահատեցուցիչ անհունութիւններ կը սպասեն իրենց կարգին բացուելու, քակուելու, արձակուելու: Անշուշտ տարագի ինկած էր անհուններուն տռաման, դեռ Պլէգ Բասգալի օրերէն: Տարբերութիւն մը սակայն: Բասգալին անհունները **կը յանգէին**, ըսել կուզեմ **կը փակուէին իրենք իրենց վրայ**, քանի որ ունէին իրենց բխումի ակունքները: Մեր օրերու անհունները ոչ կը բխին ոչ ալ կը յանգին: Մենք մեզ կը կարծենք գտնել անոնց ներսը, ինչպէս կաթիլն է ովկիանին մէջը: Ու այս յանգումի պակասն է որ մեզ ըրած է շատ աւելի սեւ, մեր յուսահատութեան խորը, քան մեզ քանի մը դարով կանխողները: Հազար տարի առաջ **մեր հոգին աւելի մօտ էր մեր մարմինին**: Բացէք սա պարզ թուող հաւաստումը ու պիտի զգաք թէ ինչ անորակելի նողկանք է մեր նոր քաղաքակրթութիւնը որուն ճարտարապետները ամէն տարի կտոր մը աւելի կը բզկտեն անոր դժուար, այնքան սուղ ճարուած շէնքը: Հազար տարի առաջ քաղաքակիրթ ժողովուրդներու դաշնակցութիւն մը պիտի տառապէր անմեղ ժողովուրդներ դահիճ ժողովուրդներու վայելքին ծախելու ատեն: Այսօր հիւլէին տիրական ազգերը գազան ժողովուրդներու կը լքեն ցրի հօտեր, որոնց մեղքը անօգուտ ըլլալն էր տիրականներու շահերուն: Այսօր մեր միտքը հիմնովին կանգիտանայ մեր հոգին: Անշուշտ ասիկա չի նշանակեր թէ կործանած են երկինքը, երկիրը, նուաճուած է մահը, ու գրոհը կը սպառնայ անմահութեան կայքերուն, – բոլորը երէկի իրաւ սպրումներ, այսօր իրենց մարգարիտներէն պարպուած խեփորներու նման, նետուած տղոց ոտքերուն: Գէթ հարիւր տարի, այս խաղը, իր

ահաւոր լրբութեամբ: Աչքէ անցուցէք 1850էն ասդին ծանր բախումները ազգերուն ու գտէք թէ ինչ պատկերներն, թանձրամտութիւն, գիւղացիութիւն, մանաւանդ անխելութիւն տուին անոնց ազդակ ու կերպարանք: Օ՛, ահաւոր կեղծիքը այս խօթութիւնները ոսկեգօծ բռներու թելերով մատուցանելու ամբոխներուն: Օ՛, շնական խորամանկութիւնը ուրիշներու խաղերը իւրացնելու արարքը պարտկելու իմաստութեան ոսկեհոտ մագաղաթներով...: Բայց ռումբ մը ճամբայ մըն է, դէպի անասնութիւնները ու դէպի անձանօթը: 1945, Յուլիս 26էն ասդին, մեր հաստ, ահաւոր վստահութիւնները դադրած են իրենց դերէն: Գիւտ մը աշխարհը նետած է կրունկին տակը խումբ մը մարդոց:

Անշուշտ, միամտութիւն պիտի ըլլար դառնալ երկինք, ու հոն փոխադրել փորձել մարդակերպը, մարդակեղրոն մեր իմաստութեան այնքան ճիղճ, այնքան թշուառ ապահովութիւնը, երբ մեր աչուրներուն առջեւ կը փռուի պատկերը, այդ երկինքին մէկ փշուրին վրայէն գաղտնիքի վարագոյրին մէկ թեթեւ նահանջովը դարձած տեսանելի: Ուրի՞շ: Բայց ամբաւութիւնը վերցունելիք վարագոյրներուն: Հիմա գէթ արտօնուած ենք կասկածելու կեանքի, իմաստութեան, շէնքի ուրիշ դրութիւններու, որոնք ով գիտէ ինչ խելացնոր զանազանութիւններով, կը հոլովուին կայանէ կայան, մոլորակէ մոլորակ, տիեզերքէ տիեզերք:

Ու բարի եղէք, սա սարսափներուն մէջ, կշռել ինչ որ **իմացականութիւն** կանուանենք, այսօր: Ու բարի եղէք, դարձեալ այդ սարսափներուն սլաքին տակ, արժեւորել ինչ որ **հոգի** կանուանենք: Եթէ գիտութիւնը կը քանդէ հիւլէն, հին յաւակնութիւնները, պիտի չընէր ատիկա մեզի նոր յաւակնութիւններ առաջարկելու սիրոյն, յաւակնութիւններ որոնք կերպարանք են ազգերու կեանքին մէջ, արդարութեան յղացքը փշուր փշուր կործանող:

– Ո՛վ, որ ժողովուրդը պիտի գտնէր միջոցը **հոգիին թաքուն ուժերը արձակելու**: Մի ըսէք թէ պատրանքներու վրայ առազաստ եմ բացեր: Ինձի կուգայ թէ մեր բոլոր տառապանք-

ները պիտի հալէին ակնթարթի մէջ, սա կախարդական գործողութեամբ: Ու ասիկա պիտի չըլլար մահուան մէջ խաղաղութիւնը նիւթանուէր իմատասիրութեան, այլ՝ այն պարզ, իրաւ, հաճ շէնքը, տարրը որ ապրող բջիջինն է, երբ կը գտնենք կերպը մեզի շնորհուած կեանքը ճառագայթելու դէպի ուրիշ մթութիւններ, առանց ներսը վառելու համար ակունքները բարիքին, քաղցրութեան, սիրոյ: Այս բառերը չեմ առներ ընթացիկ բարոյականէն, այլ տառապանքէն բուսած ծաղիկներու նման կը դնեմ սա տողերուն: Չունիք աւելի մեծ պահ մը քան ան որուն մէջ դուք արձակած էք ձեր հոգիի հիւլէին ուժերը, դէպի ուրիշին բարձրացումը:

Հոգին քակո՛ղ **ուրանիումը**:

Յ. ՕՇԱԿԱՆ

(*ՄԻՈՆ*, ԺԹ. ՏԱՐԻ, ԹԻԻ 5-6-7-8, ՄԱՅԻՄ-ՅՈՒՆԻՄ-ՅՈՒԼԻՄ-ՕԳՈՍՏՈՍ, 1945, էջ 94-100)

## ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

### Սրբոց Յակովբեանց տաճա՛րը՝

Դարերով զուգորդ իրարմէ տարբեր ապրումներու, մեր ժողովուրդի բոլոր խաւերուն համար: Անիկա ատեն մը մեր հոգիին երկրորդ բեւեռը: Մեր եկեղեցականներուն համար ասպարէզ խելքի, մեծութեան, հերոսութեան: Մեր օրերուն՝ հայացած ալ:

Բայց որ չըլլար, սա տողերը գրուած պահուն, լրագիրներու մէջ թիրախ աւելի կամ նուազ վաւերական աղեղնաւորներու, իրենց հաշիւներուն կապարճներովը, ոչ ալ աւելի կամ նուազ թուղթի, գիրքի վրիպած պագիրկեաններու շահերուն անդաստան, այժմութիւնը հետապնդող ու գայթակղութիւնները ոսկեզօծ մատուցանող մարդերու միամտութեան, կիրքերուն: Ու չըլլար նոյն ատեն քարէ հատոր մը, սա ու ան դասախօսին, մագաղաթաւոր ճարտարապետին տեսութիւնները Բանէն, Ձեւէն, Խորհուրդէն արժեւորելու կանչուած: Ու չըլլար պատմութիւն քանի որ այնքան գէշ, կողմնակալ, սխալ ու սուտ գրուեր է ասոր ճակատագիրը: Թերթեցէք մեր տարեգրութիւնները, հեռուն ու մանաւանդ մօտը, որպէսզի համոզուիք սա եղերապէս իրաւ փոքրութեան: Քառորդ դար մը Սփիւռք դրէք պատմութեան էջերուն: Ու այդ էջերը պիտի ըլլան **դպիրին** էջերը միայն ու միայն: Ու չըլլար դարձեալ այդ Սրբոց Յակովբեանց տաճարը

– կախարդական ապարանքը, ծանր, տառապահար բազմութիւնները ուխտաւորներուն սփոփելու դերով մը, նախամուտ դուռը երկնքի թագաւորութեան, ինչպէս մտապատկերած է զայն մեր ժողովուրդը, «ամենասուրբ» **Վերիսաղումը**, երբ իր մարմնեղէն ցաւերուն բոլոր կապոցները ու իր հոգեկան տագնապներուն որաները բարձած իր ուսերուն, կը շինէր իր դարերը, գէշ բառով մը՝ իր պատմութիւնը, ան զոր կը կարդանք բայց չենք հասկնար: Մեր պատմութիւնը, թուղթերէն վեր ու դուրս, հեռու, հին, անայց արքայութիւն, մեր արի, չարքաշ, աննման գեղջուկներուն սրտովը, եղունգներովը,

քրտինքովը իբրեւ հող ու արտ, հիւղակ ու մատուռ, պառկած մեր լեռներուն կողերուն ու փեշերուն, փոխն ի փոխ կարմիր ու կանանչ, մեր արիւնովը ու մեր յոյսովը: Մեր պատմութիւնը հերոսութեամբը, քաղցրութեամբը, կիրքերովը մեր յիմար, կռուազան ասպետներուն, նախարարներուն, արիարանց սեպուհներուն որոնք կը կռուէին ու մեռնէին նոյն հեշտանքով որքան կը սիրէին ու կը տառապէին ներքին մեծութեամբ: Միշտ մեր պատմութիւնը խորունկ տէրտէրներու, այսօրուան գահագուրկ, աքտրական տիպարէն բոլորովին տարբեր, որոնք կը կենային մեր ժողովուրդի գլխին, զայն գտնելու սահմանուած բոլոր փորձանքները ընդառաջող, ու շանթարգելի նման զանոնք իրենց քաշող: Ու եպիսկոպոսներուն, կաթողիկոսներուն, ամէն մէկը աշխարհ մը հոգի, տառապանքի հանդիսարան: Փորձեցէք արաբ ոստիկանի ճիրաններէն ինքզինքը ազատելու հետամուտ Թ.րդ դարու կաթողիկոս պատմաբան Յովհաննէսը ոգեկոչել ձեր մտքի դաշտին, ու պիտի հասկնաք թէ որքան ծանր էր ճակատագիրը մեր պատմութեան ճարտարապետներուն: Կը լռեմ արքաներէն, ոչ անշուշտ աժան արհամարհանքով մը: Անոնց մէջ մեծերը դուրս են մեզմէ: Անոնց մէջ փոքրերը՝ դուրս մարդկութենէ: Բագուկ, քաջութիւն, հաւատք, ինչք բառեր են այսօրուան նսեմաստանին երեսին: Սրբոց Յակովբեանց Տաճարը հատոր մըն է **մոռցուած բաներու** գոր լաւ կընեն գիրի առնելով անոր աւելի հանգամաւոր սպասարկուները:

Իմ ձեզի տալ ուզած տաճարը

ըլլար սանկ շէնք մը, հողէ մը վեր բարձրացած: Չորս ամուր սիւներու վրայ բոնուած դարձեալ կախարդական բայց ոչ պալատ մը, այլ

– ամպհովանի մը

որուն տակ միշտ թափօրապետ եպիսկոպոսներ, պատրիարքներ տեսեր ենք թէեւ, բայց որուն դերն ըլլար այս անգամ ուրիշ ապրումներ գտնելը:

\*  
\* \*

Այսպէս յօրինուած այդ ամպհովանիին տակ դուն ունենայիր պատեհութիւն, ազատութիւն, մանաւանդ կարողութիւն ուզած բոլորիդ այդ տաճարին սիւներն ու պատերը բազմամարդոյ պատկերները արձակելու իրենց կտաւներուն գերեզմաններէն, «**վարշամակօք եւ երիզապնդօք**», որպէսզի, իրենց սրբութիւնները, առաքիւնութիւնները այդպէս բանտարկուած պահելու տեղ, երթային իրենց երկիրները, խօսէին ուրիշ փառքերու սպասարկու իրենց ժողովուրդներուն, առնուազն իրենց հանգիստը վերածէին կենդանի, ստեղծագործ երկունքի: Հայրապետն էր որոնք այնքան ըսելիք ունին օրուան ամբարիշտ, յաւակնոտ վարդապետութիւնները ըմբերանոյ: Նահապետները, մոռցուած յոյգերու, ուրացուած բարիքի նոր աղբիւրներ բանալու մեր սրտերուն անկարեկիր ամայաստանին ներսերը: Առաքեալն էր որոնք խօսէին նոր Արքայութենէն, ան զոր լսեր էին ու քարոզեր դարձեալ վայելքի ու մեղքի կայսրութեան մը ոստաններուն: Վկաները, որոնք չմեռնելուն բարիքը պատմէին, մեռնիլը ստրվեցնէին մեր կեանքէն պարպուած միտքին, հոգիին: Սուրբերը, լման այրուծին մեր սրբազան կայսրութեան: Պիտի փափաքէիր ոչ միայն անոնց բոլորին ալ մեկնումը տաճարին պատերէն, դէպի նոր պարտքեր, նոր քարոզութիւն, այլ եւ անվերադարձ հեռանալը, որպէսզի այսպէս մաքրագործուած այդ ամպհովանիին տակ կարենային գալ դարերը միայն ու միայն **քու ժողովուրդիդ**: Այս տողերը մի կործանէք մեր օրերու ցեղապաշտ հանգանակներով պարտադիր օտարամերժ ետութեան մէջ: Այնքան յոգներ են մեր միտքերը այդ ուրիշ փառքերուն գովքէն, իրկուն առտու, մեր բոլոր ժամերուն մէջ անխափան երգուած: Իմ ժողովուրդին դարերը, որոնցմէ մեր գիտցածը, լսածը՝ այնքան գէշ է ու քիչ: Դարե՛րը, իրենց արցունքներովը, անպարագիծ վիշտին անսփոփ իրաւութեամբը: Ու դարերուն հետ

մարդերը

– **պարզ** ինչպես **ականակուռ** –: Դուք գիտնալու էք որ մարդերը շատ յաճախ կուգան ոսկերիչներու շուկաներէն, ասոնց փորձաքարերուն վրայ իրենց արժէքները փորձելէ, կամ վաւերացնելէ վերջ:

– **Շինական** ինչպէս **ազատ** –: Շրջելով մեր ներսը ամրախարիսխ ըմբռնումներ, դարաւոր կերպարանքներէ, որոնց մէջ մարդ երկոտանին կը ծնէր, կը մեծնար ու կը մեռնէր, ինքզինքը փոխելու անկարող:

– **Տիրացու** ու **վարդապետ** –: Որոնք մեր օրերուն հալածուած, ուրացուած կամ շփացուած տիպարներ ըլլալէ առաջ, մեր ժողովուրդի դժոխքին վրայ բացուած հոգեղէն սրբութեան, կոկոններու փառքեր էին, խորհրդանիշ պատգամներ՝ միտքի, հոգիի հերկերուն վրայ, առակին ցորենին պէս սահմանուած իյնալու հողին, մեռնելու որպէսզի ուրիշները ապրին:

– **Տէրտէր** ու **կաթողիկոս** –: Որոնց վրայ հատորներ հագիւ պիտի գային բաւ, առնելու համար իրենց ներսը խտացուած ապրումներէն ամենէն կարեւորները:

– **Ծառայ** ինչպէս **թագաւոր** –: Մեզմէ այսօր լիովին օտարացած, պաղած զգայութիւններ են երբ ծառաներն ենք մեր կիրքերուն, ասոնք արքայական գահոյքներ բարձրացնելէ վերջ, զմեզ կործանելու մէջ աւելի «անպիտան», ինչպէս կը պատմեն գիրքերը:

Մարդերը,

որոնք սա էջին վրայ տող գրաւելէ առաջ եկեր են իրենց օրերուն սա կախարդական կառոյցով ամպհովանիին տակ, արեւով անուշցած տաճարին մէջ, մութէն պաշտպանուած, քաջալերուած, իրենց «**ծովածաւալ**» մեղքերը դնելու, իրենց «**աշխարհասասան**» անարդարութիւնները քաւելու մոխիրով ու արցունքով, իրենց անսպառ ու զարմանազան ցաւերը ծախելու, եւ ազատագրելու իրենց մարմիններն ու հոգին սա աշխարհին կեղերէն ու որդերէն ու երկինք հանող սանդուխի առջին քարին քսելու իրենց մեղապսակ ճակատները:

**Հին բաներ: Մոռցուած բաներ:**

## Բայց աւելի քան իրաւ, այսօր ալ:

\*

\* \*

Տաճա՛րը՝ Սրբոց Յակովբեանց, ինչպէս կը գրուէր դարերով անունը սա մենաստանին, վերածուելէ առաջ ու վերջ ալ ժողովրդական ու ընտանի **Սուրբ Յակոբին**

որ

Շէնք է կոկիկ, գողտր, դոմինիկեանները կնքած են, **գոհար՝** Երուսաղէմի ընդհանուր սրբատեղիներուն մէջ, մեծահամբա՛ւ՝ ոչ միայն իբր սրբութիւն, այլ եւ գեղեցկութիւն, պատմող մեր ժուժկալ բայց տաք երազանքէն, երբ մեր կառոյցները կը պահէինք զգաստ համեմատութեանց մէջ ու վրայ, արտաքին աչքերու համար քիչ ցոյցով բայց որոնց ներսը մեր զգայնութիւնը կը գտներ կերպը հաշտեցնելու հարըստութեան պոռթկումը ու չափին օրէնքները, սանձելով քարերուն սլացքը պարկեշտ սահմաններու ծիրին ու շեղջելով սիրտէ փրթած բաներուն արիւնոտ, տաք հրապոյրները սիններուն, պատերուն, կամարներուն, ձեւովը բեհեզին ու ոսկիին...: **Սուրբ Յակոբը** որ ճարտարապետութիւն ըլլալէ առաջ, հանդիսարան մըն է քաղցր հրաշքներու, հազարի մօտ տարիներ, հազարէ աւելի հսկայ փորձանքներու դիմացող: Մեզի համար անիկա ոչ միայն դարաւոր հնութիւն մըն է այլ եւ բարձր յիշատակարան ուր կը խտանան մեր ժողովուրդին մութ ուժերը, լոյսին փայլատակած քիչ անգամ, բայց մեր հսկաներուն նման լեռներուն սիրտը ապաստանած, դարուց ի դարս, երբեմն երբեմն ելլելու, մեր առջեւ շողալու ու կրկին իջնելու անդունդ, ճիշտ ու ճիշտ հայոց պատմութիւնը: Անիկա, սա մեր օրերուն ինքնատիպ նմոյշ է ճարտարապետական, ու է նոյն ատեն պատրաստ դիւան, իրենք զիրենք պատմաբան կարծող խակ ու փակ մարդոց ամբաստանութեանց: Լրագրող մը, Ֆրանսա կամ Գերմանիա ըրած, որուն սկիզբը կրնար վրիպած ճարտարապետ մըն ալ ըլլալ, ազատ է այսօր անոր կերպարանքին

յատկացնել ծանրակուռ տեսութիւններ, ենթադրութեան բով-  
քէն: Ուզենք չուզենք մեր շէնքերը պիտի օգտագործենք կամ  
անգոյ փառքեր արժեւորելու կամ մեր պատմութիւնը գնելու:

Ուրի՛շ

– Բայց այնքան շատ բան է այդ **Սուրբ Յակոբը**:

Մէկը որ գիրքերէ, թերթերէ թիւ ու վկայութիւն հաւաքել  
միայն ստրված է ու այդ հաւաքումները՝ դասաւորած, հան-  
րութեան մատուցանելի կերպարանքներով, կը հաւատայ թէ կը  
ծառայէ հայոց պատմութեան, կայ ահա երկու հարիւր տարի,  
չըմբռնելով տարրական ճշմարտութիւնը որուն համեմատ թիւն  
ու նշանը պարտաւոր են կեանքին վերածուիլ: Այդ մէկը,  
մէկերը՝ լեգէոն, մինչեւ այսօր տակաւին չեն անդրադառնար որ  
կեանքը զգալու դերը չէ ներելի վստահիլ մեռելներուն: Այդ մէկը  
իբեն պիտի տայ ազատութիւն, մեկնելով շէնքին անունէն,  
մաքրելու պզտիկ հաշիւներ ու գիրքեր, գրքոյկներ լաստա-  
կերտելու, եւ իբեն հիմնովին օտար, անծանօթ իրողութիւնները  
համաձայն այդ հաշիւներուն, հեռուէն թելադրուածներուն,  
փոխ առնուած ակնոցներուն՝ գունաւորելու, ներկայացնելու:

Ուրի՛շ մը պիտի պոռայ մեր գլխուն իր իմաստութիւնը,  
անցեալը վերանորոգելու միամիտ պատրանքի մը մէջ, **Սուրբ  
Յակոբը** երբ կը փափաքի տեսնել առնուազն հինգ դար  
առաջուան հոգեբանութեան մը վառարան, երբ մեր վարդա-  
պետները ապառաժէ մը աւելի կարծր հաւատքի տապա-  
նակները իբրեւ, կ'աղօթէին անոր անուշիկ կամարներուն  
ներքեւ ու կը վազէին դուռ, իբենց բռնուածքներով խորտակելու  
կզակները մեր իրաւունքները խորողներուն: Այսօր պատկեր մը  
վար առնելու համար Երուսաղէմի Սրբատեղիներուն պատե-  
րէն դիւանագիտական թղթակցութիւն է անհրաժեշտ մէկ կող-  
մէն մինչեւ Հռովմ, միւս կողմէն մինչեւ Լոնտոն:

\*

\* \*

Զգայութեանց որսորդ, տեղ մը, **Սուրբ Յակոբի** մէջ, կը ջանամ առնել, հանդիսաւոր առիթով մը, քանի մը հիմնական ապրումներ որոնք բխելով հանդերձ աչքիս փռուած մարդկային անտառէն, ըլլային քիչ մը աւելի **մասնաւորեալ**, ինչպէս կըսեն, իրենցմէ անդին ալ թելադրելու ընդունակ: Ու փափաք եթէ ոչ ջանք է իմ մէջ թափանցումը ընել շէնքին ոչ միայն քարեղէն փառքին, այլ եւ գտնել կծիկները ապրումներու թելին որոնք մեր ժողովուրդին սրտէն փրթեր, նստեր են հոս, ըլլալու համար այս շէնքին մէկ մասնիկը ու դիզուելով վրայէ վրայ, բարձրացուցեր են անոր նիւթեղէն ինչպէս հոգեղէն կերպարանքը:

Տեղ մը:

Ու կը տեսնեմ

– առատ ոսկին որ կամարներուն խոնարհումովը մթնած խորշերուն, տարածքներուն վրայ կը բանայ իր աղօտ, գրեթէ տմոյն պայծառութիւնը երբ դուրսէն լոյսի կտորներ իյնան իրենց վէտերուն: Այդ ոսկին, ժողովուրդը պիտի ըսէր՝ ոսկեջուրը, կէս ցոլացիկ, բայց տաքութեամբ մը թանկ մետաղին յատուկ, կը բաշխուի, առանց տարտղնուելու, խորաններուն բոլոր զարդամասերուն, զարդեղէններուն, անոնց տալով մորթ մը ըսելդ կուգայ, դեղնաւուն պատմուճանը ուրկէ զգաստ հեշտանք մը արձակուէր: Եւրոպական արուեստին մէջ արձանները պարապնող մարմար պատմուճաններէն դուք կ'առնէք ուրիշ հեշտանք: Չեմ մանրամասներ, քանի որ նկարագրութիւնը հիմա արուեստի է բարձրացած, դարերով արհամարհուելէ վերջ: Բայց չեմ կրնար չխորհիլ մարդուն, մարդոց որոնք հաւաքեցին այդ ոսկեփոշին, Աստուած ինք գիտէ միայն, ինչ տառապանքով, այնքան վտանգներու բերանէն, մէկ կողմէն պապենական պարտքին ուշադիր, իրենց գեղերը, գիւղաքաղաքները աճեցնելով իրենց խելքին բարիքներովը, միւս կողմէն, իրենց երկինքը գնելու լաւագոյն ձեւն ալ ջանացին գործադրել, Աստուծոյ քաղաքին մէջ իսկ, **«ի սուրբ Վերիսաղում»** իրենց բառերովը, ապահովելով իրենց հոգիներուն փրկութիւնը, աւելորդ է բացատրել ինչպէսը: Անշուշտ **«Երանի որ ունիցի յիշատակ ի Սիոն»**ը նախադասութիւն մըն է որ

ժողովուրդի մը հոգեղէն թափը միայն չ'արտայայտեր, այլ կ'անցնի աւելի անդին քան Իսրայէլին մթին ու ճիշտ բառով մը՝ մովի եռանդը (ուր քաղաքական կիրքը կը համաձուլուի երկնայինին հետ) ու կը դառնայ աւելի բարձր պատգամ մը, քաղաքականէն, ազգայինէն ալ վեր տարողութեամբ ու խորութեամբ, բոլոր անոնց համար որոնք սա անցաւոր, մանաւանդ աղցաւոր աշխարհի երեսին այցուեցան մթին ձգողութեամբն ալ **անանցին**, այնքան իրաւ՝ կարգ մը մարդոց հոգետունին, այնքան անհրաժեշտ՝ կարգ մը ցեղերու հոգեդաշտին, որպէսզի հանդուրժուէին աշխարհին բոլոր անարդարութիւնն ու զրկանքները, անհասկնալի որքան իրաւ, բոլորն ալ յատկապէս ջոկուած, դասաւորուած իրենց **«վայելումին»**, աստենականին ծանր պայմաններուն հանդէսը ինչպէս: **Անցնիլ** աւելի անդին ու ապրիլ որպէսզի այդ անդինը ըլլար միակ իրաւը, իրականը, կարելին: Ու տակաւին տարբեր կերպարանքնէ՛րը այդ մտատեսումին, երբ մենք ուրիշին ցաւերուն տառապանքին կ'երկարենք մեր քաղցրութիւնը, ժպիտը, սփոփանքը: Ու տակաւին կը խորհիմ, այն մարդերուն՝ միշտ իմ արիւնէն, դարերն ի վեր իմ պատմութեան, գտնելու համար ժամանակի պաստառը որ չըլլար հիւսուած արիւնով, կրակով, անյատակ թշուառութեամբ, առիթ տալու համար մատներուն որոնք ճարէին **հոգեղէնին հունձքն** ալ: Ե՛րբ, ուրկէ՛, ինչպէ՛ս իմ պապերը գտեր են տւողութեան կտորը, զիրենք ոտնակոխ հալածող աղէտներէն աչք բանալու ու դիզելու թանկ սա մետաղը, առատ այնքան, իր ալիքներուն մէջ ողողելու համար ոչ միայն զարդասարասը խորաններուն, այլ եւ լման հասակները սիւներուն, երեսները գմբէթներուն, մանրանկար անտառակները կաթողիկէներուն, իրարու հետ հաշտեցնելով սլաքն ու վառքը, ամբողջինն ու նրբութիւնը, ճոխութիւնն ու ճաշակը որոնք բառեր ըլլալէ առաջ ապրումներ են տաճարին արեւելեան մասը Արքայութեան փոխակերպող: Աղօթքը այդ ոսկիին մէջէն կը սուղնայ, ըսելս կուգայ: Խունկը այդ դեղնութեան մէջ կարիւնի, կը մարդկայնանայ: Արեւը ինքն ալ

կը սրբուի, կանուշնայ երբ մօտենայ այդ ոսկեդրուագ ձեւերուն ու անգամ մըն ալ կ'ոսկիանայ:

Ու կը տեսնեմ

– աւելի առատութեամբ մը բաշխուած **արծաթը**, մեծղի, հաստ, հասարակ ըսուելու չափ, քիչ մը ամէն դի: Որ կը յօրինէ կանթեղները, արուեստի գործերու մօտեցող շնորհներով ու աւետեաց երկրին համբաւեալ ողկոյզները կերպադրող փորերով: Անոնք ոչ միայն ամէն տեղ են, այլ եւ տաճարին երկինքը ոճի ձգելու չափ ճաշակով մը կը կենան, իրենց բարձրացումներուն, խոնարհումներուն, տարտղնումին ու խմբումին մէջ թելադրելով ոչ միայն հարստութիւն, հաւատք, սիրտ, այլ եւ գեղեցկութիւն, այս ժողովուրդին ամէն արտայայտութեանց խորը զգալի հոգեղէն գեղձերու – եթէ կը ներէք բացատրութիւնը – մը ճառագայթուն պաշտօնագործութիւն: Մետաղը ցուրտ է, իր հոգեղէն դրութեան մէջ, բայց արեւին մէջէն ու կանթեղին սիրտէն երբ լոյսը կանցնի, անիկա կըլլայ տաք, ոչ միայն աչքին, այլ եւ հոգիին համար: Պիտի չուզէի ք սա ծանր, երկու հոգիէ իսկ չշալկուելիք ողկոյզը յիշեցնող մեծ կանթեղ-հանգոյցը վերածել զինքը նուիրողին հոգեղէն դրութեան, առնուազն քանի մը հարիւր տարի առաջ **«անցած անդին»**, բայց ատկէ առաջ ով գիտէ ինչ ծանր ապրումներու սլաքներուն տակ, հայոց աշխարհին մթին խորքերէն, իր հարստութիւնը բարձած ջորիներու քամակին, իր կին ու զակները ձգած առջին, կարելի բոլոր զենքերով իր կարաւանը զինած, եկեր է **Վերիսադում**, թերեւս ճամբուն մէկ մասը դէպի Գլխադիր ընելով ծնրադիր, ու փռելով իր գանձերը Առաքեալին անտես բայց ամենատես աչքերուն: Ինքը հիմա անուն մըն է, կանթեղին մէկ պոչին: Բայց ես ազատ եմ այդ անունը հագցնելու կեանքին բոլոր ծանր մեղքերովը, բարիքներովը, կընեմ զայն ինձի պէս որսորդ մը ձեւերու, ապրումներու, կիրքերու: Ա՛յն ատեն: **«Երանի որ ունիցի յիշատակ ի Սիոն»**: Ու արծաթ է, սա տարօրինակ տաճարին մէջ, ամէն գիծ որ դեր մը ունի բան մը կրելու, ամէն մակարդակ (**plan**) ուր մումի մը ոտքը ունի ինքզինքը տեղաւորելու: Ու արծաթ է դարձեալ կողքը գիրքե-

րուն, մարմինը խաչերուն, հասակը աշտանակներուն: Արծաթ՝ բոլոր սպասեղէնը, ծաղկամանները, գաւազանները, աղանիները: Արծաթ խորաններուն լման երեսակները, **բանուած**, ձեռու սիրտ առած, սրբագան պատմութեան մեծ անունները մանրադրելով: Կամարներէն կայլակ կայլակ, ողկոյզ ողկոյզ, սիրտ սիրտ ինքզինքը կախելով, – ընդունարան լոյսի լեզուակին: Ու կերպասներու հիւսքին: Ու քշոցներուն սկաւառակին ինչպէս կոթուններուն: Ու աշտանակներու ստեղներուն: Ու գամերուն: Ու կոճակներուն: Ամէն բանի վրայ: Այս յաճախանքը ճերմակ մետաղին, շատ մօտիկէն յիշեցնող մարմնական գերութիւնը մեծահարուստ մարդոց, մեր տաճարէն ներս կը մեղմանայ սակայն, կըլլայ անուշ, վասնզի ոսկին միշտ պիտի միջամտէ այդ անարին ճերմակութիւնը գունաւորելու: Այս ճերմակի եւ ոսկեգոյնի խառնուրդը մեր նկարներուն վրայ կ'անձնանայ, զանոնք զատելով ոսկիին հետ առատութենէն որ յոյն նկարներուն յատակը կը թանձրացնէ: Չէք յոգնիր արծաթին սա յաճախանքէն, ինչպէս չէք յոգնիր ձեր մայրենի ձեւերուն առատ ծփանքներէն:

Ու կը կրկնուի իմ մէջ նոյն զարմանքը  
– ե՞րբ, ուրկէ՞, ինչպէ՞ս իմ ժողովուրդը գտեր է ժամանակ,  
միջոց իր նիւթական ալ հարստութիւնը ազատագրելու  
գազանին ու մրրիկին ատամունքէն, զանոնք բերել դիզելու  
համար սա տաճարին պահեստէն<sup>11</sup> ներս:

---

<sup>11</sup> չէքեաթը միջամտած է, այդ պահեստը աճեցնելու, թերեւս աւելի անդին քան իրականութիւնը: Չունինք մանրամասն նկարագիրը **Գանձարան գանձին**, հասկնալի մտահոգութեան մը արդիւնք: Եւրոպացի ճամբորդներ (**Լորի, Գ. Մագլէր**) չեն տեսած զայն, կամ տեսած են այնքան մը բան որքան յարմար դատած է օրուան իշխանութիւնը վանքին: Ու հոն ուր հէքեաթը կը միջամտէ, իրականութիւնը կը տառապի: Ս. Յակովբեանց **Միաբանութիւնը** հպարտութիւն մըն էր, ազգին խղճմտանքին ամենէն բարձր արտայայտութիւնը դարեր ու դարեր: Լուսահոգի Մեսրոպ Պատրիարք Նշանեան կը պատմէր, արտասուախառն յուզումով թէ 1915-17ի չարաշուք օրերուն, Միաբանութիւնը յօժարած էր անօթի պառկիլ, բայց մերժած էր ամէն թելադրանք, խաչի մը արծաթէն կտորիկ մը իսկ հացի վերածելու: Ինչ որ այդ գանձարանէն նմոյշ կ'ելլէ տեսքի, նման հանդիսանքներու, բաւ է սակայն

Տօնն է սակայն սատափակուո գահոյքին, Տեառնեղբայր Առաքեալին: Իմ աչքերը վարժ՝ իր պսպղուն գմբէթիկին, ասիկա բռնող չորս ալ սիւներուն որոնց ներքեւ կտոր մը միջոց, անվախճան հսկումի: Գիտենք թէ տարին հեղ մը, իր տօնին օրը, մէկը, անհրաժեշտաբար Առաքեալին յաջորդ պատրիարք մը, պիտի բարձրանայ այդ Աթոռին, պիտի լսէ քրիստոնէայ եկեղեցիին ամենէն աւագ փառաբանութիւններէն մէկը, «**Փառք ի բարձունս Աստուծոյ**», յետոյ պիտի իջնէ անկէ, թողլով զայն իր մենութեան, մեծութեան:

Այսօր, Հնդկաստանի գոհարներով շողակուո թագ մը, աւելի մասնաւոր բառով մը **Չաթալ թագը**, այդ գահոյքին կռնակը կը մարդակերպէ, գաւազաններով յօրինուած եռանկիւնի մը մէջէն, մինչ թագին օգնական ուրիշ սրբութիւններ կը պաշտպանեն տպաւորութիւնը իրական գլուխին: Մարդ չի կրնար կշտանալ այդ փոքր գլուխ-գործոցը դիտելէ, ընդելոյ՛ճ ձեզի ծանօթ ու անծանօթ ամենէն թանկ քարերով, ամէն գոյնէ ու ամէն չափէ: Պիտի ուզէի 1900-ի բանաստեղծ մը ըլլալ, սանկ

---

վառելու ամենէն հանգչած երեւակայութիւններն ալ: Չաթալ թագ մը, շուրջառ մը, ակնակուո խաչ մը, եմփոքրոն մը անբացատրելի, աննկարագրելի ապրումներ են, մինչէն այսօր: Կրնա՞ք խորհիլ թէ ի՛նչ էր հոգին տիկիւնին որ **Պարոնտէրի շուրջառ** անունով ծանօթ հրաշալիքը կազմակերպած է, կտաւին վրայ բեհեզն ու ոսկին, ադամանդն ու գոհարը սառեցնելով իր իսկ արեան զարկին հետ: Կան ձեռագործներ որոնք տաք են, համբոյրի մը պէս ու անուշ աղօթքի մը չափ: Ու անոնց հիւսքին մէջէն տիկիւններն ու օրիորդները հայոց աշխարհին որոնք միայն Եղիշէին վսեմագրած առաքիւնութիւններով չեղան պսակազարդ, այլ եւ ձգեցին մեր գուրգուրանքին, հպարտութեան, հիացումին ինչ որ իրենց սիրտերուն ամենէն ազնուական մարմնատութիւնն էր եղած, եբբ որչ էին: Ամբողջ հայ արուեստ մը կայ, այդ գանձերուն ոչ միայն մարմինին ներսը, այլ մանաւանդ անոնց արժեւորման մէջը: Երուսաղէմ չեղող մը, ատոնք չտեսնող մը անընդունակ է այդ արուեստը զգալու, կշռելու: Սուղ այդ կտորներուն մէջ մարգարիտը տեղացած է ու սառած, աւանդութեան գեղեցկութեամբը: Դրեք զանոնք, այդ անմահ վկայութիւնները հայ հոգիին, իրենց հարազատ խորաններուն վրայ, որոնցմէ ամենէն նուիրականներէն մէկն է անշուշտ **Մ. Յակոբը**, իր **Գլխադիրով**, դուք մօտիկն էք զգալու ձեր ժողովուրդին ամբողջ խենդութիւնը, կրակը, խոյանքը դէպի վայելքները ձեւին ու կիրքին:

Ինտրա մը, որպէսզի այդ հեղուկ բայց չվազող գոյներուն փոշիին լման շողաբեկումները, կանթնացումները, արիւնումները թուղթին նկարէի: Ատիկա վեր է իմ կարողութենէն: Բայց ամէն իրականութիւն անգամ մը ինքզինքն է ու երկրորդաբար՝ ուրիշ բան մը: Հոս, այդ ուրիշը՝ զմայլելի ճաշակն է, սրտայոյզ, սրբանուէր արուեստը որ այդ քարէ դիւթանքները իրարու կընծայէ, գոյնին ու չափին հակադրութիւնները, հանգիստութիւնները, փոխադարձ պաշտպանութիւնները համադրելու համար անբացատրելի զգացման մը մէջ որ ոչ հարուստին կուշտ հպարտութիւնն է, ոչ ալ մոլեռանդին կրքոտ, այլամերժ հաւատաւորութիւնը, նուիրանքը քաղաքական արարքի վերածող, այլ այն **անուշութիւնը**, հայեցի տաքութիւնը որոնք մետաղէն, մարմարէն – կրնաք միսն ալ տեսնել բառին ետին –, ձայնէն ու կտաւէն – կրնաք մարդկային ամենէն նուրբ, իրաւ թրթումները ըսել, միշտ բառին ետեւէն – կանցնին աչքերուդ, կը վառեն ասոնց փոքր ծովերը: Քեզի այնպէս կուգայ որ այդ մարգարիտները, ադամանդները, զմրուխտները կը դողդղան, կը լեցուին լոյսէն բայց չեն յորդիր, կը նստին բայց չեն հանգչիր, մինչ հոգիդ – այս անգամ նայուածք – կարմիրէն կանցնի կանանչին, կապոյտէն դեղինին, կախարդական այգի մը ընդմէջէն, խորհելու յուզուած, կարօտագին այն մատներուն որոնք այդ մարգարիտները առին մատաղ կուրծքերէ, այդ գոհարեղէն փոշիները դրին ամենէն անուշ բեհեզներու կողերուն, ով գիտէ որ անգաւակ տիկինին ուխտը – զակի մը երազը – այդպէս ադամանդելով: Որքան հզօր են ուխտերը, այդպէս քար ու գոհար իբրեւ պառկելէ առաջ, ոսկեշար կտաւներու վրայ, սիրտին խո՛րը մարդոց որդիներուն: Ու կը խորհիմ, մեծ մեծ մեղաւորներուն, մեծ մեծ սուրբերուն, թանկ հոգիներուն ու դժբախտ սիրողներուն, որոնք այդ թագին վրայ կանանչ աչքերը սեւեռեցին զմրուխտին, դեղին պորտիկը գամեցին յակիւնթին ու մանուշակ դալկութիւնները մեղեսիկներուն...: Գլո՛վար, այսպէս բացակայ բայց անմերժելի – որով եւ միշտ ներկայ – Առաքեալին, իր լման խորհուրդովը, այս ոսկեղէնը, թաւիշը, բեհեզը, ադամանդները կենսաւորող, որպէսզի **գնուի** հոգին:

Դուք այսօր հազիւ կը գիտակցիք այդ գինին: Հարիւր տարի առաջ «Միոնի մէջ յիշատակ մը» քաջութիւն էր ու վստահութիւն:

Աչքս կը յոգնի ու **Ս. Յակոբին** ոսկեղէն փառքը սպառելու տեղ կ'առատի: Այսպէս է գիրը կարգ մը տեղերու:

\*

\* \*

Տօն է գահակալութեան:

Ձեր ինչո՞ւն պէտք հնաւանդ սրբարանին մէջ արդիական ներկայութիւնը նստարաններուն, տարին քանի մը անգամ կրկնուող: Մանաւանդ ձեր ինչո՞ւն է պէտք, այդ նստարանները լեցնող մարդկեղէնին կտաւր: Խայտաբղէտ, ինչպէս ինքը, Սուրբ Երկիրը: **Հիւպատոսներ**, ու դուք այդ մարդոց երկիրները կը կանչէք, աջէն ու ձախէն, ու կուտաք այդ վկայութիւններուն իրենց իրական ալ իմաստը: Գոյնի, աչքի չափերու, ոսկորներու դրութեան հարազատ բարելոն մը, Հոնտուրասէն մինչեւ Սպանիա: Այսինքն մարդկային տեսակներու լրիւ հանդիսարան, ցեղային շեշտ նկարագիրներու վաւերական կնիքով մը: Ու անոնց տարազները: Ու մանաւանդ դէմքերուն հին, հեռու, ապայծմէ փաստերը, հետաքրքիր, անտարբեր: Որը՝ մենակնոց: Որը՝ հանդիսաւոր: **Պետական պաշտօնատարներ**, լրջութեան, թանձր պատկառանքի ու խոհեմ հաշիւի բովանդակ սարիքներովը, դեռ ատեն չգտած գաղթայնանալու, քանի որ անգլիական կայսրութիւնը իր մարդերը կուզէ միայն ու միայն իր սահմանած ժամանակներուն համար ու զանոնք կ'առնէ, ուրիշ կարիքներու երբ շրջանը աւարտի պարտքին, պարտականութեան: **Աւագանի մը**, աս ալ բազմաբեղուն թելադրանքներով, մորթէ, տարազէ, հոգիէ: Ամերիկացի լրագրող մը կըսէր, մեծ զարմանքով «Պաղեստինը երկիրն է ուր մարդիկ հանգիստի համար երեք տարբեր օրեր կը տրամադրեն Աստուծոյ պատուիրած մէկին տեղ»: Պաղեստինը երկիրն է ուր այդ աւագանին եօթը հեղ երեք կերպարանքներ պիտի պարզէ,

քանի մը երեք ալ քաղաքակրթութեանց դասակարգային թելադրանքներովը: Հոն է իր **կէլէ-պէլէին** մէջ ամրափաթաթ Արեւելքին պազիրկեանը որուն արտերէն կը կրեն ինքնաշարժը, ուղտը, լորին, աւանակը հաւասար ուշադրութեամբ մը: Հոն է դեղին հորթին դեղնապաշտ ներկայացուցիչը, արդի **պիզնէսմէն**ը, որուն դրամատունը իր բազուկները կ'արձակէ Հիւսիս ու Հարաւ, Արեւելք ու Արեւմուտք...: Չեմ շարունակեր: Ու վերջացնելու համար, հոն են կրօնականները, զանազան ու զարմանազան զգեստաւորումներով, նոյնքան տարանջատ արտայայտութիւններով: Ամբողջ Արեւելքը: Ու ամբողջ Արեւմուտքը:

Եկեր են, հայոց պատրիարքին գահակալութեան հանդիսանքը շքաւորելու:

\*

\* \*

### – Հրաշափառ Աստուած

որ, խայտաբղէտ ու երփներանգ սա լռութեանը մէջ Ս. Յակոբին, ձայն է ու յարձակում, այս վերջին զգայութիւնը շատ յստակ թելադրող, քանի որ Ս. Երկրին Սրբատեղիներուն մէջ որոտալը գերազանց է երգելէն, ոճէն ու զգացական քաղցրութիւններէն: Ասիկա թերեւս զինն է դարաւոր վարժութիւններու երբ մերինները, Սրբատեղիներու մէջ պարտքին տակն էին իրենց ձայներով ալ յաղթանակ շահելու:

Ու թափօր: Դարձեալ չեմ նկարագրեր:

Իրենց խայտանկար շուրջառններուն ներսը, վարդապետներուն մարմինը կը վերածուի խոշոր, գրեթէ երկրաչափական ծաւալներու, մասնաւոր, ընտանի գիծերուն ջնջումով: Ծանր, լայն ձեւեր, որուն կատարին դրուած մռայլ, լոյսէն աւելի սեւցող դարձեալ երկրաչափական մարմին մը կը նպաստէ զօրաւոր պատրանքի մը ստեղծումին: Տարազը մարդկայինէն վեր է երբեմն: Այդ ձեւերը պարածածկող կտաւը, ոսկեջուրին ծփանքներուն մէջը բեհեզին, եւ գոյնի ուրիշ դալկացումներ, նուա-

գումներ, հրթիռներ՝ ազդակներ են որ ազատագրուինք, աւելի արագ, **անմիջականին, իրականին** բռնութենէն, այնքան իրաւ՝ մեր տպաւորութիւնները փոքրելու արարքին մէջ, ու այնքան անհրաժեշտ որպէսզի ստեղծուի մեր ներսը ուրիշ հանգոյց մը զգայութիւններու, ապրումներու, դէպի հին, հնագոյն դարերը երկարող թելերով: Իմ մանկութեան վարդապետ մը, մեր մեծ ժամու բեմէն, հեքեաթին մէկ կերպարանքն էր, ուղղակի երկինքէն դրկուած: Իմ ալեւոյթին, վարդապետներու սա գումարը առնուազն մեր միջին դարն է, իրաւ, հայ, դժբախտ բայց լուսապայծառ, երբ կը մխուիս անոր տարեգրութիւններուն խորը ու կը մնաս ափ ի բերան, այս ժողովուրդին կեանքէ հարստութեան, անսպառութեան բիրաւոր փաստերուն առջեւ: Հոս, անոնց վեղարներուն սլացիկ կոները, կաթողիկէները կը դաշնուին իրարու, ինծի թելադրելով ծանր յուզում, տրտմութեան փոխուելու չափ խիստ, ինչպէս ուժի, կորովի, դիմանալու ծփուն դրութիւն մը, դարձեալ մեր խորքերէն յառնող, տեսակ մը կոչ, օտարներ կըսեն **appel**, որ տաք է ու խորհրդաւոր, թափանցուն է ու անզետեղելի: Սեւ կտաւով բանտուած, պատանուած, կիսուած իրենց դէմքերէն՝ պակսի՛ լը, կամ տարտամիլը աչքերու վկայութեամբ ու ճակտի խաղաղ իմաստով պայմանաւոր զգայութիւններուն, կարծես կանդրադառնայ, կորուստը դիմաւորելու, դէմքին միւս կէսին վրայ շեշտի, ուժի, պատկառանքի հանելով անոր արտայայտութիւնը որ կը գտնէ իր լիութիւնը, ինքնութիւնը, ծանր ճնշումը ինչպէս քաղցր պայծառութիւնը անոնց մօրուքներուն երեսին, այնքան անհրաժեշտ դարձեալ՝ վեղարով գողցուածը լրացնելու, խորհուրդը երկարելու, իրենց կնքուած ձեռքերուն մէջէն ցողունը մոմին որմէ լոյսի ջուր մը կը տարածուի անոնց ճերմակը ոսկիով օծելու: Մոռցէք բերանը, դէմքը: Հոն է ճերմակ հրաշքը մօրուքներուն, որ կը թրթռայ, կը ցոլցայ, կը թափանցէ, մինչ ուրիշ կտաւի մը վրայ, այս անգամ համակ սեւ, այդ մոմեղէն ոսկեջուրը այդ մատաղ սեւագիրը կառնէ ուրիշ տաքութեան մը տակը, այդ մօրուքներուն խորը լուցելով անմար մորենիին հեռու, հին կրակները:

Ու կորոտայ շարականը, յաղթական ու հպարտ, այնքան տարբեր մեր պարտուողական հոգեբանության թելադրածէն, առնելով իր թափը, ներսէն, իր բառերէն, ինչպէս դուրսէն, պահին սա հոծ մեծութենէն, իր ծանրութիւնը, վեհափառ իր գնացքը հաշտեցնելով դարձեալ ցեղային կշռոյթին: Այս **Հրաշափառները** մտիկ ըրին հայ իշխաններ ու արքաներ դարեր ու դարեր, մի մոռնաք ասիկա: Ու այդ արքաներուն ու իշխաններուն անձնապահ գունդերը թերեւս մատաղ կրակներ էին, այս օրուան դպիրները փոխանորդոյ: Յետոյ

– **Ուրա խ լեր սուրբ եկեղեցի...**

Անշուշտ:

Բայց ես գրական վերլուծում մը չունիմ նկատի Հայաստանեայց Եկեղեցւոյ շարականներէն ու աղօթքներէն: Ըսի ձեզի որսորդ մըն էի զգայութեամբ

... կը դողդղան ջահերու ստեղներէն շրթունքները բոցերուն, ոմանք ինքնասոյգ ալ, որպէս թէ երազներ փնտռէին զանոնք համբուրելու, բանաստեղծին բացատրութեամբը՝ կիզելու, կրակով հարսնետրելու, ուրիշներ՝ թեթեւ մը հակելով դէպի կրակները տառապող սրտերու: Լման տաճարը, իր հանդիսականներովը որոնք չեն կրնար վստահիլ իրենց աչքերուն, այնքան ծանրաշուք այդ թափօրը, ծանրագոյն խորհուրդի մը հետզհետէ բացուող ծալքերովը, վեր է անոնց ընտանութիւններէն: Ու չեն կրնար լսել պոռագուած անտիսիին անուշութիւնը քանի որ մեր սրբազան երաժշտութիւնը այդ օտար ականջներուն համար փակ խորհուրդ մըն է: Լման տաճարը, մանաւանդ պատերը, սիւները, խորանները բազմամարդող նկարներուն լռին հաճութեամբը ըսես կը թրթոյայ: Յետոյ գետնէն ու կամարներէն ու սիւներէն պահ մը կը հաւաքէ ինքզինքը, կ'առնէ կանգ, դադրելով շնչելէ, նայելէ, ըլլալէ, մտնելու համար կարծես ձայներուն անտես բայց այնքան ընդդիմադիր, դպող, զգուող ու խռովող ալիքներուն մէջ: Տաք, ուժգին, անհանդարտ:

Չես կրնար չառնուիլ պզտիկ, սառած աչուրներէն տարօրինակ դպիրներուն որոնք շուարած կը քալեն, առանց

աչքի ըսելիդ կուգայ, այսքան փառքէ, այսքան շուքէ, ծանրութենէ բայց կը մնան ներքին իրենց հպարտութեան մէջ ճառագայթուն, երբ Երուսաղէմի հայոց պատրիարքը կ'առաջնորդեն Գլխադիրէն դէպի Աւագ Խորանը: Բուրվառնէ ըր, այնքան դաշն, այնքան ստուերասփիւռ: Ինչո՞ւ չըլլայի նկարագրող բանաստեղծ մը, այդ «**ոսկեկրակ**» ճօճումներուն սիրտն ալ բանալու: Կանցնիմ, անշուշտ ցաւելով ինծի զլացուած այդ շնորհին հաշւոյն, պարզ զգայութիւններուն դառնալու: Շարականը այնքան աճած: Կանթեղները իրենց բոցերը իրենց ներսը քաշած, կարծես վախնալով: Միջին դա ըր, աննահանջ, իրաւ, ամբողջական, երբ այսպէս հանդիսաւորուած պահու մը, նման սրբազան խորանի մը դիմաց, ամբոխները նախավայելքը, նախահամը կ'առնէին **Վերին Երուսաղէմին**: Ու շարժումներ, դպիրներէ, սարկաւազներէ, կամաց, լուրջ, որոնց բոլորին գումարը՝ սրբազան պատկառանքին կը յանգի, Աստուծոյ Տունին դարաւոր ծանրութեան մէջ թերեւցած, զգաստացած:

.....

Ու Աւագ Խորանի բեմին, մեծ, հզօր, նուիրական ու տեղն է կրկնելու բազմիցս դարաւոր պարտքերու բեռան ներքեւ կարծես յոգնաբեկ, Սրբոց Յակովբեանց Առաքելական Աթոռոյն նորակոչ գահակալը, ու իր ոգեղէն կերպարանքին ետեւէն բոլոր հանգուցեալ պատրիարքները նոյն Աթոռին, որոնք աչքերուս առջեւ պարզուող տեսիլքի պահերուն առաջնորդուեցան սա բարձունքը, ու նոյն զգացումներով, նոյն գիտակցութեամբ խոնարհեցին իրենց ճակատները քարին համբոյրին, կը մնայ խոհուն, ինքնամփոփ, երկիւղած, պատրաստ կարծես ընդունելու հեռու, վերնադիր պատգամը իր նախորդներուն: Բոլոր լոյսերը, բոլոր շարժումները կը լռեն: Երիտասարդ վարդապետ մը, պատրիարքական ասան ի ձեռին, կը հրաւիրէ նորակոչ գահակալը, Ս. Խորանէն ընելու իր պատրիարքական ուխտը «Աստուծոյ եւ մարդկանց» առջեւ:

Դուք կարդացած էք ուխտին մարմինը: Չեմ կրկնէր: Բայց ունիմ ձեզի ըսելիք ուրիշ ապրումներէ թելադրանքներ, բառերուն միսէն ու ձայնին կտաւէն քակուող, ծորող այն թանձր

յուզումը որ ինչպէս ծաղիկին հոգին, չի պահուիր թուղթերուն վրայ: Երիտասարդ վարդապետը կ'ապրէր ծանր պահերէն մէկը իր կեանքին, որոնք չեն պատրաստուիր, կը ներկայանան ինքնաբեր ու կը դորդեն: Չէիր կրնար չզգալ դողը անոր ձայնին որ կը բուսներ շատ հաւանաբար անտես սիրտէն գաւազանին: Ու դարձեալ հաւանաբար անոր մատները կ'այրէին կրակին մէջը այն միշտ աննշմար բայց անմահ հետքերուն, բոլոր այն մեծ մարդերէն հոն անցած, որոնք խորհրդաւոր այդ մականը, այդպէս ուխտէ մը առաջ, բացեր էին ու կեցուցեր կէս իջնող սուրի մը հանգոյն, պատրիարքներու խոնարհած փառքին վերէն, ու յիշեցուցեր անոնց ուխտին հետ, դարաւոր պարտիքը բոլոր պատրիարքներուն: Ուղիղ միջին դարը:

Ու յետոյ,

«**Առաքելական Սրբոյ Աթոռոյն**», կրկնելու համար նուիրականացած բացատրութիւնը, պատրիարքը որ սա բռպէին ալ ազատագրուած է զինքը մասնաւորող բոլոր հանգամանքներէն, անունէն ու կարգէն, դառնալու համար **անվերածելի խորհուրդը**, ծանր պաշտպանութեանը մէջ Աթոռին հիմնադիր մեծ Առաքելային ու Հայաստանեայց Եկեղեցւոյ նուիրապետութեան ամենէն բարձրորակ փառքերուն բարիքին յանձնուած խորհրդանիշ վերացում մը դարձած: Ան կը դնէ իր ծունկերը քարին, կը խոնարհէ իր գլուխը, այս անգամ գտած իր մարդկային իմաստը, հեռու, երբ կը բխի իր զգեստին ոսկիներէն, ադամանդներէն, հէքեաթի մը մէջէն կարծես, մինչ երիտասարդ վարդապետներ իրենց բազուկներուն կորովը կ'երկարեն անոր կործանած մարմինին:

Ու յետոյ

երեք արքեպիսկոպոսներու մագաղաթեայ դէմքերուն տրտում եռանիշ խորհուրդը այդ գետնամած, ծնրադիր փառքին վերէն: Ու կը տեսնեմ ձեռքերը եպիսկոպոսներուն որոնք կը բացուին պատրիարքին գլուխին ու զայն կը տեսնուագրեն

– **ի պատրիարքութիւն Առաքելական Աթոռոյն Սրբոյ Երուսաղէմի:**

Օ՛, աղօթքները մեր հայրերուն, երբեմն այնքան իրաւ, խորունկ, ձեռնադրութեան սա պահերը բարձրագոյն բանաստեղծութեան վերածող:

Ընդէ մը:

Յետոյ կը բացուին ձեռքերը ետ: Կը շողայ, աղօտ ու տրտում մաս մը ալեխառն այդ գանկէն: Ու բառերը, որոնք խորհրդաւոր քարայրէ մը փրթէին կարծես:

Անիկա ըրած է իր երդումը անսասան պահելու փառքերը իր Աթոռին, իր եկեղեցիին ու իրաւունքները իր ժողովուրդին:

\*

\* \*

Զայն տեսնել նորէն, երբ կը խօսի այս անգամ ժողովուրդին:

Դուք գիտէք անոր խօսքը ամբողջութեամբ:

Նոյն յուզումը, նոյն ծանրութիւնը, նոյն ապրումները:

Ու պէտք է կարճ ըլլալ:

Երբ անոր բառերը, տրտում ու քաղցր, կը թաւալին, դաշնուելով պահին, անձին մանասանդ ժողովուրդին սպասումին հետ՝

Ես կը նայիմ դասը լեցնող դպիրներէն ամենէն պզտիկին: Տղեկը մեր գրականութեան մէջ անմոռանալի անուն մը կը կրէ, Զօհրապ: Ան ի՛նչ անպատմելի երանութիւն է սակայն պզտիկին նայուածքը: Անիկա ինծի կը թուի ոսկի կամարը ըլլալ որուն վրայէն կը քալէ մեր ճակտին գիրը, երբեմն դէպի բարձունք, երբեմն դէպի անդունդ:

Ու կը բերեմ կամարին երկու ոտքերը իրարու: Ան որ օրուան իբրեւ գահակալը կողջունուի, դպիր մըն էր Զօհրապիկին նման:

Երանի ճակտի գիրովը քալողներուն:

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, ԺԹ. ՏԱՐԻ, ԹԻԻ 11-12, ՆՈՅԵՄԲԵՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ,  
1945, ԷՁ 192-201)

**ՊԱՏԳԱՄԸ<sup>12</sup>**

*Վարագոյրը չէ իջած: Բայց բեւը լեցնող ձեւերուն մէջ, քաղցր ու ծանր լռութիւնը խորհուրդին ուր անհանգիստ ու շուար վիճակին տեղ՝ եղբայրացնող, դաշնաւորող վստահութիւն մը: Թրթռում, խաղը լոյսերուն գտած են իրենց հանգիստը:*

*Աներեւոյթ քայց զգալի ձեռք մը կը ծալէ Արարատի ստուերը, դանդաղ քայց տպաւորիչ: Տեսիլքին շարժուն կտորները կամփոփուին, կը նստին: Մշուշը լման փարատած է: Ու հալումի, հեռացումի, պայծառակերպման զգայութիւններու հետ կը յառնէ, յատակէն դէպի ետ, դանդաղ ամբարձումով մը*

*– ԵՐԵՒԱՆԸ:*

*Որ վարագոյր է բեմին խորքը պարածածկող:*

*Նախաբեւը՝ կոթողը գոր կիսադեղի մէջ կառնեն ողջերն ու եկուորները:*

*Լուսաւորիչը աւելի դեղնած, եթերացած, լոյսի եւ միսի տեսակ մը անզայտ կերպարանք:*

*Մեղմ, տարիքի շեշտով: Անիկա կը տեսնագրէ, առանց բառի, հորիզոնին չորս ծագերը: Պատգամը օրինասացութեան մը գնացքով, որ տակաւ պիտ ջերմանայ, ազդելով ձայնին, շարժումներուն:*

**ԼՈՒՍԱԻՈՐԻՉԸ**

**Փառք, օրհնութիւն, երջանկութիւն  
Խորհրդային մեծ միութեան  
Համահաւասար աշխարհներուն  
Մէկն որոնցմէ**

---

<sup>12</sup> Հատուած՝ Օջականի նոր գործէն, ՕԴՆ ՕՐԵՐՈՒՆ, (Ապրիլ 24ի ոգեկոչումին առիթով ամայքի մը մէջ. կոթողի մը շուրջ հաւաքուած են ողջերն ու մեռելները: Հոգեհանգիստը կատարելու համար ինքը, Ս. Գրիգոր Լուսաւորիչը եկած է տեսարան: Հոգեհանգիստէն յետոյ, վարագոյրը կը վերածուի խորհրդային Հայաստանի մայրաքաղաքին, Երեւանի ուրուապատկերին: – Լուսաւորիչ կնարտասանէ ՊԱՏԳԱՄԸ: [Հրատարակելի Ս. Թ. Շրջանաւարտից Միութենէն, Մատենաշար թիւ 2]:

Հայաստանն է Խորհրդային:  
Թող աջն անտես կենայ պաշտպան  
Անոր ամբողջ ձեռնարկներուն,  
– Մարդերն ընել ազատ պետքէն,  
Ու պակասէն սուրբ ցորենին:  
Մարդերն ընել իրար եղբայր  
Կրօնքին մէջն աշխատանքին.  
Լսեցէք լա՛ւ  
Դո՛ւք, մեռելներ որ սրտաղիւր  
Իջաք կայքէն ձեր երկնաւոր,  
Հաղորդ գալ ձեզ կանչողներու  
Ապրումներուն:  
Ու դուք ողջեր  
Որ հեղեղին դիմաց ցաւին  
Ու ծովերուն մէջ զրկանքին  
Փաստը տուիք ազնուական  
Ձեր առնութեան,  
Դո՛ւք, ժողովուրդ հնոց նորոց  
Հայաստանին,  
Ունիմ ձեզի խօսքն իմ՝ հասուն  
Մէջն արեւին երկինքներուն:  
Չեմ դառնար ետ, աստուածակերտ  
Ամբարձումէն Էջմիածնին  
Տօնը մինչեւ մեր օրերու  
Գարնանամահ վկաներուն:  
Չեմ բանալու դիւանն անբաւ  
Ազնւութեան, հերոսութեան  
Ձեր պապերուն:  
Չեմ մեկնելու գիրն ալ ճակտին  
Ձեր բոլորին  
Տարբեր՝ գիրէն ձեզի ծանօթ  
Շատ ազգերու որակուած մեծ:

*Կը քաշուի քիչ մը ետ ձայնն ի վար, շունչ առնելու, հանգչելու  
պէտքի մը մէջ, մինչ իր գլխէն խոյրը քիչ քիչ կը հեռանայ, երեսան  
բերելով դասական կադապարը հայ ծերութեան, օծուն, մեղմ բացուիթ-  
իւնը գանկերուն:*

Իմ բերանով  
Պապերը ձեր, այնքան անուշ,  
Այնքան դժբախտ բայց միշտ արի,  
Կը հաղորդեն, սա սուրբ ժամուն  
Գորովն իրենց, կարօտն իրենց  
Ձեր բոլորին,  
Ու կը պատմեն ցան իրենց խոր  
Որ չլքեց սիրտերն իրենց  
Հողերուն ծոց,  
– Հա մայնական ցան ահաւոր  
Մեր ժողովուրդը զգետնող,  
Ցաւը իրար չըսիրելու:  
Անվերադարձ վերջն է հիմա  
Այդ ամէնուն:  
Ձեզ պատգամներ ունիմ տալու:  
Մէ՛կն անոնցմէ  
– Սէրն է կեանքին, զայն պայմանող  
Աշխատանքին:  
Մէջն էք պարտքին դուք աննահանջ  
Հաւատարիմ սպասն անոր  
Կատարելու,  
Միջոցներովն համայնական  
Ակօսներէն ձեր արտերուն  
Արզանդներէն ձեր հողերուն,  
Մարմիններուն:  
Մէ՛րն է կեանքին որ դիմաւոր՝  
Մահուան բոլոր զինուորներուն:  
Միւսն իմ խորունկ պատգամներէն  
– Սէրն Ոգիին,

Որ կը հագնի կերպարանքներ  
Գիրի, քարի, մագաղաթի  
Հեղուկ ձայնի,  
Ստեղծումին արգանդներէն  
Նախնիքներուն՝  
Քանի անգամ  
Գերեզմանէն ձեր պատմութեան  
Ծնո՛ղ՝ կեանքին ձեզ վերստին:  
Ու սերն արեան, անվերադիր,  
Որ իրարու կը շաղկապէ  
Ամբաւ դաշտերն ապրումներուն,  
Դարերը ձեր իրերահաշտ  
Ընծայելով,  
Ողջն ու մեռելն եղբայրօրէն  
Հաւասարող:  
Սէրն այդ հրգօր ձեզ խօսեցան  
Ամէն դարու  
Բերանները ձեր մեծերուն:  
Ու դուք գիտէ՛ք  
– Չպակսեցաւ ան երդին տակ  
Հիւղակներուն,  
Պարզ սիրտերուն շինականին:  
Ու դուք գիտէ՛ք  
– Ան պակսեցաւ իշխողներուն,  
Սեղաններուն  
Չորցընելով աշխարհը մեր:  
Սէրն այդ հզօր,  
Հայ ժողովուրդ,  
Փառքին մէջէն հայրենիքին  
Պէտք է դառնայ կիրքդ ահաւոր,  
Սրբագրելու  
Էջերն անարգ մեր պատմութեան:  
Իմ բերանով  
Հայրենիքը մեր վերածին

Մէրն այդ հըզօր  
 Կ'առաջարկէ սպեղանի  
 Դարաթաւալ մեր վերքերուն:  
 Գիրն է բացող մեր պատմութիւն  
 – **Անմիութիւն ծնող չարեաց** –:  
 Պարտք աննահանջ ձեր բոլորին  
 Կոտրել տախտակն այդ լրբութեան  
 Փշուր փշուր,  
 Ու փորագրել ճակատներուն  
 Ձեր բոլորին`  
 – **Միութիւն՝ մայր է բարիքի** –  
 Դուք, թեւ թեւի ու սիրտ սիրտի  
 Ու խելք խելքի,  
 Դրախտ մը նոր, փոխան կորած  
 Դրախտներուն մեր հեքեաթին  
 Ու պատմութեան,  
 Պիտի կերտէք, թշուառութեան  
 Ու գերութեան սա հովիտէն  
 Անունն որուն այդպէս անցեր  
 Է դարերուն:  
 Վերջն է ատոնց, իմ եղբայրներ:  
 Օրն օրերուն կընենք սկիզբ:  
 Թող մեռելներն իջնան խաղաղ  
 Իրենց քունին ու երազին:  
 Ու թող ողջերն հպարտանան  
 Թըռցընելով,  
 Խեղճ Սփիւռքի չորս ծագերուն,  
 Պատգամն ազնիւ, պատգամը սուրբ  
 Հայրենադարձ հրաւերին:  
 Ըսուի սուգին մէջ նստողին  
 Թիթեղ տանիք անիծողին,  
 Թէ վախճանն է այդ ամէնուն:  
 Բացուեր դռներն հայրենիքին  
 Զաւկըններուն իր անխըտիբ,

Իմաստունին ու տկարին,  
Մեծատունին ու տնանկին,  
Թե՛ժ պատանուն ու ալեհեր  
Պառաններուն:  
Բաց անդաստանն է հայրենեաց  
Աշխատանքին ու բազուկին:  
Երամ երամ,  
Փաղանգ փաղանգ,  
Բանակ բանակ  
Դեպ բլուրներ ու դեպ լեռներ,  
Ձեր մօր կուրծքին,  
Խորհրդրդային Հայաստանին  
Որ,  
Կը գոցէ արդ զաւկըներուն  
Իր արիւնով  
Եւ օգնութեամբ եւ զօրութեամբ  
Հիւսիսի մեծ, արիարանց  
Իր պաշտպանին,  
Անվերադարձ  
Գիրքը մռայլ մեր գերութեան:  
Ու կը լուծէ խորն արիւնին  
Նըւիրական,  
Հայրենիքին համար ինկած  
Հերոս բոլոր զաւկըներուն,  
Շըթաները ժանտ, դարաւոր  
Որոնք դարբնող սալին վրայ  
Հին հեքեաթին,  
Մուրճերու տեղ կ'իյնայ քրտինքն  
Ըլլալ ոսկի,  
Նոր զինուորին  
Աշխատութեան մեծ բանակին:  
Նման արի ձեր պապերուն,  
Նման բարի ձեր պապերուն  
Աշխատանքի՛, ստեղծումի՛,

Կառուցումի՛, ամբարձումի՛  
Հողին վրայ ձեր պապերուն:  
Հայրենիքն է, Հայաստանն է  
Խորհրդային  
Որ կը կանչե՛ ձեզ իմ բերնով:  
Արի, արդար,  
Ձեր սիրտն առա՛տ,  
Ձեր միտքը բա՛ց  
Ողորմութեան եւ գիտութեան:  
Երգէ դպիր, երգն հեռանուշ  
Արքաներու շրթունքներէն  
Օր մարձակուած  
Փառքին դիմաց մարմարակերտ  
Էջմիածնին,  
Հիմը նորոգ, հիմը խորունկ  
Երբ կը նետէր  
Ճարտարապետը երկնաւոր  
Արտերուն մէջ հոգիին մեր,  
Հիմը նորոգ  
Արդարութեան ու բարիքին,  
Նոր կրօնքին,  
Խաղաղ սրտին,  
Կուշտ սեղանին  
Յոյսն յարութեան  
Կամարելով երկրէ երկինք:  
Ճարտարապետն արդ երկրաւոր  
Իմ բերանով  
Աշխատանքը կը պատգամէ  
Կրօնքը նոր:  
Կըսեմ ձեզի  
– Չխառնուի արդարութեան  
Ձեր վաստակին  
Կույթը դաժան անգութ շահին,  
Եւ անարդար կողոպուտին:

Ծիլն իսկ խոտին, օտարներէն  
 Չիյնայ կալին քու հայրենի,  
 Իմ ժողովուրդ:  
 Ձեռքդ երկարէ չունեցողին,  
 Տուր ցոյց ճամբայ մոլորեալին  
 Հասիր, անձայն տառապանքին  
 Քուկիներուն եւ օտարին,  
 Ինչպէս ըրին պապերը քու:  
 Հպարտ, անուշ, բարձր ճակա՛տ՝  
 Բանակներուն դէմ չարքերուն,  
 Եղան ինչպէս պապերը քու:  
 Հոգիդ աղբիւր հազարակնեան  
 Սիրոյն քու սուրբ,  
 Կանչըւորել սիրտերը խուժ,  
 Արգիլելով աճումն հունտին  
 Ատելութեան, սեւ նախանձին:  
 Դուն երգեհոն, նոր օրերու  
 Որուն անթիւ ստեղներէն  
 Հոսին երգեր, տաղ, շարական  
 Ազնուական եղբայրութեան  
 Մեծատարած ու սրբազան  
 Եղբայրութեան ազգերէ ազգ  
 Որով միայն պիտի գիտնայ  
 Մարդն ըզգետնել  
 Բանակն ամբաւ չարիքներուն,  
 «Արդարութիւն եւ սէր տնկել»  
 Ինչպէս կըսէ աղօթքը հին:  
 Երգէ դպիր, երգն հեռանուշ  
 Թըռած բերնէն արքաներու,  
 Բայց վանկն որուն  
 Դեռ անթառամ, հոգիներէն  
 Ներս ամէնուն  
 Կապրի ինչպէս անժանգ ոսկի:

## ԽՈՒՄԲԸ

Եկայք, շինեցուք  
Սուրբ ըզԽորանըն Լուսոյ:

### ԼՈՒՍԱԻՈՐԻՉԸ

Խորանին հետ լոյսերուն հին  
Նոր ասորուշան անմահ Լոյսին,  
Ոստանն ազատ Խորհրդահայ Հայրենիքին:  
– Խորանը նոր հրակայական  
Ուր պիտի գան բազմիլ փառքով  
Նոր որդիներն Աստուածներուն,  
Լոյսը կարմիր,  
Սկիհն հացին մեր ցորենին,  
Ու գինիին այգիներուն,  
Եւ աղանին իմաստութեան.  
Արդարութիւնն համատարած,  
Խաղաղութիւնն  
Հիւղէ ի հիւղ, երկրէ երկիր,  
Ազգերէ ազգ,  
Լուսանորոգ այգին մէջ խոր  
Եղբայրութեան Խորհրդային:  
Թող անսասան,  
Թող անվախճան  
Նախախնամուին  
Նոր պետութիւնն Հայաստանեայց  
Բազկովն անյաղթ զակրներուն  
Օրինակին մէջ իր նահատակ  
Հերոսներուն  
Անունովը Հօր եւ Որդւոյ  
Եւ Սուրբ Հոգւոյն,  
Ապրո զ արեան մէջ ամէնուս  
Դարեր առաջ ու դարեր վերջ:  
Հիմա, հանգի ստ,  
Բոլոր ցաւած եւ անսփոփ

Հոգիներուն:

Մէջն իմ ձայնին՝ ճի՛շը մանկան,  
Հո՛ւրքը մատաղ պարմաններուն,  
Կա՛մքն անսասան մեր մայրերուն,  
Ու քաջութիւնն զինուորներուն  
Ուղե՛ղն հզօր իմաստունին,  
Գիւտն ու հնարքն ըստեղծողին:  
Մէջն իմ ձայնին ազգն իմ ամբողջ,  
Այգն է ահա մութին մէջէն  
Որ ցայգասփիւռ կոսկիանայ,  
Այգը կարմիր  
Աշխատանքին, ազատութեան,  
Արդար հացին  
Եւ անշըթայ, անհունարձակ  
Ստեղծումին,  
Քու սուրբ դերիդ, իմ ժողովուրդ  
Մինչեւ ըլլան հողերն ոսկի,  
Յորեններով ըզգեստաւոր,  
Ամէն թիզի:  
Ամէն բլուր նարօտ կապէ  
Ու ամէն ջուր՝  
Երակներէդ, զովութիւնն իր  
Կապոյտ կապոյտ սահեցընէ,  
Դառնայ արծաթ  
Պալատներուդ, հիւղակներուդ  
Պատէն վազող, զերդ մարգարիտն  
Հին հեքեաթին:  
Յառնեն ձայնէն կրռունկներուդ  
Բոլոր անոնք որ արիւնէդ  
Իբրեւ կաթիլ օր մը ինկան  
Կեանքին լոյսին, ու շինեցին  
Համրիչը հուր քու պատմութեան,  
Քեզ օրհնաբա՛ն քու անցեալէդ  
Ու քեզ պատգամ՝ ապառնիիդ:

Ու դուն աղուոր, ու դուն ազատ  
Ու դուն հրգօր՝  
Ձեռքդ երկարած քու Հիւսիսի  
Մեծ պաշտպանին,  
Մոխիրներէդ իբրեւ փիւնի՛կ,  
Մա՛յր բախտաւոր,  
Առնես ծոցիդ քու զակերներիդ  
Քու իսկ մատով հրաշակերտ  
Նոր դրախտիդ,  
Խորհրդային հայրենիքին:  
Միրտն իմ աղբիւր մաղթանքներու  
Դարեր վազող ու չըսպառող:  
Եղէք օրհնեալ, զացէք խաղաղ,  
Տուները ձեր, ողջ ու մեռել,  
Ապրեցնել արիւնը ձեր  
Յաւիտենէ մինչ յաւիտեան:

*Լռութիւն:*

*Լոյսերը կը նստին: Մուրը չի գար: Կոթողը մեծ մումի է  
փոխուած ու կայրի:*

*Անկէ բխող կոծկոծուն ու կիսամութ շառայլին մէջ ողջն ու  
մեռել կը քալեն խորհրդաւոր դէպի աջակողմը բեմին ուր կամարա-  
կերպ մուտքը կը հիւստի կրկին առաջին պատկերին:*

*Բեմի խորքին մեծ վարագոյր սը վերէն կարմրորակ պատան-  
քի սը պէս կիջնայ դանդաղ, քաղաքին վրայ, թափանցիկ ու աղուոր:  
Այդ շղարշին տակ քաղաքը ընդարձակ բռնկում սըն է որմէ ներս  
շէնքերուն բարձր մասերը կրակէ լեզուակներու նման կը բացուին ու  
կը գոցուին:*

*Ամենէն վերջ խումբը: Իր ետեւէն*

**ԼՈՒՍԱՒՈՐԻԶ**  
Անուամբ Հօր եւ Որդւոյ  
Եւ Հոգւոյն Սրբոյ:

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, Ի. ՏԱՐԻ, ԹԻԻ 10, ՀՈԿՏԵՄԲԵՐ, 1946, Էջ 189–192)

Ծանոթ. խմբագիրի

«Հաստուած մը՝ *Օրն օրերուն* գործէն» (Մարկ Նշանեան, *Յակոբ Օշականի մատենագիտութիւն*, Լոս Անճելըս, 1999, էջ 65):

# ՈՍԿԻ ՈՒՌՆԱԿԸ

## (ԽՈՐՀՈՒՐԴ)

*(Կործանած մեհեանի մը բակը: Մէյմէկ սիւնի տուած իրենց կրնակը, երեք կիներ, առջեւնին հողէ ամաններով)*

### Բ. ԿԻՆԸ (Ա. ԿՆՈՋ)

Ըսէ, իմ քո՛յր,  
Ի՞նչ է տեսածըդ ամանին  
Տժգոյն բոցին:

### Ա. ԿԻՆԸ

Ես կը տեսնեմ  
Ոսկի փոշին անցեալներուն:

### Բ. ԿԻՆԸ

Ոսկի փոշին անցեալներուն  
Թափէ, կոտրէ: Ատենն անցած է անցեալին:

### Ա. ԿԻՆԸ

Դուն կըսէ՛ս առ, իսելառ իմ քոյր:  
Խորն այս պզտիկ հող ամանին,  
Կը քնանան հազար ամեր:

### Բ. ԿԻՆԸ

Տասը հազար կանգուն օրօր  
Երգէ երկար որ չարթննան:

### Ա. ԿԻՆԸ

Կարճ նայուածքդ է, իսելառ իմ քոյր,  
Չըբարկանաս:  
Բդուղն այս իսեղճ օր մը երկիրն  
Էր պապերուդ:  
Կեցիր խառնեմ մոխերը ջերմ:

*(Կը խառնէ, բոցէր կը բարձրանան)*

Տեսա՞ ր, տեսա՞ ր, ալիքն այս մեծ,  
– Կայծակ ողկոյզն հոգիներուն  
Այն պապերուն  
Որոնք հեծած նժոյգ հուրէ  
Հեղեղեցին ինչպէս փոշի  
Թշնամիին բանակն անբաւ,  
Արտաքսելով  
Հայրենիքին սահմաններէն:  
Կը հասկնա՞ ս:

**Բ. ԿԻՆԸ**

Ուրի՞ շ:

**Ա. ԿԻՆԸ**

*(Նորէն կը խառնէ մոխիրը)*  
Ահա քեզի ուրիշ ալիք,  
Առատութեան ու բարիքի,  
Կաթի, մեղրի եւ գինիի,  
Ծոցէն ոսկի  
Ամենազգաստ Անահիտին,  
Վրան հողին այն պապերուն  
Ազատ, հպարտ, ու երջանիկ:  
Կը հասկնա՞ ս:

**Բ. ԿԻՆԸ**

Ուրի՞ շ:

**Ա. ԿԻՆԸ**

*(Նորէն կը խառնէ)*  
Ծով է փառքի, յաղթանակի  
Այն օրերէն, ալիքն այս բոց  
Երբ աստուածներն  
Էին մեզի խնամարկու:  
Շէն ու հարուստ դարերն երկար

Ազատութեան  
Կը քնանան, քոյր իմ, հիմա:  
Անցիր ճամբադ:  
Լաւ է լըռել ու չխառնել:

**Բ. ԿԻՆԸ**

Ի՞նչ բան:

**Ա. ԿԻՆԸ**

Մոխիր, մոխիր, անցիր անդին,  
Քու թակոյկին  
Ան քեզ կըսէ  
Թէ ի՞նչ կարժէ  
Արեւմուտքէն ու Հարաւէն  
Բռնի բերուած Եբրայեցի  
Աստուածը նոր:  
Անցիր քեզի...  
Ի՞նչ կը տեսնես:

**Բ. ԿԻՆԸ**

*(Մոխիրը խառնելով)*  
Այ քեզի սեւ, այ քեզի մուխ.  
Կայրի շքեղ երկիրն Հայոց:  
*(Յանկարծ կարմիր բոց)*  
Այ քեզ արիւնն եղբայրներուն:  
Մեհեաններու սուրբ յատակին  
Անարգօրէն փողոտուեցան  
Հազարներով,  
Մեւեր հազած մարդոց սուրէն,  
Խաղաղութեան ու ողջոյնի  
Ու համբոյրի ու ծափի մէջ:  
*(Կը խառնէ մոխիրը)*  
Մեւ, սեւ ծուխն է Մեհեաններուն,  
Մեծ արձանին Ոսկիամօր:  
*(Կը խառնէ մոխիրը)*

Ու դեռ, արիւն է ամէն դի.  
Եղբայրն եղբօր,  
Հայրը՝ տղուն  
Մայրն աղջրկան  
Դէմն է, կէլլեն.  
Կը բզկտեն զիրար սուրով  
Եղունգներով, ատամներով:  
Կործանումն է հոգիներուն:  
*(Կը խառնէ մոխիրը)*  
Նայէ, իմ քոյր  
Սովն է բացած կլափն անհուն  
Որ կը շրջի, կը գալարուի,  
Վըրան պարարտ արօտներուն  
Անդաստանին:  
Պիտի պակսին կաթն ու գինին  
Հացն ու երէն  
Պիտի չորնան յորդ ըստինքներն  
Աղբիւրներուն:  
Արտը դառնայ երկանաքար  
Արօրին տակը բանուորին:

#### Գ. ԿԻՆԸ

Քոյր իմ, որքան բառերդ են սէս:

#### Բ. ԿԻՆԸ

*(Խառնելով)*  
Քոյր իմ, շղթայ, տես, կը զարնեն  
Նախարարին, թագաւորին,  
Ազատներուն, տիկիներուն:  
Քաղաք, գիւղեր, շէն, ասաններ  
Մեծ ու պզտիկ, տես, կը վարուին  
Երկրին բոլոր սահմաններէն  
Դէպ շուկաները վաճառքին.  
Գերի, գերի:

Քոյր իմ, գիտցիր այս գեղեցիկ  
Հայրենիքէն  
Աւեր միայն պիտի գտնեն  
Իմ զաւակներ:  
Հեղինա՞կը այս չարիքին.  
Բռնի բերուած Աստուածը նոր  
Եբրայեցի,  
Արեւմուտքէն ու Հարաւէն:  
Անցիր ճամբուդ, մերթար անդին,  
Դո՛ւ ւրս, Մեհեանին շրջափակէն:

**Ա. ԿԻՆԸ**

*(Գ. կնոջ մօտենալով)*

Իրա՛ւ կըսէ քոյրը մերին:

**Գ. ԿԻՆԸ**

*(Կը խառնէ մոխիրը, խաղաղ ու պայծառ լոյս)*

Իրաւ չըսեր կինը երբեք՝  
Տարիքն անոր երբ որ ունի:

**Ա. ԿԻՆԸ**

Երիտասարդ դուն կերելիս,  
Ի՞նչ կը տեսնես թակոյկէդ ներս:

**Գ. ԿԻՆԸ**

Ուրիշ աղուոր, քաղցր բաներ:

**Ա. ԿԻՆԸ**

Չարի՞քն հապա՛ սա վայրերան  
Գուշակողին:

**Գ. ԿԻՆԸ**

*(Խառնելով)*

Գրուած չարիքն է միշտ մարդուն,  
Բայց կայ թաղուած խորն այս մոխրին

Ան որ վեր է միշտ չարիքէն:

*(Կը խառնէ)*

Տես ի՛նչ կապոյտ, տես ի՛նչ կարմիր

Կելլեն թեւերն ալիքներուն:

Ապառնիին ընդերքներէն:

#### Ա. ԿԻՆԸ

Դուն կը տեսնե՞ս մեզմէ անդին:

#### Գ. ԿԻՆԸ

Ես կը տեսնեմ ձեզմէ անդին.

Գիտցիր, քոյր իմ, մէկիկ մէկիկ

Բոյլերն այս վառ,

Հոգիներն են որ պիտի գան

Հայ ժողովուրդը հովուելու:

Որը Արքայ, որն Հայրապետ,

Որը վկայ, որն իմաստուն,

Որը ռամիկ, որը փարթամ

Իշխանագուն:

*(Խառնելով)*

Շարան, շարան, սուրբերն հօր

Երեց, զինուոր կամ զօրավար

Մաստէլ որոնք մահուան կրնան:

Հեղինա կը այս սուրբ հունձքին

– Այն որ կուգայ:

Աստուածն իրաւ, որ մեզ համար

Մահն յանձն առաւ.

Այսպէս կըսեն բոցերն այս սուրբ

Իմ մեծ քոյրեր:

*(Տեսարանը կը մթնէ, կ'աներեւութանան կիները: Երբ կապոյտ լոյսը կը դառնայ, մօտէն, ձայնը Սուրբին)*

#### ՍՈՒՐԲԸ

Ըլլայ ըլլայ բարեբանեալ

Անունն ահեղ մեր Աստուծոյն

Յաւիտեանէ մինչ յաւիտեան:

*(Կը մտնէ բեւ: Ինքնամոլար: Խարխաբուն: Աչքերով փնտռելով գլխուն վերեւ բան մը)*

Տէր, կը վարես ոտներն իմ խեղճ

Ճամբովը սուրբ խորհուրդներուդ:

Ես չեմ տեսներ...

Յոգներ մաշեր եմ քալելէն:

Աստղըդ ինծի լուռ առաջնորդ

Որ կանգ առաւ:

#### **Գ. ԿԻՆԸ**

Հիւսուիին կոպերն աչւրներուդ,

Եթէ այդպէս կուզէ քեզմէ

Աստուածը որ կառաջնորդէ

Քու քայլերուդ:

Հանգչէ, սուրբ մայր,

Երկիրն ամբողջ կը դողդրդայ

Դեռ յուզումէն:

*(Սուրբը կը նստի: Կը խոնարհէ գլուխը քարին: Հով, շշուկ բեմի ետեւէն կէտէ մը մեծ լոյս որուն մէջ թեւեր, գլուխներ)*

#### **ԽՍԲԵՐԳԸ**

Ալէլուիա, ալէուիա:

#### **ՍՈՒՐԲԸ**

*(Քունին մէջէն)*

Ի՞նչ ձայն է այս...

*(Լոուրթին: Սուրբը կը խոնարհէ գլուխը քարին: Լոյսը կը մեծնայ: Ամբողջ յետասանար բեմին բարձունք մըն է ուր կը թաւալին թեւերը, գլուխները պարուրաձեւ շարժումովը հրեշտակներուն)*

#### **ԽՍԲԵՐԳԸ**

Յոյս, յարութիւն հոգիներուն,

Մարդոց դժբախտ որդիներուն:

Զի Տէրն ահա ելեր այցի  
Ժողովուրդին իր սիրելի.  
Ալէլուիա...:

**ՍՈՒՐՔԸ**

*(Հազիւ գլուխը բաժնէլով քարէն)*  
Ձայներ կուգան երկինքներէն:  
*(Նորէն կը հակէ գլուխը քարին)*

**ԽՄԲԵՐԳԸ**

Փառք եւ պատիւ եւ օրհնութիւն  
Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն:  
Ալէլուիա...

*(Բեմին առաջամասը կը սեննայ, կը խորանայ ու կը պատռի: Կէրելին  
գլուխներ, մերկ, սեւ իրաններ)*

**ՄԱՆԴԱՐԱՄԵՏԸ**

Անէծք, անէծք ու նախատինք  
Բիւր այն մարդուն,  
Հայրն է որուն  
Արքայասպան:

**ՍՈՒՐՔԸ**

*(Յնցուած)*  
Ի՞նչ ձայն է այս. –  
Ո՞րկէ կուգայ:  
*(Կրկին թմրած)*

**ՄԱՆԴԱՐԱՄԵՏԸ**

Պիտի փշրին փաստերն իր պիղծ  
Ու խորտակուի մարմինը քարշ...

**ԽՄԲԵՐԳԸ**

Պիտ՝ օրհնուի բերանն իր սուրբ  
Ու պաշտպանուի գործն իր հօր...

### ՄԱՆԴԱՐԱՄԵՏԸ

Պիտի իյնայ փառքն իր խախուտ  
Անձէն առաջ: Ըլլայ ծանակ  
Յիշատակն իր  
Դարէ ի դար:  
Մարդը մղեց հողն ատելու,  
Արհամարհել աշխարհն իրաւ  
Սուտ ստուերի մը փոխարէն...

### ԽՄԲԵՐԳԸ

Պիտի յիշուի անունն անոր  
Հազարամէ մինչ հազարամ  
Որ ժողովուրդն իր ազատեց  
Սանդարամետէն...:

### ՍՈՒՐԲԸ

*(Ոտքի, վերացած)*  
Ինքն է, Աստուած իմ երկնաւոր...  
Աստեղակուռ ճամբէն ի վար  
Ահա կ'իջնէ:

### ԽՄԲԵՐԳԸ

Բացուին առջին դուռն ու սահման  
Երկինքներուն:  
Թագաւորն է, կ'իջնէ փառքի,  
Այցելելու ժողովուրդին...  
Ալէլուիա...

### ՍՈՒՐԲԸ

Ինքն է, ինքն է  
Տէրը երկրին, երկինքներուն,  
Երկիրն Հայոց սփոփելու:

### ՄԱՆԴԱՐԱՄԵՏԸ

Վիրապն արած է աչքն անոր,

Մի հաւատաք  
Իր տեսածին ու լսածին:  
Նոր Աստուծոյ սուտ մարգարէ  
Որ կործանէ պիտի այսպէս  
Երկիրը ձեր  
Ինչպէս հայրն իր, որ սպաննեց  
Ձեր թագաւորը բազմայաղթ,  
Խոսքովը մեծ:

### ԽՄԲԵՐԳԸ

Ան որ կուգայ, կուգայ խաղաղ  
Ձեր սիրտերուն,  
Յօղն առտուան կիյնայ ինչպէս  
Բաժակին մէջ  
Ծաղիկներուն:  
Թագաւորն է ան որ կուգայ  
Արեւներուն ու սիրտերուն:

### ՍՈՒՐԲԸ

*(Բազկատարած)*  
Տէր բարեգութ ու մարդասէր,  
Տուր մեզ տեսնել  
Աստուածութեանդ անբաւելի  
Փաստն ահաւոր.  
Քեզի դարձող ժողովուրդիդ  
Աչքին պարզէ տեսիլքը սուրբ  
Անժուժելի  
Քու պատկերին:  
Տէր բաց մեզի  
Խորհուրդն ահեղ  
Քու տեսիլքիդ:  
*(Լռութիւն: Հրեշտակներու օրհներգը)*

### ԽՄԲԵՐԳԸ

Մեծ սերն անոր  
Քան տիեզերքն է մեր վրան,  
Ու մեր ներքին:  
Ան կը գթայ մարդոց բոլոր:  
*(Լռութիւն կրկին: Խուլ կարծր ձայներ սանդարամետէն)*

### ՅԻՍՈՒՍ

*(Ամպի մը մէջէն պարզուելով)*  
Խաղաղութիւն եւ օրհնութիւն  
Իմ ծառայիս:  
Հասաւ խնդրանքդ իմ Հօր Գահուն.  
Կուգամ դնել հիմն անսասան  
Եկեղեցոյ,  
Հոն ուր դարեր մեղքին տունն էր  
Որ կը տիրէր:  
*(Ձեռքի ուռնակով կը զարնէ քարին որ կը փշրուի)*  
Ահա փշուր ժայռն է մեղքին:  
Դիր, իմ ծառաս, հիմն անսասան  
Ժայռի սրտին,  
Հայաստանեայց Եկեղեցոյ,  
Հիմը որուն ուռնակն ոսկի  
Երկինքներէն աշխարհ բերուած  
Կը հաստատէ:  
Խաղաղութիւն եւ օրհնութիւն:  
*(Ամպը կը թանձրանայ եւ կը ծածկէ Յիսուսը)*

### ԽՄԲԵՐԳԸ

Համբարձէք իշխանք զդրունս ձեր ի վեր  
Համբարձին դրունք յաւիտենից  
Եւ մտցէ թագաւոր փառաց  
Ալէլուիա, ալէլուիա:  
*(Լոյս է: Լռութիւն է: Բոլորը իջած են ծունկի: Շեփորին ձայնը կը մօտենայ: Խօսակցութիւն: Թագաւորը կը մտնէ բեմ, հետեւորդներ)*

**ԹԱԳԱԻՈՐԸ**

*(Տեսնելով սուրբը բազկատարած, աղօթքի, կը մօտենայ ու կը համբուրէ անոր ոտքի փոշին)*

Կատարուած է պատգամըդ, Հայր,  
Կայրին վրան Հայոց երկրին  
Մեհեանները պիղծ քուրմերուն,  
Քար չմնաց քարի վրայ,  
Բոցը կերաւ կուռքերն ոսկի:

**ՍՈՒՐԲԸ**

Մարդէ՛ րը:

**ԹԱԳԱԻՈՐԸ**

Եղան որ դուրս չելան շէնքէն  
Ու եփեցան կրակին մէջ.  
Եղան որ սուր ալ վերցուցին  
Վրան զօրքին:  
Բայց հալեցան  
Թելերն անոնց ոստի նման  
Կրակին դէմ:  
Հայր, պարտուած  
Է թշնամին:  
*(Ամէն կողմէ ուրախութիւն ու աղաղակ)*  
Բայց չես խօսիր Հայր,  
Հայր իմ սուրբ:

**ՍՈՒՐԲԸ**

Դուն չես գիտեր դեռ աւելին:

**ԹԱԳԱԻՈՐԸ**

Ի՞նչ է, ի՞նչ է որ չեմ գիտեր.  
Խօսէ Հայր իմ,  
Ով Հայր իմ սուրբ:

### ՍՈՒՐԲԸ

Ոսկի ուռնակն է տես, գետնին,  
Ով Թագաւոր,  
Այս ալ փշուր ժայռը որուն  
Զարկաւ վերէն  
Իջնող Արքան:

### ԹԱԳԱԻՈՐԸ

Ոսկի ուռնակ, իջնող արքա՞յ  
Չեմ հասկնար, իսուէ Հայր Սուրբ:

### ՍՈՒՐԲԸ

Ըսաւ, հիմն է հոս, սա ժայռին  
Հայաստանեայց Եկեղեցոյ:  
Ոչ դժոխքին ուժերը բիրտ  
Ոչ ալ մաշումը դարերուն  
Պիտի կրնան ազդել ուժին  
Ու ամրութեան քու տաճարին:  
Օն, զակընէր Հայաստանեայց  
Եկեղեցոյ,  
Բերէք քարը սուրբ անկիւնին  
Շինենք շէնքը  
Այնպէս հաստատ, այնպէս ամուր  
Որ դարերը գան փշրուիլ  
Անոր սեմին:  
(Սուրբը կ'իջնէ աղօթքի: Շեփոր)

### ԹԱԳԱԻՈՐԸ

Հետեւեցէք:  
(Կը ձգեն բեւը որ կ'իսալոյս է. խորքին Սուրբին դէմքը, կ'աղօթէ:  
Աղմուկ, ձայներ: Թագաւորը եւ հետեւորդները)  
Բերինք ինչ որ ուզեցիր, Հայր:  
(Շալակէն կ'առնէ վար քարը)

**ՍՈՒՐԲԸ**

*(Ոսկի ուռնակը ձեռքին, զարնելով քարին)*

**«Էջ Միաձինն ի Հօրէ**

**Եւ լոյս փառաց**

**Ընդ նմա.**

**Ձայնք հնչեցին**

**Սանդարամետք**

**Անդրնդոց»**

*(Կը դրուի առաջին քարը)*

**ՍՈՒՐԲԸ**

**Եկայք, շինեսցուք**

**Սուրբ ըզխորանն**

**Լուսոյ:**

*(ՎԱՐԱԳՈՅՐ)*

**Յ. ՕՇԱԿԱՆ**

*(ՄԻՈՆ, ԻԱ. ՏԱՐԻ, ԹԻԻ 3, ՄԱՐՏ, 1947, ԷՁ 85–89)*

ԵՐԲԵՄՆ...

Ո՛ տայր ինձ գծուխ ծխանի եւ  
գառաւօտն Նաւասարդի:

(ԳՈՂԹԱՆ ԵՐԳԵՐ)

Չեմ գիտեր ո՛ր կէ տուր, պչրուն, կոկ, **շալէի** մը մուտքին պէս նրբայարդար սա կատարին վրայ, – այս ըլլալու է տպաւորութիւնը այցորդին, երբ տաժանագին ու նոյնքան անկնիք վերելքէ մը վերջ որուն կը պակսին ամբարձումներու կապուած դասական յուզումները, մարդ ոտք կը դնէ **Պայծառակերպութեան Սարահարթին** – ինծի կայցելէ հինաւորց տաղը, հեռու, շատ հեռու մեր աշխարհին, աննաւասարդ, մանաւանդ պղտոր սա առաւօտով:

Լո՛յս: Պէտք է գործածել բառը:

Բայց՝ փոխան ոսկեգոյն, թեթեւ ու մատղաշ բանին որ անով լեցուած երկինքն է մեր ուսերուն վրայ, նման բարձունքներու, միշտ մեր երկրին մէջ, հոս զիս դիմաւորողը դեղնախառն ու հաստ փոշին է, շամանդադո՛ւմը որով շոգեւորուած կ'երեւի տարածութեան մեծ սկաւառակը, անապատներու շուրթներէն ու դաշտերուն կոնակէն, սա հողերն ի վեր: Որ կը խաղայ – չըսելու համար **գեռալը** – ծանր ու կպչուն, ոլորուն ու հեւքոտ, անխոզան արտերէն մինչեւ եգերադիր բլուրները, ողողելով միջոցը շարաւոտ ու թանձր մղձուկով մը: Ձոր վանելու համար մօտէդ ձեռք կը բանաս, ու կը ծեծես, այնքան կծու է անոր աղտը:

Տակաւին անյագուրդ ո՛ր անէծքին երաշխեպը պաշտօն ունի սքօղելու սա ամպի **վաթկան**երը, անհերթեթ որքան սիրուն, սեւայօս կամ լեվիաթանեան, ըսես՝ բռնի, աճապարանքով վար հրուած, Աստուծոյ խաղաղ «անայի» պայծառութիւններէն, պահ մը ամոքելու դարաւոր, անկանգնելի սուգը սա աշխարհին, գոր պատմութիւնը չէ կրցած թաղել, հակառակ մշտապաշտօն իր եռանդին:

Լոյս, սակայն: Հոգ չէ թէ պղտոր: Զի, առտուն նոր է որ կը շինուի Արեւելքի մեծ հնոցին ետին, Մովաբու շղթային կատարագիծէն թափելով սահանագերծ, արիւնի, շարաւի, վարդի ու գմբուխտի տարադէպ հանդէսի մը մէջ, գագաթէ գագաթ դեղին ու անգայտ ծով մը կոծելով: Լո՛յս, գոր կ'երանգեն, ինծի այնպէս կուգայ, գարշ ու գորշ մեղքեր ալ, մարդոց որդիներուն որքան սարերուն ու արտերուն շրթներէն:

\*  
\* \*

Մաքուր աւազէ ճամբան: Թեթեւ էլքով մը՝ որպէսզի հասնիս բարձրագոյն կէտին:

Ու ահա ուրիշ տող մը, անհրաւեր, նոյն ընտանութեամբ, գրուող՝ մտքիս մէջ

**«Թաբոր եւ Հերմոն յանուն քո ցնծասցեն»:**

Որմէ յետոյ, ակամայ եւ դառն ժպիտ մը:

Չեմ կրնար չհարցնել մեղապերճ ուրուականին գոր երեք հազար տարիներու թակոցը դեռ չէ տարտղնած սկզբնական իր կաղապարէն – Պաղեստինի մէջ ամէն տեղ է անոր տժգոյն ու սուր քիթը – եւ որ կը ճշդուի, արդիացած բաց մորթի մը ու դեղնաւուն մօրուքի մը տարաշխարհիկ խռովքին ալ մէջէն, իր կախարդ սանդուղովը, մանաւանդ հեշտախոյզ աշուրներուն ծակող կրակովը.

– Տեսե՛ր, բռնե՛ր ես դուն, սա գրեթէ լիբբ մերկութիւններու վրայ, երբեւիցէ՝ ցնծութիւնը գոր այդպէս կաղաղակես: ...Մշուշ:

Խեղճ, Աստուածահայր Մարգարէ: Կատաղի ու բանաստեղծ հաւասարապէս: Թաբորին եւ Հերմոնին մէջտեղ կ'եցող մը կը հասկնայ թէ ինչ ըսել է աննահանջ **տրտմութիւնը հողերուն:**

Ու կը հարցնեմ, այս անգամ կարեկցուն,

– Տառապակոծ կամ յաղթախռով արշաւներուդ ընթացքին երբ գլուխդ կը փախցնէիր նախանձէն, կամ ժողովուրդդ կը կարապետէիր դէպի նախճիրը, տրուեցա՞ւ քեզի վայրկեան մը

գոնէ զգալ խայտանքը, թռչող, գմբէթի պէս զուարթ ու սխրալի գոհունակութիւնը որով ողողուած ապրեցան, կ'ապրին մեր մոլորակին վրայ կարգ մը տեղեր. աւելի ճիշդ՝ անոնց վրայ կարգ մը ժողովուրդներ, երբ ուժին ապահովութեամբը հովանաւոր ասոնք կը յօրինեն իրենց շրջապատը, ինչպէս իրենց հոգին ալ, ստեղծագործ, արդար, ազատ զգայութիւններու հուրքին ընդմէջէն: Տարբէ՛ր, առանց տարակոյսի, ներքին աշխարհը անոնց որոնք հողերու գերութիւնը կ'անգիտանան:

Տեսն՞ո՞ւ ե, իր անյագուրդ աչքերովը, մշտածարաւ մարգարէն, այսօր իր ժողովուրդին ահաւոր ախորժակներէն գրեթէ սպառսպուռ խանձած սա վայրերուն վրայ ուրիշ բան էթէ ոչ դաժան, չոր, խստագիծ այն վանողականութիւնը, մենացող, քինախնդիր այն լքումը որով զգեստաւոր է Պաղեստինի մէջ գրեթէ բլուրի ամէն բեկոր:

Ցնծութեան փոխարէն իմ գտածս խոր, անկանգնելի այն տրտմութիւնն է որ ոճը, մթնոլորտը կուտայ Հին Կտակարանի գիրքերուն մեծ մասին: Եսակեդրոն այն այլուրութիւնը, ինքնաբաւութիւնը որ այցելուին միտքը կը վիրաւորէ երբ ասիկա կուգայ գուրգուրանքին իրարու վագող, ողջագուրող, մշտազըւարձ, խատուտիկ ծմակներու աշխարհէն: Իմ գտածը՝ Մարգարէներուն հոյակապ ծարաւն է գառներու եւ գայլի միասին ճարակող տեսիլքին որ մէկէն իր լրիւ իմաստը կը հագնի, ինքնամատոյց ու իրաւ ու կը բացատրէ Իսրայէլին ճակատագիրը: Ամէն ինքնութիւն, ինքնատպութիւն վիրաւորիչ է երբ, հոս տրուածին նման, ինքզինքը կը զլանայ:

Ու կը հարցնեն

– Ո՞վ է նետեր սա չար, կոնծած հարթութեանց երեսին այս խարանահար պալարները, աւելի տգեղ բառով մը՝ սա կոշկոռները: Մօտէն դիտուած, ամէն բլուր կոծիծներու ժայռակուռ պաստառ մըն է, քան թէ բարի անկողինը օրհնաբեր հունտերուն: Ուրիշ տեղ մը չէ՞ գտեր Աստուածորդին իր **փառքը վառելու**, ու բացեր է զայն սա կունտ, գրեթէ ճաղատ գագաթին ինչ որ երկինքն ու երկիրը «անբաւական» էին կրելու, ինչպէս կը պատկերէ մէկը մեր պարզ բայց խորունկ շարականներէն:

\*  
\* \*

Ի զուր կը փնտռեմ ճամբորդներու պատկերացնել փորձած պատկառանքը որ պատմուճանի նման պիտի պարուրէր «առանձին լեռը»: Աւերակներ, նորակառոյց տաճարը ֆրանչիսկեաններուն, յարակից շէնքեր ու պարտեզի ստուերներ: Հաստփոր, ու տգեղ քիթով միաբաններ որոնց երեսին՝ գինին կը խնդայ ու կը կարմրի: Ծառի փորձեր, կէս ճամբան մնացած:

Դեղնաւազ ճամբան կը տանի գառիթափ մը: Որմէ վար գիւղը ուրկէ անցանք, առանց տեսնելու:

Լեռան կրունկին փակած կը թուի այնքան վերէն:

Գի՛ւղ մը.

– Տառապանքը, երբեմն, մեր բառերուն, որոնք ստիպուած են հազնելու հիմնովին օտար իմաստներ: Հաւանաբար ձեր աչքին գծուի պիտի, ձայնին մեջէն, մէկը սխրալի այն պատկերներէն զոր կը յօրինեն ոսկեգոյնն ու կանանչը, ցորենն ու մեղրը, բարի բարի հասակները կամ պարոյրները ծառերուն, ու ջուրերուն արծաթ աչքերն ու ճամբաները, բոլորը մէկ իրարու հիւսուած ու մարմին դարձած քաղցր, պարզ, բացսիրտ դէմքերու թաւիշին ընդմէջէն: Ուրիշ չէ գիւղը շատ շատ տեղեր, Աստուծոյ մեծ աշխարհին մէջ:

Հո՛ւս.

– Բայց բոլորովին ուրիշ բան: Բայց՝ գարշ որքան ճիղճ ուռեցքներու քակորակոճ ու դժբախտ կարաւան, այդ գի՛ւղը, իրերահալած թնձուկ մը կեղերու որ խարաներ, կրծեր է արդէն այրեցաւեր, մոխրակերպ հողը, կոծիծոտ իր պաստառը պարտադրելով՝ այսքան **պայծառ փառքի մը** կանչուած սա թշուառութեան: Անոնք որ **Փորձութեան լեռան** շիտակ ու բիրտ ցցունքը տեսեր են Երիքովեան համապատկերին մէջ, պիտի տառապին անոր ոտքի պերճանքին վերխուժումովը իրենց միտքին վրայ:

Գի՛ւղ: Առանց շուքի մը խայտանքին – դժուար է հաւատալ այս բարատոքսին – որ ճիւղերուն գգուանքը կախէր սա գոնջ գանկերուն վերեւ – հիւղակները ցեխէ գտակներ են հոս: Առանց աղբիւրի՝ որ ոսկիէն աւելի հագուադէպ է Պաղեստինի ընդերքին մէջ ու կը վախնայ իր աչքերը բանալու հողին երեսին: Առանց պարտեզի՝ ուր տնակները, քիթ քիթի, ոզնիներու նման իրար են խածեր ու կը մնան այսպէս: Ուր խոնարհ կենդանին, առանց տոպրակի գոր այնքան շնորհով կը կրեն իրենց դունչերուն ուրիշ աշխարհի մէջ, կը նայի յուսահատ ջուրին որքան գարիին, այսինքն անոնց մտապատկերներուն, եւ պոչ իսկ չի շարժեր ճանճերը վանելու, կատարեալ բանակ, փողոցին պատկող տղոց աչքերէն հանդարտ թել բացող ու իրեն վագող...

...Ո՛ տայր ինձ զծուխ ծխանի...

\*

\* \*

Ծո՛ւխ:

– Ըսի թէ կայ: Բայց՝ միշտ աղտոտ ու դեղին փոշիին ձեւովը որ թերեւս Սահարայէն կը բխի: Ան աւելի կը բացուի գիւղէն անդին, սելի հետ շփոթ բան մը դառնալով, կալերուն մօտերը գորս ադամաթուզեր ու գօտիներ կը շրջափակեն: Կալէ ր, ոչ իսկ կլոր ըլլալու կարող: Առանց դէզերու խարտեաշ հանգոյցին: Յորեն չտեսանք երբ անցանք անոնց քովերէն: Ոչ իսկ դեղին ոսկերանգ առուն:

Ե՞զն ու եղջերուն:

– Անշուշտ: Ոսկին ու պղինձը նոյն գոյնը ունին:

Հոս թշուառ ու մութ լքո՛ւմը, խելօք ու անսիրտ տախտապարումը սա ուլիկներուն ու սա այծերուն որոնք մոռցած ըլլային վազելը, հին երգին՝ **վազելը**, ու նստէին, ծիլի տեղ իրենց ատամներու սանտրին թուղթ կամ հող կախելով: Անիծուած են այս գետինները, նոյնիսկ լեռան ոտներուն: Ձորակներու աւազն անգամ կանանչ չի տեսներ տարին տասնըմէկ ամիս: Ու գրուած է որ մարդերուն չափ տառապին

կենդանիները, իրենց «պապերուն մեղքովը», զի «հարց Աստուածը» դեռ չէ ողորուած:

.....  
Առանց բամբիռի: – Լեցուցէք լսուած մասը պատկերին:

Առանց թմբուկի: Նոյնպէս:

Առանց փողի: Նոյնպէս:

Ու, առանց ձայնի այն տաքուկ, սխրալի շարին որով հարսնետոր, բառերը երբեմն թեւ կը բանան մեր շրթունքներէն բայց, կամար կամար, լեռ ու երկինք դառնալու: Ու կըլլան սիրտ, դէմք, տառապանք կամ արբշռանք: Մեր ժողովրդական բանաստեղծութեան խոր մարդկայնութիւնը մեր երկրէն կը բխի: Այն բերանը որ կը պոռայ

**...«Մարերու հովին մեռնիմ»**

կըսէ բան մը որ անհասկնալի պիտի մնայ անապատէն յօրինուած բոլոր հոգիներուն:

Ի գո՛ւր, իմ աչքերը կը ջանան ճշդել սիւնասրահ կաթողիկէները որոնք, նման առտուներու կամ իրկուններու, իսկապէս կախարդ մատներէ կը ճարտարապետուէին իմ գիւղին վերեւ, արեւի ծովուն մէջ առկախ՝ պարիկներու արքայարան մը ինչպէս: Ծխաններուն ոսկի եղեգներէն կամբառնային անոնք, սիւները մեր ծուխերուն, բայց դեղին մարմարի համաչափ ոլորքներով, ուղիղ ու ծիրանի, տեղտեղ կաթնաւէտ, սաթ կամ մեղեսիկ: Որոնց կատարին, պարոյր առ պարոյր, «իրարու ճիտ ինկած», խաղալէն ու արիւնելէն, մեր հիւղերուն հոգիները ճամբայ կը յարդարէին իսկապէս կապոյտ ապարանքը Կապուտուորին: Ինչ երագի սեւեռում մըն էր սա պատկերը մեր մամերուն բերանին, կապոյտին Գահակալը կերպադրող:

...Շարաւի գոյնով սա միջոցն ի վեր, որ իր ներքին պառկած գիւղին չափ դժբախտ կը թուի, իմ տեսածը, սա պահուն, միշտ ու միշտ նոյն աղտոտ փոշին: Գիւղ, գիւղեր, քաղաքներ: Կանցնինք, անցանք, առանց ծխանի գարգմանակին: Առանց կրակի :

Զգա՛ց այս գրկանքը, ինքը, Աստուածորդին երբ կէլլեր բլուրէն, հայեացքը ապահովաբար դէպի ետ, դէպի սա

միակտուր թշուառութիւնը որ, այն աստէն ալ ինչպէս հիմա կալերուն մէջ պառկած ըլլալու էր ցորենին փոխան, մինչ իր ներքին աչքերուն դէմ կը հանդերձուէր տեսիլքը «պատառուող» երկինքին: Աւետարանը չի պատմեր ասիկա: Ինծի կուգայ թէ իրեն հետեւող ձկնորսներն ալ չտեսան Անոր տագնապը, երբ խորունկ կարեկցութեամբ մը թրթռուն՝ անիկա իրեն երկարող ձինասպիտակ պատմուճանը դեռ չհագած, տրտմած էր «լալու չափ», **անվայր, անճառագայթ, աներկինք** սա մարդոց անփոփոխելի տառապանքին առջեւ: Զի Աստուծոյ աչքերը արցունքն ու լոյսը նոյն կայլակին վրայ կ'առնեն ու կուտան, մանաւանդ անժառանգ ժողովուրդներու վրայ երբ իյնան:

Կը բաժնեմ իմ նայուածքը, առանց արցունքի որ շատոնց ցամքած է իմ մէջ, այնքան ահաւոր ուրիշ պատկերներու վրայ կործանած:

\*

\* \*

Դէմս, Հերմոնն է. Սաղմոսին քաղցրահնչիւն, քնարական տարազին մէջ, տարինէ՛ր, միտքիս վերեւ սլացիկ:

– Կրտսէ՛րը.

Կը փութայ ճշդել մեզ առաջնորդող ֆրանչիսկեան վանականը:

Պէտք կ'այ խօսելու արեւահար, աւելի ուղիղ՝ լեռնահար անոր մոյնքէն որ, թուիս ու արու, կը դաշնաւորուի իր տարազին հետ: Բայց իր ներկայութիւնը պատճառ է որ խորհիմ տարիներով այն կարաւանին որ այնքան դարերու վրայով սա գազաթին վրայ պահապան է մնացեր հրաշայայտ պատկերին: Հազար տարի առաջ ո՞վ էր այս երիտասարդ միաբանին տեղ խօսողը հոս բարձրացող ուխտաւորներուն:

Պարզ, դիւրահաղորդ, գրեթէ շատախօս ինծի՛ղը մարդուն որուն պատեհութիւն ըլլար տրուած գովքն հիւսելու իր անզին բայց չայցուած գանձերուն: Անոր բառերը, տաք ու արձակ, իր բերնէն չէ որ կուգան, քանի որ խօսելու տեղ, կ'ապրի

անիկա զինքը սա խաստուտիկ շէնքերուն ամայութեան դամբանող երազը: Ճնգողական կարգը երբեմն այս առատութիւնը կը հազնի արտայայտման: Ու կան այն մարդերը որոնք իրենց ձայնին մէջ կը դնեն, առանց գիտնալու, սա իրաւ, ծանր բանը իբրեւ ամիսներու պահքը, ըսել կ'ուզեմ խօսքի պահքը որ ժանգոտեր է անոնց բառերուն գահաւորակները: Խտացած, զսպումէն կրկնապատկուած ուժ մը արձակած է անոր լեզուին կապանքները: Չի կրնար լռել:

Ֆրանչիսկեանը վարակիչ յուզումի մը կը հասնի երբ մեզ կը պտտցնէ իրենց փառաւոր տաճարը: Ուրիշ խորհուրդ մը սա նորութեամբ շողշողուն շէնքը որ մեր դարուն բարձրացեր է հոս, ազնուական ֆրանսացիի մը բարեպաշտութեամբը: Չեմ նկարագրեր զայն: Բայց ձեզի կը հաղորդեմ վանականին աճապարանքը որով ան մեզի կը թուէ իր կարգին զոհաբերութիւնը, այս գագաթին վրայ Քրիստոսի պաշտամունքը կենդանի պահելու: Երկու հազար հինգ հարիւր է թիւը նահատակ միաբաններուն որոնք դարէ դար ինկան այս քարքարուտ վայրին մէջ, թշնամիին սուրովը: Բայց չհեռացան, իրենց խորհուրդովը, ֆրանչիսկեանները այս սպանդավայրէն: Քանդումի, վերականգնումի, կրկին կործանման ու կրկին ընձիւղումի հրաշախառն հէքեա թ, որ միամիտ սա պատմողին բերնէն կը ստանայ դիւցազներգական խոռվք: Ու մտածման նոյն գիծով, կը վերաշինեմ թիւը մեր կորուստներուն, սա աստուածարեալ երկրին զանազան խորշերուն: Եօթանասուն ու աւելի էր թիւը մեր վանքերուն, դարեր կանուխ, Պաղեստինի մէջ: Ու քանի անգամ եօթանասուն եղաւ թիւը այն մարդոց որոնք մեռան նոյն սուրով: Այս մտածումը խորունկ իրականութեան մը պէս կը ճնշէ սրտիս երբ կ'անցնինք աւերակի մը քովէն: – Հայկական եկեղեցիի մը կմախքը, որմէ այսօր ջնջած են վտանգաւոր հետքերը, գիր ու քանդակ, բայց չեն դպեր խորանին սկուտեղին որ կը մնայ մերկ ու անխախտ: Ֆրանչիսկեանը չի խօսիր այդ մասին: ...Հիմա իրենցն է գագաթը: Փառք եւ պատիւ Այլակերպութեան:

...

Կրտսեր Հերմոն՝նր:

Պէտք է ուշադիր ըլլալ, գտնել կրնալու համար, քաղցրահունչ պատկերին տակ, նոյն նիհար, անխնամ ու վանող դէզը տրտմութեան: Ան ալ ուրիշ բան չէ եթէ ոչ ողորմելի, զրկուած, թշուառական բլուր մը, բոլորովին նման անոնց որոնց վրայ քարէն դուրս ոչինչ կը բուսնի: Անոր փէշերը աւելի թոյլ կը բացուին դէպի դաշտը: Ոչ մէկ տանիք, սակայն: Ծառի ոչ մէկ պարոյր: Ոչ իսկ խարտեաշ կամ կանանչ շերտեր հողի: Մեզի դարձած իր կողին վրայ միագոյն, միատարր գորշութիւն: Ոչ հող ոչ ալ ժայռ: Գագաթ մը անգամ չէ կրցեր հայթայթել անճարակ լեռը: Ա՛ս է նախաստիպը «ցնձացող» հսկային: Ինձի այնպէս կուգայ թէ ան լալ անգամ չէ ունեցած, – այնքան անզգայ է այդ կոշտութիւնը իր տգեղութեան խորքին մէջ ինքնակուղպ – նոյնիսկ այն օրերուն երբ Դաւիթին բանակները վրան կը զարնէին անոր ոտքի հարթութիւններուն:

Եւ սակայն մտքիս մէջ կը լայննայ պղտոր այն խռովքը որ աւերակներէն կը բխի: Ու մինակ քաղաքները չէ որ կ'աւերուին: Երիբովի հովիտին մէջ մտնող մը կը հասկնայ թէ ինչպէս ամբողջ երկրամաս մը, օր մը հաւանաբար շէն, երկինքէն տեղացող հուրի եւ ծծումբի անձրեւի մը տակ, կը կործանի հիմնովին օրուան մը վերջին: Ու լռութիւն: Մինչեւ որ, ով գիտէ քանի հազարամեր վերջը, ճամբորդներ գան սարսափով դիտելու այդ բլուրներուն մորթազերծ պատկերը եւ փախչին, հալածուելով մահէն որ ուրուական մը չէ այլ իրողութիւն:

Ասկէ գատ, աւերուած աշխարհները կը տպաւորեն ուրիշ ալ կողմերով: Ուր որ իյնայ նայուածքդ, սա «պատմակա՛ն» վայրերուն մէջ, քեզի դարձած ատենը հետ կը բերէ նախճիրի, արիւնի, ճենճերի հոտը, համը, սլաքող ցաւը զոր դարերը չեն կրնար ամոքել: Թաբորի վրայ, ժայռի այն ցցունքին ուրկէ կը դիտենք Կրտսեր Հերմոնը, աչքիս կուգայ կարաւանը մորթուած կամ ողջ ողջ մեր ոտքի անդունդը վիժուած վանականներուն: Ու, ասոնց հետ, ստուերներն ալ անոնց որոնք իմ արիւնիս ձայնը օր մը բացին, ծաղկեցուցին սա սարահարթին վրայ ու ինձի պէս նստան սա քարի կտորին: Աւելի՛ն: Ժայռի այդ թելին

կը կարծեմ տեսնել հայ վարդապետ մը, դարեր առաջ, առտուան մաղթանքը ընելու վրայ, ուր հիմա ուրիշ մը, դարձեալ վեղարաւոր, իսժ իր աչուրներուն սուգը կը ջանայ ծածկել ու շրթները կը շարժէ թերեւս կապ մը ճարելու օր մը հող հնչած ու ալ մարած *Հայր մերին*:

(Շարունակելի)

Յ. ՕՇԱԿԱՆ

(*ՄԻՈՆ*, ԻԲ. ՏԱՐԻ, ԹԻԻ 1, ՅՈՒՆՈՒԱՐ, 1948, ԷՋ 23–27)

ԵՐԲԵՄՆ...

\*

\* \*

Նային...:

Կը հետապնդեմ մատին սլացքը:

Առանց դիտակի, ու նոյնիսկ դիտակով ճիգ է հարկաւոր, պատմական ոգեկոչումը հաշտեցնելու համար գորշատարր թնճուկին որով խարանահար կը թուի դաշտին մէջ կէտ մը:

Գտածս կծիկ մը բան է, աջ ու ձախ քաշքշուած: Գի՞ւղ մը: Անշուշտ: Ուրիշ ի՞նչ կրնան ըլլալ այս պայմաններէն ծնած կառոյցները: Միտքովս կը չափեմ հասակը: Երկու հազար տարին՝ անառարկելի ստուգութիւն: Անկէ վա՞ր: Աստուած ինք գիտէ: Չեմ զարմանար իր ապրելուն բայց կը խորհիմ նոյն ատեն որ չէ իսկ կրցած մեռնիլ, չաճումի սա անհերքելի փաստին դիմաց:

Այսքան հեռուէն դժուար ճշդել ծաւալը: Տա՞սը, յիտ՞ւն, հարի՞ւր տուն: Արեւին դեղնութիւնը կը պտտի այդ տուններուն գորշ, քակորակուտ գագաթին վրայ: Ու մահուան միակտուր պատկեր մը կ'առանձնանայ միակտուր այդ դաշտին այդ կէտին: «Մեռեալ պատանի՛ն»: Հասկնալի՞ այսօր իսկ, ծանր էր հրաշքին լուսապսակովը: Թերեւս քիչեր միայն գիտեն թէ մեռելները չեն մեռնիր, այսինքն մոմիաները կապրին: Ու թշուառական գիւղը, մօտէն դիտուած, ապահովաբար նման է այն հազարաւորներուն որոնք, հիմա ինչպէս քսան դար առաջ, կապրէին հողի երեսին, բուսակերպ, բորբոսած, քոտտ, աճելու տեղ կոնծելով, երբեմն սրբուելով կրակին կամ արիւնին մէջ բայց միշտ բուսնելով, զի ով գիտէ ինչ մեղքերու երեսէն:

Ֆրանչիսկեանը տերն է հիմա, իր մատին կարկինովը հորիզոններուն:

Ինչ ալ վայելչօրէն կը կատարէ տեղագրութիւնը, հնա-  
խօսութիւնը, եղափոխութիւնը շրջավայրին: Մեր չորս դին,  
լոյսին առատանալովը, կը պայծառանան հողի ծփանքները,  
թեթեւ կամ հոծ շուքերու խատուտիկ պաստառ մը անցընելով  
լերկութիւններուն: Հեռաստանի գիծերը, նուագումները, ամրա-  
ցումները իրենց կշիռը կը գտնեն: Կան լեռներ որոնք իրապէս  
կը լեռնանան, վանելով մշուշին դարը իրենց կողերէն: Դաշտին  
խոնարհումը, ուրուայնացումը քիչիկ մը կը կարմրին, մինչ  
պերճախօս ֆրանչիսկեանը աննահանջ ջերմութեամբ մը,  
հորիզոնի իւրաքանչիւր բեկումին, աղեղին համար կը ճարէ  
պատմութիւն, աւանդութիւն, խորհուրդ...:

\*

\* \*

– Մեծ Հերմոն՝նր:

Կը դառնամ անխուսափելի մատին աղեղին:

Սուրիական Հսկան: Զոր ամպերը կուլ էին տուած քիչ  
առաջ եւ որ հիմա կը ծնի:

Մեծվայելուչ, թելադրող բան մը կայ ուրուատիպ այն  
ոճին մէջ որով լեռները իրենք զիրենք կը ճարտարապետեն, ձեր  
աչքին առջեւ:

Թաբորին 5-600 մէթրին փոխարէն (ճիշդ թիւը 560) մեծ  
Հերմոնին 2750 մէթր ցցուածքը, այդքան հեռուէն, դեռ կը մնայ  
տպաւորիչ: Զայն պարածածկող մշուշը պատռտուած է շատ մը  
տեղերէ նոյն ստեն: Ուրուացողը խառնակ դրութիւն մըն է հողի  
անհեթեթ փերթերու, բազմաձեւ, անկիւնոտ, փշրագին, բոլորն  
ալ իրարմէ անկախ, թաւալելով, իրար վանելով, իրարու  
վերածուելու համար, տարերային, հինաւուրց բախումէ մը  
վերջ: Տարօրինակ սա աշխարհածնութիւնը: Բայց ահա ո՛ճը,  
կա ըզը: Անյարիր սա ստեղծագործութիւնը փոխուած է ուռած,  
դէպի ուսերը նեղցող վերելքի մը գոր մշուշին տիտանեան  
խանձարուրը կը ջանայ ամրապինդ պահել բայց կը բզկտուի,  
մինչ մեծ, թանձր, ամբողջ կոն մը, ան ալ ամրապինդ ու

խորանիստ, կը ձեւէ արդէն իր հասակը, լրիւ, բամպակի կիկլոպէան դէզերու նման նետելով մշուշը իր իրանն ի վար: Հիմա, անոր խարիսխը լայնօրէն ընկղմած կը մնայ ձիւնի շքեղ ծովուն մէջ որ Օգոստոսի սա առտուան նուէրն է իրեն: Ու, խիստ արեւին տակ, որ զգետնած է ամպերը երկինքէն, մշուշը, տարօրէն ճերմկած, **«որպէս թափիչք երկրի ոչ կարեն այնպէս սպիտակացուցանել»**, կը նահանջէ, գալարուն, յօրանջելով: Կարմիրով ու կաթով շաղուած սա պայծառութեան վերել, լերան ազատուած կուրծքը կամբողջացնէ ինքզինքը, հետհետէ մշուշէն կորզելով կղզեակներ, բոցերիզ ու խարտեաշ, վառող ու հալող, ու **վերանորոգ**: Այսպէս է որ կը շինուի սա լոյսի հանդէսը, այսինքն՝ գիրքերու մէջ այնքան պերճութեամբ քնարերգուած **արշալոյսը**: Բարեբախտաբար՝ կը պակսին հօտաղն ու թռչունը, անխուսափելի աքաղաղը եւ բառաչող անասունները:

Փառք մը ամբողջ, անդունդներէ յառնող. ծարաւը երկրին, ասոր թելարձակո մը թերեւս դէպի Անհունը գոր չեն կրցած մոռնալ «ստորինները»: Տեղեր կան որոնք մեր շուրջը ամէն ինչ խորութեան կը վերածեն: Ուրիշներ՝ ուր ծաւալի զգայութիւնը կեղծուի մեծ դիրութեամբ եւ մեզ կազմող տարրերը կը լուծուին անդրագոյն իրենց միութիւններուն: Բայց կան ալ տեղեր ուրկէ կը պարզուի մեր գոյգ աչքերուն առջեւ երկինքին **սանդուխը**, բանաստեղծին **«աստղէ»** սանդուխը, ոչ իբր փոխաբերութիւն, այլ իրական պատկեր: Ինչ ըղձագին աճապարանքով մը պիտի թափ տայինք հողերուն փոշին, երկրին կապուած գարշանքները, մեր ոտքերը դնելու համար երկինք հասնող այդ սանդուխին աչքերուն:

\*

\* \*

Տիբերիոյ ծո՛վը:

Փնտռուած բայց անգոյ տեսի՛լքը:

Գիրքերեն գատ, ակնատեսի տպաւորութիւններ այդ լիճը կը շինեն իմ մէջ, շատ հեռու գրեթէ տղու օրերէս: **Մահտեսի** մըն էր այդ պատկերին հեղինակը, հարիւրներու մեջէն որոնք ժամբակի աղբիւրին առջեւ իրենց թելերը սօթած, լուացուելու կարգը պահելու ձեւին տակ, հեշտութեամբ ու փառքով ցոյցի կը հանէին գոց կանանչ **հաճիները**, բազուկներու մորթին վրայ, աննահանջ ու խորհրդաւոր: Ի՛նչ անձագին ակնարկով մը կը հետեւէինք, մենք տղաքս, այդ պատկերներուն – խաչեր, պարտեզ, բլուր, լիճ: Ան որուն բազուկին վրայ – ա՛ջը – Գալիլիոյ ծովը կը կլորնար հաւկթածէ, զայն մեզի նկարագրած ատենը, թեթեւ արհամարհանք մը կը թափէր միւս լուսաղբարներուն որոնք չէին կրցած Սուրբ Ծովը մտնել: Փառաւոր ծերունին քիչիկ մըն ալ բանաստեղծ ըլլալու էր քանի որ իր պատկերացումը կը նիւթացնէր, առատ գիծեր առնելով միւս, մեր **ծովէն** որ գեղէն կէս ժամ վար, ոսկի արտերու մսուրքի մը մէջ, կը պառկէր հանդարտ, Սուրբ Ընդստակէս հայրապետին արօրովը իր հունին, անկողնին մտած, ալ չկոխկոտելու խոստում ալ տալով ափնեայ պարտեզները: Այն օրէն ասդին ջուրը չէր անցներ իր սահմանը: Ու Նիկիոյ լիճին վրայ քալող հայրապետին մեծ ուսուցիչը:

**«Կուգա՛մ թէ տանիս զիս Գեննէսարեթ՝**

**Ծովակին չըքնաղ ափերուն վրայ,**

**Ուր անուշ հովին հետ կը թըրթըռայ**

**Արձագանգ մը միշտ՝ անջինջ բառերէդ»:**

Կշռական ու մետաղ սա տողերուն խորը քանդակուած պատկերն ալ, զուսպ բայց խոր, քանի քանի անգամներ, աշխատած էր իմ մտքիս թելադրել անմոռանալի, կապտաւուն այդ «գոհար»ը, նետուած այդ ամայութեանց մէջ, զմրուխտ մը ինչպէս, աւագներուն ծոցը:

Չտեսայ պատմական ծովը, ինչպէս պէտք է տեսնուին ափերը, ջուրին լոյծ ոսկին, բացաստանի կաթնահեղեղ սաւանները ու հեռացող լեռնակողերուն նուագումն ու երկնայնացումը – պատկերնե՛ր, բոլորն ալ կապ այդ գիծէ զգայութիւններու, ընթերցումներու եւ իմացական յօրինումներու:

Որոնք աչքերուդ դեմ բլուրները կապուտիկ շղարշով կը հարսնետորեն: Ոտքերուդ տակ դեղին, փրփրոտ աւազը կը փռեն: Ու ձուկի, ձկնորսի, ծաղկի ու հովի, անիրական երանութեան եւ սրտայոյզ ընտանութեան անկարելի խառնուրդ մը «կը հանգուցեն» ջիղերուդ: Վերջնական ու անջինջ: Մարդոց դէմքը կը տժգունի մեր մէջ: Յուզումները, փոշետը, կը դալկանան: Անմահ է կտաւը ջուրին ուր, առտու մը տեսար **«ամպերուն հրդեհը», «արեւին ոսկին», «աղամանդ մոխիրը»** ալ չդարձող պատանութեանը:

...Այսքան վերէն իմ աչքերուն պարզուածը՝ կտոր մը ապակի է եղջերաձէ, դասական բայց հոս վաւերատիպ նմանութիւն: Հայելի, որմէ մանաւանդ ոսկեգոյն եզերքը երեւար:

Մի սպասէք որ բռնկած ջուրերու հանդէս մը պատմեմ ձեզի: Փոքրադիր այդ կոնքին վերէն բան մը կը շողայ, կը կոտրի, կը փախչտի բայց բաց դալուկ կամարին ներքեւ կը վերածուի միշտ նոյն դեղին տրտմութեան, հեռուէն քիչիկ մը աւելի աղօտավառ: Կը խորհիմ թէ կրակներու մէջ «թաւալ թաւալ», դէպի ափ դիմելու են անոր «մկանունքներ»ը, գործածելու համար դասական փոխաբերութիւնը: Ու միւս պատկերը.

**...Վիհերու մէջ ուր լիճեր կը քընանան մենակեաց  
Աստղերը սոսկ կը ծաղկին:**

Ու աւելի ն:

Լեռներու ոտքին պատահմամբ ձգուած սա եղջերաձէ ապակին ինչո՞ւ իմ մէջ կ'արձակէ իր կապերէն խուլ ու խոր այն բեկումը, թախծագին ընկրկումը ներկայէն, որոնց յաճախանքէն դժուար կազատի այցելուն աւետառատ սա երկրին մէջ երբ հանգրուանէ հանգրուան կը պտտոցնէ յոգնած իր ջիղերը, պատրանաթափ իր ուղեղը ու չունի երկինք մը՝ իր սիրտին տաղաւար: Աւելի ն: Իրենց կործանած երկրին սուզը իրենց հետ ընդքարշողնէ՞ ըն են միայն որ այսպէս կը զգան անհուն սա սգաստանին մէջ որ Պաղեստինն է, իմացապաշտ միտքի մը համար: Ինչպէ՞ս կը տրտմին այն միւսները որոնք, հեռաւոր Արեւմուտքներէն եկած են հոս, իրենց գեղակառոյց ուստայն-

ներուն այլապէս անդարման, ոսկեգօծ բայց որդնակեր երջանկութիւնը մարդկայնացնելու: Ո՛վ գիտէ:

Չտեսայ Գալիլիոյ ծովը: Բայց տեսայ «մեռեալը»:

Չեմ գիտեր ինչու պէտք կը զգամ աւելցնելու

– Զուր տեղը չէ որ Պաղեստինի մէջ **ծովերը կը մեռնին**, կամ՝ **մեռած կ'ապրին**:

(Շարունակելի)

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, ԻԲ. ՏԱՐԻ, ԹԻԻ 2, ՓԵՏՐՈՒԱՐ, 1948, ԷՁ 66–68)

ԵՐԲԵՄՆ...

\*

\* \*

Ազատած ենք վերջապես մատին կարկինէն:

Մենք մեզի:

Տղաք, ժառանգաւորներ, կը վազվզեն, անյագուրգ, մշտակայտառ ընկալչութեամբը իրենց պարման, ժանգագերծ զգայարանքներուն:

Ոմանք, սակայն, յանկարծական թափով մը, կը մերկանան իրենց տղու թարմ անփութութենէն երբ, լատինական շքեղ տաճարը ետեւ ձգելէ վերջ, կուղղուին աւերակին, որ հայկական վաղնջաւոր եկեղեցիի մը կմախքը կը հանէ անոնց հոգիին ու մարմինին աչքերուն:

Առանց որ զգան ատիկա, անոնց դէմքին խաղաղ տրտմութիւնը կը փոխուի ծանր բեկումի, մինչ չմատնուելու ճիգ մը տպաւորուելու լրջութիւն մը կը կեցնէ անոնց եռանդը: Ճիշդ է որ իրենց ցեղին ողբերգութիւնը, նեսոսիան պատմուճանի մը նման, պիտի հետեւի իրենց ուր որ ըլլան: Ու պիտի չնմանին իրենց տարեկիցներուն, ուրիշ ազգերէ: Բոլորն ալ, մեր ժողովորդին խոնարհագոյն խաւերէն, անոր դժբախտ բայց հաստատ ալ տուրքերուն մասնատուփերը իբրեւ, կը խոնարհեն իրենց նայուածքը, վախնալով խռովել պապերուն սուզը ու կը փսփսան: Ու անոնք ինծի կը թուին յուզիչ խլեակներ, դարձ ի դար պատռտուած բայց միշտ ալ կարանուած երազին որուն սրտառուչ գեղեցկութիւնը որքան մեծութիւնը Պաղեստին այցելող մը պիտի զգայ աւելի հեշտութեամբ: Կ'աղօթէ՞ն թէ ականջ կուտան արիւնտ դժոխքին որ իրենց հոգիներուն մէջ կը յառնէ սա պատերուն լուռ վկայութենէն: Իրենց տարիքին, առանց աւերակի մը մէջ ծունկի գալու ես կրէր եմ այդ դժոխքը իմ հոգիիս մէջ, ամէն անգամ, երբ թշնամիին գնդակին տակ ինկած

մեր մեկ գոհը գտեր եմ աչքերը բա՛ց, պատգամի մը պես, իր արիւնին մութ ծիրանին հագած երկնցեր: Ան ալ լուռ վկա՛ն՝ չըսուելիք բաներու: Կըսեն թէ տրտում է հայ գրականութիւնը: Ի՛նչ կուզէին որ պատմէին մեր տղաքը: Ու, մի մոռնաք որ մեծերուն տառապանքը, կեանքին կռանովը ի վերջոյ ոճի մը կը յանգի: Պարմանները, իրենց զգայարանքներուն նորութեամբը մեծերէն շատ աւելի խոր կ'առնեն սակայն անիրաւութիւնը սա աշխարհին: Ու այս անհամեմատութիւնն է որ աւելի յուզիչ կընէ տղոց արցունքը:

Չեն լար: Տեսայ որ ոմանք կ'աղօթէին: Ուրիշներ, իրենց գլուխը ավերուն յանձնած, կը նային իրենց ներսը, թերեւս վերստին ոտքի հանելու համար կարաւանը իրենց նախնիքներուն որոնք աշխարհ մը արգելք ընդոտնելով հեռաւոր Հիւսիսներէն հոս են **քաշուեր**, Քրիստոսի երկիրը ու ալ չեն դարձեր: Դարեր առաջ սա ժօռատ պատերուն վրայ թերեւս կը կանգնէր տաճար մը, նման այն հազարներուն որոնք հայրենի ծմակներուն, գողտրիկ շուքերուն ու անապակ աղբիւրներուն մշտապաշտօն ըղձաւորութիւնը **«կը վերառաքէին»**, հիմա կործանած կամ թանգարանի վերածուած: Դարեր առաջ, սա քաղցրաձայն տղուն նստած քարին տեղը, ուրիշներ, անոնք ալ տղայ, Թաքորին **«երկնահաճոյ»** կատարէն իրենց շարականները կը մրմնջէին դէպի գահոյքը Ամենակալին ու երկինքի պարտէզներուն մէջ, մարմնաւորէն ալ ազատագրուած իրենց նախնեացը կարաւանը կողողէին քաղցրութեամբ ու սխրանքով:

Տղոցը քովն է անոնց առաջնորդը, որուն վեղարը սեւ պայծառութեամբ մը կը շողայ բարկացած արեւին տակ: Ան ալ տրտում է, թերեւս այցուելով ստուերէն հին վարդապետներուն որոնք սա խորանին վրայ – սեղանաքարը կանգուն է հիմա – իրենց հեռու ժողովուրդին «մեղաց քաւութեան» եւ «հոգւոցն փրկութեան» համար, ամենօրեայ Սուրբ Պատարագ կը մատուցանէին: Ինչպէս կընեն արդէն աւագ սրբավայրերու մէջ իրենց յաջորդները:

Ձեռքին մանրադիր ակտարանը կը թուի դողալ, մինչ խաժ իր աչքերը չեն ուզեր նայիլ: Հով մը կ'անցնի թեթեւ մը շարժելով «բոց առած», խարտեաշ մօրուքը: Լուռ պաշտամունք: Որմէ վերջ տղաք կը բոլորեն զինքը: Կը խօսի կամաց, ու կը բացատրէ:

\*

\* \*

Արեւը ալ պայծառ է մեր վրայ:

Ամպի երկու կտոր վար կ'իջնեն, ու անոնք ձեւը ունին պատմութեանու մարմիններու:

Թեթեցող, զովագին հովը քիչիկ մը փարատած է դաշտէն վեր հրուած ճնշումը փոշեխառն լոյսին: Ու Այլակերպութեան լեռը կը շարունակէ խստանալ, տրամիլ:

Բացատէ մը, գորշ ու տժգոյն տանիքը յունական վանքին, որ գագաթէն վանուած, գառիթափ նայող խորշով մը ստիպուած է գոհանալ:

Հերմոնները վերածուած են հասարակ հողակոյտերու:

Գալիլիոյ ծովէն երեւցածը միշտ նոյն կտորը եղջերաձեւ ապակիի:

Ու մեր ոտքերուն՝ դաշտը փոշեխառն, ուսէ նետուած վարշամակ:

...Շուք կը փնտռեմ:

Աղտոտ է, հակառակ իր հոծութեան, ինչ որ շէնքերը կուտան:

Հոս ու հոն ծառեր, – միշտ փորձ սակայն – որոնց կտշուլ ճիւղերէն գետին ինկած դեղնորակ սեւը տաք է տարօրէն: Ըսես արեւէն գոյնը միայն կ'առնեն, կրակը ակելի հեշտութեամբ կործելու մեր գլխուն:

Առանձնանալու խուլ, խոր ստիպում մը:

Կը քաշուիմ պարպուած ակերակը դէպի:

Մեղմ են իմ քայլերը:

Ու մե՛ղմ՝ անոնց անձայն արձագանգն ալ պատմութիւնն  
ի վար, դարերն ի վար:

Ինձի հետ են իմ պապերը:

Ինձի հետ՝ Գալիլիացի ձկնորսները, որոնք քանի մը  
հազար տարի առաջ, նման ցորեկի մը, շուք փնտռեցին սա  
տեղերուն ու չգտան: Կը հարցնեմ ալ

– Ինչո՞վ շինէիք պիտի ձեր տաղաւարները, անսաղարթ  
սա տեղին վրայ:

Ու կը բուսնին, նոյն ակօսէն՝ լճափը, սէզերը, Վարդա-  
պետը ու հազարներուն ամբոխը: Կը քալեմ սակայն:

\*

\* \*

Մինակ, բոլորովին, իմ պապերուս աւերակին մէջ:

Արեւը ծանր սուզ է հիմա, ինչպէս դեղին պատանք ու  
խղղող տաքութիւն, պատերն ի վար հսկայ եկեղեցիին: Ինչպէս  
թրթռագին, անապակ շղարշ մեր մատուտին ոսկորներուն: Ու  
կը հեւայ ոսկեգոյն իր ցաւը, կեցնելով զիս իմ աչքերուս  
կարկինին խորը:

Գրեթէ ծնրադիր, խորանին առջեւ, բայց չկտորելով  
ծունկերս որոնց մոռցեր եմ տեղը: Գորշ կռանիթէն որ սեղանն է  
հոս, բաներ մը կը շողան, առանց ըլլալու: Ու ինձի կուգայ զգալ  
կանչը դժբախտ այս սեղանին, ահաւոր իր սպասումէն  
թելադրուած, նման մէկուն որուն ըլլար բռնուած լեզուն բայց  
աչքերը բացատրել ուզէին ու չկրնային: Տարօրէն ճիշդ է մեր  
ժողովուրդը երբ քարերն ալ բառի կը հանէ:

Ճերմակ փռոց մը, մանր խաչեր, քանի մը աման ծաղիկ,  
երկու ոտք մոմ ու սկիհ մը բաւ պիտի գային որպէսզի սա  
քարերը ելլէին, թօթուելով, իրենց սա ծանր, դեղին պատանք-  
ներէն, բերէին իրարու իրենց ոսկորները ու կազմէին գոհա-  
րատուփի մը պէս գողտրիկ եկեղեցին որ օր մը վառած ըլլալու  
էր հոս իր կաթողիկէն: Վստահ եմ թէ խաժաշուի վարդապետը

պիտի չուզէր աւելին: Տղաքը առջին ձգած, պիտի փութար սուրբ խորհուրդին:

**...«Խորհուրդ խորին, անհաս անսկիզբն»:**

Ո՞վ է որ կէրգէ:

Լուռ է չորս դիւ: Ծալլեցին ձայնին կախարդ կտաւը ու տարին:

Մողէս մը, ուլունքներու պէս փայլուն իր աչուկները կը վառէ արեւէն ու կը նայի:

Նստեր եմ: Թոյլ բան մը կ'անցնի գլուխէս դէպի հող, պապերուս ճամբով:

Զախջախուած սինի մը սլաքը, գարգմանակի պէս, իր շուքովը կը պատսպարէ գլուխս: Այդ նիհար զովութիւնը պատճառ է որ հասկնամ Նինուէ դրկուած մարգարէին սուգը, չորցող դղմենիէն, որուն ցաւը անբացատրելի էր ինձի, իմ տղայ օրերուս, երբ դդումները չարչարած պահուս, կայցուէի ծովակուլ մարգարէին ուրուականէն, գլխիկը դրած այդ խեղճ հովահարներուն պատսպարանքին, յիմարի պէս, չկրնալով սօսի մը, կաղնի մը, առ նուագն ձիթենի մը կոթողել, ուզած ջուրի կուշտին, որպէսզի փռէր իր մարմինը անոնց իւղոտ, գեր ստուերներուն:

Ձեռքերս կը կապեն ճակատս:

Պատէն անդին, դուրսի մեծ ճամբուն վրայ տղաք կուգան ու կէրթան...

**«Լերինք ամենայն, այսօր ցնծասցեն**

**Ընդ մեծապայծառ փառսըն Սեպուհոյ**

**Գերագանց լերինն...»**

Զայն արտաբերող տղուն շրթները կը կասկածի՞ն թէ ամբողջ պատմութիւն մը կը թափեն վրաս: Ամբողջ աշխարհ մը կը ճարտարապետեն, այնքան արագ ու կատարեալ, որքան կըլլան մեր երագներուն մէջ, բաց թէ գոց աչքով:

Երբեմն բառերը ունին այդ ուժը:

\*

\* \*

.....  
Բա՞ց թե՛ գոց են աչքերս, չեմ կրնար ճշդել:

Գիտեմ միայն թե՛ Այլակերպութեան լեռան վրայ, արեւին տակ սպասումէն տրտնջող ձկնորսներուն հետ դադրած եմ խօսել: Իրենց Վարդապետին վրայ միամիտ զմայլումէն դուրս քիչ բան ունին ինծի պատմելու: Տարտամօրէն կը զգամ թե՛ դեռ չեն լեցուած այն Ոգիով որ իրենց խեղճուկ անձնատրութիւնները պիտի հանդերձէր ապագայ իրենց ապշեցուցիչ դերին: Ամպ կայ անշուշտ, ու նման՝ Մարկոսեան **Քրիստոնէական**ին մէջ ինծի տրուած պատկերին, ուրկէ պիտի արձակուին Իսրայէլին գոյգ մեծ մարգարէները: Պէտք է աւելցնեմ որ հոս, այսինքն Պաղեստինի մէջ, անունները քիչ անգամ իրաւ են: Ատոր համար է որ մարդ Նաբաւին մօտէն անցած պահուն չի կրնար տեսնել գերեզման փնտռող մեծ հովիւր, գոր Վինէիի քերթուածը կը յօրինէ... թուղթի վրայ: Ու ասոր համար զօրաւոր է իմ մէջ ըղձանքը, սանկ քիչիկ մը հեռուէն տեսնելու Թագաւորութեանց հօր մարգարէն, հրեղէն իր կառքը քշելով դէպի սա հողակոշտը գոր այնքան միամիտ հպարտութեամբ մը Թաբոր կ'անուանեն, ու թափելու իր անէծքները նոյն մարդոց գլխուն որոնց մէկ մազն իսկ չէ փոխուած, այսքան հազար տարի է ահա:

Վարդապե՞տը:

– Ան ալ չի կայ: Բայց վայրը լեցուն է անոր բացակայութեամբ: Ու հեղ մըն ալ կը շինուի իմ մէջ Այլակերպութեան հրաշքը, հակառակ իմ կամքիս: Ձկնորսներէն ան որ խոշոր կզակ ունի, պատռտուած շրթունք ու շատ ծերունի հայր մը թերեւս հոգեւարք ալ – ճիշդ ինչպէս էր պարագան Նիկիոյ լիճին, ձկնորս Սիմոնին համար, գոր արդար ալ կը կոչէինք, ձուկ – խաշածը – բաշխելու իր խղճմտութիւնը վարձատրելով – ինծի կուգայ թե՛ բարձրացած է քարի մը խեփորին ու ձեռքը աչքերուն հովանի ըրած, կը քննէ հորիզոնը, լճակին ուղղութեամբ, բերնէն կէս կախ հրամանը ուռկանները ջուր նետելու:

Ներկային ու անցեալին սա իրերախառնումը կը տեսէ քիչ մըն ալ, մինչեւ որ յաղթուին երկուքն ալ ուրիշ բանի մը որ ոչ

հրեաներուն պատմութիւնն է, ոչ ալ կրակէն խաշած սա թշուառ սարը: Աւելի հեռու: Ու աւելի բարձր:

...Խաղաղ, ոսկեջուր լոյս մը որ վերածած է տեղը ուր ծնրադրեր եմ, դարաստափի մը: Անկէ վեր, լեռը կը դիզուի, յատակէն կանանչ, հետզհետէ մաքրափայլ, ըլլալու համար անհուն կանանչութիւն մը որ ճերմակ գոակ ըլլար դրած: Ճիւղեր, ծառերէ, քարերէ, անոնք ալ ոսկեգոյն, մերթ ալ մութ ճերմակ որոնք այդ հսկայութիւնը կանանչին ձեւաւորէին, ոճի տանէին: ...Խոտ է գետինը, մազի պէս բարակ խաւա՛րծը հայրենի լեռներուն: Անկէ վար, խոնարհումը բլուրին, բոլոր բլուրներուն, մեղմ անկումով, հետզհետէ պարզուելու համար, կազմելով դաշտագետնային տարածութիւն մը, խարտեաշ ու գմբուխտ, ուր արտերը յամպարեայ քառակուսիներու կը նմանին, երանգներու անհուն պէսպիսութեամբ մը, կախարդական կտաւի մը վրայ բանուած: ...Հայոց աշխա՛րհը: Ու անոր մէջտեղէն գոց կապոյտ երիզ մը, հարիւրաւոր ոլորքներով որոնց իւրաքանչիւրին կիսաղեղին՝ հանգոյցը մեր գեղերուն, բոլորն ալ հովանոցին տակ հսկայական սօսիներուն, մինչ վճիտ լոյս մը անոնց տերեւներուն աստղերը կը վառէ ու կը մարէ փոխնիփոխ: Հայրենի գետի ափունքին մարդեր որոնց համրանքը չի կայ

**«Որպէս գաւազ առ ափն ծովու»:**

Խաղաղ, գոհ, լուրջ, բարի դեմքեր, այդ մարդերը, ինծի նման ու աննման: Անոնք կը նային մեր տրտմութեամբը բայց չունին մեր ողբերգութիւնը: Ոմանք ձիերու վրայ աղեղները ուսընդանութ, խրոխտ ու անհամբոյր, ամբոխին վրայ իրենց նայուածքը պտտցնելով նման ամէն դարերու իշխանաւորներուն: Ուրիշներ որոնք լարեր են վրանները ու անոնց մուտքին իրենց սպասումը կընեն անանուն օրհնութեան զոր զգաստութեանց Ոսկի Մայրը պիտի բերէ վերերէն, լեռան սիրտէն հանելով կախարդական բաժակը մարդերու երջանկութեան, որ տարին հեղ մը, Նաւասարդի առտուն կը պատռէ անհուն կուրծքը լեռներու լեռան ու կը բաշխուի ամէնուն: ...Ծերեր, փարթամ մօրուքներով, առանց գաւազանի, քիչ մը

թխացած ու թեփոտ իրենց մորթը շփշփելով կուշտ մարդոց հանդարտութեամբ, եւ որոնց ճակտին տակ մահը հասունցած խարան մը ինչպէս, կը բաբախէ յստակ շիջումով: Կիներ, պարզ: Ժպտագին: Անուշ: Տարօրէն բաց մորթերով ուր բալն ու ոսկին անիմանալի դաշնաւորումով մը հիւսուած ըլլային դանդաղ ձիւնին ու դեղձի դալուկին: Չաւակներու ողկոյզի մը մէջ, բոլորն ալ փթինազարդ սարալանջային ծաղիկներու քնքշութեամբբ: Ու պարմաններ որոնց սաթէ ու յամպարէ մկանները կը համբուրուին կանանչէն ու փրփուրէն: Ու պարմանուհիներ, վարդերով պսակաւոր, բեհեզեայ երազի նման, որոնք կը պտտին, կը խօսին, կը խնդան, ջուր կը նետեն տողոց աչքերուն, մարելու համար ասոնց կրակը ու չեն վախնար...: Ու հարսներ, ոսկիներու շարոցին մէջէն կրկնապէս ոսկիացած:

Ու հազարներ, այսպէս: Ջգաստութեանց Մա՛յրը, որ ձգած իր տաճարին գահոյքը, էլեր է պտոյտի զաւկըներուն մէջ, աշխարհախումբ սա հանդէսին:

Գիտեմ որ Նաւասարդի առաւօտն է: Ու կը տեսնեմ բանակը վրաններուն, կոկոն կոկոն, ջուրի երկու եզրերը շուշանոդ: Ծուխերը կը շինեն իրենց սիւները: Ու վին ու բամբիռ: Ու փող ու թմբուկ: Ու անպատում քաղցրութիւն՝ սիրտերը միսերուն ներքեւ: Ու աղանի: Ու տատրակ: Ու գետին մէջ ծաղկող մարմինները մեր երիտասարդութեան...:

Ու Ոսկիամայր Աստուածուհին իր ուսերէն թափ կուտայ սրբազան թռչուններուն, մինչ իր ձեռքէն բաժակը իր աներեւոյթ բարիքը կը զեղու, անհատնում ճառագայթումով, դէպի բոլոր անկիւնները հայոց աշխարհին...:

.....

\*  
\* \*

Տղայ մը, կը դպի ուսիս:

Վեր կանոնեմ գլուխս: Տեսիլքը թռած է: Շրջավայրը, բարկ լոյսին մեջ, ինքն իր վրայ կը խանձի: Օրը յառաջացած է ու աւագը պատերուն երեսէն կը շողայ:

Կելլեմ ոտքի:

Ամբողջ Թաբորը թշուառ տրտմութիւն է աչքիս:

Պիտի իջնենք:

Որքան պիտի ուզէի որ Աստուածորդին իր փառքին համար եղած ըլլար քիչ մը աւելի բծախնդիր ու ընտրած իրեն վայլող գագաթ մը, նման անոր գոր քիչ առաջ աչքիս առջեւ բռնած էր իմ տեսիլքը:

Թաբո՞ր ու Հերմո՞ն:

– Արագած ու Արարատ:

Ու շրթներս կը գոցուին

**«Ո՛ տայր ինձ գծուխ ծխանի**

**Եւ գառաւօտն Նաւասարդի»:**

Երբեմն դարերով կը մտածեն մարդիկ, վայրկեանով ըսելու համար այդ մտածումը:

(Վերջ)

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, ԻԲ. ՏԱՐԻ, ԹԻԻ 3, ՄԱՐՏ, 1948, ԷՋ 95–98)

ՀԱՆԳԻՍ  
ՅԱԿՈՒՐ ՕՇԱԿԱՆԻ  
1883 – 1948

Խորունկ կսկիծով եւ անմխիթօար սուգով կոողբանք անակընկալ մահը բոլորիս սիրելի եւ մեծանուն գրագէտ Յակոբ Օշականի, որ տեղի ունեցաւ 18 Փետր. 1948 Հալէպի մէջ: Հանգուցեալը իր մահէն շաբաթներ առաջ ընդունած էր հրաւերը Նորին Ս. Օծուօին Գարեգին Կաթողիկոսի Պէյրութ երթալու, հանգուցեալին կողմէ Նորին Վեհափառութեան կեանքին եւ գործին նուիրուած հատորի մասին, որուն ձեռագիրը Վեհափառին էր դրկուած, վերջնական կարգադրութիւններ ընելու եւ այդ առիթով իր յապաղած Յոբելեանը Պէյրութի մէջ եւս հանդիսաւորելու համար: Առիթէն օգտուելով հանգուցեալը ուզեր էր Հալէպ երթալ ողջունելու համար իր սրտի եւ գրչի բարեկամները, եւ հոն հակառակ իրեն ընծայուած սիրոյն եւ խնամքին, տարիներէ ի վեր զինք հետապնդող մահը կը հասներ տալու իր ճակատագրական հարուածը: Կորուստը որ կը հարուածէ Հայ Գրականութիւնը աւելի քան աղէտ մըն է. վասնզի Օշական կիյնայ դժբախտաբար իր գործի կէս ճամբուն, իր ետին ձգած բեղմնաւոր ու լուսաւոր ակօս մը, որ ահա կընդհատուի այնքան անակնկալ եւ վաղահաս կերպով:

Կողբանք ազգովին իր մահուան մէջ, կորուստը մեծ գրագէտի մը՝ որ տարիներ շարունակ ջանաց եւ նիւթեց գործ մը՝ որուն ամբողջական թափանցումը չկրցին ընել իր եւ իրեն յաջորդող սերունդները:

Կողբանք իր մահով մեր գրականութեան համադրական տեսանող հմուտը, ու մեծ կշռադատը, եւ անփոխարինելի այն արժէքները որ իր հետ գերեզման իջան: Եթէ Օշականի կեանքը կարելի է քանի մը էջերով պատմել, իր պատկառելի եւ բազմերես գործը կը մնայ տակաւին անվերածելի: Իբրեւ տաղանդաշատ վիպող անիկա մեր գրականութեան բերաւ ծաւալի եւ որակի տակաւին չգերազանցուած յաւելումներ: Իր վիպական

գործը թեև անաւարտ՝ բաւ է սակայն զինք ընելու մեր գրականութեան տիրական դէմքը: Անոր երազը եղաւ փրկել մեր ժողովուրդին մնացածը: Հայ գիւղը, հայ քաղաքը յատակը կը կազմեն այդ վէպին:

Իբրև թատերագիր Օշական մեր անցեալէն եւ մեր ողբերգութենէն ու ժամանակէն առած իր բոլոր նիւթերը մշակած է մեր գրականութեան նման չափանիշներէն շատ աւելի բարձր եւ խոր արժէքով: Օշական փորձած է մեր գրականութեան գրեթէ բոլոր սեռերը, եւ բոլորին մէջ մեր ժողովուրդի հոգիէն նոր տախտակներ եւ երեսներ ձգած է սեւեռման: Օշական չէ փորձած սեռ մը ուր իր վարպետի կնիքը պակսի:

Արեւմտահայ իմացական շարժումին բերած է լայն մասնակցութիւն, գրական հարցերուն շուրջ խոր, լայն եւ միշտ նոր տեսակէտներով, կշիռներով, եւ իր **Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան** երկվեցեակի հասնող հատորներով իրագործած է մեր մէջ ցարդ անկարելի նկատուած համադրում մը մեր գրական արժէքներուն շուրջ: Օշական փորձած է համադրել մեր գրական երեք սերունդի վաստակը իբր հանգամանաւոր պատմիչ եւ քննադատ: Իր մօտ այս կարգի բոլոր դատումները, համադրումներն ու վերլուծումները գործադրուած են գրագէտի մը եւ հմուտի մը լայն միջոցներով:

Բարդ է Օշականի դէմքը. – **Պատմող, վիպող, թատերագիր, քննադատ**, իւրաքանչիւր սեռը ինքն իր մէջ ամբողջ եւ ուշագրաւ: Տարբեր սեռեր, իրենց ուրոյն թէքնիքով եւ հետապընդումներով, զարտուղի՝ բայց բոլորին հասարակաց գետինն է Հայ կեանքը:

Իր գործը բաղկացած է աւելի քան 40 մեծափոր հատորներէ, արգասիք ձգտումի եւ հաւատքի: Ձգտումի՝ հասնելու բարձրագոյն իրագործումներու, եւրոպական մեծ ու ծանր գործերու կողքին: Հաւատքի՝ իր հեւ ի հեւ հետապնդումներով հասնելու մեծ ու հեռաւոր տեսիլներու: Իր ասպարէզի առաջին տարիներուն իսկ, անիկա ունէր յղացքը իր գործին եւ ծրագիրը

իր ապագայ գործունեության, իր քառասուն տարիները զայն իրագործեցին զմայլելի յարատևությամբ եւ արդիւնքով:

Տարիներով, Պոլիս, Եգիպտոս, Կիպրոս ու մանաւանդ Երուսաղէմ հակ գրասեղանին՝ անիկա ստեղծեց յանուն երազի մը: Այդ երազը Հայ Գրականութիւնն էր, եւ ինկաւ իր երազի ճամբուն վրայ:

Հանգիստ իր բազմատանջ հոգիին:

(ՄԻՈՆ, ԻԲ. ՏԱՐԻ, ԹԻԻ 3, ՄԱՐՏ, 1948, ԷՁ 109–110)

## ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ

Ոչ եւս է Օշականը... այս անուշ անունին առջեւ կը դողայ գրիչը մատներուս մէջ, մինչ իր տրտում դէմքը կանգներ է կարծես կոտրած նայուածքիս առջեւ, հեռաւոր խորքի մը վրայ, անմշուշ ու պարզ:

Տարիներէ ի վեր մահը կը հետեւեր իրեն, ինք կը զգար ատիկա, ու ամէն ճիգ կ'ընէր ողորդելու անկաշառ այդ ոգեհանը: *«Համիտեան ոստիկանութիւնը կարելի է կաշառել, բայց մահը անկաշառ է, տղաս»,* կ'ըսէր յաճախ, եւ իմաստասիրօրէն ու դառնութեամբ կը յաւելլուր, *«եւ ատիկա գուցէ մեծագոյն բարիքներէն մին է կեանքին»:*

Ինչ տրտում բայց քաղցր մտածում, մահուան բարիքը որոնել, կեանքի չարիքին դէմ, ամոքելու համար իր չարչարուող հոգին: Ա՛հ, սիրելի Օշական, այլեւս հաշտուած մահուանդ հետ, տրտմօրէն կը մտածեմ թէ գուցէ իրատւոնք ունէիր դուն, թէ բարիին դէմ բաց ու սզեղին դէմ դաժան քու հոգիդ, այլապէս չէր կրնար նայիլ կեանքին եւ դատել զայն:

Բայց զուր է զբաղիլ բաներով որոնց չես պատկանիր այլեւս դուն: Կենդանութեանդ լեցուն էիր այն բոլոր բարիքներով որ մտքին են ու սրտին, եւ գրչիդ ներքեւ անոնք կը հագնէին հազար երանգ ու խորհուրդ:

Քեզ չեմ ողբար, տարիներով ու ամէն օր կ'արգիլէիր զայն ինձի. *«Չըլլայ որ յուզիչ ընես դամբանականդ, յիմար, վասնզի ես ու կեանքը զիրար շատ կանուխէն ենք ուրացեր»:*

Զխօսեցայ դամբանականդ, չկրցի յարգել մեր տարիներու համաձայնութիւնը, զորս իբրեւ տրտում ու զուարթ կատակ յաճախ կ'ընէինք իրարու, երբ շատ մօտ զգայիր մահը քեզի: Ա՛հ, սիրելի բարեկամ, մենք որ կեանքի մէջ այնքան մօտ եղանք իրարու եւ նեցուկ մէկգմէկու, մահուան մէջ եղանք հեռու իրարմէ, ու ինձի չտրուեցաւ ընել այն՝ ինչ որ մարդկօրէն պարտինք ընել իրարու:

Մահուանդ գոյժը չլացուց զիս. վիշտին ու անակնկալին թափը արգիլեցին զայն, ու շշմած եւ թառամած «ի վերայ սգոյ

սիրեցելոյն» ըսի տրտմութիւնս բաժնող բարեկամներուդ՝ «*Խեղճ Օշական*», բայց դառն ժպիտ մը պրկեց շրթներս, վասնզի հեռուէն կարծես լսեցի ձայնդ որ կըսէր՝ «*Յիմար, մահուան մէջ իշխանն ու մուրացիկը հաւասար իրաւունքով կը կենան*»: Եւ դուն իշխան մը եղար կեանքին, վասնզի նուաճեցիր զայն գրիչովդ, ինչպէս նաեւ հայցորդը անոր՝ այն քանի մը աւելի տարիներուն համար, սրտի ու մտքի աշխարհակալութիւնդ կատարեալ ընելու հայ գրականութեան դաշտին վրայ:

Կեանքի մէջ մինակ մնացիր միշտ եւ քալեցիր այն փառքին՝ որ քուկդ է եւ քեզմով մեր գրականութեան: Սակայն մահուանդ մէջ հազարներ ուզեցին քեզի հետ ըլլալ: Ահա մեծ հակադրութիւնը կեանքին որ բաժինն է եղած բոլոր մեծերուն: Ի գուր չէ որ հալածուող ու քարկոծուող մարտիրոսներու գերեզմանը յետոյ ուխտավայրն ու ժամանադրավայրը ըլլայ ամբոխներու:

Ի վերջոյ մարդեր կան որոնք չար աստղի ներքեւ են ծներ, ինչ կերպով ալ ուզենք արժեւորել կամ հասկնալ այս բացատրութիւնը, անիկա կը մնայ անխախտ իրողութիւնը շատ մը կեանքերու, որոնք միշտ պիտի տառապին եւ հալածուին, իրենց ունեցածին շատութեանը համար: Նոր չէ որ աստուածներու կրակը մարդոց բարիքին բերողները՝ կանչուին քաւելու իրենց մեղքը:

Պարզ էիր ու ազնիւ, մանուկի մը չափ բաց սիրտ, հակառակ որ գիտէիր աշխարհի չարն ու բարին, սրբազան մատեաններու խոստումը եւ բոլոր ժամանակներու գիտուններուն վճիռը: Միւս կողմէն սակայն ոչ մէկ խորհուրդ քուկինիդ չափ եղաւ լեցուն, ամեհի ու սանձարձակ:

Տխուր մարդ մը եղար կեանքին համար, ոչ անշուշտ այն տխրութիւններէն, որոնք յաճախ արտաքին են եւ աղաղակող, այլ սրտի այն պարապէն գոր ոչինչ կրնայ լեցնել յաճախ: Այդ տխրութիւնը կը բխէր գուցէ մանկութեան վճիտ երջանկութեան մը պակասէն, գուցէ հոգեկան խառնուածքէն եւ կամ գաղափարական անաւարտ հետամտութենէ մը: Կեանքը իր առօրեայով հրապոյր չունէր քեզի համար, այդ պակասը կը լեցնէիր դուն

այն քաղցր հակումով, զոր ունէիր միշտ ուրիշներու հոգերուն եւ կարիքներուն նկատմամբ: Բոլորանուէր մատուցուող մը եղար բոլոր անոնց՝ որոնք կուգային բաժին խնդրելու ունեցածէ: Ուրիշներուն բաշխուելու այս յօժարամտութիւնը պարտականութեան մը զգացում ըլլալէ աւելի՝ ապրում մըն էր քու մէջդ, մարդկային բարձր բերում մը իր երազներէն հալածական քու հոգիիդ, եւ կամ գուցէ հոգիդ լոյսին մէջ բերելու ճիգ մը:

Սրտառուչ էր ճիգդ, հակառակ կիսուած սրտիդ, ինքզինքդ շինայեցիր մեծ փառասիրութիւններէդ մէկ երկուքը իրենց լրումին տանելու: Կեանքդ ըրիր թիապարտի վաստակ մը, եւ մտքի ֆաքիրի մը պէս, հակառակ ամբաստանութեան եւ ուրացումին **ստեղծեցիր**:

Մարդիկ շատ յաճախ կը տառապին ուրիշներու հասակէն երբ իրենցը չի հասնիր: Չէիր հաւատար մեծութեան հեքեաթին, բայց երբ զգացիր փոքրութիւններու զարշանքը, հեռագացիր սրտիդ ճամբով թէ ինչ գեղեցիկ է հմայքը մեծութեան, մեծութիւններու:

Ըսին թէ կը մեծամտիս, բայց ես գիտեմ որ դուն պարզ էիր եւ արդար, մեռելաճաշերուն բաժնուած հացի պէս: Ըսին թէ չես հանդուրժեր իրաւ արժէքներ, երբ անոնց մօտ չես հաստատեր քու ճաշակիդ գոհացում ճարող տարրեր, բայց ես գիտեմ որ մեծագոյն հիացումներուն դիւցազներգակ մունետիկն եղար դուն, իրաւ փառքեր փառաւորելու աստէն: Ու հակառակ անոր որ այնքան դիրքին էր ուրիշներու պէս ըլլալ, շարունակեցիր ճամբադ, ականջներուդ կապար կաթեցուցած:

Յեղափոխականներու վախճանը կառափնատն է յաճախ, դուն հայ գրականութեան արժէքներուն յեղաշրջողը եւ հին ըմբռնումներու յեղափոխականը եղար ու շատ բնական է որ կրէիր պատիժդ: Մարդեր փորձեցին չտեսնել քեզ, բայց դուն աւելի էիր քան ինչ որ իրենք կրնային անտեսել: Գրականութեանդ աշխարհը հայ ժողովուրդը եղաւ իր մեծ ու փոքր տիպարներով, արանդութիւններով, յոյզերով եւ երազներով: Ինչ փոյթ թէ այդ ժողովուրդը յաճախ անգիտացաւ քեզ: Բայց դուն յամառեցար ու գրեցիր մեր գրականութեան *Համապատկերը*,

երբ գիտութեան **նստիկանները** կ'արգիլէին քեզի գիրը: Դուն երկու անգամ ընդունեցիր այցելութիւնը մահուան եւ ուզեցիր աչքկապուկ խաղալ իրեն, բայց այս անգամ դժուար եղաւ քեզի պահուրտիլ, եւ ինկար իր տապարին ներքեւ:

Չունեցար ուրիշ սփոփանք, մահէն առաջ եւ անտարակոյս մահէն ալ վերջ, բայց քու եւ ուրիշներուն հոգիին գեղեցկութիւնները միայն մատուցանելու սերունդներու, անոնց մտայլած հոգիին մէջ անմար արշալոյսներու պէս վառելու այդ գեղեցկութեանց հմայքն ու փառքը: Երկրորդ՝ տեսնել այդ գեղեցկութեանց ու փառքին յաւերժացումը գալիք սերունդներու աչքին առջեւ: Մեր մէջ քիչ անգամ դրժուած է մեռելներու փափաքն ու յիշատակ...: Բայց ի՛նչ, այսչափ կանո՞ւխ միթէ պիտի ստիպուած ըլլայինք ուրեմն խորհիլ քու յիշատակիդ մասին, երբ այնքան ներկայ էիր եւ արդիւնաբեր: Բան մը կայ կարծես այս աշխարհի մէջ, որ կը հեզնէ միշտ ինչ որ մեզ կը թուի լաւագոյն ու բարի, ա իս որքան խոր են անդունդները՝ զորս ծածկող ալիքներուն հետ անդադար կը տարուբերի մարդկային կեանքը, իբրեւ չնչին խլեակ մը:

Կը հաւատամ թէ վերջին այն պահուն՝ ուր նայուածքդ կը փակէիր այս կեանքի ստուերներուն, բանալու համար զայն մեծ Լոյսին, զգացիր թէ հովէն քշուած խլեակ մը չես եղած, ու կրնաս զուարթ հոգիով կենալ Յաւիտենականին առջեւ, զի քու կեանքդ անոր քեզ շնորհած քանքարներուն շահաւորումը միայն եղաւ երկրի վրայ:

Եւ այժմ, հեռու մեզմէ, կեցած ժամանակին ետեւ, սրբուած ու պարգուած հոգիով, կը նայիս անտարակոյս ներողամիտ ու քաղցր, իրարու դէմ ամէն օր ժանիք սրող մարդոց որդիներուն:

Արցունք եւ խունկ յիշատակիդ, եւ խաղաղութի՛ւն յոգնած հոգիիդ, սիրելի Օշական:

ԵՂԻՇԷ ՎԱՐԴԱՊԵՏ

(ՄԻՈՆ, ԻԲ. ՏԱՐԻ, ԹԻԻ 3, ՄԱՐՏ, 1948, ԷՋ 111–112)

ՄԻՏՔ ԵՒ ՄԻՐՏ

-----

ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՀԱՐՑԵՐՈՒՆ ԱՌՋԵԻ

Ընդարձակ ու անվախճան թուող տռաման որուն վերածուած է այլևս մարդկութեան ճակատագիրը, նիւթ մըն է որ կը յորդի իմ ձեռնհասութենէն: Լրջութի՛ն: Եւ իսկոյն կանդրադառնաք որ իրարու ճակատող մշակոյթներ, գաղափարաբանութիւններ, շատ անգամ նոյն հողին վրայ, նոյնարիւն ժողովուրդի մը ծոցէն իսկ, երբեք չէին գտած սա չարափոխումը, **Մարդկութեան** սկզբնական յղացքը այնքան անգութ պայծառութեամբ մը կործանող, փոշեկերպող: Որքան շատ, իրողութեանց սա կերպարանքին առջեւ իմաստուններ որոնք սա ու ան ազդակներուն անտեսումը կամ գերազանցումը կը յանձնեն մեր ուշադրութեան, բացատրել կարենալու համար անբացատրելի եւ սակայն աւելի քան իրաւ ողբերգութիւններ: 1930ին, կործանած մշակոյթի մը մէկ տեսարանը, գերման իմաստասէր Կոմս Քէյզերլինկը երբ կը խօսի ազգերու ներքին արժէքներէն, մարդամօտ մտածողութիւն մը կըլլայ պարզած, Արեւելքի ամենէն արիւնարբու ժողովուրդը – դուք կը հասկնաք զայն –, իսկովին իսկ (*essentiellement*) **ազնուականը** որակելով: Կը հասկնամ պատուական կոմսը, որ, իր այդ հայրենակիցներէն շատ շատերուն նման, ազնուաստանը առանց տեսած, հոն դրախտային անմեղութեամբ ապրող խուժանին հետ օր մը նոյնիսկ մահուան ու կեանքի սեղանին նստած ըլլալու, կէլլէ իր պատգամը կաւետէ սքանչելի այլութեամբ իրմէ, ինչպէս տարրական իսկ մարդկութենէ: Գերման մտածողութիւնը հասկաքաղի ուներ պէտք: Ու **Անալիզ Սրէքթօրալը**, ինչպէս **Մետիքասիոն սիւր Ամերիգէնը**, ինչպէս *Վուայսաժ տէօն Ֆիլոզօֆը* գիրքեր էին, շուկայի մը կարօտին չափ սիրոյ կարօտով մը նետուած մտածող մարդկութեան գութին: Կը հասկնամ տակա-

ւին անգլիացիներ, գաղիացիներ որոնք թուղթի փոխան երկիրներ յանձնեցին աւարառու ցեղին...: Բայց դժուար՝ հասկնալը թէ ինչպէս եւ ինչու, աշխարհի հօրագոյն ու **խղրա-փարթամ** հանրապետութիւնը, իր մէկ զօրավարին բերանովը 1947ին, այսինքն երէկ, մեր ժողովուրդը կը բազմեցնէ ոճրագործի աթոռին ու մեր գոհը կը յայտարարէ ազնուական՝ միլիոն մը անմեղ մարդոց բազմամիլիոն դահիճները, քանի որ գիտենք թէ երեսնամեայ սպանողը (1878-1915) մեր ժողովուրդը անճիտել ձգտող համազգային, ամբողջապաշտ հոգեբանութիւնն էր ամենէն ազնուական ժողովուրդին: Ահա հարցեր, մեր օրերու խղճմտանքները կործանելու կանչուած: Բայց...:

Շատ, չափազանց շատ են ուրեմն հարցերը: Մա առատութիւնը, մանաւանդ ողբերգական, յառաջատու անոնց գնացքը – 1870ին գերմանները քանի մը հարիւր ֆրանսացի մորթեցին. 1914-1918ին, այդ հարիւրը բիւրերով փոխանակեցին, 1940-1945ին բիւրը միլիոններու վերածեցին, աշխարհին տալով ամենէն ահաւոր անսրտութեան ու անմտութեան փաստերէն մէկը որուն քով չի տօգունի միայն ոճրածին ցեղին հնգդարեան ոճրապատումը – թերեւս չէ դիտուած քաղաքակրութեան ոչ մէկ շրջանին (այս բառը կընդգրկէ բովանդակ մարդկութեան ճիգը անասունէն մարդը կերտելու թերեւս բիւրադարեան պայքարին):

\*

\* \*

Մտածեցէք քիչ մը:

Այսինքն՝ բերէք ձեր երեւակայութեան կրակին ու լոյսին, ամենէն փառաբանուած ու մարդկութեան հարստութիւնը նկատուած մշակոյթները: Պիտի գտնէք որ ինչ չափով պարզ, չըսելու համար նախնական են պայքարները նոյնիսկ Պղատոններուն, Կեսարներուն, Պօղոսներուն, յիշելու համար քանի մը մանր օրինակներ, երբ դրուին մօտիկը արդի ամենէն փառապանծ կայսերապաշտութեանց, – գո՛րծ երբեմն հասարակ գոր-

ծակատարներու, ներկարար, լրագրող, փերեզակ եւ որ ի կարգին կըսեն մեր գիրքերը: Ծորակ մը քարի՛ տղ որպէսզի ազգ մը վաճառուի: Չոր խոստում մը, թուղթի վրայ, որպէսզի երկիր մը բաշխուի...:

Մտածեցէք նորէն, այս անգամ տեսնելու համար մինչեւ խղճմտանքները, արդի քաղաքակրթութեան տարազին ներքեւ ինչ որ ճարտարարուեստի տէր ու անկէ զուրկ բազմութիւնները կը տեսակաւորէ: Ստոյգը ան քսաներորդ դարու կէսերուն, դադրած են իրենց դերէն ոչ միայն դարաւոր տախտակները, այլեւ անոնք որոնք մեր հայրերուն մանկութեան օրերուն բարձրացան քաղաքակրթութեան բեմերուն, կրակեցին մեծ կիրքեր եւ յոյսեր, աւետաւոր եղան գալիք օրերէ ու... շիջած են այսօր շատերը անվերադարձ ալ գուցէ: Ինչ արիւններու զինն են, էին անոնք երբ նոր կը մտնէին կեանքին կրկէսը: Չորս միլիոն երիտասարդ զոհուեցան երեք բառերու համար (1790-1815), որպէսզի եղբայրութեան, հաւասարութեան եւ ազատութեան փոշիներէն ծնէին անգլիական, գերմանական, ռուսական եւ նոյնիսկ ֆրանսական կայսրութիւնները: Ու մօտ հարիւր միլիոն մարդ մեռաւ որպէսզի աւելնայ հինգերորդը, ան զոր կը սիրենք անուանել տոլարի կայսրութիւն:

Մեծ այս կեպարանքներուն ներքեւ որքան ճճի՛ ալ կայսրութիւններ, իմաստի, արուեստի, վաշխի ու անարգ վայելքի, լիւքսի, քաղքենի կեղծիքին, փղշտացի տգիտութեան պիտակներով, մատուցուած մեր հիացումին, նախանձին: Որքան մանաւանդ անգթութիւններ, ոչ թէ ներկուած, այլ իրենց հաստ զրահովը մեր զգայարանքներուն վրայ բռնացող: Անգթութի՛նը բանակներուն որոնք կը մտնեն երկիր մը աւելլու կանխապատրաստ ծրագրով մը, շէն ժողովուրդներու հողերէն, ու կը թաղեն իրենց ներքեւ ոչ միայն շէնքերը այլեւ, մանաւանդ մարդերը: Անգթութիւնը տեսաբաններուն որոնք ազգերու ոչնչացումը կը պաշտպանեն այնքան հասարակ աւազակութեամբ: Օ՛, մինակ քսաներորդ դարուն իմ կարդացածները բաւ են մարդկութեան յետախաղաղ կորուստը արդարացնելու:

Իրա՛ւ, այս ամէնը: Ստիպուած եմ մասնաւորել սակայն:

Ունիմ մտքիս առջեւ տազնապները մերձաւոր կէս դարուն, այսինքն մէկ մասը այն հզօր յոյզերուն որոնք դրդեցին իմ **սիրտը**, երբ եղայ օրերու, ամիսներու, տարիներու մէջ ուր մարդը ոչ միայն գայլ էր մարդուն համար, այլեւ ամօթ մը, ինք իրեն աչքին: Ինչ ընելու դրկուեցայ ես աշխարհ: Ու ինչ միայն ըրի: Իմ ժողովուրդի ամէն մէկ զաւկին համար իրաւ է սա հարցումին ողբերգականը: Ու այդ սիրտի տռաման երկրորդըւած՝ իմ **մտքին** ալ տռամայով որ ահա կը զարգանայ, տարօրէն իրաւ, կարծես զուգահեռաբար բացուելու համար իմ սրտէն: Ունիք իմ վերնագիրը **Միտք եւ Միտ** մասով մը ձեզի մատուցուած: Անշուշտ ոչ Միտքը, գլխագրուած խորհրդաւոր զօրութիւնը զոր գերլուծել անբաւական են գիրքերը: Որ իրաւ է սակայն ու օրին մէկը պիտի փշրէ սա աշխարհը: Անշուշտ ոչ Միտը, գլխագրուած կաթիլը որ մեր բոլորին օրերը կը ջանայ հաշտ ընել մեզի, մեր անօթութիւնը, զրկանքները մշուշաւորել որպէսզի շարունակենք ապրիլ: Իմ փորձը կ'ապաստանի իմ մտքին ու իմ սրտին: Մեծ, պզտիկ, խորունկ, տափակ: Ասոնք բառեր են: Իմ միտքը 1920ին աւելի մեծ էր քան բոլոր գաղիացիներուն ակադեմականները, զինուորականները, զրոհները, գիտունները, դիւանագէտները միասին գումարած, քանի որ կը տեսնէր անկարելի, անըմբռնելի վրիպանքը, սխալը շէն աշխարհ մը (Կիլիկիա) բաշխելու աւազակներու, որոնք խօսք յարգելու տարրական իրաւունքն իսկ չեն ներած դեռ իրենց պատմական խղճմտանքին: 1920ին գաղիացիք իրենց միտքին հպարտութեան մէջ դեռ չէին ալ խոցուած, ինչպէս պիտի ըլլային ատ ալ, 1945ին, երբ հակառակ իրենց զոհողութիւններուն վտարուեցան մեծերու ժողովականութենէն: Իմ միտքը ուրեմն, առաջնորդ իմ դատումներուն: Իմ սի<sup>ո</sup>րտը: – Ան ալ առնուազն հաւասար է ամերիկացի միսիոնարներու պարզած հոգեխառնութեան: 1925ին հանդիպեցայ մարդոց, ամերիկացի, որոնք ուրախ էին... հայկական հարցին լուծումովը (Լոզանը շատ թարմ էր), քանի որ Աստուծոյ անիմանալի ճամբաներէն մէկուն ելքը յստակ էր այդ մարդոց համար: Հայերը մորթուած էին Թուրքերը քաղաքակրթութեան բերելու ամենէն բարձր

բարիքին համար ու կրնային հպարտ ըլլալ: Ես ամերիկացի մը չեմ բայց 1912ին իմ գլխուն զինովը Թուրքեր ազատեցի պուկար զինուորներու կացիններէն, առանց խորհելու որ պուկարները քաղաքակրթութեան ճամբան կը հանէի:

\*  
\* \*

Իմ կէս դարը: Ու հոն փորագիր, անջինջ երկաթագիր տազնապները: Ումանք՝ քաղցր, հպարտ յաղթանակներէ վկայոյ, շահուած՝ ցաւին, հիւանդութեան, մանրէին, անօթութեան ու սովին հսկայական բանակներուն վրայ: Ուրիշներ՝ կորսուած ճակատամարտներէն, նոյնքան հսկայական զոհողութեանց ցնդումովը մեզ անդարման վիրաւորող: Կոմս Պիզմարքը, Մարքսն ու տե՛ղրայէլին: Այնքան ընդարձակ է սա աւերածին կայսրութիւնը ու այնքան սրտակեղէք մեր կսկիծը որ պէտք կը զգամ նահանջի: Այս ամէնուն վրայ մտածելը ու այս ամէնը ապրիլը մինակ պիտի բաւէր իմ ժողովուրդը սրբացնելու: Շեղում: Այսինքն ուղղակի ներկային վերադարձ: Կը դնեմ իմ սեղանին, մեր օրերու փառքերէն, պատահովի ընտրուած երկու օրինակներ, թէեւ մեռած բայց ապրող վարդապետութիւններէ, երկուքն ալ նոյնքան կշռաւոր, նոյնքան տարածուն մեծահոջակ սնտոխքին մէջ, որուն անունն է արեւմտեան քաղաքակրթութիւն<sup>13</sup>: Բանաստեղծ Քլոտէլը որ կ'ապրի, եւ մեռած Բովալտ

---

<sup>13</sup> Ընթերցողը կը հրաւիրեմ պարկեշտութեան, այսինքն իմ բառերը տեսնելու, արժեւորելու իրենց անմիջական, ընդհանրացած առումով մը՝ նեղ իմաստին: Հասկնալի է որ յիմարութիւն պիտի նշանակէր սնտոխք յայտարարել արեւմտեան քաղաքակրթութիւնը, իբր ամբողջութիւն, քանի որ չունինք զայն հեռուէն իսկ թելադրող որեւէ յաջողուածք մարդկութեան բիրադարեան ճիգերէն, ինքզինքը ազատագրելու կոյր ուժերուն մուրճերէն: Իմ յայտարարութիւնը ուրեմն կը խարանէ ան զոր մեր աչքերուն առջեւ մարդիկ այնքան սուտով, փուտով կը պարտադրեն մեր նկատառումին, երբ իբր թէ ռամկավարութիւն, մարդկութիւն, իրաւունք, ժողովուրդներու ազատութիւնը պաշտպանելու համար բանակ, նիւթեղէն, դրամ, խելք ու անհուն աջակութիւն կը տրամադրեն, որպէսզի ասոնցմով զօրացած, իր

Շփենգլերը (ինքզինքը գերման իմաստասիրութեան մը հեղինակ յայտարարող շատ խօսուած իր մէկ գիրքի յառաջաբանին՝ **The Decline of the West**) մեզի կը պատմեն իրարու բոլորովին հակադիր արժէքներու դրութիւն: Բանաստեղծները այսօր զանցելի արարածներ են. կընդունին: Գերման զօրապաշտութիւնը, յանձին Ռէնգլերի անշուշտ գրական փառասիրութեանց կը սպասարկէր (թէեւ անոր գործերը մատուցուեցան աշխարհի հիացումին, նոյնիսկ ամերիկացիներու ռէքլամով որոնք 1935ին զանոնք կը համարէին հզօր մտածողութիւն երբ իրականութեան մէջ բարատոքսին գրականութիւնը միայն կըլլային սիրած): Այդ բանաստեղծն ու այդ պահպանողական զինուորապաշտը անշուշտ վտանգելու չէին քաղաքակրթութեան ճակատագիրը, բայց կը ծառայեն փաստ մեր օրերու հարցերուն զգեցած ահաւոր հակադրութիւնները: Խորհրդանիշ այդ անձնաւորութեանց ետին որքան իրերամերժ հասկացողութիւն, կեցուածք, վճիռ կը ներկայանան որդեգրուած, կեանքին պարզագոյն, անհրաժեշտ, անփոխարինելի արարքները դիմաւորող: Ֆրանսացի բանաստեղծը, նոր հրատարակուած գիրքի մը մէջ (**La Rose et le Rosaire**) խորունկ յուզում, անկեղծագոյն

---

պատմութեան մէջ բռնութիւն, անիրաւութիւն, կոտորած ճարտարապետելէ զատ ուրիշ որեւէ արժանիք չներկայացնող ժողովուրդ մը պատրաստեն, փոքր ցեղերը ոչնչացնելու անոր դերը այսպէս տարօրէն դիւրացնելով, ճիշդ ինչպէս ըրին 1925-30ին, Գերմանիան վերազինելով, ինչպէս կը փորձեն այսօր ալ, նոյն կեղծիքին ետին, բայց նոյն անաստուածութեամբ ազատագրութիւն: Ոչ մէկ կողմ, այսինքն հակում՝ դէպի սա ու ան վարդապետութիւնները: Իմ թելադրածը, արեւմտեան մշակոյթին ետին ծուարած անյազ ախորժակներուն ներկայութիւնն է: Իմ թելադրածը՝ սա ախորժակներուն հագցուած ոսկեհուռ պատմուճանը որուն վրայէն սիրէր բուրաւտել նոր ժամանակներու ամենէն ազնուական անուշահոտութիւնը, **նաւթը**: Այսքան վճռական, մերկապարանոց սա սուտը երբ նոր աշխարհի քաղաքագետները կը վերածեն ազգային քաղաքականութեան, այդ փառաւորեալ մշակոյթը Արեւմուտքին կընեն ծիծաղելի անշուշտ, ամենէն առաջ Արեւմուտքի մշակոյթին իրական բանուորներուն աչքին, բայց մանաւանդ կը կործանեն այդ մշակոյթին ուժը Արեւելքի ժողովուրդներուն առջեւ, որոնք տակաւ կ'արթնան: 1900ին սեւերը կ'ատէին ճերմակները: 1950ին միայն ճերմակները կը մնան իրարու վստահելու արժանի անարժաններ:

ապրումներով երկինքը կը բանայ, աւետման հրեշտակը բերելու համար մաքուր աղջկան մը երագանքին ու մարդկութեան խորագոյն անկումը կը փորձէ գծել փոխաբերութեամբ, շլացիկ պատկերներով: Այս ապրումներուն իրաւութիւնը, գեղեցկութիւնը, նոյնիսկ խորութիւնը չէ որ կը մերժեմ, այլ անոնցմով մեր օրերու սեռային թշուառութիւնը դիմաւորելու իր միամիտ վստահութիւնը: Գերման իմաստասէրը, իր կարգին, մարդկութեան առաջարկելէ վերջ զինուորական առաքինութիւններու տասնաբանեան, կ'անցնի իր սպառնալիքներուն, իր մահէն քիչ առաջ բացուած յայտարարելով **cycle**ը բնաջնջման պատերազմներուն որոնցմէ երկրորդը քանի մը տարիներու տարբերութեամբ մը իրականութիւն էր արդէն: 21 եւ 22րդ դարերուն նկարագիրը ըստ գերման տեսանողին փողոտումի, կործանման տռաման է ըլլալու: Երրորդ պատերազմը արդէն թերթերու սիւնակներուն մէջ կը պտտի, իջնելու համար ժողովուրդներու հոգետունին:

\*

\* \*

Իմ շարքը, **մեր օրերու հարցեր**, պիտի չմերժէ գրական ալ տագնապները, տարբերութեամբ մը սակայն: Մօտ մէկ դար, գրական տագնապները յաւակնեցան ինքնագլուխ գործել, այսինքն աշտարակի ապրումներու արձագանգ ըլլալ: Աւելի քան ստոյգ է որ 1850ին Ֆլոպէր հազիւ հազ իր թղթակցութեան մէջ միտքէ պիտի անցնէր տողեր նուիրել քաղաքական ծանր խռովքներուն որոնք անոր մանկութիւնը (1830ի օրերը), անոր երիտասարդութիւնը (1848ի յեղափոխութիւնը) յուզեր էին անշուշտ ծանրածանր անդրադարձումներով. խռովքն էր, իր այնքան սիրած քաղաքակրթութեան հարագատ կէանքը, կենսունակութիւնը խորայատակ կործանելու բնոյթներ պարզող: 1857ին, իր վէպը, *Մատամ Պովարի*, կ'անգիտանայ այդ տագնապանքը: 1950էն անդին, վէպը պարտաւոր է այդ քաղաքակրթութեան նոր լէվիաթանները առնել իր վերլուծումներուն

սեղանին: **Les Hommes de Bonne Volonté**ն փորձ մըն է, թէւ ձախող: Բայց մարդկութիւնը պիտի ուզէր լուսաբանուիլ, սա ահաւոր վայրագութեանց մէջ զանազան դերերով ասպետները տեսնել իրենց կազմախօսութեան պարզագոյն իսկ կողմերով: Այնքան ընդարձակ է այդ մարդոց ձեւակերպած տռաման, ու զայն արգիլելու մէջ այնքան բացարձակ է մտքին կորանքը որ, միջին մարդերը, շրջանը ըմբռնելու իրենց անկարողութիւնը պիտի ուզէին դարմանել, լայնօրէն լուսաբանելու համար, իրենց ապրումներուն տարօրինակութեանց վրայ, կարդալով, նոյնիսկ վէպերու մէջ վերլուծումներ որոնք դնէին անոնց իմացական աչքին հասողութեան՝ Լէնին, Հիթլեր, Մուսոլինի, Չըրչիլ, Սթալին բառերով պատմութեան յանձնուած ծանրածանր արարքներուն խորագոյն մեքենականութիւնը: Ի վերջոյ 1900ին մարդիկ, այսինքն միջին կարգը, կ'ընդունէին **Վիլհելմները, Համիտները**, առանց տառապելու: 1950ին դուն ճաթեցուրքու գլուխը, մէկ քարէն միւսին զարնելով, հասկնալու համար թէ որ հրաշքին միջամտութեամբը շոգենաւներ ներկող մը պիտի յաջողէր աշխարհի հզօրագոյն իմացականութիւնները հիփնոսացնել ու լման Եւրոպան նապաստակներու վերածել: Ստոյգը ան է սակայն որ առաջին խումբին անուններուն զուգորդ գործադրութիւնները զետեղելի չեն քաղաքակրթական մեզածանօթ արժէքներու պորսային:

Հեռու ինձմէ, նոյն ատեն, գէշ յաւանակնութիւնը գրականութիւն եւ քաղաքականութիւն իրարու խառնելու, այնքան ծանր է իմ ներսը սարսափը՝ մեր օրերու սովիետութեան հանդէպ, ինչպէս իրաւ ու գործօն է դասը գրականութեանց պատմութեան: 1850ին, գրականութեան յարաճուն վարկը պայծառ էր թերեւս որպէսզի մարդիկ միջոցը գտնէին զայն իմաստասիրութեան խառնելու: Չեմ զբաղիր այդ ոսկեդարով ուրկէ ոչ իմաստասիրութիւնը եւ ոչ ալ գրականութիւնը ոչ մէկ անառարկելի, հարազատ հարստութիւն ունին ժառանգած: Ու չեմ ալ զբաղելու նոր ոսկեդարով ուր լրագրողը, տեղեկաբերը (**reporter**), մեծ թերթերու մանրիկ-վաճառորդները, գրականութիւն, քաղաքականութիւն, ընկերաբանութիւն

եւ մտածում կը շահասիրեն, գրելով ամենէն շատ կարդացուած գիրքերը, որոնց ճակատագիրը դառնան ալ չ'առաւելուր սակայն:

Դարձեալ, հեռու ինձմէ ինքնաբաւութիւնը մեծ խնդիրներ, տազնապներ **ընդհանրացնելու**, այսինքն՝ ասոնց շուրջը պատրաստ քարոզներ վաճառքի հանելու. հարցեր՝ այնքան ընդարձակ որ կողմերով իսկ կը մօտենան մարդոց շատ մեծ թիւի մը, ինչպէս իրենց ետին ունին այնքան ծանր կիրքեր, կատաղութիւն, պատրանք, ցաւ եւ յուսաբեկում: Ամէն մէկ մտածող սարսափին մէջն է ճարտարապետուող ահաւոր աշխարհին: Հարիւր տարի առաջ, միտքին սա ճակատամարտները առնուազն որոշադրելի իրողութիւններ էին, քիչ մը վեր նոյնիսկ, հասարակաց ռազմադաշտերէն: Դրութիւնները կը ճակատէին դրութիւններու դէմ, բաց զէնքերով, մանաւանդ շատ յստակ առաջադրութիւններով, գիտութեան, գրականութեան, իմաստասիրութեան, կրօնքներու մարզերուն վրայ, անշուշտ կրքոտ ու այլամերժ տրիբուններու միջոցով, բայց արիւնը չէր վազեր, խարոյկները չէին կարմրեր, ու բանտերը չէին լեցուեր: Ժողովուրդները այդ պայքարումը կը դիտատեսէին ոչ անշուշտ բռնորովին ապագգած հոգիով մը, բայց գէթ որոշ հանդարտութեամբ, որոշ ալ ախորժանքով մը թուղթի մը վրայ բզկտող սա աքլորամարտերը ընդունելով: Այսօ՞ր: Երկուքուկէս էջնոց **պլաստ-ֆորմ** մը, տուներ ու հինցած շոգենաւներ ներկող տասնապետի մը գրիչէն (Հիթլերի կազմած Միութեան Ծրագիր-Կանոնագիրը), յաջողեցաւ միլիոնով մահկանացուներ իրարու դէմ յարդարել, ու լաստակերտել ահաւոր մեքենան ուրկէ մարդոց պատմութեան ամենէն անողոք մէկ սպանողը հրաշալի մեթոտով մը, կանոնաւորութեամբ մը գահակալ գործեց աւելի քան տասնամ մը, դիմանալով, իբր ոգի, իր շէնքին կործանումէն ալ վերջ, պարտութենէն ալ ասդին, քանի որ աշխարհը հսկայաքայլ, մէկը միւսին ետեւէն կը կտրէ կանցնի Տանթեական պարունակները խելայեղ, հասնելու համար կեղդոն, աւելի քան կատարելագործելով ինքնաջնջումի զէնքերը: Այս ընթացքին առջեւ արտօնուած ենք խորհելու օրերուն ուր

հաւանաբար երկրագունտին երեսը լեցնող ժողովուրդներու ինը տասներորդը պիտի բնաջնջուի յետախաղաղ, իր տեղը զիջելու համար բախտաւորին: Մի տարուիք խորհելու որ այսօրուան հիւլէն տիրակալութիւնները կրնան այդ բախտաւորը նկատուիլ: Մեծ կամ պզտիկ, հարուստ կամ աղքատ ազգերը չունին նկատի սա ակնարկութեանց ետին, այլ կը ջանամ թելադրել պատահարը, անակնկալը, որուն արժանացող ժողովուրդը, թիւէն ու դրամէն անկախաբար, պիտի յաջողի բնութեան գանձարանէն կորզել դրամէն ու թիւէն դուրս ուժերուն մէկ նոր յարդարանքին գաղտնիքը ու պիտի արձակէ իր կապանքներէն ոչ թէ հիւլէն որ սկսած է արդէն դառնալ ծիծաղելի, այլ գուցէ անհուն զայրոյթը տարրերու, անզգած մարդկութիւն մը պատուհասելու անվերադարձ ջնջումով մը: Ասոնք գէշ մարգարէի խօսքեր չեն: Ասոնք կը ծնին նոյն դժնդակ հոգեբանութենէն որ բախտաւոր ու անբախտ ժողովուրդները իրարու կը ճակատէ:

Իրականին մէջ պայքարը պայքար է կեանքին, տնտեսական կերպարանքներով, քղամիդով, բայց խորքն ի վեր՝ քաղաքակրթութեանց բախում: Զինուած են մարդկային բոլոր հետաքրքրութիւնները, զօրաշարժի կանչուած բոլոր թաքուն, պահեստ, նոյնիսկ վսեմ ուժերը, մէկ ու նոյն

– սպանդին համար,

նահանջին մէջն իսկ իմացականութեան որուն սպասարկուները ոչ միայն անլսելի, այլեւ ծիծաղելի, արհամարհելի, խոտելի ու պատուհասելի թշուառութիւններ կը դառնան: Այո, երէկ ներկարա՛ր մը որ մատեաններու, նկարներու, արիններու եւ ծնունդներու խարոյկն ու վանողութիւնները, ձգողութիւնները վերածեց երկնառաք մշակոյթին, Եւրոպայի պորտին վրայ հաստատուած հռչակելով նոր կարգին հազարամը: Փերեզակ մը, այսօր, որ աշխարհը կը հասկնայ քարիւղի եւ ոսկիի անդաստան մը: Ռումբը, իբր սպառնալիք, անոր մէջէն շահը՝ իմացականութիւնը փոխեր են խաւարակուլ լուսնի մը: Ու մի նեղուիք սա բանաստեղծական պատկերէն: Այդ լոյսէն

լուսաւորուած ջարդարար ժողովուրդներուն սեւ հոգին կը փոխակերպուի սպիտակ արդարութեան դաժան պատգամին:

(Շարունակելի՝ 1)

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, ԻԲ. ՏԱՐԻ, ԹԻԻ 4, ԱՊՐԻԼ, 1948, ԷՋ 129–133)

ՄԻՏՔ ԵՒ ՄԻՐՏ

-----

**ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՀԱՐՑԵՐՈՒՆ ԱՌՋԵՒ**

Մէկը մեր օրերու հարցերէն,

– **Հակադրութիւնը բարձր եւ ստոր ժողովուրդներու:**

Աւելի քան քառորդ դար, սա տարազը, իր ահաւոր հաստութեամբը, իրմով զբաղեցուց ոչ միայն թանձրագոյն ուղեղները, այլեւ բարձրագոյն նրբութեան մենաշնորհով պարուրուած իմացականութիւնները: Այո՛: Իրարու չեն զուգադրուիր Նեկրոն եւ Սաքսոնը: Բայց չէք ըսեր թէ ո՞ր: Այսինքն հակադրութեան յատակ ծառայող տարրերը կը պահուին անփոփոխ ու արդիւնքները կը մատուցուին հպարտ սովետութեամբ մը: Նեկրոն չի մտածեր, ինչպէս Նորվեկիացի Իպսէնը: Օ՛, շքեղ փաստը: Բայց հարցուցած ունի՞ք թէ ինչպէս կը մտածէ Նորվեկիացի թղթագործարանի մը հաստկէկ դրամատեր վարիչը:

Յետոյ, որքան սուղ ստիպուեցան վճարել գինը այդ ձրի տարազին, բարձր եւ ստոր ժողովուրդները, արտառուչ թշուառութեան մը մէջ իրարու հաւասար: Շոգենաւ ներկողը, 1940ի Յունիսին, Բարիզի Էյֆելյէն կը պատգամէր աշխարհի խորունկ ցաւով թէ «մեծ ժողովուրդ մը պիտի բնաջնջուէր, մեծ կայսրութիւն մը պիտի կործանէր», Անգլիացիները աւելի քիչ կարժեւորէր ան այդ օրերուն՝ քան Նեկրոնները: Մինկափուրի անձնատուութիւնը Խորհրդարանի բեմէն կործանած ժողովականներուն գուժող վարչապետը, Նեփփոններու արժեչափին վրայ հաւասար էր Բոլենեզիոյ բնիկներուն: Ահա մեծ եւ ստոր ժողովուրդներու **մաթեմաթիքան:**

Ու խորհիլ որ մերձաւորապէս դարու մը կեանքը կայ այդ տարազին ետին: Ու եթէ այդ դարը բարոյականին վրայ կը մնայ տժգոյն, իմացականին վրայ իր նմանը չէ արձանագրած պատմութեան տոմարներուն: Ամենէն շքեղ անունները գրողնե-

րու, գիտուններու, նոյնիսկ զինուորներու: Ամենէն սրբազան անձնագոհութիւնները, պարզ մարդէն մինչեւ քարձրագոյն մտքերը: Ու նոյն ատեն ամենէն անկարելի բռնակալութիւնները, անըմբռնելի սպանդները, որոնց զետեղումը մեր հասկացողութեան պարունակին տակաւին չէ յարդուած: **Ստոր եւ քարձր ժողովուրդներու** հակադրութիւնը այս հասկացողութիւնը կարելի ընծայող ստորին դեղագիր մըն էր, եւ է տակաւին: Իրաւ որ բառերը, տարագները երբեմն տարօրինակ բախտեր կը պարզեն: Մտածեցէք քաղաքակրթութեան ասպարէզը (Նարեկացիին առումով) կէտաւորող շքեղ ցուցատախտակներուն, կրօնական հրաշագործ պետերու անուններով զինանիշ, կամ հզօր զինուորներու փառքերուն յայտարար: Հիմա՝ երջանկութեան, լաւ եւ առատ սնունդին, ազատ մտածումի նշանաբաններով:

Մարդկութեան հարիւր միլիոն արժող տարա՞զը.

– **Բարձր եւ ստոր ցեղերու տեսութիւնը** շնական, շահապաշտ, էապէս ապաքարոյ (**amoral**) զառաճում մըն է, գրական տպաւորապաշտութենէ մը, ատեն մը շատ փնտռուած, այսօր տիրական՝ մանաւանդ գերման եւ **եանքի** տեղեկաբերներու հետաքրքիր հաւաքումներով, աշխարհի ամէն մասերէն որսին կերպարանքովը նոր, թարմ, տարաշխարհիկ տպաւորութիւններու: Այդ հաւաքումներուն ետին անշուշտ ոգի են խայծը, խթանը, ինքնատիպը, որոնց մատուցումը զանգուածներուն կարծես զուգահեռ կը զարգանայ **սինեմային**: 1780ի մօտերուն, ֆրանսացիք, նորութիւն եւ շարժում ներարկելու համար գրական իրենց սպառումին – միտքերը կը հակէին դէպի տնտեսականը, ընկերայինը, իմաստասիրականը – հնարեցին գրական **exotisme**ը որ անզբաղ կիներու երեւակայութեան եւ արկածախնդիր երիտասարդներու զգայարանքներուն կը հրամցնէր **Պօղ** եւ **Վերգիլի**ներ, **Ռընէն**ներ...: 1850ին, գրական սպառումէն վեր, դուրս ուրիշ ախորժակ մը պատճառ է որ Պարսկաստանի ֆրանսական դեսպանատան մէկ պաշտօնեան, կոմս մը, Թեհրան, փողոցներու երեսին իր աչքերուն պարզուող սովորական, հասարակ տեսարաններու շուրջ

տպաւորութիւններ որսալու արարքը երեսակայէ համեմել ընկերային, ընկերաբանական ալ նշմարանքներով, հպատակելով թերեւս շրջանին գերագոյն թելադրանքներուն, երբ անդին, իր մայր հայրենիքին մէջ մարդկութեան ճակատագիրն էր դրուած նորոգման սալին: Կոպիւնոյի գիրքը ոչ ուղղակի պատասխան մըն է 1840ի **Phalamtere**-ներու յաւակնութեանց, ոչ ալ **Այսպէս Խօսեցաւ Ջրադաշտը** քերթուածին մեկնումի նշան մը: 1840ի **Իւթովիստ**ները լուրջ էին, ազգային արհեստարաններ հաստատել տալու չափ Բարիզ: Էնկատինի լեռներուն մէջ ցնորակոծ ներշնչումով մը **Ջարհադուտը** պատգամող հիւանդը պարկեշտ յիմար մըն էր արդէն որ կ'ատէր մանաւանդ գերմանները: **L'esais sur l'inégalité des races**-ին հեղինակը իր գիրքը կազմած է Թեհրանէն առանց բաժնուելու երբ, այդ թուականներուն Տարվին, գրելու համար **Մարդուն և տեսակներուն ծագումը** անբաւական է գտած Ասիան ու անցած Ովկէանիա, թիզ թիզ չափելով բոլորովին կոյս հողերու երեսին իսկապէս ստոր, այսինքն զարգացման նախնական աստիճաններուն վրայ տարուբեր ժողովուրդներու անհաւասարութիւնը: Դեսպանատան փողոցադիր պատուհանէն նեղլիկ հրապարակները խուզարկող մարդու մը փողոցային իմաստասիրութիւնը ո՞ր հրաշքին միջամտութեամբը 50-60 տարի վերջը (1903ին Անգլիացի մը կը նորոգէ Կոպիւնոյի իմաստասիրութիւնը, հիմը դնելով գերման-արիական գերազանցութեան առասպելին, այնքան նման ան միւսին որ 1920էն վերջ դասախօս Մինասեան մը լաստակերտեց մեր վայելումին... ամբողջ ազգերը մեզմէ առբերելով) ճամբայ պիտի հարթէր գերազանց ցեղերուն **emphase**-ին ու ասկէ ալ գերման գերազանցութեան առասպելին որ ուրիշներէ առաջ կը խորտակէր մանաւանդ գիւտին հնարիչին ցեղային հպարտութիւնը. 1940ի Ֆրանսային վրայ, Հիթլերի գիրքին մէջ (**Իմ պայքարը**) արդէն վտարուած արիական փառքէն, **նէկրօփտ** որակումով մը փառապսակ, միտքէ ու մարմնէ: Չոր վճռապէս կործանեալ գերման ազգային պարտքին առաջին յօդուածն էր յայտարարէր:

Սոփեստութիւն անշուշտ այսքան ժպիռի ինքնաբաւութեամբ մը հերքել ծանրածանր փաստեր, սա ու ան յաճախ խնդրական, գրեթէ միշտ ինքնաբաւ տեսութիւններու ամբարձումին կամ խորտակումին ի սպաս: Աշխարհի բոլոր ցամաքներէն որքան առատ են ու տրամադրելի մեր տեսութեանց ի պաշտպանութիւն՝ վկայութիւններ ստորածին ժողովուրդներու իրականութենէն, թիւէն ու անողոք ճակատագրէն: Հիմա մարդկութեան իմացականութիւնը կեդրոնող Ամերիկական քանի մը քիլոմէթր թանձրութեամբ անտառով մը բաժնուած կ'ապրի նախաբնակ հնդիկէն: Պղնձամորթ եւ ոսկրագլուխ հնդիկը ու լայնագանկ **եանքին** ծիծաղելի է հաւասարութեան եզրեր նկատել: Հողի կտորի մը, ջուրի երեսի մը անջրպետը չէ անշուշտ հեղինակը սա անհեթեթութեան: Նոյնն է պատկերը մոնկոլին եւ նիբբոնին, առաջինը իր **վարիանթ**ներէն մէկուն բերանովը ինքզինքը գերագանց ցեղերու շարքին ամբարձած, ուրիշ **վարիանթ**ներու վրայ տափաստանէն բաժնուելու հիմնովին անտրամադիր, անկէ գոհ ու անով պայմանաւոր, երկրորդը 1942ին ինքզինքը երկնային թագաւորութեան մը երկրատր ասպետը յայտարարող եւ Ասիան ու **Խաղաղականը** արդէն իրեն պապենական կալուած մուրհակագրող, ճերմակները նետելով Եւրոպայի մկնանոցին (**souriciere**, ինչպէս կ'ախորժէին հեզնել արեւմտեան մշակոյթին քիչ մը փակ, նեղ, պզտիկ աւագանը): Առանց **անալիզ սրեգրալի**, կրնամ այսպէս զուգակրճել ցեղերու անհաւասարութիւնները: Սոփեստութիւն, սակայն, արիական գերագանցութեան մը վարկածը ամբայնդէլու սիրոյն, բոլոր երկոտանիներուն իմացականութիւնը որակելու փորձը՝ հասարակաց յայտարարով մը: Ու Սոփեստութիւն սոփեստութեանց այդ անհաւասարութիւնը արտահանել արեան դրութեանց թորումներով: Ի՛նչ դժնդակ էր Բըրլ Հարպըրի փորձառութիւնը: Ու աւելի քան յուզիչ անկլօ-սաքսոն կործանումը երբ իրենց անյաղթ բանակները գտան կրունկին տակը մէկուկէս միլիոնոց Նիբբոններուն: Խորհրդարանի բեմէն Անգլիոյ վարչապետը Սինկաբուրի անձնատուութիւնը երբ որակեց Անգլիոյ պատմութեան գերագոյն աղէտը, չէր մտածեր

անշուշտ արեան դրութեանց գերազանցութեան: Ո՞ր կը տարբերին իրարմէ Չըրչիլն ու... Կանտին: Հարցուցէք բայց եղէք զգոյշ պատասխանը մտածելէ, մանաւանդ բառերով լուծելէ այս գիծէ յաւակնութեանց դժբախտ առեղծուածները: Չեմ իջներ ետ, նախապատմական դարերը մինչեւ, երբ մշակոյթները իրենց կրկէս, աւագան ունէին այսօրուան աւագաթաղ կամ սառցատոյգ ամայքները երկրագունտի հիւսիսային կամ հարաւային գօտիներուն: Կը յիշեմ, իբր փաստ մը սա ճակատագրական հարուածներու որոնք կը գործեն անհաշուելի շրջումներ, ամերիկացի երկրաբանի մը չարաշուք մէկ վախը մանրադիտային ճճիներէ որոնց պատեաններուն դիակոյտը, օր մը պիտի յաջողէր բարձրանալ այնքան որ փակուէր Ֆլորիտայի ջրանցքին մուտքը ընդդէմ Կըլֆ-Սթրիմի ջերմ ջուրերու խաղացքին: Այդ պատեաններուն յօրինած ամբարտակը պիտի մղէր ետ հսկայական գետը Մեքսիկոյի ծոցէն պոռթկացող, առնուագն պիտի յաջողէր անոր արդի ուղեգիծը ենթարկել շեղումի, փոփոխութեան Ադլանտեանն ի վեր ու դուք պիտի ունենայիք ձեր Եւրոպան, անոր ամենէն բարձր մշակոյթին օրօրանը... փոխակերպուած Սիպերիայի, Կրօէնլանտի: Անգլիան Քամչաթքայի բարեխառնութեամբ քանի որ լայնութեան նոյն գիծերուն միջեւ կիլիման երկու երկիրները: Արեւմտեան մշակոյթին մեծ կրկէ սը ձիւներու ներքեւ, անայց ու մեռել: Եւ, առանց չարաշուք մարգարէ մը ըլլալու, հանգիստօրէն, կը խորհիմ բնական ուրիշ ազդակի մը, անակնկալ որքան անհակակշռելի, – կքում մը, երկրի կռնակէն ոսկորի մը, լեռան մը ոտքերուն տակէն սահիլը իր պատուանդանին, սանկ ծաւալուն երկրաշարժ մը որ հողերը մաղէր, տուները փոշիացնելով եւ ծովերը ցամաք նետելով կամ ցամաքի մեծ կտորներ սփոփելով, ու սանկ քանի մը տասնեակ մէթրի վրայ վերիվարէր ցամաքներու արդի կերպարանքը: Այս ազդակներէն որեւէ մէկը ի գօրու է, սոսկական իր միջամրտութեամբը այսօրուան Հասարակածը, այսինքն հոն տիրող կլիմայական դրութիւնը փոխադրելու Անգլիա եւ Սիպերիան քշելու... Քոնկօ, Ռոտեսիա եւայլն: Այն ատէ՞ն: Օրուան մշակոյթով այնքան հպարտ Անկլօ-Սաքսոնները, միջերկրեանի

ցեղերը, իրենց արեան ազնուականութեան բոլոր մագաղաթներով եւ իրենց իմացական **avoner**-ին բոլոր քնարական փառքովը երեք սերունդ վերջ ինչ շքեղ **գուլուներ**, **պիւշմեններ**, **պանդուներ** պիտի դառնային: Թեհրանի փողոցներուն մէջ, 1850ին ստոր, հասարակ դիտուած ու դատուած ցեղը հազար տարի առաջ Արեւելքի գերագոյն մշակոյթը կը մարմնացներ: Աւագին հասի կը, որ քաղաքակրթութիւն կը փոխէ: Չուկի մը լեարդը, հակիթները որոնք կայսրութիւն մը կը ստեղծեն (եղան գերմաններ որոնք սիրեցին անգլիական կայսրութիւնը **Րինկայի** կայսրութիւն անուանել): Վտակի մը եզերքին խաղցող տղու մը գտած սեւ քարը – հանքածուխ –, հեղինակն է արեւմտեան ճարտարարուեստին եւ նովին մեղօք՝ արեւմտեան նոր մշակոյթին: Ու Միջին Արեւելքը, իր անհուն աւագութեամբը եւ չեմ որ կը կանչեմ քաղաքակրթութեան, քանի որ հողին ներքեւ սեւ կրակը կ'ապրի հեղուկ իր մարմնովը: ...Վա՛ղը: Ո՞վ կրնայ արգիլել մարդոց կարողութիւնը որպէսզի չգան նորանոր գաղտնիքներ, մէկ բռպէն միւսը աշխարհ մը հիմնայատակ քանդող: Ու ո՞վ՝ մանաւանդ երաշխատրողը թէ այդ գիւտը պիտի գայ **եանքի**ներու ճարտարարուեստական ամբաւ միջոցներէն: Ահա ազգերու պատրանքներու կարելի մէկ պատկերը, որուն իրականացումը ժամանակով ալ չի ճշդուիր: Որսացեք երկու նոր ճառագայթ, միջոցէն որոնք կ'եանքը կարող ըլլան կեցնելու: Ու կը վերջանայ ձեր ամբարտաւանութիւնը, մշակոյթը, ռամկավարութիւնը, համայնավարութիւնը: Երկու պատերազմներէն վերջինը ինչ սուղ գնեց հերքումը ցեղային գերագանցութեան առասպելին:

Դառնութեամբ, ամօթի կսկծագին զգացումներով յիշել տակաւին բոլորովին թարմ իրողութիւններ որոնց մէջ մարդկութեան, քաղաքակրթութեան փառքերը իրենց մենաշնորհ յայտարարող ժողովուրդներ որքան անփառունակ, արգահատելի եկան դուրս, փորձութեան, հիմա կըսեն՝ քննութեան դաշտին, իրենց յաղթանակներուն (որոնք այնքան մելան, հպարտանք, ամբարհաւած մեծամտութիւն էին արժած) պարծանքները մուրացկանի գրգլեակի մը նման կախ իրենց

ուսերէն: 1940ին իր երկիրը թշնամիին լքող սպարապետ մը երեք հարիւր տարիներ առաջ իր գերի իյնալը իր կնոջը գուժող թագաւորին լուրը տառացի կը կրկնէր երբ կը հեռաձայնէր Ֆրանսայի թէ **փրկուած է պատիւը** թէւէ երկիրը կորսուած: Երէկի մեծ ազգը, որ երեք հարիւր տարիներէ ի վեր ինքզինքը «արդէամբք եւ իրաւամբ» մշակոյթին, քաղաքակրթութեան ախոյեանը, բոլոր բարձր ապրումներուն **բրոքականտիստը** ու բոլոր ազնուական արարքներուն, զոհաբերութեանց հայրենիքը կը դաւանէր, չըսելու համար մարդկութեան հայրենիքը, ինչ անլուր տառապանքով – քանիներ, Ֆրանսայի մեծագոյն զաւակներէն իրենք զիրենք սպաննեցին Բարիզի անկումին օրը – իր պատմութեան բոլոր ոսկենիշ մագաղաթները, իր արուեստին բոլոր հպարտութիւնները նետեց թշնամիին մոյկերուն: Ալ չեմ խօսելու ներքին լայն անբարոյութենէն, գործակցական թշուառութենէն, ինչպէս վսեմ յուսահատութեամբ մը մահուան դէմ գրոհող **մագիներէն** որոնք դիմադրութիւնը չստեղծեցին անշուշտ անով այսօր փառաւորուելու, այլ վկայելու մարդոց յաւիտենական մեծութենէն, նոյնիսկ ստորածին կամ ստորնացած ժողովուրդներու անայց հարստութիւններէն ըոպէ մը այսպէս իրաւ, անդիմադրելիօրէն կարելի:

\*

\* \*

Աւելորդ չէ, թերեւս անգամ մըն ալ հոս յիշել որ

– Իմ նպատակը չէ քաղաքական, ընկերային, հոգեբանական վերլուծման մը կշիռը գործադրել 1945էն ասդին ու անկէ առաջ մեր ամէնուն աչքին փռուող անորակելի, անմարդկային նուաստացումներուն, նուաստութիւններուն, բարձրօրէն կընճռոտեալ հաշիւներուն, խաղերուն՝ դիւանագէտներէ, եւ կամ յաղթական ու պարտեալ ժողովուրդներու կողմէ այնքան նենգութեամբ, անգթութեամբ ու անհաւոր **սինիզմով** գործադրուած ռճիրներուն. այնքան թիւ երկու պատերազմին յաջորդ սա գոյգ տարիները այդ ամէնուն մէջ մեզ անմատչելի կատա-

րելություն, բարձունքի հասած են արդեն: Մեր շրջանին, ասոնք ամենը տեսնելու եւ դատելու ընդունակ աստուածությունը – ազատ էք զայն անուանելու քրիստոնեայ կամ մարդկային խղճմտանք – դարու վրայ անդուլ յարձակումով մը մատնած ենք նահանջի ու պատռած բոլոր մուրհակները որոնցմով կը դնէինք չափ մարդոց ախորժակներուն: Գութը, ինչպէս ամչնալը արգահատելի, ծիծաղելի չէին: Երբ միլիոններու արեամբը գնուած յաղթանակ մը մարդիկ կը շահագործեն մարդասպան ժողովուրդներ պաշտպանելու եւ հիւլէական ռումբով կը սպառնան արդարութիւն աղաղակող զոհերուն, լաւ է լեզուն քաշել, առնուազն կարճ ընել:

Իմ ընելիքս, ուրեմն

– Մեր օրերու հարցերէն ամենէն աւելի իմ ժողովուրդը շուարանքի մատնողներուն մօտենալ սովորականէն տարբեր չափերով, դիտողութիւններ, նկատողութիւններ արձանագրել որոնք զիրք, քարոզ, քէն կամ քարիւղ չհոտին: Չեմ ալ գործածելու տարբեր, յաւակնոտ կրթանքներու պատկանող բայց այսօր աժեմին ու չաժեմին բերնին ծամոց տարագներ: 1910ին քաղաքական իմաստասիրութիւն, տնտեսական **մատերիալիզմ** կորակուէին հասարակ դասախօսութիւններ, ինչպէս հասարակ պարսաւը կը բարձրացնէին իմաստասիրութեան ժխտումներուն: 1930ին հայ մտքի հսկաներ հոչակուեցան բառերու վրայ լարախաղացներ երբ մտածելու պարկեշտ արարքը կը դնէին գունագեղ կտաւներու խանձարուրումին: Ու լրագրողի կտորներ, բոպիկ ըստ ամենայնի, մեր թէ օտարներուն մէջ, իմաստի հարցերու վրայ զիրքեր կը յօրինէին, **պրօշիրին** թերեւութեամբը, յանդգնութեամբը, լրբութեամբը:

Դարձեալ,

– Յաւակնութիւն, պարկեշտութիւն, հետեւակութիւն, ինքնատպութիւն, ծանծաղութիւն, խորութիւն՝ բառեր, երբ կը գործածուին ծածկելու իմացապէս միշտ անպարկեշտ արարքներ, լռելու, այսինքն անգիտելու, եւ կամ հակառակէն, նետել-բռնելու, իսկապէս քաղաքական ախորժակներ, անլրջութիւն փառախնդրութիւն քողարկելու: Բացէք կարճ բռնուած սա

վերագրումներուն ներքին ծալքերը մեր ինչպէս օտարներուն համար: Դուք դժուարութեան մէջ պիտի չըլլաք հաստատելու թէ որքան քիչ կըսեն իմ բառերը, օրինակ, երբ կը ձգտին պարզել նորաշխարհեան անհուն ու ինքնատիպ կեդծիքը Ամերիկացի միսիոնարներուն կամ զօրավարներուն որոնք աստուածութեան կամ քարիւղի, **տէմոգրասիի** կամ համայնավարութեան ճամբաներով կը սրբագրեն, կը սրբագործեն մեզ մորթողները, անլուր շնականութեամբ մը մեզ դատապարտելով արքայութեան կամ ամբաստանութեան աթոռին, մեզ մորթողները այդ առաքինութեան կամ ոճիրին մղած ըլլալու: Գիտեմ թէ մեր ողբը, բողոքը այնքան նորոյթ ինկած ձանձրոյթներ են օտարներուն չափ մերիններուն ալ ականջներուն: Մեր օրերու հարցերուն այս է սակայն ճակատագիրը: Ու մշակոյթէ մշակոյթ անցքերը փոխանցման երեւոյթներ ունին իրենց յատուկ: 1815ին մենք կը գտնենք մեր օրերուն համագօր երեւոյթներ: Աւելի վար, Պոլսոյ առումը Թուրքերէն մեկնակէտն է ուրիշ մշակոյթի մը: Ու աւելի վար, մինչեւ Հռովմայեցիները, Հելլէնները: Բոլորին համար ալ հասարակաց ինչ որ այսօր մեզ այնքան կը զարմացնէ,

– Նոր տարրերուն հոգեկան արժողութի՛ւնը, այնքան քիչ, գէշ, նուազ բայց որ մէկէն կը դառնայ անդիմադրելի: Խորհեցէք կործանող կարգերուն առնուազն **dignite՛**-ին, ու կործանարարներուն ասհաւոր գոեհկութեան, մշակութային բոլոր տագնապներու ընթացքին: Ու պիտի մեղմանայ ձեր մտատանջութիւնը: Պլինիոս մը, քրիստոնէաները նկարագրող թուղթի մը մէջ կը պատմէ իր անկարողութիւնը հասկնալու այդ մարդոցմէն պարզուած արարքները, այնքան անոնք դուրս էին պատուական հռովմայեցի գրողին մտայնութենէն: Ու մօտեցուցէք փաստը մեր օրերու կոմսերուն, զօրավարներուն, նախագահներուն, աշխարհի բախտը վճռող ծերակուտականներուն եւ երեսփոխաններուն, բոլորը կարծես իրարմէ նախանձախնդիր իրենց հայրերուն, մեծ հայրերուն առնուազն անհանգրստութիւնը հերքելու, մերժելու անարդարութեան արարքներու առջեւ: Այն խորհրդարանին մէջ ուր կէս դար առաջ Թուրքերը կորակուէին իրենց արդար վերադիրներով, այսօր ոչ

իսկ ճիշ մը կը համարձակի բարձրանալ այս անգամ հսկայ եղեռնագործութեան մը դէմ բողոքելու:

\*  
\* \*

**Օժտուած եւ շնորհագորկ**, առնուազն **սակաւաշնորհ** ժողովուրդները իրարու հակադրող քաղաքական առաւել քան սովետ, առնուազն նենգ, կեղծապարհիշտ սա մտածողութիւնը որ ելած է գրական ինքնատպութեան մը պարունակէն, ինչպէս էր սկզբնաձագ օրերուն եւ դարձած սկսող մշակոյթին ամենէն ընդվզեցուցիչ խաբեբայութիւնը, իմաստութեան, նիւթապաշտ փաստերու ծանր ճնշումովը պաշտպանուած: Որ կը փառասիրէ պատրանքները մորթած ըլլալ, քանի մը տասնեակ քաղաքակրթութեանց հաշուեփակը գործադրելու աստեն: Կը պաշտպանէ ինչ որ կարօտ չէ այդ աժան ծառայութեան, մարդը վերադարձնելու համար անասուններուն մէջ իր տեղին ու կը կարծէ հասկնալ մեր կորանքները որոնք անասունին պատրանքներէն կ'առնեն իրենց ծագումը...: Էջեր չեն բաւեր սա անբանապաշտ վարդապետութեան մագաղաթեայ փառասիրանքը վերլուծելու:

Կը գոհանամ դիտել տալով որ հարիւրամեայ իմացական սա հակամարտութիւնները ունին իրենց զուգահեռ ուրիշ կերպարանք մը, նոր ժամանակներու աւելի քան վայրագ **հարիւրամեայ պատերազմը**, Շփէնզլերի ճշդումով **երկերիւրամեայ փողոտում մը**, արդիական հեզհետէ զայրագնող աւերչութեան մը զենքերով:

(Շարունակելի՝ 2)

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, ԻԲ. ՏԱՐԻ, ԹԻԻ 5-6, ՄԱՅԻՄ-ՅՈՒՆԻՄ, 1948, Էջ 164-168)

ՄԻՏՔ ԵՒ ՄԻՐՏ

-----

ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՀԱՐՑԵՐՈՒՆ ԱՌՋԵՒ

**Ծանօթութիւն.**- Երկիրամեայ սա պատերազմին չարաշուք մարգարէն, **Արեւմուտքի Անկումը** անունով իր գիրքին մէջ գոր աւարտած է 1917ին, այսինքն առաջին աշխարհամարտին – գերմաններէն կ'առնեմ բառը **Weltkrieg** – այն շրջանին երբ գերման ցեղին գերազանցութեան այնքան լաւ խնամուած **միթոսը**, եւրոպական ճակատամարտներու դաշտերուն երեսին կը թուէր ինքզինքը արդարացուցած ըլլալ, կը գուժէ երրորդ, չորրորդ աշխարհամարտներ, հարիւրը անցնող տարիներու թիւի մը վրայ, զանոնք, ինչպէս գիտէք, **բնաջնջման պատերազմներ** յորջորջելով: 1939-40ին, երկրորդ աշխարհամարտին ճարտարապետը այդ մարգարէութիւնը վերածեց ահաւոր ստուգութեան, **բնաջնջումին** ասպետութեան մէջ գերազանցելով նոյնիսկ Թուրքերը որոնք դեռ կը վարանէին մարսէլ առաջին աշխարհամարտին ընթացքին իրենց մագիստրոսական փառքը: Բայց վայրագութեան վրայ զոհերու ողբը, դահիճներուն սիրտը հովացնող միամտութիւն մըն է, շատոնց ապացուցուած: Երրորդ աշխարհամարտի նախամուտին, – ուրիշ բառ չունիմ այսօր որակելու մղձաւանջը, կախուած քաղաքակիրթ աշխարհին գլխուն, խանձարուրին մէջը հիւլէական ռումբին սպառնալիքին, Թուրքերու բերանով քանի անգամ պահանջուած երէկուան բարեկամները սպառսպուռս ջնջելու – զոհուելիք ժողովուրդները կը թուին յստակ նշանակուած ըլլալ դահիճներու խղճմտանքի տախտակին: Մեր տառապանքը, մեր պատրանքներուն մէջ մեր չարաչար, յուսահատագին պարտութիւնը որքան դժնդակ ծանրութեամբ կը միջամտեն որպէսզի դեռ շարունակենք մեր վարանումը, մնանք անկարող հաշտուելու սա բացարձակ ու աւելի քան պայծառ դատա-

վրճիռին, աշխարհի նոր կարգերուն «բանիւ» կամ լռութեամբ արտայայտիչներուն բերանէն: Հարիւր յիսուն միլիոննոց հանրապետութեան մը մէջ, գրեթէ ոչ մէկ շշուկ՝ հարիւր տարի մորթուող ժողովուրդի մը հողին, արեան իրաւունքները ճանչնալու: Այսպէս կը մտածեմ արգիլուելով տարածուելէ ուրիշ ալ դառնութեանց: Տարիներով մեծ ազգերը մահը ապրեցան միասին աշխարհի բոլոր ռազմադաշտերուն վրայ, հասարակաց թշնամիին դէմ: Ու յաղթանակէն վերջ պայքարի ընկերը անիրաւելուն պղտոր, անգութ քաղաքականութիւնն ալ չէ պատճառ որպէսզի աշխարհ վերածուի հակամարտ ճակատներու: Անցէք պարզուածին անգթութենէն ու իջէք իրողութեանց **արշիւներուն** որպէսզի տեսնէք թէ ինչ անուններու տակ այս ամէնը ապրէր են, դարերով: Տազնապներէն վերջ անհուն ընչաքաղցութիւնը, քաղաքակրթութեան ախոյեաններէն իւրաքանչիւրին խղճմտանքի բջիջներուն ընդելոյզ...: Երէք հարիւր տարի ազգ մը – արժանի ամէն յարգանքի, մարդկային քանի մը առաքինութեանց հանդէպ իր հզօր հաւատարմութեամբը, հաւաքական իր խղճմտանքին ներեց սակայն այդ ախորժակը, զայն **camouflé** ընելով **հաւասարակշռութեան քաղաքականութիւն** որակումով հանրածանօթ վարդապետութեամբ: Այսօր տարազին կընկերացուի **գաղափարաբանութեանց քաղաքականութիւն** մը: Ու «**սարիքը**», այդ ամէնը պարածածկող, այդ ամէնը պերելեթող, այնքան ճարտարութեամբ գործածելի համաձայն կարիքներու: Չեն վախնար հին մաշած բառերէն, հերիք է որ գտնան ներկը զանոնք նորոգելու, իբրեւ նոր քշելու: Այդ բառերէն մէկն է **երկաթեայ վարագոյրը**, բաժնող քաղաքակիրթ մարդկութիւնը զոյգ ճակատներու: Չեմ պաշտպաներ ոչ աս ոչ ալ ան ճակատը: Աւելի քան ստոյգ է որ երկաթեայ վարագոյրին **ետին** ինկող մարդկութիւնը կապրի, առնուազն նոյնքան տառապագին որքան ասդին ինկած մասին վրայ: Բայց ահա տարբերութիւն մը: Երկաթեայ վարագոյրը փոխանակեցէք **ոսկիէ վարագոյրով**, երկաթէն ասդին մարդերու մարզը պիտակելու ու ըսէք ինձի թէ Բարիզի, Լոնտոնի, Հռովմի մէջ աշխատաւորը այդ ոսկին որոնց համար կը դիգէ: Ահա մեր քաղա-

քակրթութեան ամենէն ժանգահար կեղծիքը: **Նոյն ու մէկ գրկանքը**. ասդին ալ անդին ալ, հաւասարապատիւ, համատարած: Եթէ երկաթեայ վարագոյրին ետին **սենարիոն** կը գուշակենք – իրաւը, սուտը բան չեն փոխեր տռամին ճակատագրէն – **ոսկիէ վարագոյրին** ետին է որ կը բուծանին մարդկութեան անունը առյաւէտ արատաւորող սպանդին տխուր, բիրիցս տխուր կորիւնները, մարդասպան ցեղին իրենց մատուցած պողպատ ու ոսկի գուրգուրանքներով: Ու տակաւին կրնամ ստեղծել քարիւղին ալ Կըլֆ-Սթրիմները, այս անգամ ցամաքներէն դէպի ծովն...: Այս ամենէն առաջ ու այս ամէնուն հետ անմարդկայինը ա՛ն՝ որ գերման զինուորապաշտութեան, ծանօթ տարագով **բրուսիակասնութիւն** – ինչ արագ թառամեցաւ սա ամենագօր, կախարդական տարագը – տեսաբան Շփէնգլէր որուն իմացական փառքը համագօր կրնայ նկատուիլ շոգենաւներ ներկողին անհուն փառքին, սա փողոտումներուն համար **հենթերլանտ** ունի մարդկութեան գերագոյն բարիքը: Ու պէտք է լռել այսքան լիրբ հաւատալիքներու դիմաց: Ամօթով, ամօթով, ամօթով կ'անդրադառնամ 1870ի տռամային, նախամուտը սա փողոտումի քաղաքակրթութեան, բարերար պատերազմներուն որոնք տպաւորապաշտ խորհրդածութեան մշուշոտ գաւառներէն չես գիտեր որ չար բախտով փոխադրուեցան կեանքին գետիններուն: Չեմ հետեւիր վարդապետութեան սա զարգացումին: Կուտամ դարձեալ չարաշուք զուգադիպութիւնը: Ինչպէս որ 1939ի աղէտը դաստակերտն է շոգենաւ ներկողի մը – գիտեմ թէ որքան շատ ազդակներ ներելի է գործածել աղէտին պատասխանատուութիւնը աջուձախ բաշխելու, բայց վստահ եմ որ առանց այդ աւագ դերակատարին գերման ժողովուրդը պիտի մտածէր իր ընելիքին – 1870ի աղէտն ալ գլուխ-գործոցն է նոյնքան հասարակ, անդարմանօրէն բոպիկ ուրիշ միտքի մը, գոեհկօրէն, թանձրօրէն գիւղացի, գաղիացիք ըսին՝ **լուրսօ**, իմաստին հանդէպ խոր, անյաղթահարելի արհամարհանքի մը մէջ ինքզինքը զրահած, քրմապետ ու վայրագ, մանաւանդ դառնագոյն ատելութեամբ մը ինքզինքը գերյագ ըրած ընդդէմ Արուեստին (կրնա՞ք արդէօք

ըստ պատշաճի մտապատկերել աստիճանը անմտութեան «երկաթեայ» նախարարապետին որ ստեղծեր էր զինուորապաշտութիւն, երեք պատերազմ, կայսրութիւն, ու կը վարէ՛ր Եւրոպան, ահաւոր իր բոլորիկութամբը, սիրտէ, միտքէ, հոգիէ, եւ կը պարծենար զիրք մը բացած չըլլալու գերագոյն պարծանքը, իմաստին ու արուեստին կորուստներէն) աւագակութիւնը պետականութեան բարձրագոյն դրութիւնը յայտարարող, եւ օժտուած, աշխարհը առաջնորդելու նախասահմանուած ցեղին ողնուծուծը կազմող ազգային ասարապաշտութիւնը, ազգային ցանկութիւնը դրացիին բերք ու բարիքէն, համագգեստին հմայքը, զինուորական մակաբուծութիւնը առաջարկելով իբր գերազանց առաքինութիւնը նոր քաղաքակրթութեան, յաղթանակներով երիցս նուիրագործուած, երբ իրականին մէջ 1871ի գերման յաջողութիւնը ուրիշ բան չէր եթէ ոչ դրացիին միամտութիւնը, ռոմանիքովը, անհոգութիւնը, պատմապաշտութիւնը, բարեբեր երկրէ մը եւ հեշտ կլիմայէ մը պաշտպանուած լաւատեսութիւն մը ու թերեւս քիչիկ մըն ալ... **սնոպութիւնը** գրական արժանիքներու արժէքին վրայ շահարկու: Գիւղացիով մը սկիզբ ըրած այդ երկաթեայ մշակոյթն է ահա որ ամէն մեղքիս վրայ անուն է փոխած չեմ հասկնար որմէ ամչնալուն ու վախնալուն, հագած նոր կերպարանք, տօնավաճառի հտալիտներուն շահատակութիւնը յիշեցնող ազատութեամբ մը, հսկայական կտաւներու վրայ ոսկեգիր նոր **լոգունկներուն**, մշուշներու մէջէն նոր Եհովան կապելու դերով մը, հիւլեական ռումբի ծիրանի գօտիին աղեղէն, ռամկավարութիւն, արդարութիւն, խաղաղութիւն, մարդկային իրաւունքներու ախոյեանութիւն կորոտայ, մէկ կողմէն իր երէկի ընկերը հալածելով ամէն ճակատի վրայ, միւս կողմէն իր նաւերը ծոցուորելով մահուան, կոտորածի նիւթեղէնը փոխադրելու մարդասպան ցեղերու զինուորումին, գերազանցապէս մարդասպանութեան մասնագէտ ազգը հզօրելու... սրբազան կատակերգութեան: Անկլօ-Սաքսոնները իբր քաղաքակրթական խմոր, մշակոյթի ազդակ, վերլուծել, կշռել իմ գործը ըլլալէ առաջ իրենցն է ըլլալու: Յիշեցի երկու **Բարլը-**

մաններուն (մէկը մեծահոշակ Գոնկրէտը Վաշինկթոնի Հանրապետութեան) շքեղ լոռութիւնը: Կը սպասեմ որ **Բարլըմաններուն** պապանձումը դիմաւորեն ուրիշ հաստատութիւնները որոնք մարդկութեան սրբազան յոյերուն գերագոյն ապաստարանը կը մնան մինչեւ այսօր, Անկլօ-Սաքսոն մտաւորականութեան իրական արիապագոսը, այսինքն փաղանգը մարդոց որոնք իրական մշակոյթին ախոյեանները եղան, այնքան կանուխէն ազատ մտածողութեան, ազատ արդարութեան, ազատ ժողովուրդներու դատը որդեգրելով ու մարդերէ մարդոց յուսահատութիւնը յաջողեցան սրբագրել, կարելի ազատութեան խորհրդանիշները դառնալով ուրիշ ժողովուրդներու մոռալապաշտ աւանդամոլութեանց դիմաց: Ի վերջոյ, Անկլօ-Սաքսոնները միայն անհոգի դիւանագէտներ, շահախնդիր հիւպատոսներ, քարիւղի փոկեր չեն, արտադրելու իրենց ծաւալուն մշակոյթին արգանդներէն: Կան, – չեն կրնար չկենալ – ուրիշները, իրաւները եթէ կուզէք, հարազատ միտքին, մերկ արդարութեան սրբազան զինուորները: Մի ընդհանրացնէք այսօրուան անոնց անկարողութիւնը – արդիւնք Չարիքին ուժերուն գերաճումին – յղացքին իսկ թշուառութեան խեցեվճիռովը: Նայեցէք պատմութեան անկէ սորվելու համար ոչ իմաստասիրութիւն, այլ իրողութիւններու իմաստ, որ կը կազմէ մեր մշակոյթին ամենէն ազնուական հպարտութիւնը, **աւելի քիչ անասուն ըլլալու մեր պատեհութեանց բազմանալը**: Ու ինչպէս ամէն դարու եղած է ձայնը այդ իմաստին մեծ նուիրեալներուն, այսօր ալ կը սպասենք որ երեւան գան անոնք Լոնտոն, Նիւ Եորք, հակառակ փաստերու հերքումին: Հարիւր միլիոն մարդ գոհուեցաւ ոչ անոր համար որ **manager**ներու իմաստասիրութեան մը գերիները դառնան ժողովուրդները: Հոս կը յիշեմ պատմութեան մէջ իբր հսկայ անբանութիւն առյաւէտ արձանագրուած իրողութիւն մը, ամերիկեան իմաստասիրութեան գլուխ գործոց մէկ գառածումով ծագում առած: Նախագահ մը (Հանրապետութեան) տապալելու համար քանի մը չնաշխարհիկ աստղերու ամերիկեան **Քոնկրէս**ին 1930ին Եւրոպան լքելու քաղաքականութեան մը պրոպականտը ըրին,

երբ աւելի քան ստոյգ էր այդ Եւրոպային բախտը, քանի որ յաղթանակը գնուած էր այնքան սուղ եւ դարաւոր մրցակցութիւն, նախանձ, փոխադարձ անվստահութիւն, ատելութիւն, մանաւանդ շահապաշտ անքանդելի հոգեբանութիւն չէին կրնար կրկէս չիջնել յաղթանակը վերածելու համար ամենէն անարգ պարտութեան: Եւ որո՞նց կողմէ:

– Մարդոց որոնք, պէտք է անդադար կրկնել սա ամօթակուռ ողբերգութիւնը, շոգենաւ ներկելու կամ յեղափոխական թերթերու խմբագրութիւնն ընելու եւ կամ պարզ մարդ մորթելու արհեստը հպարտութեամբ պիտի բերէին **մարդկութիւնը վարելու** սկզբունքներուն...: Քսան տարին բաւ, ցոյց տալու համար, աւա՛ղ, ընտրական յաղթանակի մը համար մարդկութիւնը բախտին ձգել, (որ կը նշանակէր գազաններուն յանձնել) ու ովկէանոսէն անդին քաշուիլը ինչ հետեւանքներ պիտի ունենար: Այդ օրերուն կէս հարիւր միլիոն էր գինը սա դաւաճանութեան: Քսան տարի վերջ, կրկին պատերազմ որ, եղէք վստահ, մինակ ներկարարէն չէ ճարտարապետուած այլ ծերակուտական ամերիկացիներէն: Ու ձեզի կը ձգեմ մտապատկերել աւերածը Մանչէն մինչեւ Վոլկա եւ մինչեւ Հերոշիմա, աշխարհի հինգ մեծ ցամաքներուն ու նոյնքան մեծ ջուրերուն երեսին, թափուած արիւնին հեղեղը, մանաւանդ պարզուած հոգեկան անկումին անըմբռնելի դժոխքը, գերութեան, կեղրոնացման քէմբերէն, անօթութեան եւ հիւանդութեան մագիլներէն...: Խղճմտանքի սա անդարման կոտորածը որ կը շարունակէ իր աւերը, ժահրը պահել տակաւին նոյնքան հզօր որքան էր թունաժէտ այդ ազդեցութիւնը սպանդին բորբոքման օրերուն քանի որ մարդիկ կը վախնան խաղաղութեան սեղանին իսկ մերձենալու: Ու սպառնալու ջնջումը դարերու քաղաքակրթութեանց արդիւնքներուն, որ 1950ի մարդոց մօտ կը փոխարինէ ինչ որ հին մշակոյթներուն կարելի շահն էր համարուած...: Ու կը մտածեմ, ծերակուտական պորաներուն, լոճերուն յիմարութիւնը, ոճրամտութիւնը ո՞ր կը զատուի արդեօք այն միւսէն որ ահա երկու տարի կայ, կը յաւակնի խաղաղութիւն պարտադրել: Վաշինկթոն-

ներու, Վիլսըններու, Ռուզվելթներու հզօր հանրապետութիւնը գլուխն է անցած տրտում, անփառունակ խաչակրութեան մը, շահագործելով երէկուան փառաբանուած, այսօր հակառակորդ յայտարարուած կռուի ընկերոջ մը ներքին դժուարութիւնները, աճեցնելով իրենց իրական իմաստէն շատ անդին թերեւս իրաւ խստութիւններ, բրտութիւններ, բայց մոռնալով թէ այդ խստութիւնները որքան մեղմ, սրբազան բաներու կը վերածուին երբ համեմատուին միակտուր, անխառն, բացարձակ գազանութեան, այն գազանութեան որ դարերով փողոտելու արարքը ազգային մենաշնորհի էր վերածած եւ տակաւին այսօր փողով, թմբուկով կը սպառնայ անմեղ մարդեր սուրէ անցնել...: Այդ մեր պապերը անխելք էին բայց կըսէին բաներ որոնց իմաստութիւնը չենք սպառած հարիւրաւոր տարիներէ ասդին: Մեծ ժողովուրդներն ալ կը պատժուին: Աստուած ձիւնը կուտայ նայելով լեռան հասակին: Շփէնգլերի նման բնաջնջման դարեր չեմ գուշակեր եւ մարդկութեան իբրեւ ճակատագիր, աշխարհը մաքրելու համար ուրիշ ժողովուրդներէ եւ զայն յանձնելու գերման վայելումին: Իմ մտքին մէջ պայծառ է ուրուականը թերեւս փոքր ժողովուրդի մը որուն մէկ գաւակը, անակնկալ կամ կազմակերպուած ջանքի արդիւնք գիտով մը, հիւլէին հանքերէն, անդունդներէն եւ կամ միջոցին մէջ ճամբորդ ուղեւորը ճառագայթներէն քանի մը հատի առանձնացումով եւ ընտելացումով, պիտի միջամտէ, այս անգամ ոչ թէ թուղթի վրայ, այլ երկրագունտի լման մակերեսին, վճռապէս ջնջելու համար **Արեւմուտքը** որ դաս չառներ, չի կրնար, երէկ գերմաններէն, այսօր **եանքի**ներէն, վաղը ո՛վ գիտէ որոնցմէ: Մի ըսէք թէ սեւ են այս տողերը: Խորհեցէք դժոխքին որ հոգին է զանոնք մռայլ կարողութեամբ մը հոս նետողին: Մեր պապերը այդ դժոխքը բնագանցօրէն օգտագործեցին: Մենք անոնց թոռները երկու դժոխքներ պարտաւոր ենք ապրիլ, մարմնին ու հոգիին դժոխքները: Մի ալ աճապարէք իմացական որով եւ անկշիռ յոռետեսութիւն մը անուանել սա մտավիճակը: Իմ ժողովուրդը մշուշներու չէ սպասարկած: Իր նիւթեղէն դժոխքը անիկա յաջողած էր փոխակերպել առնուազն հեռու դրախտի

մը: Հիմա, երբ երկինքը փլած է հիմնայատակ, ու մարդոց որդիները հազար կտոր կըլլան երկիրը դրախտակերպելու, հիմա իմ ժողովուրդը, գեթ անոր մերձաւոր կէտը երազ կը վաճառէ, ապրիլ կարենալու համար: Ու այս աշխարհին վրայ սպանդէ, կրակէ ու անասնութենէ դուրս որեւէ դէր չարձանագրած հորդաներ կը կանչուին այդ դրախտին ճարտարապետութեան: Ու լման աշխարհ այս անգթութիւնը անտեսելու քաղաքականութիւնը կը գործածէ, մի ըսէք ուրիշ բանի անկարող ըլլալուն, այլ ըսէք դաւաճան մեղսակցութեամբը **Իմացականութեան**: Ու երբ իմ մտքին կը բռնանայ աշխարհադէտը, աւելի քան ստոյգ, կը բռնանայ Բանէն պարպուած կէանքին անիմաստութենէն պարտադիր: Սա ադէտին դիմաց Միտքին, մաշած բառով մը՝ Բարոյականին, աւելի փճացած ուրիշ բառով մը Մշակոյթին նահանջը, պարտութիւնը, անձնատուութիւնը ուրիշ ողբերգութիւն: Ու մտածել որ այսօրուան յաղթականները ոչ մէկ յանձնառութեան տակ էին յաղթութիւնը սա հունին բերելու: Ու մտածել որ այսօրուան յաղթականները հանդիսաւորապէս պարտքեր էին ստանձնած, մարդկութեան խղճի բեմին առջեւ արտասանուած, անիրաւուած ազգերու իրաւունքները վերադարձնելու, ազատութիւն շնորհելու ստոր արժանաւոր ժողովուրդներու, աւելի՛ իրենք իրենց մէջ իրարու հանդէպ արդար մնալու: Մտքով պտտեցէք մայրաքաղաքէ մայրաքաղաք թափառող վարչապետներուն ետեւէն, որոնք իրար խաբելու, իրարու բաժինները խորելու, իրարու սահմանները փշաթելելու պաշտօն մը կը հետապնդեն, այս հրապարակային դերասանութեան մէջ վատնելով թերեւս գերազանց շնորհներ: Իմացականութեան սա դիտապաստ կործանումը եւ անոր դիակին վրայ Միջակապաշտութեան սա խաղերուն մեր հազցուցած պատրանքներուն թշուառութիւնն ալ ուրիշ ողբերգութիւն: Ըսի թէ յաղթական ժողովուրդներու ոչ խորհրդարաններէն, ոչ օրկաններէն, ոչ ալ յանձնաժողովներուն որեւէ մէկէն ո՛չ մէկ ակնարկութիւն, անդրադարձ իմ ժողովուրդի տռամային որուն առաջին վարագոյրը վերցած է երէք քառորդ դար առաջ: Չունիմ պատմելիք անլուր ջար-

դերգութիւնը ոչ անոր համար որ 1940-45ի եղեռնը գերմաններով գործադրուած, կը գերազանցէ Թուրքերուն հերոսապատումը, այլ անոր համար որ իմ աչքիս առջեւ յաղթականներու ծովային, ցամաքային, օդային զօրութիւնները հեղեղօրէն կը հոսին դէպի անյագուրդ արգանդները Գազանաստանին: Թէ յաղթանակին սա զառաժումը գրեթէ հասարակաց է բոլոր յաղթանակներուն, ոչինչով կը մնայ ընդունելի: Պատերազմները կը մղուին բազուկով եւ խելքով: Ոչ բազուկը եւ ոչ խելքը չեն տկարացած, տեղի տալու համար ստուերներու սպառնալիքին որ մղձաւանջի մը նման կը ծառանայ ընդմեջ երէկուան զինակիցներուն: Վսեմ էին երբ եղան գազաններու գազանին դէմ, տարիներով արիւնեցան, այրեցան, ի վերջոյ յաջողեցան զգետնել անոր ահարկու նկատուած ուժերը: Նսեմ են, աննկարագրելի աստիճանով մը երբ կը մոռնան ու կը դաւեն իրարու: Գազանը գազան է միշտ: Ու սա է արդի մշակոյթը, հարիւր միլիոն զոհերու ոսկերոտիին վրայ ամբարձած: Ահա մշակոյթը ուր աշխատանքը կապալի է առնուած, լման երկրագունտի երեսին, կէս հազարը հազիւ անցնող գերդաստաններու յղփացումին (մէկը, ինծի պէս վրդովեալ մը, 1945ին տպուած գիրքի մը մէջ ընչեղագոյն հասարակութիւնը, իր արտադրութեան բոլոր միջոցներով եւ արդիւնքներով սեպհականութիւնը կը յայտարարէր վաթսուն ընտանիքներու երբ զիտէինք որ Ֆրանսսան սեպհականութիւն էր 200էն քիչ աւելի ընտանքիներու: Այս հաստատումները **Ֆանթասթիք** թող չերէւին ձեզի: Պատմութեան բոլոր մեծ կայսրութիւնները նման սեպհականութիւններ էին, յօրացումին: Նման մարդկութեան մը կէս անքը: Ի նչ հարկ հիւլէի, ռումբի, երկնային մարմիններէ **clash**ի մը, մահուան անձանօթ ճառագայթներու սպասել, նախատեսելու համար բնաջնջումներ: Հին բառ մըն է արդարութիւնը, աւելի մաշած քան մուրացկանի գրգռեակը: Կընդունիմ: Անոր եղերական գործածումը սա տողերուն վրայ, անիրաւուած, հիմնովին անարդարուած ժողովուրդի մը զակին կողմէ աւելի քան աններելի միամտութիւն: Կընդունիմ: Բայց պարտաւոր եմ յիշեցնել դէպքեր, եթէ ոչ վճիռներ, բոլորն

ալ յաղթանակներու արահետով ինկած պատմութեան դիւաններուն: Ու պատմութիւնը եթէ չի կրկնուիր, չեն կրկնուիր անոր հերքումներն ալ: Կամչնանք բողոքէն: Կամչնանք խօսք, խոստում յարգելու աւատապետական հոգեբանութենէն: Կամրչնանք՝ կարճ՝ արդար ըլլալու, արդարութիւն գործադրելու հնամտութենէն: Ու այս ամէնուն մէջ նորը արդարութեան անտեսումը, արհամարհումը չի կազմեր սակայն: Պէտք է համաձայն ըլլալ, բայց ինչպէս հաշտուիլ, մեր կարգերուն մէջ նորոգ մուտք գործող երեւոյթներու, երբ կը մերկացնենք ասոնք մատուցումին կեղծիքէն ու կը նայինք պարզ աչքերով...: Ատոնցմէ ապահովաբար փառաբանումը, քաջալերը, վարձատրումը մերկապարանոց անարդարութեան: Պարպեցէք հողէ մը իր տէրերը վայրագ սպանողով մը եւ յետոյ այդ հողերուն վրայ տէրերու չգոյութիւնը պատրուակ ընդունելով բաշխեցէք այդ հողերը աւազակներուն...: Մէկ հատիկ չէ սա օրինակը: Տարիներով անասնացէք, յետոյ լուսցուած ձեռքերով ներկայացէք դատարան, մեղադրելով ձեր զոհերը որ ձեզ մղած են անասնացումին ու անցէք իբր ամենէն ազնուական ժողովուրդը...: Ասոնք քանի մը հարիւր տարի առաջ պարզ իրողութիւններ էին, այսինքն զիջուած անասնութիւններ: Մեր օրերուն անոնց զգեցած սա կեղծիքն է որ կը մղէ մեզ յուսահատութեան: Օ՛, ահաւոր թշուառութիւնը, սա իրողութիւնները գունաւորող պատրուակներուն: Բազմազան սարդանքները որոնք ծերակուտականներու, նախարարներու, վարչապետներու, նախագահներու ծանր վարկերով վարչամակուած կը դրուին գործօնութեան բեմերուն...: Մեծատարած, անգնելի կեղծիքը քաղաքակրթութեան մունետիկներուն, բոլոր ժողովուրդներէն, իրարու նմանակ: 1915ին Թուրքերը իրենց հերոսական ձեռքերով մորթուած հայ կիներուն մարմինները **Ֆերաճէ**ներու մէջ փաթթելէ վերջ, կը բերէին ցուցադրելու մզկիթներու հրապարակներուն իբր մորթուած թրքուհիներ: Ու Էմմանուէլ Քանդի, Վակնէրի արենակից սպաները այդ պատկերներուն լուսանկարները իբր անհերքելի **ուօզիւմէնտ**ներ, կը դրկէին գերման տեղեկութեանց դիւանին: Գերման ժողովուրդը իր անսխալ,

անկաշառ սպաներուն կողմէ մատուցուած սա հրէշային եղեռնագործութիւնները անշուշտ մարսեց խորունկ յուզումով: 1853ին համայնավարութեան խրտուիլակը, **կոշմարը** չունէր գոյութիւն: Բայց անկլօ-ֆրանզ նաւատորմն ու բանակներն էին որ ազնուական ժողովուրդին մայրաքաղաքը – Պոլիսը – պաշտպանելու համար, անցան Սեւ Ծովը եւ գրաւեցին Սեւաստաբոլը: Օ, մեռելնէ՛ր, մեռելնէ՛ր, չէք կրնար ետ չգալ ու չփաթթուիլ ձեր արիւնէն ձեր իսկ դահիճներու կոկորդին: Սեւ մարգարէն որքան նորոյթէ ինկած կը թուի, նման թշուառութիւններ ողբալու եւ նման մարդկութեան մը յետախաղաղ ջնջումը գուժելու:

(Շարունակելի՝ 3)

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, ԻԲ. ՏԱՐԻ, ԹԻԻ 7-8, ՅՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ, 1948, ԷՁ 208-213)

ՄԻՏՔ ԵՒ ՄԻՐՏ

-----

ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՀԱՐՑԵՐՈՒՆ ԱՌՋԵՒ

Քաղաքա-պատմական, ընկերային ու ազգային իրարմէ հեռու թուող բայց խորքին մէջ իրերագոյց սա հարցերուն, անոնց երեսան եկող հակազդեցութեանց սա խուժումն ու ճակատումը ընթերցողը թող ըլլայ բարի իրենց ճիշդ իմաստներուն մէջ սահմանելու, եզրափակելու: Բաւական բան սորված ենք, հարիւրամեայ սա փողոտումներուն շառայլին մէջէն, մերժելու համար նոր ժամանակներու ամենէն անարգ գիտութիւնը, ան՝ զոր փրփուրը բերաննուն վագցնելէն կը հոլովէին մեր լրագրողները Պոլիս (լուս իջնէ գերեզմանը Բիւզանդ Քէչեանին), **դիւանագիտութիւնը**, յայտն ու անյայտը, փաստին դիմաց աւելի քան անարգ շահապաշտութեան մը, ազգերու խղճմտանքը շարաւորող: Ժողովուրդէ ժողովուրդ գերազանցութեան եւ ստորադասութեան առասպելապատում իմաստութենէն առաջ ու վերջ, աշխարհը վարելու յաւակնութիւնը օրինակ երէկ անգլիական, ռուսական դիւանագիտութեանց, այսօր՝ ամերիկեանին: Կը մերժենք, վասնզի մէջտեղն է ամէն բան: Ու այս մարդոցմով ներկայացած սա թշուառութիւնը զիս չի կրնար աւելի զբաղեցնել:

Կանցնիմ կենալու սակայն **մտքին նահանջին**. ան՝ զոր այս դարու սկիզբները սիրեցին **կղերիկոսներու մատնութիւն** յորջորջել, այսինքն մտաւորականին տակաւ շեշտուող տկարացումը, ընկրկումը **մենէճրքներու** գրոհին դիմաց, նախապէս վարկէ տկարացմամբ, այսօր՝ իր բովանդակ սնանկութեամբը երբ կը լքեն միտքին ասպետները իրենց դարաւոր դիրքերու թեւին ու կարկինին, փորձանօթին եւ երկաթին ասպետներուն: Բանգիտութիւն, հոս յիշեցնել որ սա **երկամարդը** դարերու անցեալէ մը կուգայ, **զինուորին** եւ **եկեղեցականին**, **կարմիրին**

Եւ **սեւիին** ճակատումներով պատմութեան դիւանները խճողած: Մթանտալի վէպը **Le Rouge et le Noir**, իր գրական շքեղ արժանիքը ստիպուած է տոկոսաւորել, երբ մեր օրերուն վարչապետներ կը պարծենան այդ ամէնը մեծ խաղաղութեամբ, անպատիժ արհամարհել կրնալնուն: Թերեւս միամտութիւն՝ սա յաւակնութիւններով ու սա պարտութեանց վերլուծումովը նայիլ **գալիքին**, որուն էթէ գիծերը կոյրուանան, շէնքը, կատոյցը կը խուսափին սեւեռումէ: 1920ին մարդկութիւնը արդար աշխարհ մը հաւատաց թէ կը յօրինուէր յաղթանակին ճարտարապետներուն կողմէ: 1932ի՞ն:

Գրականութիւնը, Միտքին ու Բարոյականին սպասարկու ամենահին կրթանքը, իր հանգանակները նորոգելու իր փոյթը ոսկեգօծեց ու իր անկարողութիւնը, պարտութիւնը ընդունելու պէտքին առջեւ տակաւ կը հեռանայ իրմէ, դառնալու համար սկսող աշխարհին ճարտարապետներուն լուծին հնազանդ ներքինութիւն մը: Չունիմ առարկութիւն, երբ գրողը այս պարտութիւնը ճակատէն դիտելու չափ հոգեկան քաջութիւն մը կը պարզէ ու կ'անցնի իշխողներու բանակին, բայց յստակ հագնելէ վերջը իր կարգին – դասակարգին – տասնաբանեան: Միւս կողմէն, սա ճշդումն ալ մի օգտագործէք իբր փափաք մը, գրողը տեսնելու այն շփացուած, ապամարդկային կերպարանքներուն ներքեւ որոնց վարժուած ենք դարերու գերութեամբ մը: Տեղ մը ողբացեր եմ երկու հազարամեայ գերութիւնը արուեստագէտին (**Ապուլ Ալլա**): 1850-915 շրջանը շատ կարճ է ազատագրութիւն դեռ ոգեկոչել: 1917ին արդէն գրողը կանչուած է ժանտ տերերու: Կարելի է անվերադարձ անցեալ ընդունիլ միտքի վիճակներ, ինքնաբաւութիւններ, ընդվզման **շեմաներ**, որոնք միշտ 1850էն ասդին, զարմանազան պիտակներու տակ, գտեր էին գրողներու մարզէն ներս լայն ընկալչութիւն, ներքին վարկ, սնոպօրէն ամբարտաւան պահանջներ, բոլորն ալ հաւանաբար արդիւնք խղճմտանքի խուլ տագնապներու, այնքան սովորական ամէն նոր մշակոյթի կազմաւորման շրջաններուն: **Le Rouge et le Noir**, **Chatterton**, **Les fleurs du mal**ը մինակ մռայլ հեղինակներու գիրքերը չեն, այլ եւ բողոքի,

դառնութեան անտարաններ, պանդոյրներու փառքէն թե-  
լադրուած:

Այսօր, օրինակի մը համար, անդր քան ծիծաղելին՝ **փղոսկրեայ աշտարակը** ոչ անոր համար որ սուտ մըն է, կեղծիք մը, առնուազն համակ գործունէութիւն եղող կրթանք մը – գրականութիւնը – խարդախելու, ներկելու այլ թերեւս անոր համար որ մեր, այսինքն հասարակութեան կողմէ արուեստագէտին հրամցուած, բռնադրուած ոսկեգօծ բանտ մը, ինայելու համար մեր աչքերուն ողբերգութիւններ որոնք ընդունելի չէին կրնար ըլլալ ուրիշ ամէն մարզի վրայ, ինքըով հարուստ, զգայնութեամբ մեծահարուստ մարդոցմէ պարզուած թշուառութիւններու կերպարանքին տակ: Մթանտալ եւ Ա. Վինի իլեակներ չէին անշուշտ: Բայց անոնց ողբերգութիւնը իրենց գործերուն մէջ պէտք է վերլուծել: Խլեակ մըն էր Պոտլեռը որուն մահը կեանքէն գոնէ գեղեցիկ գոցուեցաւ: Աշտարակներու բնակիչնէ՞րը...: Այդ աշտարակը ոսկիէ, փղոսկրէ յօրինելն ալ շատ մի մեծցնէք: Մտածեցէք – պիտի գտնէք որ ամէն բանտարկեալ բիրեղացումներու սփոփանքին վրայ ստիպուած է շահարկելու: 1830ին ուրիշ թշուառութիւն մըն էր **արուեստը արուեստին համար** նոյնքան ոսին, նոյնքան անհեթեթ տարազը որ հարիւրաւոր գիրքերու ճար ու դարման մատակարարեց, յաճախ անճարակներուն, ժամանակի լուսանցքին շարտուածներուն, ապայժմութեան մէջ զինանշան դարբնողներուն զառածումը պատսպարող, եւ երբեք՝ արուեստի ծանր, հեռահաս, մեծ գործերուն համար անխուսափելի, նախապայման սրբութիւն<sup>14</sup>, քանի որ առանց արուեստի գործ

---

<sup>14</sup> Բանգէտութիւնը, ամենագիտութիւնն ու ամեղով տգիտութիւնը բոլոր գրական քննադատներուն, դասախօսներուն (գրականութիւն), լրագրի աքլորներուն եւ հանդէսներու հնակարկատներուն, – որոնք գրական յաջողւածքներու անըմբռնելի թշուառութիւնները կամ ձախողանքներու անմարդկային տռամաները կը յաւակնին բացատրել, բացատրուած ըլլալ անոնց ազդակ յայտարարելով եղջերուաքաղէն ջոկուած անուշիկ, ոսին նման տարագներ: **Փղշտացիութիւն**, մէկ ուրիշն է անոնց, 1860ին վրիպած գրողներուն կողմէ հրապարակ նետուած: Մոռնալու չէք որ **Մատամ**

մը գործ է եւ ոչ ուրիշ բան: Ու խայտաճամուկ բոլոր **իզմերը** (**isme**) իմացական եւ ընկերային գործօնութեան բոլոր մարզերէն որոնց ամբարձումն ու խոնարհումը, անհետացումը հիմնական իրենց ապիմաստութիւնը կը փաստեն, իրենց յետախաղաղ կորուստին բացարձակ ստուգութեանը փոխարէն իրենցմէ մարդկութեան պահեստին անցած հարստութեանց իսկ էութեամբը, յաճախ դպրոցը հերքող, կործանող: Կը խորհիմ **Աննա Քարենինային** շքեղ փառքին ու ողորմելի **Թոլսթոյիզմին** շքեղ հակադրութեան: Կարծէ կենալ ոչ անշուշտ լրջութեամբ, բայց որոշ մտահոգութեամբ կիրքի, **սնոպութեան**, **սնափառութեան**, աւելի պարզ բառով մը աւելորդ անխելքութեան հսկայ մթերքին որոնց վրայ հրապարակային վաճառքի զինանշաններ էին **իպսէնիզմը**, **նաթիրալիզմը**... էլի այսօր փառահռչակ **սիրրէալիզմը**, **լէթրիզմը**, **էկզաթանսիէլիզմը**, **բէրսօնալիզմը**, ցատկելէ վերջ **տատայիզմէն**, **քիւպիզմէն**, **ֆիւթիւրիզմէն**, **իմաժինիզմէն**: Այսքան կարճ շրջանի մը այսքան ամուր, ամբարտաւան վարդապետութիւններու բոլորին համար հասարակաց յայտարար արուեստի տազնապ մը: Բայց իրականութիւնը ասոնցմէ վեր է դժբախտաբար: Ու այս իրականութիւնը կը յայտնէ աւելի քան անճարակութիւն մը, գոնէ կարելոր թիւի մը համար: Այս վարդապետութեանց իմացական տարողութիւնը: Մի զբաղիք: Այնքան գէշ է սա աղերսը դպրոցներու գաղափարաբանութեանց ու գործողներուն ստեղծումներուն միջեւ: Ենթադրէ՛լ նորվեկիացի հռչակաւոր թատերագրին ետին լայն, խաղաղ, տափակ ու ինքնա-

---

**Պովարին** իբրեւ անբարոյ զիրք դատարան քաշուեցաւ արդարութեան եւ բարոյականի նախարարուհիին կողմէ: Ու Նիշէն աշխարհի երեսին մէկ ընթերցող ունէր (**Թէնը**): Ֆլոպէո որ ամենէն աւելի գործածած է բառը, գրականէն վեր նպատակներով, սփոփանքի պատգամ մը հաւանաբար կը դնէր անոր ներսը, երեսին նետելու համար զայն իբր նախատինք բոլոր անոնց որոնք գրիչի ասպարէզը քաղթենի լիւքսին հասնելու անդրուվար յայտարարեցին: Այսպէս հասկցուած **Փղշտացիութիւն**, մեր իմացական մէկ կերպարանքն է մեր երեսին նետուած:

բաւ **բէտանը** որուն շնորհունակ գոհունակութեանը մէջ կը խանձարորենք արուեստէն ու կեանքէն մեր տագնապանքը ու կ'անցնինք մեր շահը մարսելու, քրմանալու, կոշուելու համար ժամանակակից մտածումին վարպետը, երբ արդէն մեր գործը մեզմէ առաջ մահացած է անդառնալի մահով մը: Հարիւր տարի առաջ գրական դպրոցները հսկայական եղելութիւններ էին. այսօր՝ **անախրօնիզմ**: Անոնց յաւակնութիւնները քշուած են դէպի քաւարանը ինքնասփոփանքին: Դեռ եթէ հաստատելի են, միջազգային գրական հրապարակին վրայ ճղակտոր փորձեր, կազմակերպուած, հանգանակաւոր դպրոցիկներ, ատիկա միջանաք նոյնացնելու ընկերաբանական-քաղաքական հսկայ կրկէսներուն վրայ իրարու դէմ ճակատող գաղափարաբանութեանց տագնապին: Ու ճշդէլ իսկոյն որ գրական գետնի վրայ կորսուածը խորանարդեալ ուժով մը մենք կը գտնենք քաղաքական գետնին վրայ: Մարդոց ընտրանին – կը հասկնաք բառը իր լաւագոյն եւ լայնագոյն իմաստով –, իր գերագոյն տագնապները հիմա կը հետապնդէ գրականէն դուրս մարգերու վրայ, գրականութեան, իմաստասիրութեան եւ արուեստներուն ձգելով սա տագնապներուն վրայ հին բառով մը՝ **անդաճումը**, նոր ու գեշ գիջանալը, աւելի ընթացիկ բառերով պոռալը, սպառնալը, կոտրել-թափելը, նետել-բռնելը, մանաւանդ այն երկիրներուն մէջ ուր աղմուկը կը փոխարինէ շարժումը, երեւալը՝ ապրիլը: Մեծ օրաթերթերու **թըրրսթներէն** քիչ-քիչ կը հեռանայ աշխարհը վարող մեքենականութիւնը ապաստան փնտռելով կուսակցութեանց ակումբներուն, իշխանութեանց խորհրդարաններուն մէջ: Այսօր դրամը չէ անշուշտ զսպանակը ընկերային մեքենականութեան, այն իմաստով որ անիկա ունէր այդ դերը 1880ին: Բայց գրական սերունդներուն ալ կոտրած է յաւակնութիւնը:

Եղաւ ատեն մը երբ մեր ժողովուրդը կը հաւատար գրողներու արժէքին, մեր ճակատագիրը սրբագրելու արարքին մէջ անոնց դերը աճեցնելով իրենց իմաստէն արտօնուածէն շատ անդին: 1900ին մեր գրողները, արեւմտեան մեծ գրական ոստաններուն ներկայացուցիչներէն կը սպասէին իրենց երջա-

նիկ միջամտութիւնը դիւանագէտներու կանանչ կարգադրութիւններէն ներս: Այս պրոպականտը 1910ին արդէն մեռած էր, հիմնովին ապարդիւն: Կը գիտակցի՞նք այսօր թէ զօրավարներու, քարիւղի ընկերութեանց մեծագօր լիտըրներու, փերեզակ նախարարներու եւ փոխառիկ նախագահներու ներկայ մշակոյթին մէջ որքան հնամենի, ապայծմէ, խարխուլ են մեր վստահութիւնները, միջոցները, առաց խորհելու ուրիշ ալ փաստերու, քանի որ այդ ճակատագրին սրբագրութեան մէջ նոր, հսկայական լուսատեսութիւն մըն ալ մուտք ունի մեծ պետութեան մը վրայ մեր վստահութեամբը կազմուած: Մինչ այդ սակայն, մեր սփիւռքը կը շարունակէ ինքզինքը բաւարարել, աջէն ձախէն գումարուած մարդոց հեռագիրներուն վրայ դնելով աւելի քան միամիտ ուրիշ ապահովութիւն: Ամենէն արդար դատերէն մէկը – Հայկականը – աշխարհատեաններէն ոչ միայն կը մերժուի, այլ եւ նկատման իսկ չարժանանար, նոյն ատեն պալատին մէջ ուրկէ ուրիշ դատ մը, Իսրայէլինը կը թուի յաղթական դուրս գալ, ընդդէմ եօթանասուն միլիոննոց զանգուածի մը հզօր վերթոյին: Խորհրդածելը ձեզի: Ես կանցնիմ աւելի անդին:

Այս կորանքը, մեր դատին վրայ մեր դրած յոյսերուն մէջ, կը դառնանայ ուրիշ ալ նուաստացումներով: 1900ին պետական նեղ գլիքն իսկ որ կը խոչընդոտէր մեր դատը, զանգուածները որոնք միթիւնկներէ զգուշանալը ուշ կը մտածէին, երկրի մը քաղաքական կարծիքը չվտանգելու յաճախ բարձր շրջանակներէ թելադիր իմաստութեամբ մը, կը պարզէին այսօրուան բոլորովին անհանգէտ պատկեր մը: Անոնց, այսինքն վարիչներուն ու զանգուածներուն պակսեցաւ քաջութիւնը մեր օրերուն ապաբարոյութիւնը վերածելու քաղաքակրթական պայծառ արարքի: Դժուար էր պաշտպանել ջարդարար ժողովուրդը հանրային կարծիքին առջեւ: Այդ դժուարութիւնն է որ այսօր փոխուած է հռետորական շեղումի, մեր թշնամին բարոյական բարձրութեան ամենէն ընտիր մէկ զինուորը ներկայացնելու, ու ասիկա բերանովը մարդոց որոնք բոլոր ժողովուրդներու ազատութեան համար կռուած ըլլալին չեն

դադրած տակաւին յայտարարելէ ու իրենց մերժումը մեր հողերը մեր ժողովուրդին դարձնելու կը տօնազարդեն միջազգային գրոհով մը իրենց երկկուսան ընկերոջ կարծեցեալ ախորժակներուն վրայ: Այս ամէնը հոս կը յիշուին ոչ ողբի մը իբր աղբիւր, այլ ցոյց տալու համար ահաւոր, կեղծապարհիշտ նենգութիւնը: Ու դարերու լացը չէ որ կը նորոգեմ:

\*  
\* \*

Այս տողերուն հեղինակը նոր չէ որ կը մերժէ սակաւաշնորհ ժողովուրդի մը զաւակը ըլլալու ճակատագիր մը, թէև պատմութեան կողմէ այդ ժողովուրդին յարդարուած իրողութիւններու գնացքը զինքը կ'արգիլէ հպարտութենէ, յաւակնութենէ: Պէտք պիտի ըլլայ ժողովուրդներու հոգեբանութիւն մը փորձել, բայց առանց բառերէն տարուելու, հասնելու համար այսօրուան ներկուած, խարդախուած **յարգերուն**: Այս տողերուն հեղինակը տարիներէ ի վեր դառնագոյն տրտմութեամբ կը տեսնէ ազգային յարգերուն սա աղճատումը քիչ մը շատ շահապաշտ ոսկերիչներու կողմէ: Չի զարմանար անշուշտ որ հիմնովին շնորհագուրկ **հորդաններ** որոնց քաղաքակրթութեան զինանշաններն էին փաթթոցն ու **եաթաղանը**, այսօր ռատիոներու վրայ կը համարձակին գրոհել մեծագոյն ալ ազգերուն, բայց կը տառապի մարդոց ապերախտութեան աստիճաններէն: Որքան անհեթեթ է սակայն քաղաքականութեան ետին խելք փնտռել, որպէսզի ներելի ըլլար մտածել սիրտին ալ տեղին: Թուրքերը մոռցած են որ իրենց հիմա չզիջած ափ մը հողին տէրերը ինչո՞ւ այդքան առատաձեռն եղան քառորդ դար առաջ...: Ու այսպէս նուէրով հարստութիւններուն վրայ երբ կը բանաձեւեն արդարութեան, քաղաքակրթութեան պահանջներ, կը ծառայեն աւագակութեան դատին: Իրենց բերանէն այս յաւակնութեանց մատեանները հեռու են զիս խռովելէ: Ինչ որ մեզ կը մղէ մտածելու, ան ալ այդ յաւակնութեանց պաշտպանութիւնն է արեւմտեան մշակոյթին ախոյեաններէն:

Քաղաքականությունն իսաղալ չի նշանակեր այս իրողությունները հաստատել: Ազգերը կապրին անշուշտ իրենց փորովը, փորին համար. բայց կը տեսնեն իրենց ուղեղովը. այսինքն ասոր արտադրած պահեստովը: Զինուորական փառքը, ճակատամարտներուն խանդավառությունը չեն արհամարհելի, բայց չեն կրնար պատմություն փոխանորդել: Հեռու ինձմէ սովեետությունը հռովմէական կամուրջ մը **Եհնէականէն** գերազանց արժեւորելու (Օ. Շենգլեր), ինչպէս Շէքսպիրը պահելու Հնդկաստանին փոխարէն: Այս աժան բայց շլացիկ հակադրութեանց ետին նոյն պայքարն է որ կը գործէ: – Միտքին եւ բիրտ նիւթին յաւիտենական մենամարտը: **Եարթադանին** ցեղը հազարամ մը Ալթայէն մինչեւ Կարպաթները իր ուժը ապրեցուց մորթելով, այրելով, կործանելով: Ու անոր անցքին հետքերէն ոչինչ կը մնայ, խօսող այդ յաղթանակներէն:

Այս տողերուն հեղինակը գերազանց ցեղին – Թուրքերը ասիական ընտանիքին վրայ ցեղերու բանաձեւեցին նոյն իրաւունքները որոնց իրաւացումին համար հարիւր տարի կայ գէնք կը խաղցնեն գերմանները եւրոպական ցեղերու ընտանիքին մէջ – յաւակնությունները հերքելու դեր մը չէ ստանձնած: Բայց անիկա կը հաւատայ իր ժողովուրդին: Տեղը չէ հոս բացուելու, անոր թերութեանց ու արժանիքներուն զուգակշռումովը: Ատիկա պիտի ընէ զիս յաջորդող սերունդը շատ հաւանաբար հայոց հայրենիքին մէջ ամբողջական գիտէն վերջ հայոց ժողովուրդին: Գիտնալու էք որ այս տողերը կը գրուին ոչ թէ միջազգային պագարի մը համար, այլ **սփիւռք** կոչումի մը ներքեւ ծուարուն, շուարուն, իր ճակատագրէն անվստահ, իր անելիքին մասին հակամարտ ազդեցութեանց երերուն զանգուածի մը քիչ շատ խմբելի **ընտրանի** մը հրաւիրելու ոչ անշուշտ յաղթագին հպարտութեանց այլ մարդկային տարրական վստահություններու, որոնցմէ տարօրէն աղքատացած է սա վերջին քառորդ դարուն: Գիտեմ որ իմաստուններու խումբ մը պիտի տայ հաւարի, նորոգեալ «Հայրենիքին» փառքը շողարձակ փայլեցնելով: Բայց պարտք կը զգամ պարկեշտությունը անգամ մըն ալ պաշտպանելու:

Խորհրդային Հայրենիքին փառքն ու գեղեցկութիւնը, նոյնիսկ առանց տարակոյսի շամանդադին, ոչինչ կը փոխեն սփիւռքէն որ պարտաւոր է **ինքզինքը մարսել**, այսինքն իր միտքին, սիրտին հասած բոլոր նուաստութիւնները այլակերպել: Ինչեր չենք տեսներ, մեր անմիջական շրջապատին մէջ, այդ նուաստացումները խորանարդօրէն աճեցնող: Յետոյ սկիզբ է առած ոգեկան ուրիշ տառապանք մը: Հայրենիքի հանդէպ հայու սերը մեր թշնամիին պաշտպաններուն տոմարին մէջ կը փոխակերպուի քրեական մեղքի: Ամերիկացի մեծահամբաւ պաշտօնատար մը չսպառնաց հայերը վտարել Նոր Աշխարհէն վասնզի անոնք կրնային սիրով, կարօտով, գործնապէս ալ մտածել իրենց հայրենիքին:

Տակաւին կը ճշտուին դիրքերը: Աշխարհի բաժանումը երկու հակադիր ճակատներու ելած է թուղթերէն ու իջած իրողութեանց կրկէսը: Եւ սփիւռքը ողբերգականօրէն կ'իյնայ ծիրին մէջը ճակատներէն մէկուն, աշխարհի չորս մասերուն ալ վրայ: Այս յարդարումին պարզ են հետեւանքները: Այսօր, մեր անցեալին պահեստը կը գործածենք... հանդուրժելի ըլլալու համար: Վաղը՝ ոչինչ ունինք հանելիք մեզ հալածող գաղափարաբանութիւններուն զայրոյթը ողորբելու: Աժան քարոզ՝ Խորհրդային Հայաստանին անունով մեզի մատուցուածը, քանի որ Ներգաղթին ներկայ գնացքը տասնամեակներու կը կարօտի ինքզինքը իրագործելու, մինչ աշխարհամարտը վաղը կրնայ ծագիլ, մեզ դնելով իրական ջնջումի մը ստոյգ ճակատագրին դիմաց: Ըսի թէ քաղաքական կուսակցութեանց կալուածին մէջ արկածախնդրել է այդ մտահոգութիւններով զբաղիլ, կը նշանակէ ազգին ճակատագիրը հեռու յայտարարել սփիւռքէն ուր կուսակցական քանակը ամէնքս ալ գիտենք թէ ինչ կը ներկայացնէ: Պարտքերուն պարտքը, սփիւռքի ընտրանիին ուսերուն: Գրողի իմ ասպարէզը, սա կ'ետին զիս կընէ զգոյշ, զիս կանչելով իմ կալուածին: Ու ինչպէս որ սփիւռքի ամէն պատանիի հոգին տաքցնողներու պահանջ մը իրական է, նիւթի գետին վրայ, նոյնքան անհրաժեշտ է միւս պահանջը, հոգեկան

գետին համար, սփիւռքին հոգիէն ներս բուծումի եթէ ոչ շքեղ, գէթ էատարր ուժերու, գեղեցկութեան:

Ձեր ուշադրութիւնը, ուրեմն, կրկնահրաւեր իմացական, մշակութային հարցերու, առանց ներսը իրենց հանգոյցները ամրացուցած արժէքերու, մեր, բայց աւելի՝ մեզմէ դուրս, գրեթէ համաշխարհիկ ստեղծագործութեան կալուածներէն: Ու այս անգամ գոնէ այս փորձը, առանց ինքնապատիր մեծամտութեան, 1850էն մինչեւ 1915 իր սաստկութեան աստիճանովը մեզ անճանաչելի ընծայելու չափ ռոմանթիք: Միտք բերէք մեր աժան հպարտութիւնները, այնքան սուղ գնուած սակայն մեր լաւագոյն զակընթերուն իրագործումներովը օտար քաղաքակրթութեանց սպասին մէջ: Զանազան առիթներ ես չեմ քաշուեր դատապարտելէ սա իմացական չտեսութիւնը, հասարակ քերթողներ մեծատարած իմաստասէրներու փառքին առաջնորդող, հասարակ ոտանաւորներ ու վէպեր միջազգային փառքի հանդէսներուն առաջարկող: Բայց այս գեղծումը, գեղծանումը չեմ ընդունիր պատրուակ մեր հարազատ, իսկապէս մեծ գեղեցկութեանց գովքն ալ լռելու: Հիմա տեղը ինձի նեղ է մեր այդ թէկուզ սակաւ, բայց ինքիբմէջ դիտուած, տեսակաւորուած արժանաւորութիւնը վերլուծօրէն ձեր վայելումին մատուցանելու: Կուշտ եմ միւս կողմէն, յափրանալու չափ ծանր, փառախնդիր տեսութիւններուն բաջադանքէն ուր մեր ժողովուրդը կը բարձրացուեր իր հասակէն շատ վեր շնորհներու, հայ ստեղծագործ ուժը խորանարդօրէն ներկայացնելու ձգտում մը «նովին իսկ անկարելիութեամբ, անբնականութեամբ վտանգելով»: Պարզ ու վստահ, ըսեր եմ, գրեր եմ

– **Մենք մեր եղով:**

(Շարունակելի՝ 4)

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, ԻԲ. ՏԱՐԻ, ԹԻԻ 9–10, ՍԵՊՏԵՄԲԵՐ–ՀՈԿՏԵՄԲԵՐ, 1948, ԷՁ 252–256)

ՄԻՏՔ ԵՒ ՄԻՐՏ

-----

ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՀԱՐՑԵՐՈՒՆ ԱՌՋԵԻ

Հո՛ն, ուր անհատը կուգայ բաւ, իր իսկ զգայնութեան, մտածողութեան, ստեղծագործին աւելին նպաստովը նուաճելու Կեանքին տազնապանքը, ասոր տռաման սելեռելով իւրայատուկ յօրինուածութեամբ, իւրայատուկ տեսակարար կշիռով, ու ձեւին մէջ ալ նման, մերձաւոր կատարելութեամբ մը կադապարներէ, – արուեստ որակուած, բնագանցօրէն այնքան բարդաւորուած իրողութիւնը կը հաճի՞ ք զետեղելու նեղ սահմանին ետին – այսինքն քնարական յորջորջուած ստեղծագործական գործօնութեան մը ներսը, իմ ժողովուրդը երեւան է բերած շնորհներու, **maitriseի**, **toucheի** ու **coupeի** շատ պայծառ նոյնիսկ խորապէս տպաւորիչ հանդէս մը, եւ իրագործեր կատարելամերձ նուաճումներ կեանքին հզօրագոյն քանի մը տազնապաներէն – սէր, վիշտ, կարօտ, ցաւ, արդարութեան կարօտ եւ տառապանք, յիշելու համար ամենէն կարկառուն **թեմաները** ազգերու քնարական ստեղծագործութիւնները յստակող նիւթերէն –, առնուազն ամենէն մեծաթոյիչ ժողովուրդներու ըրածին հաւասար: Ատեն մը, գիտէք, այս յաջողուածքը ո՞ր չափագանցութեան տարինք ու դադրեցանք լուրջ ըլլալէ: Այսօր աւելի իրաւ կրնանք խօսիլ: Եթէ երբ հայ քնարական բանաստեղծութեան Արեւմուտքի վայելումին մատուցուած մեր նոր գրականութեանց քերթուածները մնացին առանձին, անարձագանգ, պատասխանատուները քերթողներէն դուրս, փնտռեցէք այն խաչագողներուն մէջ որոնք աս ու ան նկատումներով երոպական լեզուներուն մեռած տողերուն վերածեցին այնքան կենդանի, կրակոտ կտորներ...: Իմ ժողովուրդին ազատ, հարազատ ստեղծումները, բուն իսկ **people** տարրին միջոցով, այսինքն առանց տաղաչափ հտպիտի մը

մեղքերովը մեզի հասած մեր առօրեայ ապրումներուն իբր բիրեղացումները, բովանդակ աշխարհի երեսին իրենց նմաններէն ոչ մէկուն առջեւ կը տժգունին: Յստակ է այս յայտարարութիւնը գրիչին տակ մէկու մը որ ազգերու ստեղծումներէն ժողովրդական յօրինումները տեսեր է մեր օրերու կերպարանքներով<sup>15</sup>: Մի մոռնաք ասիկա: Միւս կողմէն մի ներէք ձեզի միւս յիմարանքն ալ, այդ արթնացումը փքացման, սովեստացման պատրուակ ընելու երբ կ'ելլէք հաւատալու այդ յաջողուածներուն **եզակի, աննման** տարողութեան, աս ու ան պակասամիտին գրիչովը, անպատասխանատու ներողութեամբը նետուած շրջաբերութեան (մենք ունինք գրականութեան պատմութեան գիրքեր ուր **Հայկ Դիւցազն** անունով ծանօթ տաղաչափութիւնը կը հռչակուի ազգերու մեծ ստեղծագործութեանց փառքին գինովը նուաճում մը ինչպէս): Ընթերցողը թերեւս հազիւ կը կասկածի թէ նման հաւաստումներ, որքան ալ պարկեշտ մեկնումներէ ծագած, քննութեան, վերզնահատման սեղանին կը բերեն ոչ միայն մեր գերագանց միակ հարազատ հպարտութիւնը, **Հայ մշակոյթը** այլ եւ կը ձգեն տագնապի տակ մեր գոյութեան իսկ իմաստը, մեր հազարաւոր տարիներու

---

<sup>15</sup> Շատեր փորձած են մեր ժողովրդական բանաստեղծութիւնները փոխադրել օտարներու վայելումին: Ու բոլորին ալ մէկ է ճակատագիրը, – չարաչար կորանք: Քնարականէն փոխադրումին ընթացքին մեռնող անխառն բանաստեղծութեան էատարրը, սրբատարրն է անշուշտ: Բայց քերթըւածի մը կէսն իսկ բա՛ւ ինքզինքը մեր սիրոյն, հիացման պարտադրելու: Այս օրէնքով է որ մեր միջազգային տողերը մեզ կը գրաւեն իրենց նիւթին իսկ այն մասովը ուր մարդկային զգայնութեան ամենէն ընդարձակ տարրերը կը կազմեն կորիզ մը. – **պատկեր, տաքութիւն, գոյն, արիւն**, որոնք անվտանգ, առնուազն քիչ վտանգով կը փոխադրուին մէկ լեզուէն միւսը: Մոդ, հայ ժողովրդական զգայնութիւնը որ լեզուին ալ փոխադրէք, չէք կրնար կործանել սա քառեակին քաղցր գեղեցկութիւնը.

**Հոգիս ես, հոգեկս ուզես,  
Չէ չըսեմ, հանիմ տամ ի քեզ,  
Վախիմ թէ աչքերս ուզես,  
– Էլ ի՛նչով հայիմ ես ի քեզ:**

նգորումը վտանգելով, ըսել կուզեմ այդ պայքարը վերածելով միայն ու միայն այդ գոյութեան խորհուրդին, երբ աւելի քան ստոյգ է որ մենք ստեղծեր ենք ոչ միայն մեր պատմութիւնը, այլեւ սխալ չըլլար ըսել **մեր երկիրը**, որ կար անշուշտ իբր բնութեան մեծագոր մէկ խառնաստանը, բայց որուն թաքուն լեզուն գտան մեր պապերը հովտէ հովիտ կապելով ճամբաներուն գօտիները, մատուցներուն նշանները, արտին, պարտէզին, այգիին, գիւղին եւ քաղաքին կերպարանքները ոճին մէջ հայ հոգիին: Ահա հարցեր, հիմա մանաւանդ տագնապալից, երբ մեր ժողովուրդին լաւագոյն ուժերը կը թուին արեւելուած ըլլալ մեզմէ վեր, չըսելու համար դուրս արդիւնքներու, արժէտախտակներու...: Ընթերցողը որքան շատ բաներ պարտաւոր է չմոռնալ իր ժողովուրդին ուժերուն սա օրին սպասումը լուսաւորող: Մինակ Թուրքը չէր որ, իր բանակներուն իրեն ընծայած ապահովութեան **անֆազին** մէջ մեզ դարերով արժեւորեց իբրեւ ստորածին ժողովուրդ մը<sup>16</sup>, փարախապատիւ հօտ մը, բան մը սանկ: Ու մինակ նոր ժամանակներու քրիստոնէայ մեծափարթամ հասարակապետութիւնը չէր որ յամառեցաւ **միսիոնարներ**, կրթական մշակներ եւ դասախօսներու փաղանգները փութացնել Մերձաւոր Արեւելք, սրտառուչ ալ յարատեւութեամբ, հեթանոսութենէն քրիստոնէութեան սրբազան փարախը ածելու Արեւելքին ծանր, ընդարձակ ամբոխները որոնցմէ մէկն էր նկատուած հայ ժողովուրդը: Պատմութիւնը ինչ անողոք հեզնութեամբ վարձատրեց աս նոր

---

<sup>16</sup> Ուշագրաւ վկայութիւն մը այդ մտայնութենէն, Լուտէնտօրֆի յիշատակներուն մէջ նօթուած: 1917ին Թուրք պատուիրակութիւն մը երբ կը ներկայանայ գերման մեծ բանակատեղին, ապշանքով կը լսէ գերման զօրավարին դառնագին խօսքերը, հայոց վրայ գործադրուած ջարդը խարանդ: Գերման զօրավարը կը ցաւեր այս ժողովուրդին **անօգուտ մորթուելուն** անշուշտ: Բայց անփոխարինելի է Թուրքերուն մտածումը, անդրադարձումը այդ դիտողութեանց դէմ. – Իրենք Թուրքիոյ ճակատագրով կերթային բանակատեղին ու զօրավարը կը յիշէր հայե ըր, իբր թէ ընելիք ուրիշ բան չունենար...:

առանց խաչի խաչակրութիւնը: Մեր ժողովուրդէն իր եկեղեցին ուրացողներու զանգուածը համապատիւ մորթուեցաւ ուխտապահին հետ: Անշուշտ այսօր **միսիոնարներու տեղ թեքնիսիէններ** ու միլիոնաւոր կանանչ թղթեայ զինուորներ որ Արեւելքին մէջ պիտի չհասնին տարբեր արդիւնքի **Պորտին** աշխարհահռչակ կորանքէն վերջ: Հարիւր տարի Թուրքերու մէջ **Պորտին** քարոզութիւնը, միլիոններուն փոխարէնը իբր վճարում արձանագրեց անունը մէկ հատիկ Թուրքի, ան ալ կասկածելի ծագումով: Տիրոջը փարախը անճառ ուրախութեամբ վերադարձող այդ մարդը կը կոչուէր պատ. Աւետարանեան զոր չարաչար ուրախ եմ ճանչնալու պատիւ ունենալուս, առաջին աշխարհամարտին սպանդէն վերջ, Պուկարիա, քարոզելու վրայ Տիրոջը խօսքը, այնքան միջակ միջոցներով որքան որեւէ սանկ ու նանկ բողոքական հայ պատուելի մը պիտի չներէր իրեն: Ու չես կրնար չափսոսալ **Պորտին** միլիաոններուն սա աւելի քան մամածուկ արդիւնքին առջեւ: Չենք կրնար նախատեսել որ երկրորդ մեծ պատերազմի ընթացքին դաշնակից սպարապետութիւնը այնքան տիրաբար տոպրակը դնող Մերձաւոր Ասիոյ քաղաքակրթութեան ախոյեան ժողովուրդը պիտի չենթարկէր նոյն սպառ-սպուռ պարտութեան որմէ նմոյշ տուի ձեզի, **Պորտը**, կանանչ թղթեղէն զինուորները – տոլարները – մաքրելով, մաքրագործելով բայց իր հոգիին խորը աստիճան մը աւելի, առաւելեալ սաստկութեամբ աստելով, արհամարհելով Արեւմուտքը: Ատեն մը Արեւելք-Արեւմուտք հակադրութիւնը կը սնանէր գրական նանրանքով: Թուլթոն Արեւմուտք, Տասթոյովսկին Արեւելք պիտակող Շէբէնզլէրը այնքան բան կը հասկնար այդ ոսին տարազէն որքան **Սաստապատի ուխտին** տակ նենգօրէն թաքնասքօղ քաղաքական յիմարանքը: Թո՛ւրքը որ Արեւելքի ժողովուրդները պիտի գլխաւորէր Հիւսիսի կամ Արեւմուտքի դէմ գրոհի մը համար: Այսօր, Արեւմուտքը ինքը կը մօտենայ, Հիւսիսին դէմ կռուելու նպատակին մէջ ազնուական, քաջարի ժողովուրդին որ թերեւս պիտի գիտնայ նորոգել ազգային իր խաղը, այնպէս ինչպէս խաղաց զայն Մոսկուայի կոնակին:

\*  
\* \*

Մտիպուած եմ յստակ վերագրումներու, յստակ անուններու պաշտպանութիւնը փնտռել երբ կ'անցնիմ քաղաքակաւնէն քիչ մը անդին, այսինքն մշակութային մարզերու վրայ, գործադրելու ծանր բաղդատութիւններ, մերձեցումներ որպէսզի իմ վարկածները, մտատեսութիւնները, վախերն ու ակնկալութիւնները ձրի բաշխումներու չվերածուին շնորհներէ, ինչպէս մեղադրանքներէ:

Կընդունիմ որ կառուցանող, համադրող ու նորոգող, այսինքն նոր աղերսներ որսացող իմացականութիւնը որուն վրայ կը թուի կեդրոնանալ Արեւմուտքին բովանդակ հպարտաբանութիւնը, չըլլայ պարզուած մեր պատմական տարեգրութեանց մէջ, քիչ մը շատ կերպարանքներով, արուեստէ եւ գործօնութենէ, հաւատքէ եւ գերութենէ, չունենանք **լեկասիներ** մարդկութեան հասարակաց գանձարանին մէջ մեր անունով պիտակաւոր, եւ կամ մնանք անկարող հաստատելու մեր տիրական կնիքը արուեստներու աս ու ան տեսակներուն վրայ, մեզայատուկ, անառարկելի, այսօր ալ ապրող գլուխ-գործոցներու փաստերով, մեր ցեղային հպարտութիւնը քաղցրօրէն գգուող<sup>17</sup>: Ու կընդունիմ որ տառապիք քիչ մը, երբ կը թարթափիք Արեւելքին, իր բանաստեղծական մշտամած աշխարհներուն, իր իմաստութեան եւ միսթիքին այնքան տաք, խոր-

---

<sup>17</sup> Այս դարուն սկիզբները, գլխաւորաբար գրականութեան եւ ճարտարապետութեան արահետներէն մեր փայփայած հպարտանքները ինքնաբերաբար շոգիացան: Այսօր Նարեկացին ոչ ոքի մտքէն կ'անցնի համաշխարհիկ մեծ բանաստեղծներու կաճառին առաջնորդել: Գոթական ճարտարապետութիւնը Եւրոպային սորվեցուցած ըլլալու միամիտ փառասիրութիւնն ալ մնաց անպաշտպան, այսինքն չունեցանք աւերակ մը գէթ ուր Սթրչիկովսքիի լաստակերտած տեսութիւնները կարելի ըլլար գործնապէս արժեւորել: Բայց սխալը ան որ ոչ ոք մեզմէ նման պահանջներ ըրած ըլլալով, չունէինք իրաւունքը ներկայ կորանքը մեր հաշուոյն շահելու:

հըրդաւոր կալըրիներուն, հոն չգտնելով մեր ժողովուրդը պարտ ու պատշաճ կերպարանող ստեղծագործական, իմացական ծանր, յարգանք պարտադրող յաջողուածքներ: Բայց այսքան: Այսինքն կը հրաւիրուիք նոյն մտածման ակօսով ձեր ցեղին իսկ կարելիութեանց: Քաղաքական պայմանները առանձին չեն ստեղծեր անշուշտ մեծ դրութիւնները: Բայց մի մոռնաք որ անոնք կը ճնշեն միտքին գոնէ այն չափով որ չափով որ կը զգետնեն մեր մարմինը: Ըսեր եմ այնքան անգամներ – տուէք այս ժողովուրդին կէս դար խաղաղութիւն, շունչ առնելու գետին մը ու դուք կը տեսնէք արդիւնքը: ԺԸ. եւ ԺԹ. դարերը, հայոց պատմութեան տոմարներուն ազատութեան շրջաններ իբրեւ չեն արձանագրուած անշուշտ, բայց չեն ալ նմանիք Բագրատունիներու, Ռուբինեաններու անտարազելի դարերուն երբ ափ մը մարդեր, երկու անգամ տասնաւոր մահացու հակառակորդներու դէմ գիշերը ցերեկին խառնելով պայքարեցան ու... ստեղծեցին մեր տաճարները եւ քրիստոնէայ հոգեբանութեան մեր վճռական դիմագծութիւնները: Այսօր, զգաստացած ենք բաւական անկարելին չպահանջելու համար մեր ժողովուրդէն:

Այս տողերուն չեմ ուզեր որ խառնէք պարտուողական որեւէ շեշտ: Կուգեմ որ տեսնէք ձեր ժողովուրդին երկու հազար տարիները իրենք իրենց համար, ճիշդ ինչպէս կընեն եւրոպացիները հնդիկներուն, պարսիկներուն ու տակաւին այսօր յետախաղաղ կորսուած ազգերու մշակոյթներուն դիմաց: Անշուշտ, գէշ կերպով արտայայտուիլ է ըսել որ այսօր **հոգին**, այսինքն ասոր մարմնաւորման եղանակները դադրած են մարդոց մտահոգութիւնները յօրինելէ: Հինգ դար կայ որ կրօնք չի ծնիր: Ծնածներն ալ երկինքէն գալու տեղ երկրէն կը բռնանան: Այսօր, իմացականութիւնը – այս բառին ետին դրէք ամբողջ նիւթապաշտ մտածողութիւնը – միս մինակը գրաւուած կը պահէ մարդկային մտահոգութեանց դաշտը, անկէ տարագիր քշելէ վերջ հոգին որ գուցէ երկինք է ապաստանած:

Հարիւր տարի առաջ մարդոց միջինը կը դժուարանար, դրացիին հարստութիւնը իւրացնելու համար անոր հունտը,

եօթը պորտը չորցնելու, ինչպէս կը տեսնենք որ ըրին երէկ ամենէն բարձրորակ ժողովուրդները, կընեն այսօր, ու ապահով եղէք, պիտի ընեն վաղն ալ, երբ առիթը ներկայանայ: Դիրին է բառերու հետ խաղալ ու այս մտավիճակը որակել աւ ու ան սեւ, դառն բառերով: Իրողութիւնը ողբերգական է անով որ քաղաքակրթութեան համար արիւնը թափուած է ապարդիւն, գրաբար պիտի ըսէին յումպէտս: Այս մտավիճակը հեղինակութիւնն է դարձեալ իմացականութեան, հարիւր տարի առաջ՝ գրական տպաւորապաշտութիւն, հիմա շահու իմաստասիրութիւն:

\*  
\* \*

Կուգամ շատ իմացական տառապանքներու, մեր ժամանակներէն դրուած ազգային հպարտութեանց **գոմրէքս**-ներուն: Չենք մերժեր **Արեւելքը**, ոչ իբր քաղաքակրթական անցեալ, ոչ ալ հոգեխառնութիւն իբրեւ: Բայց կը դժուարանանք այդ Արեւելքին մէջ մեր հարազատ տեղովը, հասկացողութեան յարգոչափերովը, երբ մենք մեզ կը գտնենք միջին գետինէն ուր Արեւելքը կուգայ կտրելու Արեւմուտքը: Անշուշտ կըլլաք բարի այս տարագներէն – Արեւելք Արեւմուտք հակադրութիւնը – զեղչելու նոր ներարկուած ամէն նանրանք, սնապարծութիւն, խորութեան պատրանք ինչպէս ստորադասութեան զգացումներ: Այդ Արեւմուտքը այսօր **շիմի** է եւ **Ֆիզիք**: Այդ Արեւելքը այսօր գերութիւն է եւ արթնացումի տռամա: Այս բոլորէն անդին կայ զիս համագրաւող իմ ժողովուրդը, իբր իրագործուած ճակատագիր եւ իրագործելի խմոր:

Ըսել թէ չենք տուած ճելալէտին Ռումի մը, Ապուլ Ալա Մաարի մը, Խայեամ մը, յիշելու համար համաշխարհիկ հռչակի հասած քանի մը անուններ, կը նշանակէ կեանքը կշռելու մեր ազգային միջոցները տարադէպօրէն լարել, խզումի մը վախովը նոյնիսկ: Այդ մարդերը կուգան շատ հզօր, մեզմէ բազմապատիկ առաւելութեամբ օժտուած ընկերային ու հոգեկան բարե-

խառնութիւններէ: Անոնց իւրաքանչիւրին զուգորդ են ծանր, շքեղ քաղաքակրթական խաւեր, այսինքն անոնց երեւումին վրայ կը տիրեն ազդակներ որոնք մեզի համար բացարձակ պակասներ էին: Ու սխալներուն սխալը մարդոց գոյգեր, նմաններ փնտռել հոն ուր տեսակները իրար կը հերքեն...:

Մեր տուածին կշիռը: Ահա միակ դրական ու պարզ եղանակը արդար ըլլալու, ուրիշներուն մանաւանդ մեզի դէմ: Այսինքն տեսնել Արեւելքին մեծ մտածողները ոչ միայն իրենց գործերուն ճառագայթումովը, այլ մանաւանդ այն ընդարձակ շրջասփիւռին ալ փաստին ընդմէջէն որով կրօնական հատւածի մը (Ռումիի հոգեխօսական իմաստասիրութիւնը) անունով մեզի հասած գաղափարաբանութիւնները կը դադրին մարդոց խումբի մը իրագործումները նկատուելէ, վերածուելու համար իրենց հարազատ իմաստին: Մարդիկ Ագուիւնացի Թովմասին **Սուման** միտքէ չանցուցին այդ վարդապետին մենաշնորհը հոչակել, ինչպէս **Տիվինա գովետիան** արդարօրէն արժեւորելու արարքը պաշտպանեցին տասներկու դար ներուժ քրիստոնէական զգացողութեան մը ծորումներով: Այսպէս արժեւորել Խայեամ իմաստասէր-աստղաբաշխը, Ապուլ Ալաբարոյախօս-բանապաշտը, Հաֆըզ վայելապաշտ զգայնիկը, Ֆիրդուսի ձեւապաշտ դիւցազներգուն կը նշանակէ անհատներու վրայ թերեւս խճողելու չափ բարդուած իմաստներ բաշխել աւելի հարազատ **véhicule**ներու: Այս գործողութիւնը այլեւս ընթացիկ քննադատութիւնը չէ, պատմական անուններով, թուականներով համեմուած, այլ դժուար խտացուելիք շրջաններէ վկայութիւններու շնորհել կեանքին **aisance**ն ու արձակութիւնը: Հանգունօրէն կը հրաւիրուիք կենալ ձեր ժողովուրդին ալ այն դարերուն դիմաց ուր ծանր յաջողուածքներ իմաստին եւ զգացումին մարդերէն մենք այսօր կը ջանանք ընդարձակել, ցեղային ապրումներու ցանցին փոխադրելով ինչ որ անհատի մը անունին կապուած գործեր մեզ կը թելադրեն, ցեղային ապրումներու միջինէն: Այո՛, Քուչակի մը քառեակները, Յ. Սարկաւազի մը աղօթքները, Շնորհալիի մը միսթիք քերթուածները, նոյնիսկ Նարեկացին ու Լամբրոնացին,

յաջողուածքներ են բայց որքան հեռի վերը անուանուած օտար փառքերէն: Ասիկա ընդունիլ իր ժողովուրդին ստեղծագործ ուժէն տարակոյսներ հաստատել չի նշանակէր սակայն: Ասիկա ընդունիլ կը նշանակէ Անին կամ Միսը, Լամբրոնը չշփոթել Արեւելքի եւ Արեւմուտքի հսկայ քաղաքակրթութեանց կեդրոններուն հետ: Ասիկա ընդունիլ՝ կը նշանակէ մեր **եղին** գոհացումը մեզմով: Անգամ մը որ այս ճշտումը, սահմանագծումը չվիրաւորէ մեր ազգային փառասիրական արժանապատուութիւնները, մենք ունինք, օրինակ Քուչակը լայնօրէն մարդկայնացնելու միջոցները: Ո՛վ ալ ըլլայ հեղինակը անոր անունով մեզի հասած քառեակներուն – նկատի ունիմ համամարդկային **թեմաները** անոնց – բան մը ստոյգ է, ատ ալ՝ անոնց խորը մինչեւ այսօր բարբախուն, մեզ յուզող ու հաճ ու հաշտ ձգող մեր իմաստութիւնն է: Ասիկա երբեք չի նշանակէր Ռումիի իմացական սլացքին հետ բաղդատութիւն մը փոքրել, կործանել հայ ժողովուրդի բարոյական փորձառութեան մանր արժէքները: Թող սաւառնի իր ուզածին չափ Ճելալէտին Ռումին: Այդ սաւառնումը **Մեսնէվի**ին մէջ այդպէս սեւեռուելէ առաջ պարսիկ միսթիքին հոգիին վրայ միգամած մըն էր, այնքան մասնակի բարբախումներով: Պարսիկ հերձուածին զուգահեռ արաբ միսթիքին հեշտանքները: Չէք մոռնալու: Խայեամ իր տարակոյսները բանաձեւելու ատեն ինկած հրեշտակէ մը աւելի տառապանք էր ապրած: Քուչա՞կը: Շնորհալի՞ն: Լամբրոնացի՞ն: Անուններուն հետ իսկոյն զանգուածնէ՞րը՝ որոնցմէ կը բխին անոնք: Պիտի գտնէք որ այս ժողովուրդին երկինքը չէր կրնար տեղ բանալ տարակոյսին, անդերկրային թռիչքներու հեշտախտաւոր խուզարկումներուն որոնք հոս իրենց տրտմութիւնը պիտի ուզէին լուսաւորել վերնական ստուգութիւններով: Մերինները երկինք նայած են բոլորովին տարբեր հոգեխառնութեամբ: Խայեամ երկինքը փլելու մէջ հեշտանք ու գոհունակութիւն կը հետապնդէր. մենք՝ երկիրը փլելու, այսինքն երկինքը կազմելու արարքը նկատած ենք մեր գերագոյն պարտականութիւնը: Ահա թէ ինչու չըլլանք ժխտած, որ այնքան ալ քաջութեան կարօտ խաչակրութիւն մը չէր, երբ

գործադրուէր քիչիկ մը զգուշութեամբ: Չըլլանք թռած, թէւ Նարեկացիին երեւակայութեան թելերը, հաստ ու հաստատ, զինքը երբէք չեն մատնած, ծանօթ ծովերէ իր արշաւներուն ընթացքին, ծովերը եկեղեցոյ հայրերուն ապահով աստուածաբանութեան...: Չենք թռած, մեր աչքերը չկտրելու համար հաստատ գետիններէն: Ու Ֆրիկին, Թլկուրանցիին, Աղթամարցիին, Քուչակին, Նչեցիին, Գառնեցիին երկեակները, քառեակները այդ իմաստութիւնը յաջողած են սեւեռել, միշտ մեր կրցածին չափովը, այսինքն միշտ մեր **եղովը**: Երբէք մի մոռնաք սա պարկեշտութեան հրաւերը ուղղել ամենէն առաջ ձեր միտքին երբ զայն կը մղէք ժամանակներու վերաքաղին: Երբ Հաֆըզի, Սատիի, Պազիի տարփախռով գեղումները ձեզ այսօր ալ կը յուզեն իրենց փաղաղիչ հուրքին մէջ, ձեր զգայարանական դրութիւններուն քանի մը կարեւոր կեդրոնները – աչք, ականջ, միտք – ողողելով անուշ ու զով ապրումներովը սիրոյ գոլին, կրակին, մի աճապարէք արհամարհել նոյն դրութիւններէն նոյն կեդրոններուն վրայ նոյն կամ մերձաւոր յոյզերը արթնցնող ձեր Քուչակը, Սայեաթ Նովան, աշուղները, ժողովրդական անանուն բանաստեղծները որոնց մեզի ձգածը բաւ է հայթայթելու ամէն ինչ որ մեր ժողովուրդը պիտի ուզէր սիրել մեր ապրումներուն անդրադարձները կազմող մեր **representation**ներէն: Այդ անուններէն մեզի եկած յաջողակ նմոյշներ կը դիմանան հիւլէ առ հիւլէ, դարերու մաշումը արհամարհելով անարատ ոսկիին խաղաղութեամբը: Որքան շատ է թիւը, մեր անցեալը լուսաւորող սա շքեղ գեղեցկութեանց, միշտ

– **ԱՆՀԱՏԱԿԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԻՆ, ԶԵՂՈՒՄՆԵՐՈՒՆ ԿԱԼՈՒԱԾԷՆ:**

Չէք մոռնալու ասիկա:

(Շարունակելի՝ 5)

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, ԻԲ. ՏԱՐԻ, ԹԻԻ 11–12, ՆՈՅՆՄԲԵՐ–ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1948, ԷՁ 306–310)

ՄԻՏՔ ԵՒ ՄԻՐՏ

-----

ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՀԱՐՑԵՐՈՒՆ ԱՌՋԵՒ

Կուզամ ուրիշ իրողութեան:

– Մի արհամարհեք<sup>18</sup> ձեր ժողովուրդը երբ **Սասմայ Օռեր** բանաստեղծական վիպումին մէջ կը հաստատեք թերիներ, նուագումներ բաղդատուած **Ընձենաւորին** կամ **Շահնամէին**: Արուեստին շուրջ ծանր ընդհանրացումներ սեղանի բերել պիտի նշանակէր այդ հարցերէն պարզագոյններուն իսկ շուրջ պարտ ու պատշաճ լուսաբանութիւններ փորձելը: Այդ աշխատանքը կատարուած է շատերու կողմէ: Զանոնք խճրճել, հերքել, «հարթել»ու փառասիրութեան մը չեն ծնունդ սակայն սա քանի մը նշմարները: Անանուն կամ անունով մեզի հասած հին դիւցազներգութեանց համար հեղինակներու ստուգումը, ատեն մը բանասիրական, պատմագիտական չոր հետաքրքրութիւն, մեր օրերու քննադատութեան համար առած է ուրիշ նկարագիր: **Սասմանց Տունին** հեղինակը կամ հեղինակները կը վրիպին

---

<sup>18</sup> Մէկ անգամի համար. – կը հրաւիրուիք իբր ռոմանթիք, ապայծմէ խանդավառութեան ցոյց արժեւորել ծանր, տրտում միամտութիւններ, որոնցմէ մէկն է **Սասմանց Տուն** վիպումին շուրջը գրեթէ բոնի լաստակերտուած **ապօթեոյը**: Ապահով եմ որ վիպումին հեղինակը կամ հեղինակները երբեք միտքէ չանցուցին որ այդ առանց յաւակնութեան, բնական զեղումով իրենց պատմած ապրումները օրին մէկը նիւթ պիտի դառնային այնքան այլընդայլոյ գնահատանքի, հիացման: **Սասմանց Տուն**երուն գեղեցկութիւնը ինք իր մէջ իրեն կը բաւէ: Ալ ելլել անոր հագցնել մեր ժողովուրդին ստեղծագործական տազնապնդումն բաւարարութիւն բերող գրահանք, զգեստաւորում, կը նշանակէ **չտեսութիւն**, որ աւելի դառնագին բանի մը կը վերածուի երբ կու գայ աջէն ու ձախէն: Չիթունիի յեղումը այդ չտեսութեան մէջ չեմ կործաներ, բայց անոր հիացումն ալ պարտաւոր եմ կանչել իր չափին: Առանձին նիւթ է **Սասմայ Օռեր** (այսպէս ալ կանուանենք այդ քերթուածը) վիպումին քննախօսական վերլուծումը: Ու դուրս, առայժմ, իմ մտադրութենէն:

մեր վերլուծումէն: Անոնք չեն հերքեր սակայն ընդհանուր լինելութիւնը որ մեր աշուղներուն, ժողովրդական երգիչներուն կը թուի հասարակաց ըլլալ: Շատ մը պահանջներ կը ձգեմ մէկդի, դիւցազնավէպի մը հեղինակները մօտէն սեղմող: Իր արդի կերպարանքին տակ, երեսունէ աւելի փոփոխակներուն համագումար վկայութեամբը այդ վիպումը ազատ ստեղծումի մը հոմն ու համը կը թելադրէ աւելի որքան չընէր միւս նշանակալից թելադրանքը խնամուած, մշակուած, վերամշակուած յօրինումի մը: Չայն ընդունիլ անկման դարերու ստեղծում կը նշանակէ խորհիլ փառքի դարերու յաջողուածքներուն որոնք պատառիկներով հասած են մեզի (Խորենացիէն, Մագիստրոսէն հաւաքուած): Լեզու, բարքեր տարօրէն մօտ եւ իրաւ վասպուրականեան աշխարհին, հեթանոսականին, պատմականին, քրիստոնէականին, նոյնիսկ արաբականին ցոյքերը այդ քերթուածին մէջ, ապացոյցներ են իր ծագման հասարակութեան: Ստեղծագործը, կամ ստեղծագործողները – նոյնքան հաւանական անոնց բազմութիւնը – հազիւ կը տարբերի իբրեւ միտք եւ զգայնութիւն զինքը մտիկ ընող հասարակութենէն: Ասիկա, հաստատում մը ըլլալէ աւելին է սակայն: Շրջեցէք պայմանները: Ըսել կուզեմ քերթուածը ունկնդրող բազմութիւնը փոխարինեցէք ձեզի ծանօթ նման ստեղծագործութեանց հասարակութեան իմացական կերպարանքներովը: Անոնք որ **Իլիականին** վերակազմուած յեղումը կընէին մտիկ, կը պարզէին միատարր բազմութիւն: Տարբեր սակայն արքայամատեանին ընթերցողներով կազմուած **public**ը: Ու երբ կ'ելլէք պարկեշտութեան սահմաններէն ու **Մասմայ Տոները** կը պարտադրէք մեր, արդի հիացումին, կընէք արժեւորում մը որ իր առաջադրութեան իսկ կը դաւաճանէ: Քիչ ծանօթ եմ **Ընձենաւորը** ստեղծող տիրական նկարագիրներուն: Բայց մօտէն ըսուելու չափ հաղորդ եմ **Շահնամէի** հոգեյատակ ծառայող ապրումներուն: Ատոնք իրարու հակազդելու համար չէ որ իրարու ետեւէն կը յիշեմ հոս: Պէտք չկայ վերակազմելու **Մասմայ Տոները** ունկնդրող հասարակութիւնը, իր էական գիծերուն մէջ ծանօթ ըլլալու: Բայց պիտի ուզէի որ ծանրանայիք սանկ քիչիկ

մը ընդարձակ փաստին որ պարսիկ մշակոյթն էր, **Շահնամ**ի դարուն, երկհազարամի մօտ շրջափոխութենէ մը վերջ, իրերայաջորդ ու իրերամարտ կրօնքներու, հոգեխառնութեանց ընդմէջէն: Ու ձեր մտքին առջեւ բարի ըլլայիք կեցնել այդ **խաները**, իրենց արքունիքները, իրենց աւագանին, Արեւելքին մեծ հիացումները, ծանր թմբիրները ու խորունկ զգայապաշտութիւնը որպէսզի բանաստեղծը ազատագրէիք հայոց գրականութեան ընտանի թշուառական իր բռնաշապիկէն, այնքան անկնիք, շատ-շատ տիրացու կամ վարդապետ որուն արգիլուած են բոլոր լարերը աշխարհիկ ապրումներուն...: Առանց մեծ կայսրութեան մը փարթամ հանդիսանքներու, գուսաններու ընդարձակ պարերուն, սիրտերը թունդ հանող կիրքի եւ յաղթականի յոյգերուն, արեան հրդեհներուն ու Արեւելքին ծանր, կաշուն վայելապաշտութեան **Շահնամ**էն չէր իսկ կրնար յղացուիլ, գործադրուիլը մէկդի: Չեմ հարցնէր **Սասմայ Օտեր**ուն հեղինակը, Ֆիրդուսէին կամ Ռիւսթավէլէն հալածական մէկու մը ոչ անշուշտ հոգեբանութեամբը, բայց փորձառութեանը մէջ հայ գրականութեան ընդհանուր տուեալներուն որոնք ցայսօր կը պահեն կարծես իրենց դատակնիքը մեր ստեղծագործութեանց վրայ: Բայց իրաւունք կուտամ ինծի հարցնելու

– որո՞նք են **Սասմայ Օտեր**ը մտիկ ընողները: Ո՞ր: Ո՞ր մշակոյթին կշռոյթին մէջէն: Ու իմ հարցումը պարզ հետաքրքրութեան բանաձեւ մը չէ բոլոր անոնց համար որոնք ծանօթ են, պատմութեան արահետէն, դիւցազներգութեան – բնածին թէ գրագէտի միջոցներով լաստակերտուած – ստեղծուած խանդին: Ֆիրդուսին մտիկ ըրին ոչ միայն վեհապետներ, այլեւ աւագանին, այլեւ մանաւանդ բազմահազար մարդեր: Ու Ֆիրդուսին, Խայեամին նման ուղեղն էր իր դարուն: **Սասմայ Օտեր**ը երգախառն<sup>19</sup> արտասանող յիմա ըր: – Կը գրեմ վերա-

---

<sup>19</sup> Վասպուրականէն հեքիաթասաց մը, քանի մը տարի առաջ պատմեց պարսկական յօրինում մը յիշեցնող ընդարձակ հեքիաթ մը: Չէի կրնար ըստէ մը թափուիլ ուշադրութենէդ, այնքան պարզ սա յեղումը կը պահէր

դիրը այցուելով մեծ աշուղները ժողովուրդի երեսկայութեան մէջ կենդանի պահող ստորոգելիներէն որոնցմէ փունջ մը շատ օտարոտի պիտի չթուէր մեր օրերու քերթողներուն անգամ երբեմն, մեր ժամանակներու էն տիրական խենթութեանց սպասարկու: Շատ-շատ քիչ մը աւելի համով յիմար մը թերեւս, այսինքն աշխարհը կոնակի մախաղին, ուսընդանութ սագին, ոտքերու տրեխին հաւասարած **նիվանէ** մը: Ու այդ աշխարհին հիմնական մէկ գաւառէն – Իմացականութիւն – բացարձակ անգէտ մը: Մեր Քուչակը թերեւս իր գրածը հագիւ հեգելով կարդալու կարող շքեղ յիմար մըն էր (մէջտեղն է փաստը Սայեաթ Նովայի **Տաֆթարին**, իբր գիր) երբ զայն փորձուիք բաղդատել Արեւելքի նոյն գիծէն բանաստեղծներու. ըսի թէ **Ռուպայիաթին** հեղինակը իմաստասէր մըն էր, մաթիմաթիկոս աստղաբաշխ մը: **Մէթսէվին** մինակ քերթողաշարք մը չէ, այլեւ կրօնական բարձրագոյն մտածողութեան մը (համահաւասար **Կալվինիզմին**, **Ժանսէնիզմին**) արձակարանը, Արեւելքին, Արեւմուտքին, հնութեան եւ իր ժամանակի կրօնական ծանրածանր տագնապներուն անդրադարձ խռովքներէն առաջացած ու զանոնք ընդոտնելու, այսինքն անոնցմէ ազատագրուելու բարձրօրէն մարդկային, իրաւ, սրտայոյզ խոյանք մը...: Ու պայմաններու, բոլորտիքի սա ազդմունքները, սա յարդարանքը, ճակատումն ու արդիւնքները կը մնան ի զօրու բոլոր ժամանակներու նման իրագործումներու բախտին: Այս հանգամանքը, անոնց հեղինակները փոքրելու փոխարէն կը բարձրացնէ իմ նկատառմանս մէջ: Չեմ ըսեր որ մեր արուեստագէտը միս մինակը, անպաշտպան է ստեղծեր, իրեն պաշտպան ունենալով իր հանճարը (սա ալ իրականութիւն մըն է բայց ոչ պայման մը): Կըսեմ սակայն թէ մինակ է մնացեր յաճախ, իր

---

կեանքին համն ու աղը ամբողջ: Բայց յեղումին մէջ ուրիշ իրողութիւն երգերը, միօրինակ, լալկան, ձգձգուն, որոնք ամենէն կրայոյզ դրուագները կը յանձնէին բացառիկ նկատառման: **Աշուղ Ղարիպ**, **Լէյլա Մէճնուն** կը մնան Թուրք գրականութեան մէջ այս ձեւ առումի նմոյշներ: **Մասմայ Օռերը** հագիւ թէ զատուած մասեր ունի իբր երգ (Արեղեանի խմբագրութեամբ Խորհրդային Հայաստանի հրատարակութիւն 1935):

հզօրագոյն իրագործմանց տազնապին մէջ, եթէ երբեք չէ ալ հալածուած, – դարձեալ իրաւ պարագայ բայց ոչ պայման մեծ գործի մը կերտումին մէջ: Չեմ բացուիր, չմղուելու համար արեւմտահայ գրական էն արժանաւոր մշակները զարնող ճակատագրական ուրացումներու, անարդարութեանց պարզումին...: Հոն, ուր մարդ մը – արուեստագետը – մեր մէջ, քիչ շատ համակրալից խումբի մը առնուազն վերացեալ պաշտպանութեանն է արժանացած. հոն, մեր ստեղծագործութիւնը կը կենայ մօտիկը, եթէ ոչ հաւասար, օտար մշակոյթներու բարձրագոյն անուններէն նմանատիպ ստեղծագործութեանց: Պետրոս Դուրեան Միսէ մը, Շէլլի մը չէ անշուշտ ոչ ալ Վարուժան՝ Հիւկօ մը: Բայց օտար մեծագոյն անուններէն մարդկութեան հասարակաց գանձարանը առած է այնքան պահեստ, որքան պիտի առնէ Վարուժանէն, Դուրեանէն երբ հասնի ժամանակը ազգերը կշռելու, արժէտըրելու՝ ծանրութեամբը այդ պահեստին բերած իրենց յաւելումներուն, ոչ թէ բանակին, ոսկիին, գործիքին, անասնութեան մագիստրոսական մագաղաթներովը: Թող Դուրեանը փոխադրուի օտարներուն իրաւ բանաստեղծի մը **մօտէլներովը** եւ ոչ թէ խաչագողներու հաշիւներով, դուք կը տեսնէք հրաշքը: Միւս կողմէ, թախանձագին կը խնդրեմ որ կրցածնուդ չափ արագ, ու արմատական պարկէշտութեամբ մը, հրաժեշտ տաք մեր արժէքները, առակի գորտին միամտութեամբը, ուռեցնելէ իրենց իրական տարողութենէն անդին: Ոչ թռիլ, ուրիշին թելերով ոչ ալ վախով սողոսկիլ: Ապրիլ: Ու ապրելու հիմնական արարքներու մէջ, գործարանը, սիրտը հազիւ թէ կը տարբերի Արաքսի կամ Սէնի ակերուն: Ու եղէք բարի, սա այնքան պարզ հաւաստումը փոխադրել մշակոյթի մեծատարած աւազաններուն ուր տարբերութիւնները կը զօրեն ոչ հիմնական, հրամայողական հակադրութիւններ ինչպէս, այլ իբր երանգաւորում, մայր գոյնի սանդուխին վրայ յստակ կերպարանքներէն, մօտէն, բայց որոշ հեռաւորութենէ մը անդին թելադրելով սկաւառակեան (Նեւտոն) նկարագիր, խորքի մերձաւոր հաւատարմութեամբ մը միշտ: Սոփեստութիւն՝ զուգակշռել **Ս.**

**Իմաստութիւնը (Այս Սոֆիա)** եւ **Զուարթնոցը**, մանաւանդ ասոնց ետեւէն ցեղերը կշռել, արժեւորել (այնքան ուրիշ ազդակներ կը միջամտեն մեր կշիռներուն երբ կը փորձենք ազգերը զարնել **սբեզդրալ անալիզի**, գերման իմաստունին միապաղաղ պարզմտութենէն դուրս հիմունքներու վրայ դնելով շեշտը: Ու նոյնքան սովեստութիւն երկրորդին, **Զուարթնոցին** զլանալ բարացուցական այն տարողութիւնը որով պատուուած է առաջինը, **Իմաստութեան** սուրբ տաճարը, Պոլիս, երբ աստուածութեան գերագոյն սրբատեղին ճարտարապետօրէն այնքան քիչ կը խօսի ազգերուն աչքին...: Ու անմարդկայնութիւն երբ **Ս. Սոֆիային** կառոյցը ուժաւորող ճնշումը, ծաւալը, կիրքը, սլացքն ու բիրտ զայրոյթը ժխտօրէն կը հակադրէք **Զուարթնոցին** շնորհին նուրբ, տրտում հրապոյրին: Աւելի արդար ըլլալ պիտի չնշանակէ թ երկու գլուխ-գործոցներուն ալ տալ դեր մը, պաշտօն մը թարգմանելու մերձաւոր իրողութիւն մը, **ստեղծումը** երբեմն կիրքով, երբեմն փափկութեամբ, բայց միշտ իրողութենէն անդին ալ բաբախումներով: Ու դարձեալ կը խնդրեմ որ այս զաղփաղփուն բաներով յաւակնութիւն չունենաք ազգերու խորագոյն հոգեդրութեանց թափանցումը իրագործած ըլլալու եւ բառերու օգնութեամբ լաստակերտելու մեր գլխուն արուեստի շուրջ այնքան անդիմադրելի կերպով մը արտաքուստ լուրջ թուող, բայց ներսէն այնքան ոսին, թեթեւ (սուլիկ նոյնիսկ) ու հիմնովին անկշիռ բառեղէն ձեր կառոյցները, այս դարուն կէսերէն սկիզբ առած հայկական մեծ մշակոյթին **միթոսը** քնարական գեղումներու պատրուակ առնելով, երբ իրողութիւնը ինք իր մէջ կը բաւէ մեր համակրանքին ու կ'առաւելու, արդար մտածումով կշռելով մեր ըրածները, **մերը մեր եղով**: Ինքզինքը սփոփելու ունայն խաղ մը արդեօք, հոս յիշել, նոյն պողոտաներուն վրայ համագօր վրիպանքները, մեզմէ շատ վեր դասուած մշակոյթներու ախոյեաններուն բաջադանքներէն, – այնքան նուրբ, ծփուն, անհակակշռելի բաներ, դուք ըսէք իմացական ապրումներ, հեշտանքներ, մասնակի զգայարանքներով սեւեռելի, որոնց գերման թանձրապաշտութիւնը կայ դար մը կը հազցնէ հա կը

հագցնէ օրէնքներու մեծադորդ որոշադրականութիւն, մաթեմաթիքական ըսուելու չափ անողոք, կարծր, անվրէպ հրամայականներ, ծիծաղելի որքան էին ԺԸ. դարուն վերջերը բնագանցագետի մը գրիչով աշխարհին հրամցուած ու յիսուն տարի ետքը չարաչար պարտուած... գերման իմաստասիրութեան մշտնադէմ ընդհանրացումները, ԺԹ. դարուն եւ դասը, Հէկէլէն մինչեւ կոմս Քէյզերլինկ: Այս բոլորը որպէսզի լրագրողի հոգեբանութեամբ ծնած մարդեր իրենց ճարեն աւելի բարձր **complex**ներ: Եւ կամ դասախօսներ իրենց միօրինակ **exposition**ներուն քիչիկ մը համեմ կարենան աւելցնել: Եթէ իմաստասիրութեանց ճակատագիրը կործանելն է, արուեստի պարկեշտ գործերուն գիրն ալ ապրիլն է անորոշ ժամանակով: Ու շրջումը: Այսօր ռուսերը կը մերժեն ամերիկացիներուն մշակոյթի մը հպարտութիւնը, անոնց թեքնիկին – այսինքն մետաղին եւ մետաղացած իմացականութեան ընելով զիջում բայց զիրենք վտարելով իսկական մշակոյթէն որ ոգիով է պայմանաւոր: Անգլիա, Ֆրանսա, Ռուսիա մօտ են իրարու այդ ոգեկան ժառանգութեան մէջ ու հաղորդ Եւրոպայան յուզող մթին խորհուրդներուն, միշտ այդ ռուսերուն հաւաստիքով: Ամերիկան հրեաներուն **patrimoine**ը չէ անշուշտ որպէսզի ոսկի հորթը մշակոյթի սենյօլը յայտարարուի հոն: Բայց մեր գտածը, հայերուս գտածը այդ Ամերիկայէն տարօրէն կը կրկնէ ինչ որ Եւրոպայի մեծ ճամբորդները հաստատած են: Ես չունիմ սովորութիւն ժողովուրդներու վրայ դատումներ փորձելու երբ անոնց երկիրը չեմ ճանչնար: Բայց այդ երկրին ճնունդ արարածները տեսեր եմ, ամենէն պատասխանատու կարծիքներու վաճառորդ: Տուի հատ մը նմոյշ: Կը յիշեմ Մորկընթաուն որ երեւան է եկած ազնուական անկեղծութեամբ մը Թուրքերը ներկայացնելու այնքան դժուար իր պարտքը վճարած ատեն: Ահա ձեզի մշակութային յաւակնութեանց եւ մշակութային հարազատ թելադրանքներու կշիռ մը: Այսօրուան Ամերիկան դատապարտել չի նշանակեր կրկնել 1900ի Եւրոպական գրողներէ փորձուած խաչակրութիւնը: Այդ գրողները կապրէին իրենց փառքն ու մռայլութիւնը ուրիշ հեշտանքներու ակօսնե-

րով ու կը տառապէին որ Նոր Աշխարհի հարուստները չէին տրամադրեր իրենց դրամը, ժամանակը Եւրոպայի արուեստներուն...: Այսօրուան Ամերիկան չեմ մեղադրեր վաճառապաշտութեամբ, քանի որ այդ պաշտամունքը մենաշնորհ մը չէ Ամերիկային: Եւրոպան նոյնքան ապարուեստ աշխարհ մըն է այսօր: Ու արդարութեան յղացքը ամենէն հզօրներէն ինչպէս մաքուրներէն մէկն էր սանկ մինչեւ 60-70 տարիներ առաջ: Գերման թանձրապաշտութիւնը հերոսաբար ուժին յղացքը առաջարկեց մշակոյթներուն իբր խմոր: Արդիւնքը այսօր ատլի քան հզօր կերելի ամերիկեան մշակոյթին վերին նմոյշներուն վրայ: Այդ մշակոյթը կը տառապի որ համայնավար կարգերը կրնան ազատ Յունաստանը ողողել, մանաւանդ ազատապերճ Թուրքիան գրաւել: Զիջում մը: Ու հարցում մը, արդարութեան ախոյեանին արձանը Վաշինկթօնի մէջ արդեօք չի՞ տառապիր երբ կը տեսնէ – քարերն ալ կրնան տեսնել, ինչպէս մետաղները ու ասոնցմէ ալ յոռի՝ մարդերը – որ իր երկիրը կը պաշտպանէ սպաննողներու աշխարհ մը: Ու ինչպէս կը մարսէ, Արդար Վաշինկթօնի ուրուականը ամերիկեան մշակոյթը այսօրուան, երբ իր անունով, բանակներով, ռումբերով հայ ժողովուրդին հազարամեայ (քանի մը պատիկ) հայրենիքը կը զլանայ այդ ժողովուրդին բեկորներուն ու այդ հողերը կը բաշխէ մարդասպաններուն: Ահա պարզ, շիտկէ շիտակ ըսուած խօսքեր: Միամտութիւն սպասել որ իմ խօսքերը պիտի արժանանան արձագանգի: Բայց չենք դադրիր սպասելէ, կը կրկնեմ, օրուան ուր ոսկիի, խաբէութեան, հեշտանքին եւ գործի կիրքին վրայ հաստատուած այդ մշակոյթը պիտի պատռի ինքիմեզէն, ծնունդ տալով մարդոց որոնք պիտի ազատեն պապերուն անուան, յիշատակին վրայ նետուած սա ստրջանքը եւ պիտի ազատագրեն ոչ թէ Յունաստանը, Թուրքիան, Արեւելեան Եւրոպան, Ռուսերէն, այլ համայն մարդկութիւնը՝ ամերիկացիներէն: ...Կարդացի որ Նոր Աշխարհի եւ միջնաշխարհի (Հիւսիսային Աֆրիկէ) Նէկրօները կուրանային ճերմակ քերթողներու գործին մէջ յոյզ, մարդկութիւն, ստեղծագործական շնորհք ու բարիք: Կրնային իրաւունք թերեւս ունենալ, իրենց

ձեռքը ինկած ճերմակ բանաստեղծներու հաշւոյն: Բայց ուրիշներու մօտ աստոնց գոյութիւնը ուրացող մը պիտի մտածե՞ր անոնց չգոյութեան, իր հաշւոյն: Ու հոս է որ կը սկսի ողբերգականը – ո՞ր է որ բանաստեղծական զգայարանքը **կը սեւնայ, կը դեղնի, կը կարմրի, կը ճերմկի** (այս բառերուն տուէք ցեղային մոյնքէ տարողութիւն մըն ալ): Կը յիշեմ շատ սրտառու, շատ յուզիչ, հարազատ ստեղծումի նմոյշ մը սեւերէն գրուած: Ճերմակներէն իրենց գտած աստուածութեան իրենց սորված աղօթքներէն մէկը, սեւ քերթողի բերնին մէջ, **ի դէմս Ս. Երրորդութեան**, առած էր սա անսպասելի կերպարանքը: Սեւ քերթողը, աչքերը առտուն արեւին բացած ատենը կը բանար նաեւ իր բերանը արտասանելու համար սա սրբազան, սրտայոյզ, տարօրէն խորունկ եւ իրաւ պաղատանքը Ամենակալին «գահոյիցը» մատուցուած

– **Ջնջէիր հետախաղաղ բոլոր ճերմակները, ակնթարթի մէջ, ով Ամենակալ, Աստուած Արբահամու, Իսահակայ եւ Յակոբայ...**

Ես ասիկա կարդացեր եմ տարիներ առաջ ու երազեր սեւին, սեւերուն, անոնց ետեւէն բոլոր գրկուածներուն: Նման աղաչանք մը մեր Տիրոջը վերառաքելու համար այդ սեւերուն իրաւունքէն խօսի՞լ, – պիտի նշանակէր հիննալ, ջրհեղեղէն ալ անդին իյնալ իբրեւ միտք: Ճերմակներու կայսրութեան մէջ սեւերուն տառապանքները մինակ գիրքեր չեն ներշնչած: Անոնք իրաւ են էլի մինչեւ այսօր: Ու այդ իրաւութիւնը անվճիռ կանցնի խղճմտանքէն բոլոր կայսրութեանց ճարտարապետներուն, ինչպէս ճերմակներու նոյներանգ տառապանքը մոնկոլներու ճիրաններուն մէջ չէ ստեղծած ոչ մէկ արժող խոռվք: Թուրքերը, միշտ իմաստուն, քանի մը անգամ յիշեցուցին ճերմակներուն, գունաւոր մարդկութեան դիմաց եանքիներուն հակազդեցութիւնը, զայն գտնելով առնուազն հաւասար մոնկոլներուն ու հրաւիրեցին զանոնք կարճ ընել իրենց լեզուն: Ի՞նչ էր իրենց ըրածը եթէ ոչ ան, աւելի մեծ սանդուխի վրայ, ինչ որ եանքիները կ'ընէին, կ'ընեն սեւերուն համար: Ահա բարձր եւ ստոր ժողովուրդներու նոր հաւասարութիւն մը, ու ասիկա՝

ամենէն անսպասելի գետինին վրայ: Կայ տակաւին **Արեւելք-Արեւմուտք** տարազը, դարու մը մօտ կեանքով: Հարիւրամեայ այդ սովեւտութեան ետին գետեղուած բաջադանքը, յիմարանքը, անգթութիւնը չեմ գարներ վերլուծման. ցեղային յաւակնութեանց հանդէպ իմ զգացած խորունկ զգուանքէն: Մարդկային մնալու կարելիութիւնը թերեւս դժուարագոյն առաքիւնութիւն մըն է մեր օրերուն, հարիւր տարիէ ի վեր իրարմէ զայրագին անասնութիւններ մշակած, պատուաստած ու շուկայ հանած ըլլալնու: Մեր բառերը գործածենք պարկեշտախնդրութեամբ, քանի որ դարէ դար, երբեմն սերունդէ սերունդ, այնքան տարբեր, նոյնիսկ հակադիր իմաստներ կը հագնին: 1860ին, այսինքն Տասթոյովսկիի օրերուն, **Արեւելքը** բոլորովին տարբեր բան մըն էր սա մարդուն հոգիին մէջ, սիրոյ, երկինքի գերագոյն տաճար, որ **Իմաստութեան Սուրբ Տաճարին (Այա Սոֆիա)** կատաղի կարօտով, պապականը հրդեհեալ հնոցի մը նման անոր օրագիրներուն մէջ (**Le journal d'un écrivain**) կ'ապրի տողերը: Շքեղակառոյց սա ատելութիւնը՝ Պոլսոյ տաճկցած Մայր եկեղեցիին գմբէթին վրայ շողափայլ վառելու Քրիստոսի խաչը, ռուսական ոսկեգոյն կտաւին ետեւէն: Եւ պարտաւոր եմ յիշել ուրիշ ալ դրուագ: Պուշկինի արձանին բացման առիթով սարքուած համառուսական հանդէսներուն, Մոսկուա, այդ մարդը ռուս բանաստեղծի անդրիին առջեւ մարդկութիւնը երբ կը հրաւիրէր ծունկի, այդ մարդկութենէն չէր վտարեր անշուշտ **Արեւելքը**, ոչ ալ մանաւանդ **Արեւմուտքը**, ինչպէս ասելի վերջը պիտի մեկնաբանէին իմաստուններ, Թուլսթոն՝ Արեւմուտք, Տասթոյովսկին Արեւելք յայտարարելով: Քննադատական սա աճպարարութիւնը կ'արժեւորէք պարտ ու պատշաճ, ինչպէս կըսեն գաղիացիք: 1930ին, ներկարար մը, մեր յիմարութեանց համագումար փառքովը, լման աշխարհի ախոյեանը կը յայտարարէր ինքզինքը ու իր գիրքին մէջ **Իմ Պայքարները**<sup>20</sup>, Արեւելքը լման, կէսը Արեւ-

<sup>20</sup> Հիթլերի գիրքը իրմէն առնել (կըսեն թէ Հէսն է անոր հեղինակը) ազատագրել չի նշանակեր գերման հերոսապաշտութիւնը: Գէշ գրուած գիրք

մուտքին ուրիշ բան չէին եթէ ոչ բնաջնջուելու սահմանուած անբաններու բնակավայր: Հիթլերին սա գնահատման մէջ, ըսի անգամ մը, մուտք ունէին Ֆրանսան, նախատական մակդիրով մըն ալ պսակուած (*négroïde*), Անգլիան, Նիչէէն խանութպաններու աշխարհ մը մկրտուած, ու գիտէք վերագրումներուն ոսկեգօծ սրբագրութիւնը: Այդ հողերէն բնիկներուն ջնջումը ծառայեր էր քաղաքակրթութեան: Բ. պատերազմը աւելի պայծառակերպեց տեսութիւնը: 1950ին – քանի մը տարին շատ բան չի փոխեր մեր կարգերէն, հոս կանխուած – երկրորդ աշխարհամարտը շահող հոգեբանութիւնը ո՞ր կիսագունտին պիտի շնորհենք, քանի որ աւելի քան ստոյգ է որ Արեւմուտքը – Անգլիա եւ Ամերիկա – եւ **Արեւելքը** – աշխարհի մէկ վեցերորդին կայսրութեան ներկայացուցիչ Ռուսիան – համատրոփ ճիգերով եւ հզօր գոհաբերումներով քանի մը տարի ճակատ յարդարեցին անասնութեան քաղաքակրթութեան դիմաց: Այսօր Արեւմուտքին կէտը – Անգլիան – կը թուի նահանջել, միւս կէտին տարապայման գրոհումներուն զուգահեռ ընկրկումով մը: Ու Արեւելքին հզօր կայսրութիւնը կը բացուի ուրիշ ախորժակներու: Քաղաքականութիւնը, որքան ալ ծիծաղելի, գրագետի մը գրչին տակ, չի դադրիր մարդկութեան գերագոյն տռաման կազմելէ: Ահա թէ ինչու մարդկային արդարութեան գերագոյն յղացքները ականահար ընող պարտութիւն մըն է անգլիական նահանջը որ նոյն ատեն մեկնակէտ մըն է բոլոր ճճիութիւններուն ասպարէզ իջնելուն, հիւլէական ռումբին տարազներուն ետեւէն, օրին մէկը բացարձակ ուխտովը խոստացուած հողամասերու տիրապետումին: Քաղաքակրթութեան

---

կըլլայ այդքան: Ասիկա գիրքին դժբախտութիւնը չի կազմեր սակայն, ոչ ալ անով մարդկութեան հասած չարիքը կը մեղմանայ: Փաստը աւելի քան ահաւոր, ամէն ժամանակներու համար ալ նոյն: Ով շինեց բախտը **Այսպէս Խօսեցաւ Ջրադաշտը** պոէմային, որ իբրեւ գրական յեղում, քնարական զեղում, գաղափարներու **dissociation** իր արժանիքը չէ կորսնցուցած անշուշտ բայց որմէ հանուած **իւթոպիան** մարդկութեան արժեք առնուազն հարիւր միլիոն կէանք: Ահա գաղափարին չարիքը, երբ կելլէ ուղեղէն ու կիյնայ անուղեղներու:

եան գլխուն նոր դամոկլեան սուրը ճօճող եանքի ճարտարարուեստը գերման զօրապաշտութեան մեթոսները չգործածեց տակաւին: Գրեցի տեղ մը որ Անծանօթին մէկ կէտէն բացուած փոքր ճեղք մը – հիւլէին պարտութիւնը – սկիզբ մըն էր, աւելի ահաւոր աղէտներու: Չեմ նկատեր ծանր **պըլըֆ** մը թերթերու եւ հանդէսներու մէջ ատեն-ատեն թխպացող սպառնալիքը մարդկութեան ջնջումէն: Ի վերջոյ, ամերիկացի մը կէանքին ծագումը բացատրող շիմիք տեսութիւն մը երբ կ'առաջարկէր, կընէր իր դաւանական վարկածը հաւանականութեանց հաշիւի մը վրայ (**calcul des probabilité**) որուն համեմատ **կէանքը** եւ **ոչ-կէանքը** իրարմէ կը տարբերէին **գառապնի** թէ **օքսիժէնի** չեմ յիշեր լաւ մոլիգիւլներու թիւին մէջ 1ի միայն առաւելութեամբ կամ պակասով: Միլիառ անգամ միլիառ դարերու վրայ կրկնուող եւ արուող, շինուող եւ նորէն արուող բաղակցութեանց մէջ այդ մոլիգիւլներուն՝ մէկ անգամի համար տարագ մը – որ իրականին մէջ մարմինը կազմող միլիոնաւոր մոլիգիւլներուն հազած վաղանցուկ մէկ կերպարանքը կը խորհրդանշէ – ենթակայ է նոր բաղակցութեան առջեւ անհետանալու: Այն ատեն սա տիեզերքը, մէկ մոլէգիւլի կշիռով մը մեզմէ կշռելի, կը դադրէր իր գերութենէն դառնալու համար շքեղ իր **անգիտակցութեան** – մարդկային առում՝ քանի որ հիմնովին մեզմէ կը վրիպին ուրիշ, աստեղային գիտակցութիւններ – մինչեւ որ նոր միլիառներով միլիառ դարերու վրայ մոլիգիւլներու նոյնին միլիառաւոր բաղակցութիւնները հաւանականութեանց հաշուով արտօնուէին ուրիշ տարագ մը հազնելու, ա՛յն ալ կէանք անունով...: Ներեցէք ինձի որ ձեզ կը տանիմ սա ենթադրութեանց միգամածները մինչեւ: Ասիկա չի նշանակիր յաւակնութիւններ կոտրելու համար մշուշներ համրել կամ հալածել: Եանքիներուն ճօճած խրտուիլակը, ուրեմն հեռու է աշխարհը վախսնելէ, նոր ըմբռնողութեանց մուտքին, քանի որ լիլիբութեան ուժերուն աշխարհն ալ վաղը կրնայ իրաւ դրութիւն մը դառնալ: Ըսի անգամ մը ու կը կրկնեմ.

– ո՞վ է մեզ երաշխաւորողը որ հիւլէական ուժէն գերազանց, անկէ աւելի ահաւոր ուրիշ բաղակցութեան մը քայքայման գաղտնիքը վաղը, միւս օր, գալ տարի, քառորդ դար վերջը պիտի չգողցուի գաղտնիքներու ամբաւ շտեմարանէն, այս անգամ իբրեւ ասիացի արհամարհուած միտքի մը կողմէ, **«յարեւելեան կողմն աշխարհիս»**, ու պիտի չգրկէ արժէքներու սակացոյցը, հիմա ոսկիին եւ նիւթական զօրութեանց բեւեռներուն միջեւ առանցաւոր, ամրախարհիսիս: Մպառնալի ք մը, աշխարհը կործանելու, թուրքերու մարմաջովը՝ ամենէն առաջ անոր մէկ վեցերորդը, բայց եանքիներու զգուշաւորութեամբը շշուկով փսփսացուած, վաղը ո՞վ պիտի արգիլէ որ չքարոզուի տանիքներէ եւ թերեւս քանի մը տարիէն՝ երկինքներէն ալ դրուի գործադրումի: Ալ նկատի չեմ առներ վաշխը, քարիւղը, քաղաքական իմաստութիւնը, ապերախտութիւնը, ապաստութիւնը, – ներեցէք այս գէշ բայց այնքան իրաւ բառին – երբ ապշած կը հետեւիմ քառորդ միլիոն զոհերով գնուած յաղթանակին պտուղներուն որոնք զագաններու կլափին կը մատուցուին շքեղ սառնասրտութեամբ մը: Մարդիկ թուրքը կը պաշտպանեն անոր դաւաճանութիւնն հասարակաց դատէն վարձատրելու մէջ իրենց քսակն ու միտքը տրամադրելով ու այդ քսակն ու միտքը մերժելով երէկի դաշնակիցին որ մինակը կրեց պատերազմին ամենէն ծանր հարուածները, կորուստը մարդէ եւ նիւթէ եւ այսօր քիչ-քիչ կը վերածուի թիւ 1 հռչակաւոր (նացիներէն բանաձեւուած) թշնամիին, երբ մեծ կղերիկոս ըլլալու պէտք չկար այդ թշնամին գտնելու 1942-43-44 թուականներուն, գերմանական յաջողութիւններուն հետ իր դիմակը վար առնելու պատրաստ: Անշուշտ որ երկու աշխարհամարտները մարդկային հասկացողութեանց շատ մը մարզերուն վրայ չէին կրնար ծանրակշիռ անդրադարձներ չունենալ: 1920ին խղճմտանքները յոգնած էին չարաչար, ու դաւերը կարօտցուած, որպէսզի երէկի դաշնակիցները իրարու ետեւէ արձակէին իրենց խաղերը, սլաքները, յանգելու համար պարտուածներն իսկ օգտագործելու քաղաքական սնանկութեան: 1920ին Կիլիկիան բաշխող ողորմելի քաղաքականութիւնը

մօտիկէն կը յիշեցնէ 1947ի ծերակուտական առատաձեռն օգնութիւնը: Անգլիացի մը, երէկ, Թուրքիա իր այցելութենէն դրուագներ կը պատմէր, երկրին արեւելեան սահմաններուն մէջ ճարտարապետուած հոգեղէն – ընկերային տրամադրութիւնը գնահատելով այնքան միամիտ անհասկացողութեամբ որքան Քէ տՕրսէի բոլիթիքոսները ցոյց տուին 1920ին երբ Ֆրանքլին Պուլյեռն մը դրկեցին Անգարա, խաղաղութիւն գնելու երկրուան պարտեալէն, վճարելով աշխարհի ամենէն բարեբեր հողերէն մէկը բերանացի խոստումի մը դէմ թրքական բարեկամութեան: Անցեալը պատմութիւն: Այսօրուան անգլիացին կը հաւաստէ որ Համայնավարութեան դէմ յալիտենապէս փակուած երկիր մըն է Թուրքիան: Օ՛, կարճառոտ, մեր գեղը կըսէին զաքէոս յիշողութիւնը անգլիացի ճանպարհորդին: 1920ին Թուրքերը գնեցին համայնավար օգնութիւնը, պաշտպանութիւնը, անվերապահ, բացարձակ ու ճիշդ այսօրուան նման զայն գործածեցին անգլիացիներուն դէմ: Ռուսերը 1942ին յստակ կը տեսնէին դաւը: 1950ին ամերիկացիները պիտի չըլլան աւելի բախտաւոր: Մոսկուան եւ Լոնտոնը **մախօ** ընող խաղարկուն 1950ին պիտի ծառայէ իր սեպհական շահերուն: Այդ մասին ոչ մէկ կասկած: Այսինքն պիտի փորձէ Պուլսէն Պուխարա թրքութեան կայսրութիւնը, ասկէ ճէնկիզներու օրերը, ասկէ լման աշխարհին տիրապետութիւնը: Անկլօ-Մաքսոնները այդ մեծ երազը երբ բռնի կը դնեն ռուսերուն մտքին, գիտէն թէ ամէն Թուրք, 1896ին, 80ին իսկ այդ երազը կը սորվէր իբրեւ անխուսափելի իրականութիւն, դպրոցի սեղաններէն: Ես կուգամ այդ սեղաններէն: Ու գիտեմ որ Ասիան, Եւրոպան, Ափրիկէն լման սեպհականութիւնն էր ըլլալու իսկապէս, արդեամբ եւ իրաւամբ **ճիհանկիր** – որ աշխարհակալ կը նշանակէ – ժողովուրդին: Վաշինկթոնի ստուերը, արեւմուտեան նոր մշակոյթի Կապիտալին պիտի չքրտնէր արդեօք որ իր թոռները աշխարհը այդքան թեթեւութեամբ կը մտածէին զիջիլ նոր եւ իրաւ հանելուն:

(Վերջ՝ 6)

Յ. ՕՇԱԿԱՆ

(ՄԻՈՆ, ԻԳ. ՏԱՐԻ, ԹԻԻ 1–2, ՅՈՒՆՈՒԱՐ–ՓԵՏՐՈՒԱՐ, 1949, էջ 20–26)

ԾԱՆՕԹ.– Հոս կը վերջանայ ձեռագիրը 3. Օշականի թէև կցկտուր բայց սրտայոյզ ու հոգեւին զգացուած արտայայտութիւններուն **Միտք եւ Միքտ** խորագրին տակ: Ձեռագիրը խմբագրութեանս յանձնած աստէն ողբացեալը կը խոստանար անոր շարունակութիւնը, այդ խոստումը չիրականացաւ դժբախտաբար իր մահովը: Այս ընդհատին առջեւ կրկին է մեր ցան ու զրկանքը իր անուշ յիշատակովը խորացած:

#### ԾԱՆՕԹ. խմբագիրի

«Ունինք այս գրութեան ֆրանսերէն անտիպ թարգմանութիւնը եւ ուսումնասիրութիւն մը, ուր ցոյց կուտանք, թէ բացարձակապէս «կցկտուր» կտոր մը չէ: Մեր գիտցած չափով՝ առաջին (եւ երկար աստէն՝ միակ) կտորն է, որուն մէջ հայ հեղինակ մը կանդրադառնայ հրեական Ողջակէզին եւ զայն կընթերադրէ Հայկ. Աղէտին» (Մարկ Նշանեան, *Յակոբ Օշականի Մատենագիտութիւն*, Լոս Անճելըս, 1999, էջ 66):

ՕՇԱԿԱՆ ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ

-----

ՄԱՐԴԸ

Մեծանուն գրագետի մահուան քսանհինգամեակին առիթով կուզեի անգամ եր եւս թարմացնել իր մարդու կերպարը եւ գրագետի արժանիքները միտքերուն մէջ բոլոր անոնց որոնք բարեկամ են գրականութեան: Խօսիլ գրագետ բարեկամի մը մասին ուրիշ բարեկամներու: Մեր կենսագիրները միշտ ժլատ եղած են մարդերու ապրումներէն տեղեկութիւններ բերելու, թողլով որ գործը խօսի, որպէսզի ապագայ սերունդները անոր նային իրենց ուրոյն հասկացողութեամբ, անոր փոխ տալով լեզուն իրենց սեփական զգացումներուն եւ մտածումին: Կան ուրիշներ որոնք կը կարծեն թէ անձերը աւելի կ'արժեն իրենց գործէն, որ յաճախ շուք ու մոխիր է երբ համեմատութեան դրուի անոնց անձնական հմայքին հետ: Այս վերջին տեսակետը սակայն, առաւելաբար հանրային գործիչներու վերաբերող, դուրս է գրականութեան եւ արուեստի սահմանէն: Օշականի պարագային պետք է ըսել թէ իր կեանքին եւ գրականութեան միջեւ եթէ անուղղակի անդրադարձումներ կան, որ շատ բնական է, անմիջական եւ սերտ աղերս մը գոյութիւն չունի: Իր գրականութիւնը հայելին չէ իր կեանքին եւ անձին, նման Զօհրապին, օրինակի համար, որուն գործը առաւելաբար պատկերն ու անդրադարձը եղաւ իր կեանքին:

Տասնչորս տարիներ շարունակ բախտը ունեցայ վայելելու բարեկամութիւնը Օշականին, որ օրհնութեան մը պէս կը տարածուէր շուրջս: Մեր ծանօթութեան առաջին օրէն զգացի իր մտքին բացառիկ որակը եւ իր հոգիին շնորհները: Միբեցի զինքը այն խոր համակրանքով որ հիացումէն կը ծնի: Ինքը զիտէր ասիկա եւ հօր մը զգացումով կը նայէր ինծի եւ կը հսկէր վրաս: Անիկա նման չէր իմ ճանչցած գրագետներուն, անձնա-

տրութիւնը զօրաւոր էր իր մէջ, որովհետեւ կամքի ուժէ, հոգեկան կորովէ ու մանաւանդ աշխատութեան անհուն խանդէ եւ կարողութենէ մըն էր շինուած: Իր մտածումները կեանքի վրայ լարուած մտքէ մը կուգային:

Իր միտքն ու հոգին զեղուն էր եւ հանդարտ լոյս մը կը ճառագայթէր կարծես իրմէ. այդ լոյսը չէր շլացներ բայց յարաճուն քաղցրութեամբ կը լեցնէր իր շուրջը եւ սխրանքով կը համակէր իր մտերմութեան մէջ եղողները: Դուրսէն զինքը դիտողները իր անաշխարհային եւ հաստ կճեպին տակ ոչինչ կրնային նշմարել, այդպիսիներուն համար Օշականը անուն մըն էր միայն: Մեծանուն գրագէտը սակայն նման էր այն նկարներուն որոնք առաջին ակնարկով չեն գրաւեր քեզ, որոնց մէջ սակայն չկասկածուած գեղեցկութիւն մը կայ որ նոր հիացումով կ'առնինքնէ քեզ: Օշականի դիմանկարին տիրական գիծը իր անպարագրելի տաղանդն էր, խոնարհ դրսերելոյթի մը ներքեւ տրուած:

Դիւրին չէ Օշականը ներկայացնել իբրեւ մարդ եւ գրագէտ. անիկա բացառիկ էր, ինքնատիպ եւ իր նմանը չունի մեր հին եւ նոր գրականութեանը մէջ: Կապարի, պղինձի եւ ոսկիի խառնուրդ ձուլածոյ մը, ուր գիւղացին, մարդն ու գրագէտը երջանիկ շաղապատումով զիրար կը լրացնէին: Դժուար էր իր կապարը կշռել, պղինձը ծակել, սակայն հեշտանք էր իր ոսկիի արձակած փայլքին նայիլ: Իբրեւ նրբատաղանդ գործաւորը իր ներքին արժէքներուն, ան գիտցաւ զանոնք յղկել եւ աճեցնել, արձակել տալու անոնց ադամանդեայ շողքը եղերական գեղեցկութեամբ: Հպարտ էր իր տաղանդին սաղաւարտովը, սակայն համեստ ու քաղցր:

1937ին երբ Բարիզէն կը վերադառնար, ընկճուած էր ու բեկուած ինքն իր մէջ: Մեծ ուստանի ամենագէտ բժիշկները միայն վեց ամիս ապրելու իրաւունք տուած էին իրեն: *«Այսպէ՛ս պիտի ըլլար Օշականը»* ըսաւ ինծի, խզուած ձայնով: *«Ամէն ինչ սեւ է շուրջս, կեանքը որ կը վառէր մէջս աստղի մը նման, մոխիր է այլեւս, որովհետեւ մռայլ աղէտին դէմքը կը ճնշէ վրաս, անձանօթ հրէշի մը պէս: Երբեմն ինծի կը թուի թէ մեռած եմ*

*արդէն, անտես ձեռք մը կը հեռացնէ զիս այն բոլորէն, որոնք դեռ մինչեւ երէկ լեցուն էին կեանքով»:*

«Օշական», ըսի, «բժիշկ չեմ, սակայն վստահ եմ թէ դուն աւելի քան տասը տարի տակաւին պիտի կրնաս ապրիլ. այս է թելադրանքը իմ նախազգացումիս»: Չեմ գիտեր թէ որքա՛ն հաւատք ներշնչեցի իրեն, բայց զգացի որ ուզեց հաւատալ:

Օշական այն մարդերէն էր որ երբ գրիչը ձեռքը առնէր՝ կը մոռնար թէ ասկէ աւելի սրբազան պարտք կրնար կենալ իր ուսերուն: Այդ խղճմտանքին մէջ ան ազատագրել գիտցաւ իր զգայնութիւնները, երազներն ու վիշտերը, բայց մանաւանդ փառասիրութիւնները՝ պատահական, արտաքին վիճակներէ, անոնց հագցնելով իր հարուստ միտքին պատմուճանը: Ինչ որ ելած է իր գրչէն՝ հոգեկան, հարուստ, խոր, տարօրէն լեցուն տազնապի մը արտայայտութիւնն է: Անիկա տարիներով լուռ մենակեացը եղաւ, առանց իր անունը հրապարակի վրայ թարմ ծախելու վարկպարագի տազնապէն եւ գրական նանրամտութենէն: Յիսուն տարիներ շարունակ չթողուց գրիչը իր ձեռքէն, հակառակ շատ անգամ իրեն վիճակուած դժնդակ պայմաններուն: Գրեց ու ստեղծեց, թելադրանքին տակ իր անդրանիկ հոգեկանութեան եւ հանգանակներուն, զատուելով զինքը կանխող եւ յաջորդող սերունդներու ըմբոնողութենէն: Գրելու, ստեղծելու իր ահաւոր թափը, մոլեռանդութիւնը, հերետիկոսութիւնը, յիսուն տարիներ շարունակ պարտադրելը, խնամելը, անոր հետ ամենօրեայ մտերմութեամբ ապրիլը, այլապէս ողբերգութիւն մը իր կեանքին:

Անիկա բնաւ չմիացաւ խմբագրողներու բանակին: Եղաւ միշտ մտքով հօօր եւ խառնուածքով պարկեշտ, եւ յաջողեցաւ զսպել աճապարոտ փառասիրութիւնը, ունայնամտութիւնը բոլոր աժան կերպով փայլիլ ձգտողներուն: Խմբագրութիւն, յօդուած, պարտադրուած կադապար մըն է գրեթէ բոլոր գրողներուն համար, շատերու ասպարեզին արշալոյսն ու վերջալոյսը: Մեր գրագէտներէն շատեր չեն տառապած արուեստի տազնապով եւ ենթակայ են միւս շարժուն բանակին: Ի վերջոյ պէտք է գիտնալ թէ գրագիտութիւնը ամբոխին է,

արուեստը՝ անհատին: Այս երկու ըմբռնումները գրեթե ներհակ յղացքներ են: Առաջինը ինքզինքը ուրիշներու վրայ բաշխելու, ուրիշները նմանցնելու հետնակ աշխատանք է: Երկրորդը ուրիշներէն զատուելու, ուրիշները նուաճելու հսկայ երկունք մը: Օշականը մտաւորական մըն էր, այսինքն մէկը որ կը սիրէր աշխատիլ ընկերութենէն անկախ, հանրային կեանքէն հեռու, ընկերային շարժումներուն անտարբեր, ղեկավարելու տենչէն անմասն: Որ իր իմացական ծաղկումին մէջ կ'աշխատի դնել ցեղին մտաւորական կարողութեանց բոլոր կարելիութիւնները: Իր այս ճիգին մէջ ան առաջ է իր ժամանակէն, իր ժողովուրդէն, ինչպէս նաեւ բարոյական եւ ընկերային հաստատուն թումբերէն:

Իմ երեւակայութեանս մէջ ան կը մօտենայ Պարսիկ մեծ քանաստեղծ Ֆիրտուսիին, իր նկարագրովը, այլամերժութեամբ, հպարտութեամբ ու հանճարովը: Նման անոր ոչինչէն սկսած եւ մինչեւ բարձունքները հասած: Միշտ մախանքի եւ հալածանքի ենթակայ, մեծութիւններու վիճակուած ճակատագրով: Մէկը որ երիցս մահապարտ ըլլալէն յետոյ ազատեց իր գլուխը, զայն ճերմակ մազերու փուշէ պսակի մը վերածելէ վերջ:

Երկունքն ալ կուգային գիւղէն, լեցուն հողին շունչովը, այսինքն իրենց ժողովուրդի խորունկ ձայներովը: Հողը հոգեղէն հզօր կառոյցն է ներքին մարդուն, որ գիտէ աճեցնել, բեղմնաւորել ու մարմնացնել հոգին, մայրագործով եւ աննահանջ:

Հակառակ իր գիւղացիի չարքաշութեան, երկաթեայ կամքին, տրտում էր Օշականը: Ան իր սրտին մէջ ունէր պարապ մը զոր ոչինչ կրնար լեցնել: Այդ տրտմութիւնը կուգար թերեւս մանկութեան վճիտ երջանկութեան մը պակասէն, թերեւս հոգեկան խառնուածքէն եւ կամ գաղափարական անաւարտ հետամտութենէ մը: Տրտմութիւնը որ իր խորհրդանիշ շղարշներովը մեր կեանքին մանրաթելը կը կազմէ, ըստինքեան արժէք մը չէ, սակայն բոլոր անոնք որոնք այս աշխարհի վրայ գիտակից եւ խորունկ կեանք մը կ'ապրին, ունին այդ տրտմութիւնը: Ո՞վ չի գիտեր թէ կեանքի հիմնայատակը ցաւ է, թէ

գերագոյն նկատուած հաճոյքներն իսկ, վերջի գումարի մը մեջ անոր պիտի վերածուին: Սուր, ծանր, մութ եւ խուլ տառապանքը բոլոր այն բաներուն պէս, որոնք մեզի հաշիւ չեն տար բայց կը պարտադրեն զիրենք մեզի: Տառապանքը որ կը ծնի մեր աշխատանքէն, հաճոյքներէն, կընկերանայ մեր առաքինութիւններուն, շուքի մը պէս ետեւն է մեր սերերուն եւ բարեկամութիւններուն: Կը սլաքէ մեր մարմինը, կարիւնէ հոգին հոն՝ ուր չէինք սպասեր իրեն: Կուզէ ք խորհրդանիշ անձնաւորութիւններ անկէ. Սոկրատը, Տանթէն, Միշէլ-Անժը, Նարեկացին: Միայն ծանծաղամիտներ չեն զգար անոր սեղմ ու ծանր օղակները որոնք օրերու հետ կուգան սեղմելու մեր հոգին: Վիշտը իր ուրոյն աղբիւրները ունի, զգայուն հոգին՝ որ իրերն ու երեւոյթները իրենց բացարձակին, իտէալին կը տանի, որ իր մեջ կը կրէ աշխարհի մը շատ աւելի մեծ ու պայծառ եւ որ կը տառապի յաճախ իր ունեցածին շատութեանը համար, իր մեծութեան տրտմութիւնը ունի: Մարդիկ՝ որոնց վիշտը արդիւնք չէ կեանքէն պատճառուած անբախտութիւններու կամ ներքին բերումներու, որոնք տրտում են ոչ թէ երկրին երեսը ծածկող մութին համար, այլ Աստուծոյ դէմքը սքօղող մշուշէն:

Տրտում է արուեստագէտը, կեանքին նայող իր հոգին առանց տառապանքի չէ որ ետ կուգայ: Մեր շուրջը անորոշուած քառուէն արուեստագէտը կը ճգնի վերբերել երազը մարդուն՝ որ կը յապաղի լեռան ետին, յոյսը սիրտերուն՝ որ թռչունի թելով կը հեռանայ, ու վառ յիշատակը քիչ քիչ ցամքող կեանքին: Տրտում է արուեստագէտը իր այս նոր աշխարհաշինութեանը համար եւ տրտում իր նորակերտ աշխարհին մեջ:

Կեանքը իր առօրեայով կը թուէր հրապոյր չունենալ Օշականի համար. ասկէ անշուշտ իր համակիր եւ քաղցր հակումը ուրիշներու հոգիներուն: Ան բոլորանուէր մատուցուող մըն էր բոլոր անոնց՝ որոնք կուգային բաժին առնելու իր ունեցածէն: Ամէնուն իր ժամանակը տալու եւ բարոյական նոյն աջակցութիւնը ըլլալու յօժարամտութիւնը պարտականութեան զգացում չէր, այլ ապրում մը: Տալու, բաշխուելու այս բարձրօրէն մարդկային բերումը իր երազներէն հալածական

մարդուն մեջ կերպ մըն էր թերեւս մխիթարութեան, ճիգ մը իր հոգին լոյսին բերելու:

Լուռ մարդ մըն էր Օշականը, այսինքն մէկը որուն մտածումներն ու զգացումները գերազանց էին խօսքերէն: Մեծ արուեստագետները չեն պարպեր ինքզինքին խօսակցութիւններով, որովհետեւ եթէ խօսիլը ցանել է, մտիկ ընելը քաղել է: Օշականը խոյս կուտար ամէն բանէ որ աղմուկ էր, հռետորութիւն եւ բարբանջանք: Իր լռութեանը մէջ ուժ մը կար սակայն որ սպառնալիքի մը նման կը կախուէր շատազրոյցներու գըլխուն: Բոլոր մեծ ու գեղեցիկ մտածումները կը ծնին ու կը դարբնուին լռութեան մէջ: Մարդիկ իրապէս կ'ապրին երբ լուռ են:

*«Կը զարմանամ»* կըսէր յաճախ ինծի, *«որ քեզի եկողներուն հետ կրնաս այսքան երկար եւ ախորժակով խօսիլ: Ինծի պէս յիմար գիւղացի, ուրկէ՞ տրված ես մարդոց հետ յարաբերելու եւ պատշաճելու եւ անոնց մտածումներուն համաձայն խօսելու արուեստը»*: Կը տաղտկանար երբ մարդիկ իր շուրջը շաղակրատէին, եւ ասիկա ականջներու յոգնութիւն մը չէր միայն, այլ մտքի ձանձրոյթ:

Օշականը բնաւ կուսակցական չէ եղած: Ճիշդ չէ ըսել թէ այս ուղղութեամբ ան իր նախասիրութիւնները ունէր: Քաղաքականութիւն խաղալը, ըստ իրեն, ինչպէս անցեալի այնպէս ալ ներկայի մէջ, մեր թշուառութիւնը եղած է, չարիքի համազօր: Հեռի պահած է ինքզինքը միշտ առաջնորդելու դեր ստանձնող հին եւ նոր սերունդի ներկայացուցիչներէն, երբ անոնք հանրային գործիչի եւ հրապարակագրի գրաւիչ պատմուճաններով կը սիրէին սոնքալ: Թոյլ չէ տուած ինքզինքին բնաւ որ իր անունը լրագրական սիւնակներէն վազէ, կամ հասարակական հարցերու յաճախ ունայն վերլուծումներով սպառի: Ունէր հանրային հետաքրքրութիւններ, բայց ոչ մէկ հոսանքի կը պատկանէր: Մեր յեղափոխութիւնը իրեն համար օտարէն ընդօրինակուած մեզի անյարիւր տուրքն էր: Տրտում հոգեբանութիւնը մերիններուն, որ իրենց տունին ձաւարը ձգած շուկայի բրինձին վազեցին: Մեր պապերը աւելի իմաստուն էին,

կըսէր յաճախ: Անոնք ալ ունէին անշուշտ եզերախոյս իրենց ետը, զիրար կործանելու մոլուցքը, դարաւոր վերքը մեր պատմութեան, սակայն խիճերով պատ հիւսելու չափ միամիտ չէին: Մեր երազատեսի միամտութիւնը միշտ իրողութիւններէն դուրս գործեց, բախտախաղի դնելու աստիճան մեր գոյութիւնը: Մենք արիարանց զինուորները հանդիսացանք մեր աղէտին, անարգասիք յանդգնութեամբ հրաւիրելով մահը: Խոր հիացում ունէր մեր ժողովուրդի ողջմտութեանը վրայ, եթէ օտար հովեր չգային զայն այլայլելու: *«Ողջմտութիւնը ժողովուրդի միտքն է»*, կըսէր, *«եթէ մեզի պակասած է յաճախ իմաստութիւնը, բայց արթուն եղած է մեր մեջ ողջմտութիւնը, մարդուն ամենէն չքնաղ առաքինութիւններէն մին, բնագոյի, բանականութեան եւ փորձառութեան համադրումներէն բաղադրուած»*: Պարտաւոր էինք նախազգալ աղէտը որ կը նիւթուէր, մեր ժողովուրդին գոյութիւնն իսկ սպառոսպուռ ջնջելու չափ ընդարձակ: Միւս կողմէն սակայն գուժկան մունետիկ մը չէր եւ խոր համակրանք ունէր իր ժողովուրդի առաքինութիւններուն եւ սրբութիւններուն նկատմամբ: Մեծ հայրենասէր մըն էր, բաժնուելով սակայն կուսակցական հայրենասէրներէն, որոնք այս մարզին վրայ իրենց ունեցած պուտ մը զգացումը գաղափարի ու տեսակէտի վերածած՝ կը գրեն ու կը ճառեն, առանց զատորոշել կարենալու երազը իրականութենէն: Անոնք չարաչար կը գործածեն իրենց երեւակայութիւնը. անոնց համար ալ կարելի է ըսել թէ Քրոմուէլն ու Համլէթը տարբերութիւն չունին: Օշական գիւղացի էր, անոր համար հողը, հայրենիքը, ժողովուրդը ուրիշ զգացում եւ տարողութիւն ունէին: Հայրենասիրութիւն մը որ ողբով ու րոմանթիզմով չլուծիր, այլ կը մնայ իբրեւ անսպառ եւ քաղցրագին լոյսը իր հոգիին, մեր ակերներուն, փառքերուն եւ մութերուն վրայ առկախ: Իրեն համար հայրենիքը հող էր, իբրեւ յղացք ու զգայութիւն, իբրեւ ցեղային ուժ, ստացուածք եւ ապահովութիւն, սուրբ գերեզման մեր հայրերուն, օրրան սերունդներուն, հնձան մշակոյթին, առանց որոնց կարելի չէր դիմանալ, ապա՛ իբրեւ կորսուած երազ եւ նիւթ տարփողանքի:

Միւս կողմէն գրականութիւնը հանրային երեւոյթ կը նկատէր եւ գրագէտը հանրութեան կը ծառայէր իր ճամբով: Չէր ուզէր ընդունիլ այն տեսակէտը թէ գրականութիւնը իբրեւ հանրային երեւոյթ հանրութեան պէտք էր հասցեագրուէր, գոհացում տալով օրուան հարցերուն եւ մարդոց ախորժակներուն: Օշական եւս Անտրէ Ժիտին հետ կրնար ըսել. *«Ես կը գրեմ անոնց համար որ պիտի գան»*: Որովհետեւ արուեստի գործը ուղղուած չէ ներկային, այլ ապագային: Գրագէտը իր շրջանի արտադրութիւնը չէ միայն, այլ ժամանակակից է այն դարաշրջանին որ ի լինելութեան է: Գործ մը, ըստ իրեն, կատարեալին կը մօտենար երբ ներկայացնէր իր ժամանակի հարազատ պատկերը եւ դառնար մարգարէութիւն մը ապագային համար: Որքա՛ն իրաւունք ունէր Օսկար Ուայլտ, երբ կ'ըսէր թէ՛ *«Գրագէտը ապագան է: Թագաւորը իր ժամանակին միայն կ'իշխէ, իսկ արուեստագէտը՝ բոլոր ժամանակներուն»*:

Չեմ ուզէր կանգ առնել իր անձնաւորութեան այն մանրամասնութիւններուն առջեւ՝ որոնցմէ աւելի թերեւս մեզմէ շատեր պիտի ուզէին ցոյց տալ իբր տարր մարդերու կեանքին: Չմոռնանք միւս կողմէն թէ մարդերը տալը կը նշանակէ հոգեբանական կարգ մը երեսներու եւ անոնցմով պայմանաւոր գաղափարներու համադրութիւնը ընել եւ կամ առնուազն զանոնք հոգեգրել գէթ իրենց կեանքի մեծ փուլերուն վրայ: Ֆրոյտեան վերլուծումով մը գուցէ կարելի ըլլար մասամբ մօտենալ անոր խառնուածքի հէնքին: Կիրք, արիւն, հոգեկան վիճակներ, սեռային սլաքին տակ իր գրականութեան նուազին ստեղնաշարը կը կազմեն: Իր իմացական կառոյցը, զգացական ու բնագոյային լծակներէ զսպանակուած, ենթագիտակցական էր, ուր սեռայինը կառաջնորդէր զինքը յաճախ առանց իր կամքին:

Շատերուն անձանօթ է թերեւս որ Օշական առանց երկրորդական վարժարան մը իսկ աւարտած ըլլալու, միս մինակ քալած է ձիւնապատ, ամայի այն կատարներուն, որոնք իր կողմէ մշակուած հայ գրականութիւնն ու հայ քննադա-

տութիւնը կը բնորոշեն: Նոր չէ որ ամայքները քիչ այցելու կ'ընդունին եւ գաղտնիք չէ թէ Օշականի ընթերցողները կերպով մը հագուագիւտ ուխտաւորներ են այն հրաշալի կառոյցին որ իրմով կը մնայ շինուած մեր գրականութեան անդաստանին մէջ: Օշականին համար բան մը ըլլալէ աւելի բան մը ընել կարենալու իղձը ապահովաբար ամենէն մաքուր ճիգը եղաւ իր խղճին: Այս է պատճառ անշուշտ որ ան հակառակ իր կենսունակ տրամադրութեանց, կեանքի սովորական հրապոյրներէն միշտ խուսափող մը եղաւ, այդ բոլորին վերջնական հաշուեկշիռը փորձելով թուղթին վրայ: Եւ ինչ որ իր նկարագրի ամենէն յատկանշական գիծը կը ցուացնէ, այն է թէ սկիզբէն, այսինքն հմտութեան եւ արուեստի մարդը իր մէջ կազմուելու առաջին օրերէն, իր հակումները կուղղուին դէպի մեր ժողովուրդի բարձրագոյն արժէքներու հետախուզութիւնը: Օշական մինակ է քալեր իր փառքին եւ ինքն է մեծ ճարտարապետը իր գործին: Զօրաւոր էր իր մէջ ինքզինքը իրագործելու կամքը, եւ գործին նուիրուելու բարբարոս եւ այլամերժ պատրանքը: Ասիկա կերպով մը ճակատագիրը եղած է բոլոր «մինակներուն»: Մեծ գործերը ի վերջոյ մենութեան մէջ կը ծնին: Կեանքէն բխող եւ իր գործը ընդգրկող այս առանձնապաշտութիւնը մէկ կողմէն պաշտպանած է անոր գործը, միւս կողմէն բոլոր զինքը կարդացողները լեցուցած է վայրագ մտապատկերներով իր մասին: Գիտեմ տասնէն աւելի մարդեր, որոնք հակառակ իրենց փափաքին՝ իրեն այցելութեան մը նեղութիւնը կուզէին խնայել, խորհելով բիրտ եւ դաժան մարդու մը հետ շփման մը անտեղութենէն: Սակայն մեծ կըլլար նման խորհողներու զարմանքը, երբ կարծր եւ անհանդուրժելի նկատուած Օշականի փոխարէն, որ Արամազդի մը կատաղութեամբ միշտ հալածեց յաւակնութեամբ եւ բռնութեամբ «Տիրոջ այգին» մտնել ուզողները, կը դիմաւորուէին մանուկի մը չափ պարզ եւ հին բարեկամի մը նման:

Օշականի մէջ, ի հեճուկս իր արտաքին անտաշ պարգութեան, մեծ բանաստեղծ մը կապրէր: Իր գրական հունձքին առաջին պտուղները բարբախուն վկայութիւններ են այդ

ուղղութեամբ: Ունէր ուժեղ եւ ճառագայթուն երեւակայութիւն եւ իրերը դիմաւորելու քաղցր յօժարամտութիւն, որ միակ գաղտնիքն է ստեղծագործութեան: Մարդը որ գիտէր զգալ վայրագ թշուառութիւնը բոլոր անոնց՝ որոնք հաճոյքի համար կ'ապրէին լոկ, եւ արտակարգ ու պանդոյր խեղճութիւնը հարուստներուն: Խոնարհներու եւ անժառանգներու նկատմամբ իր սէրը որ այնքան սրտառուչ կերպով տուաւ, կը բխէր այս զգացումէն:

Հակառակ իր լայն հմտութեան, հսկայ յուսախաբութեան եւ կեանքի մէջ իր մթերած դառնութեան, անհկա մինչեւ իր կեանքին վերջը պահեց բանաստեղծի զգայնութեանց թարմութիւնը, գորովիլ կրնալու մանկունակութիւն մը: Իր այս զգայնութիւնը լուսաւորուած ու հոծացած արուեստի բխումներով՝ զինքը կընեն մեր մեծագոյն բոմանթիքը որ Օշականի մօտ գրական ծանօթ հասկացողութիւն մը ըլլալէ աւելի՝ նկարագրի, խառնուածքի կտոր մըն էր:

Օշականի միտքն ու հոգին, հակառակ իրենց պարզութեան, հարուստ էին իշխանի մը գանձարանին չափ: Աժան գովասանք մը ըրած չենք ըլլար իրեն, երբ ըսենք թէ Եղիշէ Դուրեանէն վերջ, ան մեր մեծագոյն հմուտը եղաւ: Կը ճանչնար մեր պատմութիւնը ոչ իբրեւ թիւ ու անուն, այլ իբրեւ ներքին այն իրականութիւնը որուն մտատեսութիւնը ունէր:

Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեակին, Օշականը Երուսաղէմի Ժառանգաւորաց սրահին մէջ խօսեցաւ սկսող աղէտէն եւ անոր ճակատագրէն: *«Մաժինոն»,* ըսաւ, *«որ Եւրոպայի պաշտպանութեան բերդը կը նկատեն դաշնակիցները, ոչինչի պիտի ծառայէ: Գերմանները յիմար չեն մէկուկէս միլիոն զինուոր զոհելու անոր գրաւումին համար: Անոնք Պելճիքայի հարաւէն պիտի բանան գիծը Ֆրանսա մտնելու: Անգլիան երկար ատեն պիտի դիմանայ, անորոջ ճակատագրով: Իսկ եթէ Հիթլեր գերագոյն յիմարութիւնը գործէ Թուսիոյ վրայ յարձակելու, յաղթանակը անկասկած դաշնակիցներուն է»:*

Արտակարգ լուսամտութեամբ կշռեց թափուող արեան քանակը՝ պարտուողին ու յաղթողին համահաւասար: Գերմանիան չի կրնար շահիլ, պէտք չէ որ շահի պատերազմը. ըստ իրեն ասիկա պիտի նշանակէր բիրտ ուժին յաղթանակը մտքին վրայ: Այս խօսքերը գրական հմայք մը չէր որ կը լուսաւորէին, այլ կուգային յայտնատեսութենէ մը, մշուշէն անդին տեսնել կարենալու կարողութենէն, գոր միշտ ունեցեր էր մտքի այս կախարդը:

Գիտէր նոյնպէս մեր Եկեղեցին, իբրեւ սրբազան մասը մեր պատմութեան, ոչ իբրեւ գաւազանագիրք մը, այլ իբրեւ կրկէս մը իրարմէ հօգօր առաքինութեանց, որոնցմով գօտեպիւնդ՝ մեր հայրապետները անցեր են արիւնի եւ կրակի մէջէն: Կը ճանչնար մեր հին եւ նոր մատենագրութիւնը իր խորութեանը եւ գեղեցկութեանը մէջ, եւ ոչ ոք իրեն չափ կրնար հաղորդ ընել մեզ անոնց հոգեկան, ցեղային եւ մանաւանդ գեղագիտական արժէքներուն: Ծանօթ էր նոյնպէս օտար մատենագրութեան, իր լայն եւ խոր երեսներով: Տեղեակ էր գիտական, հոգեբանական եւ նոյնիսկ բժշկական ուսումներու որոշ եւ ընդարձակ գօտիներուն եւ գիտէր ընդգրկել այս բոլորը մասնագիտական ըսուելու չափ մանրամասն ճշդութեամբ:

Իմ միտքս սակայն իրեն համար ընտելական դարձած ծալքով մը երբ կը ձգտի այս ամէնուն ներքեւ տեսնելու մարդը, անով կարենալ յարաբերելու միւս արժէքները, տարօրէն տրտում զգացում մը կը լեցնէ զիս: Մեծ մարդերու կեանքին տրտմութիւնը չէ ասիկա, այլ գլխիվայր հասկցուող ճակատագիրներու ողբերգութիւնը: Ի վերջոյ մարդեր կան որոնք չար աստղի ներքեւ են ծներ. ինչ կերպով ալ որ ուզենք արժեւորել կամ հասկնալ այս բացատրութիւնը, անիկա կը մնայ պատշաճ իրողութիւնը շատ մը մարդերու, որոնք միշտ պիտի տառապին ու հալածուին, իրենց ունեցածին շատութեանը համար: Նոր չէ որ աստուածներու կրակը մարդոց բարիքին բերողները՝ կանչուին քաւելու իրենց մեղքը:

Գիւղացի մըն էր Օշական, անսրբագրելի եւ բացարձակ: Գիւղին պարզմտութիւնը, բացարտութիւնը, յամառութիւնը,

չարքաշ արհուրթինը դժուար չէր հաստատել իր վրայ: Միւս կողմէ ամէն գիւղացի ճակատագրապաշտ է, անվստահ, այսինքն ինքնավստահ ըլլալով կը դիմաւորէ դէպքերը՝ երբ անկարող է զանոնք այլայլելու: Ասկէ կուգար այն բունն զգայնութիւնը, որ իր մէջ շատ դիւրաւ կը վերածուէր կիրքի:

Ոչ ոք պիտի ուզէր համամիտ չըլլալ ինծի՝ իր հազարաւոր աշակերտներէն եւ սակայն թիւով քիչ բարեկամներէն, եթէ ըսեմ թէ Օշականը մեր ամենէն պարզ, ազնիւ եւ օգտակար ըլլալու զգացումով տոգորուած անձն էր: Այս վերադիրները եթէ ուրիշներու պարագային բացուելու պէտք չունին, Օշականի անունին առջեւ անհրաժեշտ բացատրութեան կը կարօտին: Օշականը որուն գրականութեան մէջ գոյութիւն չունին կարծես ածական ու մակբայ, որ ամէն բանէ աւելի պահանջեց, ինչպէս կէանքի՝ այնպէս ալ գրականութեան մէջ պարզութիւն եւ իրաւութիւն, իմ հանդիպած ամենապարզ մարդերէն էր: Պարզ էր իր ընկերային յարաբերութիւններուն մէջ, պարզ՝ իր աշակերտներուն եւ բարեկամներուն նկատմամբ: Սիրտն էր կեղդոնը իր էութեան: Հակառակ իր մեծ մտաւորական մըլլալուն, պարզ մարդոց ընկերակցութիւնն ու մտերմութիւնը կը նախընտրէր: Միամիտ չէր, սակայն բարի եւ անոխակալ էր: Գիտէր չարը իր բովանդակ զազրելիութեանը մէջ, բայց նոյն ատեն չէր ուզէր հաւատալ կարծես չարիքի սկզբունքին, հակառակ այն իրողութեան որ կը ճանչնար Թուրքը:

Ազնիւ էր Օշականը, մանուկի մը պէս բացսիրտ: Ռընանի մը ուղեղը ունէր, բայց մանուկի մը հոգին: Գիտէր աշխարհի չարն ու բարին, սրբազան մատեաններու խոստումը, բոլոր ժամանակներու գիտուններուն վճիռը, բայց խորապէս կը սիրէր գեղեցկութիւնը մանուկի հոգիին եւ կ'ազդուէր հաւատքով ծունկի եկող տէրտէրի աղօթքէն: Թերեւս ասկէ կուգայ այն տարօրինակ վիճակը որուն նմանին մենք կը հանդիպինք Րաֆֆիի եւ Ահարոնեանի մօտ. ատիկա առհաւական ազնւութիւնն է գուցէ իր ժողովուրդին եւ կտակը իր արեան, որուն գինովն է որ մենք մեր բոլոր գերութեան ընթացքին պահէր ենք մեր հոգեկան միութիւնը գոր մեր ժողովուրդը ունէր կանխող

դարերուն: 1937ին, իր տագնապի օրերուն երբ սրտի կաթուածով հիւանդանոց կը մնար, կեանքի ու մահուան մէջ տարուբեր, Թորգոմ Պատրիարքը այցելեց իրեն: Մեկնելու ժամանակ, ըսաւ «Յակոբ, կ'ուզե՞ս որ աղօթեմ վրայդ»: Օշականի աչքերը լեցուեցան. «Մըբազան, մի՛ նեղուիր, թող այդ «Փարատեա»ն Հայկազուն վարդապետը ըսէ, անիկա կը հաւատայ իր ըսածին»:

Իր գործին մէջ անդունդներ, հոգեբանական անմատոյց բարձունքներ, ծանրածանր մեղքեր ու ճահիճ, ինչպէս ամենէն զազիր ոճրագործներու ջուլիր, անբաւական կուգան պղտորելու այս քառասյնութիւնը որ զգալի է Տասթոյովսկիի ալ գործին մէջ, որ Օշականի գործին նման թէւ թանձր, աղջամուղջի մէջ խորասոյգ, չի դադրիր քրիստոնէական սիրոյ բոցավառ աշխարհ մը ըլլալէ: Ռուսին միստիքը եւ հայուն ազնուութիւնը: Օշականին զգայնութիւնը նուազ ներգործական է, սակայն շղարշային ծփանքով կը փռուի իրերուն վրայ եւ մարդոց մէջ կը դնէ անօրինակ խռովք եւ քաղցրութիւն: Իր թափանցումին սրութիւնը կենդանի մարդերն ու անցեալ կեանքերը գիտէ ձեռքել ու անցնիլ:

Հակառակ իր հմտութեան եւ լայն հորիզոնումին, Օշականի միտքը մետաքս թաշկինակի մը նման քաղցր էր ու ծփուն, եւ մանուկի մը ափը պիտի բաւէր զայն ամբողջապէս իր մէջ ունենալու: Շատ քիչ բարեկամներ ունէր, վասնզի քիչերուն կրնար ընտելանալ: Սակայն անոնք որ կըրցած էին շահիլ իր անվերապահ բարեկամութիւնը, անոնց նկատմամբ պարզ էր ու սրտբաց՝ դպրոցական ընկերոջ մը նման: Կը հաւատար թէ մարդկային ռեւէ յարաբերութիւն կատարեալ չէ, եթէ չէ պսակուած բարեկամութեամբ:

Ընկերութեան մէջ երբ մտայնութիւնն ու մթնոլորտը չխօսէին իրեն, ժամերով կրնար լուռ մնալ: Իսկ երբ շրջուէին պայմանները, այն աստեն դիւրահաղորդ կը դառնար: Ժուժկալ էր, պերճանքէ փախչող: Պարզ էր իր նիստուկացին ու իր վարմունքին մէջ, իր կեանքէն աքտորելով բոլոր արուեստական ունակութիւնները: Կրնար մուճակներով եւ զիշերագգեստով հիւր ընդունիլ, «ձօ»ով խօսիլ, «կնիկ» ըսել նազելաշուք եւ

անգուրուած տիկնոջ մը: «**Խոնարհները**»ի հեղինակը խոնարհ ու զարտուղի էր իր բարքերուն, իր շարժումներուն, իր նիստուկացին, խօսքին ու վերաբերմունքին մէջ: Պարզութեան մէջ բարդ ու բարդութեան մէջ պարզ: Բիրտ էր եւ ինքնիշխան, հաւասար ընտանութեամբ եւ ազատութեամբ կրնար խօսիլ ինչպէս սովորական մարդերու՝ այնպէս ալ դրամատէրներու եւ պատրիարքներու հետ:

Իր նախատարիներու աղքատութեան սարսափը եւ ապագային անորոշութիւնը կը քալէր իրեն հետ, ստիպելու զինքը որ ըլլար վերջին ծայր խնայասէր: Ձեռքիս տակ ունիմ իր երկու նամակները, Թորգոմ Սրբազանի գրուած: Առաջինին մէջ կը խնդրէ որ Սրբազանը ազատէ զինքը հացի հարցէն, որպէսզի կարելիութիւն տրուէր իրեն իրագործելու գրական իր երազները: Այդ օրերուն ան ունէր իր մտքին մէջ իրագործելի համապատկերը իր ժողովուրդի շնորհներուն, ինչպէս մտատեսութիւնը՝ այդ շնորհներով իրագործելի բարիքներուն: Կարելի այս պայմաններու ստեղծումով շտկելու իր մէջքը, հայ գրագէտի ու վարժապետի գերագոյն կարիքը, կրել կարենալու այն սրբազան բեռը որ մեր ժողովուրդինն էր: Երկրորդ նամակով Սրբազանի միջնորդութիւնը կը խնդրէր մեկենաս մը ճարելու «Ստեփանոս Միւնեցի» քնարախաղին:

Ինքը որ այնքան խոր գիտէր թափանցել իր հերոսներու հոգիին, առօրեայ կեանքին մէջ գուրկ էր զինքը շրջապատող մարդերը շատ անգամ հասկնալէ: Իր շուրջի մարդոց առհասարակ կը վստահէր, շարունակելով մնալ վերապահ նոյն ատեն: Այս երկուութիւնը, աւելի ճիշդ՝ ճշմարտագանցութիւնը, հաւատք ըլլալէ աւելի վիճակ էր իր մէջ: Պէտք չէ մոռնալ որ գիւղացին որքան պարզ եւ հաւատաւոր, նոյնքան վեհերոտ եւ անվճռական է ընկերային յարաբերութիւններուն մէջ, անոնց յարափոփոխ ու մթին ալիքներուն վրայ դիւրութեամբ նաւել չկրնալուն համար գուցէ:

Օշական իբրեւ ուսուցիչ եւս բացառիկ էր: Բնատուր տաղանդով մը գիտէր աշակերտին հոգիին աւագանը նոր կայլակներով լեցնել եւ անոր մտքին հորիզոնները բանալ:

Ուսուցիչ մը որ բառերէն եւ խօսքերէն անդին կրնար երթալ, հոգիներուն մէջ բորբոքելու հրայրքը իր մտքին եւ սերը մեր գրականութեան:

Դասարան կը մտնէր հին բարեկամի մը նման, անսեթեւեթ եւ պարզ, առանց արուեստական միջոցներու դիմելու, աշակերտութիւնը իր ազդեցութեան ենթարկելու համար, ինչպէս սովոր են ընել արհեստով ուսուցիչները: Քանի մը դասապահեր բաւ էին հմայելու ուսանողները գրականութեան սիրով: Իբրեւ հայերէնի ուսուցիչ մեծ կարեւորութիւն կընձայէր շարադրանքին եւ վերլուծման: Կը պահանջէր աշակերտէն որ իր նիւթին մէջ տար տեղը, գործողութեան ընթացքին մասնաւոր գիծերով լրացնէր մանրամասնութիւնները պատմուածքին: Դէմ էր փնտռուած բառերու, գրականութիւն հոտող նախադասութիւններու: Գեղեցիկին երթալու այս ձգտումը շատ անգամ կը խճողէ կտորը եւ կ'արգիլէ անոր ազատ ու բնական ընթացքը: Կը թելադրէր նոյնպէս զգուշանալ մաշած ոճերէ, փոխառիկ պատկերներէ, գոր քիշէ կանուաներ: Անկեղծութիւն, պարզութիւն, իրականութիւն եւ ապրում, պէտք էր երջանիկ ընդելուգումով մը զիրար լրացնէին գրուածքին մէջ:

Ուել կտոր երբ դասարանի մէջ գրական վերլուծումի ենթարկուէր, աշակերտներու ուշադրութեան կը յանձնէր նախ հեղինակը. ո՞վ կար գործին ետելը, յետոյ՝ ի՞նչ կար եւ ինչպէ՞ս կար: Ընդլայնելու մեծ ձիրք ունէր խնդրոյ առարկայ կտորէն հանելու անոր լոյսն ու իմաստը: Ապա նկատի կ'ունենար նիւթը, արտայայտութեան կերպերը, որոնք իրենց նորութեամբ, զիւտերով, մտածման փայլակներով, կեանքով, պէտք է առինքնէին ընթերցողը: Գրական նկարագիր շինող եւ ակօս բացող ուսուցիչ էր Օշականը, մեթոտներու վրայ ձուլուած միտք մը չէր, մանկավարժութեան չէր հաւատար, բազմակողմանի ձիրքերով եւ հմտութեամբ խորունկ իր միտքը տեսութիւններ եւ կապանքներ չէր հանդուրժեր:

*«Ամէն գրող վկայ մըն է եւ ամէն գրուածք վկայութիւն մը»,* կըսէր: Գրող մը երեւան կը բերէ՞ իրաւ վկայութիւն մը իր անձէն, իր կեանքէն, իր հոգիէն եւ ժողովուրդէն, բարիգալուստ իրեն:

Գրող մը պէտք է կարենայ իր երկերուն մէջ դնել մեր ազգային հաւաքական զգայնութիւնը, այսինքն ցեղային ապրումներու սարուածը, մեր մտքին քանդակները, մեր հոգիին շնորհները, արուեստի զգայարանքին կնիքն ու փաստը:

(Շարունակելի՝ 1)

ԵՂԻՎԱՐԴ

(ՄԻՈՆ, ԽԸ. ՏԱՐԻ, ԹԻԻ 3-6, ՄԱՐՏ-ՅՈՒՆԻՍ, 1974, ԷՋ 115-123)

ՕՇԱԿԱՆ ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ

-----

ԳՐԱԳԷՏԸ

Ճակատագիր է որ տժգունին կտաները, խորշումին մարմարները, աղօտին էջերը: Այս օրենքը քիչ բացառությամբ տրորած է իր անողոք խստության ներքեւ, ինչ որ իբրեւ քաղաքակրթության նշանակ, ստեպ շքեղ իրագործում հասած է մեզի: Անկէ՛ գերծ ոչ մէկ իրացում այն անորակելի արժեքներէն, որոնցմով կազմուած է հայ գրականութիւնն ու մշակոյթը: Միւս կողմէ սակայն ժամանակը կը դալկացնէ ու կը տրորէ կեդծը, կը մոխրացնէ անիրականը միայն, որոնք չեն դիմանար ժամանակի ալիքներուն, նման ծովափին շինուած աւազէ աշտարակներուն:

Մարդեր կան իմաստի ինչպէս գործունէութեան բոլոր մարզերէն՝ որոնց ստեղծած հոսանքները կանցնին զիրենք: Ուրիշներ որոնց տրտում փառքը պատանքի պէս կը պարուրէ անոնց դիակները: Օշականը առաջին կարգին կը պատկանի, իբրեւ մին գրչի մեր մշակներէն, որուն շատ բան կը պարտի արեւմտահայ գրականութիւնը: Մատղաշ երիտասարդութենէն մինչեւ իր մահը, անօրինակ, որքան խռովայոյզ պայմաններու տակ անդադար գրիչ շարժեց, առանց պատրանաթափ ըլլալու պայմաններու ճնշումէն՝ տալով իրմէ վերջ երկու սերունդներուն իմացական ու զգացական հետաքրքրութեանց կարելի հանգանակները:

Նման բացառիկ ընտրեալներուն՝ Օշականը ճակատագրուած էր չպատկանելու իր ժամանակին, ըլլալու համար մարդը բոլոր ժամանակներու: Յաճախ բացառիկ խառնուածք մը, ստեպ ներքին զարտոդութիւն մը ինքզինքը ըլլալու, պատճառներ են այս հեքիաթունակ փառքին: Ոմանք զինքը կը նկատեն կամուրջ մը ընդմէջ երկու սերունդներու: Օշականը կը

պատկանի ոչ մէկ սերունդի: Անիկա երեւոյթ մըն է մեր գրականութեան մէջ, տաղանդ մը որ իր ներաշխարհով կը սնանէր, անցնելու համար իրմէն եւ կեանքէն անդին՝ անոնց մեծ նուաճումներուն:

Սովորութիւն է գրողներու կազմաւորման մէջ որոշ ազդակներ ճարել կամ ենթադրել ու վերլուծել զանոնք: Այս պարագան չի լուծեր սակայն տաղանդներու տեսակարար տարողութիւնը: Օշականը զինքը սնուցանող բոլոր շրջաններու եւ ազդեցութիւններու հոսանքն ի վեր թիավարող մը եղած է, բաժնելով այս կերպ բոլոր մեծ ու հարագատ գրողներու ճակատագիրը:

Իր փառասիրութիւնը եղած է ծանր ու դժնդակ, ուզելով պատկանիլ արեւմտեան գրականութեան ամենէն իրաւ եւ խորունկ ախորժակներուն, իւրացնելով անոր մշակոյթի ծանր տխրալիքներ: **Մթանտալ, Թէն, Ռընան, Մորասան, Պուրժէ, Մարսէլ Փրուստ, Տասթոյովսկի, Ճէյմս Ճոյս,** պարզ յիշատակութիւններ չեն Օշականի պարագային, այլ մտապատկերներ, երազներ, որոնց յաճախանքին մէջ ապրեցաւ ան: **Ծակ Պտուկը** Տասթոյովսկիի վէպին սահմանները կը քերէ, թէ՛ իբր կառուցում եւ թէ՛ իբր զարգացում: **Մնացորդացը**, իր ամենէն գիսախռի գործը, յուզումի, հեշտագին ապրումներու աղբիւրը հեղինակին եւ բոլոր անոնց համար՝ որոնք առանց նախապաշարումի կը կարդան զայն, կը կերպարանէ Փրուստեան ճարտարապետութիւն մը: Օշականը նորոգած է իր գտած կաղապարները եւ հոս է ինչպէս իր ինքնատպութիւնը, այնպէս ալ իր պատուհասը: Իրազեկ էր իր կարողութիւններուն, հակառակ այն վարկածին թէ արուեստագէտները կիսով միայն գիտակից են իրենց ուժին, երբ կը ստեղծագործեն: Օշականը կ'ապրէր իր տիպարներով, որոնք յաճախ զուրկ են կարծես կամքէ, հակապատկերը Պալգաքին, բայց մօտ Տասթոյովսկիին: Հոգեբան էր աւելի քան մտածող եւ իր այս կարողութիւնը կերելայ ու կը խորունկնայ իր հերոսներուն մէջ: Ան չէր զններ իրերն ու իրողութիւնները քննութեան սիրոյն, ոչ ալ իբրեւ արդիւնք յառաջագոյն գաղափարի. այս է պատճառ որ տեսութեան մը չի

հնազանդիք եւ կը մնայ գահավեժ իրականութիւններու եւ գաղափարի միջեւ: Չի փորձեր ազդել մեր մտքին, այլ լոյսին բերել մութ կէտերը, յստակելու ծածկուած ճշմարտութիւնները, որոնք կը խլրտին իր միտքին մէջ եւ որոնք ամենէն խորունկներն են մեր գիտակցութեան: Օշականի **Խոնարհները**, իրենց պարզ բայց եղերական գեղեցկութեամբ ու պատրանքներովը, **Երբ Պատանի Են** իրենց սարսուռներովն ու երազներովը կը բանան նոր վարագոյրը հայ գիւղին, հրեղէն գծագրութեամբ եւ ինքնատիպ ոճով: **Ծակ Պտուկը**, սիրոյ խորունկ բաբախումներով եւ հերոսական տիպարներու գծագրութեամբ: **Մնացորդացը** գիւղական գերդաստաններու փոթորիկ մըն է ժառանգութեան պահպանման ախորժակներով ինչպէս նաեւ սիրոյ եւ ոճի տեղերական հանդէսով:

Իբր թատերագիր ունի **Նոր Պսակը**, **Ստեփանոս Միւնեցի**, **Երբ Մեռնիլ Գիտենք**, **Աքիլէսի Կրունկին Տակ** եւ ուրիշներ, առնուած առօրեայ կեանքէն եւ մեր անցեալէն, որոնք մնայուն արժէքներ պիտի մնան մեր բեմին:

Մեր գրականութիւնը տկար ընծայող պատճառներէն մէկն ալ իր որոշ չափով իմաստէ գուրկ ըլլալն է, աւելի յաւակնոտ բառով մը, իմաստասիրութենէ: Մեզի պակասած է ամրապէս կազմակերպուած գաղափարներու սարուածը, որ իբր խարիսխ ու հիմք պաշտպանէր ստեղծումները: Մեր գրագէտները չեն տառապած գաղափարներու տազնապովը, ուր միտքը զանցառելի տարր մը կը մնայ: Պատիկցուցած իրենց թափանցումին սփիւռը եւ կոկոզած զգայնութեան աննշան խոռոչին մէջ, կեանքը ձեւած են իրենց ուղեղին նիհար ոսպնեակովը միայն: Արուեստի գործերը պէտք է ազատագրուին հասարակ տեղիքէն: Լէոնիտ Անտրիէֆ, արու յանդգնութեամբ մը կը ջնջէ իր գրածներէն երկրորդական տարրերուն մեծ մասը ու կը հասնի հզօր յուզականութեան մը՝ որուն լարերը իրարմէ կը ստանան իրենց ուժգին խոռվքը: Նոր միտք մը պէտք է ոգէտրէ մարդկային գործունէութեան բոլոր ձեւերը կառուցումի մը պարագային: Մարսել Փրուստ կը յաջողի երկրորդական իրապաշտութիւնը փոխարինել նոր ու

անակնկալ ճառագայթումով մը ուր կեանքը գործողութիւն կը գտնէ ուրիշ խաւերու ներքեւ: Տասթոյովսկին եւս ազատ է երկրորդականին բռնութենէն: Գործողութիւն եւ իմաստ երկու երեսներն են միեւնոյն իրողութեան, զոր կեանք կ'անուանենք: Գրականութիւնը գիրքերու անհատական պատմութիւն մը ըլլալէ աւելի, անոնց մարմնատութիւնը պարտադրող գաղափարներուն եւ անոնց ճնշումովը կազմուած պատկերներուն արձանագրութիւնն է: Գրագիտութիւնը ամբոյսինն է, արուեստը՝ անհատին: Այս երկու բառերը գրեթէ հակոտնեայ յղացքներ են: Առաջինը ինքզինքը ուրիշներուն վրայ բաշխելու, ուրիշներ նմանցնելու հետնակ աշխատանք մըն է: Երկրորդը ուրիշներէն զատուելու, ուրիշները նուաճելու հսկայ երկունք մը: Գիրք մը շատ բաներ ըլլալէ առաջ շեշտ անհատականութիւն մըն է: Կեանքը՝ ամէն բանէ վեր ահա իր վարդապետութիւնը, սակայն ոչ մակերեսէն տրուածը, այլ առնուած իր ներքին, հոգեկան ապրումներովը: Ահա իր խօսքը պատահօրէն ըսուած, թէ *«ողորմելի բայց ողջ կատու մը հազար անգամ աւելի կ'արժէ, քան սատկած առիւծ մը»*: Անկցի ուրեմն հռետորութիւնը, շպարը, կեղծիքը, կեցցէ իրականութիւնը, որուն մէջ մարդու մը հոգին խօսի եւ անով հաւաքականութեան մը սիրտը:

Օշականը չէր գրեր ուրիշները զարմացնելու կամ իր գրածներուն աղմուկովը հեշտանալու: Սրտառուչ էր իր պարագան, նոյնիսկ այք առաւ խորտակուիլ կիսուած սիրտէն, իր փառասիրութիւններէն ոմանք իրենց լրումին տանելու համար: Սրտի հարուածէն յետոյ քաջութիւն չունէր սկսելու **Համապատկեր**: Կիսաւարտ ձգած էր **Մնացորդացը**, բժիշկներու թելադրանքով եւ այժմ նոյն բժիշկներու հրահանգով կը զգուշանար միտքի ծանր աշխատանքէ: Մահուան մղձաւանջը կը հալածէր զինքը, *«կէս մարդ եմ»* կըսէր յաճախ եւ այքերը կը լեցուէին: Անհամեստութիւն թող չնկատուի եթէ ըսեմ թէ իմ թելադրանքովն ու ստիպումներով էր որ ձեռնամուխ եղաւ այս կոթողական գործին: Ամէն անգամ երբ կը լրացնէր հեղինակ մը, սրբազան պարտք մը կատարողի գոհունակութեամբ եւ թեթեւցած սրտով, կըսէր. *«Տղայ, կարծեմ թէ իրաւունք ունէիր ըսելու*

*թէ աշխատանքը կը մաքրէ ժամանակի ժանգը մեր ջիղերէն եւ աւելի դանդաղ քայլերով կը տանի մեզ մահուան»:*

Գրելէ առաջ անիկա ունէր ամփոփումի սուղ պահեր՝ որոնք զինքը կը մղէին սեղանին: Անգամ մը մտնելէ վերջ իր նիւթի կաղապարին մէջ, այլեւս ժամերը գոյութիւն չունէին իրեն համար: Մղուած իր մտապատկերներէն, իր կիրքերը ունենալով իրեն գահաւորակ, ան կը զեղուր իրմէ ինչ որ տարիներու մթերումն էր եղած: Հակառակ իր կուտակուած դառնութիւններուն, պահեց մինչեւ իր մահը մտաւորականի յատուկ զգայութեանց թարմութիւնը: Իր ամուր գիւղացիի խմորը իրեն բերաւ դիմանալու ուժէն դուրս չլանալու, դասալիք չըլլալու բարիքը: Խանդաղատագին տեսիլքով մը շրթները խածած, ամբողջ մարմինը բանտարկած, հոգին փակած իր գործէն դուրս որեւէ համի, վայելքի, յամառեցաւ դիմանալ ու ստեղծագործել, հակառակ բոլոր արգելքներուն: Վսեմ շեղումներու մարդը եղաւ իր խառնուածքով, գործով ու զարտուղութիւններով, որ սակայն իրեն յատուկ ներդաշնակութեան հասաւ, ըլլալու համար աններդաշնակ ներդաշնակութիւնը մեր գրականութեան:

Թերեւս շատերուն անծանօթ է թէ Օշականը գրչի մէկ հեղումով կը լեցնէր էջերը, առանց վերստին անդրադառնալու եւ սրբագրելու իր գրածը: Գուցէ այդ է պատճառ որ եթէ ոչ կրկնութիւններու, գէթ վերյիշումներու կը հանդիպինք իր մօտ յաճախ: Յետոյ իր գրածները յիշելու դժուարութիւն ունէր, որ յիշողութեան պակասէն աւելի արդիւնք էր իր մտքի տեսական ու արտակարգ յորդումին: Ա. Իսահակեանի եօթանասնամեակին առիթով խնդրեցինք Օշականէն որ գրէր վարպետին մասին, մեղմելով անցեալին իր յայտնած մեղադրանքները անոր գործին նկատմամբ: Օշական գրեց երկար յօդուած մը «Միոն»ի համար, առանց շատ բան զեղչելու իր տեսակէտներէն: Ստիպուեցանք ի պատիւ յոբելէարին դուրս ձգել իր արտայայտութիւններէն ստուար մաս մը եւ դրականի վերածել բացասական արտայայտութիւններէն ոմանք: «Միոն»ի լոյս տեսնելէն վերջ Օշականը չանդրադարձաւ տեղի ունեցած փոփոխութեան: Անդրադարձաւ այն ատեն միայն երբ Պէյրութի

յառաջդիմական մամուլը զինքը կեղծաւոր ու անպարկեշտ յայտարարեց, քանի որ տարիներ առաջ հրատարակուած «Փիւնիկ» շաբաթաթերթին մէջ Օշական տարբեր չափանիշերով կշռած էր Իսահակեանի գործը:

Վերոյիշեալ իրողութիւնը հաստատող աւելի կարեւոր պարագայ մը: Շահան Պերպերեանի խնդրանքով յաճախ Օշականի կողմէ քնարախաղեր կը գրուէին, Երուսաղէմի Ժառ. Վարժարանի եւ Ընծայարանի տղոց կողմէն ներկայացուելու համար: Զանոնք բեմին յարմարցնելու նպատակով, կը կրճատուէին եւ որոշ փոփոխութիւններու կենթարկուէին: Օշականը ներկայ ըլլալէ յետոյ բեմադրութիւններուն, չէր անդրադառնար եղածին:

Հեռու էր ժողովուրդէն, անոր առօրեայ կեանքէն ու ճաշակներէն, բայց կը ճանչնար ժողովուրդը իր բոլոր խաւերուն մէջ: Գիւղացի էր, ծանօթ գիւղի կեանքին եւ տիպարներուն: Մեր հին եւ նոր գրականութիւնը քիչ անգամ հետաքրքրուած է մեր ժողովուրդի ստուար զանգուածով, գիւղացիով: Այսինքն մարդերով՝ որոնք շատ ցանցառօրէն սպրդած են մեր գրականութենէն ներս՝ իրենց թանձրացած դիմագծութեամբ, որոնք սակայն մեր ցեղին ամենէն դիմացկուն ու հարազատ յատկութիւնները կը բերեն մեզի: Մարդեր՝ որոնց յուզումները թէւ սահմանափակ, բայց իրենց ուժգնութեանը մէջ կը հաւասարին մարդ արարածի բարձրագոյն տիպարներու տազնապանքին: Օշականը այս մարդերը կը գործածէ իրեն շատ ծանօթ, գրեթէ անոնց ընդունակութիւններով պայմանաւոր կեանքի մը նկարումին: Բոլոր իր հերոսները կը տիրապետուին հեղինակին բնագոյններէն եւ փորձառական իմաստութենէն: Կրաւորական էակներ են անոնք, ճնշումին տակ դարաւոր աւանդութեան: Գիւղը իր մարդերը կը շինէ ամենագոր իր գործարանին մէջ, ժամուն բակը, եկեղեցին, լեռը, արտը, աղբիւրը, գերեզմանոցը, տեղն ու խորհուրդը կը կազմեն անոնց կեանքին: Բարոյական այս ճնշումը կը տարածուի անոնց անմիջական կենցաղի սահմաններէն անդին, կազմելու հոգեկան յօրինումներ, որոնք կարծր ու տեսական են, ապա-

ռաժներու նման: Մեր, նախանձ, ցաւ, անօթութիւն, երկնքի ծարաւ, մեղքի զգայնութիւն եւ ուրիշներ: Ահա բարոյական ու հոգեկան այն գլխաւոր զսպանակները որոնց վրայ հաստատուած է մեր ժողովուրդին կեանքը դարերով:

Նոր էին այս մարդերը իրենց պատրանքներովն ու երազներովը, ողբերգական կեանքովն ու վախճանումովը, սակայն մարդեր իրենց հոգիով, իրենց սրտի ողբերգութեամբ, որոնք կուգային ցնցելու մեր հոգին, տարբեր Հրանդի տիպարներէն, Թլկատինցիի զգեստաւորածներէն, Ջարդարեանի հեքիաթներէն: Անժառանգ խլեակներ կեանքէն, կես մարդեր, որոնք յանկարծ նոր ոգի եւ կերպարանք կը հագնէին զգացումներու կրակ անձրեւին տակ: Թէ որքա՞ն գիւղացի է Օշականը իր գործին մէջ, դժուար է ըսել, սակայն իրողութիւն է թէ ան հոգեւտեսութեամբ կ'առաջնորդուէր, շատ անգամ վեր տրամաբանութեան եւ խելքի դատումէն, անգիտակից մղումին տակ իր զգայնութիւններուն: Հակառակ այս իրողութեան, ներքին տրամաբանութիւնը, գիտական վերլուծումը, առարկայական արժեւորումը հեռու չեն իրմէ: Իրարմէ տարբեր այս զոյգ տրամադրութիւնները կը միանային արուեստի լոյսի մը մէջ վեր հանելու իր գրականութեան կառոյցը, կեանքի կաւէն ստեղծելու արուեստի իրականութիւնը: Շատ քիչ բան Օշականի մէջ որ կեանքէն չգար արուեստի վերածուելու: **Կենդանի** եւ **ինքնաստիպ**, ահա երկու կարեւոր վերադիրներ որոնք քիչ անգամ քով քովի կուգան: Մենք առանց դժուարութեան կրնանք հետեւիլ այս նեարդ առ նեարդ հիւսուող ամբողջութեան, ուր կը մնան ընկղմած տարբերը Օշականի ստեղծումին, որու կեդրոնէն ինքզինքը կը հաւաքէ ու ոտքի կ'ելլէ տիպարը, առանց բռնի մղումներուն ենթարկելու:

Հետաքրքրական է որ մեր գիւղագիրներուն քով կիները երկրորդական կը մնան: Ժողովրդական բանահիւսութիւնը կը նախասիրէ զբաղիլ աղջիկներով, որոնք կարելի ճառագայթներ են կեանքի մեծ մշուշի ծոցէն դուրս թափող, կամ մայրերով եւ սրբուհիներով, որոնք վշտով ու զոհողութեամբ կը զատուին իրենց տժգոյն ու պղտոր մենութենէն: Օշականի աչքէն չ'եր

կրնար վրիպիլ գեղեցկութիւնը որ կիներով կը շինուի, սակայն ատոր հասնելու համար պէտք էր իջնել աւելի խորերը, անհատներու սիրտին մշուշոտ գաւառները, որոնց ճամբաները դժուար են ու վտանգաւոր: Օշականի նման փորձ խուզարկու մը միայն պիտի համարձակէր մօտենալ գիւղացի կիներու սիրտին որ կեանքի ամպերէն կալանաւոր լուսնակի կտոր մըն է յաճախ: Պէտք է հոս նշել որ Օշականի կին տիպարները հարագատ հայեր են, անոնց ցեղային գիծը եւ դարաւոր ասանդութեան դրոշմը լաւ կերպով վերբերուած է: Հաճի Աննան, հակառակ ճիղճ հաշիւներուն եւ նուաստացումին, գերդաստանի պահապանն է: Նազիկը իր սրտին համար մահուան վագոդ կինն է: Բոլորը իրենց սրտի ողբերգութեամբ, իրենց սեռային ու սիրային մրրիկներովը, մեղքերովն ու առաքինութիւններովը կը ցնցեն մեր հոգին, անհուն գուրբի եւ կարեկցութեան աղբիւրներ բանալով հոն: Ոչ Թլկատինցին եւ ոչ ալ Հրանդը կրցան իրենց տիպարները հիմնովին ազատագրել արեւմտահայ գրականութեան ոլորտէն, անիրական բոմանթիզմէն: Չեմ խօսիր Ջարդարեանէն որ մարդեր տալէ կը վախնայ կարծես, ըլլալու համար բառերու հրամայող գրագէտը:

Օշական իբրեւ վիպագիր խոտոր ճամբաներու մարդն է: Անոր համար վէպը պատմութիւն մը չէ միայն, դէպքերու հետաքրքրական յաջորդականութեամբ, հերոսներու տողանցքով կամ էնթրիկներու ճարտարամտութեամբ: Անոր վէպը բուն սերերու եւ կիրքերու բախումը կը բերէ մեզի, արտակարգ աճումով, ապա կործանումը մահուամբ, այսինքն ճակատագրական վախճանումովը դէպքերու բռնութեան: Օշականի մօտ մարդերը հետաքրքրական չեն իրենց արտաքին երեսներովը, ուշագրաւը անոնց հոգին է, իրենց յոյզերու ալիքներովը, սիրոյ, կիրքի, ատելութեան հրավառ պահերուն մէջ: Իր տիպարները յաճախ թէ՛ հերոս են եւ թէ՛ ոճրագործ, լոյս ու ցեխ, նման Տասթոյովսկիի կերպարներուն: Անոնց հոգին կը վարուի ճակատագրի ձեռքէն, որուն գործիքներն են լոկ մարմինները:

Իր գրականութիւնը բխում էր, ապրում էր, իրագործում ըլլալէ առաջ: Ներշնչումը իր մտապատկերներուն, հողի ընդեր-

քեն քամուող շիթեր չէին իր մօտ, այլ յորդագեղ վագքը ջրվեժին: Հակառակ ասոր, գրելու ատեն ան գիտէր հնագանդիլ խիստ եւ անբացատրելիօրէն նուրբ օրէնքներու, Նիցչէի պատկերով կը պարէր շղթաներու մէջ այն օրէնքներուն, որոնք յաւիտենական եւ անխախտ են եւ գոր մարդը չի կրնար անպատիժ ոտնակոխ ընել: Օշական անոնց սեղմող ծանրութեան ներքեւ կը շարժէր տեսակ մը ներքին խայտանքով, գոր իրեն կ'առթէր իր խառնըւածքը եւ ուրիշ անցաւոր ու փոփոխական պայմաններու հնարաւորութիւնը: Չէր հաւատար իրմէ դուրս գալիք ներշնչումին, այդ վիճակը իր մէջ ենթագիտակցական էր, ուր կը շինուին մտածումներն ու զգացումները, որոնք իրենց խորքով թէւ քիչ մը անորոշ, բայց իրենց արտայայտութեան կերպին մէջ յստակօրէն յարդարուած տպաւորութիւններու կը վերածուին, որ անոնց գլխաւոր արժէքը կը կազմէ: Ասոր կը նպաստէ աշխատութիւնը, երբ կը կատարուի տենդագին ոգեւորութեամբ, բեղմնաւորելով միտքը եւ յղանալու ծրագիրներ, հետըզհետէ իրագործելի, ուր գիտակից խորհրդածութիւնը եւ անգիտակից բնագործ բնականօրէն կը խառնուին իրարու: Ի վերջոյ «ներշնչումը օրն ի բուն աշխատիլն է»:

Յօրինումի իր գործը սովորական գրագետներու յատուկ յատակագիծը չունէր, անիկա ինքզինքին դէմ չէր դներ, կիրագործէր առանց ինքնիրեն եկածէն անդին անցնելու, բայց առանց կորսնցնելու նոյն ատեն ընդլայնելու պատեհութիւնը, երբ ինքնիրեն կը ներկայանար ան: Այս կերպով կատարուած ընդլայնումները լաւագոյններն են, որովհետեւ իրենց ստեղծումի թափին ներքին կշռոյթէն կը թելադրուին:

Օշական իրեն եկած մտածումներէն սովորութիւն չունէր ընտրելու ամենէն մեծերը, կամ մտքին շլացում ու հաճոյք պատճառողը, այլ անոնք որոնք կը ծառայէին հետապնդուած նպատակին: Իր գրելիքը որոշելէն վերջ՝ կորոնէր անոր բերածը միայն, անգթօրէն մերժելով մնացածը որ իրեն համար սին շահեկանութիւն մը միայն կրնար ներկայացնել: Միւս կողմէ, չէր վախնար ծանրաբեռնումներէ, որոնք սովորական գրողին քով զիրար կը ճզմեն, իր մօտ յառաջ կը բերեն լայն տպա-

տրութիւններու միութիւն մը, որոնք կոհակ առ կոհակ կը յառաջանան, առանց խախտելու ծաւալումին օրէնքները եւ պարզութեան հարստութիւնը:

Ոմանք կը կարծեն թէ Օշականը յաճախ թոյլ կուտայ որ իր մտածումները բախտին ճամբաներէն ընթանան, քանի որ արուեստագետին վրայ գաղափարի ազդեցութեան կը յաջորդէ գաղափարին վրայ արուեստագետին ազդեցութիւնը: Յօրինելը լատին կարգին հնազանդիլ է. Օշականը ճիշտ է որ չունէր այս ճշգրտութիւնը, անիկա կը հնազանդէր ուրիշ կարգի մը, իր յօրինումը բնական փթթումն է առաջին գաղափարին, հարըստացած բոլոր այն էական տարրերով զորս իրեն կը հայթայթէ նոյնիսկ իրմէն ներշնչուած որոնումին աշխատանքը: Օշականի մօտ կեանքի բխումը այնքան բուռն է եւ հզօր, որ յաճախ գիտէ իրարու ետեւէ շարել ձգտումնաւոր այն շեղումները որոնք ռումբերու պէս կը պայթին, դեռ ձեռքէն դուրս չեկած: Օշականի մէջ տրամաբանութեամբ յօրինուած մասերը շատ են, սակայն եթէ տրամաբանութիւնը արգելք հանդիսանայ իր գնացքին, ան իր ներքին մտայդացքներուն կը դառնայ: Հոգին զոր ոչինչ կրնայ կաշկանդել, իրաւունք ունի իր «յիմարութիւն»ը մեր «իմաստութեան» տեղը դնելու: Ճշմարտութեան օրէնքն է այս. ինչպէս որ յղացումի ճշմարտութիւն կայ՝ եթէ իրերուն վրայ ձեւուած է ան, նոյնպէս ալ յօրինումի ճշմարտութիւն մը կայ, եթէ յղացումի վրայ ձեւուի ան:

Ճիշտ է թէ գրուածք մը այնպէս կը յօրինուի ինչպէս շինուած են բոլոր բնական կազմութիւնները, մասնիկները, բիւրեղները, տունկերը, գիւղանկարները, կամ տիեզերքը ինքնին: Եթէ գրուածքին մէջ ընդգրկումի աւելի լայնութիւն կայ, պատճառը այն է որ միտքը աւելի հարուստ է քան նիւթը. բայց այդ ըսել չէ թէ յօրինումը հնազանդութիւնը չէ գործնական օրէնքներու: Ի գործ դրուելիք կարողութիւնը հոս գլխաւորաբար երեւակայութիւնը, զգացողութիւնը չէ ուրեմն, թէւ կարելոր ըլլան անոնք, այլ համակեդրոնացած դատումը, ողջմտութիւնը: Ամէն բաղակցութիւն, գեղագիտական կամ գործնական, պէտք է պատասխանէ ակներեւութիւններու, պէտք է պարզ գործո-

դութիւններով յառաջ երթայ, պէտք է հնազանդի պատշաճեցումի սկզբունքին, պէտք է իրագործել եւ մինչեւ վերջ պահել կատարեալ միութիւն մը: Ատոր համար է որ ըսուած է թէ մարդուն ամենէն գեղեցիկ ճարտարապետութիւնն է ցորենի ջրաղացքը: Մակայն Օշականը գործնական միութենէն աւելի հոգեկան միութեան կը ձգտի, ան ամբողջը ունի ի մտի, նման մեծ գրողներուն անոր համայնապատկերով ճշդորոշելու մասերուն յարաբերութիւնը: Օշականը սիրոյ կարգով կընթանայ, աւելի կուզէ տաքցնել քան թէ սորվեցնել, վասնզի բարձրագոյն եւ մը կը կատարել յօրինումի այդ գործը իր մէջ:

Ինչպէս մարմնի, այնպէս ալ գրական գործի մը բոլոր մասերը իրարու կապուած են: Չանգուածէն մաս մը բաժնել ուզելը՝ զայն մեռած գոյացութեանց կարգը դասել է: Այս կերպով միայն կարելի է ունենալ տպաւորութեան միութիւնը, հետեւաբար ուժը ինչպէս նաեւ գեղեցկութիւնը. որովհետեւ միութիւնը գեղեցիկին ձեւն է: Գեղեցիկ բայց ցրիւ բաները անդամազննական կտորներու առնթերադրութիւն մըն են միայն, բայց վէպը կամ պատմուածքը կենդանի բան մըն է: Յօրինելը ծնունդ տալ է, հետեւաբար պէտք է յօրինել ոչ թէ յաջորդական բայց անջատ հպումներով, այլ զանգուածովի, լաւ հսկելով մասերու հաւասարակշռութեան վրայ:

Յօրինումէն ետքը կուգայ ընդլայնումը, որով գաղափարներէն դուրս կը հանենք կարելիին տարրերը, այսինքն անոր մէջ պարունակուած ամբողջ լոյսը, ջերմութիւնը, ուժը: Ընդլայնել ըսելով պէտք է հասկնալ ուրեմն ոչ թէ մտածումը կամ զգացումը թրել իբրեւ տարրեր հեղուկի մը մէջ, այլ անոնց ընկերացնել իրենցմէ կախում ունեցող ուրիշ զգացումներ եւ գաղափարներ: Լաւ ընդլայնում մը կեդրոնացում ալ է: Ընդլայնելը հայթայթել է գաղափարներուն իրենց բնական աճումը: Ընդլայնելը գտնել է գլխաւոր ձայնին դաշնաւորները, համահընչին երկրորդական այն գաղափարները, որոնց մէջ բնականօրէն կը փթթի հիմնական գաղափարը: Կայ մակերեսի վրայ ընդլայնում մը որ կը կատարուի գաղափարին կցելով ինչ որ կրնայ լուսաւորել եւ ամբողջացնել զայն եւ կայ խորութեան

մէջ ընդլայնում մը որ կը պեղէ եւ կը ջանայ լաւագոյնս թափանցել հարցին: Օշականի համար էական օրէնքը այն է որ ընդլայնումը ներսէն կատարուի, ինչպէս է կեանքի պարագային:

Ընդլայնումի ընթացքին տրամաբանութիւնը մէկդի կը հրուի Օշականին մէջ, բառական եւ բանական տրամաբանութիւնները տեղի կուտան յուզական տրամաբանութեան մը՝ որ սրտինն է: Ան տրամաբանող մը չէ, այս վերջինը իր աղախինն է միայն: Ճարտարագէտ մը չէ, սակայն ճարտարագիտութիւնը կը հնազանդի իրեն: Օշականը զգացումի մարդ էր, իմացապատութիւնը գրականութենէ վտարելու աստիճան: Իր զգացական ու հոգեբանական այդ վիճակը սակայն չէր հեռացներ զինքը իրականութենէն: Գրականութիւնը իրեն համար ոչ կատակ էր, ոչ ալ զուարճալիք, այլ եղերական իրողութիւն մը գոր պէտք էր նուաճել:

Հակառակ մեծ գրագէտ մը ըլլալուն՝ քիչ է թիւը Օշականի հիացողներուն: Գլխաւոր առարկութիւնը իր դէմ ան է թէ իր վերլուծումները յաճախ կը գերազանցեն զգալու սովորական աստիճանը եւ իր հերոսները կը գործեն մեզի անծանօթ անպատասխանատուութեան մը մէջէն, իրենց յատուկ ներքին մղձաւանջով, հոգեբանութեամբ, երազներով եւ յոգնեցուցիչ զարտուղութիւններով: Օշական եւս կրնայ ըսել Ֆրոյտին հետ թէ աւելի ճշմարտութիւն կայ մեր ենթագիտակցական մղումներուն մէջ, քան մեր տրամաբանութեան ներքեւ ինկող գործառնութիւններուն: Մարգարէական իրատեսութիւններ են ասոնք, որոնք գրագէտի երեւակայութենէն կանցնին ու կը շողան, լուսաւորուելով ուրիշ աշխարհի մը լոյսով: Իր գործը մտածելէ առաջ մարդ պէտք է նախ երագէ գայն: Ճշմարիտ ու մեծ գրագէտը երագի եւ արթնութեան, գիտակցութեան եւ անգիտակցութեան, բնագոյի եւ բանականութեան համապատկերէ մըն է որ կանցնի: Պայծառ եւ լուսաւոր երագ մը, իրականութեան եւ անոր յատկանիշերուն հետ շփման մէջ եղող վիճակ մը, որուն մէջ երեւակայութիւնը հեռու կը փախչի շօշափելի իրականութիւններէն: Իրերուն հետ խոր մտերմու-

թենէն կը ծնի ան, ամենօրեայ աչքը բաւական չէ, մասնաւոր եւ տեւապէս անբացատրելի տրամադրութիւն մը հարկաւոր է անոր համար: Այսպէս վերբերուած այդ վիճակը կարելիին դէմքն է, ապագան, Պերկսոնի բառով, զուտ յայտնատեսութիւն մը:

Օշական կը ստեղծէ նոր աշխարհ մը եւ իր անձերը որոնք կ'ապրին իր անձնատրութեան բարիքովը, մեզի կը ներկայանան իրենց կեանքի երեսներով, առաքինութիւններով ու տիրտովը: Այս է պատճառ որ գաղափարները իրեն չեն գար իբրեւ մտածումներ, այլ միայն արարքներուն մէջէն իր հերոսներուն, որոնք հզօր են առանց իր մտածումներուն իսկ: Անիկա կեանքն էր առանց պիտակի, եւ կեանքը օրէնք չունի: Հետեւաբար մի զարմանաք երբ Օշական իր կիրքերուն, կարօսներուն ամեհի ասպետութիւնը վերածէ սրտայոյզ հեքիաթի: Ակնթարթի մը մէջ ան գիտէ գիւղացիին, քաղքենիին, հերոսին ու թշուառականին աչքերէն վերցնել կապը, ուղղելու անոնց նայուածքը արեան, երազին, գեղեցկութեան հեքիաթին: Էջերը քիչ կուզան երբ անոնց ակօսներուն մէջ պարպել ուզէ ան գետերը իր ապրումներուն:

Յոգնեցուցի՞ չ, անտարակոյս, ինչպէս ամէն վերելք, բայց շքեղ հեռապատկերներով, մարդկային, հզօր պատմումներով, տիպարներով, կեանքով՝ որ ոտքի պիտի պահէ իր գործը իբրեւ մեր դարու հայ կեանքի բարձրագոյն արձանագրութիւններէն մէկը. իբրեւ աննախընթաց վկայութիւն մը արեւմտահայ գրականութեան, իր ծաւալով, խորութեամբ ու պատկերացումներով, անհատական ու հաւաքական լոյսերով ողողուն: Գաղափարներու յարակցութեամբ Օշականի միտքին մէջ ամենահասարակ նիւթին առջեւ, կ'արթննայ ամբողջ աշխարհ մը որ իր թումբերը քակած կը հոսի իր գրչէն, զգայարանքներու ճամբով, լեցնելու էջերը:

Իր ոճը իրեն յատուկ ստեղծագործութիւն մըն է, երբեմն ծանր ու երկարաշունչ եւ երբեմն մէկ պատկերով ու հոգեվիճակով: Հո՞ծ իրականութեամբ, արագ, կենդանի պատկերներով եւ ծանօթ ճամբաներէ չքալելու մղումով: Անձնական եւ զուտ

Օշականեան ոճ մը որ մաս կը կազմէ իր խառնուածքին: Կը գրէր արագ, առանց անդրադարձումի, հակառակ այս իրողութեան անթերի էր գրական անխառն ստեղծագործութեամբ մը: Պէտք չէ փորձել տարբադադրելու Օշականը, այլ ընդունելու զայն իր համադրութեանը մէջ, իբրեւ ինքնայատուկ եւ ամբողջական երեւոյթ մը մեր գրականութեան: Չունի Չրաքեանի լեզուական խաղարկութիւնները, Կ. Չարեանի նիւթէն զառածանքը, սակայն իր յաւելումը ինքզինքէն ամէն ինչ իր ակօսին ձգելու իղձը, էջերուն վրայ արշաւել կուտայ իրեն:

Ճակատագի՞րը իր գրականութեան, այն ինչ որ հայ գրականութեանն է, որուն անխզելի մասն է ան, առանց որուն աղքատ պիտի ըլլար հայ ժամանակակից գրականութիւնը: Իր գործը միշտ անթառամ պիտի մնայ իր բերած թարմ շունչին ու բացառիկ արժէքին համար: Իր գրագէտի ճակատը պիտի փայլի մեր մեծ ստեղծողներու լեռնաշղթային մէջ, իբրեւ բարձրագոյն եւ անհասանելի գագաթ մը, իրեն կանչելու գալիք բոլոր ժամանակներու գրականութեան սիրահար սիրտերը:

(Շարունակելի՝ 2)

ԵՂԻՎԱՐԴ

(ՄԻՈՆ, ԽՂ. ՏԱՐԻ, ԹԻԻ 7-8, ՅՈՒԼԻՍ-ՕԳՈՍՏՈՍ, 1974, էջ 235-242)

## ՕՇԱԿԱՆԸ ԻԲՐ ՔՆՆԱԴԱՏ

«Մին»ի նախորդ էջերուն մէջ, երկու յօդուածներով, փորձեր էինք տալ Օշականը իբրեւ մարդ եւ գրագէտ: Այս յօդուածով կուզենք վերբերել զինքը իբրեւ մեծ դատողը մեր գրականութեան:

Արուեստով քննադատ մը չէ Օշականը, ճակատագիրը այդպէս էր կարգադրեր որ իր գործին մէկ կարեւոր մասը իյնայ այս կալուածին մէջ: Հետեւաբար իր մօտ քննադատութիւնը մեր գրականութեան վրայ հսկումի գործ մը չէ ընտրելու եւ մատնանշելու լաւագոյնները: Իրեն համար քննադատութիւնը գրականութեան մէկ ձեւն է, գատորոշելու գեղեցիկը եւ սիրել տալու գայն:

Քննադատութիւնը իր բարձրագոյն առումին մէջ, ըստ Օշականի, ինքնուրոյն արուեստ մըն է, իսկ քննադատը արուեստագէտ, այսինքն կեանք ներշնչելու ատակ միտքը: Քննադատութիւնը տակաւին իրեն համար ստեղծագործութիւն մըն է ստեղծագործութեան մէջ: Որովհետեւ որքան աստէն որ քննադատը ենթակայօրէն կը կենայ իր դատումին առարկայ գործին առջեւ, չի կրնար կրաւորական պատգամաբեր մը ըլլալ միայն, այլ սուգակ մը որ կը ջանայ վերբերելու գաղտնիքը գործին՝ նոյնիսկ հեղինակէն անդին: Իրական քննադատութիւնը արտայայտութիւն մը ըլլալէ աւելի տպաւորութիւն մըն է, եւ նկատի ունի հեղինակին գործը իբրեւ մեկնակէտ նոր ստեղծագործութեան մը: Այս էր պատճառ անշուշտ որ հակառակ իր խստադատութեան եւ հրամայական ժխտումներուն, մարդիկ տեսան որ այս պարսաւագրի կոշտ կեղեւին տակ կար քննադատ մը, որուն վարիչ գաղափարները մնայուն էին եւ թէ ան մէկէ աւելի լարեր ունէր իր աղեղին վրայ:

Գրականութիւնը ստեղծագործութիւն մըն է, կեանքի հրաշքը: Բնութիւնը Աստուծոյ արուեստն է, իսկ արուեստը մարդուն բարձրագոյն բնութիւնը: Արուեստի գործ մը էպպէս

նմանությունն է բնութեան եւ կեանքին, այս նմանությունը սակայն ընդօրինակություն մը չէ, այլ յօրինում: Արարիչը լեցուցած է աշխարհն ու մարդուն հոգին կեանքով, երազներով, յոյսերով, պատրանքներով, արցունքով, ծիծաղով, ստրկութեամբ եւ հերոսութեամբ: Գրագէտին գործն է տալ այս բոլորը բխումի եւ բախումի իրենց երկունքներով: Գրականությունը պերճանք մը չէ, այլ հայելի մը անհատին կամ հաւաքակա- նութեան ապրումները ցոլացնող, առանց շպարի եւ կեղծիքի: *«Մի մոռնաք», կըսէր յաճախ Օշականը, «թէ ողորմելի բայց ողջ կատու մը հազար անգամ աւելի կ'արժէ քան սատկած առիւծ մը»:*

Մինչեւ Օշական մեր քննադատությունը վերածուեր էր փոխադարձ գովեստի եւ պարսաւի: Նոյնիսկ Չօպանեան, Արփիարեան, Զօհրայ եւ Յարությունեան կընէին իրենց գրադատումները առանց խորունկ ակօսի եւ լայն հորիզոնի: Կը ներկայացնէին գործերը աւելի շատ բացատրելով քան մատնանշելով, դատելով քան զգալով: Այս անուններէն կը զատուի Չօպանեանը՝ որուն քննադատական սուգումները մեր անցեալի ընդերքն ի վար, անշուշտ կը խօսին մեզի, սակայն իր դատումները չեն ազատագրուած տպաւորութեանց ենթակայութենէ մը: Ճիշտ է թէ նորերու նկատմամբ եղած է բարեացակամ, իսկ հիներու դէմ ոչ պատկերամարտ, որդեգրելով թերեւս մեծ քննադատ Մէնթ Պեովի խօսքը թէ «նոր յայտնուող տաղանդ մը քաջալերելու եւ ուղղելու լաւագոյն միջոցը անոր գլխուն կաղամար մը չնետելն է»: Գրական քննադատությունը մեր մէջ լրագրական քրոնիկն էր: Չեմ ուզեր ըսել թէ վերոյիշուած անուններուն՝ Չօպանեանով գլխաւորուած, պակասած են գաղափար, հասկացողություն, դատում, զարգացում: Ասոնք բոլորը մէկ կը շինեն պարկեշտ մտաւորականը, բայց ոչ այն միւս տիպարը որ այլամերժօրէն իր ուժերը պիտի յատկացնէ դիրքերու, գործերու ճանաչողութեան, գրականութեան ընդհանուր ըմբռումի մը՝ ստեղծելով իր բեմը:

Իր քննադատական ընդարձակ գործին մէջ, **Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան**, Օշականի ներկայացու-

ցածր յաջորդականութիւնը չէ միայն երկերու, որոնք կը կազմեն շղթան Հայ Գրականութեան, Զարթօնքի սերունդէն սկսեալ մինչեւ Արուեստագէտ սերունդի վերջին մնացորդները, ոչ ալ նկարահանդէսը այն գրագէտներուն, որոնք կառուցին մեր գրականութիւնը իր եղափոխութեան եւ սեռերուն մէջ: Այս ամէնը զինք կը զբաղցնեն անշուշտ, սակայն գրական երկերուն նկատմամբ ան ունէր աւելի աւագ մտահոգութիւններ, վերածելով զանոնք քանի մը պարզ բայց կենդանի տարագներու:

Իբրեւ համադրական քննադատ՝ իրեն ներկայացող գործերուն մէջ Օշականը կորոնէ առաւելաբար հաւաքական զգայնութիւն, ցեղային ապրումներու սարուածը, մեր միտքին քանդակները, մեր երեւակայելու ուժը, մեր արուեստի զգայարանքին կնիքն ու փաստերը, մէկ խօսքով մեր հոգեղէն մարմնին սեւեռումը: Ապա մտայնութիւններ՝ որոնք գրական սեռերու մէջ բիրեղանալէ առաջ ապրեր են մեր հոգիներուն խորը, թաւալեր են կեանքի մեծ զարկերակին ներքեւ, ստեղծելով բռնկումներ, փլուզումներ, ժայթքումներ, աղէտներ, յաղթանակներ, յարդարելով ճակատագիրը մեր ժողովուրդին:

Արեւմտահայ գրականութիւնը իրեն համար իրարմէ խռովիչ պատգամներու հանդէս մըն է, բարեխառնութիւններու մրցարան: Ճշդէլ այս բարեխառնութիւններու ծածուկ բաղադրիչները, շարժումներուն սիրտը, գործերուն յատակը, մտայնութեանց թոհուրոհը, իրողութիւններ են, որոնք կը պահանջեն եւրոպական տարողութեամբ միտք մը, որ ընդգրկէր մեր ամբողջ իմացական վաստակը, իջնէր մեր գրականութեան ըմբռնումին՝ տարօրէն թելադրիչ եւ զգլխող խորութեանց քանի մը կարկառուն ցուցմութիւններու ճամբով, կերպադրելու մեր հոգին, դարերու սանդուխներէն, մեզ յայտնաբերելու մեզի:

Նկատի ունի նաեւ ժամանակի տիրող գաղափարները, տարողութիւնը մեր գրականութեան յեղաշրջումին, վիճակներ՝ որոնք մեր ժողովուրդի կեանքին վրայ բացուած արիւնտ լուսամուտներ են, թուխպ կամ մեռելական, զանգուածն ու գրողը իր տեսիլքին, ճնշումին ու կիրքին մէջ ընդքարշող: Մէկ խօսքով մեր քաղաքական տագնապները, կսկիծները, տենչերը,

քաղցրութիւնները, խոյանքները, լքումները, որոնք գրական կերպարանքներու տակ կը սեւեռեն իրենք զիրենք սերունդներու տեւողութեան մէջ, կը կերպադրեն շրջանները, եւ ցեղային գիծերու վրայէն նոր լոյս մը, նոր խորութեան ակօս մը կապահովեն:

Օշականը կը ծանրանայ գլխաւորաբար այն գործերուն, դէմքերուն եւ երեւոյթներուն վրայ, ուր մեր ժողովուրդին մեծ արժանիքը, առաքինութիւնը, նոյնիսկ թերութիւնը, ըլլայ սեւեռուած կենդանի կերպով, ինքզինքը նկատառման պարտադրող: Այդ է պատճառ որ իր քով չյարգուին պատկերացման, անդրադարձումի, թուումի եւ առաքման աւանդական կարգերը, բաժանումները, համախմբումներու կաղապար դարձած կերպարանքները:

Օշական առհասարակ նկատուած է հարթող եւ կործանարար քննադատ մը մեր մէջ, սակայն արդար ըլլալու համար պէտք է ըսել թէ այդ վերագրումը շատ մակերեսային է, գործադրուած յաճախ անոնց կողմէ՝ որոնք ուզեցին մեր գրականութեան բարձրագոյն աթոռներուն վրայ եւս տեղ ունենալ: Ոչ որ մեր արժէքներուն, մեր փառքերուն եւ մեր գեղեցկութիւններուն նկատմամբ եղած է այնքան խանդավառ եւ շեփորած անոնց արժէքը, որքան Օշականը: Վկայ Դուրեանի, Մեծարենցի, Վարուժանի, Թէքէեանի, Երուխանի, Պարոնեանի, Տիկ. Եսայեանի եւ Թլկատինցիի նկատմամբ ունեցած իր անխառն հիացումները եւ **Համապատկերի** մէջ անոնց նուիրուած լայն տեղը, որոնք հեռու կործանման ստուերներ յօրինելէ, շինիչ խանդավառութիւններ եւ փառաբանութիւններ են: Գալով իր կշիռին, ատիկա ներկայացուած գրական գործերու կենդանի մասի քանակով է պայմանաւոր, երբ կայ այդ կենդանի փշրանքը, ատիկա բաւ է զինք մեղմելու եւ նոյնիսկ խանդադատագին զգացումներու առաջնորդելու: Այսպէս Սրուանձտեանցի մը, Խրիմեանի մը մէջ ան արժէք կը տեսնէ, հակառակ որ անոնք դժուար կը զետեղուին զուտ գրական ճաշակներու պահանջին մէջ: Բայց երբ չի գտներ այդ կենդանի մասը Միպիլի մը կամ Թէրզեանի մը պարագային, օրինակի համար, կ'ըսէ իր

ցար այդ յուսահատութեան մասին անկեղծութեամբ եւ տագնապով: Մեզ բոլորիս անձանօթ չէ քիչ մը դժուարահաճ՝ բայց խղճմտօրէն կերպարանուած իր դատաստանը մեր իրաւարժէքներու մասին, սկսեալ դպրոցի սեղաններէն մինչեւ բարձրագոյն ատեանները մեր մտքի հանդէսներուն:

**Համապատկեր**ին մէջ ժամանակ, զայն լեցնող իրադարձութիւններ, անոնց ընդմէջէն ծնունդ առած զգայնութիւնները եւ անոնց տիրապետումի ճիգը, իրարու կը յաջորդեն եւ զիրար կ'ամբողջացնեն: Նոր է նոյնպէս իր գրականութիւնը տեսնելու եղանակը. ցեղային արժէքները, ժամանակի տագնապը իր շուքերով եւ լոյսերով, իր ֆիզիք եւ պատմական իրադարձութիւններով, իրարու կուգան կերպարանելու համար շրջանը: Հեղինակները յաջող կամ տրտում դերակատարներ են լոկ, առիթներ, ինչպէս կըսէ Օշականը, ըսելու համար անհրաժեշտը, որ իրենցմէ անդին մեր գրականութեանն է, մեր ժողովուրդին:

Վեպ մըն է **Համապատկերը**, եւ ուրիշ ինչ կրնար ըլլալ, երբ տալ ուզէինք մարդերն ու ապրումները հարազատօրէն իրենց ժամանակին մէջ: Օշականը հաւատարիմ քննադատական այն մեծ տարազին թէ՛ դատելը վերստին ստեղծել է, կ'ապրի տագնապը բոլոր անոնց, որոնք կը կանչուին իրմէ հաշուեյարդարի նստելու համար, եւ սրտառուչ է որ ան աւելի կուտայ քան կ'առնէ. որքան մեծ է իր համակրանքը մեր գրչի աշխատաւորներուն նկատմամբ, այնքան խանդավառ է ինքը այն քիչովն իսկ՝ որ մերն է սակայն: Մի գարմանաք, եթէ ըսեմ, թէ Օշականը **Համապատկերի**, այնպէս ալ իր բովանդակ գրականութեան պարագային, կը զգայ ու կը տեսնէ աւելի իր ջիղերովը, քան ուղեղով, որ կրնայ զմեզ ընել ժլատ ու առարկայական: Անոր համար է որ իր վէպերը՝ մարդեր են, կենսագրութիւններ. իսկ իր դատումները՝ վէպեր: **Համապատկերը** հետեւաբար մարդերու հանդէս մըն է, ուր միսն ու միտքը, իր բառով, երազանքն ու յոյզը, եւ անըմբռնելի կերպարանքները իրարու կը խառնուին, ստեղծելու համար այն անօրինակ համայնապատկերը՝ որ **Համապատկերին**ն է: Առաւելութիւն-

նե՞րը մեթոտին. բայց մեթոտ մը չէ գործադրուածը, ոչ ալ յղացք մը, որ դատումի կերպ մը եւ կեցուածք մը կենթադրէ, ժամանակի մէջ ընթացք առած, ժամանակի ախորժակներուն եւ յղացքներուն միտող: Օշականը կ'ապրի շրջաններն ու մարդերը, տարօրինակ հեռագայութեամբ եւ թափանցումով, եւ այս մտերմիկ հոգեխառնութիւնը, ժամանակէն եւ ընդունուած հրամանակարգերէն վեր եւ դուրս այս ողբերգութիւնը, մտածումը իրն է, զինք վերածեր են կեանքի մէջ անանձն մենամոլի մը եւ անժամանակ գրագէտի մը ու դատողի մը նոյն ատեն: Ան ամէն սեռի մէջ ինքզինքն է որ կուտայ, նոյնիսկ այն ատեն երբ կուզէ վկայութիւնը ըլլալ իր սերունդին եւ հանդէսը իր ժողովուրդի թաքուն ուժերուն: Ժամանակ, տեղ, դէպքերն ու վկայութիւնները, իրեն համար կորնչական մասերն են անցեալին, եթէ թիւն, թուականն, փաստէն, պատմական ստուգութենէն վեր չտիրապետէ ոգեղէն իրականութիւնը:

Օշականը **Համապատկերը** վերածեր է կեանքի կրկեսի մը, ուրկէ մեզի կը բերուին սրտառուչ վկայութիւններ, որոնք աւելի կարժեն քան հաւաքական եւ համեմատական նման գործերը օտարներու մօտ: Օշականի գործին մէջ դէպքերը, թուականները, մարդերը, մտայնութիւնները, հոգեբանութիւնը կը վերբաղադրուին եւ մեզի կուգան նոր կնիքով մը՝ ուր կը զգանք իրականութիւնը, ինչպէս անոր անդրադարձ երկարածգումը, շրջանէ եւ շրջաններէ ալ անդին: Հետեւաբար անոնք որ պիտի ձեռնեն **Համապատկերը**, մատենագրական ծանօթութիւններու մթերքէն աւելի, պիտի գտնեն հոն վերարտադրութիւնը մեր անցեալ կեանքին, որ իբրեւ դէպք, գործ, մտայնութիւն, հոգեբանութիւն եւ ազդեցութիւն, լիովին արժեւորելէ վերջ, եղած է նաեւ ապրումներու հանդէս մը, ուր կայ կիրք եւ ջերմութիւն, այսինքն խանդավառ այն դիմաւորումը՝ զոր Օշական ունի մեր գրչի եւ գրքի հերոսներուն նկատմամբ: Անցեալը եւ դէմքերը իրեն համար լուսանկարներ եւ յայտնաբերային վկայութիւններ չեն, այլ կենդանի իրականութիւն մը, եւ էջերը յաճախ կը դադրին թուղթ ըլլալէ ու կը դառնան բաբախուն

սիրտ եւ չնշմարուած ողբերգութիւն, եւ այս բոլորը սրտագրաւ եւ նոր, կարծես առաջին անգամ լոյսին բացուած:

Կեանքի մեթոտին բարիքն է ասիկա որով մտածումները կը վերածուին կեանքի կտորներու: Այնքան ուժով է խտացած կեանքին սխրագին ձգողութիւնը որ ընթերցողը անզգալաբար առնուած այդ թափին մէջ, չզգար թէ ինչպէս կը քալէ էջերուն հետ: Կրկնեցէք ապրումի այս ձեւը հեղինակներուն ալ վրայ, իւրաքանչիւրը անոնցմէ կը դառնայ գումարը հազարաւոր ապրումներու: Ամէն մէկ հեղինակ այսպէս գոց ապրումներու հանգոյց մըն է, եւ երբ Օշական կախարդական իր մատովը կը հպի այդ հանգոյցներուն, անոնցմէ հոսող, յառնող կեանքը մեզ կը նուաճէ: Ահա Օշականին բերած նորութիւնը: Հայ քննադատութիւնը Օշականով գրական սեռ մը կը դառնայ, զգայութեան եւ դատումի խառնումով, գիրքերու մէջէն բայց վեր անոնցմէ:

Օշականը դէմ է գրական դպրոցներուն եւ հանգանակներուն, չունի բանաձեւուած սկզբունքներ, կամ իմաստասիրական տեսութիւններ: Դէմ է ընկերային, քաղաքական եւ տնտեսական վարդապետութիւններու լայն միջամտութեան: Դէմ է քարացած մտայնութիւններուն: Դժուար չէ մեթոտի մը կառչիլ, սակայն Օշականի համար մեթոտը երկսայրի սուր մըն էր որ բարիքին չափովը ընդունակ է մեզ չարիքի գառածելու: Աշխարհի բոլոր վաւերաթուղթերը ի վիճակի չեն ոտքի հանելու գրական քննադատութիւնը, որքան ատեն որ միտքը կը գործէ թուղթերու վրայ եւ չի յաջողիր թափանցել կեանքի խաւերը: Հայ մատենագրութեան կառոյցին համար եղած աշխատանքը պէտք է պայմանաւորուի միշտ կեանքի զգայարանքովը, մեթոտի մը հնազանդելէ առաջ:

Օշական գիտէ անվրէպ մէկ նայուածքով գնահատել գործի մը արժէքը եւ տեսնել թերին: Իր կեցուածքը ժխտական է յաճախ, իր աչքը նախ թերին կը տեսնէ՝ գեղեցիկը փնտռելէ առաջ, ապա հաստատելու տեւական մասը: Կը քայքայէ Տէմիրճիպաշեանը, կը զգեսնէ Զարեանը, յետոյ ըսելու համար թէ իւրաքանչիւրէն կրնայ մնալ հատոր մը: Հակառակ այս

իրողութեան, ան քառասուն տարի շարունակ մեծ նախան-  
ձախնդիրը եղաւ մեր գրականութեան մէջ վճռական գեղեց-  
կութեանց յաւելումին: Ոչ մէկ ընթացիկ հիացում, պար-  
տադրուած կարծիք եւ հանգանակ զայն չեն կրցած ընկճել,  
որպէսզի նահանջէ իր այս խստապահանջութենէն: Իր այս  
նպատակին մէջ ան քալած է աղանդաւորի մը պէս կրքոտ,  
աններող եւ ապերասան: Կը հաւատար թէ գրական վաստակի  
մը դէմ իր այս կեցուածքը՝ հարագատ գեղեցկութիւնը գտնելու  
եւ փառաւորելու, աւելի կարժէր քան գովաբանութիւնը արժե-  
ւին ու չարժեւին: Այս խստադատութեամբ կը հաւատար թէ կը  
ծառայէր Հայ Գրականութեան իրական փառքին՝ աւելի  
արդիւնքով քան անոնք՝ որոնք գիտակցութեամբ կամ անգի-  
տակցութեամբ, համաձայն իրենց հասկացողութեան, արժեք-  
ներ կը սիրէին տեսնել հոն՝ ուր անկէ շուք կար միայն: Սակայն  
մարդիկ ընդունակ են յաճախ շփոթելու խստապահանջութիւնը  
ամբարհաւաճութեան հետ, երբ իրենց որոնած գովեստը, խունկ  
չի գտներ: Ամբարտաւանութեան ընդունակ են սնամէջ ուղեղ-  
ները միայն: Օշականի միտքն ու հոգին հարուստ էին իշխանի  
մը գանձարանին չափ: Անշուշտ որ զինք հալածելու չափ  
չհանդուրժողներէն եւ ուրանալ փորձողներէն շատեր դիրբաւ  
զինքը պաշտպանողներ պիտի ըլլային, եթէ Օշական թոյլ տար  
ինքզինքին շոյել անոնց փառասիրութիւնները: Հակառակ իր  
համեստութեան, խօսքի անկեղծ բրտութեամբ, կիրքերու  
թափով իրեն ճարեց դաժան համբաւ մը: Մարդիկ զինքը  
նոյնացուցին ժխտումի ասպետներուն՝ եւ դատապարտեցին իր  
հիմնովին ատած մեղքերուն համար: Շրջուած հասկցուելու  
ողբերգութիւնը բաժինն է բոլոր մեծերուն: Մարդիկ աւելի  
դիրբաւ կրնան ներել մեղքը, բայց չեն հանդուրժեր հանճարը:  
Դժուար է անոնց մարսելու իրենց միջակութիւնը: Մարդիկ  
միշտ պիտի տառապին ուրիշներու հասակէն երբ իրենցը չի  
հասնիր, պիտի խմբեն իրենց փոքր ատելութիւնները երբ  
հասարակաց մեծութիւն մը կործանելու վրայ է հարցը: Յետոյ  
չարութիւն է այս կեցուածքը զգեստաւորել խուլ եւ խոր  
եսապաշտութեան մը հեռայարդար հաշիւներով: Չներեցին

իրեն իր գրչի ընկերները, չներեցին իրեն իր ձեռնասունները, որոնք նման ամեն աշակերտի, իրենց վարժութեան զգայնութիւնները աճեցուցին, անով հարուած տալու համար վարպետին վրիպանքներուն: Բարեմտութիւն է անշուշտ երբեմն ազատագրել կեանքի գիրէն դատապարտուածները, սակայն սրտառուչ առաքինութիւն է ուրացումներու մոռյլ գուպարին մէջէն քալել, քննադատութեան անդաւաճան դրօշին մէջ թաղելու առաքեալի իր փառասիրութիւնը: Հակառակ իր մտքի առատ տուրքերուն, չէ գտած արդար հունձք եւ անդաստան:

Երկարատեւ փորձառութիւնը, լայն ընթերցումները, իր մէջ յուսախաբութիւնները՝ մարդոց, գիրքերու, համբաւներու հանդէպ, գրողներու կեղծիքի ու սուտի անսանձ տիրապետութիւնը, հեշտագնաց հասարակ տեղիքները կը տառապեցնէին զինք, արդարացնելով իր բացասական կեցուածքը, թէ իսկ երբեմն սահմանազանց: Հայաստանի բանաստեղծութեան հանդէպ իր կեցուածքը այս տառապանքին մէկ ճիչն էր: Այս առթիւ յարուցուած տխուր աղմուկին մէջ, ոչ մէկ գրագետ ուզեց խառնուիլ, անշուշտ ի սեր հայրենասիրութեան: Հրապարակ իջան գլխաւորաբար ամբոխավարները, Հայաստանի բանաստեղծութեան դատը պաշտպանելու համար: Ի՞նչ էր Օշականի մեղքը երբ իր բաղձանքը պահանջքի վերածած, համարձակեր էր ըսելու թէ *«մեր Հայրենիքի համալսարանին պատմական, գիտական, լեզուական, հաւաքչական աշխատանքին վրայ իմ հպարտութիւնը, հիացումը քսան տարի առաջ ես պոռացեր եմ առանց մէկէ մը հրաւեր ստացած ըլլալու: Բայց մեր Հայրենիքին մէջ ճշտորոշ գրական վաստակին վրայ իմ անտարբերութիւնը, տառապանքը, նոյնիսկ գայրոյթը, ես չեմ վարանիր նոյն անկեղծութեամբ պոռալու»*:

Իր սիրտէն վտանգուած Օշականը արդեօք ո՞ր օրուան պիտի սպասէր իր հիացումը արտայայտելու խնդրոյ առարկայ եղող գրական վաստակին համար, ինք որ արեւելահայ գրականութեան մեծ մշակոյթին վրայ ժամանակին իր հիացումը չէր սակարկած: Վերոյիշեալ արտայայտութիւնը մատի փաթթոց ընել, խռշոթցնել եւ վերածել քաղաքական դաւաճա-

նութեան, բան մըն էր որ չունի անուն: Մակայն մեր մէջ նման բաներ յաճախադէպ կրնան պատահիլ, երբ մարդիկ պատրրւակի մը կը կոթնին, իրենց թուղթէ սաղաւարտներով եւ փայտէ թուրերով խիզախելու ճակատամարտներ շահած իրական հերոսին դէմ: Օշականի դէմ այս պայքարը՝ տխուր ասանդութեան մը կրկնութիւնն էր, զուտ գրական գետնի վրայ դատելով:

Օշականը չէր հաստատար մեծութիւններու առասպելին, բայց կը զգար փոքրութիւններու կսկիծը իր դէմ դաշնակցող զեռուններուն: Չեղաւ ճկուն, գործելու օրուան պահանջներուն, օրակարգերուն համաձայն: Ցաւցուց գրչի եւ խօսքի աքլորները եւ բառերու մունետիկները: Հակառակ այս իրողութեան մեծ հիացումներու դիւցազներգակ մունետիկը եղաւ իրաւ արժէքները փառաւորելու մէջ: Իր գլխակորոյս աշխատանքը յանուն մեր գրականութեան, նոր ոսկեհանքերու ետեւէն իր արշաւը, շշուկի պէս ընդունուեցաւ միայն ժամանակակիցներէն: Ոչ ոք, իրմէ գատ, ի վիճակի պիտի ըլլար հեղինակօրէն գծելու **Համապատկերը** Հայ Գրականութեան: Օշական, այսպէս, իր սերունդին կէս ձգած գործը իր լրումին տարաւ մեծ յաջողութեամբ եւ շքեղանքով: Անիկա ապրեցաւ իր ժողովուրդը, զուգահեռ ակօսէ մը, ուրկէ կը հոսէր իր տառապանքը, ինչպէս յիմարութիւնները, բայց ուր կը ծաղկէր դարձեալ ծաղիկը նուրբ գեղեցկութեանց, մեր արուեստի զանազան կերպարանքներուն ընդմէջէն: Շատեր իր սերունդէն իրենք զիրենք միայն ապրեցան, ոմանք ընկալչութեամբ, ուրիշներ իմացական նարկիսականութեամբ: Օշական հալածական մարգարէի մը նման ապրեցաւ իր ժողովուրդը, ծառայելով անոր արժէքներու փառաւորման գործին, բերելով վկայութիւնը իր ժողովուրդի թաքուն շնորհներու պայծառակերպման: Ան ապրեցաւ նաեւ պատմութիւնը իր ժողովուրդին, ոչ իբրեւ իրողութիւններու, պատահարներու, դէպքերու եւ թուականներու յաջորդական ցուցատախտակ մը, այլ իբրեւ վերացում մը, ոգիացում մը, ազատագրելով ամենէն սրբազան իսկութիւններ, մտայնութեան

իւններ, սրբութիւններ, արձանելով զանոնք իբրեւ անթառամ բխումներ մեր անցեալին:

Օշական ապրեցաւ Թուրքը, ոչ միայն իբրեւ անասնութիւն, սպանդի մեքենայ, այլ իբրեւ մէկ կերպարանքը մեզի քիչ ծանօթ բարդոյթներուն: Իր գործին մէջ ծանր է ուրուականը այդ գազանին, իբրեւ ոգի, մթնոլորտ եւ ապրում, որոնք շատ քիչերու զգայարանքները կը յաջողին տպաւորել: Տափաստանեան այդ անասունը դէպքերու մղումին տակ տիրական կերպարանք է իր հոգիին մէջ:

Հետեւող մը չեղաւ ֆրանսական մեծ քննադատներու, Մէնթ-Պեովի, Ֆակէի եւ Թէնի, որոնք իր օրերուն դադրած էին ըլլալու ուղեցոյցներ արուեստին եւ մտած երջանիկ քունին մէջ, որով կը մոխրանան քննադատական ամենէն յանդուգն տեսակէտներն ու յաջողուածքները: Անոնք կը կարդացուէին միայն անձերու հոգեկան բաւիղներէն ներս իրենց բացած այլապէս շահեկան, խռովիչ լուսամուտներու սիրոյն: Սակայն անտարբեր չէ մնացած անոնց բնախօսական, հոգեբանական հետախոյզ հետաքրքրութիւններու նկատմամբ, որոնք կը համընթանան կազմելու մարդու մը կերպարանքը իր բոլոր երեսներուն վրայ, որոնց յօրինումին կիշխեն խորհրդաւոր օրէնքներ, այդ վիճակներէն հանելու արժէքը գործին: Ջերմ է նախապաշարումներէ, բայց ունի իր խառնուածքին մղումները իբրեւ ուղեցոյց իր դատումներուն: Օշական քիչ անգամ կը զոհէ իր նախասիրութիւնները: Բնապաշտ է եւ սկեպտիկ, առանց ծծել ուզելու մարդկային խանդադատանքին կաթը: Կը պահանջէ ձեւին կատարելութիւնը, լեզուն, բառամթերք, պատկերներ, յօրինում, ոճ, ընդունելով հանդերձ թէ թէքնիքը չի կրնար ազատագրել երկ մը, եթէ ան զուրկ է խորքէ: Թէքնիքին պաշտօնն է բռնել, կայունացնել իրերու անցաւորութիւնը միայն, բայց ոչ ոգին: Քննադատի միտքը հայելի մըն է ուր ամբողջ աշխարհ մը կը ցոլայ եւ ուրկէ կարտացոլայ աւելի յստակ կերպով կարելիին դէմքը:

Օշականը գեղեցիկին ու կատարեալին ջատագովն է: Երբ արուեստագէտը կ'առաջնորդուի բարոյական մտածումով,

կրնայ ձախողիլ: Բարոյական ճշմարտութիւն մը լոյս ընծայելու մտածումով յղացուած արուեստի գործ մը, ձգտուն քան մը ունի իր մէջ: Ասիկա ըսել չէ անշուշտ թէ դրական յարաբերութիւն մը չկայ արուեստի եւ բարոյականի միջեւ: Պէտք չէ մոռնալ որ գեղեցիկը արդէն բարոյական ազդակ մըն է ըստ ինքեան: Գիտէ ոչ միայն ճաշակել նուրբ հրապոյրը գեղեցիկին, այլ մանաւանդ ըմբռնել զանոնք գոյաւորող ծուծը, պեղելով անոնց խորքը, մեզի փոխանցելու իր հոգիի թրթռացումներու արձագանգները:

Օշական աշխատանքի որոշ մեթոտ մը չունէր, իրականութիւնը, կըսէր, աւելի հարուստ է քան աշխատանքի որոշ դրութիւն մը: Այդ չափանիշը անշուշտ արդիւնք էր իր նկարագրին, իր յառաջադրութեան մէջ հասնելու ճշմարտութեան, որ կը խուսափի յաճախ: Քննադատը ստիպուած է կոչ ընելու չափանիշ մը՝ պաշտպանելու ինքզինքը իր եսի թելադրանքներուն դէմ, որ արգելք կրնայ հանդիսանալ ճշմարտութեան հետախուզումին: Զերծ է իր դատումներուն մէջ այն շաղփաղփանքներէն զոր շատ մը գրողներ մեզի կը բաշխեն առատօրէն գրագէտներու կեանքէն, գիտնալով հանդերձ թէ հեղինակին կեանքը քննադատին կրնայ մատուցանել թանկագին ճշմարտութիւններ:

Չունէր գրական եւ իմացական հանգանակներ եւ աղանդի մը պատկանելու կաշկանդումը, այդ տեսակէտով մարդերու ամենէն անկախը եւ միտքերու ամենէն ազատը եղաւ, զինուած իր տաղանդով: Իր գործը յաւակնութեան եւ հաւատքի արդիւնք մըն է: Յաւակնութիւն՝ հասնելու բարձրագոյն իրականացումներու, եւրոպական մեծ ու ծանր գործերու կողքին: Հաւատքի՝ գոյաւորելով իր վիթխարի գործը, մեծ ու հեռաւոր տեսիլներու հետապնդումով եւ անոնց հասնելու վճռակամութեամբ:

Օշական իր գործով, հետապնդումներով եւ ոգիով, չծալլուած դրօշակ մը պիտի մնայ Հայ Գրականութեան մէջ: Հրաւեր մը՝ դէպի յանդուգն վերելքներ, կոչ մը՝ երիտասարդ գրողներուն՝ դէպի նոր հորիզոններ արշաւող, առանց ետեւ նայելու, ինչ որ ըրաւ ինքը քառասուն տարիներ շարունակ:

(Վերջ)

ԵՂԻՎԱՐԴ

(ՄԻՈՆ, Ծ. ՏԱՐԻ, ԹԻԻ 1, ՅՈՒՆՈՒԱՐ, 1976, ԷՋ 24-30)

ՕՇԱԿԱՆ ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ

Ա.

Ո՛չ լուսանկար. ո՛չ դիմաստուներ. Օշականէն իմ միտքիս մէջ կը մնայ չսքօղուող դէմք մը, տրտմանուշ՝ բայց խօսուն յուշ մը, միշտ բացխփիկ, իր անցեալը ներկայի վերածող: Կուգեմ սիրտէս փրթած քանի մը տողերով իր հետ ըլլալ, ոգեկոչել իր անձը անգամ մը եւս, ապրիլ իր յիշատակը՝ ինչպէս որ էր ան քառասուն տարիներ առաջ, լսել իր ձայնը, որ յանկարծ իմ մէջս կը հնչէ վերստին, իր ծննդեան հարիւրամեակին եւ գրական գործունէութեան յիսնամեակին առիթով:

Հարուստներ են անոնք, մեծ եւ առատաձեռն, որոնք գիտեն իրենց մտքին ու հոգիին քանքարներովը հարստացնել մեր մտքին գանձարանը եւ դարձեալ հարուստ մնալ, նման զօրավարի մը, որ յաղթանակի բազմաթիւ ճակատամարտներ է շահած եւ շքանշաններով զարդարուած: Եթէ իր անձէն դէպի իր գործը իջնենք եւ գործէն ալ կեանքին բարձրանանք, վերելք մը կատարած կըլլանք, թէեւ դժուար՝ բայց հաճելի, իսկ այս առիթով՝ արդար եւ պարտաւորիչ:

Իր գրականութիւնը ճառագայթն է իր բացառիկ էութեան, որուն մէջ կարելի է հաստատել կեանքի բոլոր գօտիները: Հարուստ՝ իր ենթահողով, իր զարտուղի անձնաւորութեամբ, ինչպէս նաեւ իր առատաշնորհ բխումներովը: Օշականի գործերը, իբրեւ ծաւալ եւ ոգեղէն խտութիւն, կուգան նախ գիւղէն: Իր տաղանդին տպաւորապաշտ էջերը իրենց արմատները արձակած են խորունկ կերպով նախ գիւղական բարքերու հոգեբանութեան ծոցը, անոնցմէ առնելով ոչ միայն սնունդ, մարմին, այլ նաեւ հոգի: Չկար բան մը իր մէջ, որ կեանքէն չգար արուեստի վերածուելու, **կենդանի** եւ **ինքնատիպ**: Ահա կարեւոր երկու վերադիրներ, որոնք քիչ անգամ քով քովի

կուգան, լուսաւորելու եւ հանրութեան համակրանքին յանձնելու գրականութեան մէջ սկսող անուն մը:

Յաճախ կը սիրէր ըսել թէ հատորներ անբաւական պիտի գային նուաճելու համար վայրագ քաղցրութիւնը հողին, համն ու խուլ մրմունջները սերմին ու արեան: Օշական գիւղին մէջ զգաց իր անդրանիկ ընկալչութեան ծարաւը: Ինքը միշտ ընդունած է որ հոգիին կազմութիւնը կամբողջանար մինչեւ դուռները պատանութեան:

Օշականի պատանութեան, յետոյ առաջին երիտասարդութեան, երբ կը գրէր **Երբ Պատանի Են, Խոնարհները, Երբ Պզտիկ Են, Խորհուրդներու Մեհեանը**, հայ գիւղը կը բացակայէր մեր գրականութենէն, եղերական կորուստի մը գինով: Այս կերպով կը կրկնուէր մեր հին գրականութեան վրիպանքը, որ ժողովուրդը հեռու կը պահէ իր էջերէն, հիմնովին անգիտանալով գիւղը: Օշական եթէ ոչ միակը՝ բայց առաջիններէն եղաւ պատմելու արհամարհուած՝ բայց գերազանցապէս հարազատ ներքնաշխարհը գիւղացիներուն, որոնք մեր ցեղին ամենէն դիմացկուն եւ զուլալ յատկութիւնները, դարերէ ի վեր շալկած, կը բերէին: Որոնք տակաւին իրենց անխառն բարութեան, անհաւասարելի չարքաշութեան եւ ազգայնական յամառութեան մէջ կը մերժէին, փառաբանուած բայց հոգիով բոպիկ, վաճառական ու քաղքենի տիպարին ստորոգելիները: Օշական առաջին մէկ օրէն զգաց թէ հոն է պատմութեան փոշիով եւ քաղաքականութեան մշուշով այլափոխուած հողամասը, որ գագաթ, խորամուխ անդունդ եւ հեղեղատ ըլլալէ առաջ, բարի պաստառն է արտին, ջուրին, անտառին, որ կը շինուի մարդերու պէս եւ ձեւ ու երանգ կը ստանայ իր վրայ թափող յուզումներէն:

Ոչ Թլկատինցին, ոչ ալ Հրանդը կրցան իրենց տիպարները հիմնովին ազատագրել արեւմտահայ գրականութեան ապագայնացած ոլորտէն, ուր մարդերը կընկղմէին դարերու դասականութեան մը մէջ կամ կը վերցուէին անիրական ռոմանթիզմով: Հոս պէտք է ճշդել թէ Օշականի գիւղանկարչութիւնը կանջատուի արեւելահայ գրականութեան մէջ **հայեցի**

պիտակին տակ ճանչցուած տափակ եւ սովորական գունաւորումէն: Արտայայտուած կեանքը չէ որ գործ մը հայեցի կ'ընէ, այլ այդ կեանքը տալու ձեւին մէջն է որ կը թաքնուի արուեստի մը, գրականութեան մը անթարգմանելի ոգին:

Իր հոգեյատակը կազմուած էր գիւղէն վերջ՝ քաղաքէն: Անոնք որ Օշականի աշխարհը պիտի աշխատին խորաչափել, պիտի զարմանան անդունդներէն բխող ալիքներու յորդուփեամբ կեանքի այն հեղեղէն, որ կը լողայ, ընդերկրեայ բայց խռովայոյզ, քաղքենի անոր վէպերուն յատակներն ի վար: **Մնացորդացի** դժոխքը, ինչպէս ինքը կը սիրէր ըսել, պիտի յօրինուէր այդ հոգեբանութեամբ, եթէ այդ մեծ վէպը կիսատ չմնար:

Տասնչորս տարիներ շարունակ բախտը ունեցայ վայելելու բարեկամութիւնը Օշականի, որ օրհնութեան մը պէս կը տարածուէր շուրջս: Մեր ծանօթութեան առաջին օրէն զգացի իր մտքին բացառիկ որակը եւ իր հոգիին շնորհները: Միբեցի զինքը այն խոր համակրանքով որ հիացումէն կը ծնի: Ինքը գիտէր ասիկա եւ հօր մը զգացումով կը նայէր ինծի եւ կը հսկէր վրաս: Անիկա նման չէր իմ ճանչցած գրագետներուն: Անձնաւորութիւնը զօրաւոր էր իր մէջ, որովհետեւ կամքի ուժէ, հոգեկան կորովէ եւ մանաւանդ աշխատութեան անհուն խանդէ եւ կարողութենէ էր շինուած: Իր մտածումները կեանքի վրայ լարուած միտքէ մը կուգային:

Օշական մեր երեք սերունդներով պայմանաւոր գրագետ մըն էր – հին, միջին, նոր: Հին էր հայրենի ասանդութիւններով եւ անցեալով, միջին՝ տարիքով, նոր՝ իր ըմբռնումներով, լեզուով, ոճով, տեսնելու, զգալու եւ դատելու եղանակով: Յառաջապահ գրագետը մնաց միշտ, յանդուգն, պայքարող, կոտորող-թափող, չծալուող: Իր գրական համոզումներն ու տեսակէտները գիտէր պաշտպանել հաւատքով, ջերմութեամբ, կիրքով: Բաց էր իր կուրծքը հարուածներ ընդունելու համար եւ ջլապինդ ու սոթտուած թելերը՝ հարուածներ տալու:

Շատեր ըսին թէ եսապաշտ գրող մըն է ան: Սակայն կարելի՞ է երեւակայել մարդ մը, մանաւանդ գրագետ մը որ **ես**

չունենայ: Այդպիսին անհատականութենէ գուրկ մահկանացու մըն է լոկ: Օշականի **Ես**ը իր անձին վերաբերող յատկանիշ մը չէ, կեդրոնը իր անձը չէ, այլ իր ժողովուրդը, անոր գրականութիւնը:

Իր միտքն ու հոգին զեղուն էին եւ յորդագեղ: Հանդարտ լոյս մը կը ճառագայթէր կարծես իրմէ. այս լոյսը չէր շլացներ, բայց յարաճուն քաղցրութեամբ կը լեցներ իր շուրջը եւ սխրանքով կը համակէր իր մտերմութեան մէջ եղողները: Դուրսէն զինք դիտողները իր աշխարհային ու հաստ կճեպին տակ ոչինչ կրնային նշմարել: Այդպիսիներուն համար Օշական անուն մըն էր միայն: Մեծանուն գրագետը նման էր սակայն այն նկարներուն, որոնք առաջին ակնարկով չեն գրաւեր քեզ, որոնց մէջ սակայն չկասկածուած գեղեցկութիւն մը կայ, որ նոր հիացումով կ'առիւնքնէ քեզ: Մեծղի, լեռնային, անտաշ, երկաթախառն զանգուած մը, լայն ուսերուն վրայ թաւամագ, խոշոր գլուխ մը, հայու աչքեր՝ հոծ խորհուրդով, գիւղացիի երեւոյթով, դանդաղաշարժ, բայց անսպառ կենսունակութեամբ լեցուն: Զետեղեցէք բազմատարր այս զանգուածը բարութեան մը, անհուն գուրգուրանքի հոսանուտի մը մէջ, հայրական հոգածութեան մը զեղումով, եւ դուք կ'ունենաք Օշականը: Սակայն իր դիմանկարին տիրական գիծը իր անպարագրելի տաղանդն էր, ամենի բայց խոնարհ դրսերեւոյթի մը ներքեւ տրուած:

1937ին երբ Բարիզէն կը վերադառնար, ընկճուած էր ու բեկուած ինք իր մէջ: Մեծ ոստանի ամենագետ բժիշկները միայն վեց ամիս ապրելու իրաւունք տուած էին իրեն: *«Այսպէ՛ս պիտի ըլլար Օշականը»* ըսաւ, խզուած ձայնով: *«Ամէն ինչ սեւ է շուրջս: Կեանքը որ կը վառէր մէջս աստղի մը նման, մոխիր է այլեւս, որոպիետեւ մռայլ աղէտին դէմքը կը ճնշէ վրաս, անծանօթ հրէշի մը պէս»:*

Այդ օրերուն մահը կը հետեւէր իրեն, մանաւանդ իր սրտի հարուածէն յետոյ: Ինք կը զգար ատիկա եւ ամէն ճիգ կ'ընէր ողորելու անկաշառ այդ ոգեհանը: *«Համիտեան ուստիկանութիւնը կարելի է կաշառել, բայց մահը անկաշառ է»*, կ'ըսէր յաճախ, եւ իմաստասիրօրէն ու դառնութեամբ կը յաւելլուր, *«եւ ասիկա գուցէ մեծագոյն բարիքներէն մէկն է կեանքին»:* Ինչ տրտում

բայց քաղցր մտածում. մահուան բարիքը որոնել կեանքի չարիքին դեմ, ամոքելու համար իր չարչարուող հոգին:

Չկրցայ խօսիլ իր դամբանականը, յարգելու մեր տարիներու համաձայնությունը, զորս իբրեւ տրտում եւ զուարթ կատակ յաճախ կընէինք իրարու: Այս տողերը գրած պահուս կը լեցուի նորէն հոգիս անորակելի վիշտով: Մենք որ կեանքի մէջ այնքան մօտ եղանք իրարու եւ նեցուկ մէկզմէկու, իր մահուան մէջ եղանք հեռու իրարմէ: Իր մահուան գոյժը չլացուց զիս, վիշտին եւ անակնկալին թափը արգիլեցին զայն, եւ շմած ու թառամած «ի վերայ սգոյ սիրեցելոյն», խեղճ, բայց անմոռանալի Օշական, ըսի ինքզինքիս. բայց դառն ժպիտ մը պրկեց շրթներս, վասնզի հեռուէն կարծես լսեցի իր ձայնը որ կըսէր. «*Յիմար, մահուան մէջ իշխանն ու մուրացիկը հաւասար իրաւունքով կը կենան*»: Ինքը իշխան մը եղաւ ինչպէս մահուան՝ այնպէս ալ կեանքին մէջ, բայց նաեւ հայցորդը այդ մահէն, այն քանի մը աւելորդ տարիներուն համար, իր սրտի եւ մտքի աշխարհակալութիւնը կատարեալ ընելու հայ գրականութեան դաշտին վրայ:

Կեանքին մէջ մինակ մնաց միշտ, եւ քալեց այն փառքին՝ որ իրենն էր եւ իրմով հայ գրականութեան: Սակայն մահուան մէջ հազարներ ուզեցին իր հետ ըլլալ: Ահա մեծ հակադրութիւնը կեանքին, որ բաժինն է եղած բոլոր մեծերուն: Ի զուր չէ որ հալածուող եւ քարկոծուող մարտիրոսներու գերեզմանը յետոյ ուխտավայր ըլլայ ամբոյններու:

Ի վերջոյ, մարդեր կան որոնք չար աստղի ներքեւ են ծներ: Ինչ կերպով ալ որ ուզենք արժեւորել կամ հասկնալ այս բացատրութիւնը, ան կը մնայ անխախտ իրողութիւնը շատ մը կեանքերու, որոնք միշտ պիտի տառապին եւ նոյն իսկ հալածուին իրենց ունեցածին շատութեանը համար: Նոր չէ որ աստուածներու կրակը մարդոց բարիքին բերողները կանչուին քաւելու իրենց չունեցած մեղքը:

Պարզ էր եւ ազնիւ, մանուկի մը չափ բացսիրտ, հակառակ որ գիտէր աշխարհի չարն ու բարին, սրբազան մատեաններու խոստումը եւ բոլոր ժամանակներու իմաստուն-

ներուն վճիռը: Միւս կողմէն սակայն ոչ մէկ խորհուրդ իրենին չափ եղաւ լեցուն, ամեհի եւ սանձարձակ: Իր սրտի բարութիւնը եւ մտքի տուրքը ճառագայթուն կերպով կը բաշխուէին մանաւանդ իր ուսուցիչի կերպարին ներքեւ, հաւատաւոր եւ ոգեշունչ: Եթէ Եղիշէ Դուրեան իր սրբազան շունչը կը բերէր զինքը ունկնդրող աշակերտութեան, Օշական հայ մտքին եւ աշակերտին աւագանը նոր կայլակներով լեցնելու վայելքով կարբենար: Ուսուցիչ՝ այն իմաստով, որ բառերէն եւ խօսքերէն գիտէ հեռու երթալ, որ կախարդանքով մը գիտէ հոգիներուն իջնել եւ հոն բորբոքել հրայրքը իր ուսուցումներուն, որոնք կը դադրին քաղուածոյ ծանօթութիւններ ըլլալէ եւ կը դառնան մարդակերտ եւ անձնադրոշմ խմորումներ: Դասարանէն ներս կը մտնէր խուժումով, զանգուածային աշխուժով եւ դասարանը կը վերածուէր խլրտուն եւ զուարթ մթնոլորտի մը: Գուրգուրանք եւ ջերմութիւն էր դասարանէն ներս: Հակառակ որ դէմ էր, այսպէս կոչուած մանկավարժական բոլոր տեսութիւններուն, գնահատուած եւ փնտռուած ուսուցիչ մը եղաւ միշտ, ինչպէս նաեւ մանկավարժ ուսուցիչ մը, եթէ մանկավարժութեան գերագոյն նպատակը աշակերտի մը կարողութիւններուն յայտնաբերումն է, վաղուան սերունդի պատրաստութեան մէջ:

Տխուր մարդ մը եղաւ կեանքին համար, ոչ անշուշտ այն տխրութիւններէն, որոնք յաճախ արտաքին են եւ աղաղակող, այլ սրտի այն պարապէն, զոր ոչինչ կրնայ լեցնել յաճախ: Այդ տխրութիւնը կը բխէր զուցէ մանկութեան վճիտ երջանկութեան մը պակասէն, զուցէ հոգեկան խառնուածքէն եւ կամ գաղափարական անաւարտ հետամտութենէ մը: Կեանքը իր առօրեայով հրապոյր չունէր իրեն համար: Այս պակասը կը լեցուէր այն քաղցր հակումով, զոր ունեցաւ միշտ ուրիշներու մտքի եւ հոգիի կարիքներուն նկատմամբ: Մարդոց բաշխուելու այս յօժարամտութիւնը ապրում էր իր երագներէն հալածական այս մարդուն մէջ: Արեւը, ջուրը, ծառը, իրենց անզուպելի բարիքն ու հարստութիւնն է որ կուտան: Կեանքը կուտայ, մահն է միայն որ կ'առնէ:

Յետոյ պէտք չէ մոռնալ որ վիշտը իր ուրոյն աղբիւրները ունի: Զգայուն հոգին, որ իրերն ու երեւոյթները իրենց բացարձակին, իտէպին կը տանի, իր մէջ կը կրէ աշխարհ մը շատ աւելի մեծ ու պայծառ, եւ որ կը տառապի իր ունեցածին շատութեանը համար: Մեծ անձնաւորութիւններ՝ անոնք կոչուին հերոս, արուեստագէտ կամ սուրբ, մարդէր են, որոնք հարուստ են մարդկային եւ աստուածային կարողութիւններէն: Նարեկացին իր վիշտը ունի, վասնզի իր գաղափարատիպին նմանելու գերագոյն ըղձանքին մէջ, կը հետապնդէ զինք անհունացնող տեսիլքը: Սգաւոր է Տանթէն, վասնզի քաւարանի եւ դժոխքի մութ արահետներէն որոնեց միշտ իրմէն խուսափող պատկերը, զինք ամբողջացնող կէսը: Գիտունը բաժնուած իր ճշմարտութենէն, արուեստագէտը՝ իր տեսիլքէն եւ հաւատացեալը՝ Աստուծմէ, տխուր են: Տարբեր չէր կրնար ըլլար Օշական մեծ արուեստագէտը եւ կեանքին նայող իր հոգին առանց տառապանքի չէր որ ետ կուգար:

Սրտառուչ էր ճիգը, հակառակ իր կիսուած սրտին, ինքզինքէն չխնայելու մեծ փառասիրութիւններէն մէկ երկուքը իրենց լրումին տանելու: Ան իր կեանքը ըրաւ թիապարտի վաստակ մը եւ մտքի **Ֆաքիրի** մը պէս, հակառակ ամբաստանութեան եւ ուրացումին՝ ստեղծեց: Խանդաղատիչ տեսիլ էր հետեւիլ իր լրութեանը, երբ ատամները կղպած, ամբողջ մարմինը բանտարկած, հողին փակած իր գործէն դուրս որեւէ համի, վայելքի, յամառեցաւ դիմանալ: Մտքին ալ **Ֆաքիրները** իրաւ են: Գտաւ ինքզինքը սփոփելու միջոցներէն ամենէն ապահովը բայց ամենէն դժուարը, մտքի սկեպտոթիւնը, որով դիմաւորեց պարսաւը, ուրացումը, եւ ստեղծագործեց, ընդդէմ աշխարհ մը արգելքներուն: Մարդը եղաւ ան, որուն հեքիաթը՝ տժգունելու տեղ, ժամանակին հետ ամբացաւ եւ ժայռացաւ, թէ՛ Սփիւռքի եւ թէ՛ մանաւանդ Մայր Հայրենիքի մէջ:

Ըսին թէ կը մեծամտէր, բայց ես գիտեմ թէ ան պարզ էր եւ արդար, մեռելաճաշերուն բաժնուած հացին պէս: Ըսին թէ չէր հանդուրժեր իրաւ արժէքները, երբ անոնց մօտ չէր հաստատեր իր ճաշակին գոհացում ճարող տարրերը: Բայց ես գիտեմ որ ան

մեծագոյն հիացումներուն դիւցազներգակ մունետիկը եղաւ, իրաւ փառքերը փառաւորելու աստեն, հակառակ անոր որ այնքան դիրքին էր ուրիշներու պէս ըլլալ:

Յեղափոխականներու վախճանը կառափնատն է յաճախ: Օշական հայ գրականութեան արժէքներուն յեղաշրջողը եւ հին ըմբռնումներու յեղափոխականը եղաւ եւ շատ բնական է որ կրէր իր պատիժը: Մարդերը փորձեցին չտեսնել զինքը, բայց ան աւելին էր, քան ինչ որ իրենք կրնային անտեսել: Իր գրականութեան աշխարհը հայ ժողովուրդը եղաւ, իր մեծ ու փոքր տիպարներով, աւանդութիւններով, յոյզերով եւ երազներով: Ինչ փոյթ թէ այդ ժողովուրդը յաճախ անգիտացաւ զինքը: Բայց ան յամառեցաւ ու գրեց, իր վերջին օրերուն, մեր գրականութեան **Համապատկերը**, երբ գիտութեան ոստիկանները կ'արգիլէին իրեն գիրը:

Մեր անցեալը տեսնելու իր կերպը տարբեր էր պատմաբանասիրական չոր ու գիտուն մեթոտներէն: Փորձեց այդ անցեալը հասկնալ իբրեւ արուեստի տնկարան մը, ուր մեր հոգին իր արմատները արձակած էր: Իրն է արժանիքը այդ մարդոց ստեղծագործութիւններուն մէջ տեսնելու իրական արուեստի քանի մը տարբեր, որոնք մեր նուաստացած հոգիներուն մէջ փառքի մարմարներու վերածուէին: Ի՛նչ յուզիչ խանդաղատանքով ան գիտէր ծոյլ մեր մագաղաթներուն եւ անցեալէն մեզի եկած փշրանքներուն վրայ, իր գաւկին խանձարուրը քակող մօր մը սիրով: Երբ կը խօսէր մեր երախտաւոր մեծ մեռելներէն, կը զգայինք թէ այդ մարդերը անուններ չէին իր շրթունքներուն՝ այլ արժէքներ եւ կանգուն հասակներ իր հոգիին մէջ: Անկարելի է առանց յուզումի խօսիլ մարդու մը մասին, որ աւելի քան կէս դար վազեց, իր մեծ հաւատքը միայն ունենալով իբրեւ երիվար, իր գրականութեան վաստակին մէջէն, աշխարհի հզօրներէն ուզելու արեւուն տակ տեղը իր ժողովուրդին:

Մեծ մարդոց հոգիին բացատրութիւնը պէտք է որոնել հոգիին մէջ այն ժողովուրդին, որուն ծոցածին զաւակներն են անոնք: Որովհետեւ ամէն մարդ իր ժամանակին պատկանելէ

առաջ՝ իր ժողովուրդին է ամբողջապես: Մարդոց հզորներեն սկսեալ մինչեւ անչափահաս տղան, կնիքին տակն են իրենցմէ վեր այս օրէնքին: Մեծ մարդերը հետեւաբար անձնաւորեալ արտայայտութիւնն են իրենց ցեղին եւ ժամանակին: Անոնց կեանքի պատմութիւնը պէտք է որոնել ոչ թէ հոյլ մը թուականներու եւ ծանօթութիւններու մէջ, որոնցմով կը հիւսուի կենսագրութիւն մը, այլ լուսաբանութեան մէջ այն ձգտումներուն՝ որոնք կը յատկանշեն անոնց ժամանակն ու միջավայրը: Օշական այն քիչերէն էր, որ ըրած էր թափանցումը մեր պատմութեան, ոչ իբրեւ թիւ եւ անուն, թուական եւ առաքում, այլ իբրեւ իրաւ այն աշխարհը, ուր իրարու ետեւէ հարիւրաւոր սերունդներ աճեցան արեան եւ կրակի մէջ, արտադրեցին նոյն պայմաններով, նուաճեցին հողը, դէպքերը, եւ մնացին տէր իրենց արդար իրաւունքներուն:

Հպարտ էր մեր պատմութեամբ, մեր գրականութեամբ, գոր չէր խղճահարէր յաճախ պատռտելու զայն, հասնելու համար ցեղին ոգիին: Հակառակ իր ժխտումներուն եւ յարձակումներուն, պարկեշտ մտաւորականներէն ոչ ոք գրեթէ դէմ էր իրեն, հաստատելով իր մէջ ազնիւ եւ անկաշառ աշխատաւորը հայ միտքին: Դարբինն էր, որ մեր անցեալի մուրին ու ծուխին մէջէն, կրակի կտորներու եւ ցայտքերու մէջէն կը փորձէր յօրինել արժէքները անցեալին եւ տեսիլքը վաղուան: Աւելցուցէք այս բոլորին վրայ անկախութեան իր զգացումը անհատական եւ հանրային կեանքի մէջ, դուք չափով մը կը մօտենաք իր ուրուանկարին:

Իր լայն ընթերցումները եւ անոնց կարգին յուսախաբութիւնները մարդոց դիրքերու, համբաւներու հանդէպ, կը տառապեցնէին զինքը եւ հետեւաբար կ'արդարացնէին իր դաժանութիւնը, իր բացասական կեցուածքը, թէեւ երբեմն սահմանազանց: Բայց արթուն պահակ մը միանգամայն, երբ յանկարծ մատղաշ գեղեցկութիւն մը յայտնուէր, որուն հանդէպ զիտէր գուրգուրալ ու խանդավառուիլ: Այս գուրգուրանքին արդիւնքն է արդէն այն հսկայական ճիգը, որ Օշականի

գրական վաստակն է, տեսակ մը աշտարակաշինութիւն, հաստատ հիմերու վրայ դրուած:

## Բ.

Այս առիթով, կուզէի անգամ մը եւս թարմացնել իր մարդու կերպարը եւ գրագէտի արժանիքները միտքերուն մէջ բոլոր անոնց՝ որոնք բարեկամ են գրականութեան: Խօսիլ գրագէտ բարեկամի մը մասին ուրիշ բարեկամներու: Մեր կենսագիրները միշտ ժլատ եղած են մարդերու ապրումներէն տեղեկութիւններ բերելու, թողլով որ գործը խօսի, որպէսզի ապագայ սերունդները անոր նային իրենց ուրոյն հասկացողութեամբ, անոր փոխ տալով լեզուն իրենց սեփական զգացումներուն եւ մտածումին: Կան ուրիշներ որոնք կը կարծեն թէ անձերը աւելի կ'արժեն իրենց գործէն, որ յաճախ շուք ու մոխիր է երբ համեմատութեան դրուի անոնց անձնական հմայքին հետ: Այս վերջին տեսակետը սակայն, առաւելաբար հանրային գործիչներու վերաբերող, դուրս է գրականութեան եւ արուեստի սահմանէն: Օշականի պարագային պէտք է ըսել թէ իր կեանքին եւ գրականութեան միջեւ եթէ անուղակի անդրադարձումներ կան, որ շատ բնական է, անմիջական եւ սերտ աղերս մը գոյութիւն չունի: Իր գրականութիւնը հայելին չէ իր կեանքին եւ անձին, նման Ջօհրապին, օրինակի համար, որուն գործը առաւելաբար պատկերն ու անդրադարձը եղաւ իր կեանքին:

Դիւրին չէ Օշականը ներկայացնել իբրեւ մարդ եւ գրագէտ. անհկա բացառիկ էր, ինքնատիպ եւ իր նմանը չունի մեր հին եւ նոր գրականութեան մէջ: Կապարի, պղինձի եւ ոսկիի խառնուրդ ձուլածոյ մը, ուր գիւղացին, մարդն ու գրագէտը երջանիկ շաղապատումով զիրար կը լրացնէին: Դժուար էր իր կապարը կշռել, պղինձը ծակել, սակայն հեշտանք էր իր ոսկիի արձակած փայլքին նայիլ: Իբրեւ նրբատաղանդ գործաւոր իր ներքին արժէքներուն, ան գիտցաւ զանոնք յղկել եւ աճեցնել, արձակել տալու անոնց աղամանդեայ

շողքը եղերական գեղեցկութեամբ: Հպարտ էր իր տաղանդին սաղաւարտովը, սակայն համեստ ու քաղցր:

Օշական այն մարդերէն էր, որ երբ գրիչը ձեռք առնէր՝ կը մոռնար թէ ասկէ աւելի սրբազան պարտք կրնար կենալ իր ուսերուն: Այդ խղճմտանքին մէջ ան ազատագրել գիտցաւ իր զգայնութիւնները, երագներն ու վիշտերը, բայց մանաւանդ փառասիրութիւնները՝ պատահական, արտաքին վիճակներէ, անոնց հազցնելով իր հարուստ մտքին պատմութեանը: Ինչ որ ելած է իր գրչէն՝ հոգեկան հարուստ, խոր, տարօրէն լեցուն տազնապի մը արտայայտութիւնն է: Անիկա տարիներով լուռ մենակեացը եղաւ, առանց իր անունը հրապարակի վրայ թարմ ծախելու վարկպարագի տազնապէն եւ գրական նանրամտութենէն: Յիսուն տարիներ շարունակ չթողուց գրիչը իր ձեռքէն, հակառակ շատ անգամ իրեն վիճակուած դժնդակ պայմաններուն: Գրեց ու ստեղծեց, թելադրանքին տակ իր անդրանիկ հոգեկանութեան եւ հանգանակներուն, գատուելով զինքը կանխող եւ յաջորդող սերունդներու ըմբռնողութենէն: Գրելու, ստեղծելու իր սհաւոր թափը, մոլեռանդութիւնը, հերետիկոսութիւնը յիսուն տարիներ շարունակ պարտադրելը, խնամելը, անոր հետ ամենօրեայ մտերմութեամբ ապրիլը, այլապէս ողբերգութիւն մը իր կեանքին:

Անիկա բնաւ չմիացաւ խմբագրողներու բանակին: Եղաւ միշտ մտքով հզօր եւ խառնուածքով պարկեշտ, եւ յաջողեցաւ զսպել աճապարոտ փառասիրութիւնը, ունայնամտութիւնը բոլոր աժան կերպով փայլիլ ձգտողներուն: Խմբագրութիւն, յօդուած՝ պարտադրուած կաղապար մըն է գրեթէ բոլոր մեր գրողներուն համար, շատերու ասպարէզին արշալոյսն ու վերջալոյսը: Մեր գրագէտներէն շատեր տառապած են արուեստի տազնապով եւ ենթակայ են միւս շարժուն բանակին: Ի վերջոյ պէտք է զիտնալ թէ գրագիտութիւնը ամբոխին է, արուեստը՝ անհատին: Այս երկու ըմբռնումները գրեթէ ներհակ յղացքներ են: Առաջինը ինքզինքը ուրիշներու վրայ բաշխելու, ուրիշները նմանցնելու հետնակ աշխատանք է: Երկրորդը ուրիշներէն զատուելու, ուրիշները նուաճելու հսկայ երկունք

մը: Օջական մտաւորական մըն էր, այսինքն մէկը, որ կը սիրէր աշխատիլ ընկերութենէն անկախ, հանրային կեանքէն հեռու, ընկերային շարժումներուն անտարբեր, ղեկավարելու տենչէն անմասն: Որ իր իմացական ծաղկումին մէջ կ'աշխատի ղնել ցեղին մտաւորական կարողութեանց բոլոր կարելիութիւնները: Իր այս ճիգին մէջ, ան առաջ է իր ժամանակէն, իր ժողովուրդէն, ինչպէս նաեւ բարոյական եւ ընկերային հաստատուն թումբերէն:

Իմ երեւակայութեանս մէջ, ան կը մօտենայ Պարսիկ մեծ քանաստեղծ Ֆիրտուսիի, իր նկարագրով, այլամերժութեամբ, հպարտութեամբ ու հանճարով: Նման անոր՝ ոչինչէն սկսած եւ մինչեւ բարձունքները հասած: Միշտ մախանքի եւ հալածանքի ենթակայ, մեծութիւններու վիճակուած ճակատագրով: Մէկը որ երիցս մահապարտ ըլլալէ յետոյ ազատեց իր գլուխը, զայն ձերմակ մագերու փուշէ պսակի մը վերածելէ վերջ:

Երկուքն ալ, Ֆիրտուսի եւ Օջական, կուգային գիւղէն, լեցուն՝ հողին շունչովը, այսինքն իրենց ժողովուրդի խորունկ ձայներովը: Հողը հոգեղէն հօգոր կառոյցն է ներքին մարդուն, որ գիտէ աճեցնել, բեղմնաւորել ու մարմնացնել հոգին, մայրագորով եւ աննահանջ:

Հակառակ իր գիւղացիի չարքաշութեան, երկաթեայ կամքին, տրտում էր Օջական: Ան իր սրտին մէջ ունէր պարապ մը, գոր ոչինչ կրնար լեցնել: Տրտմութիւնը, որ իր խորհրդանիշ շղարշներովը մեր կեանքին մանրաթելը կը կազմէ, ըստ ինքեան արժէք մը չէ, սակայն բոլոր անոնք՝ որոնք այս աշխարհի վրայ գիտակից եւ խորունկ կեանք մը կ'ապրին, ունին այդ տրտմութիւնը: Ո՞վ չի գիտեր թէ կեանքի հիմնայատակը ցաւ է, թէ գերագոյն նկատուած հաճոյքներն իսկ, վերջին գումարի մը մէջ, անոր պիտի վերածուին: Սուր, ծանր, մութ եւ խուլ տառապանքը բոլոր այն բաներուն պէս, որոնք մեզի հաշիւ չեն տար, բայց կը պարտադրեն զիրենք մեզի: Տառապանքը, որ կը ծնի մեր աշխատանքէն, հաճոյքներէն, կ'ընկերանայ մեր առաքինութիւններուն, շուքի մը պէս ետեւն է մեր սէրերուն եւ բարեկամութիւններուն: Կը սլաքէ մեր մարմինը, կ'արիւնէ հոգին հոն՝

ուր չէինք սպասեր իրեն: Միայն ծանծաղամիտներ չեն զգար անոր սեղմ ու ծանր օղակները, որոնք օրերուն հետ կուգան սեղմելու մեր հոգին: Վիշտը իր ուրոյն աղբիւրները ունի, զգայուն հոգին՝ որ իրերն ու երեւոյթները իրենց բացարձակին, իտէալին կը տանի, որ իր մէջ կը կրէ աշխարհ մը շատ աւելի մեծ ու պայծառ, եւ որ կը տառապի յաճախ իր ունեցածին շատութեանը համար, իր մեծութեան տրտմութիւնը ունի: Մարդիկ՝ որոնց վիշտը արդիւնք չէ կեանքէն պատճառուած անբախտութիւններու կամ ներքին բերումներու. որոնք տրտում են ոչ թէ երկրին երեսը ծածկող մութին համար, այլ Աստուծոյ դէմքը սքօղող մշուշէն:

Տրտում է արուեստագէտը: Կեանքին նայող իր հոգին առանց տառապանքի չէ որ ետ կուգայ: Մեր շուրջը անորոշուած քառուէն արուեստագէտը կը ճգնի վերբերել երազը մարդուն՝ որ կը յապաղի լերան ետին, յոյսը սիրտերուն՝ որ թռչունի թելով կը հեռանայ, ու վառ յիշատակը քիչ քիչ ցամքող կեանքին: Տրտում է արուեստագէտը իր այս նոր աշխարհաշինութեան համար եւ տրտում՝ իր նորակերտ աշխարհին մէջ:

Լուռ մարդ մըն էր Օշական, այսինքն մէկը՝ որուն մտածումներն ու զգացումները գերազանց էին խօսքերէն: Մեծ արուեստագէտները չեն պարպեր ինքզինքին խօսակցութիւններով, որովհետեւ եթէ խօսիլը ցանել է, մտիկ ընելը քաղել է: Օշական խոյս կուտար ամէն բանէ որ աղմուկ էր, հռետորութիւն եւ բարբանջանք: Իր լուրթեանը մէջ ուժ մը կար սակայն որ սպառնալիքի մը նման կը կախուէր շատագրոյցներու գլխուն: Բոլոր մեծ ու գեղեցիկ մտածումները կը ծնին ու կը դարբնուին լուրթեան մէջ: Մարդիկ իրապէս կապրին երբ լուռ են:

*«Կը զարմանաս»* կըսէր յաճախ ինծի, *«որ քեզի եկողներուն հետ կրնաս այսքան երկար եւ ախորժակով խօսիլ: Ինծի պէս յիմար գիւղացի, ուրկէ՞ տրված ես մարդոց հետ յարաբերելու եւ պատշաճելու եւ անոնց մտածումներուն համաձայն խօսելու արուեստը»*: Կը տաղտկանար երբ մարդիկ իր շուրջը

շաղակրատէին, եւ ասիկա ականջներու յոգնութիւն մը չէր միայն, այլ մտքի ձանձրոյթ:

Օշական հեռու պահած է ինքզինքը միշտ առաջնորդելու դեր ստանձնող հին եւ նոր սերունդի ներկայացուցիչներէն, երբ անոնք հանրային գործիչի եւ հրապարակագրի գրաւիչ պատմուճաններով կը սիրէին սոնքալ: Թոյլ չէ տուած ինքզինքին բնաւ որ իր անունը լրագրական սիւնակներէն վազէ, կամ հասարակական հարցերու յաճախ ունայն վերլուծումներով սպառի: Ունէր հանրային հետաքրքրութիւններ, բայց ոչ մէկ հոսանքի կը պատկանէր: Մեր պապերը աւելի իմաստուն էին, կըսէր յաճախ: Անոնք ալ ունէին անշուշտ եղերախոյս իրենց եսը, զիրար կործանելու մոլուցքը, դարաւոր վերքը մեր պատմութեան, սակայն խիճերով պատ հիւսելու չափ միամիտ չէին: Մեր երագատեսի միամտութիւնը միշտ իրողութիւններէն դուրս գործեց, բախտախաղի դնելու աստիճան մեր գոյութիւնը: Մենք արի արանց զինուորները հանդիսացանք մեր աղէտին, անարգասիք յանդգնութեամբ հրաւիրելով մահը: Խոր հիացում ունէր մեր ժողովուրդի ողջմտութեան վրայ, եթէ օտար հովեր չգային զայն այլայլելու: *«Ողջմտութիւնը ժողովուրդի միտքն է»,* կըսէր, *«եթէ մեզի պակասած է յաճախ իմաստութիւնը, բայց արթուն եղած է մեր մէջ ողջմտութիւնը, մարդուն ամենէն չքնաղ առաքինութիւններէն մին, բնագոյի, բանականութեան եւ փորձառութեան համադրումներէն բաղադրուած: Պարտաւոր էինք նախազգայ աղէտը որ կը նիւթուէր, մեր ժողովուրդին գոյութիւնն իսկ սպառսպուռ ջնջելու չափ ընդարձակ»:* Միւս կողմէն սակայն, գուժկան մունետիկ մը չէր եւ խոր համակարանք ունէր իր ժողովուրդի առաքինութիւններուն եւ սրբութիւններուն նկատմամբ: Օշական գիւղացի էր. անոր համար հողը, հայրենիքը, ժողովուրդը ուրիշ զգացում եւ տարողութիւն ունէին: Հայրենասիրութիւն մը, որ ողբով ու ռումանթիզմով չուռիւր, այլ կը մնայ իբրեւ անսպառ եւ քաղցրագին լոյսը իր հոգիին, մեր աւերներուն, մութերուն եւ փառքերուն վրայ առկախ: Իրեն համար հայրենիքը հող էր, իբրեւ յղացք ու զգայութիւն, իբրեւ ցեղային ուժ, ստացուածք եւ ապահովութ-

ին, սուրբ գերեզման մեր հայրերուն, օրրան սերունդներուն, հնձան մշակոյթին, առանց որոնց կարելի չէր դիմանալ, ապա՝ իբրեւ կորսուած երազ եւ նիւթ տարփողանքի:

Միւս կողմէն, գրականութիւնը հանրային երեւոյթ կը նկատէր եւ գրագէտը հանրութեան կը ծառայէր իր ճամբով: Չէր ուզէր ընդունիլ այն տեսակէտը, թէ գրականութիւնը իբրեւ հանրային երեւոյթ հանրութեան պէտք էր հասցեագրուէր, գոհացում տալով օրուան հարցերուն եւ մարդոց ախորժակներուն: Օշական եւս Անտրէ Ժիտին հետ կրնար ըսել. *«Ես կը գրեմ անոնց համար որ պիտի գան»*: Որովհետեւ արուեստի գործը ուղղուած չէ ներկային, այլ ապագային: Գրագէտը իր շրջանի արտադրութիւնը չէ միայն, այլ ժամանակակից է այն դարաշրջանին որ ի լինելութեան է: Գործ մը, ըստ իրեն, կատարեալին կը մօտենար երբ ներկայացնէր իր ժամանակի հարագատ պատկերը եւ դառնար մարգարէութիւն մը ապագային համար: Որքա՛ն իրաւունք ունէր Օսկար Ուայլտ երբ կ'ըսէր. *«Գրագէտը ապագան է: Թագաւորը իր ժամանակին միայն կ'իշխէ, իսկ արուեստագէտը՝ բոլոր ժամանակներուն»*:

Չեմ ուզէր կանգ առնել իր անձնաւորութեան այն մանրամասնութիւններուն առջեւ, որոնցմէ աւելի թերեւս մեզմէ շատեր պիտի ուզէին ցոյց տալ իբր տարր մարդերու կեանքին: Չմոռնանք, միւս կողմէն, թէ մարդեր տալը կը նշանակէ հոգեբանական կարգ մը երեսներու եւ անոնցմով պայմանաւոր գաղափարներու համադրութիւնը ընել եւ կամ առնուազն զանոնք հոգեգրել գէթ իրենց կեանքի մեծ փուլերուն վրայ: Ֆրոյտեան վերլուծումով մը գուցէ կարելի ըլլար մասամբ մօտենալ անոր խառնուածքի հէնքին: Կիրք, արիւն, հոգեկան վիճակներ, սեռային սլաքին տակ իր գրականութեան՝ նուագին ստեղնաշարը կը կազմեն: Իր իմացական կառոյցը, զգացական ու բնագոյային լծակներէ զսպանակուած, ենթագիտակցական էր, ուր սեռայինը կ'առաջնորդէր զինքը յաճախ առանց իր կամքին:

Շատերուն անձանօթ է թերեւս որ Օշական առանց երկրորդական վարժարան մը իսկ աւարտած ըլլալու, միս

մինակ քալած է ձինսապատ, ամայի այն կատարներուն, որոնք իր կողմէ մշակուած հայ գրականութիւնն ու հայ քննադատութիւնը կը բնորոշեն: Նոր չէ որ ամայքները քիչ այցելու կընդունին եւ գաղտնիք չէ թէ Օշականի ընթերցողները կերպով մը հազուագիւտ ուխտաւորներ են այն հրաշալի կառոյցին, որ իրմով կը մնայ շինուած մեր գրականութեան անդաստանին մէջ: Օշականի համար բան մը ըլլալէ աւելի՝ բան մը ընել կարենալու իղձը ապահովաբար ամենէն մաքուր ճիգը եղաւ իր խղճին: Այս է պատճառ անշուշտ որ ան, հակառակ իր կենսունակ տրամադրութեանց, կեանքի սովորական հրապոյրներէն միշտ խուսափող մը եղաւ, այդ բոլորին վերջնական հաշուեկշիռը փորձելով թուղթին վրայ: Եւ ինչ որ իր նկարագրի ամենէն յատկանշական գիծը կը ցոլացնէ, այն է թէ սկիզբէն, այսինքն հմտութեան եւ արուեստի մարդը իր մէջ կազմուելու առաջին օրերէն, իր հակումները կուղղուին դէպի մեր ժողովորդի բարձրագոյն արժէքներու հետախուզութիւնը: Օշական մինակ է քալեր իր փառքին եւ ինքն է մեծ ճարտարապետը իր գործին: Զօրաւոր էր իր մէջ ինքզինքը իրագործելու կամքը, եւ գործին նուիրուելու բարբարոս եւ այլամերժ պատրանքը: Ասիկա կերպով մը ճակատագիրը եղած է բոլոր «մինակներուն»: Մեծ գործերը ի վերջոյ մենութեան մէջ կը ծնին: Կեանքէն բխող եւ իր գործը ընդգրկող այս առանձնապաշտութիւնը մէկ կողմէն պաշտպանած է անոր գործը, միւս կողմէն բոլոր զինքը կարդացողները լեցուցած է վայրագ մտապատկերներով իր մասին: Գիտեմ տասնէն աւելի մարդեր, որոնք հակառակ իրենց փափաքին՝ իրեն այցելութեան մը նեղութիւնը կուզէին խնայել, խորհելով բիրտ եւ դաժան մարդու մը հետ շփման մը անտեղութենէն: Սակայն մեծ կըլլար նման խորհողներու զարմանքը, երբ կարծր եւ անհանդուրժելի նկատուած Օշականի փոխարէն, որ Արամագոյի մը կատարութեամբ միշտ հալածեց յաւակնութեամբ եւ բռնութեամբ «Տիրոջ այգին» մտնել ուզողները, կը դիմաւորուէին մանուկի մը չափ պարզ եւ հին բարեկամի մը նման:

Օշականի մէջ, ի հեճուկս իր արտաքին անտաշ պարզութեան, մեծ քանաստեղծ մը կ'ապրէր: Իր գրական հունձքին առաջին պտուղները բաբախուն վկայութիւններ են այդ ուղղութեամբ: Ունէր ուժեղ եւ ճառագայթուն երեւակայութիւն եւ իրերը դիմաւորելու քաղցր յօժարամտութիւն, որ միակ գաղտնիքն է ստեղծագործութեան: Մարդը որ գիտէր զգալ վայրագ թշուառութիւնը բոլոր անոնց՝ որոնք հաճոյքի համար կ'ապրէին լոկ, եւ արտակարգ ու պանդոյր խեղճութիւնը հարուստներուն: Խոնարհներու եւ անժառանգներու նկատմամբ իր սէրը, զոր այնքան սրտառուչ կերպով տուաւ, կը բխէր այս զգացումէն:

Օշականի միտքն ու հոգին, հակառակ իրենց պարզութեան, հարուստ էին իշխանի մը գանձարանին չափ: Աժան գովասանք մը ըրած չենք ըլլար իրեն երբ ըսենք թէ Եղիշէ Դուրեանէն վերջ ան մեր մեծագոյն հմուտը եղաւ: Կը ճանչնար պատմութիւնը ոչ իբրեւ թիւ ու անուն, այլ իբրեւ ներքին այն իրականութիւնը՝ որուն մտատեսութիւնը ունէր:

Երկրորդ Համաշխարհային Պատերազմի նախօրեակին, Օշական Երուսաղէմի Ժառանգաւորաց սրահին մէջ խօսեցաւ սկսող աղէտէն եւ անոր ճակատագրէն: *«Մածինօն», ըսաւ, «զոր Եւրոպայի պաշտպանութեան բերդը կը նկատեն Դաշնակիցները, ոչինչի պիտի ծառայէ: Գերմանները յիմար չեն մէկ ու կէս միլիոն զինուոր զոհելու անոր գրաւումին համար: Անոնք Պելճիքայի հարաւէն պիտի բանան գիծը Ֆրանսա մտնելու: Անգլիա երկար ատեն պիտի դիմանայ, անորոշ ճակատագրով: Իսկ եթէ Հիթլեր գերագոյն յիմարութիւնը գործէ Ռուսիոյ վրայ յարձակելու, յաղթանակը անկասկած Դաշնակիցներուն է»:*

Արտակարգ լուսամատութեամբ կշռեց թափուող արեան քանակը՝ պարտուողին ու յաղթողին համահաւասար: Գերմանիա չի կրնար շահիլ, պէտք չէ որ շահի պատերազմը. ըստ իրեն, ասիկա պիտի նշանակէր բիրտ ուժին յաղթանակը մտքին վրայ: Այս խօսքերը գրական հմայք մը չէր որ կը լուսաւորէին, այլ կուգային յայտնատեսութենէ մը, մշուշէն անդին տեսնել կարենալու կարողութենէն, զոր միշտ ունեցեր էր մտքի այս կախարդը:

Գիտեր նոյնպէս մեր Եկեղեցին, իբրեւ սրբազան մասը մեր պատմութեան ոչ իբրեւ գաւազանագիրք մը, այլ իբրեւ կրկէս մը իրարմէ հօօր առաքինութեանց, որոնցմով գօտեպինդ՝ մեր հայրապետները անցեր են արիւնի եւ կրակի մէջէն: Կը ճանչնար մեր հին եւ նոր մատենագրութիւնը իր խորութեան եւ գեղեցկութեան մէջ, եւ ոչ ոք իրեն չափ կրնար հաղորդ ընել մեզ անոնց հոգեկան, ցեղային եւ մանաւանդ գեղագիտական արժէքներուն: Ծանօթ էր նոյնպէս օտար մատենագրութեան, իր լայն եւ խոր երեսներով: Տեղեակ էր գիտական, հոգեբանական եւ նոյնիսկ բժշկական ուսումներու որոշ եւ ընդարձակ գօտիներուն եւ գիտեր ընդգրկել այս բոլորը, մասնագիտական ըսուելու չափ մանրամասն ճշդութեամբ:

Ոչ ոք պիտի ուզեր համամիտ չըլլալ ինծի՝ իր հազարաւոր աշակերտներէն եւ սակայն թիւով քիչ բարեկամներէն, եթէ ըսեմ թէ Օշական մեր ամենէն պարզ, ազնիւ եւ օգտակար ըլլալու զգացումով տողորուած անձն էր: Այս վերադիրները եթէ ուրիշներու պարագային բացուելու պետք չունին, Օշականի անունին առջեւ անհրաժեշտ բացատրութեան կը կարօտին: Օշական, որուն գրականութեան մէջ գոյութիւն չունին կարծես ածական ու մակբայ, որ ամէն բանէ աւելի պահանջեց, ինչպէս կեանքի՝ այնպէս ալ գրականութեան մէջ, պարզութիւն եւ իրաւութիւն, իմ հանդիպած ամենապարզ մարդերէն էր: Պարզ էր իր ընկերային յարաբերութիւններուն մէջ, պարզ՝ իր աշակերտներուն եւ բարեկամներուն նկատմամբ: Միրտն էր կեդրոնը իր էութեան: Հակառակ իր մեծ մտաւորական մը ըլլալուն, պարզ մարդոց ընկերակցութիւնն ու մտերմութիւնը կը նախընտրէր: Միամիտ չէր, այլ բարի եւ անոխակալ: Գիտեր չարը իր բովանդակ զագրելիութեանը մէջ, բայց նոյն ատեն չէր ուզեր հաւատալ կարծես չարիքի սկզբունքին, հակառակ այն իրողութեան որ կը ճանչնար Թուրքը:

Ազնիւ էր Օշական, մանուկի մը պէս բացսիրտ: Ռընանի մը ուղեղը ունէր, բայց մանուկի մը հոգին: Գիտեր աշխարհի չարն ու բարին, սրբազան մատենաններու խոստումը, բոլոր ժամանակներու գիտուններուն վճիռը, բայց խորապէս կը սիրէր

գեղեցկությունը մանուկի հոգիին եւ կազդուէր հաւատքով ծունկի եկող տէրտէրի աղօթքէն: Թերեւս ասկէ կուգայ այն տարօրինակ վիճակը, որուն նմանը մենք յաճախ կը հանդիպինք Բաֆֆիի եւ Ահարոնեանի մօտ: Ատիկա առհաւական ազնուութիւնն է գուցէ իր ժողովուրդին եւ կտակը իր արեան, որուն գինովն է որ մենք մեր բոլոր գերութեան ընթացքին պահեր ենք մեր հոգեկան միութիւնը, զոր մեր ժողովուրդը ունէր կանխող դարերուն:

Իր գործին մէջ խորունկ անդունդներ, հոգեբանական անմատոյց բարձունքներ, ծանրածանր մեղքերու ճահիճ, ինչպէս ամենէն զազիր ոճրագործներու ջուլիր, անբաւական կուգան պղտորելու այս քառասյնութիւնը որ զգալի է Տասթոյովսկիի ալ գործին մէջ, որ Օշականի գործին նման թէեւ թանձր, աղջամուղջի մէջ խորասոյգ, չի դադրիր քրիստոնէական սիրոյ բոցավառ աշխարհ մը ըլլալէ: Ռուսին միստիքը եւ Հայուն ազնուութիւնը: Օշականի զգայնութիւնը նուազ ներգործական է, սակայն շղարշային ծփանքով կը փռուի իրերուն վրայ եւ մարդոց մէջ կը դնէ անօրինակ խռովք եւ քաղցրութիւն: Իր թափանցումին սրութիւնը կենդանի մարդերն ու անցեալ կեանքները գիտէ ճեղքել եւ անցնիլ:

Հակառակ իր հմտութեան եւ լայն հորիզոնումին, Օշականի միտքը մետաքս թաշկինակի մը նման քաղցր էր ու ծփուն, եւ մանուկի մը ափը պիտի բաւեր զայն ամբողջապէս իր մէջ ունենալու: Շատ քիչ բարեկամներ ունէր, վասնզի քիչերուն կրնար ընտելանալ: Սակայն իր անվերապահ բարեկամութիւնը շահողներուն նկատմամբ պարզ էր ու սրտաբաց՝ դպրոցական ընկերոջ մը նման: Կը հաւատար թէ մարդկային որեւէ յարաբերութիւն կատարեալ չէ, եթէ չէ պսակուած բարեկամութեամբ:

Ընկերութեան մէջ երբ մտայնութիւնն ու մթնոլորտը չխօսէին իրեն, ժամերով կրնար լուռ մնալ: Իսկ երբ շրջուէին պայմանները, այն աստէն դիւրահաղորդ կը դառնար: Ժուժկալ էր, պերճանքէ փախչող: Պարզ էր իր նիստ ու կացին ու վարմունքին մէջ, իր կեանքէն աքսորելով բոլոր արուեստական ունակութիւնները: Կրնար մուճակներով եւ գիշերազգեստով

հիւր ընդունիլ, «ծօ»ով խօսիլ, «կնիկ» ըսել նազելաշուք եւ սնգուրուած տիկնոջ մը: **Խոնարհները**ի հեղինակը խոնարհ ու զարտուղի էր իր բարքերուն, իր շարժումներուն, իր նիստ ու կացին, խօսքին ու վերաբերմունքին մէջ: Պարզութեան մէջ բարդ ու բարդութեան մէջ պարզ: Բիրտ էր եւ ինքնիշխան, հաւասար ընտանութեամբ եւ ազատութեամբ կրնար խօսիլ ինչպէս սովորական մարդերու՝ այնպէս ալ դրամատերերու եւ պատրիարքներու հետ:

Իր նախատարիներու աղքատութեան սարսափը եւ ապագայի անորոշութիւնը կը քալէին իր հետ, ստիպելու զինքը որ ըլլար վերջին ծայր խնայասէր: Ձեռքիս տակ ունիմ իր երկու նամակները, Թորգոմ Սրբազանի գրուած: Առաջինին մէջ կը խնդրէ որ Սրբազանը ազատէ զինքը հացի հարցէն, որպէսզի կարելիութիւն տրուէր իրեն իրագործելու գրական իր երազները: Այդ օրերուն, ան ունէր իր մտքին մէջ իրագործելի համապատկերը իր ժողովուրդի շնորհներուն, ինչպէս մտատեսութիւնը՝ այդ շնորհներով իրագործելի բարիքներուն, կարելի այս պայմաններու ստեղծումով շտկելու իր մէջքը, հայ գրագէտի ու վարժապետի գերագոյն կարիքը, կրել կարենալու այն սրբազան բեռը, որ մեր ժողովուրդին էր: Երկրորդ նամակով Սրբազանին միջնորդութիւնը կը խնդրէր մեկենաս մը ճարելու **Ստեփանոս Միւնեցի** քնարախաղին:

Ինքը, որ այնքան խոր գիտէր թափանցել իր հերոսներու հոգիին, շատ անգամ գուրկ էր առօրեայ կեանքին մէջ զինքը շրջապատող մարդերը հասկնալէ: Իր շուրջի մարդոց առհասարակ կը վստահէր, շարունակելով մնալ վերապահ նոյն ատեն: Այս երկուութիւնը, աւելի ճիշդ՝ ճշմարտագանցութիւնը, հաւատք ըլլալէ աւելի վիճակ էր իր մէջ: Պէտք չէ մոռնալ որ գիւղացին որքան պարզ եւ հաւատաւոր, նոյնքան վեհերոտ եւ անվրճոական է ընկերային յարաբերութիւններուն մէջ, անոնց յարափոփոխ ու մթին ալիքներուն վրայ դիւրութեամբ նաւել չկրնալուն համար գուցէ:

## Գ.

Ճակատագիր է որ տժգունին կտաները, խորշումին մարմարները, աղօտին էջերը: Այս օրէնքը քիչ բացառութեամբ տրորած է իր անողոք խստութեան ներքեւ ինչ որ իբրեւ քաղաքակրթութեան նշանակ, ստեպ շքեղ իրագործում, հասած է մեզի: Անկէ զերծ ոչ մէկ իրացում այն անորակելի արժէքներէն՝ որոնցմով կազմուած է հայ գրականութիւնն ու մշակոյթը: Միւս կողմէ սակայն, ժամանակը կը դալկացնէ ու կը տրորէ կեղծը, կը մոխրացնէ անիրականը միայն, որոնք չեն դիմանար ժամանակի ալիքներուն, նման ծովափին շինուած աւազէ աշտարակներուն:

Մարդեր կան իմաստի ինչպէս գործունէութեան բոլոր մարզերէն՝ որոնց ստեղծած հոսանքները կ'անցնին զիրենք: Ուրիշներ, որոնց տրտում փառքը պատանքի պէս կը պարուրէ անոնց դիակները: Օշական առաջին կարգին կը պատկանի, իբրեւ մին գրչի մեր մշակներէն, որուն շատ բան կը պարտի արեւմտահայ գրականութիւնը: Մատղաշ երիտասարդութենէն մինչեւ իր մահը, անօրինակ որքան խռովայոյզ պայմաններու տակ անդադար գրիչ շարժեց, առանց պատրանաթափ ըլլալու պայմաններու ճնշումէն՝ տալով իրմէ վերջ եկող երկու սերունդներուն իմացական ու զգացական հետաքրքրութեանց կարելի հանգանակները:

Նման բացառիկ ընտրեալներուն, Օշական ճակատագրուած էր չպատկանելու իր ժամանակին, ըլլալու համար մարդը բոլոր ժամանակներու: Յաճախ բացառիկ խառնուածք մը, ստեպ ներքին զարտուղութիւն մը ինքզինքը ըլլալու, պատճառներ են այս հեքիաթունակ փառքին: Ոմանք զինքը կը նկատեն կամուրջ մը ընդմէջ երկու սերունդներու: Օշական կը պատկանի ոչ մէկ սերունդի: Անիկա երեւոյթ մըն է մեր գրականութեան մէջ, տաղանդ մը՝ որ իր ներաշխարհով կը սնանէր, անցնելու համար իրմէն եւ կեանքէն անդին՝ անոնց մեծ նուաճումներուն:

Սովորութիւն է գրողներու կազմաւորման մէջ որոշ ազդակներ ճարել կամ ենթադրել ու վերլուծել զանոնք: Այս պարագան չի լուծեր սակայն տաղանդներու տեսակարար տարողութիւնը: Օշական զինք սնուցանող բոլոր շրջաններու եւ ազդեցութիւններու հոսանքն ի վեր թիավարող մը եղած է, բաժնելով այսլերպ բոլոր մեծ ու հարագատ գրողներու ճակատագիրը:

Իր փառասիրութիւնը եղած է ծանր ու դժնդակ, ուզելով պատկանիլ արեւմտեան գրականութեան ամենէն իրաւ եւ խորունկ ախորժակներուն, իւրացնելով անոր մշակոյթի ծանր տիպիփիւնը: **Մթանտալ, Թէն, Ռընան, Սոքասան, Պուրժէ, Մարսէլ Փրուստ, Տասթոյովսկի, Ճէյմս Ճոյս**, պարզ յիշատակութիւններ չեն Օշականի պարագային, այլ մտապատկերներ ու երազներ, որոնց յաճախանքին մէջ ապրեցաւ ան: **Ծակ Պտուկը** Տասթոյովսկիի վէպին սահմանները կը քերէ թէ՛ իբր կառուցում եւ թէ՛ իբր զարգացում: **Մնացորդացը**, իր ամենէն գիսախոյ գործը, յուզումի, հեշտագին ապրումներու աղբիւրը հեղինակին եւ բոլոր անոնց համար՝ որոնք առանց նախապաշարումի կը կարդան զայն, կը կերպարանէ փրուստեան ճարտարապետութիւն մը: Օշական նորոգած է իր գտած կադապարները եւ հոս է ինչպէս իր ինքնատպութիւնը՝ այնպէս ալ իր պատուհասը: Իրազեկ էր իր կարողութիւններուն, հակառակ այն վարկածին թէ արուեստագետները կիսով միայն գիտակից են իրենց ուժին երբ կը ստեղծագործեն: Օշական կ'ապրէր իր տիպարներով, որոնք յաճախ զուրկ են կարծես կամքէ, հակապատկերը Պալգաքի, բայց մօտ Տասթոյովսկիի: Հոգեբան էր աւելի քան մտածող եւ իր այս կարողութիւնը կ'երեւի ու կը խորանայ իր հերոսներուն մէջ: Ան չէր գններ իրերն ու իրողութիւնները քննութեան սիրոյն, ոչ ալ իբրեւ արդիւնք յառաջագոյն գաղափարի. այս է պատճառ որ տեսութեան մը չի հնազանդիր եւ կը մնայ գահավեժ իրականութիւններու եւ գաղափարի միջեւ: Չի փորձեր ազդել մեր մտքին, այլ լոյսին բերել մութ կէտերը, յստակելու ծածկուած ճշմարտութիւնները, որոնք կը խլրտին իր մտքին մէջ եւ որոնք ամենէն խորունկ-

ներն են մեր գիտակցութեան: Օշականի **Խոնարհները**, իրենց պարզ բայց եղեռական գեղեցկութեամբ ու պատրանքներովը, **Երբ Պատանի Ենը** իրենց սարսուռներովն ու երագներովը կը բանան նոր վարագոյրը Հայ Գիւղին, հրեղէն գծագրութեամբ եւ ինքնատիպ ոճով: **Ծակ Պտուկը**՝ սիրոյ խորունկ բաբախումներով եւ հերոսական տիպարներու գծագրութեամբ: **Մնացորդացը** գիւղական գերդաստաններու փոթորիկ մըն է, ժառանգութեան պահպանման ախորժակներով, ինչպէս նաեւ սիրոյ եւ ոճի տեղեռական հանդէսով:

Իբր թատերագիր ունի **Նոր Պսակը**, **Ստեփանոս Միւնեցի**, **Երբ Մեռնիլ Գիտենք**, **Աքիլէսի Կրունկին Տակ** եւ ուրիշներ, առնուած առօրեայ կեանքէն եւ մեր անցեալէն, որոնք մնայուն արժէքներ պիտի մնան մեր բեմին:

Մեր գրականութիւնը տկար ընծայող պատճառներէն մէկն ալ իր որոշ չափով իմաստէ, աւելի յաւակնոտ բառով մը՝ իմաստասիրութենէ զուրկ ըլլալն է: Մեզի պակասած է ամրապէս կազմակերպուած գաղափարներու սարուածը, որ իբր խարիսխ ու հիմք պաշտպանէր ստեղծումները: Մեր գրագէտները չեն տառապած գաղափարներու տազնապովը, ուր միտքը զանցառելի տարր մը կը մնայ: Պզտիկցուցած իրենց թափանցումին սփիւռը եւ կոկոզած՝ զգայնութեան աննշան խոռոչին մէջ, կեանքը ձեւած են իրենց ուղեղին նիհար ուպնեակովը միայն: Արուեստի գործերը պէտք է ազատագրուին հասարակ տեղիքէն: Լեռնիտ Անտրիէվ արու յանդգնութեամբ մը կը ջնջէ իր գրածներէն երկրորդական տարրերուն մեծ մասը ու կը հասնի հզօր յուզականութեան մը՝ որուն լարերը իրարմէ կը ստանան իրենց ուժգին խոռվքը: Կառուցումի մը պարագային, նոր միտք մը պէտք է ոգեւորէ մարդկային գործունէութեան բոլոր ձեւերը: Մարսէլ Փրուստ կը յաջողի երկրորդական իրապաշտութիւնը փոխարինել նոր ու անակնկալ ճառագայթումով մը, ուր կեանքը գործողութիւն կը գտնէ ուրիշ խաւերու ներքեւ: Տասթոյովսկի եւս ազատ է երկրորդականին բռնութենէն: Գործողութիւն եւ իմաստ երկու երեսներն են միեւնոյն իրողութեան, զոր կեանք կ'անուանենք: Գրականութիւնը գիրքերու անհատական պատ-

մութին մը ըլլալէ աւելի, անոնց մարմնատուփինը պարտադրող գաղափարներուն եւ ասոնց ճնշումովը կազմուած պատկերներուն արձանագրութիւնն է: Գիրք մը շատ բաներ ըլլալէ առաջ շեշտ անհատականութիւն մըն է: Կէանքը՝ ամէն բանէ վեր ահա իր վարդապետութիւնը, սակայն ոչ մակերեսէն տրուածը, այլ առնուած իր ներքին, հոգեկան ապրումներովը: Ահա իր խօսքը, պատահօրէն ըսուած, թէ *«ողորմելի բայց ողջ կատու մը հազար անգամ աւելի կ'արժէ քան սատկած առիծ մը»*: Անկցի ուրեմն հռետորութիւնը, շպարը, կեղծիքը, կեցցէ իրականութիւնը, որուն մէջ մարդու հոգին խօսի եւ անով՝ հաւաքականութեան մը սիրտը:

Օշական չէր գրեր ուրիշները զարմացնելու կամ իր գրածներուն աղմուկովը հեշտանալու համար: Սրտառուչ էր իր պարագան. նոյնիսկ այժ ատաւ խորտակուիլ կ'իսուած սրտէն, իր փառասիրութիւններէն ոմանք իրենց լրումին տանելու համար: Սրտի հարուածէն յետոյ, քաջութիւնը չունէր սկսելու **Համապատկերը**: Կիսաւարտ ձգած էր **Մնացորդացը** բժիշկներու թելադրանքով եւ այժմ, նոյն բժիշկներու հրահանգով, կը զգուշանար մտքի ծանր աշխատանքէ: Մահուան մղձաւանջը կը հալածէր զինքը, *«կէս մարդ ես»* կըսէր յաճախ եւ այժերը կը լեցուէին: Անհամեստութիւն թող չնկատուի եթէ ըսեմ թէ իմ թելադրանքովն ու ստիպումներով էր որ ձեռնամուխ եղաւ այս կոթողական գործին: Ամէն անգամ երբ կը լրացնէր հեղինակ մը, սրբազան պարտք մը կատարողի գոհունակութեամբ եւ թեթեւցած սրտով կըսէր. *«Տղայ, կարծեմ թէ իրաւունք ունէիր ըսելու թէ աշխատանքը կը մաքրէ ժամանակի ժանգը մեր ջիղերէն եւ աւելի դանդաղ քայլերով կը տանի մեզ մահուան»*:

Գրելէ առաջ անիկա ունէր ամփոփումի սուղ պահեր՝ որոնք զինքը կը մղէին սեղանին: Անգամ մը մտնելէ վերջ իր նիւթի կաղապարին մէջ, այլեւս ժամերը գոյութիւն չունէին իրեն համար: Մղուած իր մտապատկերներէն, իր կիրքերը ունենալով իրեն գահաւորակ, ան կը զեղուր իրմէ ինչ որ տարիներու մթերումն էր եղած: Հակառակ իր կուտակուած դառնութիւններուն, պահեց մինչեւ իր մահը մտաւորականի յատուկ զգա-

յութեանց թարմութիւնը: Իր ամուր գիւղացիի խմորը իրեն բերաւ դիմանալու ուժէն դուրս՝ չլլանալու, դասալիք չըլլալու բարիքը: Վսեմ շեղումներու մարդը եղաւ իր խառնուածքով, գործով ու զարտուղութիւններով, որ սակայն իրեն յատուկ ներդաշնակութեան հասաւ, ըլլալու համար աններդաշնակ ներդաշնակութիւնը մեր գրականութեան:

Թերեւս շատերուն անծանօթ է թէ Օշական գրչի մէկ յեղումով կը լեցնէր էջերը, առանց վերստին անդրադառնալու եւ սրբագրելու իր գրածը: Գուցէ այդ է պատճառ որ եթէ ոչ կրկնութիւններու գէթ վերյիշումներու կը հանդիպինք իր մօտ յաճախ: Յետոյ, իր գրածները յիշելու դժուարութիւն ունէր, որ յիշողութեան պակասէն աւելի արդիւնք էր իր մտքի տեսական ու արտակարգ յորդումին: Ա. Իսահակեանի եօթանասնամեակին առիթով, խնդրեցինք Օշականէն որ գրէր «վարպետ»ին մասին, մեղմելով անցեալին իր յայտնած մեղադրանքները անոր գործին նկատմամբ: Օշական երկար յօդուած մը գրեց *Միտնի* համար, առանց շատ բան զեղչելու իր տեսակէտներէն: Ստիպուեցանք ի պատիւ յոբելեարին դուրս ձգել իր արտայայտութիւններէն ստուար մաս մը եւ դրականի վերածել բացասական արտայայտութիւններէն ոմանք: *Միտնի* լոյս տեսնելէն վերջ, Օշական չանդրադարձաւ տեղի ունեցած փոփոխութեան: Անդրադարձաւ այն ատեն միայն երբ Պէյրութի յառաջդիմական մամուլը զինքը կեղծաւոր ու անպարկէշտ յայտարարեց, քանի որ տարիներ առաջ հրատարակուած *Փիւնիկ* շաբաթաթերթին մէջ Օշական տարբեր չափանիշերով կշռած էր Իսահակեանի գործը:

Վերոյիշեալ իրողութիւնը հաստատող աւելի կարեւոր պարագայ մը: Շահան Պէրպէրեանի խնդրանքով յաճախ Օշականի կողմէ քնարախաղեր կը գրուէին, Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի տղոց կողմէն ներկայացուելու համար: Զանոնք բեմին յարմարցնելու նպատակով, կը կրճատուէին եւ որոշ փոփոխութիւններու կենթարկուէին: Օշական ներկայ ըլլալէ յետոյ բեմադրութիւններուն, չէր անդրադառնար եղածին:

Օշական իբրեւ վիպագիր՝ խոտոր ճամբաներու մարդն է: Անոր համար վէպը պատմութիւն մը չէ միայն, դէպքերու հետաքրքրական յաջորդականութեամբ, հերոսներու տողանցքով կամ **էնթրիկներու** ճարտարամտութեամբ: Անոր վէպը բուն սերերու եւ կիրքերու բախումը կը բերէ մեզի, արտակարգ աճումով, ապա կործանումը մահուամբ, այսինքն ճակատագրական վախճանումովը դէպքերու բնութեան: Օշականի մօտ մարդերը հետաքրքրական չեն իրենց արտաքին երեսներովը, ուշագրաւ անոնց հոգին է, իրենց յոյզերու ալիքներովը, սիրոյ, կիրքի, ատելութեան հրավառ պահերուն մէջ: Իր տիպարները յաճախ թէ՛ հերոս են եւ թէ ոճրագործ, լոյս ու ցեխ, նման Տասթոյովսկիի կերպարներուն: Անոնց հոգին կը վարուի ճակատագրի ձեռքէն, որուն գործիքներն են լոկ մարմինները:

Իր գրականութիւնը բխում էր եւ ապրում՝ իրագործում ըլլալէ առաջ: Ներշնչումները իր մտապատկերներուն հողին ընդերքէն քանուող շիթեր չէին իր մօտ, այլ յորդագեղ վազքը ջրվեժին: Հակառակ ասոր, գրելու ատեն ան գիտէր հնազանդիլ խիստ եւ անբացատրելիօրէն նուրբ օրէնքներու: Նիցչէի պատկերով կը պարէր շղթաներուն մէջ այն օրէնքներուն, որոնք յաւիտենական եւ անխախտ են եւ գոր մարդ չի կրնար անպատիժ ոտնակոխ ընել: Օշական անոնց սեղմող ծանրութեան ներքեւ կը շարժէր տեսակ մը ներքին խայտանքով, գոր իրեն կառթէր իր խառնուածքը եւ ուրիշ անցաւոր ու փոփոխական պայմաններու հնարաւորութիւնը: Չէր հաւատար իրմէ դուրս գալիք ներշնչումին, այդ վիճակը իր մէջ ենթագիտակցական էր, ուր կը շինուին մտածումներն ու զգացումները, որոնք իրենց խորքով թէեւ քիչ մը անորոշ, բայց իրենց արտայայտութեան կերպին մէջ յստակօրէն յարդարուած տպաւորութիւններու կը վերածուին, որ անոնց գլխաւոր արժէքը կը կազմէ: Ասոր կը նպաստէ աշխատութիւնը, երբ կը կատարուի տենդագին ոգեւորութեամբ, բեղմնաւորելով միտքը եւ յղանալով ծրագիրներ, հետզհետէ իրագործելի, ուր գիտակից խորհրդածութիւնը եւ անգիտակից բնագործ բնականօրէն կը

խառնուիւն իրարու: Ի վերջոյ, «ներշնչումը օրն ի բուն աշխատիլն է»:

Յօրինումի իր գործը սովորական գրագէտներու յատուկ յատակագիծը չունէր: Անիկա ինքզինքին դէմ չէր դնէր, կիրագործէր առանց ինքնիրեն եկածէն անդին անցնելու, բայց առանց կորսնցնելու նոյն ատեն ընդլայնելու պատեհութիւնը, երբ ինքնիրեն կը ներկայանար ան: Այս կերպով կատարուած ընդլայնումները լաւագոյններն են, որովհետեւ իրենց ստեղծման թափին ներքին կշռոյթէն կը թելադրուին:

Օշական իրեն եկած մտածումներէն սովորութիւն չունէր ընտրելու ամենէն մեծերը, կամ մտքին շլացում ու հաճոյք պատճառողը, այլ անոնք՝ որոնք կը ծառայէին հետապնդուած նպատակին: Իր գրելիքը որոշելէն վերջ՝ կորոնէր անոր բերածը միայն, անգթօրէն մերժելով մնացածը, որ իրեն համար սին շահեկանութիւն մը միայն կրնար ներկայացնել: Միւս կողմէ, չէր վախնար ծանրաբեռնումներէ, որոնք սովորական գրողին քով զիրար կը ճգմեն, սակայն իր մօտ յառաջ կը բերեն լայն տպաւորութիւններու միութիւն մը, որոնք կոհակ առ կոհակ կը յառաջանան, առանց խախտելու ծաւալումին օրէնքները եւ պարզութեան հարստութիւնը:

Ումանք կը կարծեն թէ Օշական յաճախ թոյլ կուտայ որ իր մտածումները բախտին ճամբաներէն ընթանան, քանի որ արուեստագետին վրայ գաղափարի ազդեցութեան կը յաջորդէ գաղափարին վրայ արուեստագետին ազդեցութիւնը: Յօրինելը Լատին կարգին հնազանդիլ է: Օշական չունէր այս ճշգրտութիւնը. անիկա կը հնազանդէր ուրիշ կարգի մը: Իր յօրինումը բնական փթթումն է առաջին գաղափարին, հարստացած բոլոր այն էական տարրերով, զորս իրեն կը հայթայթէ նոյնիսկ իրմէն ներշնչուած որոնումին աշխատանքը: Օշականի մօտ կեանքի բխումը այնքան բուռն է եւ հզօր, որ յաճախ գիտէ իրարու ետեւէ շարել ձգտումնաւոր այն շեղումները, որոնք ռումբերու պէս կը պայթին դեռ ձեռքէն դուրս չեկած: Օշականի մէջ տրամաբանութեամբ յօրինուած մասերը շատ են, սակայն եթէ տրամաբանութիւնը արգելք հանդիսանայ իր գնացքին, ան իր ներքին

մտայղացքներուն կը դառնայ: Հոգին, զոր ոչինչ կրնայ կաշկանդել, իրաւունք ունի իր «յիմարտութիւն»ը մեր «իմաստութեան» տեղը դնելու: Ճշմարտութեան օրէնքն է այս. ինչպէս որ յղացումի ճշմարտութիւն կայ՝ եթէ իրերուն վրայ ձեւուած է ան, նոյնպէս ալ յօրինումի ճշմարտութիւն կայ՝ եթէ յղացումի վրայ ձեւուի ան:

Ճիշդ է թէ գրուածք մը այնպէս կը յօրինուի, ինչպէս շինուած են բոլոր բնական կազմութիւնները, մասնիկները, բիւրեղները, տունկերը, գիւղանկարները կամ տիեզերքը ինքնին: Եթէ գրուածքին մէջ ընդգրկումի աւելի լայնութիւն կայ, պատճառը այն է որ միտքը աւելի հարուստ է քան նիւթը: Բայց այդ ըսել չէ թէ յօրինումը հնազանդութիւնը չէ գործնական օրէնքներու: Ի գործ դրուելիք կարողութիւնը հոս գլխաւորաբար երեւակայութիւնը եւ զգացողութիւնը չէ ուրեմն, թէեւ կարելոր ըլլան անոնք, այլ համակեդրոնացած դատումը, ողջմտութիւնը: Ամէն բաղակցութիւն, գեղագիտական կամ գործնական, պէտք է պատասխանէ ակներեւութիւններու, պէտք է պարզ գործողութիւններով յառաջ երթայ, պէտք է հնազանդի պատշաճեցումի սկզբունքին, պէտք է իրագործէ եւ մինչեւ վերջ պահէ կատարեալ միութիւն մը: Անոր համար է որ ըսուած է, թէ մարդուն ամենէն գեղեցիկ ճարտարապետութիւնն է ցորենի ջրաղացքը: Սակայն Օշական գործնական միութենէն աւելի հոգեկան միութեան կը ձգտի, ան ամբողջը ունի ի մտի, նման մեծ գրողներուն, անոր համայնապատկերով ճշդորոշելու մասերուն յարաբերութիւնը: Օշական սիրոյ կարգով կընթանայ, աւելի կուզէ տաքցնել քան թէ սորվեցնել, վասնզի բարձրագոյն եւ մը կը կատարէ յօրինումի այդ գործը իր մէջ:

Ինչպէս մարմնի այնպէս ալ գրական գործի մը բոլոր մասերը իրարու կապուած են: Զանգուածէն մաս մը բաժնել ուզելը՝ զայն մեռած գոյացութեանց կարգը դասել է: Այս կերպով միայն կարելի է ունենալ տպաւորութեան միութիւնը, հետեւաբար ուժը ինչպէս նաեւ գեղեցկութիւնը. որովհետեւ միութիւնը գեղեցիկին ձեւն է: Գեղեցիկ բայց ցրիւ բաները անդամազննական կտորներու առնութեւրադրութիւն մըն են միայն,

բայց վեպը կամ պատմուածքը կենդանի բան մըն է: Յօրինելը ծնունդ տալ է. հետեւաբար պէտք է յօրինել ոչ թէ յաջորդական բայց անջատ հպումներով, այլ զանգուածովի, լաւ հսկելով մասերու հաւասարակշռութեան վրայ:

Յօրինումէն ետքը կուգայ ընդլայնումը, որով գաղափարներէն դուրս կը հանենք կարելիին տարրերը, այսինքն անոր մէջ պարունակուած ամբողջ լոյսը, ջերմութիւնը, ուժը: Ընդլայնել ըսելով պէտք է հասկնալ ուրեմն ոչ թէ մտածումը կամ զգացումը թրել՝ իբրեւ տարբեր հեղուկի մը մէջ, այլ անոնց ընկերացնել իրենցմէ կախում ունեցող ուրիշ զգացումներ եւ գաղափարներ: Լաւ ընդլայնում մը կեդրոնացում ալ է: Ընդլայնելը հայթայթել է գաղափարներուն իրենց բնական աճումը: Ընդլայնելը գտնել է գլխաւոր ձայնին դաշնաւորները, որոնց մէջ բնականօրէն կը փթթի հիմնական գաղափարը: Կայ մակերեսի վրայ ընդլայնում մը, որ կը կատարուի գաղափարին կցելով ինչ որ կրնայ լուսաւորել եւ ամբողջացնել զայն. եւ կայ խորութեան մէջ ընդլայնում մը, որ կը պեղէ եւ կը ջանայ լաւագոյնս թափանցել հարցին: Օշականի համար էական օրէնքը այն է, որ ընդլայնումը ներսէն կատարուի, ինչպէս է կեանքի պարագային:

Ընդլայնումի ընթացքին տրամաբանութիւնը մէկդի կը հրուի Օշականի մէջ, բառական եւ բանական տրամաբանութիւնները տեղի կուտան յուզական տրամաբանութեան մը՝ որ սրտինն է: Ան տրամաբանող մը չէ. այս վերջինը իր աղախինն է միայն: Ճարտարագէտ մը չէ, սակայն ճարտարագիտութիւնը կը հնազանդի իրեն: Օշական զգացումի մարդ էր, իմացապաշտութիւնը գրականութենէ վտարելու աստիճան: Իր զգացական ու հոգեբանական այդ վիճակը սակայն չէր հեռացներ զինքը իրականութենէն: Գրականութիւնը իրեն համար ոչ կատակ էր, ոչ ալ գուարձալիք, այլ եղեռական իրողութիւն մը՝ զոր պէտք էր նուաճել:

Հակառակ մեծ գրագէտ մը ըլլալուն՝ քիչ է թիւը Օշականի հիացողներուն: Գլխաւոր առարկութիւնը իր դէմ ան է, թէ իր վերլուծումները յաճախ կը գերազանցեն զգալու սովորական աստիճանը եւ իր հերոսները կը գործեն մեզի անծանօթ

անպատասխանատուութեան մը մէջէն, իրենց յատուկ ներքին մղձաւանջով, հոգեբանութեամբ, երազներով եւ յոգնեցուցիչ զարտուղութիւններով: Օշական եւս կրնայ ըսել Ֆրոյտի հետ թէ աւելի ճշմարտութիւն կայ մեր ենթագիտակցական մղումներուն մէջ, քան մեր տրամաբանութեան ներքեւ ինկող գործառնութիւններուն: Մարգարեական իրատեսութիւններ են ասոնք, որոնք գրագետի երեւակայութենէն կ'անցնին ու կը շողան, լուսաւորուելով ուրիշ աշխարհի մը լոյսով: Իր գործը մտածելէ առաջ մարդ պէտք է նախ երազէ զայն: Ճշմարիտ ու մեծ գրագետը երազի եւ արթնութեան, զիտակցութեան եւ անգիտակցութեան, բնագոյի եւ բանականութեան համապատկերէ մըն է որ կ'անցնի: Պայծառ եւ լուսաւոր երազ մը, իրականութեան եւ անոր յատկանիշներուն հետ շփման մէջ եղող վիճակ մը, որուն մէջ երեւակայութիւնը հեռու կը փախչի շօշափելի իրականութիւններէն: Իրերուն հետ խոր մտերմութենէն կը ծնի ան, ամենօրեայ աչքը բաւական չէ. մասնաւոր եւ տեսապէս անբացատրելի տրամադրութիւն մը հարկաւոր է անոր համար: Այսպէս վերբերուած այդ վիճակը կարելիին դէմքն է, ապագան, Պէրկտոնի բառով՝ զուտ յայտնատեսութիւն մը:

Օշական կը ստեղծէ նոր աշխարհ մը, եւ իր անձերը որոնք կապրին իր անձնաւորութեան բարիքովը, մեզի կը ներկայանան իրենց կեանքի երեսներով, առաքինութիւններով ու դիրտով: Այս է պատճառ որ գաղափարները իրեն չեն գար իբրեւ մտածումներ, այլ միայն արարքներուն մէջէն իր հերոսներուն, որոնք հօգոր են առանց իր մտածումներուն իսկ: Անիկա կեանքն էր առանց պիտակի, եւ կեանքը օրէնք չունի: Հետեւաբար մի զարմանաք երբ Օշական իր կիրքերուն եւ կարօսներուն ամեհի ասպետութիւնը վերածէ սրտայոյզ հեքիաթի: Անկթարթի մը մէջ ան գիտէ գիւղացիին, քաղքենիին, հերոսին ու թշուառականին աչքերէն վերցնել կապը, ուղղելու անոնց նայուածքը արեան, երազին, գեղեցկութեան հեքիաթին: Էջերը քիչ կուզան երբ անոնց ակօսներուն մէջ պարպել ուզէ ան գետերը իր ապրումներուն:

Օշականի վեպերը ունին իրենց աշխարհի տիպարները, բարքերը, հոգեբանությունը, ճարտարապետությունը, ոճը եւ արուեստը: 1860ի Անգլիան աննուազ կերպով կը մնայ սեւեռուած Տիքընզի վեպերուն մէջ եւ 1850ի Ֆրանսան՝ Պալգաքի վեպերուն մէջ: Օշականի **Մնացորդացը** կը նուաճէ ԺԹ. դարու կէսերէն մինչեւ տարագրութեան դժոխքը երկարող մեր ժողովուրդին ապրումներուն գումարը: Օշականի տիպարները իրեն պէս զարտուղի են, Տասթոյովսկիի տիպարներուն զուգահեռ: Անոնք երոպական ամենէն յանդուգն վիպասաններու հնարուածներէն կ'առնեն իրենց ուրուագծերը:

Օշականի վեպը այլամերժ ուշադրութեամբ պիտի նուիրուի բարքերու մեծատարած նուաճումներուն: **Մնացորդացի** եւ **Ծակ Պտուկը**ի մէջ կեանքի ինկած են այդ բարքերը իրենց անկապտելի փաստերովը: Օշական ունի խոր զգայարանքը գործողութեան, որ հիմնական պայմանն է գրողի մը: Հոգեբանութիւն, ճարտարապետական շնորհ, ոճ եւ արուեստ՝ Օշականի յատուկ մղումներով կը բարացուցուին:

Իբրեւ եզրակացութիւն, կրնանք աւելցնել թէ Օշական արեւմտահայ գրականութեան ամենէն խոռվիչ անունն է իր անձովը ինչպէս գործովը: Իր վեպը, իբրեւ որակ եւ ծաւալ, իր նմանը չունի մեր գրականութեան մէջ:

Իր քննադատական վաստակը շքեղ՝ իբրեւ ձգտում որքան իրագործում, դարձեալ արեւմտահայ գրականութեան մէջ կը մնայ եզակի: Իբր ուսուցիչ՝ անիկա հազարաւորներու ներշնչած է մեր գրականութեան պաշտամունքը: Կրակի անձրեւ մըն էր այդ դասը աշակերտներու մարող հոգիներուն մէջ:

Յոգնեցուցի՛ չ, անտարակոյս, ինչպէս ամէն վերելք, բայց շքեղ հեռապատկերներով, մարդկային, հզօր պատմումներով, տիպարներով, կեանքով՝ որ ոտքի պիտի պահէ իր գործը իբրեւ մեր դարու հայ կեանքի բարձրագոյն արձանագրութիւններէն մէկը. իբրեւ աննախընթաց վկայութիւն մը արեւմտահայ գրականութեան, իր ծաւալով, խորութեամբ ու պատկերացումներով, անհատական ու հաւաքական լոյսերով ողողուն: Գաղափարներու յարակցութեամբ, Օշականի մտքին մէջ ամենահա-

սարակ նիւթին առջեւ կ'արթննայ ամբողջ աշխարհ մը, որ իր թումբերը քակած՝ կը հոսի իր գրչէն, զգայարանքներու ճամբով, լեցնելու էջերը:

Իր ոճը իրեն յատուկ ստեղծագործութիւն մըն է, երբեմն ծանր ու երկարաշունչ եւ երբեմն մէկ պատկերով ու հոգեվիճակով: Հո՞ծ իրականութեամբ, արագ, կենդանի պատկերներով եւ ծանօթ ճամբաներէ չքալելու մղումով: Անձնական եւ զուտ Օշականեան ոճ մը, որ մաս կը կազմէ իր խառնուածքին: Կը գրէր արագ, առանց անդրադարձումի, բայց հակառակ այս իրողութեան՝ անթերի եւ գրական անխառն ստեղծագործութեամբ: Պէտք չէ փորձել տարբադադրելու Օշականը, այլ ընդունելու զայն իր համադրութեանը մէջ, իբրեւ ինքնայատուկ եւ ամբողջական երեւոյթ մը մեր գրականութեան: Չունի Չրաքեանի լեզուական խաղարկութիւնները, Կ. Չարեանի նիւթէն զառաձանքը, սակայն իր յաւելումը ինքզինքէն, ամէն ինչ իր ակօսին ձգելու իղձը, էջերուն վրայ արշաւել կուտայ իրեն:

Ճակատագի՞րը իր գրականութեան. այն՝ ինչ որ հայ գրականութեանն է, որուն անխզելի մասն է ան, առանց որուն աղքատ պիտի ըլլար հայ ժամանակակից գրականութիւնը: Իր գործը միշտ անթառամ պիտի մնայ իր բերած թարմ շունչին ու բացառիկ արժէքին համար: Իր գրագէտի ճակատը պիտի փայլի մեր մեծ ստեղծողներու լեոնաշողային մէջ, իբրեւ բարձրագոյն եւ անհասանելի գագաթ մը, իրեն կանչելու գալիք բոլոր ժամանակներու գրականութեան սիրահար սիրտերը:

## Դ.

Արուեստով քննադատ մը չէ Օշական, բայց ճակատագիրը այդպէս էր կարգադրեր որ իր գործին մէկ կարելոր մասը իյնայ այս կալուածին մէջ: Հետեւաբար իր մօտ քննադատութիւնը մեր գրականութեան վրայ հսկումի գործ մը չէ, պատճառ անշուշտ իր խստադատութեան եւ հրամայական ժխտումներուն. իրեն համար քննադատութիւնը գրականութեան մէկ ձեւն է, զատորոշելու գեղեցիկը եւ սիրել տալու զայն:

Քննադատությունը իր բարձրագոյն առումին մէջ, ըստ Օշականի, ինքնուրոյն արուեստ մըն է, իսկ քննադատը՝ արուեստագէտ, այսինքն կեանք ներշնչելու ասակ միտքը: Տակաւին, քննադատությունը իրեն համար ստեղծագործութիւն մըն է ստեղծագործութեան մէջ: Որովհետեւ որքան ատեն որ քննադատը ենթակայօրէն կը կենայ իր դատումին առարկայ գործին առջեւ, չի կրնար կրաւորական պատգամաբեր մը ըլլալ միայն, այլ սուգակ մը, որ կը ջանայ վերբերել գաղտնիքը գործին՝ նոյնիսկ հեղինակէն անդին: Իրական քննադատութիւնը արտայայտութիւն մը ըլլալէ աւելի տպաւորութիւն մըն է, եւ նկատի ունի հեղինակին գործը իբրեւ մեկնակէտ նոր ստեղծագործութեան մը: Մարդիկ տեսան որ այս պարսաւագրի կոշտ կեղեւին տակ կար քննադատ մը, որուն վարիչ գաղափարները մնայուն էին եւ թէ ան մէկէ աւելի լարեր ունէր իր աղեղին վրայ:

Գրականութիւնը ստեղծագործութիւն մըն է, կեանքի հրաշքը: Բնութիւնը Աստուծոյ արուեստն է, իսկ արուեստը՝ մարդուն բարձրագոյն բնութիւնը: Արուեստի գործ մը էապէս նմանութիւնն է բնութեան եւ կեանքին: Այս նմանութիւնը սակայն ընդօրինակութիւն մը չէ, այլ յօրինում: Արարիչը լեցուցած է աշխարհն ու մարդու հոգին կեանքով, երազներով, յոյսերով, պատրանքներով, արցունքով, ծիծաղով, ստրկութեամբ եւ հերոսութեամբ: Գրագէտին գործն է տալ այս բոլորը բխումի եւ բախումի իրենց երկունքներով: Գրականութիւնը պերճանք մը չէ, այլ հայելի մը՝ անհատին կամ հաւաքականութեան ապրումները ցոլացնող, առանց շպարի եւ կեղծիքի:

Մինչեւ Օշական, քննադատությունը մեր մէջ վերածուեր էր փոխադարձ գովեստի եւ պարսաւի: Նոյնիսկ Չօպանեան, Արփիարեան, Զօհրապ եւ Յարութիւնեան կընէին իրենց գրադատումները առանց խորունկ ակօսի եւ լայն հորիզոնի: Կը ներկայացնէին գործերը աւելի շատ բացատրելով քան մատնանըշելով, դատելով քան զգալով: Այս անուններէն կը գատուի Չօպանեանը, որուն քննադատական սուգումները մեր անցեալի ընդերքն ի վար անշուշտ կը խօսին մեզի, սակայն իր

դատումները չեն ազատագրուած տպաւորութեանց ենթակայութենէ մը: Ճիշդ է թէ նորերու նկատմամբ եղած է բարեացակամ, իսկ հիներու դէմ ոչ պատկերամարտ, որդեգրելով թերեւս մեծ քննադատներէն Մէնթ Պէօվի խօսքը թէ «նոր յայտնուող տաղանդ մը քաջալերելու եւ ուղղելու լաւագոյն միջոցը անոր գլխուն կաղամար մը չնետելն է»: Գրական քննադատութիւնը մեր մէջ լրագրական քրոնիկն էր: Չեմ ուզեր ըսել թէ վերոյիշուած անուններուն՝ Չօպանեանով գլխաւորուած, պակասած են գաղափար, հասկացողութիւն, դատում, զարգացում: Անոնք բոլորը մէկ կը շինեն պարկեշտ մտաւորականը, բայց ոչ այն միւս տիպարը, որ այլամերժօրէն իր ուժերը պիտի յատկացնէ գիրքերու, գործերու ճանաչողութեան, գրականութեան ընդհանուր ըմբռնումի մը՝ ստեղծելով իր բեմը:

Իր քննադատական ընդարձակ գործին մէջ, **Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան**, Օշականի ներկայացուցածը յաջորդականութիւնը չէ միայն երկերու, որոնք կը կազմեն շղթան Հայ Գրականութեան, Զարթօնքի սերունդէն սկսեալ մինչեւ Արուեստագէտ սերունդի վերջին մնացորդները. ոչ ալ նկարահանդէս այն գրագէտներուն, որոնք կառուցին մեր գրականութիւնը իր եղափոխութեան եւ սեռերուն մէջ: Այս ամէնը զինք կը զբաղեցնեն անշուշտ, սակայն գրական երկերուն նկատմամբ ան ունէր աւելի աւագ մտահոգութիւններ, վերածելով զանոնք քանի մը պարզ՝ բայց կենդանի տարագներու:

Իբրեւ համադրական քննադատ՝ իրեն ներկայացող գործերուն մէջ Օշական կորոնէ առաւելաբար հաւաքական զգայնութիւն, ցեղային ապրումներու սարուածը, մեր մտքին քանդակները, մեր երեւակայելու ուժը, մեր արուեստի զգայարանքին կնիքն ու փաստերը, մէկ խօսքով՝ մեր հոգեղէն մարմնին սեւեռումը: Ապա մտայնութիւններ՝ որոնք գրական սեռերու մէջ բիրեղանալէ առաջ ապրեր են մեր հոգիներուն խորը, թաւալեր են կեանքի մեծ զարկերակին ներքեւ, ստեղծելով բոնկումներ, փլուզումներ, ժայթքումներ, աղէտներ, յաղթանակներ, յարդարելով ճակատագիրը մեր ժողովուրդին:

Արեւմտահայ գրականութիւնը իրեն համար իրարմէ խոովիչ պատգամներու հանդէս մըն է, բարեխառնութիւններու մրցարան: Ճշդել այս բարեխառնութիւններու ծածուկ բաղադրիչները, շարժումներուն սիրտը, գործերուն յատակը, մտայնութեանց թռիւքը, իրողութիւններ են՝ որոնք կը պահանջեն եւրոպական տարողութեամբ միտք մը, որ ընդգրկէր մեր ամբողջ իմացական վաստակը, իջնէր մեր գրականութեան ըմբռնումին՝ տարօրէն թելադրող եւ զզլիտղ խորութեանց քանի մը կարկառուն ցուցմունքներու ճամբով, կերպադրելու մեր հոգին, դարերու սանդուխներէն, մեզ յայտնաբերելու մեզի:

Նկատի ունի նաեւ ժամանակի տիրող գաղափարները, տարողութիւնը մեր գրականութեան յեղաշրջումին, վիճակներ՝ որոնք մեր ժողովուրդի կեանքին վրայ բացուած արհնտտ լուսամուտներ են, թուխպ կամ մեռելական, զանգուածն ու գրողը իր տեսիլքին, ճնշումին ու կիրքին մէջ ընդքարշող: Մէկ խօսքով՝ մեր քաղաքական տագնապները, կսկիծները, տենչերը, քաղցրութիւնները, խոյանքները, լքումները, որոնք գրական կերպարանքներու տակ կը սեւեռեն իրենք զիրենք սերունդներու տեւողութեան մէջ, կը կերպադրեն շրջանները եւ ցեղային գիծերու վրայէն նոր լոյս մը, նոր խորութեան ակօս մը կ'ապահովեն:

Օշական կը ծանրանայ գլխաւորաբար այն գործերուն, դէմքերուն եւ երեւոյթներուն վրայ, ուր մեր ժողովուրդին մեծ արժանիքը, առաքինութիւնը, նոյնիսկ թերութիւնը ըլլայ սեւեռուած կենդանի կերպով, ինքզինքը նկատառման պարտադրող: Այդ է պատճառ որ իր քով չյարգուին պատկերացման, անդրադարձումի, թուումի եւ առաքման ասանդական կարգերը, բաժանումները, համախմբումներու կաղապար դարձած կերպարանքները:

Օշական առհասարակ նկատուած է հարթող եւ կործանարար քննադատ մը մեր մէջ: Մակայն արդար ըլլալու համար պէտք է ըսել թէ այդ վերագրումը շատ մակերեսային է, գործադրուած յաճախ անոնց կողմէ՝ որոնք ուզեցին մեր գրականութեան բարձրագոյն աթոռներուն վրայ եւս տեղ ունենալ: Ոչ

որ մեր արժեքներուն, մեր փառքերուն եւ մեր գեղեցկութիւններուն նկատմամբ եղած է այնքան խանդավառ եւ շեփորած անոնց արժեքը՝ որքան Օշական: Վկայ՝ Դուրեանի, Մեծարենցի, Վարուժանի, Թեքէեանի, Երուխանի, Պարոնեանի, Տիկին Եսայեանի եւ Թլկատինցիի նկատմամբ ունեցած իր անխառն հիացումները եւ **Համապատկերի** մէջ անոնց նուիրուած լայն տեղը, որոնք հեռու կործանման ստուերներ յօրինելէ՝ շինիչ խանդավառութիւններ եւ փառաբանութիւններ են: Գալով իր կշիռին, ատիկա ներկայացուած գրական գործերու կենդանի մասին քանակով է պայմանաւոր. երբ կայ այդ կենդանի փշրանքը, ատիկա բաւ է զինք մեղմելու եւ նոյնիսկ խանդաղատագին զգացումներու առաջնորդելու: Այսպէս, Սրուանձտեանցի մը, Խրիմեանի մը մէջ ան արժեք կը տեսնէ, հակառակ որ անոնք դժուար կը գետեղուին զուտ գրական ճաշակներու պահանջին մէջ: Բայց երբ չի գտներ այդ կենդանի մասը Սիպիլի մը կամ Թերզեանի մը պարագային, օրինակի համար, կըսէ իր ցաւը այդ յուսահատութեան մասին անկեղծութեամբ եւ տագնապով: Մեզ բոլորիս անծանօթ չէ քիչ մը դժուարահաճ՝ բայց խղճմտօրէն կերպարանուած իր դատաստանը մեր իրաւ արժեքներու մասին, սկսեալ դպրոցի սեղաններէն մինչեւ բարձրագոյն ատեանները մեր մտքի հանդէսներուն:

**Համապատկերին** մէջ ժամանակ, զայն լեցնող իրադարձութիւններ, անոնց ընդմէջէն ծնունդ առած զգայութիւններ եւ անոնց տիրապետումի ճիգը իրարու կը յաջորդեն եւ զիրար կ'ամբողջացնեն: Նոր է նոյնպէս իր գրականութիւնը տեսնելու եղանակը, ցեղային արժեքները, ժամանակի տագնապը՝ որ շուքերով եւ լոյսերով, իր ֆիզիք եւ պատմական իրադարձութիւններով իրարու կուգան, կերպարանելու համար շրջանը: Հեղինակները յաջող կամ տրտում դերակատարներ են լոկ, առիթներ, ինչպէս կըսէ Օշական, ըսելու համար անհրաժեշտը, որ իրենցմէ անդին մեր գրականութեանն է, մեր ժողովուրդին:

Վէպ մըն է **Համապատկերը**, եւ ուրիշ ինչ կրնար ըլլալ, երբ տալ ուզէինք մարդերն ու ապրումները հարագատօրէն իրենց ժամանակին մէջ: Օշական, հաւատարիմ քննադատա-

կան այն մեծ տարազին՝ թե դատելը վերստին ստեղծել է, կապրի տագնապը բոլոր անոնց՝ որոնք կը կանչուին իրմէ հաշուեյարդարի նստելու համար, եւ սրտառուչ է որ ան աւելի կուտայ քան կառնէ. որքան մեծ է իր համակրանքը մեր գրչի աշխատաւորներուն նկատմամբ, այնքան խանդավառ է ինքը այն քիչովն իսկ՝ որ մերն է սակայն: Մի զարմանաք, եթէ ըսեմ թէ Օշական ինչպէս **Համապատկերի**, այնպէս ալ իր բովանդակ գրականութեան պարագային, կը զգայ ու կը տեսնէ աւելի իր ջիղերովը քան ուղեղով, որ կրնայ զմեզ ընել ժլատ ու առարկայական: Անոր համար է որ իր վէպերը մարդեր են եւ կենսագրութիւններ. իսկ իր դատումները՝ վէպեր: **Համապատկերը** հետեւաբար մարդերու հանդէս մըն է, ուր միսն ու միտքը, իր բառերով՝ երագանքն ու յոյզը, եւ անըմբռնելի կերպարանքները կը խառնուին իրարու, ստեղծելու համար այն անօրինակ համայնապատկերը՝ որ **Համապատկերինն** է: Առաւելութիւնները մեթոտին, բայց մեթոտ մը չէ գործադրուածը, ոչ ալ յղացք մը, որ դատումի կերպ մը եւ կեցուածք մը կենթադրէ, ժամանակի մէջ ընթացք մը առած, ժամանակի ախորժակներուն եւ յղացքներուն միտող: Օշական կապրի շրջաններն ու մարդերը, տարօրինակ հեռագգայութեամբ եւ թափանցումով, եւ այս մտերմիկ հոգեխառնութիւնը, ժամանակէն եւ ընդունուած հրամանակարգերէն վեր եւ դուրս այս ողբերգութիւնը, մտածումը իրն է, զինք վերածեր են կեանքի մէջ անանձն մենամտի մը եւ անժամանակ գրագէտի մը ու դատողի մը նոյն ատեն: Ան ամէն սեռի մէջ ինքզինք է որ կուտայ, նոյն իսկ այն ատեն երբ կուզէ վկայութիւնը ըլլալ իր սերունդին եւ հանդէսը իր ժողովուրդի թաքուն ուժերուն: Ժամանակ, տեղ, դէպքերն ու վկայութիւնները իրեն համար կորնչական մասեր են անցեալին, եթէ թիւն, թուականէն, փաստէն, պատմական ստուգութենէն վեր չտիրապետէ ոգեղէն իրականութիւնը:

Օշական **Համապատկերը** վերածեր է կեանքի կրկեսի մը, ուրկէ մեզի կը բերուին սրտառուչ վկայութիւններ, որոնք աւելի կարժեն քան հաւաքական եւ համեմատական նման գործերը օտարներու մօտ: Օշականի գործին մէջ դէպքերը, թուական-

ները, մարդերը, մտայնությունները, հոգեբանությունը կը վերադառնան եւ մեզի կուգան նոր կնիքով մը՝ ուր կը զգանք իրականությունը, ինչպէս անոր անդրադարձ երկարաձգումը՝ շրջանէ եւ շրջաններէ ալ անդին: Հետեւաբար անոնք որ պիտի ձեռնեն **Համապատկերը**, մատենագրական ծանօթություններու մթերքէն աւելի, պիտի գտնեն հոն վերադառնալիքները մեր անցեալ կեանքին, որ իբրեւ դէպք, գործ, մտայնութիւն, հոգեբանութիւն եւ ազդեցութիւն լիովին արժեւորուելի վերջ, եղած է նաեւ ապրումներու հանդէս մը, ուր կայ կիրք եւ ջերմութիւն, այսինքն խանդավառ այն դիմաւորումը՝ զոր Օշական ունի մեր գրչի եւ գրքի հերոսներու նկատմամբ: Անցեալը եւ դէմքերը իրեն համար լուսանկարներ եւ յայսմաւորքային վկայութիւններ չեն, այլ կենդանի իրականութիւն մը, եւ էջերը յաճախ կը դադրին թուղթ ըլլալէ ու կը դառնան բաբախուն սիրտ եւ չնշմարտած ողբերգութիւն, եւ այս բոլորը սրտագրաւ եւ նոր, կարծես առաջին անգամ լոյսին բացուած:

Կեանքի մեթոտին բարիքն է ասիկա, որով մտածումները կը վերածուին կեանքի կտորներու: Այնքան ուժով է խտացած կեանքին սխրագին ձգողութիւնը, որ ընթերցողը անզգալաբար առնուած այդ թափին մէջ, չի զգար թէ ի՞նչպէս կը քալէ էջերուն հետ: Կրկնեցէք ապրումի այս ձեւը հեղինակներուն ալ վրայ, իրաքանչիւրը անոնցմէ կը դառնայ գումարը հազարաւոր ապրումներու: Ամէն մէկ հեղինակ այսպէս գոց ապրումներու հանգոյց մըն է, եւ երբ Օշական կախարդական իր մատովը կը հպի այդ հանգոյցներուն, անոնցմէ հոսող, յառնող կեանքը մեզ կը նուաճէ: Ահա Օշականի բերած նորութիւնը: Հայ քննադատութիւնը Օշականով գրական սեռ մը կը դառնայ, զգայութեան եւ դատումի խառնումով, գիրքերու մէջէն բայց վեր անոնցմէ:

Օշական դէմ է գրական դպրոցներուն եւ հանգանակներուն, չունի բանաձեւուած սկզբունքներ կամ իմաստասիրական տեսություններ: Դէմ է ընկերային, քաղաքական եւ տնտեսական վարդապետութիւններու լայն միջամտութեան: Դէմ է քարացած մտայնութիւններուն: Դժուար չէ մեթոտի մը

կառչիլ, սակայն Օշականի համար մեթոտը երկսայրի սուր մըն էր, որ բարիքին չափովը ընդունակ է մեզ չարիքի գառածելու: Աշխարհի բոլոր վաւերաթուղթերը ի վիճակի չեն ոտքի հանելու գրական քննադատութիւնը, որքան ատեն որ միտքը կը գործէ թուղթերու վրայ եւ չի յաջողիր թափանցել կեանքի խաւերը: Հայ մատենագրութեան կառոյցին համար եղած աշխատանքը պէտք է պայմանաւորուի միշտ կեանքի զգայարանքովը, մեթոտի մը հնազանդելէ առաջ:

Օշական գիտէ անվրէպ, մէկ նայուածքով գնահատել գործի մը արժէքը եւ տեսնել թերին: Իր կեցուածքը ժխտական է յաճախ, իր աչքը նախ թերին կը տեսնէ՝ գեղեցիկը փնտռելէ առաջ, ապա հաստատելու տեսական մասը: Կը քայքայէ Տէմիր-ճիպաշեանը, կը զգետնէ Ջարեանը, յետոյ ըսելու համար թէ իւրաքանչիւրէն կրնայ մնալ հատոր մը: Հակառակ այս իրողութեան, ան քառասուն տարի շարունակ մեծ նախանձախնդիրը եղաւ մեր գրականութեան մէջ վճռական գեղեցկութեանց յաւելումին: Ոչ մէկ ընթացիկ հիացում, պարտադրուած կարծիք եւ հանգանակ զայն չեն կրցած ընկճել, որպէսզի նահանջէ իր այս խստապահանջութենէն: Իր այս նպատակին մէջ ան քալած է աղանդաւորի մը պէս կրքոտ, աններող եւ ապերասան: Կը հաւատար թէ գրական վաստակի մը դէմ իր այս կեցուածքը՝ հարազատ գեղեցկութիւնը գտնելու եւ փառաւորելու, աւելի կարժէր քան գովաբանութիւնը արժեմին ու չարժեմին: Այս խստադատութեամբ կը հաւատար թէ կը ծառայէր Հայ Գրականութեան իրական փառքին աւելի արդիւնքով՝ քան անոնք, որոնք գիտակցութեամբ կամ անգիտակցութեամբ, համաձայն իրենց հասկացողութեան, արժէքներ կը սիրէին տեսնել հոն՝ ուր անկէ շուք կար միայն: Սակայն մարդիկ ընդունակ են յաճախ շփոթելու խստապահանջութիւնը ամբարհաւաճութեան հետ, երբ իրենց որոնած գովեստը, խունկը չեն գտներ: Ամբարտաւանութեան ընդունակ են սնամէջ ուղեղները միայն: Օշականի միտքն ու հոգին հարուստ էին իշխանի մը գանձարանին չափ: Անշուշտ որ զինք հալածելու չափ չհանդուրժողներէն եւ ուրանալ փորձողներէն շատեր դիւրաւ զինքը

պաշտպանողներ պիտի ըլլային, եթէ Օշական թոյլ տար ինք-  
զինքին շոյելու անոնց փառասիրութիւնները: Հակառակ իր  
համեստութեան, խօսքի անկեղծ բրտութեամբ, կիրքերու թա-  
փով իրեն ճարեց դաժան համբաւ մը: Մարդիկ զինքը նոյնա-  
ցուցին ժխտումի ասպետներուն եւ դատապարտեցին իր  
հիմնովին աստած մեղքերուն համար: Շրջուած հասկցուելու  
ողբերգութիւնը բաժինն է բոլոր մեծերուն: Մարդիկ աւելի  
դիւրաւ կրնան ներել մեղքը, բայց չեն հանդուրժեր հանճարը:  
Դժուար է անոնց մարսել իրենց միջակութիւնը: Մարդիկ միշտ  
պիտի տառապին ուրիշներու հասակէն, երբ իրենցը չի հասնիր.  
պիտի խմբեն իրենց փոքր ատելութիւնները, երբ հասարակաց  
մեծութիւն մը կործանելու վրայ է հարցը: Յետոյ, չարութիւն է  
այս կեցուածքը զգեստաւորել խուլ եւ խոր եսապաշտութեան մը  
հեռայարդար հաշիւներով: Չներեցին իրեն իր գրչի ընկերները,  
չներեցին իրեն իր ձեռնասունները, որոնք նման ամէն աշակեր-  
տի, իրենց վարժութեան զգայնութիւնները աճեցուցին, անով  
հարուած տալու համար վարպետին վրիպանքներուն: Բարե-  
մտութիւն է անշուշտ երբեմն ազատագրել կեանքի գիրէն  
դատապարտուածները, սակայն սրտառուչ առաքինութիւն է  
ուրացումներու մտայլ գուպարին մէջէն քալել, քննադատութե-  
ան անդաւաճան դրօշին մէջ թաղելու առաքելի իր փառա-  
սիրութիւնը: Հակառակ իր մտքի առատ տուրքերուն, չէ գտած  
արդար հունձք եւ անդաստան:

Երկարատեւ փորձառութիւնը, լայն ընթերցումները, իր  
մէջ յուսախաբութիւնները՝ մարդոց, գիրքերու, համբաւներու  
հանդէպ, գրողներու կեղծիքի ու սուտի անսանձ տիրապե-  
տութիւնը, հեշտագնաց հասարակ տեղիքները կը տառա-  
պեցնէին զինք, արդարացնելով իր բացասական կեցուածքը, թէ  
իսկ երբեմն սահմանագանց: Հայաստանի բանաստեղծութեան  
հանդէպ իր կեցուածքը այս տառապանքին մէկ ճիչն է: Այս  
առթիւ յարուցուած տխուր աղմուկին մէջ ոչ մէկ գրագետ ուզեց  
խառնուիլ, անշուշտ ի սէր հայրենասիրութեան: Հրապարակ  
իջան գլխաւորաբար ամբոխավարները, Հայաստանի բանաս-  
տեղծութեան դատը պաշտպանելու համար: Ի՞նչ էր Օշականի

մեղքը երբ իր բաղձանքը պահանջքի վերածած, համարձակեր էր ըսելու թե «*մեր Հայրենիքի համալսարանին պատմական, գիտական, լեզուական, հաւաքչական աշխատանքին վրայ իմ հպարտութիւնը, հիացումը, քսան տարի առաջ ես պոռացեր եմ առանց մէկէ մը հրաւեր ստացած ըլլալու: Բայց մեր հայրենիքին մէջ ճշտորոդ գրական վաստակին վրայ իմ անտարբերութիւնը, տառապանքը, նոյնիսկ զայրոյթը, եւս չեմ վարանիր նոյն անկեղծութեամբ պոռալու*»:

Իր սիրտէն վտանգուած Օշականը արդեօք ո՞ր օրուան պիտի սպասէր իր հիացումը արտայայտելու խնդրոյ առարկայ եղող գրական վաստակին համար, ինք որ արեւելահայ գրականութեան մեծ մշակոյթին վրայ ժամանակին իր հիացումը չէր սակարկած: Վերոյիշեալ արտայայտութիւնը մատի փաթօնոց ընել, խոշորցնել եւ վերածել քաղաքական դաւաճանութեան, բան մըն է որ չունի անուն: Սակայն մեր մէջ նման բաներ յաճախադէպ կրնան պատահիլ, երբ մարդիկ պատրուակի մը կը կոթնին, իրենց թուղթէ սաղաւարտներով եւ փայտէ թուրերով խիզախելու, ճակատամարտներ շահած իրական հերոսին դէմ: Օշականի դէմ այս պայքարը տխուր աւանդութեան մը կրկնութիւնն էր, գուտ գրական գետնի վրայ դատելով:

Օշական չէր հաւատար մեծութիւններու առասպելին, բայց կը զգար փոքրութիւններու կսկիծը իր դէմ դաշնակցող զեռուններուն: Չեղաւ ճկուն, գործելու օրուան պահանջներուն, օրակարգերուն համաձայն: Ցաւցուց գրչի եւ խօսքի արջորները եւ բառերու մունետիկները: Հակառակ այս իրողութեան, մեծ հիացումներու դիւցազներգակ մունետիկը եղաւ իրաւ արժէքները փառաւորելու մէջ: Իր գլխակորոյս աշխատանքը յանուն մեր գրականութեան, նոր ոսկեհանքերու ետեւէն արշաւը, շշուկի պէս միայն ընդունուեցաւ ժամանակակիցներէն: Ոչ ոք, իրմէ գատ, ի վիճակի պիտի ըլլար հեղինակօրէն գծելու **Համապատկերը** Հայ գրականութեան: Օշական, այսպէս, իր սերունդին կէս ձգած գործը իր լրումին տարաւ մեծ յաջողութեամբ եւ շքեղանքով: Անիկա ապրեցաւ իր ժողովուրդը, զուգահեռ ակօսէ մը, ուրկէ կը հոսէր իր տառապանքը ինչպէս յիմարութիւնները,

բայց ուր կը ծաղկեր դարձեալ ծաղիկը նուրբ գեղեցկութեանց, մեր արուեստի զանազան կերպարանքներու ընդմէջէն: Շատեր իր սերունդէն իրենք զիրենք միայն ապրեցան, ոմանք ընկալչութեամբ, ուրիշներ՝ իմացական նարկիսականութեամբ: Օշական հալածական մարգարէի մը նման ապրեցաւ իր ժողովուրդը, ծառայելով անոր արժէքներու փառաւորման գործին, բերելով վկայութիւնը իր ժողովուրդի թաքուն շնորհներու պայծառակերպման: Ան ապրեցաւ նաեւ պատմութիւնը իր ժողովուրդին, ոչ իբրեւ իրողութիւններու, պատահարներու, դէպքերու եւ թուականներու յաջորդական ցուցատախտակ մը, այլ իբրեւ վերացում մը, ոգիացում մը, ազատագրելով ամենէն սրբազան իսկութիւնները, մտայնութիւնները, սրբութիւնները, արձանելով զանոնք իբրեւ անթառամ բխումները մեր անցեալին:

Օշական ապրեցաւ Թուրքը, ոչ միայն իբրեւ անասնութիւն, սպանդի մեքենայ, այլ իբրեւ մէկ կերպարանքը մեզի քիչ ծանօթ բարդոյթներուն: Իր գործին մէջ ծանր է ուրուականը այդ գազանին իբրեւ ոգի, մթնոլորտ եւ ապրում, որոնք շատ քիչերու զգայարանքները կը յաջողին տպաւորել: Տափաստանեան այդ անասունը դէպքերու մղումին տակ տիրական կերպարանք է իր հոգիին մէջ:

Ղետեւող մը չեղաւ ֆրանսական մեծ քննադատներու, Մէնթ Պեովի, Ֆակէի եւ Թէնի, որոնք իր օրերուն դադրած էին ըլլալէ ուղեցոյցներ արուեստին եւ մտած երջանիկ քունին մէջ, որով կը մոխրանան քննադատական ամենէն յանդուգն տեսակետներն ու յաջողուածքները: Անոնք կը կարդացուէին միայն անձերու հոգեկան բաւիղներէն ներս իրենց բացած այլապէս շահեկան, խռովիչ լուսամուտներու սիրոյն: Սակայն անտարբեր չէ մնացած անոնց բնախօսական, հոգեբանական հետախոյզ հետաքրքրութիւններուն նկատմամբ, որոնք կը համընթանան, կազմելու մարդու մը կերպարանքը՝ իր բոլոր երեսներուն վրայ, եւ որոնց յօրինումին կիշխեն խորհրդաւոր օրէնքներ, այդ վիճակներէն հանելու արժէքը գործին: Ջերձ է նախապաշարումներէ, բայց ունի իր խառնուածքին մղումները իբրեւ ուղե-

ցոյց իր դատումներուն: Օշական քիչ անգամ կը գոհէ իր նախասիրութիւնները: Բնապաշտ է եւ սկեպտիկ, առանց ծծել ուզելու մարդկային խանդաղատանքին կաթը: Կը պահանջէ ձեւի կատարելութիւն, լեզու, բառամթերք, պատկերներ, յօրինում եւ ոճ: Ընդունելով հանդերձ թէ թեքնիքը չի կրնար ազատագրել երկ մը, եթէ ան գուրկ է խորքէ: Թեքնիքին պաշտօնն է բռնել, կայունացնել իրերու անցաւորութիւնը միայն, բայց ոչ ոգին: Քննադատին միտքը հայելի մըն է, ուր ամբողջ աշխարհի մը կը ցոլայ եւ ուրկէ կ'արտացոլայ աւելի յստակ կերպով կարելիին դէմքը:

Օշական գեղեցիկին ու կատարեալին ջատագովն է: Երբ արուեստագետը կ'առաջնորդուի բարոյական մտածումով, կրնայ ձախողիլ: Բարոյական ճշմարտութիւն մը լոյս ընծայելու մտածումով յղացուած արուեստի գործ մը ձգտուն բան մը ունի իր մէջ: Ասիկա ըսել չէ անշուշտ թէ գրական յարաբերութիւն մը չկայ արուեստի եւ բարոյականի միջեւ: Պէտք չէ մոռնալ որ գեղեցիկը արդէն բարոյական ազդակ մըն է ըստ ինքեան: Օշական գիտէ ոչ միայն ճաշակել նուրբ հրապոյրը գեղեցիկին, այլ մանաւանդ ըմբռնել զայն գոյաւորող ծուծը, պեղելով անոր խորքը, մեզի փոխանցելու իր հոգիի թրթռացումներու արձագանգները:

Օշական աշխատանքի որոշ մեթոտ մը չունէր: Իրականութիւնը, կըսէր, աւելի հարուստ է քան աշխատանքի որոշ դրութիւն մը: Այդ չափանիշը անշուշտ արդիւնք էր իր նկարագրին, իր յառաջադրութեան մէջ հասնելու ճշմարտութեան, որ կը խուսափի յաճախ: Քննադատը ստիպուած է կոչ ընելու չափանիշ մը՝ պաշտպանելու ինքզինքը իր եսի թելադրանքներուն դէմ, որ արգելք կրնայ հանդիսանալ ճշմարտութեան հետախուզումին: Ձերծ է իր դատումներուն մէջ այն շաղփաղփանքներէն, զոր շատ մը գրողներ մեզի կը բաշխեն առատօրէն գրագետներու կեանքէն, գիտնալով հանդերձ թէ հեղինակին կեանքը քննադատին կրնայ մատուցանել թանկագին ճշմարտութիւններ:

Չունէր գրական եւ իմացական հանգանակներ եւ աղանդի մը պատկանելու կաշկանդումը: Այդ տեսակէտով մարդերու ամենէն անկախը եւ միտքերու ամենէն ազատը եղաւ, զինուած իր տաղանդով: Իր գործը յաւակնութեան եւ հաւատքի արդիւնք մըն է: Յաւակնութիւն՝ հասնելու բարձրագոյն իրականացումներու, եւրոպական մեծ ու ծանր գործերու կողքին: Հաւատք՝ գոյաւորելու իր վիթխարի գործը, մեծ ու հեռաւոր տեսիլներու հետապնդումով եւ անոնց հասնելու վճռակամութեամբ:

Օշական իր գործով, հետապնդումներով եւ ոգիով, չծալլուած դրօշակ մը պիտի մնայ Հայ Գրականութեան մէջ: Հրաւեր մը՝ դէպի յանդուգն վերելքներ, կոչ մը՝ երիտասարդ գրողներուն՝ դէպի նոր հորիզոններ արշաւելու, առանց ետեւ նայելու, ինչ որ ըրաւ ինքը քառասուն տարիներ շարունակ:

Ե.

(ՄԻՈՆ, ԾԷ. ՏԱՐԻ, ԹԻԻ 12, ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1983, ԷՁ 242–269)

### ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ Յ. ՕՇԱԿԱՆԻ

Յ. Օշական ծնած է Պրուսա, Պոլսէն 100 քիլոմէթր հեռաւորութեամբ քաղաք մը, 9 Դեկտեմբեր 1883ին:

Իր ծնողքը, քաղաքամերձ գուտ հայաբնակ գիւղէ մը (Սեօլեօզ), հողագործականութիւններ էին, ամառը քաղաք, ձմեռը գիւղը: Մայրը՝ մետաքսի մանարաններու մէջ, հայրը՝ օտարներու պարտէզներուն վրայ կ'աշխատէին: Աննշան թուող կենսագրական այս մանրամասնութիւնը ունեցած է սակայն ճակատագրական նշանակութիւն Օշականի գրական խառնրածքին կազմաւորման վրայ:

Օշականի գրականութեան մէջ **գիւղը** եւ **քաղաքը** քով քովի են, կատարեալ հարազատութեամբ մը, քանի որ իր ընկալուչ տարիները, ինչպէս ինքը կ'անուանէ **մանկութիւնն ու պատանութիւնը**, անցած են քաղաքին ու գիւղին մէջ, հաւասար բաշխումով: Պրուսան գերագանցապէս թուրք քաղաքն էր, այս դարուն սկիզբը, ոչ միայն իր յիշատակարաններով, այլեւ բարքերով, մարդկային կերպարանքներով: Օշականի գործին մէջ թուրքը կուգայ այս յատակէն: Հայերը հոն հանգչած գաղութ մը կը կազմէին, թրքախօս բայց խորահաւատ: Օշականի գիւղը, Ակնայ կողմերէն գաղթականութիւն մը, կը պահէր բարբառային հարազատութիւն, թուրքէն շատ քիչ ազդուած բարքեր: Օշականի գործին մէջ հայը կուգայ այս գիւղէն, ուր անշուշտ մեր հայրենիքին գեղջկական նկարագիրները չէին կրնար ըլլալ տիրական:

Անոր մանկութիւնը թշուառութեան միակտուր պատմութիւն մըն է: Հնգամեայ՝ որք է անիկա հօրմէն: Մայրը կ'անէ իր մանկամարդ բազուկներուն վրայ ընտանիքին հոգը, իրմէն դուրս երկու եղբայրներով ու կոյր հօրաքոյրով մը ծանրացած: Անիկա իր հանգիստի Կիրակիներն ալ ստիպուած է յատկացնել լուացարարութեան, հարուստ տուներէ ներս օրավարձով աշխատանքի: Այս մանրամասնութիւններն ալ կը ծառայեն անոր գրականութեան խորունկ թախծութիւնը բացատրելու:

Անոր գիւղը ամէն տարի կը դարմանէ քաղաքէն սա գրկանքները, քանի որ վեց ամիս, ձմեռը, անոր ընտանիքը գիւղ կը դառնար, քաղաքի աշխատանքի դադարէն: Այս երթելեկները կանդրադառնան անոր առողջութեան, ու մանաւանդ կրթութեան: Պրուսայի ազգային վարժարանին մէջ ան կը բոլորէ Ե. եւ Զ. դասարաններուն ընթացքը: Իր բացառիկ յիշողութիւնը կը միջամտէ որպէսզի ազգին կողմէ դրկուի Արմաշ, ուր տարի մը աշակերտելէն վերջ Դուրեան Սրբազանին կը ձգէ վարժարանը 1900ին: Այդ տարին աւելորդ չէր անցուցած: Հիմն էր դրած իր ֆրանսերէնին եւ գերմաներէնին, բառարանի «հարուածներով», ինչպէս կըսեն:

Ուսուցիչ իրենց գիւղը, նոյն տարին: 1902ին *Արեւելք* օրաթերթին մէջ իր առաջին պատմուածքը – վերցուած՝ վարժապետի մը կեանքէն – պատճառ կըլլայ իր պաշտօնագրկումին: Կանցնի մերձակայ գիւղ մը՝ Մարմարճըզ, նոյն պաշտօնով: Գիւղական ուսուցչի սա տարիները անոր կը ճանչցնեն իր ժողովուրդը, իր վերքերով, ցաւերով, տկարութիւններով ու արժանիքներով: Ան կապրէր **խոնարհներուն** հետ, վստահելի ընտանութեամբ մը: Իր անդրանիկ պատմուածքները, որոնք յետոյ ընդհանուր վերնագիր առին **Խոնարհները**, ան ապրած է առանց այլեւայլի: Բոլորն ալ վաւերական մարդեր էին այդ պատմումներուն հերոսները:

Սահմանադրութեան վերահաստատումը (1908) զայն կարտօնէ շփման մտնելու Պոլսոյ հետ. ուրկէ, այսինքն որուն գրական շրջանակներէն, զինքը հեռու պահած էր իր անդրանիկ դառնութիւնը: Կաշխատակցի *Ազդակ* շաբաթաթերթին (1909): Տարի մը վերջ *Ազատամարտ* օրաթերթին գրական յաւելուածը անոր պատմումին լայն կը բանար իր էջերը: Հոն են լոյս տեսած **Մատմագէլ Եւան, Տոպիճը, Տոզսանը, Պաղտօն**, որոնք անոր անունը ազատագրեցին սկսնակի տկարութիւններէն:

1911ին Մալկարա, ուր կը կարդայ Արտաշէս Յարութիւնեանի ընտիր մատենադարանին գրեթէ բոլոր գիրքերը, ինչպէս ատկէ առաջ Պոլսէն գիւղ կը բերէր Շաւարշ Միսաքեանէն ֆրանսերէն հանդէսներ: Մալկարան Օշականի մտքին

մէջ ուրիշ ալ հանգամանք մը ունի, իր գրական արեւելումը ճշողոյ: Արտաշէսի գիրքերուն մէջէն գտած էր Տասթոյովսկին:

1912ին Պոլիս՝ ուսուցչութեամբ: Հանդէսներու, տարեգիրքերու մէջ (*Հայ Գրականութիւն*, Իզմիր, *Շանթ*, Պոլիս. տարեգիրքեր՝ *Գարուն*, Մոսկուա, *Հայրենի Տարեցոյց*, Պոլիս), անիկա իր պատմումին եւ գեղջուկ պատկերներուն կաւելցնէ քննադատական ալ նշմարանքներ: Նոր, աննկատ, յարձակողական իր դատումները հին ու ժամանակակից դէմքերու եւ գործերու վրայ կը դառնան ուշագրաւ: 1914ին՝ *Մեհեան* ամսեայ հանդէսը, որուն խմբագրութիւնը կը բաղկանար Դ. Վարուժանէ, Գեղամ Բարսեղեանէ, Կոստան Զարեանէ, Ահարոնէ եւ իրմէ, անոր գրականութեան կուտայ որոշ նկարագիր: Հանդէսը հիմնողները կ'առաջադրէին **գիւտը Հայ Հոգիին**, Պոլսէն ու Թիֆլիսէն անդին:

Առաջին Մեծ Պատերազմին, անիկա կ'անցընէ փախըստականի չորս տարիները, այս անգամ ճանչնալու համար իր **բուն ժողովուրդը**, դարձեալ իր մեղքերով ու արժանիքներով: Ապրիլ 24ի ձերբակալութիւններէն կը գտնէ կերպը փախուստի եւ ի դերել կը հանէ ոստիկանութեան բոլոր փորձերը զինքը ձերբակալելու: Թալէաթի ոստիկանութեան հետ իր շփումները ունին ծայր աստիճան **տրամաթիք** նկարագիր: Ոստիկանութիւնը արժանապատուութեան հարց է ըրած իր ձերբակալումը: Պոլսոյ մէջ ամենօրեայ խուզարկութիւններ այդ օրերուն պատճառներ էին, որպէսզի ձերբակալուին իր տարիքէն բոլոր երիտասարդները: Այսպիսով է որ յաջողած են զինքը 8 անգամ ձեռք անցնել, բայց մինչեւ ոստիկանութեան կարեւոր կեդրոն մը, ան իր կարգին յաջողած է ազատել իր մահապարտի գլուխը, աներեւակայելի յանդգնութեամբ փախուստներով:

1918ի Յունուարին, Դուրեան Սրբազանէն տրամադրուած գումարով մը անիկա կը կաշառէ ոստիկանութիւնը որ այլեւս հայ մտաւորականութիւնը բնաջնջելու իր դերը աւարտած էր եւ կուզէր քանի մը նմոյշ պահել: **Մնացորդացի** մէջ Օշական տուած է տիպարը թուրք փաշային, ընդարձակ խօսակցութեան մը մէջ (**Արիւնի ճամբով**): Փետրուարին կ'անց-

նի Պուլկարիա՝ Գերման սպայի տարագրվ: Վտանգին, մահուան, թշուառութեան հետ սա մտերմութիւնը անոր մեծ գործերուն (ապագայ) բարեխառնութիւնը պիտի տար:

1919ին՝ Պուլիս: Միշտ ուսուցչութիւն: Կը դասախօսէր հայ գրականութիւն բոլոր երկրորդական վարժարաններուն մէջ այդ քաղաքին: Կը մասնակցի գրական շարժումին, օրաթերթի եւ հանդէսի մէջ հեքեաթներով, պատմուածքներով, քննադատականներով: 1922ին կը բեմադրէ **Նոր Պսակը** ու կը հիմնէ *Բարձրավանքը* (ամսօրեայ հանդէս), որբացեալ Գեղամին եւ Վարուժանին տեղ ընկեր ունենալով Շահան Պերպերեանն ու Գեղամ Գավաֆեանը (Ահարոն թէեւ ազատուած՝ Իզմիր էր), Զարեանին հետ դարձեալ:

Նոյն տարւոյ Հոկտեմբերին՝ դարձեալ փախուստ Պուլկարիա:

1924ին՝ Եգիպտոս, 1926ին՝ Կիպրոս, 1934ին՝ Երուսաղէմ: Միշտ ուսուցիչ եւ միշտ գրող: 1937ին՝ սրտի կաթուած ու Բարիզ՝ իր հայրենակիցներէն տրամադրուած միջոցներով՝ դարմանումի:

Օշական (բուն մականունով Քիւֆէճեան) իր աչքերը փակած է իր կեանքի 65րդ տարին հազիւ թեւակոխած, 1948 Փետրուար 17–18 լուսցող գիշերին, սրտի սուր ու ծանր տագնապի մը հետեւանքով, Հալէպի մէջ, ուր մեկնած էր՝ առժամաբար հեռանալով Երուսաղէմէն, ուր Արաբ-Հրեայ ամենօրեայ արհիւնալի ընդհարումները կեանքը դարձուցած էին դժնդակ ու վտանգառատ:

(*ՄԻՈՆ*, ԾԷ. ՏԱՐԻ, ԹԻԻ 12, ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1983, էջ 270–271)

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՅԱԿՈՒՐ ՕՇԱԿԱՆԻ

Յակոբ Օշական (1883–1948): Յակոբ Օշական (Քիւֆէճեան) ծնած է Պրուսայի գաւառ, Պոլսոյ մօտ: Արմաշի դպրեւանքին մէջ սկսած ուսումը ընդհատած է աղքատութեան պատճառով: Ինքնաշխատութեամբ ան կը տիրանայ գրականագիտական բարձր զարգացումի՝ դառնալով մեծահամբաւ քննադատ եւ ուսուցիչ, ու միւս կողմէ՝ մեծ գրող: 1902-էն սկսեալ պատմութեան քննադատական քրոնիկներով ու փորձերով կ'աշխատակցի պոլսահայ գրական մամուլին: Կարտադրէ «Խոնարհներ» շարքը: 1914-ին, Դ. Վարուժանի, Կ. Ջարեանի եւ Յ. Սիրունիի հետ կը խմբագրէ «Մեհեան» գրական պարբերաթերթը: 1915-ին փախստական՝ կը փրկուի Եդեոնէն: Քանի մը տարի Պոլիս, Թէքէեանի հետ՝ կրկին ուսուցիչ եւ խմբագիր: Ապա Կիպրոս ու Երուսաղէմ՝ վաստակաւոր ուսուցիչ հայ գրականութեան եւ խստապահանջ քննադատ: Այդ տարիներուն է, որ կը հրատարակէ իր վեպերը. «Ծակ-Պտուկը», «Հաճի Ապտուլլահ», «Մնացորդաց»...: Ապա կը խմբագրէ տասնատորեայ կոթողական «Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան»ը: Կը մահանայ Հալէպ, ուր հրաւիրուած էր իր յոբելեանի նշումին:

([www.hamazkayin.com](http://www.hamazkayin.com) - 16 յունիս 2024)

## ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՅԱԿՈՒ ՕՇԱԿԱՆԻ

Յակոբ Օշական (9 դեկտեմբեր 1883, Պրուսա–17 Փետրբուար 1948, Հալէպ), արեւմտահայ յայտնի գրագէտ, գրաքննադատ, ուսուցիչ եւ մանկավարժ:

### Կենսագրութիւն

Յակոբ Օշական 1921-ին Պոլսոյ մէջ՝ «Խոնարհները» խորագիրի տակ, կը հաւաքէ ու կը հրատարակէ հինգ պատմըւածք՝ գրուած 1902–1921 թ.: Այս հիմքի վրայ աշակերտները հետագային կը հրատարակեն առաւել ընդարձակ ժողովածու մը, ուր նոյն խորագիրի տակ կը հաւաքեն 1902–1924 թուականներուն գրուած պատմուածքները եւ «Շահպագը» վիպակը:

Յակոբ Օշականի երկերը՝ «Երկեր» անունով ժողովածուի անուան տակ, հրատարակուած է «Սովետական գրող» հրատարակչատան կողէն՝ 1979-ին, 488 էջ: Իր հսկայական գիրքերու շարքը՝ «Համապատկեր Արեւմտահայ Գրականութեան» նուիրուած է արեւմտահայ գրականութեան:

### Երկերու մատենագիտութիւն

- Խոնարհները, Ա. հատ. Տօզսանը, Տօպիճը, Պաղտօն, Կ. Պոլիս, 1920, 124 էջ:
- Խորհուրդներու մեհեանը, Կ. Պոլիս, 1922, 128 էջ:
- Երբ պատանի են, Կ. Պոլիս, 1926, 124 էջ:
- Մնացորդաց, հատ. 1, Գահիբէ, 1932, 560 էջ:
- Մնացորդաց, հատ. 2, Գահիբէ, 1932, 540 էջ:
- Մնացորդաց, հատ. 3, Գահիբէ, 1934, 656 էջ:
- Ստեփանոս Միւնեցի, Փարիզ, 1938, 128 էջ:
- Հայ գրականութիւն, Երուսաղէմ, 1942, 672 էջ:
- Երբ մեռնիլ գիտենք: Վարդանանք (Խորհուրդ հայ միջնադարէն), Երուսաղէմ, 1944, 76 էջ:
- Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հատ. 1, Երուսաղէմ, 1945, 368 էջ:

- Սփիւռքը եւ իրաւ բանաստեղծները (Վահան Թէքեանի առթիւ), Երուսաղէմ, 1945, 112 էջ:
- Վկայութիւն մը, Հալէպ, 1946, 128 էջ:
- Քաղհանք, Երուսաղէմ, 1946, 128 էջ:
- Օրն օրերուն: Խորհուրդ (մեր ժամանակներէն), Երուսաղէմ, 1946, 81 էջ:
- Արեւելահայ բանասիրութիւնը եւ Էջմիածին, Անթիլիաս, 1948, 216 էջ:
- Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հատ. 5, Երուսաղէմ, 1952, 488 էջ:
- Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հատ. 2, Երուսաղէմ, 1953, 448 էջ:
- Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հատ. 3, Երուսաղէմ, 1954, 184 էջ:
- Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հատ. 4, Երուսաղէմ, 1956, 524 էջ:
- Հայ գրականութիւն, Երուսաղէմ, 1956, 684 էջ:
- Հայ գրականութիւն, Երուսաղէմ, 1957, 692 էջ:
- Խոնարհները, Պէյրուք, 1958, 368 էջ:
- Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հատ. 6, Պէյրուք, 1968, 356 էջ:
- Երկեր. Ծակ-Պտուկը, Հաճի Սուրատ, Հաճի Ապտուլլահ, Անթիլիաս, 1973, 536 էջ:
- Երկեր. Պատմվածքներ, Երեւան, 1979, 488 էջ:
- Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հատ. 7, Անթիլիաս, 1979, 440 էջ:
- Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հատ. 8, Անթիլիաս, 1980, 504 էջ:
- Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հատ. 9, Անթիլիաս, 1980, 536 էջ:
- Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հատ. 10, Անթիլիաս, 1982, 648 էջ:
- Երբ հինները կը կարդանք, Պէյրուք, 1983, 128 էջ:
- Կայսերական յաղթերգութիւն, Պէյրուք, 1983, 212 էջ:

- Մայրիներուն շուքին տակ, Պէյրուֆ, 1983, 152 էջ:
- Մինչեւ ո՞ւր, Պէյրուֆ, 1983, 96 էջ:
- Նամականի, հատ. Ա., Պէյրուֆ, 1983, 128 էջ:
- Քնարախաղեր, Պէյրուֆ, 1983, 112 էջ:
- Հրաշքը, Անթիլիաս, 1984, 72 էջ:
- Երկնքի ճամբով, Պէյրուֆ, 1985, 136 էջ:
- Սահակ Պարզեւեան, Պէյրուֆ, 1985, 468 էջ:
- Սիւլէման էֆէնտի, Պէյրուֆ, 1985, 240 էջ:
- Վահան Թէքէեան, Պէյրուֆ, 1985, 168 էջ:
- Երբ պատանի են: Մարօ, Պէյրուֆ, 1986, 152 էջ:
- Մեր մատենագիրները (վերլուծումներ), Անթիլիաս, 1987, 120 էջ:
- Մնացորդաց, հատ. Ա, Անթիլիաս, 1988, 552 էջ:
- Մնացորդաց, հատ. Բ, Անթիլիաս, 1988, 536 էջ:
- Մնացորդաց, հատ. Գ, Անթիլիաս, 1988, 624 էջ:
- Երեք թատերախաղեր (Նոր պսակը: Կնքահայրը: Աքլորամարտը), Սան Տրանսիսքօ, 1990, 676 էջ:
- Կեանքին պէս (հեքիաթ մը մեր ժամանակներէն), Լոս Անճելըս, 1995, 284 էջ:
- Ծակ-Պտուկը, Անթիլիաս, 1996, 328 էջ:
- Հարիւր մէկ տարուան: Հաճի Մուրատ: Հաճի Ապտուլլահ: Սիւլէման էֆէնտի, Անթիլիաս, 1996, 472 էջ:
- Գրականութեան համար, Երեւան, 1997, 96 էջ:
- Աստուած կիջնէ: Երբ մեռնիլ գիտենք (թատերական երկեր), Պէյրուֆ, 1998, 96 էջ:
- Երկեր. Խոնարհները, Խոնարհներու մեհեանը, Երբ պատանի են, Անթիլիաս, 1998, 616 էջ:
- Մոռցուած բաներ (արձակ էջեր), Պէյրուֆ, 1998, 136 էջ:
- Սերմնացան (արձակ երկեր), Պէյրուֆ, 1998, 160 էջ:
- Արեւելահայ դէմքեր, Պէյրուֆ, 1999, 336 էջ:
- Զուգակշիռ արեւելահայ եւ արեւմտահայ գրականութեանց, Պէյրուֆ, 1999, 248 էջ:
- Հարիւր մէկ տարուան: Հաճի Ապտուլլահ, Երեւան, 2000, 298 էջ:

- Անգղին կտուցին տակ (տեսական գրութիւններ), Պէյրութ, 2008, 352 էջ:
- Մաթիկ Մելիքիսանեան (վէպ), Պէյրութ, 2010, 280 էջ:
- Գիրքերու քովն ի վեր, Պէյրութ, 2011, 256 էջ:
- Օսկի օրրանը եւ գրական այլ էջեր, Պէյրութ, 2011, 240 էջ:
- Քննադատական (յօդուածներու ժողովածու), Պէյրութ, 2013, 212 էջ:

[https://hyw.wikipedia.org/wiki/Յակոբ\\_Օջական](https://hyw.wikipedia.org/wiki/Յակոբ_Օջական) (16 յունիս 2024)

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԻնՉո՞րի ԱՅՍ ԳԻՐՔԸ	2
ՍԱՂԻՄԱԿԱՆ (ՀԱՆԴԷՍ ԶԳԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ) (Ա.)	30
ՍԱՂԻՄԱԿԱՆ (ՀԱՆԴԷՍ ԶԳԱՅՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ) (Բ.)	45
ԵՐԲ ՊԶՏԻԿ ԵՆ – ՆԱՐԵԿԸ (Ա.)	57
ԵՐԲ ՊԶՏԻԿ ԵՆ – ՆԱՐԵԿԸ (Բ.)	67
ԱՍՏՈՒԾՈՅ ՇՈՒՆՉՈՎ – ՕՐՀՆԱՍԱՅՈՒԹԻՒՆ	79
ՀՐԱՇՔԸ (ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ)	89
ԱՅՆ ՕՐԵՐՈՒՆ (Խոփուրդ)	106
ԵՐԲԵՄՆ... (Ա.)	127
ՄՈՌՅՈՒԱԾ ԲԱՆԵՐ (Ա.)	137
ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ	149
ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ – ՄԱ՛ՅՐ ՍՈՒՐԲ... (Ա.)	160
ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ – ՄԱ՛ՅՐ ՍՈՒՐԲ... (Բ.)	171
ՏԵՄԻԼՆԵՐ ՈՒ ՊԱՀԵՐ	189
ԿԵԱՆՔԻՆ ՀԵՏ	195
ՄՈՌՅՈՒԱԾ ԲԱՆԵՐ (Բ.)	207
ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱԻԻԹ – ՔՆԱՐԱԽԱՂ	218
ԿԵԱՆՔԻՆ ՀԵՏ – ԱՂԱՉԵՄ ԶԱՆՓՈՓՈՒԽԵԼԻ... (Ա.)	228
ԿԵԱՆՔԻՆ ՀԵՏ – ԱՂԱՉԵՄ ԶԱՆՓՈՓՈՒԽԵԼԻ... (Բ.)	242
ԿԵԱՆՔԻՆ ՀԵՏ – ԱՂԱՉԵՄ ԶԱՆՓՈՓՈՒԽԵԼԻ... (Գ., Դ.)	253
ՄԵՐՄՆԱՅԱՆ	267
ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ	282
ՊԱՏԳԱՄԸ	302
ՈՍԿԻ ՈՒՌՆԱԿԸ – (ԽՈՐՀՈՒՐԴ)	314
ԵՐԲԵՄՆ... (Բ.)	328
ԵՐԲԵՄՆ... (Գ.)	338
ԵՐԲԵՄՆ... (Դ.)	344
ՀԱՆԳԻՍՏ ՅԱԿՈՒԲ ՕՇԱԿԱՆԻ (1883–1948)	353
ՅԱԿՈՒԲ ՕՇԱԿԱՆ	356
ՄԻՏՔ ԵՒ ՄԻՐՏ – ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՀԱՐՅԵՐՈՒՆ ԱՌՋԵԻ (1)	360
ՄԻՏՔ ԵՒ ՄԻՐՏ – ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՀԱՐՅԵՐՈՒՆ ԱՌՋԵԻ (2)	371
ՄԻՏՔ ԵՒ ՄԻՐՏ – ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՀԱՐՅԵՐՈՒՆ ԱՌՋԵԻ (3)	381

ՄԻՏՔ ԵՒ ՍԻՐՏ – ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՀԱՐՑԵՐՈՒՆ ԱՌՋԵԻ (4)	392
ՄԻՏՔ ԵՒ ՍԻՐՏ – ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՀԱՐՑԵՐՈՒՆ ԱՌՋԵԻ (5)	402
ՄԻՏՔ ԵՒ ՍԻՐՏ – ՄԵՐ ՕՐԵՐՈՒ ՀԱՐՑԵՐՈՒՆ ԱՌՋԵԻ (6)	412
ՕՇԱԿԱՆ ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ – ՄԱՐԴԸ	427
ՕՇԱԿԱՆ ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ – ԳՐԱԳԷՏԸ	443
ՕՇԱԿԱՆ ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ – ՕՇԱԿԱՆԸ ԻԲՐ ՔՆՆԱԴԱՏ	457
ՕՇԱԿԱՆ ԵՐԷԿ ԵՒ ԱՅՍՕՐ	470
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ Յ. ՕՇԱԿԱՆԻ	514
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՅԱԿՈՒՔ ՕՇԱԿԱՆԻ	518
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՅԱԿՈՒՔ ՕՇԱԿԱՆԻ	519





ՆԱՐԵԿ ԱՐԲ. ԱԼԵՄԵԶԻԱՆ  
ARCHBISHOP NAREG ALEMEZIAN

Armenian Church – Holy See of Cilicia  
Antelias – Lebanon

Mobile: +961-3-242481  
E-mail: [nalemezian1@gmail.com](mailto:nalemezian1@gmail.com)